# ՊԼՈՒՏԱՐԿԻՆԱՅ

ՔԵՐՈՎՆԱՑՈՒՈՑ

## ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ՀԱՏՈՐ Զ.

# ՊԼՈՒՏԱՐՔԻՆԱՅ

413
9(37+38)
П70

ՔԵՐՈՎՆԱՑՈՒՈՑ

## ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԲՆԱԳՐԷՆ
Հ. ԵՂԻԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԹՈՄԱՃԱՆ
Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ԱՐԴԵԱՄԲՔ ՔԱՀԱՆԱՅԼ ԱՄՊԵՏԻ
ՊԱՐՈՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՌԱՖԱՅԷԼԻ
ՂԱՐԱՄԵԱՆ

31

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

---

ՌՄԶԳ

# ՊԼՈՒՏԱՐՔԵԱՅ

## ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

## ԴԵՄԵՏՐԵԱՅ

## ԵՒ

## ԱՆՏՈՆԻՈՍԻ

# ԴԵՄԵՏՐԻՈՍ

ՈՐՔ միանգամ 'ի ծերունեացն՝ հանգունատիպ զդայարանացս ասացին զարուեստսն, ինձ թուի՝ տպաւորագոյնս խորհել նոցա այնպէս վասն այնոցիկ՝ ըստ դատողականին զօրութեան, որով մեք անդրստին բնաւորեցաք համօրէն 'ի վերայ կալ հակառակացն՝ որ 'ի նոսա երկոսեան. քանզի և է իսկ այս հասարակ նոցա, թէպէտ և տարբերեալ իցեն 'ի նպատակ անդր ածել զդատեալսն։ Քանզի զդայարանք մեր այս՝ ոչ ինչ առաւել գիտեն որոշել զսպիտակն և զսևն, զքաղցրն և զդառնն, զկակուղն և զտեղի տալին, զխիստն և զանաեղի տալին. այլ բնաւ իսկ գործ է նոցա՝, զի 'ի պատահել իւրեանց այսոցիկ՝ շարժին գրգռին առ մէն մի 'ի նոցանէն, և առնուն ածեն 'ի միտսն ըստ չափու տպաւորութեանն։ Իսկ արհեստքդ միացեալք

ընդ խոհականին ընտրել առնուլ զբունն իւրեանց և մերժել զեկամուտսն, տիրա-գոյնս խորհին զառաջնոցն, և 'ի վերին ե-րեսս զվերջնոցն՝ առ 'ի անձնապահ 'ի նո-ցանէն լինել. քանզի և բժշկականին ա-րուեստի վերին երեսօք պատահէ զննել իմանալ զիօթուլթիւնն, և երաժշտակա-նին՝ զանդաշնակուլթիւն ձայնիցն, զի ապա զհակառակսն 'ի ներքս բերցեն:

Այլ և որ գերակատարքն են քան զա-մենայն արուեստս, ժուժկալուլթիւնն և խոհեմուլթիւնն, որ դատաւորք բազմին ոչ լաւին միայն և արդարոյն և օգտակա-րին, այլ և ինասակարին և վատթարին և անիրաւին, ոչինչ արդեօք գովեսցեն ըզ-պարզմտուլթիւնն՝ որ պարծեսցի յանձն ե-թէ անփորձ ամենևին է յանբարին. նա և խօթամտուլթիւն գլխովին համարին ըզ-բանն և տգիտուլթիւն յայն ինչ, զոր մաս-նաւոր գիտել պարտին՝ որք միանգամ ուղ-ղուլթեամբ կրօնաւորել յանձին կալեալ իցեն: Ուստի և նախնի Սպարտացիք 'ի տօ-նախմբուլթիւնս իւրեանց զմրեցուցանէին զԻլոտսն 'ի սաստիկ անապակաց, և առեալ բերէին զնոսա 'ի կոչունան, ցուցանել իւ-րեանց պատանեացն եթէ զի՞նչ իցէ արբ-եցուլթիւնն: Բայց մեք այնպէս համա-բիւք, եթէ այս ազգ խրատու՝ զայլն յաղ-ճատելոյ, ոչ մարդասիրագոյն ինչ է և ոչ դարձեալ քաղաքական:

Սակայն և դժպատեհ չիցէ արդեօք 'ի տիպ օրինակաց վարուցս այսոցիկ առնուլ

մուծանել մի կամ երկու ամոլս զարանցն՝ որ զեղծեալք իշխանութեամբն իւրեանց, և 'ի մեծի անդ աւագութեան և 'ի զօրութեան երևելիք դասան 'ի չարութեան: Այլ՝ օ՞ն և օ՞ն՝ ոչ եթէ 'ի պատճառս ինչ հեշտութեան և զբօսանաց ընթերցանելեացն մերոց՝ այնպէս բազմագունակ պաճուճելով զարձանագրութիւնս մեր. այլ զնմանութիւն 'ի մասինդ յայդմիկ բերցուք մեք զԽամենեայ Թեբայեցւոյ, այն որ մատնանիշ իւրոց աշակերտացն արարեալ և զքաջ սրնգահարան և զյոռիսն, ասէր նոցա. "Սակէս պարտ է հարկանել,. և դարձեալ "Սակէս չէ՞ պարտ հարկանել,: Այլ և Անտիգենիդաս ինքնին այնպէս հնամարէր, եթէ մեծ ևս ախորժանօք լսիցեն պատանիք քաջ նուագածուաց, եթէ երբէք զփորձ առեալ իցեն նոքա և զյոռեացն:

Զնոյն օրինակ, ինձ թուի, և մեք մտադիւրագոյն և կազմ առաւել կացցուք հանդիսատեսք և նախանձաւորք վարուց առաքինեացն, եթէ գլխովին անբաժ ոչ իցեմք 'ի պատմութենէ չարացն և յանցաւորացն: Ոյր աղագաւ և 'ի մատենիս յայսմիկ ամփոփեացուք մեք զվարս Դեմետրեայ Պոլիորկեդեայ, և զԱնտոնիոսին ինքնակալի. արք՝ որ առաւել քան զամենեսեան հաւատարմացուցին յանձինս իւրեանց զՊղատոնին բան. եթէ՝ Բնութիւնք մեծամեծք 'ի ներքս բերեն միանգամայն և չարութիւնս մեծամեծս, և առաքինու-

թիւնս մեծամեծս։ Ուստի և զնոյն օրինակ առքս անկղիտացեալք, տուփոտք և դինեճանք, և քաջամարտիկք, և մեծապարգևք, և բազմածախք, և յիշոցնաւոք, յոյժ նմանատիպ վիճակեցան և դիպաց բախտին։ Քանզի ոչ 'ի կեանս իւրեանց միայն նահատակութիւնս տարան երևելիս երկոքեան դոքա, և մեծամեծ հանդիպեցան ճախողակաց, բազում ինչ տիրացան և բազում ևս 'ի ձեռաց հանին, յեղակարծումն վանեցան և յանկարծ դարձեալ 'ի վերս կանգնեցան, այլ և 'ի վախճանին իւրեանց գոգ հանգունատիպք գտան նոքա մին 'ի նոցանէ ձերբակալ 'ի թշնամեացն լինէր, և միւսն՝ մաղապուր ճողոպրէր։

Արդ որդիք երկու ծնեալ Անտիգոնոսի 'ի Սարատոնիկեայ դստերէն Կորրէոսի, զմին անուանէր Դեմետրիոս՝ առ սէր եղբօրն իւրոյ, և զմիւսն Փիլիպպոս՝ առ սէր հօրն։ Այս է պատմութիւն՝ զոր բազմագոյնքն ասացին. իսկ կէսք ասեն՝ Դեմետրիոսի ոչ որդի լինել Անտիգոնոսի, այլ նորա եղբօրն. քանզի 'ի մեռանել հօրն 'ի տղայութեան նորա, և յամուսնանալ ապա մօրն ընդ Անտիգոնոսի համարեցաւ որդի նորա։ Եւ դէպ եղև Փիլիպպոսի մեռանել, որ սակաւ ամօք կրսէր էր քան զԴեմետրիոս։ Իսկ այս Դեմետրիոս՝ թէպէտ և ինքն հասակաւ յաղթ, փոքր էր 'ի մեծութեան քան զհայրն. բայց 'ի դիտակին և 'ի գեղ երեսացն աքանչելի և վեհ. զի և 'ի կաւակերուսաց ոք կամ 'ի

կենդանագիր նկարչաց երբէք չէղև բաւա-
կան ճշդրտել զնմանութիւնն. զի և էր իսկ
'ի նմա միանգամայն և շնորհք և պերճու-
թիւն և ահ և վայելչութիւն, և ընդ աշ-
խոյժս երիտասարդական և ընդ եռանդանն
խաւն էր և կերպարան դիւցազնեան աննը-
ման և մեծափառութիւն արքենի: Սա-
պէս և 'ի բարս իւր բնաւորեցաւ նա՝ միան-
գամայն և պակուցանել զմարդիկ և յան-
կուցանել քանզի և բերկրապատար 'ի
քաղաքավարութեան 'ի պարապել իւ-
րում և քան զամենայն թագաւորս առա-
ւել յոյժ փափկացեալ 'ի դրդանս և 'ի
գինեբբուս և 'ի կերակուրս. իսկ 'ի գոր-
ծառնութիւնս յոյժ անզբօս խորհրդով և
կորովագոյնս հանապազորդէր. յորում և
Դիոնիւսեայ խնդրէր նախանձաւոր լինել՝
առաւել քան ամենայն դից. իբրու որ
քաջապէս յաջողեալ իսկ էր և մարտ յար-
դարել և 'ի մարտէն խաղաղութիւն հան-
դերձել, և գեղեցիկս դարձեալ՝ դաշնա-
ւորէր զուարթութիւն և խնդութիւն:

Էր Դեմետրիոս և խանդակաթ հայրա-
սէր. նա և 'ի խնամս սիրոյն իւրոյ առ մայրն՝
յայտնի ցուցանէր շուք դնել հօրն առ ան-
կեղծ սիրոյն՝ քան թէ առ սպասարկու-
թեան ինչ տէրութեանն նորա: Էր էր-
բեմն Անտիգոնոսի հիւրընկալել դեսպանս.
և 'ի պահուն յայնմիկ դառնայր գայր յոր-
սոյն իւրմէ Դեմետրիոս, և մտեալ առ
հայրն և համբուրեալ զնա՝ նստաւ առն-
թեր 'ի ձեռին զփքինսն ունելով. յայն-

ժամ Անտիգոնոս ձայն արկեալ յեսա առ դեսպանն 'ի մեկնել նոցա 'ի նմանէ հանդերձ պատասխանեօքն, ասէր բարձր. "Եւ զայս ևս ո՞ արք, գնացէք պատմեցէք վասն մեր, եթէ այսպէս միաբանաբար գնամք մեք ընդ միմեանս,, : Իբրու այն՝ զի միաբանութիւն նորա առ որդին և հաւատք, հաստատութիւն արքայութեանն ի ցեղն և հաւասարք նորա զօրութեանն :

Եւ արդեօք է իսկ իշխանութիւնն ինքնին գլխովին այնպէս իմն անհաղորդական, լի ի էթիւք և խանտացեալ ջարակնութեամբ, որպէս զի այս Անտիգոնոս մեծ ազգ առաւել և հինաւուրց 'ի պայազատս Աղեքսանդրի, խնդայր և պանծայր զի ջանգիտէ յորդւոյն, այլ և թոյլ ևս տայ փոքնաւ մերձիլ 'ի մարմին նորա : Եւ ապաքէն այս միայն տուն գոգցեա՝ 'ի բազում պայազատութիւնն ազատացեալ գտաւ յայսպիսեաց կրից. Նա յամենայն իսկ 'ի սերեալն յԱնտիգոնեայ միայն Փիլիպպոս սպանանէր զորդին. ուր գո՛գ յայլ ամենայն զարման է՛ տեսանել մահուանս բազումս զորդւոց և զմարց և զկանանց. իսկ եղբայրասպանութիւնք՝ զորօրինակ երկրաչափից տան շնորհեն զինդիրն՝ զոր միանգամ խնդրեն նոքա, սապէս և զարմիցն այնոցիկ շնորհէին զայն՝ իբրու խնդիր հասարակ համարեալ և արքունի՝ յաներկևանութիւն անդր :

Բայց թէ Դեմետրիոս անդատին մարդասէր վիճակեալ էր բնութեան և առ

բարեկամն ըղձակաթ, զայս ինչ 'ի նեղքս բերեն օրինակ. Միհրդատ որդի Արիոբարզանայ էր նորա ընկեր և հասակակից, և մտերիմ և համբոյր գողով բնութեամբ և 'ի վերին երեսս և 'ի նեղքոյ՝ նա ապաս հարկանէր և Անտիգոնոսի գլխովին. սակայն յերազոյ իմեմն կասկածեցաւ վասն նորա Անտիգոնոս: Քանզի թուէր յերազի Անտիգոնեայ մտանել 'ի դաշտ ընդարձակ և գեղեցիկ և սերմանել 'ի նմա զխարտոս ոսկւոյ, յորմէ ապա բուսանէր հունձ ոսկի. բայց ապա յետ սակաւ միոյ դարձեալ անդրէն՝ ոչինչ այլ դտանէր՝ բայց խոզան. իբրև այնպէս թաղծագին էր վասն այնորիկ և ցաւէր յոյժ նմա, թուէր իմն բարբառ լսել որ ասէր, եթէ Միհրդատ ինքնին հնձեալ զհունձն ոսկի՝ այնպէս դէմ եղեալ գնաց 'ի Պոնտոս Եւքինեան: Սրտաբեկ եղեալ արքային, և երդմամբ ջափ հարկեալ զորդին 'ի լռել, պատմէր նմա զերազն. և ասէր նա՝ անշուշտ զարևն հատանել զՄիհրդատայ:

Լուեալ Դեմետրիոսի դառնապէս 'ի խոր խոցեցաւ. և 'ի գալ առ նա պատանւոյն յայցելութիւն ըստ սովորութեանն, և 'ի ճեմել ընդ նմա, ոչինչ համարձակեցաւ վասն երդմանն խօսել ինչ ընդ նմա կամ ձայնիւ ինչ մի 'ի վեր հանել նմա. այլ տակաւ այնպէս զատուցեալ զնա 'ի բարեկամացն, իբրև միայն ընդ միայն եղեն, առեալ դրէր 'ի գետնի 'ի սայրնիզակին յանդիման աչաց նորա, եթէ "Փա-

խիր Միհրդատ,, : Քաջ իսկ իրաղգած ե-
ղեալ Միհրդատայ, գիշերագնաց փախչէր
'ի Կապադովկիա: Եւ անդ արագ արագ
ըստ սահմանելոյն 'ի գլուխ երաշն եալներ
Անտիգոնեայ վասն պատանեւոյն. քանզի
գնացեալ Միհրդատ տիրանայր ընդարձա-
կատարր և պատուական գաւառի, և ան-
գանօր տայր նա ծագումն զարմի արքայիցն
Պոնտոսի. զոր և ապա Հռոմայեցիք ան-
ձեռեցին գոգցես յուլթերորդ ազգին: Եւ
է իսկ այս հաւաստիք քաջամոյն բարուցն
Դեմետրեայ և հեզութեան նորա և ար-
դարութեանն:

Եւ արդ զորօրինակ 'ի տարերսգ՝ ըստ
Եմբեռոկղեայ բանին՝ կագք և կռիւք յու-
զին նոցա ընդ միմեանս 'ի հակառակու-
թենէ անտի նոցա և 'ի միաբանութենէն,
մանաւանդ որք մերձաւորքն են միմեանց
և դրացիք. սապէս և յամենայն իսկ 'ի
պայազատսն Աղեքսանդրի անդուլ էր կը-
ռիւ. բայց 'ի կէսս յայտնագոյնս և սաս-
տիկ ևս 'ի սահմանակցութեան սակս և հա-
ղորդութեան իրացն. ըստ որում և յայն-
ժամ ընդ Անտիգոնոս և ընդ Պտղոմէոս:

Էր Անտիգոնոս յայնժամ 'ի Փռիւգիա,
և լուր առեալ զլուոյն Պտղոմեայ 'ի Կի-
պրոսէ յաւարառութիւն Աւորուց, և զի
և զքաղաքն գլխովին յապստամբութիւն
դրդէ որոք բանիւ և ուժգին ևս, առեալ
արձակէր անդր զորդին իւր զԴեմետրիոս՝
ամաց քսան և երկուց. որ այն ինչ առա-
ջին զանձամբ զզօրավարութիւնն էառ ինք-

նիշխան 'ի գործս մեծամեծս։ Այդ պա-
տանին անփորձ տակաւին՝ 'ի վէգ ընդ ա-
խոյենի ումեմն էկեալ որ յրմբշարանէ
անսի Աղեքսանդրին, որ և առ նովաւ
հրահանգեալ իսկ էր նա 'ի մրցանս բա-
զումս և 'ի մեծամեծս, յաղթեալ նկուն
լինէր մօտ 'ի քաղաքն Գազա. և տապաստ
'ի նորայոցն անկանէին ոգիք հինգ հազար.
և գերի վարէին ութ հազար։ Կորոյս և
գխորանն և զինչն, և համբուն զամենայն
զաղին։ Բայց Պտղոմէոս դարձուցեալ առ
նա զամենայնն և զբարեկամսն ևս, և մար-
գասէր ևս բանիւք վարեալ ընդ նմա պատ-
գամ յղէր, եթէ ոչ 'ի կարասւոյ ինչ սակս,
այլ 'ի փառաց և 'ի տէրութեանն՝ մարտ
եղեալ կռուեցան նոքա։

Առ ընկալաւ Դեմետրիոս, բայց խըն-
դրուածս առնէր դից՝ մի հարուստ ժամա-
նակ այնպէս պարտական շնորհացն մնալ
Պտղոմեայ, այլ արագ արագ զդարձ փո-
խարինին առնել։ Եւ սրտաբեկ չէղև նա
իբրև պատանի որ 'ի ծաղկի նահատակու-
թեանցն հիքացեալ իցէ, այլ իբրու զո-
րավար քաջ և անդրդուելի ընդ արկածս
անցեալ բազմապատիկս՝ թեւակոխէր, զոր
ժողովէր, զէն պատրաստէր, և կայր ու-
նէր հաստատուն զքաղաքսն, և կրթէր
մարզէր զզօրականն։

Լուր Անտիգոնոսի առեալ զմարտին
զայնորիկ, ասէր. Պտղոմէոս 'ի պարտու-
թիւն զպատանիս պարտեաց անմորուս.
այլ ընդ հուպ 'ի վէգ գայցէ նա ընդ ա-

րանց։ Ոչինչ ապա կամեցաւ նկուն զաշ-
խոյժան առնել զորդւոյն, և խոնարհեցաւ
'ի խնդրուածս նորա՝ մարտ դնել միւսան-
գամ կռուել միայնակ առանձինն։ Խա-
ղայր գայր այնուհետև Կիլլէս զօրավար
Պողոմեայ զօրու ծանու, վանել վարել
զԴեմետրիոս ողջոյն յԱթորուոց. յընչաց
քերէր զպատանին վասն առաջին հա-
րուածոյն։ Կազմեցաւ Դեմետրիոս, յան-
կարծակի յեղակարծումն անկեալ 'ի վե-
րայ՝ առնոյր ունէր զբանակն հանդերձ զօ-
րավարաւն, և գերի վարէր զօրականս եօթն
հազար, և հասանէր տիրանայր աղխին բա-
զում յոյժ։ Խնդայր ցնծայր պատանին
յաղթական եղեալ՝ ոչ 'ի ժառանգել ինչ
զկարասին, այլ 'ի դարձուցանել զնոսա. և
սիրելի էր նմա յաղթութիւնն ոչ 'ի հա-
րըստութեանց սակս և 'ի փառացն, քան
թէ յաղատութեանն 'ի պարտուց անտի
շնորհացն Պողոմեայ, և 'ի բարեգործել
առ նա։ Սակայն և ոչինչ գործեաց ինք-
նին. առեալ գրէր առ հայրն, յորմէ և
հրաման հասեալ նմա գործել ըստ կամի,
նա յայնժամ առեալ արձակեաց առ
Պողոմէոս միանգամայն և զԿիլլէս զօրա-
վար և զայլս ևս 'ի բարեկամացն՝ մեծապէս
ձրիւք պարգևելով զնոսա։ Եւ յայսմանէ
ապա 'ի բաց յԱթորուոց վարեալ Պողո-
մեայ, գայր ի Ջանէր Անտիգոնոս 'ի Կելե-
նացւոց՝ յանձն իւր զուարճացեալ ընդ
յաղթութիւնն և ցանկացեալ ևս տեսա-
նել զորդին։

Յետ այսորիկ առաքեալ Դեմետրեայ խաղալ նուաճել զԱրաբացիսն՝ զոր Նաբատացիս կոչէին, մեծապէս վտանգեցաւ պաշարեալ 'ի վայրս անջրդիս. այլ ոչինչ սրտաթափ զահի հարեալ՝ այնպէս հարկանէր վանէր զբարբարոսն, և աւար ճոխ աւարեալ հանդերձ եօթն հարիւր ըղտուք դառնայր այսրէն:

Եւ քանզի յայնժամ Սելեւկոս՝ վարեալն յառաջագոյն 'ի Բաբելոնէ 'ի ձեռն Անտիգոնեայ, միւսանգամ 'ի ձեռն ըզտէրութիւն բերեալ և ստուար բանակաւ յառաջադէմ ևս խաղայր տիրացեալ վերնագաւառացն, և առնոյր յաւելոյր 'ի տէրութիւնն զազգս սահմանակիցս Հնդկաց և ոչք շուրջ զԿաւկասաւ, ապա Դեմետրիոս ակնկալեալ թափուր զմիջագետսն գտանել՝ անցեալ վաղվաղակի ընդ Եւփրատ գիմեաց 'ի Բաբիլոն՝ մինչև իրազգած եղեալ Սելեւկոսի. և տիրացեալ միում յերկուց անտի գղեկացն, և զդունդն հալածել զՍելեւկեայ՝ կարգէր անդ եօթն հազար յիւրմէ զօրականէն: Եւ այլոց զօրացն հրաման տուեալ գրաւել անձանց զոր միանգամ 'ի ձեռս բերցեն 'ի գաւառէն, ելեալ տեղւն տայր 'ի ծովակողմն. և այնպէս առաւել ևս հաստատէր Սելեւկոսի զտէրութիւնն, թողեալ 'ի բաց այնպէս զվայրսն յետ աւար հարկանելոյն՝ իբրու որ անգ ոչ ելցէ անձինն:

Բայց 'ի պաշարել անդ Պտղոմեայ զԱղիկառնասսոս, 'ի շտապ տագնապի անդր

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

դիմեալ Դեմետրիոս 'ի Թիկունս՝ ապրեցուցանէր զքաղաքն։ Եւ ապա 'ի նահատակութեանց ասոյի փառաց՝ շուք բաղում յաւելեալ Դեմետրեայ և Անտիգոնեայ, 'ի վեր վազեցին նոքա ոչանչելապէս յազատութիւն յանդորր հանել ողջոյն զԵլլադա՝ որ 'ի ծառայութեան կայր Կասսանդրոսի և Պտղոմեայ։ Եւ այսպէս չէկաց թագաւոր որ գեղեցիկ ևս քան զայս և արդար յարդարեսցէ մարտ. քանզի և ըզժողովեալ կապուան 'ի պարտելոց անոյ բարբարոսացն՝ նոքա առեալ ծախեցին 'ի շահ օգտի Հելլենացւոցն, և համբաւ բարի և շուք հանդերձեցին անձանց։

Իբրև այսպէս խորհուրդ հաստատեցին՝ առաջին խաղալ նաւել յԱթէնս, յայնժամ մի ոմն 'ի բարեկամացն ասէր առ Անտիգոնոս՝ եթէ յառնուլ Աթենայ պարտին վասն անձանց ունել զքաղաքն, քանզի և է իսկ նա սանդուղք Եղլադայ։ Ոչ ինչ հաւանեցաւ Անտիգոնոս. ետ պատասխանի և ասէ՝ Սանդուղք գեղեցիկ և աներկեան է մարդասիրութիւնն ինքնին. և Աթէնքդ դլխովին իբրու կէտ նպատակի աչաց ամենայն տիեզերաց, արադ արադ ցոլացուցէ փառաք յաչս ամենայն մարդկան զանդանոր նահատակութիւնն։

Ապա Դեմետրիոս դէմ եդեալ երկու հարիւր և յիսուն նաւուք խաղայր յԱթէնս՝ առեալ ընդ իւր տաղանդս արծաթոյ հինգ հազար։ Էր զօրավար քաղաքին յայնժամ յանուն Կասսանդրոսի Դեմե-

տրիոս Փաղերէոս. էր անդ և գունդ զօրա-
կանին 'ի Մունիքիա։ Ելլ (Դեմետրիոս
անտիգոնեան) ըստ պատեհ բախտին և
ըստ իմաստութեան անձինն գայր երևէր
հանդէպ Պիրէոնին 'ի քսաներորդի վեցե-
րորդի Թարգիլիոնին ամսոյն՝ զանխուլ ա-
մենևին 'ի մարդկանէ։ Իբրև յայնժամ
մօտ յակն արկին զհանդէս նաւացն, առ-
հասարակ պատրաստեցան առնուլ ժողո-
վել. համարեցան էթէ Պողոմեայ նաւքն
իցեն. բայց ապա խելամուտ դաւոյն է-
ղեալ զօրավարացն, կազմեցան վառեցան
'ի գիմի հարկանել. անդ էր տեսանել անհը-
նարին աղմուկ՝ որպէս և 'ի դէպ իսկ՝ 'ի
ժամուն յորում տագնապեցան նոքա վա-
նել ընկրկել զթշնամին՝ այնպէս յեղա-
կարծումն 'ի վերայ հասեալ, և 'ի ցամաք
ևս մօտեալք յիջանել։ Քանզի Դեմետրիոս
բա՛ց դտեալ զկիրճս նաւահանգստաց՝ յա-
ռաջամուխ խաղաց 'ի նեբքս, մինչև և ա-
մենեցուն տեսանել զնա. որոց և ակնար-
կի 'ի նաւէն իւրմէ առնէր նոցա հանդար-
տել և 'ի լռութիւն դառնալ։ Իբրև նոքա
հանդարտեցան, քարոզ մի առընթեր իւր
առեալ Դեմետրիոս՝ տայր աղաղակել, է-
թէ հասեալ գայ ինքն անդր ըստ գեղե-
ցիկ բախտին 'ի հրամանէ իւրոյ հօրն՝
յազատութիւն յանդորր հանել զԱթե-
նացիսն, վանել մերժել զգունդ զօրակա-
նին, և զօրէնս նոցա և զվաղնջուց ըզ-
կարգ քաղաքին նոցա դարձուցանել առ
նոսա։ Լուեալ Ա՛թենացւոց զքարոզն,

անդէն զասպարան բազմագոյնք 'ի նոցա-
նէն առեալ դնէին 'ի դեռին հանդէպ ո-
տիցն, և կայթս և ծափս հարեալ շառաչ-
մամբ ձայնիւ մեծաւ ստիպէին զԴեմե-
տրիոս ի ջանել 'ի ցամաք, և փրկիչ և բա-
րեգործ անուն կարդային նմա։

Իսկ որք ընդ Փաղերէոսին էին, առհա-
սարակ լաւ համարեցան առնուլ ժողովել
զԴեմետրիոս, Թէպէտ և դրժեսցէ ևս նա
խոստմանն. քանզի և տիրացեալ իսկ էր
նա. ուստի և հրեշտակս առեալ առաքե-
ցին առ նա աղաչաւոր վասն անձանց։ Մե-
ծաւ մարդասիրութեամբ լուաւ Դեմե-
տրիոս, և յիւրմէ ևս արձակեաց ընդ նո-
սա զԱրիստոդեմոս Միղեսացի 'ի հայրենի
լարեկամացն։ Նա և 'ի խնամն ոչինչ ան-
հոգացեալ վասն Փաղերէոսի, որ 'ի փո-
փոխութեան անդ քաղաքին՝ քան 'ի Թըշ-
նամեացն՝ առաւել ևս երկնչէր 'ի քաղա-
քացեացն, ակն ածեալ համբաւոյ առնն
և առաքինութեանն՝ առաջնորդեաց նմա
մինչև 'ի Թեբէ՝ ուր և կամեցաւ նա եր-
թալ։ Իսկ վասն իւր ասէր Դեմետրիոս՝
ոչ տեսանել զքաղաքն՝ Թէպէտ և յոյժ
անձկացեալ՝ մինչև զնա ազատ գլխովին
կարգեալ, 'ի բաց զգունդն վարելով զօրա-
կանին։ Ապա պատնէշ ածեալ և խրամ
ընդ Մունիքիա հատեալ և ընդ քաղաքն,
ինքն նաւեաց դէմ եդեալ 'ի Մեգարա,
ուր և կայր գունդ մի Կասսանդրոսի։

Յետ այնորիկ լուր առեալ եթէ Կրա-
տեսիպոլէ՝ որ եկաց կին Աղեքսանդրի Պա-

ղիւպերքոնտեայ և բնակէր յայնժամ 'ի Պատրաս՝ կին երևելի գեղեցկութեամբ՝ մտադիւրագոյնս եղեցի ընդ նմա, թողեալ նա զզօրն յայնժամ 'ի գաւառին Մեգարայ՝ ջոքաւ յառաջ ածեալ ընդ իւր նուազունս ոմանս քաջագոտիս և արագունս. ապա և 'ի նոցանէն ևս մեկնեալ, ուրոյն խորան հարկանէր. զի անտես 'ի մարդկանէ եկեսցէ առ նա կինն։ Իրազգած 'ի Թշնամեաց անտի եղեալ, ձեպ տուեալ հասանէին անկանել 'ի վերայ նորա. նա զահի հարեալ և քղամիդ մի արկեալ դուզնաքեայ, այնպէս 'ի խուճապ տագնապի փախստեայ մաղապուր լինէր, վայրիկ մի ևս ձերբակալ եղեալ մեծապէս անարգանօք 'ի պատճառս անժուժկալութեանն։ Բայց Թշնամիք 'ի բաց առեալ տանէին զնորան նորա հանդերձ ամենայն ընչիւքն։

Իսկ յետ այնորիկ կալեալ Դեմետրիոս զՄեգարացիս, և 'ի խուճապել զօրականին յաւար քաղաքին, յայնժամ Ամթենացիք բազում խնդրուածովք ապրեցուցանէին զքաղաքացիսն. և Դեմետրիոս 'ի բաց հանեալ զգունդն պահապան, բնաւ իսկ ազատ կարգէր զքաղաքն նոցա։ Իբրև այս եղև՝ յուշ իւր արկանէր անդ Դեմետրիոս զՍտիլպոնէս իմաստասէր զայր մեծահամբաւ, որ և կեանս յայնժամ վարէր անդորրաւէտ։ Առաքեաց կոչեաց զնա, և հարցանէր եթէ ինչ մի զնորա ոք 'ի զօրականէն խուեալ իցէ. ետ պատասխանի Ստիլպոնէս. "Եւ ոչինչ. զի և տեսի և ոչ

զոք՝ որ 'ի բաց զգիտութիւնն տարցէ յի-
նէն,, : Իսկ իբրև յայնժամ գաղտագնաց
եղեն գոգցեաս առհասարակ ծառայք, Դե-
մետրիոս՝ որ միշտ մարդասիրագոյնս գնայր
ընդ իմաստասիրին՝ ասէր ցնա 'ի մեկնել
իւրում. "Ազատ աւադիկ ո՞վ Ստիլպոնիէ՝
զձեր քաղաքդ թողում ձեզ,,. Եւ պա-
տասխանի և ասէ. "Եւ կարի՛ իսկ քաջ ա-
սես. քանզի և թողեր և ո՛չ զոք մեզ 'ի
ծառայից,, :

Ապա անդրէն միւսանգամ 'ի Մունի-
քիա դարձ արարեալ Դեմետրեայ և բա-
նակ հարեալ, վանէր անգանոր զգունդն
պահակ, և քանդէր աւերէր զգղեակն :
Եւ ապա հիւրընկալութեամբ ժողովեալ
զնա Աթենացւոցն, մտեալ նա 'ի քաղաք՝
խմբեաց զժողովուրդն, և դարձուցա-
նէր քաղաքին զվաղնջուց կարգն նոցա.
առ այս և խոստացաւ նոցա՝ առաքել 'ի
հօրէն գրիւս ցորենոյ հնգետասան բիւր.
և փայտ նաւափայտ բազում՝ բաւական
հարիւր եռաթիոց : Եւ այսպէս Աթենա-
ցիք միւսանգամ ունէին զռամկապետու-
թիւնն յետ ամաց հնգետասանից, զժա-
մանակ զայն որ 'ի Լամիակեան մարտէն և
'ի Կրանոնեան կռուոյն մինչև ցայն վայր
անցուցեալ յաւագապետութեան վերին
երեսաք, այլ 'ի ներքոյ 'ի միապետութե.
քանզի մեծազօր իշխանացեալ էր Փաղե-
րէոս :

Բայց ապա ինքնին գլխովին Աթենա-
ցիք ատելի և դժոխըմբերս յարդարեցին

զԴեմետրիոս, որ այնչափ գեղեցիկս և մեծամեծս բարեգործեաց առ նոսա. քանզի առեալ փառս ծայրայեղս և տարապայմանս սահմանեցին նմա: Քանզի առաջին քան զամենայն՝ անուն արքայի կարդացին Դեմետրեայ և Անտիգոնոսի, զոր յառաջ ժամանակաւ երբէք յանձին չկալան նոքա. և յարքունի ժառանգութեանն այս միայն՝ ճահաւոր ճեռին և եթ ճանաչիւր Փիլիպպոսի և Աղեքսանդրի. իսկ այլք առհասարակ անբաժ յայնմանէն կային և անհաղորդ:

Եւ երկրորդ անգամ՝ առեալ արձանագրեցին զնոսա Աթենացիք 'ի մատեանս՝ իբրև Դիք փրկիչք. և 'ի բաց ևս ջնջեալ զհայրենին իւրեանց աւագութիւն զԻշխանապետին, յորոյ անուն կարդային զտարիս, կարգեցին ապա ամի ամի զՔուրմն Փրկչաց. և 'ի նորա անուն գրէին զամենայն հրովարտակս և զամենայն դաշինսն: Եւ վճիռ ևս եառուն՝ նիւթել անկանել զնոսա 'ի տեռ ամենայն Աթենասայ ընդ այլոց դիցն, և նուիրեալ ևս զվայրն՝ ուր զառաջինն էջ Դեմետրիոս 'ի կառաց իւրոց, կանգնեցին անդ սեղան և անուն կարդացին Դէմեթրիոսի Իջեալոյ: Եւ երրորդ անգամ՝ ցեղս ևս այլ երկու յաւելին յառաջինսն՝ Դեմետրեան և Անտիգոնեան. և որ յառաջ ժամանակաւ խմբեալ ծերակուտին նոցա յարանց հինգհարիւրոց, կարգեցին նոքա յայնժամ 'ի վեցհարիւրոց, 'ի ցեղից ցեղից առեալ արս յիսուն:

Ալ 'ի պատիւ փառաց դոցա՝ քան զամենեսեան գերազանցեցաց 'ի հնարս գիւտին Ստրատոկղէս, զի և էր իսկ ինքն հնարագէտ գտակ այսպիսեաց սուտակասպաս նորագործ պաճուճանաց. քանզի օրէնս տայր հաստատել՝ զի արքն առաքեալ հրեշտակութեամբ 'ի քաղաքէն առ Անտիգոնոս կամ առ Դեմետրիոս՝ մի անուանեսցին Դեսպանք, այլ Թէոֆորոս 1, իբրու զայնոսիկ՝ որք 'ի տօնախմբութիւնս Եկեղեցեաց առեալ տանին 'ի Պիւթիոն և յՈղիմպիա զհայրենատուր զոհսն 'ի քաղաքաց քաղաքաց։

Եւ էր այս Ստրատոկղէս լիրբ և ժպիրհ և յայլ ինչ իրս, և կեանս էր վարեալ նորա ցոփս. և թուէր 'ի լրբութեան իւրում և յանբարի 'ի գնացսն զնմանութիւն բերել զհամարձակութեն զնախնոյն Կղէոմենեայ առ խուժանն։ Ունէր առ իւր բոզ՝ Փիւլակիա անուն. և գնեալ սորա երբեմն 'ի հրապարակէն վասն ընթրեաց ուղղոյ և պարանոցս, ասէր առ նա. " Բաբէ, պատրաստեցեր աւագիկ մեզ սպաս զայդոսիկ, որովք մեք 'ի վարչութեան քաղաքիս գնտակախաղք լինիմք "։ Սա այս այր՝ 'ի խորտակել երբեմն նաւաց Ամենացւոց 'ի մարտին Ամորգոնեան, կանուխ աճապարեալ ինքն քան զգուժկանսն՝ պըսակ 'ի գլուխս անցեալ գնայր ընդ մէջ կերամիկոյ, և աւետիս տուեալ յաղթութեան՝ տայր կարգել զոհս 'ի շնորհակալութիւն դից, և տայր ևս բաշխել միս ցե-

ղից ցեղից։ Իսկ յետ սակաւու հասեալ գուժիւք 'ի նշխարելոց մարդկանն առ 'ի հարուածոցն, և 'ի սրտմտութիւն յայնժամ բրդեալ խուժանին և յատեան քարշեալ զՍտրատոկղէս, նա լիրբ և անպատկառս այնպէս բերեալ զաղմուկ խուժանին՝ ասէր. "Եւ զի՞նչ 'ի դժնդակացն կրեցէք դուք, զի խրախամիտ անցուցէք աւուրս երկու"։ Այսպիսի ինչ էր լրբութիւնն Ստրատոկղեայ։

Բայց էին էին և այլ իրք՝ ըստ Արիստոփանեայ բանին՝ Ջերմագոյն ևս քան ըզհուր։ Քանզի անդուստ և այլ ոմն գերազանցեալ զխեռութեամբ Ստրատոկղեայ՝ վճիռ 'ի ներքս տայր, զի երբ և իցէ եկեալ հասցէ Դեմետրիոս և Անտիգոնոս, առցեն ժողովեսցեն զնոսա 'ի մեծարանս և 'ի հիւրոյթս Դեմետրեայ և Դիոնիսեայ. և որ հիւրամեծար առաւել քան զայլսն եղիցի 'ի շուք փառաց և 'ի ծախսն, 'ի հասարակաց գանձէն առցէ արծաթ՝ կախել ձօնի դիցն 'ի յիշատակ։ Եւ հուսկ ապա՝ և Դեմետրիոն ևս կարդացին զիւրեանց ամիսն զՄունիւքիոն, և Դեմետրեան՝ զօր վերջին ամսոց իւրաքանչիւր. և փոխեցին ևս զանուն Դիոնիսեան տօնիցն, և կոչեցին Դեմետրեանս։

Ոյր աղագաւ և աստուածակողմին բազմանշանակ ցասեաւ։ Քանզի և տեռն՝ յորում ըստ վճռոյն նիւթեալ անկեալ էին և զԴեմետրիոս և զԱնտիգոնոս 'ի միասին ընդ Արամազդայ և ընդ Աթենասայ, 'ի

բառնալ բերել զայն ընդ Կերամիկոն, վը-
տանգեցաւ 'ի մրրկէ փոթորկելոյ՝ պատա-
ռեալ յերկուս ծուէնս : Իսկ զսեղանոնն՝
զոր կանգնեցին 'ի պատիւ Նոցա, խիտ առ
խիտ 'ի հողոյն բուսանէր մոլախնդ, զի և
ոչ բնաւորեցաւ խոտդ բուսանել բազում
ուրեք 'ի գաւառին յայնմիկ : Դարձեալ
և յաւուր տօնի Դիոնիսեայ հարկեցան
նոքա թողուլ լքանել յայնժամ զհան-
դէսն 'ի պատճառս սասսիկ սառամա-
նեացն 'ի տարաժամ եղանակի. և անկեալ
եղեամն հոծ և խիտ՝ եղեւնապատք խամ-
րեցան ոչ այգիք միայն և ամենայն թուզք,
այլ և բազում ինչ յարմտեաց գալարեաց
ծնգեալ ծիւրեցան : Ուստի և Փիլիպպի-
դէս այր թշնամի Սարատոկղեայ՝ 'ի Կա-
տակերգակին խրոմ քերթէր տողս ընդ-
դէմ նորա՝ այսպիսի.

" Որթք վասրն նորա 'ի սառամանեաց
ծնգեալ խամրեցան.
Ընդ մէջ ցեղաւ Ցեռն 'ի սակս ամբարիշտ
նորայն խեռուութեան,
Զի շուք զաստուածոցն ինքնին գա գործեաց
իբրև շուք մարդկան :
Այդոքիկ ահա զազգ և ժողովուրդ
քանդեն տապալեն,
Եւ ոչ թէ քերթուածք 'ի Կատակերգակ
տողեալք քերթողէն :

Եւ էր Փիլիպպիդէս այս՝ բարեկամ
Լիւսիմաքոսի. և ժողովուրդ Աթենա-

ցւոց 'ի մեծարանս երեսաց նորա՝ երախ-
տիս շատ ձգէր 'ի Լիւսիմաքոս արքայէն.
և թուէր արքայիս այսմիկ նշան բարեգու-
շակ՝ ընդ առաջել Փիլիպպիդեայ յարշաւա-
նին նորա։ Եւ էր իսկ այս քերթող արդոյ
և պատուական 'ի քաղաքավարութեան
իւրում. զի և չէր նա անհամբոյր անձն, և
ոչ դարձեալ շնթող աւագաց և անձնա-
գրաւ ըստ հացկատակացն։ Էր երբեմն
Լիւսիմաքեայ մեծապէս գթով գգուել
զնա և ասել. "Ո՞վ իմն Փիլիպպիդէ, և իմ
իմիք յիմայոցն հասարակորդ արարիցը զ-
քեզ,,։ Եւ պատասխանի. "Միայն, Ա՛ր-
քայ, մի քոյին գաղտնեաց,,։ Խորհրդով
մեք զայս Փիլիպպիդէս հանդէպ կարգե-
ցաք Սորատոկղեայ, ընդ բեմական առն
զայր թատերական։

Բայց 'ի վերջ քան զամենայն պատիւ և
յոյժ օտարոտի՝ էր արձանագրեալն վճիռ
'ի Դրոմոկղիտեայ Սփեստոիոսէ. զի յա-
ղագս ասպարացն ձօնիչ կախելոց 'ի տա-
ճարին Դեղփեայ՝ պատգամ հարցցեն 'ի
Դեմետրիոսէ։ Զնոյն պատճէն մեք ար-
ձանագրեսցուք ասա զվճռոյն զայնորիկ,
որ է այսպիսի. "Գեղեցիկ բախտիւ հա-
ճոյ թուեսցի ժողովրդեան, տալ վճիռ
ժողովրդեանն. ընտրել այր մի յԱթենա-
ցւոց աստի՝ որ երթեալ առ փրկիչն և նը-
ւէր յաղեալ, հարցումն ապա արասցէ
փրկչին Դեմետրեայ. զիարդ բարեպաշ-
տագոյնս արդեօք և լաւ և արագ արագ
յաջողեսցի ժողովրդեանն նուիրել զիւր

ձՕնիսն. և 'ի գլուխ տարցեն ժողովուրդք զպատուէր պատգամախօսին զայնորիկ ,, :

Զսոյն օրինակ ասպա 'ի խաղ մատուցեալ Ա Թ Է Ն ա ց ի ք Ը առն Ը այնմիկ, եղծին խանգարեցին զայրն, որ և ոչ անգամին էր ինչ նա այնպէս ողջախոհ վիճակեալ մտաց : Ա յլ 'ի ժամանակին՝ յորում գեղերէր Դեմետրիոս անգործ յ Ա Թ Է Ն ս, կին ածէր զԵՒրիւդիկէ զայրին 'ի սերնդոց անտի նախնոյն Միլտիադէայ. և էր նա հարանացեալ յառաջագոյն Ոփեղտայ արքային Կիւրենէայ, և յետ մահուն նորա փոխեցաւ միւսանգամ յ Ա Թ Է Ն ս : Իսկ Ա Թ Է Ն ա ց ի ք զհարսանիս զայն՝ շնորհս և պատիւ առ 'ի Դեմետրէայ համարեցան քաղաքին իւրեանց : Սակայն էր ինքնին Դեմետրի մեծապէս կրթեալ 'ի հարսանիս, և էին նորա կանայք բազումք միանգամայն. յորս և արգոյ յոյժ էր ինքնին փիլլա՝ դուստր գոլով նա Անտիպատրոսի, և զի էր նա կացեալ և կին Կրատերոսի, այն որ յամենայն պայազատսն Աղեքսանդրի առաւել ևս 'ի սէր իւր յանգոյց զՄակեդոնացին : Բայց զԴեմետրիոս տակաւին պատանի՝ որպէս կարծեն՝ 'ի հաւանութեան ած հայրն ածել 'ի կին զՓիլլա, թէպէտ և անճահ հասակին և երիցագոյն քան զնա : Իսկ 'ի դժկամակն լինել Դեմետրէայ, ասէր ցնա հայրն յունկանէն զԵՒրիպիդէայ զտողն. " Ուր օգուտ ի՞նչ, հակառակ բնութեանն պարտ է կին ածել ,, : Բայց ԵՒրիպիդէս ասաց՝ Ծ՚՚՚

նոս զնոյնայանգն յայնժամ յարմարեաց բառ 'ի տողին՝ ԿԻՆ ԾԷԼ 2։ Ա.Յլ սակայն և պատիւ Դեմետրիոսին առ Փիլիպս և առ այլս 'ի կանանց այսպիսի ինչ էր, զի և ոչինչ խորշէցաւ նա մտանել անարդաբար և առ բոզս բաղումս, և առ բազումս ևս 'ի կանանց ազատաց. ուստի և առ այնչափ անժուժկալութեանն վատանուն գտաւ նա քան զամենայն թագաւորս ժամանակին։

Զայնու ժամանակաւ հրաւէր առ Դեմետրիոս եկեալ 'ի հօրէն խաղալ մարտիւ ընդդէմ Պտղոմեայ 'ի վերայ Կիպրոսի, հարկ էր հնազանդել։ Սակայն և յոյժ դժկամակեալ նորա թողուլ զիւր մարտն յայնժամ վասն Եղլադայ՝ մարտ գեղեցիկ և հոյակապ, վասն որոյ և արծաթ 'ի նեղքս մատուցանէր Կղէոմենիդեայ զօրավարին Պտղոմեայ՝ որոյ գունդ ընդ ձեռամբ կայր 'ի Սիկիւոնն և 'ի Կորնթոս, զի յաղատութիւն կարգեսցէ զքաղաքն զայնոսիկ։ Նա իբրև երեսս ինչ չարար ընծայիցն, առեալ զզօր իւր Դեմետրիոս ամբարձաւ ձեռով 'ի նաւ, և դէմ եդեալ խաղայր 'ի Կիպրոս։ Հասեալ և ետ ընդ ետ 'ի կռիւ ելեալ ընդ Մենեղաւոսի եղբօր Պտղոմեայ, 'ի պարտութիւն մատնէր զնա։ Իսկ իբրև անդուսա խաղաց եկն և Պտղոմէոս ստուար բանակաւ ծովու և ցամաքի, սկըսան նոքա այնուհետև բանիւք սպառնալեաց ձայն մեծապանծ արձակել առն ընկերի իւրում. Պտղոմէոս հրաման տայր Դեմետրեայ տեղի տալ չուել՝ մինչև առ-

հասարակ 'ի միահամուռ զօրացն առա-
թուր հարեալ ելցէ։ Անդուստ և Դեմե-
տրիոս ասէր՝ թողուլ յազատութիւն զՊտղո-
մէոս, եթէ խոստումն կռեսցէ 'ի բաց առ-
նուլ զպահակ զօրականին որ 'ի Սիկիւոնէ
և որ 'ի Կորնթոս։

Անդ ապա մնասլուստ մարտ պատերազ-
մին յանհնարին վարանս դեգևեալ պա-
հէր ոչ զերկուս զնոսա միայն, այլ և առ-
հասարակ զարքայս. քանզի և պարտ իսկ
էր այնուհետև յաղթականին՝ ոչ Կիպրո-
սի միայն տիրանալ և Ասորւոց, այլ և վե-
հագոյն ամենայն լինել արքայից։ Հապա
խաղայր գայր Պտղոմէոս հարիւր և յիսուն
նաւուք, և հրաման տայր Մենեղաւոսի
յառաջադէմ լինել վաթսնիւքն իւրովք
'ի Սաղամինայ 'ի Ջերմանալ գոռին, և վա-
նել հարկանել զԴեմետրիոս 'ի թիկանց
կուսէն, և խախտել խանգարել զկարգն
նորա։ Բայց Դեմետրիոս վաթսուն նա-
ւացն 'ի գիմի արձանացուցեալ տասն յիւ-
րոց անտի (զի և այնչափ շատ էր պահել
փակել զկիրճ անձուկ նաւահանգստին).
և ինքն կարգ զօրուն եդեալ ցամաքի, և
առեալ սփռեալ զնոսա 'ի հրուանդանս
ծովահայեացս, հասանէր հարիւր և ութ-
սուն նաւուք. գրոհ տուեալ մեծապէս
զօրութեամբ պատէր պաշարէր զՊտղո-
մէոս. հարկանէր վանէր, և 'ի փախուստ
զնա դարձուցանէր ութ նաւուք, որ միայն
մնացին նմա յայնչափ բազմութենէն.
քանզի նաև եօթանասուն գերի վարեաց

'ի միասին ընդ խուժանին. իսկ զայլն ամենայն յապականութիւն դարձոյց 'ի կըռուին։ Իսկ յամբոխից անտի ծառայիցն և 'ի բարեկամացն և 'ի կանանցն՝ որ առ ծովեզերքն կային 'ի նաւսն կարասւոյն, դարձեալ և 'ի զինուց անտի և 'ի դրամոց և 'ի մանգղիոնից՝ զերծաւ և ոչինչ 'ի Դեմետրեայ. հասանէր ունէր զամենայնն, և բերէր կուտէր 'ի բանակ իւր։ Էր յաւարին և հուչակելին այն Լամիա, համբաւեալ յառաջագոյն յարուեստին իւրում, զի սրնգահար էր ոչինչ անգոսնելի. այլ ապա համբաւեցաւ և յարուեստին տրուփական. և յայնժամ՝ Թէպէտ և 'ի վատել էր գեղն նորա, այնչափ ինն առեալ յանկոյց զԴեմետրիոս պատանի, և 'ի հրապոյրս իւր Թակարդեաց զնա, զի և սիրելի Դեմետրիոս այլոց կանանց՝ էր սիրող միայն Լամիայ։

Բայց յետ նաւամարտութեանն այնորիկ, ոչ ևս 'ի դիմի հարեալ Մենեղաւոս՝ տայր զԱաղամինա 'ի ձեռս Դեմետրեայ. տայր նմա և զնաւսն և զբանակ ցամաքին հազար և երկերիւր այրուձիոյ և բիւր մի և երկու հազար հետևակաց։ Այլ զաղթութիւն զայն զմեծ և զերևելի՝ քաջիկ ևս յարդարեաց Դեմետրիոս մարդասէր քաղցրութեամբն. քանզի Թաղումն վառաւոր տայր անկելոց Թշնամեացն, և ըզգերին առեալ 'ի բաց արձակէր. և տայր ևս 'ի պարգև Աթենացւոց հազար և երկերիւր սպառազինութիւնս ընտիր ընտիր

զանկածին։ Իսկ հրեշտակ աւետաւոր յաղ-
թութեանն առ հայրն ՝առեալ արձակէր
զԱրիստոդեմոս Միլեսացի. այր՝ որ 'ի
մարդեղութեան առաւելեալ քան զա-
մենայն հացկատակս արքունեաց, և 'ի ժա-
մուն պատրաստեալ կազմեալ ևս էր այրն
տիրադոյն ևս մարդահաճութեամբ՝ որպէս
երևիդ՝ մեծացուցանել զնահատակութիւնն։
Քանզի անցեալ 'ի Կիպրոսէ 'ի Սիւրիա,
չթողոյր նաւուն մերձենալ 'ի ցամաքն.
հրաման տայր խարիսխս արկանել, և առ-
հասարակ ամենեցուն դադարել մնալ 'ի
նաւուն. իսկ ինքն մտեալ 'ի մակոյկ և ե-
լեալ 'ի դուրս միայնակ գնայր առ Անտի-
գոնոս՝ որ անդ վարանեալ մնայր ելից
մարտին. կայր և ծփայր 'ի ծով խորհըր-
դոյն, իբրու որք 'ի դէպս անհնարինս խու-
ճապեալք ոմանք տագնապեսցին։

Իբրև լուր էառ զդալստեան հրեշտա-
կին, և ևս ամբոխեալ խռովեցաւ և հազիւ
ուրեմն հանդարտեալ 'ի տանն, պնդով
ծառայս և բարեկամս առեալ առաքէր մի
զմիոյ կնի լսել յԱրիստոդեմեայ զելս ի-
րացն։ Բայց նա պատասխանի և ոչ ումեք
տուեալ 'ի նոցանէն, և այնպէս հեռևեալ
տակաւ յամրաքայլ այրն անժպիտ դիմաք
բազում լռութեամբ, անդուստ զահի
հարկանէր Անտիգոնոս. և ոչ ևս հան-
դուրժեալ՝ ինքնին ապա յարուցեալ գայր
մինչև առ դուրսն ընդ առաջ նորա՝ և ըղ-
հեաս որեար սաստիկ ընթանայր խուռն
յարքունիս անդր։ Իբրև մերձ եղև Արիս-

տոդեմոս, կարկառեաց զաջն և 'ի ձայն բարձր գոչեաց և ասէ. "Խնդա՛ դու արքայ Անտիգոնէ. պարտեցաք 'ի նաւամարտին զՊտղոմէոս արքայ. հասեալ կալաք զԿիպրոս. և վեշտասան հազար և ութ հարիւր 'ի թշնամեաց գերի վարեցաք,,: Իսկ Անտիգոնոս ասէր. "Եւ դո՛ւ ինքնին՝ օ՜ն և օ՜ն Արամազդ՝ խնդա՛ գլխովին. բայց զի այդպէս չարչարեցեր զմեզ, լուծցես ըզվրէժն. քանզի անագան ուրեմն առցես զաւետչեայն,,:

Ապա յայնժամ առաջին ձայնիւ ցընծութեամբ անուն արքայի կարդացին ժողովուրդք Անտիգոնեայ և Դեմետրիոսի. և բարեկամք Անտիգոնեայ անդէն թագկապեցին նմա. բայց նա առեալ զթագն առաքէր որդւոյ իւրում Դեմետրեայ, և գրեալ առ նա թուղթ՝ կոչէր զնա թագաւոր: Լուր այսոցիկ հասեալ առ Եգիպտացիս, կարդացին և նոքա թագաւոր զՊտղոմէոս, ոչինչ սրտաբեկեալք 'ի հարուածոյն: Եւ այսպէս ապա նախանձաւորք և այլ ևս պայազատք Աղեքսանդրի՝ զնոյն անուն առեալ գրաւականեցին անձանց: Քանզի անդուստ և Լիւսիմաքոս պսակեցաւ թագիւ. և Սելեւկոս՝ յայց առ նա ելանել Հելլենացւոց՝ արքայօրէն վարեցաւ առ նոսա, որպէս և յառաջ ժամանակաւ երբեմն առ բարբարոսս: Միայն Կասսանդրոս՝ թէպէտ և այլք զանուն արքայի կարդացին նմա 'ի գրելն իւրեանց և 'ի կոչելն, նա զիւր նամականին՝ որպէս

յառաջն սովորեցաւ միանգամ, այնպէս և կնքէր։

Այլ սակայն անուանակոչութիւն այս՝ ոչ պարզաբար յաւելուած ևեթ անուան 'ի ներքս բերէր և պատմուճանի միայն փոփոխումն, այլ և զնորհուրդս զարանցդ այդոցիկ շարժեաց և դրդեաց, և ամբարձեալ սոնքացոյց զմիտս նոցա, և պերճութիւն և ամբարտաւանութիւն սադրեաց 'ի չափ կենաց և քաղաքավարութեան նոցա։ Զոր օրինակ տեսարանացդ ողբերգակաց պատահեսցէ արդեօք, որ ընդ պատմուճանին փոխելոյ բնաւորեցան նոքա և ըզձեմս ուրիցն փոխել և զձայն բարբառոյն և զօրինակ բաղմելոյն և զողջունել հիւրոցն։ Ապա այնուհետև առաւել իմն խստացան նոքա և 'ի պատուհասել իւրեանց, և զամոք զկերպարանն 'ի բաց թողին զնշխանութեանն իւրեանց, որով և 'ի բաղում ինչ իրս յառաջագոյն մարդասիրագոյնք և հեզք երևեցան նոքա առ հնազանդեալսն։ Այսչափ ինչ զօրացաւ ձայն մի միայն առն մարդահաճոյի, և փոփոխութիւն այնչափ 'ի ներքս եբեր յաշխարհի։

Արդ 'ի Կիպրոսեան նահատակութենէ անտի Դեմետրեայ՝ անցեալ ապարթանեալ Անտիգոնոս, վաղվաղակի չու առնէր խաղայր ընդդէմ Պաղեստեայ՝ առեալ յինքն զցամաքին բանակ, և պատուիրէր Դեմետրի առ ափամբ քերել բաղմութիւն նաւացն։ Բայց եղեալ կատարածի արշաւանին այնորիկ խելամուտ լինէր Մեդիոս բա-

բեկամ Անտիգոնեայ յերազոյ անտի՝ զոր 'ի քուն տեսանէր։ Քանզի Թուէր նմա տեսանել զԱնտիգոնոս հանդերձ բովանդակ զօրուն մրցել 'ի կրկնասպարիսի, և զառաջինն արագ արագ և կորովի նահատակել. այլ ապա տակաւ տակաւ 'ի վատել նորա ուժոյն, և 'ի վերջէ 'ի դառնալ ընդ կրունկն՝ խպառ նուաղել և ոգւոցն նորա Թասել, և հազիւ ուրեմն ոգի առնուլ։ Եւ անշուշտ արդեօք բազմաց Անտիգոնոս պատահեալ 'ի ցամաքին վըշտամբերութեանց, անգուստ և Դեմետրիոս պաշարեալ 'ի մրրկէ և յամեհի ալեացն վտանգեալ 'ի վայրս ուրեք աննաւահանգիստս և 'ի դժուարինս, կորուսանէր բազում ինչ 'ի նաւացն։ Եւ այնպէս դարձ առնէր գայր Անտիգոնոս վճարեալ և ոչինչ։

Եւ էր յայնժամ Անտիգոնոս ամաց իբրև ութանից, և քան 'ի ծերացեալ հասակէն՝ առաւել ևս 'ի յոյր Թանձրամըտութենէն վատացեալ 'ի զինուորութեան, գործի 'ի ձեռն առնոյր զորդին. այն՝ որ ըստ գեղեցիկ բախտին և 'ի վարժից ևս հմտութեանցն քաջաբար տանէր բերէր նահատակութիւնս մեծամեծս։ Որպէս զի և ո՛չ Անտիգոնոս ինքնին խոժոռէր ինչ ընդ գրգանս փափկութեան որդւոյն և ընդ ազակատանսն և ընդ գինեբռուան. զի Թէպէտ և 'ի խաղաղութեան էր իսկ Դեմետրիոս աղուացեալ այնպէս 'ի չափ կենացն, և 'ի պարապութեան իւրում յոյժ

մեղկացեալ 'ի հեշտութիւնս, 'ի կռիւս մարտից զգաստացեալ պարկեշտանայր լիբև զմարդիկ՝ որք անդստին 'ի բնութենէն այնպէս ողջախոհ վիճակեցան բարոյից։

Եւ պատմեն՝ եթէ զԴեմետրիոս անշուշտ գերեալ իսկ էր Լամիա. և յառնուլ Անտիգոնեայ համբոյր 'ի Դեմետրիոսէ՝ յորժամ դարձեալ գայր 'ի տարաշխարհէ, ասէր առ նա ծիծաղելով. "Կարծիցես թերևս սիվ որդեակ համբուրել զԼամիա,,։ Սակայն և դեգերեալ Դեմետրեայ երբէք 'ի գինեբբուս, և կեղծաւորեալ առ հօրն ախտանալ դումն, տայր պատասխանի Անտիգոնոս։ "Լուայ ուրեմն զայդ. այլ արդեօք թասոսեան կամ քիոսեանն ելցէ դումդ 3,,։ Իսկ և երբեմն լուեալ Անտիգոնոս զխօթանալ Դեմետրեայ, չոքաւ տեսանել զնա. իսկ առ դուրսն պատահէր միում 'ի գեղաղէշ անտի մանկանցն։ Ապա մտեալ 'ի ներքս և նստեալ առընթեր որդւոյն՝ առեալ շշաւփեր ըզձեռնն. և յասել որդւոյն՝ այն ինչ թողուլ զնա ջերմանն, ասէ Անտիգոնոս. "Եւ կարի իսկ քաջ որդեակ, և ես ինքնին պատահեցայ նմա առ դուրսն 'ի մեկնել նորա,,։ Արդ հեղաբար այսպէս բերէր Անտիգոնոս զվրիպակ զկիրսն Դեմետրեայ, և երեսս առնէր այլոց գեղեցիկ նահատակութեանց որդւոյն։

Քանզի և Սկիւթացւոցդ ազգ 'ի գինեբբուս իւրեանց և յարբեցութեան՝ հարեալ

Ճայթմունս գործեն լարից աղեղանց, իբ-
րու անդրէն խնդրեն գրգռել կորովացու-
ցանել նոքա զմեղկաղէտ զոգիսն 'ի հեշ-
տութենէն։ Իսկ Դեմետրիոս անձնատուր
է զի 'ի գրգանս հեշտութեան, և է դար-
ձեալ 'ի լրջութիւնս, և երկոցուն ուրոյն
պատկառ կացեալ, ոչինչ նուազեալ վա-
տանայր 'ի պատրաստութիւնս մարտից պա-
տերազմաց։ Նա և զօրավար քաջ ևս զանձն
'ի ներքս ընծայէր 'ի հանդերձանս բանա-
կին, քան 'ի գործ անդր. քանզի և ա-
ռատս յոյժ պատրաստէր զամենայն ըզ-
պէտսն. և յոյժ հոյակապս և շքեղս խըն-
դրէր զչինութիւն նաւացն և զմանգղիո-
նիցն, և հեշտանայր զնոսա։ Քանզի և էր իսկ ինքն հնա-
բագէտ և հանճարիմաց անդատին 'ի բնու-
թենէն, և ոչ 'ի խաղ և 'ի սփոփութիւնս
դուշնաքեայ կրթէր զըղձականութիւն զա-
ղուեստիցն՝ ըստ որում և այլք 'ի թագա-
ւորացն, որ կամ սրինգ հարկանեն կամ
նկարս կենդանագրեն կամ 'ի ճախա-
ղակս վաստակեն։ Որպէս Երոպոս Մա-
կեդոնացի պարապէր և զբօսնոյր կեր-
տել տրապիզս փոքրկունս և լապտերս։
Եւ Ատտաղոս Փիլոմետորը՝ մշակէր բոյս
դեղոց բժշկականս, սերմանէր և տնկէր
'ի դրախտսն արքունի ոչ միայն զՅոսկիա-
մոն և զԿոճ վերացի, այլ և զՄոլախինդ
և զԸնծախոտ և զԴորիկնիոն, և պարա-
պէր թեւակոխէր իմանալ ճանաչել զաւիշս
և զպտուղս և քաղել ժողովել 'ի ժամա-

նակի։ Իսկ Պարթևաց թագաւորք իսկն-
դային անձամբ անձին թեքել և սրել ըզ-
սայրս նետիցն։

Բայց Դեմետրիոսին և 'ի հետևակ ար-
ուեստսն պարապել՝ արքենի էր, և նորա
գործելոյն՝ հոյակապ էր օրինակն. և ըստ
փութոյ ջանից արուեստիցն՝ զոգւոյն մե-
ծութիւն և զհանճարոյն 'ի դէմս բերէր
յիւր ձեռակերտսն. և արժանիք երևեցան
նոքա ոչ իմաստութեան միայն առն թա-
գաւորի և հարստութեանն, այլ և ձեռացն
հարտարութեան գլխովին. քանզի և մե-
ծութեամբ նոցա յապուշ կրթեաց զբա-
րեկամն, և 'ի գեղն նոցա հիացոյց և զթըշ-
նամին։ Եւ քան թէ յաւելուածովք
ինչ՝ ճշգրտագոյնս ևս ասացան բանքս։
Քանզի և յակճիռս կացեալ հայէին թըշ-
նամիք 'ի նաւս նորա 'ի հնգետասանաթիս
և 'ի վեշտասանաթիս՝ իբրև նաւէին քերէին
նոքա առ ցամաքաւն իւրեանց։ Դարձեալ
և մանգղիոնք նորա՝ որոց անուն կարդային
Էնէ՛ւ՛ն, այն է՝ քաղաքամարտք և քա-
ղաքառուք, 'ի տեսիլ հրաշից կարդեցան
և պաշարելոցն անգամ. որպէս և ար-
դիւնքն ինքնին վկայեցին։ Քանզի և Լիւ-
սիմաքոս առաւել քան զամենայն թագա-
ւորս ոսկերիմ Դեմետրեայ, իբրև վառե-
ցաւ կազմեցաւ խաղալ ընդդէմ նորա 'ի
պաշարել նորա զՍողացւոց քաղաք 'ի Կի-
լիկիա, առաքեաց խնդրեր ցուցանել նմա
զմենքենայս իւր և զծովագնաց լինել զնա-
ւաց նորա. իբրև զինդիրն էառ 'ի Դեմե-

սրեայ, և 'ի զնին եկաց և ետես, այնպէս մեծապէս հիացմամբ միանգամայն չու ա-
ղար և 'ի բաց գնաց։

Նա և Հռոդացիք ինքնին՝ որ հարուստ ժամանակ պաշարեալ կացին 'ի նմանէ, 'ի
լուծանել մարտին՝ խնդրէին 'ի նմանէ 'ի մանգլիոնից անտի նորա 'ի յիշատակ զո-
ղութեան նորա և իւրեանց ևս քաջու-
թեանն։ Քանզի մարտ եղեալ կռուեցաւ
նա ընդ Հռոդացւոց, զի նիզակակից էին
նոքա Պողոմեայ. և առեալ մօտեցոյց նա
'ի պատուար անդր նոցա զահագինն 'ի քա-
ղաքամարտ մանգլիոնից անտի, և էր նորա
խարիսխ քառակուսի. և միոյ միոյ 'ի կող-
մանցն լայնութիւն կանգնոց քառասուն
և ութից, և բարձրութիւն՝ վեթսուն և
վեցից. և քաղելով գործեալ էր, զի և
ծայր մանգլիոնին անձկանայր քան զխա-
րիսխն։ Իսկ 'ի նեղքս անդ խորշ խորշ զա-
տուցեալ 'ի յարկս սենեկաց, և միոյ միոյ
'ի սենեկացն պատուհան մի. և արտաքս
ընդ պատուհանն թափէին արձակէին ազդ
ազդ նետից տարափոց. և էր նա լի արամբք
քաջամարտիկք՝ հմուտք յամենայն ազդ
զինուց։ Եւ քանզի ամենևին յաղթ և ան-
դեղև 'ի շարժել իւրում, առ կայացեալ
ուղղդ 'ի խարսխին և հանգիստակշիռ ան-
դրդուելի յակաստանի՝ յառաջ վարէր
այնպէս մեծապէս ճռնչալով և անհնարին
ուժով. արհաւիրք ոգւոց, միանգամայն
և հանդէս բերկրալի աչաց տեսանելեացն։

Իսկ յայն մարտ յայնժամ ածին բերին

առ Դեմետրիոս 'ի Կիպրոսէ՝ և լանջա-
պանս երկու զբահից երկաթեաց, միոյ միոյ
'ի նոցանէն կշռուն՝ քառասուն մնասից։
Եւ յայնժամ Զոյիլոս Ճարտարապետ
զբահիցն՝ ցոյցս 'ի նեղքս բերելով կարծ-
րակուռ ամրութեանն, հրաման տայր բա-
ցէ 'ի բաց 'ի քսան և 'ի վեց քայլից վիքին
մի 'ի նեռընկեցէն արձակել 'ի մի 'ի նոցա-
նէն. իբրև զայն արարին՝ անխորտակելի
ամենևին մնայր երկաթն, և գծանիշ հա-
զիւ գուշնաքեայ՝ որպէս 'ի գրչէ՝ գծէր 'ի
նմա։ Զզբահ զայս տանէր ինքնին Դեմե-
տրիոս. և զմիւս այլ՝ Աղկիմոս Եպիռով-
սացի այր քաջամարտիկ առաւել քան
զամենայն նիզակակիցս նորա, և յոյժ կո-
րովի. նա միայն վարէր զէն կշռոյ երկուց
տաղանդաց, իսկ այլք՝ զմիոյ. բայց տա-
պաստ անկաւ այրն 'ի կռուին 'ի Հռոդոս
մօտ 'ի տեսարանն։ Քանզի և յայնժամ
քաջապէս մարտ եդեալ կռուէցան Հռո-
դացիք. և անգանօր Դեմետրիոս՝ Թէպէտ
և ոչինչ երևելի նահատակեալ, կայր և
Ճգնէր ընդդէմ նոցա. քանզի 'ի յղել
Փիլիպայ տիկնոջն նորա առ նա նամակ և
պատմուճանս և պաստառակալս, գերի
վարեալ նոքա զնաւն առաքէին առ Պտղո-
մէոս հանդերձ ամենայն կարասուովն. և
հետևող չգտան նոքա 'ի բանին՝ գեղեցիկ
չափու Աթենացւոցդ, որ ձերբակալ եր-
բեմն արարեալ զգրաբեր նուիրական Փի-
լիպպոսի 'ի կռուին, Թէպէտ և զամենայն
նամականին բացեալ ընթերցան նոքա, ոչ

բացին զառ նա նամակն զՈլիւմպիադայ. և անդրժելի այնպէս կնքաւոր յղեցին առ նա։ Բայց Դեմետրիոս Թէպէտ և 'ի խոր խոցեցաւ, ոչինչ հանդարտեաց վրէժ առնուլ Թշնամանօք 'ի Հռոդացւոց անտի, Թէպէտ և դէպ ժամանակ 'ի ձեռն անկաւ։

Քանզի դէպ եղև 'ի նմին ժամանակի Պրոտոգենեայ Կաւնացւոյ նկարել Հռոդացւոց զպատկեր Եալիւսոսի. և զպնակ զայն նկարուն գոգ աւարտեալ՝ 'ի ձեռս բերէր Դեմետրիոս յարուարձանի ուրեք. իսկ անդուստ Հռոդացիք քարոզ մի առեալ արձակեցին առ Դեմետրիոս, աղաչէին ներել և մի զաննմանն զայն ձեռակերտ յապականութիւն տալ։ Եւ պատասխանի Դեմետրիոս և ասէր՝ մոռադիւրագոյնս զպատկերս այրել զհօրն, քան զարուեստին զայն քիրտն այնչափ. քանզի և ասեն ամս եօթն ծախել Պրոտոգենեայ 'ի ճշդրտել զնկարն։ Եւ պատմեն՝ և Ապելլեայ ինքնին գլխովին այնչափ իմն յապուշ կրթեալ 'ի տեսիլ նորա, զի և հարուստ ժամ այնպէս անբարբառ կացեալ, 'ի վերջէ ուրեմն գոչէր. "Բաբէ մեծապէս քրտանցն, և հրաշակերտ գործոյն"։ Սակայն և ասէր եւ՝ անբաժ գոլ նկարուն 'ի շնորհաց անտի՝ որով իւրն նկարակերտք այնպէս առ երկնիւք քերեն։ Այլ ապա այն պատկեր Եալիւսոսին ածեալ 'ի Հռոմ 'ի միասին ընդ այլոց նկարուց, անդանօր հրդեհակէզ լինէր 5։

Բայց յայնժամ Հռոդացիք անհնարին

ժուժկալեալք 'ի կռուին, անգուստ Դեմետրիոս պատրուակ խնդրէր մարտին. և յայնժամ Աթենացւոյն անցեալ 'ի մէջ՝ իրաւախոհութեամբ պայման դնէին՝ հռոդացւոց նիզակակից լինել Դեմետրեայ և Անտիգոնոսի, բայց ընդեմ Պտղոմեայ ոչ։

Իսկ յետ այսորիկ զնոյն Դեմետրիոս կարդացին Աթենացիք 'ի Թիկունս ընդդէմ Կասսանդրոսի, քանզի պաշարումն ածեալ էր նա իւրեանց քաղաքին. խաղաց գնաց Դեմետրիոս երեքհարիւր և երեսուն նաւուք, բազմութեամբ հետևակաց. ոչ յԱտտիկոյ միայն 'ի բաց զԿասսանդրոս վանէր հալածէր, այլ և զհետ մտեալ նորա մինչև 'ի Թերմոպիւղէս և հարուած 'ի վերայ ածէ՝ առնոյր զԵրակղէա ինքնակամ անձնատուր 'ի նա. և ընդ ձեռամբ նորա նուաճէին և Մակեդոնացիք ևս Թուով վեց հազար։ Ապա 'ի դարձին առեալ յազատութիւն կարդէր զՀելլենացիս որ յայսկոյս Թերմոպիւղեայց, և նիզակակից իւր առնէր զԲիովտացիս և նուաճէր զԿենքրայիս. և հասեալ տիրեալ Փիւղեայ և Պանաքտեայ՝ ամուրք Աստիկոյ, յորս և էին Կասսանդրեայ գունդք պահակաց, առեալ դարձուցանէր առ Աթենացիս. որ աղագաւ և Աթենացիք Թէպէտ և յառաջն անցին զանցին նոքա և յամենայն շուք պատուոյն Դեմետրեայ, և յայնժամ հնարեցան նոքա նոր օրինակ 'ի մարդահաճել զնա։ Քանզի մեծարեալ ետուն նմա 'ի բնակա-

բան զյեռոյ կողմն Պարթենոնիսայ 6, և բնակէր նա անդէն. և ասէին՝ հիւրընկալութեամբ ժողովել զնա Աթենասայ, թէպէտ և 'ի հիւրոց ինչ պարկեշտից չէր նա, և ոչ արժանիս յանձին բերէր ասպնջականութեան կուսի:

Եւ արդեաք է՞ զի լուեալ հօրն նորա վասն եղբօր նորա Փիլիպպոսի, զի օթեւանս կալեալ է 'ի տան՝ ուր կային երեք 'ի մանկամարդից, նա ոչինչ խօսեալ ընդ նմա կոչեաց առ ինքն յանդիման նորա զպանդոկապետն և ասէր. "Խակ դու հանցես ոչ զիմ որդեակն յանձկութենէ այսմի,,: Այլ Դեմետրիոս՝ որում և պատրաստ և արժան էր մեծարանս դնել երեսաց Աթենասայ՝ թէ ոչ յայլ ինչ պատճառս՝ գոնեա իբրև քեռն իւրում երիցագունի (քանզի և այնպէս կամէր կոչել զնա), պղծեաց ապականեաց զդղեակն յայնչափ ինն խեռութիւն և 'ի ցոփութիւն ընդ ազատանի մանկտոյն և ընդ պարկեշտ կանանոյն, զի և թուէր համբուն սուրբ և անարատ տեղին 'ի պագշտեալ իւրում և յանկզիտանալ ընդ Քրիւսիդեայ և ընդ Լամիայ և ընդ Դեմոյ և ընդ Անտիկիւրայ բոզիցն:

Բայց զայլ ինչ զնորա յանժուժկալութեանցն դժպատեհ ուրեմն իցէ առակել աստանօր, մեծարանս եդեալ փառաց քաղաքին այնորիկ. սակայն և ոչ լռութեամբ արժան է անցանել զառաքինութեամբ պարկեշտութեանն զԴեմոկղեայ: Էր այս Դեմոկղէս պատանեակ և

տէգ մօրուացն չև էր արձակեալ, և զան-
խլացաւ ինչ ոչ նա 'ի Դեմետրեայ. քան-
զի և էր նորա մականուն վկայ գեղոյն. զի
յորջորջէին զնա՝ Դեմոկղէս գեղեցիկ:
Արդ այս պատանեակ անդրդուելի նահա-
տակեալ առ որս միանգամ ընծայիւք բաղ-
մաք և սպառնալեօք ևս հրապոյրս խառ-
նէին նմա, հուսկ ապա երթեալ 'ի բաց
հրաժարէր յասպարիսաց ըմբշաց և 'ի վար-
ժից մրցանաց: Եւ էր պատանեկին երբէք
երբէք գնալ 'ի բաղանիս և լուանալ ա-
ռանձինն. իրազգած բանին եղեալ Դե-
մետրիոս, և 'ի դէպ ժամու որսացեալ զնա՝
'ի վերայ յարձակէր պատանեկին անդանօր
միայն ընդ միայն. իբրև յանզերծանելի 'ի
հարկ յայն պաշարեցաւ մանուկն 'ի միայ-
նութեան, 'ի բաց զխուփն առեալ զկաթ-
սային՝ ոստնոյր 'ի ներքս 'ի ջուր անդր յե-
ռանդան, և այնպէս արագամահ լինէր:
Աղէտս արդեօք կրեալ անարժան, սակայն
և միտս ստացեալ արժանի հայրենեացն և
գեղոյ անձինն:

Եւ չարար նա իբրու զԿլենետոս զորդի
Կղէոմեդոնտեայ, որ հնարս հնարեցաւ
փրկել զհայրն 'ի դատակնքոյ անտի յինքից
քանքարացն, և գիր առ 'ի Դեմետրիոսէ 'ի
ներքս մատուցանէր ժողովրդեանն, որով
և ոչ անձին միայն ամօթ հանդերձեաց,
այլ և զքաղաքն ինքնին խռովեալ ամբո-
խէր. քանզի թէպէտ և զԿղէոմեդոնտէս
լուծին արձակեցին, սակայն և վճիռ ևս 'ի
ներքս եատուն, մի ևս այնուհետև ումեք 'ի

քաղաքայնոցն գիր առ 'ի Դեմետրեայ յանդիման մատուցանել։ Բայց լուեալ զայն Դեմետրեայ, ոչինչ հանդուրժեաց՝ այլ և մեծապէս ևս խոժոռեցաւ. ուստի և զահի յայնժամ Աթենացւոցն հարեալ, ոչ զվճիռն զայն միայն ջրէին, այլ և պատուհաս ևս 'ի վերայ կապեցին՝ որ խրատուք եղեն այնմ և զօրավիգն, կիսոց՝ մահուամբ, և կիսոց ևս՝ վտարանդութեամբ։ Եւ առ այս դարձեալ՝ վճիռ ևս այլ հաստատեցին նոքա. բնաւ իսկ զհրամանն զԴեմետրեայ արքայի ունել Աթենացւոց ժողովրդեան իբրև սուրբ առ աստուածս, և իբրև իրաւ առ մարդիկ։ Բայց յայնժամ յասել լաւի ուրումն առն, եթէ՝ Մոլի Սարատոկղէս՝ զի այնպիսի ինչ 'ի նեբքս եբեր. ասէր անդուստ Դեմոքարէս Լակոնացի. "Այլ մոլէր արդեօք, եթէ չէր մոլեալ". քանզի և մեծապէս զօրավիգն լինէր Սարատոկղէս 'ի մարդահաճութեանն։ Բայց Դեմոքարէս ամբաստանեալ վասն բանին՝ չոքաւ վտարանդի։ Արդ օրինակ զայս յայնժամ քաղաքավարէին Աթենացիք, քանզի 'ի պահակ գրնդէն զերծեալք նոքա՝ վայելէին յազատութեան։

Իսկ յետ այսորիկ Դեմետրիոս անցեալ 'ի Պեղոպոննիսոս, իբրև 'ի դիմի հարաւնմա և ոչ ոք 'ի Թշնամեաց, այլ առհասարակ տեղի տուեալք թողին լքին զքաղաքն, յինքն առեալ ժողովէր ողջոյն ըզգաւառն՝ զոր Ակտէ կոչեն և զԱրկադիա,

բայց 'ի Մանտինեայ և յԱրգոսէ. և յա-
զատութիւն հանէր զՍիկիւոն և զԿորնթոս՝
տուեալ յայնժամ տաղանգս հարիւր պա-
հապանաց գնդին։

Եւ ապա յԱրգոս 'ի գալ տօնին Հե-
րայ, ինքնին նա ոստիկան 'ի վերայ կայր
մրցանացն, և տօն ընդ Հելլենացւոցն կա-
տարեալ կին ածէր յայնժամ զԴէիդա-
միա զդուստր զԷակիդեայ արքային Մո-
ղոստացւոց և զքոյր Պիւռռոսի։ Ապա ա-
մոքեալ զՍիկիւոնացիս փոխել չու առնել
յայլ վայր մօտ իւրեանց քաղաքին, տայր
նոցա շինել անդանօր զքաղաքն՝ յորում
բնակեն այժմ նոքա. և փոխեալ ընդ վայ-
րացն և զանուն ևս քաղաքին՝ փոխան Սի-
կիւոնիի անուն կարդայր նմա Դեմետրեան։

Իսկ և յաշխարհախումբ ժողովին Յիսթ-
մոս, ուր և բազմութիւն սաստիկ խմբե-
ցաւ մարդկան, հուչակաւ համբաւեցաւ
զօրավար Ելլադայ. որպէս անդ ուրեմն
Փիլիպպոս և Աղեքսանդրոս, որոց և վե-
հագոյն զանձն իւր կարծեաց. քանզի սոն-
քայաւ ընդ առաջիկայ բաղդն և ընդ հաս-
տահարուստ տէրութիւնն։ Եւ արդեօք
Աղեքսանդրոս և ոչ զոք յարքայից զրկեաց
յանուանէն, և ոչ արքայից արքայ երբէք
կոչեաց զանձն, թէպէտ և արքայի անուն
և արքայութիւն գլխովին 'ի ձեռս էտ նա
բազմաց ոմանց։ Իսկ Դեմետրիոս խաղ ա-
բարեալ և յընչաց քերեալ՝ որ միանգամ
անուն զայս տային այլոց ոմանց՝ բայց 'ի հո-
րէն և յիւրմէն, հեշտալուր ապա լինէր

առ որս գամ մի 'ի գինեբրուս նուէրս ձо-
նէին Դեմետրեայ ալբայի, Սելեւկեայ
Փղապետի, Պտղոմեայ Նաւապետի, Լի-
սիմաքեայ Գանձապետի, և Ագաթոկղեայ
Սիկիլիացւոյ Կղզիապետի: Յունկն ար-
քայիցն պատմեալ զրոյց անուանցդ այգո-
ցիկ, առհասարակ նոքա 'ի ծաղր հատա-
նէին. միայն Լիւսիմաքոս 'ի խոր խոցէր՝
զի առ Նեբքինիս ունի զնա Դեմետրիոս.
քանզի այս Թագաւորք հասարակ առ 'ի
Նեբքինեաց ունէին զիւրեանց գանձա-
պետսն: Վասն որոյ և Լիւսիմաքոս ոխե-
րիմ Դեմետրեայ առաւել քան զամենե-
սեան, և հեգնեալ զնա 'ի տուփանսն նո-
րա առ Լամիա, ասէր. առաջին նուագ ա-
ւագիկ տեսանէ ինքն պոռնիկ արտաքս ե-
կեալ յՈղբերգակ խորանէն: Ընդուստ և
Դեմետրիոս ասէր՝ եթէ այն իւր պոռնիկ
պարկեշտագոյն ևս է քան զՊենելոպէն
Լիւսիմաքեայ:

Իսկ յետ այնորիկ յուզի անկեալ Դե-
մետրիոս 'ի Պեղոպոննիսոյ յԱթէնս, կան-
խէր գրէր առ Աթենացիս 'ի գալ նորա
առ նոսա՝ անդէն իսկ և իսկ իւղագլխեալ
զնա, և միանգամայն իսկ յամենայն 'ի
խորհուրդսն՝ 'ի փոքունց անտի մինչև 'ի
Վերատեսչութեան կարգն առնուլ ըն-
ծայեալ զնա. գործ՝ որ օրէն չէր, և երբէք
ոչ տեսեալ յառաջ ժամանակաւ. քան-
զի փոքունքն 'ի խորհրդոց կատարէին յամ-
սեանն Անթեստերիոնի, և մեծքն՝ 'ի Բո-
դրոմիոնին. իսկ 'ի Վերատեսչութեան

կարգն ընծայէին և ոչ զոք, բայց յանցանել գոնեա տարեւոյն յետ մեծացն։

Ընթերցեալ Աթենացւոց զնամակն, միայն Պիւթոդովրոս Զահընկալ զդէմ դառնայր. սակայն և վճարեաց և ոչինչ։ Քանզի յայնժամ ըստ խորհրդոյն Սարատոկղեայ վճիռ եառուն Աթենացիք՝ զՄունիքիոն ամիսն որ գիպեցաւ յայնժամ՝ կոչել և համարել Անթեստերիոն, և ապա առնուլ իւղագլխել զԴեմետրիոս ըստ օրինաց քաղաքին. և ապա զնոյն ամիս զՄունիքիոն յԱնթեստերիոնէ փոխադրել 'ի Բոդրոմիոնն, և կատարեալ 'ի նմա և զայլն ևս՝ ընծայեցին զԴեմետրիոս մինչև 'ի Վերատեսչութեան կարգն։ Որ աղագաւ ապա և Փիլիպպիդէս հեգնէր զՍարատոկղէս՝ ասելով.

" Որ ըզտարեւոյն կարգ շրջանաց
Ի մի ամիս առ ժողովեաց ,, ։

Իսկ յաղագս բնակութեանն Դեմետրեայ 'ի Պարթենիոնին, ասէր.

Զանխաբ դրդեակն համարեցաւ
Նա Պանդոկի,
Եւ բոզս առեալ 'ի նեղքս ածէր
կուսին մեծի ։

Բայց սակայն և յամենայն վատթարութիւնսն յայնժամ 'ի քաղաքին և յօրինաշանցութիւնսն, ասեն՝ 'ի վեր քան զամե-

նայն խոժոռեալ Ա֊թենացւոց, զի հարկ 'ի վերայ եդ նոցա Դեմետրիոս արագ արագ ժողովել կուտել վասն նորա տալանդս երկերիւր և յիսուն՝ ճեպով մեծաւ և ա֊նողոքելի պահանջմամբ. իբրև զայն ամենայն արծաթ ետես նա մթերեալ կուտեալ, հրաման տայր պարգևել զայն Լա֊միայ և այլոց ևս բազմից որ ընդ նմա. զի գնոց գնեսցեն նոքա իւրեանց օճառս։ Քանզի 'ի խոր խոցեցան քաղաքացիք՝ քան 'ի տուգանացն՝ առաւել ևս 'ի թշնամանացն. և քան 'ի գործոցն՝ առաւել ևս 'ի բանիցն։ Սակայն և կէսք պատմեն՝ ընդ թեոտաղացւոց գործել զայն Դեմետրի, և ոչ ընդ Ա֊թենացւոց։

Ա֊յլ բաց 'ի տուգանաց անտի, կամեցեալ Լամիա ընթրիս մեծահաց գործել արքայի, առնոյր ժողովէր արծաթ և 'ի բազմաց ըստ կամի. և եղեն այն ընթրիք յոյժ հռչակելիք և հոյակապք և բազմակատարք, որպէս պատմէ ոճով Լինկէոս Սամոսացի։ Ոյր աղագաւ և 'ի կատակերգակաց ոմն քերթողաց ճահաւորակի կոչեաց զԼամիա արդարև Էլէբ֊օլէ 7։ Իսկ Դեմոքարէս Սողիսացի կոչեաց զԴեմետրիոս՝ Ա֊ռասպէլ. զի ունէր առ իւր և զԼամիա 8։

Եւ այսպէս ասպա սիրեալ և գգուեալ այս Լամիա 'ի Դեմետրեայ, նախանձուկս արկանէր և խանդ ոչ կանանցն միայն Դեմետրիոսի, այլ և բարեկամացն նորա։ Էր երբեմն յաւագաց անտի նորա երթալ հրեշ֊

տակուԹեամբ առ Լիւսիմաքոս. որ և յայն-
ժամ 'ի պարապել իւրում՝ առեալ ցու-
ցանէր նոցա սպիս խոր որ 'ի բարձս իւր և
որ 'ի բազուկն՝ զՃիրանաց առիւծու. և
նստեալ պատմէր նոցա զկռուել իւր ընդ
գազանին, յորժամ Աղեքսանդրոս արքայ
առեալ փակեաց զնա 'ի միասին ընդ գա-
զանին ընդ այնմիկ: Յայնժամ ծիծաղեալ
հրեշտակացն Դեմետրի, պատասխանի ե-
տուն՝ եԹէ և իւրեանց իսկ արքայն ունի
'ի պարանոցին զնայԹոց զահագին գա-
զանին զԼամիայ:

Եւ արդեօք զարմանք են, զի անգստին
'ի սկզբանէ գժկամակեալ նորա ընդ Փիլ-
լա 'ի պատճառս տարաժամ հատակին,
այնպէս ապա գերեալ 'ի Լամիայ՝ սիրեաց
զնա հարուստ ժամանակ, Թէպէտ և սա
ինքնին անցեալ զաւուրքք էր: Վասն որոյ
ցԴամոնն մականուանեալն Մանիա, 'ի
սրնդահարել անդ Լամիայ յընԹրիսն,
հարցեալ Դեմետրիոս, եԹէ "Զիարդ
Թուի քեզ դա,,: Եւ պատասխանի. "Պա-
ռաւեալ, ո՞վ արքայ,,: Եւ դարձեալ կըր-
կին՝ իբրև առաջի եդան խահքն անուշից,
յասել առ նա Դեմետրեայ. "Տեսանե՞ս
դու, քանիսն ինձ առեալ առաքէ Լա-
միա,,. եւ պատասխանի Դամոնն. "Եւ
առաւել ևս առաքեսցէ առ քեզ մայրն
իմ, եԹէ մոցես դու և առ նա,,:

Բայց զԼամեայ յիշատակեն և զընդդի-
մաբանուԹիւնն՝ զոր ասաց ընդդէմ հրա-
շակաւոր դատաստանին Բոկքորեայ 9:

Քանզի այր ոմն յԵգիպտոս 'ի սէր հարեալ բոզի ուրումն Թոմիսիս անուն, որ 'ի հաճել խնդրէր ոսկի յոյժ. և ապա յերազի տեսեալ առնն լինել ընդ նմա և այնպէս շինեալ ցանկութեանն, առեալ Թոմիսիս զայրն քարշէր 'ի դատաստան՝ հատուցանել նմա զկապէնան։ Իսկ Բոկքորոս լուեալ զինդիր բոզին, հրաման տայր առնն գնել յամանի զկշիռ բոլոր ոսկւոյն, և յայս կոյս յայն կոյս 'ի վեր 'ի վայր բերել հոսել զայն ձեռօքն և արկանել ձգել զատուէր ոսկւոյն 'ի բոզ անդր. իբրու այն որ կարծիքն ինքնին՝ ստուէր ճշմարտութեանն ելցէ։ Բայց Լամիա ոչինչ արդար դատեցաւ զայն դատաստան. քանզի ըստուէրն չէլից զարծաթսիրութիւն զբոզին, իսկ երազն ինքնին շինչոյց զսէր պատանւոյն։ Այլ վասն Լամիայ այսչափ ինչ հերիքասցի։

Բայց յայսմ հետէ դէպք և նահատակութիւնք առն՝ զորմէ բանքս են, իբրու 'ի կատակերգութենէ իմեծնէ յողբերգութիւն առեալ փոխեն զպատմութիւնն։ Քանզի միաբանեալ այնուհետև առհասարակ ամենայն թագաւորք ընդդէմ Անտիգոնեայ, և 'ի մի ժողովեալ ողջոյն զզօրութիւն իւրեանց, յայնժամ չու առնէր գնայր Դեմետրիոս յԵլլադայ և միաբանէր ընդ հօրն. իբրև յայնժամ հայրն 'ի վեր քան զսիս հասակին նահատակէր, ապա և Դեմետր առաւել ևս քաջալերեցաւ։ Այլ արդեօք եթէ Անտիգոնեայ 'ի դուշնա-

քեռայն տեղի տուեալ էր, և սաստիկ ի-
խանասիրութեանն դուլ արարեալ էր,
ինքն փրկէր ապրէր, և զորդին առեալ 'ի
վերայ ամենեցուն տիրացուցանէր. բայց
ելի էր նա անդատին 'ի բնութենէն այր վայ-
րագ և արհամարհոտ և անհամբոյր 'ի բանս
և 'ի գործս, խոժոռեալ սրտնեցոյց արս
բազումս 'ի պատանեաց և 'ի ծոխիցն։ Ա-
այս և յաղագս նիզակակից դաշնաւորու-
թեան նոցա ընդ միմեանս՝ ասէր քարամբ
և շառաչմամբ վարատել փարատել զնո-
սա՝ իբրու զերամս սերմանաքաղ թռչնոց։
Զի և էին իսկ նորա եօթանասուն հազար
հետևակաց, և տասն հազար այրուձիոյ, և
եօթանասուն և հինգ փիղք։ Բայց էին և
թշնամեաց նորա վաթսուն և չորս հազար
հետևակաց, և այրուձի՝ հինգհարիւրով
աւելի քան զնորայն. և փիղք չորեքհա-
րիւր, և կառք հարիւր և քսան։

Ա՛յլ 'ի մօտել թշնամեացն, այնչափ
ինն փոփոխեցաւ Անտիգոնոս 'ի սրտին. զի
և յուսաբեկ առաւել էղև այրն, քան թէ
'ի խորհրդոցն շրջեցաւ։ Քանզի որ յա-
ռաջն յանձնապաստան 'ի վտանգս և յո-
խորտ, և ձայնէր բարձր, և բարբառ ար-
ձակէր խրոխտս, և բազում անգամ նա 'ի
միտ 'ի կռիւն՝ հեգն խօսէր և կատակա-
բան լինէր, ցոյցս զարութեան սրտին բե-
ռելով և զարհամարհութեան թշնամեացն.
իսկ յայնժամ լուռ և անմռունչ՝ այնպէս
մտայոյզ լինէր. առ այս՝ և զորդին իւր
յայնժամ մատնանիշ արարեալ զօրակա-

նին՝ յանդիման նորա հրատարակէր զնա 'ի փոխանակ իւր։ Իսկ որ առաւել զարմացոյց առհասարակ, զի և յիւրում խորանի միայն ընդ միայն զբանիւք անկաւ ընդ նմա. այն՝ որ երբէք և ոչ ընդ որդւոյն անգամ՝ ոչ բնաւորեցաւ նա մտանել 'ի խօսս գաղտնիս. այլ ինքնին առանձին խորհուրդ հաստատէր, և ապա գործոյն հրաման տայր յայտնապէս։ Ուստի և պատմեն՝ Եթէ Դեմետրիոս տակաւին պատանեակ՝ հարցեալ երբեմն զհայրն, երբ ժողովեսցեն նոքա զվրանն, եւ պատասխանի հայրն ցասմամբ և ասէ. "Թերևս տագնապ իցէ քեզ, մի արդեօք դու միայն զձայն չլսիցես զփողոյն"։

Բայց յայնժամ և 'ի ձախողակ նշանաց սրտաթափ լինէին նոքա։ Քանզի թուէր Դեմետրեայ տեսանել յերազի զԱղեքսանդր գեղեցիկ վառեալ, և հարցանէր ցնա՝ զի՞նչ նշան բաշխեսցեն նոքա զմարտին. և 'ի պատասխանի տալ նորա, "Զարամազդ և զՅաղթութիւն". ասէր Աղեքսանդր. "Անցից արդ ուրեմն առ թշնամին. զի նոքա ժողովեսցեն զիս"։ Նա և Անտիգոնոս յելանել արտաքս 'ի դաստաւորել կարգել փաղանգին, գթեաց և անկեալ յորսայս զգեստնէր՝ վառթարեալ յոյժ անձամբ. և իբրև կանգնեցաւ, 'ի վեր ընդ երկինս զձեռսն ամբարձեալ, խընդրէր 'ի դից՝ զի կամ յաղթեսցէ կամ օրհասն կանխեսցէ մինչև պարտեալ իցէ։

Իբրև խաղին դրգռեցաւ, յայնժամ

Դեմետրիոս առեալ ընդ իւր զբազումս յայրուձիոյն և զընտիր ընտիր զօրականին՝ անկանէր 'ի վերայ Անտիգոնոսի որդւոյն Սելեւկեայ. մեծապէս շահատակեալ՝ մարտ եդեալ կռուէր մինչև 'ի փախուստ զթշնամին դարձուցանել. սակայն յանդգնագոյնս հետամուտ նոցա եղեալ դժպատեհ պատուասիրութեամբ՝ աղարտեաց խանգարեաց զյաղթութիւնն։ Քանզի ապա դարձ արարեալ ոչինչ յաջողեցաւ այնուհետև խմբել ընդ հետևակացն, քանզի 'ի մէջ անդր խուժեալ խռնեալ էր երամակաց փղաց թշնամեացն։ Անդուստ դէտակն 'ի վեր ամբառնայր Սելեւկոս, տեսանէր զփաղանգ Անտիգոնոսին թափուր յայրուձիոյն. ոչ պատէր պաշարէր՝ այլ ահ արկեալ իբրու անդէն 'ի նեբքս փակել, այնպէս յածեալ՝ ժամ տայր պարապոյ թշնամեացն անցանել յիւր կողմն, որ և եղև իսկ. քանզի գունդ հատաւ մեծ 'ի փաղանգէն և ինքնակամ անցանէր առնա. և իբրև այլք փախստեայ գնացին, և բազումք անդուստ խուժէին 'ի վերայ Անտիգոնոսի, ասէն որ մերձն կային. "Սոքա ընդդէմ քո խաղան ոմ ալքայ". ետ պատասխանի. "Եւ որ այլ նպատակ կայցէ նոցա՝ բայց յինէն. այլ հասցէ ինձ Դեմետրիոս 'ի Թիկունս"։ Մինչդեռ նա այսր անդր դեգևեալ հայէր տեսանել զորդին, անդուստ տեղատարափ պատահեալ նետից՝ անկանէր։ Յայնժամ առհասարակ նորա ծառայք և բարեկամք լքեալ զնա,

միայն Տորակէս Լարիսացի կայր մնայր առընթեր դիականն։

'Ի գլուխ զմարտն տարեալ թագաւորքն յաղթականք՝ ողջոյն զտէրութիւնն Անտիգոնեայ և զԴեմետրեայ առեալ և իբրու մարմին մեծ յօշեալ բաժանեցին յիւրեանս. նոյնպէս և զգաւառսն նոցա՝ որ յառաջն ընդ ձեռամբ իւրեանց կային։ Իսկ Դեմետրիոս փախստեայ զերծեալ հինգ հազար հետևակօք և չորեք հազար այրուձիով 'ի խուճապ տագնապի հասանէր յԵփեսոս։ Անգանօր խիթացեալ առհասարակ՝ եթէ առ անքատութեան ընչին յարձակեալ տեռազերծ զմեհեանն արասցէ, նա զանդիտեալ եթէ յանկարծ զօրականք 'ի նոյն միտեցին, վաղվաղակի չուոյ հրաման տայր և գէմ եդեալ նաւէր յԵլլադա. մեծապէս յուսացեալ յԱթենացիսն՝ որ մնացին նմա։ Քանզի և թողեալ իսկ էր նա առ նոսա՝ և զնաւս և ըզդանձս իւր, և զիւր ևս զկինն զԴէիդամիա. կարծէր ուրեք այլուր չգտանել անձին ամուր ապաստանի, բայց 'ի բարեկամութեանն Աթենացւոց։ Իբրև այնպէս աճապարէր նա հասանել առ նոսա, անդէն յուղղոչն պատահեցան նմա մօտ 'ի Կիւկլադեանս դեսպանք Աթենացւոց. ազդ առնէին նմա հեռագոյնս գնալ դադարել յիւրեանց քաղաքէն, իբրև վճիռ տուեալ իսկ էր ժողովրդեանն՝ մի զոք ընդունել յարքայից. և զոյց ևս ետուն նմա՝ եթէ Դէիդամիա առեալ արձակե-

ցաւ 'ի Մեգարա փառաւք և շքով ըստ արժանին նորա։ Ապա Դեմեարիոս այնչափ ինն 'ի սրամտութիւն բարկութեան բրդեցաւ, զի և այլ յայլմէ լինէր յայնժամ այրն. Թէպէտ և հեշտին ևս տարաւ նա այլոց աղէտիցն, և 'ի մեծապէս փոփոխութեան իրացն կիրս անարդ և նկուն երբէք նա 'ի դէմս չեբեր, սակայն վրէպ յայնժամ ՅԱԹԵՆացւոցն եղեալ արտաքոյ ակնկալութեանն, և կարծեալ մոերմութեան նոցուն համարէն 'ի վերայ կացեալ՝ իբրու որ արդարև 'ի նանիր և սուտակասպաս, կարի յոյժ 'ի խոր խոցեցաւ։

Եւ արդեաք ձախողակ յոյժ հանդէս (որպէս ինձ թուի) մոերմութեան ժողովրդոց առ Թագաւորս և առ իշխանս՝ է տարապայման շուք պատուոյն զոր տան նոցա. և քանզի ողջոյն գեղ շքոյն հաստատեալ կայ 'ի կամս տուողացն, յիրաւի ապա խիթալի իցէ անկեղծութիւնն. քանզի և զնոյն շուք պատուոյ սահմանեն տան միանգամայն և՛ որք երկնչին և՛ որք սիրեն։ Այր աղագաւ և հանձարեղքն դէտակն ունին ոչ յանդրիս անդր և ոչ 'ի կենդանադիր նկարսն, և ոչ յաստուածեան շուքն, այլ յարդիւնս նահատակութեանց իւրեանց. իսկ 'ի ցոյցն յայնոսիկ կամ հաստատին իբրև 'ի պատիւս, կամ թէ յերկուանան ևս իբրու ընդ իրս ինն բռնադատս. քանզի և է բազում անգամ՝ զի ժողովուրդք 'ի պատուէլ անդ իւրեանց՝ միանգամայն և ատեան զայնոսիկ՝ որ ան-

չափ և տարապայման առնուն զպատիւն յոչ կամաց ժողովրդոցն։

Ապա Դեմետրիոս յայնժամ 'ի խոր խոցեալ յԱթենացւոցն, սակայն և ոչինչ ձեռնհաս վրէժինդիր լինել, առաքէր և համեստագոյնս գանգատ կալեալ առ նոսա, ինդրէր դարձուցանել զնաւն, յորս էր և նաւ մի երեքտասան կարգեան թիոց. և առեալ յինքն զնոսա՝ նաւեաց յառաջ մինչև յԱթմոս. և զի նորա վատթարեալ էին իրք (քանզի և 'ի կողմանց կողմանց վանեցան վարեցան նորա գունդք պահակաց և ամենայն վայր ընդ ձեռամբ նուաճէր թշնամւոյն), եթող նա յԵլլադա զՊիւռռոս, և ինքն ծովագնաց 'ի Քէրրոնիսոն՝ անդ վանէր հարկանէր զտէրութիւնն Լիւսիմաքեայ. և այնպէս ապա օգուտ 'ի նեղքս բերեալ զօրականին՝ առիւր պահեաց զնոսա. և սկսան նոքա ոդի առնուլ և միւսանգամ ոչինչ անգոսնելիք գտան։ Իսկ Լիւսիմաքեայ ձեռն յայնժամ չետուն այլք 'ի թագաւորաց. քանզի և տեսանէին իսկ զնա ոչինչ 'ի չափու քան զԴեմետրիոս, այլ և հաստատարուստ գոլով նա՝ ահագին ևս էր քան զնա։

Բայց յետ ոչ բազմաց առաքեաց Սելեւկոս և խնդրէր 'ի Դեմետրեայ զդուստր նորա զՍտրատոնիկէ 'ի կին՝ որ ծնաւ նմա 'ի Փիլլայ. թէպէտ և էր իսկ Սելեւկոսի որդի Անտիոքոս յԱպամայ 'ի պարսիկ կնոջէն. զմտաւ ածէր եթէ ինչք նորա բաւական իցեն և բազմաց պայազատաց. և

զի և լաւ ելցէ նմա ազգականութիւն հաստել ընդ Դեմետրեայ. քանզի ետես ևս նա զԼիւսիմաքոս ածել զդատերսն զՊտղոմեայ. զմին վասն իւր, և զմիւսն վասն Ագաթոկղեայ որդւոյն իւրոյ: Ապա յաղգականութենէ աստի Սելեւկեայ գեղեցիկս յաջողեաց Դեմետրիոսի՝ որում և ակն երբէք ոչ ունէր. ուստի և առեալ ընդ իւր զաղջիկն՝ ծովագնաց լինէր հանդերձ ամենայն նաւուք իւրովք յԱսորիս: Իսկ յուղւոջն հարկ լինէր նմա յայց ելանել ընդ այլոց վայրաց և Կիլիկիոյ, զոր յայնժամ յետ հարուածոյն Անտիգոնեայ ունէր Պղիստարքոս յարքայից անտի: Եւ էր այս Պղիստարքոս եղբայր Կասսանդրոսի. և զանգիտեալ ոա յաղարտ իւրոյ գաւառին վարել 'ի չուոյ անտի Դեմետրեայ, և կամելով ևս գանգատ ունել ընդ Սելեւկոսի՝ զի այնպէս առանց հաւանութեան այլոցն թագաւորաց միամտեցաւ նա ընդ հասարակաց թշնամւոյն, դէմ եդեալ գնայր առ նա:

Իբրև զայն լուաւ Դեմետրիոս, չդքաւ վաղվաղակի 'ի ծովէ 'ի Կուինդոն. ուր և գտեալ անդ տաղանդս դրամոց հազար և երկերիւր զհօրն, առ ժողովեաց և ձեռով ազդ արարեալ՝ փութացաւ անկանել յուղի. իսկ յուղւոջն պատահեալ նմա Փիլիպկին իւր, գայր նմա ընդառաջ ինքնին Սելեւկոս մերձ յՈրոսսոն. և անդ յայնժամ աներկմիտ սիրով և անկեղծաւոր և արքայորէն շքով հիւրընկալէր այր զընկեր: Առա-

ջին Սելեւկոս հրաւէր ձայնէր Դեմետրեայ 'ի բանակն 'ի խորան իւր. ապա և Դեմետրիոս հիւրամեծար լինէր Սելեւկեայ 'ի նաւ իւր երեքտասան կարգեան թիոց. և այնուհետև նոքա միմեանց կենակից կենցաղակիցք անցուցանէին զաւուրս անթիկնապահք և անզէնք, մինչև առեալ Սելեւկոս զՍտրատոնիկէ՝ դարձ առնէր մեծապէս շքով յԱնտիոք: Եւ յայնժամ Դեմետր հասեալ ունէր զԿիլիկիա, և առեալ առաքէր զկին իւր զՓիլլա առ եղբայր նորա Կասսանդրոս՝ լուծանել միանգամայն զամբաստանութիւնսն Պղիստարքեայ որ զնմանէ:

Զայսու ժամանակաւ հասեալ առ Դեմետրիոս Դէիդամիա յԵլլադայ, և ոչ բազում ինչ կեցեալ առ նմա՝ մեռանէր հիւանդութեամբ: Եւ յետ այնորիկ միջնորդաւ Սելեւկոսի բարեկամութիւն հաստեալ Դեմետրի ընդ Պողոմեայ, դաշնագիր լինէին ածել նմա 'ի կին զՊողոմայիդէ զդուստր Պողոմեայ: Այս եղեն զառաջինն գեղեցիկ քաղաքավարութիւնք Սելեւկեայ մարդասիրութեամբ լի. այլ ապա խնդրեալ 'ի Դեմետրեայ գնոց արծաթոյ զԿիլիկիա, և ոչ կարելով հաւանեցուցանել զնա, խնդրէր 'ի նմանէ զայրագին լի բարկութեամբ զՍիդոնն և զՏիւրոս. և համարեցաւ իմն յայնժամ Սելեւկոս այր բռնակալ և 'ի դժպատեհս կըրթեալ. քանզի որ 'ի Հնդկաց անտի մինչև 'ի ծոնն Աստրուոց ձգեաց տարածեաց ըզ-

տէրութիւնն, տակաւին նա իբրև կարօտ և մուրիկ՝ վասն երկուց քաղաքաց 'ի նեղ արկանէր զաներ իւր, որ այնչափ ևս վատթարեալ էր այրն 'ի ձախողակ բախտէն։ Ապա և քաջիկ ուրեմն հաւատարմացոյց Սելեւկոս զՊղատոն, այն՝ որ իրաւ տայր որ միանգամ կամիցի ճշմարիտ բազմահարուստ լինել՝ մի զդոյսն աճեցուսցէ, քան թէ զընչաքաղցութիւնն կարճեսցէ. իբրու որ ոչն սանձակոծեսցէ զընչասիրութիւնն, այնպիսին ոչ յաղքատութենէն անբաժ է երբէք և ոչ 'ի կարօտութենէն։ Իսկ անգուսա Դեմետրիոս ոչինչ զարհի հարեալ՝ ասէր, եթէ թէպէտ և բիւրս ևս այլ 'ի մարտի ինքն վատթարեալ գտցի՝ սակայն երբէք ոչ հաճեսցի ընդ փեսայութիւն Սելեւկեայ այնպիսի գնոց. ասաց՝ և ամրութեան հրաման տայր քաղաքացն այնոցիկ հանդերձ զօրականաք։

Յետ այսորիկ լուր առեալ՝ զի Լաքաբէս դէպ ժամանակ գտեալ 'ի խռովութեան անդ Աթենացւոցն՝ նուաճեաց ըզնոսա բռնակալութեամբ, ակն ունէր այնուհետև հեշտին հասանել ունել զքաղաքն նոցա։ Ապա հատանէր անցանէր ըզծովն սաստիկ նաւահանդիսիւ անվտանգ ամենևին, մինչև քերեալ առ Ատտիկեաւ պաշարեցաւ 'ի մրրկէ և կորուսանէր բազում ինչ 'ի նաւացն և բազում ևս 'ի խուժանէն։ Իսկ ինքն ապրեալ՝ սկսաւ փոքրուիմն մարտ դնել կռուել ընդ Աթենացիս, այլ ոչինչ կարացեալ ստնանել, առեալ

առաքէր արս՝ տորմիլ նաւաց պատրաստել միւսանգամ. և ինքն անցեալ 'ի Պելոպոննիսոս և պաշարումն ածեալ Մեսենեայ՝ մեծապէս վտանգեցաւ 'ի հրոսակին ընդդէմ պատուարաց. քանզի հարեալ երեսն նորա 'ի վիքնէ նետընկեցին, թափ ընդ ծնօտան մինչև 'ի բերանն անցանէր վիքինն։ Սակայն և աւաքեալ 'ի վերացն, հասեալ անդրէն ընդ բռամբ ունէր 'ի քաղաքացն նշկահելոց, և միւսանգամ հորդան տայր յԱտտիկէ. և անդ տիրացեալ Եղեւսինեայ և Հռամնունդեայ՝ յաղարտ վարէր զգաւառն. և հասեալ կալեալ նաւ մի բեռնաբարձ ցորենոյ՝ որ դէմ եղեալ էր առ Ամենացիս, առեալ կախեաց զվայրէ միանգամայն և զվաճառականն և զղեկավարն։ Յորմէ և այլոցն առհասարակ ահիւ պակուցեալ, և հեռագոյնս այնուհետև կացեալք յԱթենայ, 'ի սով անհնարին տագնապեցաւ քաղաքն. նա՛ զի և յայլ ևս 'ի վաճառան նուազեալ էր. քանզի չափ մի աղի էր քառասուն դրամակշռոց, և դրիւ մի ցորենոյ՝ երեքհարիւրոց։ Եւ Թէպէտ և խուն մի քաջալերեցան Ամենացիք՝ զի նաւք հարիւր և յիսուն մօտ յԵգիպտոս հասին նոցա 'ի Թիկուն 'ի Պաղոմեայ. սակայն և առ Դեմետրիոս էբրև նաւք բազումք հասին 'ի Պելոպոննիսոյ, և բազումք ևս 'ի Կիպրոսէ, ընդ ամենայն թուով երեքհարիւր, յայնժամ 'ի փախուստ նաւքն Պաղոմեայ դառնային. և Լաքարէս ինքնին բրռ-

նաւորն խոյս տայր յայնժամ լքեալ ա-
մայի զքաղաքն ։

Ապա Աթենացիք՝ Թէպէտ և դատա-
կնիք ևս զմահու Եւռուն յառաջն՝ որ միան-
գամ բերան բացցէ վասն հաշտութեանն
ընդ Դեմետրեայ, անդէն արագ արագ ա-
ռին բացին նմա զմօտաւոր դրունսն . և
հրեշտակս ևս արձակեցին, ոչ Եթէ գթու-
թեան ինչ առ 'ի նմանէն ակն ունէին,
այլ զի տագնապեցան նոքա 'ի կարեաց մե-
ծաց . յորս և յայլ ինչ աղէտս բազումս
որ անցին ընդ նոսա յայնժամ՝ պատմեն
և զայս . Եթէ ուրեք 'ի միում յարկի տա-
վալլուկ անկեալ կային հայր և որդի՝ իբրև
վճարեալ այնուհետև վասն նոցա . և ան-
դուստ յանկարծ 'ի տանեացն 'ի վայր հո-
սեցաւ մեռելոտի միան . իբրև զայն տեսին՝
'ի վեր ոստեան և 'ի վէգ եկեալ կռուէին
ընդ միմեանս վասն որսոյն այնորիկ ։ Եւ
պատմեն ևս , Եթէ և Եպիկուրոս իմաստա-
սէր յայնժամ եբոյծ բակլայիւք զաշա-
կերտս իւր՝ Թուով բաշխեալ 'ի նոսա ։

Ապա յայն սահման կենաց քաղաքին
մտեալ անդր Դեմետրիոս՝ հրաման տայր
առհասարակ ժողովել նոցա 'ի Թատրոն .
և պատեալ ամրացուցանէր զինուք զխո-
րանն , և 'ի տիգաւորս առեալ պաշարէր
զբեմն . և ինքն իջեալ 'ի վայր՝ իբրու գե-
բասան ողբերգակաց՝ ընդ ճանապարհն որ
'ի վերոյ , անդէն իբրև խօսել սկսաւ , որ
յայնժամ ահիւ մեծաւ տագնապէին Ա-
թենացիք, միանգամայն առհասարակ յան-

գորը Էլանէին։ Քանզի ոչ սաստիկս ինչ բարբառեալ Դեմետրիոս, և ոչ բանս կապեալ սպառնալեաց, այլ հանդարտ և հեզաբար գանգատ միայն կալեալ, հաշտէր ընդ նոսա. և գրիւս ևս բիւրս տասն ցորենոյ առեալ տայր նոցա, և հաստատէր կարգէր զատեանս իշխանաց՝ որ առաւել սիրելիք էին խուժանին։ Յայնժամ խելամուտ Դրոմոկղիտէս հռետոր եղեալ, զի առ սաստիկ խնդին յառաջամիտ էն ժողովուրդք շուք ամենապատիկ գնել Դեմետրեայ՝ առաւել քան զբեմական գովութիւնն զՃարտասանից, խորհուրդ 'ի ներքս արկանէր տալ Դեմետրեայ արքայի 'ի ձեռս զՊիրէոն և զՄունիքիա։

Իբրև հաստատեցաւ խորհուրդն հանդերձ քուէիւք, ապա Դեմետրիոս ինքնին գունդ մի առեալ կարգէր 'ի Մուսիոն, զի մի կրկին սոնքացեալ գլուխ ամբարձցեն ժողովուրդք և աշխատ արասցեն զնա։ Եւ այսպէս զԱթենացիսն նուաճեալ, խաղայր անդէն գնայր 'ի Լակեդեմոնիա. և 'ի մարտի պարտեալ զԱրքիդամոս արքայ և 'ի փախուստ դարձուցեալ՝ որ 'ի գիմի հարաւ նմա մօտ 'ի Մանտինէա, էկն Եմուտ 'ի Լակոնիա. և մարտ միւսանգամ յարդարեալ յանդիման Սպարտիոյ, և գերի 'ի Թշնամեաց վարեալ ոգիս հինգհարիւր, և երկերիւր ևս տապաստ արկեալ, Թուէր վաղվաղակի տիրանալ քաղաքին՝ որ ցայնժամ անառիկ կացեալ էր։

Սակայն բախտն՝ինքնին ոչ երևիդ՝այլում

ումէք 'ի թագաւորաց չէած 'ի վերայ փո-
փոխութիւնս այնչափ մեծամեծս և յան-
կարծագէպս. և յայլ ինչ ևս երբէք չե-
րևեցաւ նա այնպէս է զի փոքր, և է զի
մեծ, մերթ խոնարհեալ յանկարծ 'ի
բարձրութենէն, և մերթ յաղթահարուստ
'ի տկարութենէն։ Այր աղագաւ և պատ-
մեն՝ ինքնին Դեմետրեայ 'ի ձախողակ
դէպս իւր ասել առ Բախտն զԵգիպտղեայ
զտողն. "Կեանս դու ետուր ինձ, և թուիս
դու ինձ այժմ եղծանել զիս"։ Քանզի
և յայնժամ 'ի գերեցիկ անդ յաջողու-
թեան նորա և 'ի տէրութեանն և 'ի զօրու-
թեանն, գոյժ յանկարծ հասանէր նմա՝
եթէ տիրացաւ Լիւսիմաքոս 'ի վերայ քա-
ղաքացն նորա որ յԱսիա, և թէ՝ Պտղո-
մէոս ինքնին հասեալ կալաւ զԿիպրոս,
բայց 'ի Սաղամինայ քաղաքէն. իսկ զՍա-
ղամինէ պատեալ պաշարեալ է հանդերձ
որդւովքն նորա և մարքն։

Այլ սակայն և բաղդն Դեմետրեայ՝
արդարև խբրու զկինն զայն որ առքերթո-
ղին Աբքիղոքեայ, "Սուտակասպաս խոր-
հրդով ջուր միով ձեռամբն, և միւսովն
հուր ածէր"։ Քանզի և յորժամ այնպէս
աննուէր և ահագին գուժիւք խլրտեաց
շարժեաց զայրն 'ի Լակեդեմոնիոյ, ան-
դուստ արագ արագ և յոյս այլ մեծաց և
նորոց նահատակութեանց նմա 'ի նեղքս
մատուցանէր՝ յայսպիսի ինչ պատճառաց։
Քանզի 'ի մեռանել յայնժամ Կասան-
դրոսի, երեց որդին Փիլիպպոս անուն ոչ

հարուստ մի Թագաւորեալ'ի վերայ Մակեդոնացւոց՝ մեռանէր և նա. ապա երկուք այլ յորդւոցն նորա 'ի վեգ ընդ միմեանս եկեալք, և Անտիպատրոս մի 'ի նոցանէն սպանեալ զիւր մայրն զԹեսսաղոնիկէ, միւս որդին 'ի Թիկունս իւր կոչէր զՊիւռռոս յԵպիռոսէ, և զԴեմետրիոս 'ի Պելոպոննիսոյ: Անդ կանուխ քան զԴեմետրիոս աճապարեալ Պիւռռոս, և բազում ինչ 'ի Մակեդոնիոյ յինքն տարեալ 'ի մըցանակ օգնականութեանն, ահ սահմանակցութեամբն արկանէր Աղեքսանդրի՝ որ կոչեացն զնա:

Իսկ իբրև և Դեմետրիոս առեալ զնամակն և 'ի չու անկաւ առ նա բանակաւն, յայնժամ պատանին Աղեքսանդրոս սաստիկ ևս զահի հարեալ 'ի նմանէ վասն աւագութեան և մեծի համբաւոյ առնն, յարուցեալ ընդառաջ գայր նմա մերձ 'ի Դիոն. և ոչ ոչինչ մարդասիրագոյն տուեալ՝ հիւրամեծարութիւն բազում 'ի նեբքս բերէր նմա. սակայն և 'ի նոյն ազգ առնէր նմա՝ պէտս այնուհետև չունել ինչ օգնականութեան նորա: Յայմանէ խէթ կասկածանաց կալեալ առն ընդ ընկերի, իբրև օր մի Դեմետրիոս չոքաւ 'ի հրաւէր ընթրեաց պատանւոյն, յայնժամ գուշակ ոմն լինէր նմա վասն դաւոյն՝ իբրու որ անդէն 'ի կոչումնն 'ի սպանութիւն նորա միաբանեալ լցեն: 'Ի լուր դաւոյն ոչինչ սրտաբեկ Դեմետրիոս, վայր մի յամրաքայլ ընթացեալ՝ հրաման տայր զօրագլ-

խաց իւրոց կազմ զինու զարդու ունել զզօրականն. իսկ սուրհանդակացն և այլոց ևս գնդին որ ընդ իւր՝ բազմամբոխ ևս քան զԱղեքսանդրին, պատուէր տայր առհասարակ 'ի միասին ընդ իւր մոռանել 'ի կոչունսն. և անդէն մօտ դադարել նմա մինչև 'ի յառնել նորա։ Իբրև զայն ետես Աղեքսանդրոս և որք ընդ նմա, զահի հարեալք ոչինչ իշխեցին միսել 'ի գործն. մինչև Դեմետրիոս կեղծաւորեալ զանախորժութիւն յարբումն բաժակին յարուցեալ փութապէս 'ի բաց գնայր։

Իսկ առ վաղիւն հրաման տայր առնուլ ժողովել զխորանսն, և ասէր՝ այլ ինչ գործոյ 'ի վերայ հասեալ նորա, և աղաչէր զԱղեքսանդրոս ներել նմա վասն փութապէս չուոյն. և խոստանայր ևս այլ անգամ յերկարագոյնս լինել առ նմա 'ի պարապել իւրում։ Խնդայր ընդ միտսն Աղեքսանդրոս. կարծեաց ոչ առ խէթ ինչ, քան եթէ կամակար մեկնել նմա 'ի գաւառէն, և յուղարկէր զնա մինչև 'ի թեատաղիա։ Հասեալք 'ի Լարիսսա, անդրէն միւսանգամ այր զընկեր 'ի կոչունս հրաւիրեր, և այր ընկերին նենգ լարէր։ Բայց անդանօր Աղեքսանդրոս անգիտութիւն անգիտացաւ՝ նկուն 'ի Դեմետրեայ լինել։ Քանզի զգուշութիւն չառեալ անձին, որպէս զի մի և Դեմետրեայ ուսուցեալ զգուշանալ, կանխեաց քան զնա Դեմետրիոս, մինչդեռ նա դանդաղէր ձգէր զգործն 'ի դէպ ևս ժամանակ թակարդել զԴեմետր։

Ուստի և յընթրիս հրաւիրեալ 'ի Դեմետրեայ՝ չոքաւ Աղեքսանդրոս. իբրև 'ի ժամու ընթրեացն յարեաւ էլ Դեմետր, զահի հարեալ Աղեքսանդրի՝ յարուցեալ և ինքն գնայր զհետ նորա մինչև 'ի դուրսն. հասեալ 'ի վայրն՝ ուր կային սուրհանդակքն, ասաց Դեմետրիոս զայս միայն. "Սպան որ զհետ իմ դայ,, , և էլ արտաքս։ Անդ ապա խողխողեալ 'ի մահ վարեցաւ Աղեքսանդրոս հանդերձ բարեկամքն՝ որ ձեռն տային նմա. և պատմեն զմիոյն՝ ասել 'ի խողխողել իւրում, եթէ միով աւուրբ միայն՝ կանխեաց քան զնոսա Դեմետրիոս։ Եւ ապա այն գիշեր՝ որպէս և 'ի դէպ կարծել՝ յանհնարին աղմուկ պաշարեցաւ։

Իսկ առ վաղիւն Մակեդոնացիք՝ որ յոյժ սրտաբեկ զարհուրեալ իսկ էին 'ի Դեմետրեայ, իբրև տեսին և ոչ զոք խիզախել ընդդէմ, և զի և Դեմետրիոս ինքնին առաքեաց առ նոսա՝ խնդրէր խօսել և 'ի չքմեղս լինել վասն անցիցն անցելոց, քաջալերեալք խրախուսեցին և խորհուրդ ևս հաստատեցին առնուլ ժողովել զնա մարդասիրութեամբ։ Ուստի և 'ի գնալ Դեմետրի առ նոսա, երկայն զրուցաց պէտք չեղեն. և քանզի զԱնտիպատրոս ատեցեալ իսկ էին նոքա զմայրասպանն, և 'ի ժամուն լաւ ևս այլ այր չէր նոցա ուրեք 'ի միջի, ձայն բարձեալ կարդացին զԴեմետր արքայ Մակեդոնացւոց, և 'ի մէջ առեալ զնա ածին 'ի Մակեդոնիա։ Եւ ապա ընդ

փոփոխութիւն իրացն ոչինչ դժկամակ գտան և Մակեդոնացիքն ինքնին դադարեալք առ տնին. որ և ցանգ յուշ ածեալք նղովս զհետ արձակէին անիրաւութեանցն Կասանդրեայ ընդդէմ վախճանելոյն Աղեքսանդրի։ Եւ թէ երբէք տակաւին կայր ճնայր առ նոսա յիշատակ գեղեցիկ չափաւորութեանն ծերոյն Անտիպատրոսի, զպտուղն հասանէր կթել Դեմետրի՝ զի այր էր Փիլիպայ, յորմէ և էգև իսկ նմա որդի պայազատ թագին. և էր նա յարբունս հասեալ և զինուորեալ յայնժամ առ հօրն։

Իսկ 'ի ժամանակի անդ յաջողելոյ մեծի բախտին, լուր ևս հասանէր նմա ազատութեան կնոջն և որդւոց իւրոց 'ի ձեռն Պտղոմեայ հանդերձ պարգևաք և բազում շքով. 'ի նոյն և զորոյց ևս տային նմա վասն դատերն իւրոյ՝ զոր 'ի կին ածեալ էր Սելեւկոսի, եթէ հարանացեալ ընդ Անտիոքոսի որդւոյն Սելեւկեայ, դշխոյ հրատարակեցաւ բարբարոսացն որ 'ի վերնագաւառին։ Քանզի այս Անտիոքոս տարփացեալ Ստրատոնիկեայ մանկամարդի՝ որոյ և էր որդի մի 'ի Սելեւկոսէ, ախտակրեաց չարաչար և ՃԻԳՆ ևս սաստիկ թափէր կռուել ընդդժպատեհ կրիցն։ Իսկ 'ի վերջէ դատապարտ զանձն արարեալ՝ իբրև վատթարագունիցն զհետ կրթեալ ելցէ, և զի և յանդարմանելի ախտէ ըմբռնեցաւ և ողջախոհ իմաստութիւն բարձաւ 'ի նմանէ, հնարէր խնդրէր նուա-

ղիլ տակաւ և վճարել 'ի կենաց իւրոց, և անփոյթ միանգամայն զամենայն խնամն արարեալ զմարմնոյն, և անսուաղ կեայր կեղծաւորեալ յախտ ըմբռնեալ հիւանդութեան մարմնոյ։ Սակայն և յայնժամ Երասիստրատոս բժշկապետ փոյթ խելամուտ լինէր տուփանաց պատանւոյն, բայց հեշտին չէր դուշակել զտարփալին. ուստի և կամեցեալ ճարտարին հաւաստի 'ի վերայ կալ, անդուլ դեգերէր 'ի սենեկի անդ պատանւոյն. և 'ի մտանել 'ի ներքս պատանւոյ կամ դեղեցկի կնոջ, դէտակն կալեալ զիններ մանր զդէմն Անտիոքեայ. և նկատէր քիններ զշարժմունս մարմնոյն և զմատունսն յորս առաւել բնաւորեցան տպաւորութիւնք ըստ չափու յուզմանց հոգւոյն։

Ապա տեսեալ զի 'ի մուտս և ելս անդր այլոց մարդկան՝ նոյնպէս անփոփոխ կայր մնայր Անտիոքոս. իսկ 'ի ներքս մտանել Ստրատոնիկեայ, որ ստէպ իսկ գայր անդր առանձինն և 'ի միասին ևս ընդ Սելեւկոսի, նկատեաց Երասիստրատոս 'ի պատանին զամենայն իսկ միանգամայն զհաւաստիսն զոր Սապփոսն Ճշդերտեաց քերթողուհին, ճնշել և հատկել ձայնին, և շառագնութիւն բոցատիպ, և աչացն ակնարկել, և քրտունք փոյթք, և անկարգութիւն և խռով 'ի զարկ երակացն. և հուսկ ապա՝ բռնութեամբ թալանալ ոգւոյն, և վարանք, և ափշութիւն, և դեղնութիւն։ Ապա այնուհետև

խելամուտ եղև Երասիստրատոս, իբրև Ճշդրտագոյնս, եթէ 'ի սէր և ոչ միոյ ուրուք այլ հարեալ կայ արքայորդին. և ժուժայ այնպէս մահուչափ և 'ի վեր չհանէ զբանն. սակայն և ինքնին Երասիստրատոս դժոխրմբերելի համարեցաւ մերկանալ առակել զկիրսն զայն զպատանեւոյն: Յայսր ամենայնի վերայ վստահ եղեալ 'ի գեղեցիկ որդեսիրութիւնն Սելեւկեայ, համարձակեցաւ օր մի ասել ցարքայն, եթէ ախտ պատանեւոյն տուփանք միայն է. այլ զտուփանսն ընուլ ոչ ունի, և անդարմանելի է:

Յապուշ հարեալ Սելեւկոս հարցանէր, և զինչդ անդարմանելի կայցեն այդ տուփանք. ետ պատասխանի Երասիստրատոս. "Քանզի, օ՞ն և օ՞ն Արամազդ, իմոյ ամուսնոյն 'ի սէրն հարեալ է". Յայնժամ ասէ Սելեւկոս. "Իսկ դու բարեկամ իմ գոլով, ո՞վ Երասիստրատէ, ըզհարսանիս զայդ զլասցե՞ս իմում զաւակի, յորժամ և ողջոյն զմեզ 'ի դա միայնում վտանգեալ տեսանես դու": Ետ պատասխանի Երասիստրատոս և ասէ. "Եւ ոչ երբէք. քանզի և ոչ դու ինքնին հայր գոլով, արդեաք գործէիր զայդ, եթէ երբէք 'ի Ստրատոնիկեայ 'ի սէրն հարեալ էր Անտիոքոսին": Կրկնեաց անդրէն Սելեւկոս և ասէ. "Օ՞չ թէ ո՞վ բարեկամ՝ 'ի դից ոք կամ 'ի մարդկանէ ոք արագ արագ աւեալ շրջէր յայդոսիկ զկիրսդ. որպէս զի և ինձ և զարքայութիւնս անգամ գեղե-

ցիկ էր Թողուլ, միայն ոչ՝ առիս Անտիոքոս կացցէ ,, : Զայս բանս ասացեալ Սելեւկոս մեծապէս խանդաղատանօք և բաղում արտասուօք, յայնժամ զալ իւր կարկառեալ առ նա Երասիստրատոս՝ ասէր. քեզ պէտք ինչ արդեօք չիցեն Երասիստրատեայ. քանզի և հայր դողով քո և այր և արքայ, քեզ ինքնին 'ի բանիդ յայդմիկ հատանէ լինել բժիշկ ճարտար 'ի փերկուԹիւն տան քոյ :

Իբրև զայն լուաւ Սելեւկոս, անդէն աշխարհախուսմբ ժողովոյ հրաման տայր. և մերկանայր յայնժամ առեալն զիսորխուրդ կամաց իւրոց՝ համբաւեալ զԱնտիոքոս 'ի Թագաւոր, զՍտրատոնիկէ 'ի Թագուհի՝ ողջոյն վերնագաւառացն, և լծակցեալ զնոսա ընդ միմեանս : Զզմտաւ ածէր՝ եԹէ որդին հպատակ նմա և հլու յամենայնի՝ երբէք արդեօք ընդէմ չդարձցի հարսանեացն այնմիկ : Ապա եԹէ Ստրատոնիկէ դժկամակս բերցի ընդ բանն արտաքոյ օրինացն, աղաչէր նա զբարեկամն հրահանգել զկինն՝ ածել ամոքել զնա, քաջ իսկ համարել և իրաւացի զամենայն ըզկամս արքային՝ որ յօգտակարն կրԹեալ իցէ : Յայսց պատճառաց ապա ասէն զամուսնուԹիւնն Անտիոքեայ և զՍտրատոնիկեայ :

Բայց յայնժամ Դեմետրիոս արքայ տիրացեալ Մակեդոնիոյ և Թեսաղիոյ, և շատ ևս 'ի Պեղոպոննիսոյ ընդ ձեռամբ կալեալ, և 'ի ներքս անդ ՅիսԹմոս զՄեգա-

րա և զԱԹԷնս, խաղաց զօրու ընդդէմ Բիովոտացւոց։ Նոքա զառաջինն պայմանս հեշտընկալս զխաղաղութեան ընդ նմա 'ի նեղքս բերէին. իսկ իբրև Կղէոմենիւմոս Սպարտացի եկն եմուտ զօրու 'ի Թեբէ, յայնժամ խրախոյս Բիովոտացւոցն առեալ, դրդեալ և 'ի Պսիդեայ Թեսպիացւոյ՝ այր մեծահամբաւ 'ի նոսա և մեծազօր, յետս կացին 'ի պայմանացն։ Իսկ իբրև Դեմետրիոս յառաջ զմանգլիոնան շարժեաց խաղացոյց, և 'ի նեղ արկանէր զԹեբէ, զահի հարեալ Կղէոմենիւմոս և տեղի տուեալ փախչէր. սրտաթափ և Բիովոտացւոցն եղեալ՝ անձնատուր լինէին Դեմետրեայ։ Նա գունդս զօրականի կարգեալ 'ի քաղաքն, և մթերս բազում դրամոց ժողովեալ 'ի նոցանէ, թողոյր նոցա առաջնորդ և ոստիկան զՀերոմենիմոս պատմագիր։ Եւ մեծապէս գթութիւն յայնժամ յանձին բերէր Դեմետր՝ մանաւանդ վասն Պսիդեայ. քանզի ձերբակալ զնա արարեալ՝ չար և ոչ մի անցուցանէր ընդ այրն, նա՝ և մարդասիրագոյնս խօսեալ ընդ նմա և մտերմութեամբ ժողովեալ զնա՝ զօրավար կարգեաց զնա 'ի Թեսպիա։

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ ձերբակալ զԼիւսիմաքոս արարեալ Դրոմիքէտէս, փուքայր ՀՆեպէր Դեմետրիոս 'ի Թրակիա. ակն ունէր ամայի գտանել ըզգաւառն. բայց յայնժամ Բիովոտացւոց միւսանգամ յապստամբութիւն բերեալ, 'ի նոյն և լուր առեալ նա զապատութենն

Լիւսիմաքէայ. վաղվաղակի դարձ արա-
բեալ Դեմետրի սրտմտութեամբ բարկու-
թեամբ, իբրև լուաւ զպարտել Բիովտա-
ցւոցն 'ի մարտին յԱնտիգոնեայ որդւոյն
իւրմէ, խաղաց անդրէն 'ի պաշարումն
Թեբայ։

Բայց քանզի ասպատակ յայնժամ կա-
պեաց Պիւռռոս և նեղէր զԹեսաղիա, և
յառաջամուխ եւս եղև մինչև 'ի Թերմոպիւ-
ղեայս, եթող Դեմետր զԱնտիգոնոս 'ի պա-
շարմանն, և ինքն դիմեաց խաղաց ընդդէմ
նորա։ 'Ի փախուստ խուճապեցաւ Պիւռ-
ռոս, և Դեմետրիոս կարդեալ 'ի Թեսա-
ղիա տասն հազար հետևակաց և հազար մի
այրուձիոյ, դարձեալ միւսանգամ նկրտէր
'ի պաշարումն Թեբայ, և յառաջ զմանգ-
ղիոնն խաղացուցանէր՝ որում անուն կար-
դային՝ Քաղաքաւէր. և խաղայր շարժէր
այս մանգղիոն ահագին և մեծամարմին՝
յոյժ աշխատութեամբ և լծակաց բռնու-
թեամբ յոյժ յամրագոյնս, զի և ասպա-
րէզս երկու հազիւ հատանէր նա ընդ ա-
միսս երկու։

Իսկ յայնժամ Բիովտացիք տքնաբար
քաջութեամբ նահատակեալ, անդուստ և
Դեմետրիոս շտապ տագնապի 'ի վերայ ա-
ծեալ զօրականին մարտ դնել կռուել և
դիմադրաւ բազում անգամ լինել՝ քան
'ի շահ ինչ օգտի՝ մանաւանդ 'ի յամա-
ռութեան կիրան, յայնժամ Անտիգոնոս
արգահատեալ 'ի իսոր խոցեցաւ ընդ մա-
հունս անչափ, և ասէր այսպէս,, ։ Եւ առ

ինչ ապա ով հայր, այդչափ անհոգա-
նալ մեր 'ի մահն դոցա առանց հարկի ,, :
Զայրացաւ Դեմետր, և ասէր. " Եւ առ
ինչ է քո այդ սրտնեղդ : Միթէ քեզ ինք-
նին հասանիցէ տալ ռոճիկ մեռելոցդ ,, :
Սակայն և զկարծիսն կարշեալ, եթէ զայ-
լոցն միայն անհոգացեալ իցէ, 'ի միասին
ընդ նահատակացն և ինքն այնպէս անձնա-
գրաւ միջամուխ, անդուստ նետ մի սայ-
բասուր թափ ընդ պարանոցն անցանէր նո-
րա. իսկ 'ի հարուածոյ անտի յոյժ վատ-
թարեալ Դեմետրիոս, համայն և այնպէս
'ի բաց չէկաց 'ի պաշարմանէն, մինչև միւ-
սանգամ 'ի բուռն կալաւ զթեբէ: Մտեալ
'ի քաղաքն ահագին սպառնալեօք, որպէս
զի և առհասարակ տագնապեցան և ակն-
կալեալ մնային աններելի պատուհասին,
նա արս միայն երեքտասան 'ի մահ վա-
րեալ, և նուազունս միայն վտարանդի ա-
րարեալ՝ թողուլթիւն առնէր ողջոյն քա-
ղաքին : Եւ այսպէս ապա 'ի ժամանակին
յայնմիկ երկիցս անգամ առնոյր թեբէ՝
չև 'ի վերայ անցեալ ամաց տասանց յետ
նորոգութեանն :

Իսկ յայնժամ հասեալ տօնիցն Պիւ-
թեան մրցանաց, նոր և օտար գործ գոր-
ծել խորհեցաւ Դեմետրիոս: Քանզի յայն-
ժամ կալեալ Եստղացւոց զկիրճս շուր-
ջանակի զԴեղփեաւ, նա զտօնախմբու-
թիւն մրցանացն այնոցիկ և զաշխարհաժո-
ղով զհանդէսն կատարեաց ՅԱԹԷՆս. և
ասէր՝ անդանօր մանաւանդ մրցանս և շուք

պարտ է դնել աստուծոյն, իբրու որ հայ-
րենական լոյէ և նախահայր համարեալ
գլխովին ձեռին այնորիկ։

Ապա յետ այնորիկ դարձ 'ի Մակեդո-
նիա արարեալ, իբրև որ անդատին 'ի ընու-
թենէն անհանգիստ վիճակեալ բարոյից,
բայց և զայն ևս տեսանէր զի և Մակեդո-
նացիք ինքնին քան յայլ ժամանակ՝ առա-
ւել ևս յարշաւանին իւրեանց հպատակ
կային նմա, իսկ յառտնին պարապել՝
խռովս հարկանէին և ամբոխս. ապա խա-
ղայր գնայր ընդդէմ Եւռողացւոց, հար-
կանէր վանէր զաշխարհն նոցա. և թողեալ
անդէն զՊանտաւքոս բազմաձեռն գնդաւ,
ինքն յարձակէր 'ի վերայ Պիւռռոսի. ան-
դուստ և Պիւռռոս խաղայր դայր ընդդէմ
նորա։ Բայց ուղի կալեալ նոցա ընդ այլ
և այլ ճանապարհ, ոչ պատահեցին այր
ընկերի. մին չոքաւ աւար հարկանէր զԵ-
պիռոս, և միւսն՝ եկն անկաւ 'ի վերայ
Պանտաւքոսի. և մարտ եղեալ ընդ նմա՝
որ 'ի վեգ մատեաւ մինչև տալ հարուածս
և առնուլ, հուսկ ապա 'ի փախուստ դար-
ձուցանէր զնա, և տապաստ արկեալ զբա-
զումս 'ի զօրացն՝ առնոյր վարէր գերի ոգիս
հինգ հազար։

Եւ ապա 'ի հարուածոյ աստի զեան
մեծապէս լինէր Դեմետրի։ Քանզի և ոչ
այնչափ առեալ Մակեդոնացւոց եկաց
Պիւռռոս՝ զի փնտռեաց զնոսա, որչափ և
աքանչացաւ 'ի բազմադէմ նահատակու-
թեանցն. որպէս զի և 'ի մարտէն յայնմա-

նէ յոյժ զհամբաւի հարաւ անուն նորա։ Եւ ասէին իսկ յայնժամ բազումք 'ի Մակեդոնացւոց, 'ի Պիւռռոս միայն յամենայն արքայս՝ զպատկեր նկատել զարուեստն Աղեքսանդրի. իսկ այլքն՝ (և Դեմետրիոս առաւել) յանձինս բարձեալ բերեն՝ իբրու արդարև 'ի խորանս թատերաց՝ զպերճութիւն և զշուքն Աղեքսանդրի։ Եւ արդեօք շուքն Դեմետրի էր իսկ իբրու կերպարանաւոր ուրուք արքայի 'ի թատերս. քանզի ոչ պսակօք միայն բոլորէր յոյժ շքեղ 'ի թագս կրկնախոյրս, և ոսկեհուռն ասղնեգործ ծիրանի արկանէր, այլ և յոտսն գլխովին կօշիկք էին նորա 'ի համակ ծիրանւոյ՝ ծալ 'ի ծալ ոսկեձամուկ։ Էր նորա և 'ի վաղ ժամանակաց հրաման տուեալ անկանել քղամիդ՝ գործ հրաշակերտ, յորում և կերպարան ճշդիրտեալ աշխարհի և աստեղաց փայլատակելոց յերկինս։ Բայց քղամիդ այս կիսակատար մնայր 'ի խռովութեան անդ իրացն. և ժտեցաւ և ոչ ոք արկանել զայն քղամիդ, թէպէտ և յետ նորա ո՛չ սակաւք յարքայից թագ կապեցին 'ի Մակեդոնիա գոռոզք և սմբարհաւաճք։ Այլ նորա ո՛չ շուք հանդիսին միայն գժպհի էր մարդկանն՝ որ յայն տեսիլ ոչ սովորեցան, այլ և ոչ իսկ բերէին նոքա զզրգանս նորա և զփափկութիւն կենացն. և առաւել քան զամենայն ծանր էր նոցա պերճութիւն նորա անընդեալ և անհամբոյր. քանզի կամ պարապոյ ժամ չտայր մարդկան խօսել

ընդ նմա, կամ թէ չինականագոյնս և յայ-
բատագոյնս ընդունէր զնոսա։

Էր երբեմն զի ամս երկու այնպէս սպա-
սեցուցեալ զԱթենացւոց դեսպանսն, ա-
պա յետ այնորիկ տայր ունկնդրութիւն,
թէպէտ և առ նմա արդոյ յոյժ էին Ա-
թենացիք քան զամենայն Հելլենացիս։ Նա և
երբեմն եկեալ առ նա 'ի Լակեդեմոնիոյ
դեսպան մի միայն, նա արհամարհութիւն
անձին համարեալ զբանն և մեծապէս
սրտմտէր. և 'ի հարցանել Դեմետրի. "Եւ
զի՞նչ ասես դու. մի՞ միայն առիս դես-
պան արձակեցին Լակեդեմոնացիք,,. Եւ
պատասխանի դեսպանն զուարթ և Լակո-
նացի. "Այո՛ արքայ, զմի առ մին,,։

Իսկ և երբեմն ռամկաքայլս ինն՝ որպէս
կարծէր՝ յընթանալ Դեմետրի, և 'ի դիւ-
բամատոյց լինել առ որս մերձենայինն,
յոյնժամ ընթացեալ ոմանք առաջի մա-
տուցին նմա 'ի գրի զաղերսն իւրեանց։ Իսկ
նորա զամենայնն առեալ ընկալեալ և 'ի
քղամիդ իւր ամփոփեալ, յոյժ խնդացին
մարդիկն և զհետ ընթանային նորա. Իբրև
եհաս նա 'ի կամուրջն Աքսիոնին, մեկ-
նեաց զքղամիդն և ողջոյն ամայր 'ի գետ
անդր։ Կարի 'ի խոր խոցեցան Մակեդո-
նացիքն. համարեցան ոտնհար թշնամանա-
դիր զոք ունել՝ քան թէ արքայ գլխովին։
Յուշ անձանց ածէին զՓիլիպպոս, կամ
թէ լուեալք 'ի պատմողաց անտի՝ զար-
քային զայնորիկ զմարդասէր յօժարութի
առ աղաչաւոր մարդիկն։ Քանզի անդ ու-

րեմն իբրև կին մի պառաւ երբեմն թա-
խանձեցուցեալ զՓիլիպպոս 'ի փողոցի ու-
րեք և ստէպ ժառէր աղերսէր ունկն մատու-
ցանել նմա, և յասել առ նա Փիլիպպոսի՝
եթէ չպարապեմ. Ձիչ բարձեալ պառա-
ւոյն ասէր, Մի՛ ՈՐԵՄ ԲԱԳԱՒՈՐԷ. 'ի խոր
'ի բանից ասոյ խոցեցաւ Փիլիպպոս, և
խելամուտ եղեալ 'ի սրտին՝ դարձաւ 'ի
տուն. և ապա զամենայն գործ զիւր յետս
տարեալ խնդրեաց ունկն մատուցանել
աղերսաւոր որերոյն. զաւուրս բազումս
այնպէս հանապազորդեաց 'ի նոյն՝ և նախ
սկիզբն 'ի պառաւոյ անտի առնէր:

Քանզի և անշուշտ չկիք ինչ այլ այնպէս
արժանավայել առն Թագաւորի՝ քան ի-
րաւանց դատաստանին պատկառ կալ.
քանզի և Արէս ինքնին՝ ըստ Տիմոթեայ ա-
ռաստացուԹեանն՝ բռնաւոր է. իսկ Օրէնքն՝
ըստ Պինդարոսին՝ Թագաւոր է ամենայ-
նին: Եւ Հոմերոս ինքնին՝ առնուլ՝ ասէ՝
արքայից յԱրամազդայ ոչ մանպղիոնս քա-
ղաքամարտս, և ոչ նաւս պղնձակուռս,
այլ Օրէնս՝ քաղաքաց հովանաւորս և պա-
հապանս: Առ այս՝ և կենակից և ձեռնա-
տուն սան Արամազդայ անուանեալ կոչէ՝
ոչ զքաջամարտիկն յարքայից կամ զանի-
րաւն կամ զարիւնարուշն, այլ զար-
դարն 'ի նոսա: Իսկ Դեմետրիոս խնդայր
առեալ մականուն յոյժ անանման Արքային
դիցն. քանզի Արամազդ՝ անուն ընկալաւ
ՓՕԼԻԷՈՆ և ՓՕԼԻՈՊՕՆ. այս է՝ Քաղաքա-
պետ և Քաղաքապահ. իսկ Դեմետրիոս՝

φοιβο-ειδής. այս է՝ Քաղաքապաշար, քաղաքաւէր։ Եւ այսպէս ապա զվայր դէղեցկին փոխանակեալ վատթարին յանհանձար իշխանութենէն՝ բնակակից փառացն առնէր զանիրաւութիւնն։

Բայց 'ի ժամանակին յայնմիկ խօթացեալ Դեմետրիոս 'ի Փելլէ, և մեծապէս վտանգեալ 'ի կեանսն, սակաւ մի ևս զՄակեդոնիա 'ի ձեռացն հանէր. քանզի 'ի վայր յայնժամ Պիւռռոս հորդան տուեալ՝ իսպայր հասանէր մինչև յԵդեսսա։ Ալ Դեմետրիոս վայր մի ապաքինեալ, անդէն վանեալ հալածեաց զնա, և պայմանս ևս կռէր ընդ նմա. զի մի այնպէս անդուլ մարտիւ ընդ սխոյենին կռուեալ վասն սահմանացն, վերջացեալ թերևս գացի 'ի խորհրդոց մտաց իւրոց։ Քանզի և խորհէր իսկ նա 'ի միտս ոչ դուշնաքեայ նահատակութիւնս, այլ հնարէր խնդրէր ողջոյն զտէրութիւն զհօրն 'ի բուռն արկանել։

Բայց և հանդերձանք պատրաստութեն ոչ խոնարհագոյն ինչ էին քան զյոյս ակընկալութեանն և զջանս փութոյն. քանզի կազմեաց վառեաց ինն բիւր և ութ հազար հետևակաց. դարձեալ և այրուձի իբրև երկուտասան հազարաց. և պատրաստեաց խմբեաց տորմիղ նաւաց հինգհարիւր. զկէսս 'ի Նոցանէն էտ կերտել 'ի Պիրէոն, և զկէսս 'ի Կորնթոս. զկէսս 'ի Քաղկիդէ, և զկէսս մօտ 'ի Պէլլա. և 'ի մէն մի 'ի վայրացն հետևէր ինքնին, և վարժէր և ցուցանէր նոցա զգործն. և գործակից ևս

լինէր 'ի ձեռակերտին։ Եւ յայնժամ առ հասարակ մարդիկն հիացեալ կային ոչ ընդ նաւացն միայն բազմութիւնն, այլև ընդ մեծութիւնն. քանզի և յառաջ ժամանակաւ երբէք ուրուք չէր տեսեալ նաւ ոչ հնգեռասան և ոչ վեշտասանկարգեան թիոց։ Թէպէտ և զկնի նորա Պտղոմէոս փիլոպատորն շինեաց նաւ մի քառասուն կարգեան. երկայնութիւն նորա երկերիւր և ութսուն կանգնոց, և մինչև 'ի ծայր խեցացն՝ բարձրութիւնն քառասուն և ութից. և էին 'ի նմա նաւասակք չորեքհարիւր, թոչ զթիավարսն չորեքհազար. առ այսոքիւք դարձեալ և յանցս մտից և 'ի վերայ տախտակամածիցն սանէր նա զինաւորս թուով իբրև երեք հազար։ Այլ էր այս նաւ 'ի շքեղ տեսիլ և եթ. խուն մի տարբերեալ 'ի կերտուածոց անտի եռեղեկալացն և 'ի հաստատնոցն. և քան 'ի պէտս՝ 'ի ցոյց միայն բերեալ, վոանդաբեր նորա շարժումն և մեծապէս աշխատութեամբ։ Իսկ գեղեցկութիւն նաւացն Դեմեսրի ոչ սնպիտանս ինչ առ 'ի մարտս առադրէր զնոսա. և ոչ ևս առ ճշդրտութեան յօրինուածոցն՝ անօգուտք էին նոքա. նա և արագութիւն նոցա և շահատակեալ՝ քան ըզմեծութիւն նոցա առաւել սքանչելի էր։

Եւ ապա այնչափ զօրութեամբ, որչափ և ոչ ոք երբէք յառաջ ժամանակաւ յետ Աղեքսանդրի, ամբարձաւ Դեմեսրիոս արշաւել յԱսիա։ Յայնժամ դաշնաւորք ընդ միմեանս միաբանեցան ընդդէմ նորա թա-

գաւորք երեք Սելեւկոս և Պտղոմէոս և Լիւսիմաքոս։ Եւ առաքեալ դեսպանս հասարակաց հաւանութեամբ առ Պիւռռոս, դրդեցին զնա խաղալ մարտիւ 'ի Մակեդոնիա. և ջուներ առ պայմանս խաղաղութեան զդաշինսն՝ զոր Դեմետրիոս կռեաց ընդ նմա, իբրու որ ոչ զի անկռիւ մնասցէ նա, այլ զի ընդ ում ուրեք և կամեսցի՝ կանխեսցէ 'ի կռուել։ Յանձին կալեալ Պիւռռոսի զինդիր թագաւորացն, մինչդեռ Դեմետր դեգերեալ կայր 'ի հանդերձանս պատրաստութեանն, առհասարակ պաշարեցաւ յահագին մարտից։ Քանզի միանգամայն եկեալ հասեալ Յելլադա Պտղոմէոս սաստիկ նաւահանդիսիւ՝ յապըստամբութիւն դրդեաց զժողովուրդն. անդուստ և Լիւսիմաքոս 'ի Թրակիոյ միջամուխ 'ի Մակեդոնիա եղեալ և Պիւռռոս դարձեալ 'ի սահմանակից աշխարհէն, աւար հարկանէին։ Յայնժամ Դեմետրիոս թողեալ զորդին իւր Յելլադա, ինքն խաղաց 'ի Թիկունս Մակեդոնիոյ և դիմեաց առաջին 'ի վերայ Լիւսիմաքեայ։

Բայց յայնժամ գոյժ հասեալ առ նա, զի հասեալ կալաւ Պիւռռոս զՊիրթէա քաղաք. և հռչակ վաղվաղակի հարեալ բանին 'ի Մակեդոնացիս, եղծեալ խանդարեցան այնուհետև իրքն Դեմետրի, և առհասարակ 'ի բանակին ձայնք յորդեալ վայից և արտասուաց և արտմտութեանց և յիշոցաց ընդդէմ նորա, նա և զօրականք ինքնին յանձին չկալան այնուհետև կալ

առ նմա, այլ վարատել սփռել՝ ոչ որպէս ասէին՝ 'ի տունս իւրաքանչիւր, այլ ճշմարիտ՝ գնալ անցանել առ Լիւսիմաքոս։

Ապա լաւ համարեցաւ Դեմետր բացագոյն յոյժ տեղն տալ 'ի Լիւսիմաքեայ, և խաղալ ընդդէմ Պիւռռոսի. քանզի էր իսկ Լիւսիմաքոս համազգի և բազմաց կենակից ծանօթ 'ի բնէ ժամանակացն Աղեքսանդրի. իսկ Պիւռռոս այր եկամուտ գողով և օտարական, երբէք Մակեդոնացիք՝ ասէր՝ քան զինքն նախամեծար չարասցեն զնա։ Այլ 'ի խորհուրդս իւր խաբեցաւ Դեմետր։ Քանզի իբրև մերձ հասեալ առ Պիւռռոս և բանակ հարկանէր, յայնժամ Մակեդոնացիք որ հիացեալ իսկ էին նոքա հանապազ ընդ քաջութիւն կորովութեան առնն, և 'ի վաղնջուց իսկ բնաւորեցան նոքա զայր քաջամարտիկ արժանի ևս ունել արքունի բարձին. առ այս՝ զի և լսէին նոքա յայնժամ զհեզաբար գնացսն նորա առ գերին. և արդէն իսկ խնդրէին առհասարակ օձտել 'ի Դեմետրեայ, և անձնատուր կամ առ սա լինել կամ առ այլ ոք. ուստի զառաջինն յայնժամ զանխուլ և տակաւ դասալիք եղեալ, և ապա յայտնապէս ևս, անդ էր տեսանել՝ զի ողջոյն բանակն 'ի յոյզս ծփեցաւ ամբոխից և յաղմուկ անհնարին։ Որպէս զի և ժոեցան ևս ոմանք 'ի վերջէ, և Դեմետրի թեւադիր լինէին գնալ 'ի բաց և ապրեցուցանել զանձն. իբրու որ յոգնեալ իսկ էին այնուհետև Մակեդոնացիք մարտ դնել կը-

ռուէլ 'ի վերայ գրգանաց նորա։ Եւ հեշ-
տալուր յոյժ թուեցաւ Դեմետրի այս
յորդորակ առ խստութեան բանիւքն՝ զոր
այլք ևս յայնժամ արձակեցին միանգա-
մայն ընդդէմ առնն։

Ուստի և Դեմետրիոս կորակոր 'ի խո-
րան իւր մտեալ, իբրու որ ոչ ևս թագա-
ւոր՝ քան թէ 'ի դերասանաց ոք, փոխան
արքենի ծիրանւոյն՝ քղամիդ գորշ արկեալ
զանձամբ՝ ելեալ թաքթաքուր խոյս տը-
ւեալ փախչէր։ Յայնժամ ընթացեալ
բազումք 'ի Մակեդոնացւոց յաւարի առ-
նուլ զխորան նորա, մինչդեռ նոքա այր
այր յինքն խլեալ զկարասին աղճատէին և
'ի վէգ ընդ միմեանս դային, անդուստ 'ի
վերայ հասեալ Պիւռռոսի և նուաճեալ
զնոսա, տիրանայր բանակին։ Ապա Պիւռ-
ռոս և Լիւսիմաքոս յիւրեանս բաժանեալ
բաշխէին ողջոյն զՄակեդոնիա, յորում
հաստատուն թագ կապեաց Դեմետր բո-
վանդակ ամս եօթն։

Եւ զայս օրինակ ապա վատթարեալ
այրն և երթեալ ապաւինեալ 'ի Կասան-
դրա, անդանօր Փիլիպ ամուսին նորա յոյժ
'ի խոր խոցեալ՝ ոչինչ հանդարտէր միւս-
անգամ տեսանել զիւրն Դեմետրիոս՝
այնպէս 'ի սոսկականաց ոք և փախստական
և հէգ և չուառական քան զամենայն թա-
գաւորս. և բնաւ իսկ յուսահատ նզովեալ
զբախտն նորա՝ որ քան 'ի բարին՝ հաստա-
տուն ևս էր 'ի չարն, ինքնին դեղակուր ե-
ղեալ մեռանէր։ Բայց Դեմետրիոս զմտաւ

ածեալ միւսանգամ առնուլ ժողովել զնշխարեալսն զնաւաբեկութեանն, խաղայր անցանէր յԵլլադա և խմբէր կուտէր որ անդ զզօրականն և զբարեկամսն։

Եւ արդ՝ զոր պատկեր նմանութեան Մենեղաւոս ինքնին առ Սոփոկղեայ 'ի ներքս բերէ վասն իւրոց բախտիցն՝ ասելով, եթէ

" Այլ իմ Օրհան 'ի գիցուհւոյն
Բազմահոլովն 'ի յանուի
Ցանգ հիւռ եկեալ, 'ի նոյն դարձեալ
Բնութիւնս անգուլ փոփոխի։
Զ՚որորինակ Լուսնին երես
Յօդոցդ 'ի կայս ամբարձման,
Գիշերս երկու չրկայ երբէք
Ի նոյն 'ի մի կերպարան.
Այլ որ անտեսն, յանկարծ նա նոր
Գայ յերևան առաջին,
Եւ գեղաղարդ լի՛ պատարուն
Է շուք գիմաց գիտակին.
Բայց և յորժամ հրաշանըշոյլ
Տիպ լուսալիր փայլէ նա,
Նուազէ կրկին, և 'ի վերջէ
Ո՛չ գլտանի հետ նորա ,, ։

Արդ զնոյն պատկեր նմանութեան ճահաւորակի ևս ճշգրտեսցէ ոք արդեաք յիրան Դեմետրի, 'ի բարգաւաճել նորա և 'ի նուազել նորա, 'ի բարձրանալ նորա և 'ի խոնարհել նորա։ Ոյր և զօրութիւն առնն և յայնժամ՝ յորժամ քնաւ իսկ վատեալ

կարծեցաւ և շիջելափառ, անդրէն միւսանգամ արծարծեալ վառեցաւ։ ապա և գունդք ևս զօրականին խմբեալ առ նմա, տակաւ այնուհետև 'ի վեր առեալ կանգնեցին զնա։ Բայց յայնժամ նա իբրև 'ի սոսկականաց ոք և մերկ տեռաղերծ յարքունի զարդուցն՝ այնպէս առաջին անգամ գնայր հեռևէր ընդ քաղաքս քաղաքս։ Յորում ժամանակի և ոմն յայն սահման կենաց տեսեալ զնա 'ի Թեբէ, գեղեցիկս նմա զԵՒրիպիդեայ տողն յարմարէր.

Որ նախ աստուած, արդ յերկրածին
Դա փոփոխի կերպարան.
Դա ընդ հոսանս գընայ Դիրկեայ,
Գընայ ընդ ջուրս Խամենեան։

Այլ իբրև այնպէս յանդորր՝ իբրու յաղքունի և 'ի կուռ պողոտայ՝ ելանէր Դեմետրիոս, և ինչք ևս և շուք տերութեան յաւելոյր նմա, դարձուցանէր առ Թեբայեցիսն զհայրենին նոցա զքաղաքաւորութիւն։ Բայց Աթենացիք նշկահեալ զնա, և զԴիփիլոս՝ որ իբրև քահանայ փրկողացն գրեալ կայր՝ բարձեալ 'ի դասակարգէ անուանի որերոյն, և վճիռ ևս տուեալ ընտրութեան իշխանապետաց ըստ վաղնջուց կարգի հայրենեացն, առաքեցին կոչէին զՊիւռռոս 'ի Մակեդոնիոյ. քանզի և տեսանէին խակ զբարգաւաճել Դեմետրի արտաքոյ ակնկալութեան իւրեանց։

Սրտմտեալ Դեմետրիոս խաղաց գիմեաց 'ի վերայ նոցա և պաշարումն սաստիկ ածէր 'ի վերայ քաղաքին նոցա։

Ապա առեալ Աթենացիք զԿրատէս իմաստասէր՝ զայր հոյակապ և արդոյ առաքեցին առ նա. իսկ Դեմետր՝ կէս մի 'ի խնդրուածոց իմաստասիրին, և կէս մի՝ զոգուտ ևս զանձինն զմնաւ ածեալ 'ի ժամուն, ամոքէր 'ի Թեբադրութեանն Կրատեայ, և եղոյծ զպաշարումն. և խմբեալ զամենայն զնաւան և ամբարձեալ 'ի նոսա զօրականս բիւր մի և հազար հանդերձ այրուձիով, ծովագնաց լինէր յԱսիա. խընդրէր հանել 'ի ձեռաց Լիւսիմաքեայ զԿարիա և զԼիւգիա։

Իսկ մնաց 'ի Միլետոն առնոյր ժողովէր զնա Եւրիւտիկէ քոյր Փիլլայ, ածեալ և զՊտղոմայիդէ զիւր դուստրն և զՊտղոմեայ, որ և յառաջն 'ի ձեռն Սելեւկոսի խոստացեալ իսկ էր Դեմետրի։ Յայնժամ 'ի ձեռացն Եւրիւտիկէայ կին ածեալ նա զաղջիկն, և զհարսանիսն կատարեալ, խաղայր անդէն 'ի վերայ քաղաքացն՝ յորոց և բազումք ինքնակամ նուաճեալք ընդ ձեռամբ, և բազումք ևս մարտիւ պատերազմի, հասանէր ունէր և զԱրգիս։ Յայնժամ և բազումք 'ի զօրագլխացն Լիւսիմաքեայ անցանէին առ Դեմետր հանդերձ զօրականօք և ընչիւք իւրեանց։

Յետ այսորիկ Ագաթոկղէս որդի Լիւսիմաքեայ 'ի վերայ հասեալ ստուար բանակաւ, խաղայր գնայր Դեմետրիոս 'ի

Փռիւգիա. եդ 'ի մտի հասանել ունել զՀայոց աշխարհն, և խլըտել շարժել զՄարս, և մարտ դնել կռուել ընդ վերնագաւառացն. զի և երբէք յընկրկել վանել իւրում՝ անդանօր ամուրս բաղումս գտցէ և վայրս ապաւինի։ Այլ ապա 'ի դիմել 'ի նա Ագաթոկղէայ, յաղթական լինէր Դեմետրիոս. սակայն և արգելեալ պատրաստել իւր ցորեան և պաշար, 'ի մեծ տագնապի լինէր այրն։ Առ այս և զօրականն կասկածէր՝ եթէ տարցի զնոսա Դեմետր բնակել յաշխարհին Հայոց և 'ի Մարս. անդուստ և սուէն երթալով երթայր և սաստկանայր. դարձեալ և սխալ մի ևս յանցս Գայլ գետոյն զբաղումս 'ի զօրականէն գետակուր կորուսանէր։ Եւ զօրականք ինքնին ոչ դադարէին 'ի հեգնելոյ զնա, առ այս՝ և մի ոմն հանդէպ խորանին նորա առեալ գրէր խուն մի փոփոխութիւն զսկիզբն բանիցն Եդիպոսի.

Բաբէ ՝որդեակ կուրի ծերոյն
Անտիգոնեայ.
Զի՞նչ այս սահման, յոր մեք եկեալ
հասաք ահա։

Ապա 'ի վերջէ ընդ սովոյն պաշարեցաւ նա և 'ի սրածուութենէ, ըստ որում և բնաւորեցաւ իսկ՝ յորժամ՝ նեղ հասանէ մարդկան ուտել 'ի ինքնասակարացն. և տապաստ անկեալ նորա ոչինչ պակաս քան զուութ հազար 'ի զօրականէն, չու առնէր դառնայր հանդերձ մնացեալովքն։

Իջեալ ապա 'ի Տարսոն, ոչ կամէր եթէ 'ի զօրականէն վիշտ հասցէ դաւառին՝ որ էր յայնժամ ընդ Սելեւկեայ իշխանութեամբն. յորմէ և անձնապահ լինէր Դեմետր դրդռեալ զնա ընդդէմ իւր: Իբրև յանհնարին մտանէին իրքն 'ի վերջին աղքատութեան զօրականին, և զի և Ագաթոկղէս հասեալ փակեալ էր զանցս լերանցն Տաւրոսի. ապա առեալ գրէր Դեմետրիոս թուղթ առ Սելեւկոս, ողբս երկայնս ճառագրէր 'ի ձախողակ բաղդն իւր. և աղաչէր ախտակիցս լինել արդահատել աղգականին իւրոյ յաղէտս վշտին, որ և թշնամեաց անգամ արդեօք արտասուելի գուցէ: 'Ի գութ վայր մի շարժեալ Սելեւկոս, առեալ գրէր որ անգանօր առ կուսակալսն, տալ Դեմետրի ռոճիկ շքեղ արժանի առն թագաւորի, և պաշար առատ զօրականին նորա:

Բայց յայնժամ Պատրոկղէս համբաւեալ այր հանճարեղ և հաւատարիմ բարեկամ Սելեւկեայ, գնացեալ առ նա ասէր՝ եթէ ծախք կերակրոց զօրականին Դեմետրի մեծ ինչ լիցին արդեօք, սակայն և ոչ լաւ իցէ այնպէս յանհոգս թողուլ անգանօր գեգերել Դեմետրի. իբրև բուռն առաւել և յանձնապաստան միշտ է այրդ քան զամենայն թագաւոր. իսկ զարդիս և յաղէտիցն պաշարեալ է դա, որք և զհամբոյրսն անգամ դրդեսցեն արդեօք 'ի որ ծս յանդգունս և յանիրաւութիւնս:

'Ի բանից ասսի գրդռեալ Սելեւկոսի,

զորու ծանու խաղայր գնայր 'ի Կիլիկիա։ Յապուշ կրթեցաւ Դեմետր ընդ յանկարծակի փոփոխութիւնն Սելեւկեայ, և զահի հարեալ խոյս տայր յամուրս անխաբս Ցաւրոսի։ Անդուստ առաքէր աղաչէր զնա թոյլ տալ նմա տիրանալ 'ի վերայ ինքնօրէն բարբարոսացն այնոցիկ. և անդանօր զնշխարեալ կեանս իւր անցուցանել, և գամ մի 'ի տարագէմ թափառանացն ազատանալ. ապա թէ ոչ՝ գոնեա կերակուր զօրականին տացէ զձմեռն զայն. և մի այնպէս մերկ և կարօտ վանեալ զնա, 'ի ձեռս տացէ թշնամեացն։ Բայց Սելեւկոս 'ի կարծ գնացեալ վասն ամենայնի այսորիկ, պատուէր տայր՝ զի թէ կամք իցեն նմա ամիսս երկու ձմերել 'ի Կատառնիա, պայմանաւ տացէ նմա 'ի պատանդի զաւագս 'ի բարեկամացն։ Զայս ասաց, և միանգամայն զանցս Ճանապարհին Ասորւոց արգել փակեաց առաջի նորա։ Անդանօր յայնժամ Դեմետրիոս 'ի նեղքս փակեալ՝ իբրև գազան, և շուրջանակի թակարթապատեալ, շրջէր յածէր այնուհետև, կռուէր հզօրագոյնս, և ասպատակ կապէր ընդ գաւառն, և 'ի վեգ եղեալ ընդ Սելեւկեայ 'ի կռուել նորա, յաղթական եղանէր հանապազ. էր երբեմն զի և կառք գերանդազէնք խաղացեալ ընդդէմ նորա, և նա զնոքօք շահատակեալ 'ի փախուստ դարձուցանէր, և հասեալ տիրանայր 'ի վերայ բարձանցն անցից յԱսորիս՝ վանեալ անտի զպարեկապանան։

Ապա և խրախոյս մեծապէս առեալ յայնժամ, տեսեալ և զզօրականն արու-թեամբ լի, պատրաստեցաւ կազմեցաւ 'ի մարտ մեծամրցանակ ընդդէմ Սելեւկեայ։ 'Ի մեծ տագնապ տարակուսի պաշարեալ իսկ էր Սելեւկոս, քանզի և յօգնականու-թենէն Լիւսիմաքեայ խոյս տուեալ էր յերկուանօք խնթացեալ ընդ այրն. և ինք-նին միայնակ յայնժամ վարանէր 'ի կռիւ կաքաւեալ ընդ Դեմետրի. զարհուրեալ ինն էր 'ի յուսահատ կրից առնն և յանդուլ փոփոխութենէ բախտին նորա՝ այն որ յանկարծ 'ի վերջին աղէտից առեալ ամ-բառնայր զայրն 'ի մեծամեծ յաջողութիւն։

Բայց ընդ աւուրսն ընդ այնոսիկ 'ի դը-ժուարին հիւանդութիւն անկեալ խօթա-նայր Դեմետրիոս. և նորա մեծապէս վա-տեալ մարմինն, վատթարէր համբուն և զիրս նորա. քանզի կէսք 'ի զօրականէն ան-ցին առ թշնամին և կէսք օձտեալ ցրուե-ցան։ Եւ ապա հաղիւ ուրեմն կազդու-րեալ նորա յետ աւուրց քառասնից, ա-ռեալ ընդ իւր զմնացեալսն զօրականին, չու հրամայէր՝ իբրու այն թէ կարծեցու-ցանել զթշնամին՝ խաղալ 'ի Կիլիկիա։ Բայց նա գիշերայն ժողովեալ զբանակն առանց ձայնի փողոյ, խաղաց յայլ կողմն. և հարեալ վանեալ զնեառն Ամանոն, յա-ւարի առնոյր զգաւառն առ լեռնոտամբն մինչև 'ի Կիւրրեստիկա։

Ապա ընդ առաջ նորա ելեալ Սելեւ-կոս և մօտ բանակ հարեալ, յայնժամ Դե-

մեսրիոս ժողովեալ զբանակն՝ գիշերա-
գնաց խաղայր ընդդէմ Նորա. որ այնպէս
հարուստ ժամս զգիշերոյն՝ անգիտացեալ
զկրացն 'ի քուն կայր։ Իբրև յանկարծ իրա-
զեկ վտանգին լինէր Սելեւկոս 'ի դասալիք
զօրականէն՝ որ եկին առ նա, զահի հա-
րեալ և 'ի վեր վազեալ՝ հրաման տայր նը-
շանս բաշխել զօրականին. և միանգամայն
զկօշիկսն արկանէր յոտսն, ձայն բարձեալ
դոչէր առ բարեկամսն, եթէ 'ի վեգ և 'ի
կռիւ ելեալ է ընդ վայրենի գազանի։ Իսկ
անդուստ Դեմեսրիոս 'ի տրոփական թնդ-
մանէ թշնամեացն զգաց՝ զի 'ի վեր ել
բանն, և խուսեալ տեղի տայր 'ի վայրացն
'ի շտապ տագնապի։

Ապա յառաւօտուն պահու 'ի վերայ
անկեալ Դեմեսրի Սելեւկոս, նա 'ի բաց
արձակեալ զմի 'ի զօրապետաց իւրոց միւ-
սոյ թեւոյն, հարկանէր փոքրու իմն զթշնա-
միսն։ Բայց Սելեւկոս յայնժամ թողեալ
զերիվարն և 'ի բաց զսաղաւարտն եդեալ,
և առեալ զասպարն, այնպէս ընդ առաջ
գայր վարձկանաց զօրուն. արձանացաւ
հանդիպոյ, խրախոյս 'ի նեղքս տայր նոցա՝
անցանել յիւր կողմն, զայն ինչ զմտաւ ա-
ծել և գիտել՝ զի այնչափ ինչ ժամավա-
ճառ եղև նա 'ի փրկութիւն անձանց նոցա,
և ոչ Դեմեսրի։ Եւ յայնժամ առհասա-
րակ նոքա ողջոյն տուեալ նմա՝ արքայ
կարգային, և անձնատուր լինէին 'ի նա։

Իսկ Դեմեսրիոս այնչափ ձախողակաց
տարեալ, անձնապուր և 'ի վերջին յայն

աղէտսն եղեալ, գէմ եղեալ փախչէր 'ի դուրս կրճիցն Ամանոնի. և հասեալ կա-
լեալ մայրի մի անտառախիտ՝ անդէն կայր զդիշերն հանդերձ բարեկամաւքն ոմամբք և պաշտօնէիւք յոյժ սակաւուք. ինդրէր ե-
թէ հնար ինչ լցէ՝ ելանել 'ի Ճանապարհն Կաւնեայ, և ինքանել գաղտագողի 'ի ծով ուր ակն ունէր գտանել նաւս: Իսկ իբրև գիտաց՝ եթէ և ոչ աւուրն պարէն գտա-
նէր առ նոսա, դարձեալ զառաջանէր: Յայնմ պահու հասեալ առ նա ոմն 'ի բա-
րեկամացն Սովսիդենէս անուն՝ ոսկի չո-
րեքհարիւր ունելով 'ի կամարին, խրա-
խուսեցան ժամանել նովին մինչև 'ի ծով անդր, և ապա լեռնադնաց ուղղոյ լինէին ընդ մութ գիշերոյն: Անդուստ խարոյկս խարոյկս տեսեալ զթշնամեացն արկեալ յանցս Ճանապարհաց, յուսահատք յուղ-
ղոյն՝ դառնային միւսանգամ յառաջին տե-
ղին. ոչ ամենեքին՝ քանզի և բազումք փա-
խըստեայ գնացին, և ոչ դարձեալ՝ որ մնա-
ցինն քաջալերեալ ինչ էին իբրու զառա-
ջինն: Որպէս զի և համարձակեալ անդ ոմն ասել առ Դեմետր, եթէ պարտ է անձ-
նատուր 'ի Սելեւկոս լինել, նա շտապաւ մերկացեալ զվաղակաւորն՝ ինդրէր գնալ զիւրովին. անդէն շուրջ բարեկամացն պա-
տեալ և քաջալեր նմա տուեալ՝ ածէին ա-
մոքէին անձնատուր լինել: Ապա առեալ առաքէր Դեմետր առ Սելեւկոս, և զամե-
նայն զիւր ապաստան 'ի ձեռս առնէր նորա:

Զայն լուեալ Սելեւկեայ՝ ասէր. ոչ

բախան Դեմետրի փրկեաց զԴեմետր, այլ իւր բախան. որ 'ի վերայ այլոց երախտեացն առ նա՝ ժամ տայր և զմարդասէր գուութն իւր 'ի ներքս բերել նմա։ Հապա ձայն տը. ւեալ պաշտօնէից ոստիկանացն, հրաման տայր խորան հարկանել որքունի, և կազ. մել հանդերձել զամենայնն՝ և առնուլ ժողովել զԴեմետր և ապաս շքով հարկա. նել նմա։ Էր յայնժամ առ Սելեւկեայ Ապողոնիդէս ոմն մտերիմ Դեմետրի. զնա առեալ Սելեւկոս վաղվաղակի առաքեաց առ նա՝ միսիթար և քաջալեր մատուցանել նմա. վասահ առնել՝ տեսանել զՍելեւկոս արդարև իբրև ճշմարիտ մերձաւոր և փեսայ։

Իբրև հրաման այս արքային համբաւե. ցաւ, յայնժամ զառաջինն նուազունք, ապա և բազումք 'ի բարեկամացն այր զա. բամբ ընթացան առ Դեմետր. խնդրէին այր քան զընկեր կանուխ աճապարել քանզի և ակն ունէին հուպ ը հուպ յոյժ բարգա. ւաձել Դեմետրի առ Սելեւկոսի։ Բայց ապատարկութիւն այս զգուութ ախտակցու. թեանն առ նա՝ շրջեաց 'ի մախանս. և ժամ գտեալ թշնամեացն և յաչալկոտացն՝ զա. ռածեալ ժանտացուցին զմարդասէր կամս արքային. արհաւիրս արկանէին, ասէին՝ անշուշտ յերևել անդ Դեմետրի խռովք անհնարինք հարցին 'ի բանակին։

Իբրև վայր մի 'ի վերայ անցանէր՝ յորմէ հետէ Ապողոնիդէս յոյժ խրախամիտ ժա. մանեաց առ Դեմետր, և այլք ևս զհետ հասին և առհասարակ բանս սքանչելիս

զրուցէին 'ի կողմանէն Սելեւկեայ, որպէս զի անդ և Դեմետրիոս ինքնին յետ աղէ-տիցն՝ (Թէպէտ և զաւաջինն վատութիւն համարեցաւ անձնատուր 'ի Սելեւկոս լի-նել), փոխէր յայնժամ 'ի մոացն առ վատահութիւն սրտի և առ յոյս ակնկա-լութեանն. Անդուստ յանկարծ եկեալ հասանէր Պաւսանիաս և գունդ ընդ նմա իբրև հազար զօրականաց՝ հետեւակ և այ-րուձի. և պատեալ պաշարեալ զԴեմե-տրիոս, և 'ի բաց զայլան վանեալ, առեալ ածէին զնա ոչ առ Սելեւկոս, այլ 'ի Քեր-րոնիսոն Ասորւոց. ուր և պահ զգուշու-թեան արկեալ նմա՝ սպաս գեղեցիկ հար-կանէին նմա 'ի հրամանէն Սելեւկեայ. և արծաթ ևս 'ի նելքս բերէին, և հանապա-զօր սեղան մեծահաց պատրաստէին նմա։ Առ այս՝ և ասպարէզս արշաւանաց մատու-ցանէին և Ճեմարանս արքունիս և որմածս արդեւլոցաց որսոց երէոց։ Եւ թոյլ ևս տային ում՝ ումեք կամք իցեն 'ի բարեկա-մացն փախստէից՝ կալ առ նմա. դարձեալ և ստէպ նմա յայց եւլանէին արք աւագք 'ի հրամանէն Սելեւկոսի՝ բանս լի մարդասի-րութեամբ խօսել ընդ նմա և քաջալերս տալ մոացն լքեալոց. և ասել՝ եթէ 'ի հա-սանել Անտիոքոսի և Ստրատոնիկեայ՝ գե-ղեցիկս այնուհետև վՃարեսցին իրք։

Իսկ Դեմետրիոս յայնժամ յիւրում արկածին առաքէր ազդ առնէր որդւոյն և կուսակալացն իւրոց և բարեկամացն յԱ-թէնս և 'ի Կորնթոս, մի հաւատս երբէք

ընծայել ոչ իւրում նամականուոյն և ոչ կնքոյն. այլ որպէս եթէ ինքն մեռեալ իսկ լցէ, այնպէս զքաղաքն և որ ինչ 'ի ձեռս նոցա՝ պահել իւրումն Անտիգոնոսի։

Բայց Անտիգոնոս լուեալ զձերբակալ լինել զհօրն, և 'ի խոր խոցեալ և 'ի թուխս ողջոյն համակեալ, առեալ գրէր աղերս և պաղատանս առ այլս 'ի թագաւորաց և առ Սելեւկոս ինքնին. տայր 'ի ներքս մատուցանէր նոցա զամենայն գոյս միանգամայն զհօրն և զիւրն. առ այս և մոագիւրագոյնս ընծայէր և զանձն ևս 'ի պատանդ 'ի վերայ հօրն։ Անդուստ և բազումք 'ի քաղաքաց յողոք անկանէին 'ի միասին ընդ նմա վասն այնորիկ. դարձեալ և արքայք՝ բայց 'ի Լիւսիմաքեայ. որ և առաքէր առ Սելեւկոս և մթերս բազում դրամոց խոստանայր նմա՝ եթէ սպանցէ զԴեմետր. իսկ Սելեւկոս որ և յառաջնմէ գարշեալ իսկ էր 'ի Լիւսիմաքեայ, և յայնժամ սաստիկ ևս վասն բանին այնորիկ՝ իբրև ընդ այր նզովեալ և ընդ խուժադուժ անձն հայեցաւ 'ի նա։ Սակայն և Անտիոքոսի որդւոյն և Սարատոնիկեայ պահեալ զԴեմետրն, ժամավաճառ դեգերէր Սելեւկոս. կամէր նոցուն արգասեացն ընծայաբեր լինել զազատութիւնն նորա։

Իսկ յայնժամ Դեմետրիոս՝ որպէս 'ի սկզբանն տարաւ ձախողակ բախտին, առաւել ևս յայնժամ և հեշտին վշտմբեր լինէր. և նկրտէր նա յայնժամ զառաջինն 'ի հրահանգս մարմնոյն, 'ի հանդէսս որսոց

և արշաւանաց. այլ ապա տակաւ մեղկեալ և ընդարմացեալ՝ անձնատուր 'ի գինեբ-բուս լինէր և 'ի նարոս, անցուցեալ բազում ժամանակ. կամ զի զկիրս առաջի-կայ աղէտիցն իւրոց չափորժէր մտաբերել՝ իբրև 'ի զգաստութեանն, և խնդրէր գի-նեհարութեամբն կուրացուցանել զխոր-հուրդ մտացն. կամ զի յայնժամ խեղա-մուտ եղև այրն, եթէ աւադիկ կեանք՝ ո-րում 'ի հարուստ ժամանակաց հետամուտ ցանկացեալ իսկ էր, այլ անհանձար խոր-խորդուն և 'ի սնափառ կրիցն բացագոյնս 'ի նմանէն թափառեցաւ. և քիրսն շատ իւրում անձինն, և շատ ևս այլոցն հասու-ցեալ՝ ինքն 'ի զէնս 'ի զարդս, և 'ի նաւաց հանդէսս, և 'ի զօրաց բանակս յուզէր խըն-դրէր զբարին՝ զոր յայնժամ յանդուրծու-թեանն 'ի ձեռս եբեր և 'ի պարապութենն և 'ի հանգստեանն՝ որում և ակն թերևս չու-նէր։ Քանզի և կէտ նպատակի զի՞նչ այլ արդեօք ելցէ մարտիցն և վտանգաց անբարի թագաւորացն՝ խեղաթիւրիցն և անհան-ճարիցն, բայց գրգանս և փափկութիւնս՝ փոխանակ առաքինութեան և լաւին հան-դերձել անձանց. թէպէտ և 'ի գրգանացն ապա վրէպ կայցեն նոքա և 'ի ճշմարիտ վայելիցն։

Աւրդ յայնժամ Դեմետրիոս յամին երրորդի արդելանոցին իւրոյ 'ի Քերրոնի-սոն, առ 'ի դատարկապորտ կենացն և յո-րովայնապարար և 'ի գինեճանութենէ՝ անկեալ խօթանայր, և մեռանէր կեցեալ

ամն յիսուն և չորս։ Իսկ Սելեւկոս յայն-
ժամ յոյժ բամբասեցաւ, և շատ ցաւեաց
նմա՝ զի այնպէս խիթացաւ ընդ Դեմե-
տրիոս. և զի՝ և ոչ նմանող գոսաւ նա Դրո-
միքեսեայ, որ թէպէտ և այր բարբարոս
Թրակացի՝ մարդասէր հիւրընկալութեամբ
արժանի առն թագաւորի վարեցաւ ընդ
գերեալն Լիւսիմաքոս։

Սակայն և յուզարկաւորութիւն Դեմե-
տրի՝ տեսիլ իմն ողբերգակ և թատերական
հանդիսի ընծայեցաւ։ Քանզի լուր առեալ
Անտիգոնոս զդալստեան նշխարաց հօրն
իւրոյ, ուղւոյ հրաման տուեալ առհասա-
րակ նաւահանդիսին, ընդ առաջ ելանէր
նմա մօտ 'ի կղզիս. և առեալ ժողովեալ
յաւագամեծար 'ի նաւն զնշխարսն՝ հան-
գուցանէր 'ի սափորի 'ի ձոյլ ոսկւոյ։
Իսկ անդուստ և քաղաքք՝ ուր և միանգամ
եկեալ հասանէին նաւքն, պատկս պատկս
առեալ ածէին 'ի վերայ սափորոյն, և արս
ևս սգահանդերձս առեալ արձակէին յու-
ղարկել շքով զդիահանսն։ Այլ մերձ 'ի
Կորնթոս եղեալ նաւահանդիսին, ան-
դուստ տեսանէին մեծապէս փառօք 'ի վեր
'ի խելս նաւուն զսափորն՝ արքունի պըճ-
նեալ ծիրանեաւ և թագիւ. որում և պա-
տանիք մերձ կային 'ի զէն 'ի զարդ վառեալք
'ի պահպանութիւն. անդանօր և Քսենո-
փանտէս քան զամենայն արնգահարս ժա-
մանակին գերահամբաւ այր՝ բազմեալ առ-
ընթեր հարկանէր արնգաւն նուագ յոյժ
նուիրական. և կարգի նուագին հետևէր

շարժէր և թիավարութիւնն ինքնին. և այնպէս թռուով և չափով և կշռով ճողփիւն արձակէր ջուրն, իբրու որ 'ի կոծան յաչխարանացն ջայլէլ՝ սրնգահարութեցն կարգառութիւնք իցեն։ Բայց որ աչխարելի առաւել և ողբալի ծովափնեայ մարդկանն, էր անդանօր տեսանել զԱնտիգոնոս ինքնին այնպէս հիքացեալ և գերարտօսրալից։ Իսկ իբրև այսպէս շուք պատուոյն և պսակացն կատարեցաւ 'ի Կորնթացւոց անտի, ապա տարեալ հանգուցանէր զնշխարսն 'ի Դեմետրիադէ քաղաք անուանակից նորա՝ բնակեալ շուրջ զՅոլկեաւ 'ի փոքրիկ աւանաց։

Եւ եթող զկնի իւր Դեմետրիոս բազում որդիս. 'ի Փիլլայ զԱնտիգոնոս և զՍտրատոնիկէ. դարձեալ և Դեմետրիոսս երկուս, մի զանուանեալն Նիհար՝ 'ի Լիւրիկեցի կնոջէ, և միւս ևս՝ 'ի Պտղոմայիդայ՝ որ և թագ կապեաց 'ի Կիւրենէ։ Իսկ 'ի Դէիդամեայ եթող զԱղեքսանդրոս, որ եկաց յԵգիպտոս. և ասեն՝ և յԵւրիդիկեայ ծնանել նմա որդի Կորրաբոս։ Եւ էջ նորա ճետն պայազատութեամբք թագ կապեալ մինչև 'ի Պերսէոս 'ի վերջին. առորով և Մակեդոնիոյ տիրացան յայնժամ Հռոմայեցիք։

Արդ այսպէս 'ի գլուխս զՄակեդոնեանն տարեալ տեսարան, ժամ է անցանել մնանել 'ի Հռովմէականն։

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Յն. Θεωρός. ըստ ձայնին՝ Աստուածահոգակ. այսինքն՝ որ աստուածայնոցն իրաց հոգածուն է և պաշտօնեայ։

2. Եւրիպիդէս ասաց՝ նոյնայանգ Δουλευτέον, Ծառայելի է. և Անտիգոնոս՝ փոխանակ եդ զայլ նոյնայանգ, Γαμητέον, Ամուսնանալի է։

3. Այս է, յառաջ եկեալ թերևս ի՞նչ ախտդ առ 'ի գինւոյն կղզեացն Թասոսի կամ Քիոսի։

4. Անուն բուսոյ. Յն. Ὀσχύαμος. ըստ ձայնին՝ Խոզի-բակլայ։ Քանզի 'ի Ճարակել զնոյն՝ սատակին խոզք։

5. Էր այս Եալիւսոս՝ Շուն նկարեալ։ Եւ այս հրդեհ յետոյ է ժամանակաւ քան զՊլինիոս. քանզի ասէ իսկ ինքն յայտնապէս, եթէ. "Եալիւսոս՝ որ է 'ի Հռովմ, նուիրեալ կայ 'ի տաճարին Խաղաղութեան"։

6. Պարթենոնն՝ կոչէր տաճար Աթենասայ։

7. Որպէս և վերոյգրեալ մենքենայքն Դեմետրեայ կոչեցան՝ Էպիբոլիս, այս է՝ Քաղաքամարտք և քաղաքառուք։

8. 'Ի Յն. Λάμια, կամ Λαμία. է՝ Վիշապ ձուկն ահագին յոյժ և լայնակոկորդ։ Է դարձեալ՝ և առասպելեալ Այս և Ոգի գժոխորովայն լափլիզող մանկանց՝ 'ի կանացի կերպարանս։ Իսկ Lamiae. 'Ի Լտ. է և՝ կին կախարդ, Վհուկ։

9. Էր այս Բոկքոր՝ Մաւրիտանացւոց Թագաւոր։

---

# ԱՆՏՈՆԻՈՍ

ԱՆՏՈՆԻՈՍԻՆ հաւն էր Անտոնիոսն այն հռետոր, զոր 'ի մահ Մարիոս վարեաց՝ քանզի կուսակից էր Սիւլլայի։ Իսկ էր հայր նորա Անտոնիոս՝ Կրիտիկոս վերաձայնեալն. ոչինչ այնպէս հռչակելի այր 'ի քաղաքականն, և ոչ 'ի հոյակապից ոք. սակայն և ուղղատես այր և համբոյր, առ այս՝ և աղաստաձեռն 'ի տուրս, որպէս 'ի միոյ անտի գործոյն խելամուտ ոք լինիցի։ Քանզի ոչինչ այնպէս գոյաւոր գոլով այրն, ուստի և 'ի կնոջէն խափանեալ էր 'ի մարդասիրել, դէպ եղև երբեմն ուրուք 'ի բարեկամացն կարօտելոց գնալ առ նա և խնդրել արծաթ։ Եւ զի չգոյր ինչ նորա արծաթ. հրաման տայր միում ումեք 'ի ծառայիցն՝ ջուր 'ի կոնքն արծաթի արկանել և ածել առ ինքն։ Իբրև բերաւ, նա իբրու սափրել զմօրուսն՝ թա-

նայր ջրով զծնօտան. և պատճառանք 'ի բաց զծառայն արձակեալ, տայր բարեկամին զկոնքն՝ վարել իւր 'ի սէտս։

Իսկ յետ այնորիկ իբրև քննութիւն սաստիկ լինէր 'ի վերայ առհասարակ ընտանեացն, տեսեալ նա զկին իւր զի 'ի սրտմտութիւն գրգռեալ՝ ասէր մի ըստ միոջէ հաւաստեաւ 'ի քնին առնուլ, խոստովան եղև զՇշմարիտն և աղաչէր ներել։ Եւ էր կին նորա Յուլիա 'ի տանէն Կեսարեանց, և 'ի լաւութեան և 'ի պարկեշտութեան մրցէր նա ընդ հոյակապից տիկնացն ժամանակին։ Իսկ յետ մահու առնն սա ինքն Յուլիա զորդի իւր զԱնտոնիոս առեալ դաստիարակէր. և էր յայնժամ զՅուլիա կին ածեալ Կուռնելիոս Լենտուղոս. այն՝ որ 'ի դաւակցաց անտի գոլով Կատիլինեայ՝ 'ի մահ վարեցաւ 'ի հրամանէն Կիկերոնի. և այս ինչ ապա թուի սկիզբն և պատճառք ոխերիմ ատելութեանն Անտոնիոսի առ Կիկերոնն։ Այլ Անտոնիոս ասէ, եթէ զԼենտուղոսի մարմինն չչնորհեցին նոցա, մինչև ոչ խնդրեաց զայն մայր նորա 'ի կնոջէն Կիկերոնի։ Սակայն հասարակ ատեն զբանդ. քանզի և ոչ ումեք՝ զորս յայնժամ պատուհասեաց Կիկերոնն՝ զլացաւ ինչ զթաղումն։

Բայց ասեն 'ի ծաղկափթիթ տիսն գեղաղէշ զԱնտոնիոս. սակայն 'ի մոերմութենէն Կուրիոնի պագշոտի առն և հեշտասիրի իբրև 'ի ժանտախտէ վարակեցաւ պատանին. զոր և ամոք ևս յարդարել

զնա՝ հրապուրեաց Կուրիոնն անձնատուր 'ի գինեբբուս լինել և 'ի պոռնկոցս և 'ի բազմաշռայլ ծախսն և յաղակատանսն, որ աղագաւ և անձահ իւրում հասակին ընդ անհնարին պարտուք անկանէր. զի և տաղանդաց երկերիւր և յիսուն էին պարտքքն. և միւսանգամ երաշխաւոր կացեալ էր ինքնին Կուրիոնն: Իբրև զայն լուաւ մայրն՝ 'ի բաց մերժեաց զԱնտոնիոս և ոչ ևս ընդունէր 'ի տուն: Ապա Անտոնիոս գնացեալ յարեցաւ վայր մի 'ի Կղովդիոս, այր լիրբ առաւել և ապիրատ ևս քան զամենայն որ 'ի ժամանակին մարդահաճոյք խուժանին՝ որ ժպիրհ յանդգնութեամբն վեր 'ի վայր դործեաց զամենայն: 'Ի մոլեգնութենէ առնն արագ արագ տաղտկացեալ Անտոնիոսի, և զահի ևս հարեալ 'ի դաւաճանացն Կղոդեայ, ելեալ յԻտալիոյ նաւէր յԵլլադա. անդանօր դեգերէր 'ի կրթանս մարմնոյն 'ի մրցանս զինուորութեանն, պարապէր և 'ի ճարտասանութեան, ուր եդեալ հրահանգացն՝ զոր Ասիական կոչեն՝ արդոյ և պատուական 'ի ժամանակին. դարձեալ զի և յոյժ 'ի ճահ պատահեցաւ այն՝ գոռոզ և ամբարտաւան բարոյիցն նորա, և անոսիապանծ և յեղյեղուկ և փառասիրդիր:

Իսկ իբրև նաւագնաց յԱսորիս հանդերձեալ էր Գաբինիոս հիւպատեան այր, ամոքէր զԱնտոնիոս նիզակակից երթալ ընդ նմա. իսկ Անտոնիոս յանձին չկալաւ ամենևին՝ իբրև այր սոսկական խաղալ 'ի մարտ.

ուստի և զօրավար կարգեալ այրուձիոյն
ջղքաւ ընդ նմա։ Եւ անդ վաղվաղակի ար-
ձակեալ նա ընդդէմ Արիստոբուղեայ՝ որ
յապստամբութիւն դրդեաց զՀրեայսն, ա-
ռաջին ինքնին Անտոնիոս դիմեալ Էլանէր
'ի պատուար անդր ահագին բերդին՝ զոր
ունէր Արիստոբուղոս. ապա և յամենայն
ամրոցացն առհասարակ 'ի բաց զնա վանեալ
և մարտ եդեալ սակաւուք արամբք՝ հար-
կանէր խորտակէր զբազմութիւն զօրաց նո-
րա և առհասարակ գոգցես տապաստ ար-
կանէր, առնէր ձերբակալ և զԱրիստոբու-
ղոս ինքնին հանդերձ որդւովն։

Իբրև այս այսպէս կատարեցաւ, աղա-
չէր Պտղոմէոս զԳաբինիոս, և տաղանդս
ևս բիւր մի 'ի ներքս մատուցանէր նմա,
գալ խաղալ ընդ իւր յԵգիպտոս և զար-
քայութիւնն դարձուցանել առ նա։ Իբրև
բազումք 'ի զօրապետացն ընդդէմ դար-
ձան, և Գաբինիոս ինքնին տաղտապեցաւ
'ի կռիւ անդր՝ թէպէտ և 'ի բիւր տաղան-
դացն գերեալ, անդուստ Անտոնիոս սատ-
կապէս վառեալ 'ի նահատակութիւնս մե-
ծամեծս, հաճէր զՊտղոմէոս աղաչաւոր և
ածէր հաւանեցուցանէր զԳաբինիոս և
խրախուսէր 'ի զինուորութիւն անդր։ Բայց
նոքա քան 'ի մարտէն՝ առաւել ևս զան-
գիտեալ էին յուղղոյն մինչև 'ի Պեղու-
սիոն. քանզի և պարտ իսկ էր հատանել
անցանել զբազմախոր աւազուտն և զան-
ջրդի՝ մօտ առ Վիհն և առ Լիճն Սերբով-
նիդեայ, որոց անուն կարդան Եգիպտա-

ցեք՝ Տիւվոմնեայ սղոխս. և Թուին այնո-
քիկ՝ սասրերկրեայ ողող և պարզել կար-
միր ծովուն, որ սղագոյն կրճիւ բաժանի 'ի
ծովէն՝ որ 'ի Ներքս 1 :

Բայց Անտոնիոս յառաջոյ արձակեալ
հանդերձ այրուձիով՝ ոչ միայն զանձուկն
հասեալ կալաւ, այլ և Պեղուսիոյ տիրա-
ցաւ քաղաքին մեծի. և վանեալ մարտիւ
զզօրականն որ 'ի նմա, յանդորրու զուղին
կացուցանէր բանակին, և մեծապէս ևս
յուսացուցանէր զզօրավարն 'ի յաղթու-
թիւնն : Անդ և Թշնամիք ինքնին օգտեցան
'ի պատուասիրութենէն Անտոնիոսի. քան-
զի իբրև բարկութեամբ սրտմտութեամբ
անդէն 'ի մուտսն Պեղուսիոյ կամէր Պտղո-
մէոս կոտորած 'ի վերայ ածել Եգիպտա-
ցւոցն, ընդդէմ դարձեալ Անտոնիոս ար-
դելոյր : Ապա և 'ի մարտս բազմապատիկս
և 'ի մեծամեծս նահատակութիւն արու-
թեան բազում անգամ 'ի դէմս բերեալ,
և հանձար զքաջի զօրավարի, և մասնաւոր՝
'ի միում անդ նուագի պատեալ պաշա-
րաց 'ի Թիկանց կուսէն զԹշնամիսն, և
յաղթութիւն 'ի ձեռս տայր որ ընդդէմ
նոցա ճակատելոցն. որ աղագաւ և մրցա-
նակս և շուք տարաւ զարժանի նահատա-
կութեանն :

Նաև զանխուլ ինչ չեկաց 'ի բազմու-
թենէն մարդասիրութեան նորա հանդէս
առ Աբգեղայոս : Քանզի հիւր էր նա Աբգե-
ղայոսի և մտերիմ բարեկամ, և նեղ եհաս
նմա մարտ դնել կռուել ընդ նմա. այլ ա-

պա 'ի կռուին գտեալ տապաստ զդիակն նորա, արքայօրէն պաճուճեաց զնա և յուղարկաւորութիւն շքեղ հանդերձեաց նմա։ Ուստի և մեծապէս զհամբաւի հարեալ նա առ Աղեքսանդրացիս, զնոյն և 'ի Հռոմայեցւոց զօրականէն գովեցաւ նա իբրև քաջարի և ազատանձեայ։

Քանզի և էր իսկ նորա կերպարան պերճ և արգոյ, և մօրուաք նորա պատարուն, և ճակատ լայն և ունչ արծռունդն. դէմս այրական 'ի ներքս բերէր նմանատիպ նկարելոցն և դրօշելոց երեսացն Հերակլեայ. նա և համբաւ ևս էր վաղնջուց՝ լինել Անտոնիոսեանց 'ի Հերակլեայ զարմէն՝ ճետեալ յԱնտէոնէնեայ որդւոյն Հերակլեայ։ Որպէս և ինքնին Անտոնիոս Թեակոխէր 'ի հաւատս նորուն համբաւոյ 'ի կերպարանէ անտի մարմնոյն՝ զոր առացաք, դարձեալ և 'ի հանդերձիցն իւրոց։ Քանզի էրբ և միանգամ երևէր 'ի հրապարակի, առեալ զպատմուճանն հանդրիճեալ գօտէպնդէր առ ազդերքն, և 'ի կողմանէն կախէր վաղակաւոր մեծ, և արկանէր զանձամբ տառատոկ Թաւ։

Առ այս դարձեալ և որ ինչ միանգամ տաղտկալի այլոց, մեծապանծն յօրանալ և հեգնաբանել և յայտնապէս գինել և սեղանակից այլոց բազմել և 'ի միասին ևս ընդ զօրականին ուտել, այս ամենայն՝ աքանչելի մոեռմութիւն առ նա հանդերձէր զօրականին։ Նաև 'ի տարփանսն չէր ինչ անբաժ յաստղկանէն, և յայնմանէն

ևս յինքն յանգուցանէր զմիտս բազմաց, ձեռն տուեալ տարփաւորացն, և ո՛չ ա-նախորժս ինչ լուեալ զհեգնութիւնսն 'ի տարփանսն։ Իսկ և յառատաձեռնութէն և 'ի մեծաձիր պարգևացն զօրականին և բարեկամացն՝ երթալով երթայր և յօրա-նայր. և իբրև այսպէս մեծացաւ՝ նովին դարձեալ յաղթ ևս պատրաստէր զզօրու-թիւն իւր, զոր և ապա բիւրասպատիկ վրի-պակօքն նուազ առնէր։ Օրինակ մի կար-գեցից զառատաձեռնութեան զառնն։ Էր երբեմն զի հրամայեաց տալ ումեք 'ի բա-րեկամացն դրամակշիռս քսան և հինգ բիւ-րուց, և զչափ զայն Հռոմայեցիք Տէնէ-կոչեն։ Զարմացեալ գանձաւորին և 'ի դուրս ածեալ զմթերսն զարծաթոյն 'ի տեսիլ Անտոնիոսի, հարցանէր Անտոնիոս՝ անցեալ ընդ տեղին, զի՞նչ իցէ այն. իբրև պատասխանի ետ այրն, եթէ արծաթն է պարգևական՝ զոր հրամայեաց, խելամուտ հնարիմացութեանն եղեալ Անտոնիոսի՝ ասէր. "Ես առաւել ևս կարծէի զմի Տէ-ջիէան. բայց այդ սակաւ է. յաւե՛լ դու 'ի վերայ և այլ դոյնչափ"։ Այլ այս յե-տոյ ուրեմն պատահեցաւ։

Արդ յերկուս հերձեալ յայնժամ քաղաքին Հռովմայ, կուսակիցք աւադ-պետութեանն գնացեալ յարեցան 'ի Պոմ-պէոս՝ որ անդ մերձ կայր. իսկ ռամկապե-տեանքն՝ առաքեալ կոչէին զԿեսար 'ի Գա-ղատիոյ՝ ուր էր նա հանդերձ բանակաւն. իսկ յայնժամ Կուրիոնն բարեկամ Ան-

տոնիոսի 'ի կողմն եղեալ կեսարու՝ յան-
կոյց և զԱնտոնիոս, և Ճարտարաբանու-
թեամբն՝ որով զօրացեալ իսկ էր այրն 'ի
խուժանին, դարձեալ և առատաբաշխու-
թեամբն արծաթոյն կեսարու, տայր զԱն-
տոնիոս կարգել նախ 'ի ժողովրդապետ և
ապա 'ի դասակարգ անցուցանել քահա-
նայիցն հաւահմայից, զորս Ա-ի-ա-ա-ա-ա-ա-ա կո-
չեն նոքա։ Իբրև զայն աւագութիւն զան-
ձամբ առ Անտոնիոս, ոչ սուղ ինչ այնու-
հետև ոյժ տայր կողմանն կեսարու։ Եւ
առաջին՝ 'ի խնդրել անդ Մարկեղոսի հիւ-
պատոսի տալ Պոմպէի 'ի ձեռս զզօրաժո-
ղով զօրուն, և տալ ևս նմա իշխանութիւն
զօրաժողով առնել միւսանգամ, ընդդէմ
դարձաւ Անտոնիոս և վՃիռ 'ի նեբքս մա-
տուցանէր, զի զօրաժողով զօրուն նաւա-
գնաց լիցի յԱսորիս 'ի Թիկունս Բիբղոսի
ընդդէմ Պարթևաց. իսկ որ առաջոյ զօ-
րաժողովն 'ի Պոմպէոսէ՝ մի ինչ յանկչի-
ցի 'ի նա։

Իսկ երկրորդ անգամ՝ 'ի յանձն չառ-
նուլ Սինկղիտոսին զնամականին կեսարու
և յարգելուլ ևս զընթերցումն, յայն-
ժամ Անտոնիոս ապաստան յանձին աւա-
գութիւն, առեալ ինքնին ընթեռնոյր ըզ-
նոսա, և զբազումս անդանօր շրջէր 'ի մը-
տաց. քանզի և կեսար 'ի դրի անդ իւրում՝
իրաւացիս խնդրէր և գեղեցիկս։ Եւ երրորդ
անգամ ևս՝ իբրև խնդիրք կրկին յուզե-
ցան 'ի Սինկղիտոսին, մի՝ եթէ լաւ ար-
դեօք լիցէ արձակել 'ի բաց Պոմպէի զզօրա-

կանն. և միւս ևս՝ եթէ արդեօք լա՞ւ ևս ի-
սէ Կեսարու արձակել զիւրան. իբրև նը-
ւազունք ոմանք յանձին կալան զինաթափ
Պոմպէի լինել, իսկ գոգցես առհասարակ
ինդրէին զի զէնընկէց լիցի Կեսար, յայն-
ժամ յոտն կացեալ Անտոնիոսի՝ ասէր.
լաւագոյն ևս այն ի՞նչ՝ միանգամայն և Կե-
սարու և Պոմպէի զինաթափ լեալ արձա-
կել իւրաքանչիւր զզօրականն։ Յայնժամ
ձեռն ետուն առհասարակ հաւանութեան
խորհրդոյն Անտոնիոսի, և 'ի ձայն բարձր
գոչէին զնա և թախանձէցին ևս 'ի դլուխ
տանել զբանն։ Իբրև հիւպատոսք խոչընդ-
ոտն եղեն նմա, անդրէն միւսանգամ բա-
րեկամք Կեսարու 'ի դիմաց նորա ինդիրս
այլ 'ի նեղքս մատուցանէին՝ իբրև վայե-
լուչս և Ճահաւորս. որոց և ընդդէմ դար-
ձաւ ինքնին Կատոն. իսկ Լենտղոս հիւ-
պատոս յայնժամ 'ի բաց ևս մերժեաց
զԱնտոնիոս 'ի Սինկղիտոսէն, նա յելանել
իւրում արտաքս նզովս դիմակ դիմակ կու-
տեալ ընդդէմ նոցա, արկեալ հանդերձ
զծառայի, և վարձեալ կառս 'ի միասին
ընդ Կասիոսի Կուինտոսի, այնպէս սակ-
ստով խաղայր գնայր առ Կեսար։ Իբրև
նմա յանդիման եղեն, բողոք բարձեալ ա-
սէին. զի ամենայն ինչ աւագիկ 'ի Հռոմ
յանկարգութեան ջերանի. իբրև և ժողո-
վրդապետաց անդամ թոյլ չէ ազատօրէն
խօսել. այլ 'ի բաց մերժեալ և 'ի վտանգ
ևս մատնեալ է՝ որ միանգամ վասն արդա-
րութեան խօսել կամեցի։

Ապա այնուհետև Կեսար չու առնէր խաղալոյր զօրու Յիտալիա. ուստի և Կիկերոնն արձանագրեաց 'ի Փիլիպպեանս իւր այսպէս՝ եթէ պատճառք Տրոյիոյ պատերազմին հեղինէ եկաց. և քաղաքականին որ 'ի Հռոմ՝ ինքնին Անտոնիոս։ Այլ ոչ ճշգրտէ 'ի բանիդ Կիկերոն. քանզի Գայիոս Կեսար ոչինչ այնպէս հեշտին բնաւորեցաւ առ զայրուց բարկութեանն թողուլ զխոհականութիւն բանին. ուստի եթէ նորա 'ի հարուստ ժամանակաց անտի չէր 'ի մոի խորհուրդդ այդ, ոչինչ այնպէս յանկարծ յայնժամ գօտէպինդ լեալ էր մարտ ընդդէմ մղել հայրենի աշխարհին, յակն արկեալ անդ զԱնտոնիոս և զԿասսիոս փախստեայս այնպէս անշուքս և 'ի կառս վարձեալս. բայց պատահարդ այդ դէմն և պատճառս գեղեցիկս զմարտին զայնորիկ 'ի նեբքս մատոյց նմա՝ որ 'ի վաղընջուց իսկ պատճառս խնդրէր։ Իսկ սադրիչ Կեսարու զէն շարժել ընդդէմ ամենայն մարդկան՝ այն ինչ էր որ նախ զԱղեքսանդրն շարժեաց, և անդ ուրեմն զԿիւրոս. այս է իղձ տարապայման արքայութեանն, և ցանկութիւն մոլեգին գահերէց աւագութեանն. զոր և 'ի ձեռն բերէր ոչ՝ մինչև վանեալ զՊոմպէոս։

Արդ տիրացեալ Հռովմայ և մերժեալ զՊոմպէոս Յիտալիոյ, հաստատեաց նախ խաղալ ընդդէմ զօրականին նորա որ Յիբերիա, և ապա նաւահանդէս կազմեալ խաղալ ընդդէմ Պոմպէի. և թողոյր ան-

դէն զԼեպիդոս զօրավար 'ի Հռովմ, և Ան-
տոնիոսի ժողովրդապետի տայր 'ի ձեռս
զզօրն իւր և զԻտալիա։ Սա ապա անդէն
յինքն զմիտս յանգուցանէր զօրականին,
'ի կրթանս նոցա և 'ի կերակուրս բաղում
սնգամ կենցաղակից նոցա լինելով և ըստ
բաւականի ձեռինն զնոսա պարգևելով.
սակայն և գժոխրմբերելի ևս եղև այլոց և
ատելի. քանզի առ վատութեանն փոյթ
ինչ չունէր զհարստահարելոցն անձանց, և
գժոխալուր ևս էր առ որս դիմէինն առ
նա. և բամբասեցաւ ևս յանժուժկալու-
թեան առ կանայս արամբիս։

Եւ համբուն՝ տէրութիւնն ինքնին կե-
սարու, որ մանաւանդ յարդասեաց անտի
նորուն բռնակալութիւն ցուցեալ էր, իսկ
յայնժամ և կեղտ անուն ժառանգեաց 'ի
չափէ անտի բարեկամացն. յորս Անտո-
նիոս առ մեծազօր ճոխութեանն իբրև
ինասակար համարեալ մեծաց յանցանաց՝
առաւել ևս եկաց պատճառք։ Յայսր ա-
մենայնի վերայ դարձ յԻբերիոյ արարեալ
կեսար, զանց զինասուքն առնելով զառնն,
նիզակակից 'ի մարտի առնոյր զնա իբրև
ժիրաժիր այր և քաջ զօրավար, և ոչ յայն-
միկ վրիպեցաւ նա։

Ապա ինքնին կեսար ծովագնաց եղեալ
'ի Բրենտեսիոնէ և հատեալ անցեալ սա-
կաւ արամբք զՅոնիոն, արձակեալ յետս
զնաւսն գրէր առ Գաբինիոս և առ Անտո-
նիոս՝ ամբառնալ 'ի նաւսն զիւրեանց զօրա-
կանս և հապճեպ անցանել 'ի Մակեդո-

նիա։ Մինչդեռ Գաբինիոս ոչինչ խրա-
խուսեալ 'ի նաւարկութիւնն զԺուարին
վասն ձմերայնոյն՝ ածէր զզօր իւր ընդ ցա-
մաք երկայն շրջանաւ, իսկ Անտոնիոսի
զանգիտեալ վասն Կեսարու զի շուրջ պա-
տեալ էր 'ի Թշնամեաց, 'ի գիմի հարեալ
վանէր զԼիբոնն՝ որ 'ի բերան անդր նաւա-
հանգստին արձանացեալ կայր, պաշարեալ
բազմութեամբ փոքրիկ նաւացն զեռա-
թիսն նորա. և ամբարձեալ 'ի նաւս ութ
հարիւր այրուձիոյ և երկուս բիւրս հե-
տեւակաց՝ յուղի անկանէր։ Իրազգած թըշ-
նամեացն եղեալ և զհետս մտեալ, թէպէտ
և 'ի նոցա վտանգէն զերծաւ ուժգնակի
հարաւայնոյն՝ որ մրրիկ մեծ յուզեալ խու-
ժէր արկանէր զեռաթիռովք նոցա կոհակս
կոհակս զալեացն ամբարձելոց, բայց և ինքն
վարեալ նաւուքն 'ի վայրս ժայռուտս և
յորձանուտս, յուսահատ 'ի փրկութենէն
լինէր. մինչև ապա յանկարծ 'ի գոգոյ ան-
ոմ սաստիկ շնչեալ Լիբէականն, և մկա-
նուունք ալեացն 'ի ցամաք կուսէն վարեալ
զնա բացարձակ 'ի ծով անդր՝ նաւէր յա-
ջողակս. տեսանէր առհասարակ զծովա-
փունսն 'ի նաւաբեկութեանց անոմ ծած-
կեալս, քանզի և յայն կողմն վարեալ վա-
նեցան, 'ի հողմոյն բռնութենէն եռաթիռք
հետամուտք՝ յորոց և ոչ սակաւք նաւս
կոծեցան. և Անտոնիոս յայնժամ հասա-
նէր ունէր զբազումս 'ի Թշնամեացն և տի-
բանայր 'ի վերայ գանձուց։ Առնոյր նա և
զԼիսոս քաղաք. և ապա մեծապէս ձեռն

տայր Կեսարու՝ 'ի դէպ ժամուն ածեալ առ նա գունդ ստուար։

Իսկ յայնժամ անդուլ մարտից եղելոց՝ յամենայնի քաջապէս նահատակեցաւ, և երկիցս անգամ 'ի հանդիպոյ արձանացեալ զօրացն Կեսարու 'ի խուճապ փախիստական նոցա՝ դարձոյց ընդ կրունկն 'ի մարտ ընդ հետամուտսն, և տանէր զյաղթութիւնն։ Որ աղագաւ և զկնի Կեսարու ինքն մեծապէս արդոյ էր 'ի բանակին։ Եւ Կեսար ինքնին զիւր կարծիսն վասն նորա 'ի դէմս եբեր։ Քանզի անդանօր 'ի Փարսաղիս 'ի մարտ վերջին և սահմանաւոր յինքն զաջոյն առեալ, զձախոյ թևն հրամայէր Անտոնիոսի իբրև յոյժ քաջամարտիկ առն։ Իսկ և յետ յաղթութեանն կարգեալ ինքն իշխանապետ՝ խաղայր գընայր ինքնին հետամուտ Պոմպէի, և զԱնտոնիոս առեալ արձակէր 'ի Հռոմ՝ կարգեալ զնա ժողովրդապետ. և է այս աւագութիւն 'ի մերձ կալ իշխանապետին՝ յերկրորդ բարձի. իսկ յորժամ հեռի է՝ նա նախաթոռ է և գոգցես ինքնիշխան. քանզի և կայ մնայ ժողովրդապետական բարձն, իբրև այլք առհասարակ բառնան 'ի միջոյ յետ ընտրութեանն իշխանապետին։

Բայց 'ի ժամանակին յայնմ Դոլոբելլաս ժողովրդապետ՝ այր պատանի և նորութեանց հետամուտ, օրէնս 'ի ներքս արկանէր՝ բնաջինջ զպարտսն առնել, և զԱնտոնիոս զբարեկամ իւր՝ այն որ ցանգ հաճոյանալ խնդրէր ռամկին՝ գուն գործէր

աջակից և հասարակորդ 'ի գործն առնուլ։ Իսկ անդուստ Ասինոս և Տրեբելլիոս սարտուցանէին զնա 'ի գործոյ անտի. և դէպ տայր յաւուրսն յայնոսիկ, Անտոնիոսի կասկած մտացն սաստիկ բաղխել՝ Իբրև 'ի կին իւր Թշնամանեալ ինքն 'ի Դոլոբելլեայ. և զչարեալ վասն այնորիկ մերժէր արտաքս 'ի տանէն զկինն՝ որ էր նորա դուստր քեռւոյն (քանզի դուստր էր Գայիոսի Անտոնիոսի՝ որ 'ի միասին հիւպատոս եկաց ընդ Կիկերոնիի). և միաբանեալ ընդ Ասինիոսի պատրաստեցաւ 'ի կռիւ ընդ Դոլոբելլեայ։ Սա կանուխ հատեալ կալեալ ըզհրապարակն և ուժգին 'ի գլուխ տանել կամէր զիւր օրէնսն. իսկ Անտոնիոս՝ Իբրև և Սինկլիտոսն վՃիռ եւ զինուորութեան ընդդէմ Դոլոբելլեայ՝ մեծաւ զօրութեամբ անկեալ 'ի վերայ և մարտ եդեալ տասպաստ արկանէր 'ի Դոլոբելլեանցն, և կորուսանէր և յիւրոց անտի։ Յայմանէ ապա ատելի գտաւ նա խուժանին. դարձեալ և ոչ խմաստնոցն և առաքինեաց հաճոյ ինչ էր այրն (որպէս ասէ Կիկերոնն) 'ի քաղաքավարութենէ անտի կենացն. այլ և նոցա ատելի գտաւ, որ խոտեալ անդոանէին զնորա դժպատեհ զարբեցութիւնն, և ըզշուայլութեան զծախսն և 'ի պոռնկոցն ըզթարթափելն, և զտունջենային նորա ըզքունն, և զաստանդական թափառել նորա 'ի մտատանջութեանն և 'ի գինեհարութեանն, և զգիշերախառն նորա զչուայտութիւնս և զթատերսն, և զհեսևեալ նո-

բա 'ի միմոսացն հարսանիսն և 'ի հացկա-
տակացն :

Եւ պատմեն՝ հրաւիրեալ նորա երբեմն
'ի հարսանիս յԻպպիասայ միմոսէ և ընդ-
գինի մոռեալ ողջոյն զգիշերն, և ապա յա-
ռաւօտուն պահուկոչեալ նա 'ի ժողովուրդ-
ոց 'ի հրապարակ անդր, գնացեալ նա
առ նոսա այնպէս որովայնապարպատ՝ ան-
դանօր 'ի դուրս ժայթքէր խիխաւրաս
բազում 'ի պատմուճան ուրումն 'ի բարե-
կամացն՝ զոր առաջի մատոյց նմա : Նաև
Սերգիոս միմոս մի էր 'ի զօրաւոր հացկա-
տակացն նորա . սակայն և Կիւթերիս կին
սիրեցեալն 'ի նմանէ՝ 'ի նմին վարժարանէ՝
և տայր նա զնա ածել ընդ իւր շալակաւ 'ի
քաղաքս քաղաքս, և հետևէր խումբ զհետ
շալակին՝ ոչինչ պակաս քան զմօրն նորա :
Նաև դժոխրմբերելի հանդէս էր նորա և
կահուցն ոսկւոյ զոր ածէր տանէր յու-
ղևորութեան իւրում՝ իբրու 'ի հանդէս
իմն յաղթողականս, և հարկանել շքով
խորանաց նորա 'ի Ճանապարհին, և պա-
տրաստել կազմել մեծահաց Ճաշուց յան-
գիման մայրեաց և յափունս գետոց : Ա-
այս՝ և առիւծուց ամոլից լծել վարել ըզ-
կառս նորա, և ապարանաց լաւ որերոյն և
բամբշացն զդաստից՝ կարդել 'ի պանդոկիս
իմն գետնանախանձ բոզիցն և սրնգահար
կանանուցն : Քանզի և անհանդուրժելի
կիրք էին, զի 'ի վանել յայնժամ Կեսա-
րու բացօթեայ տքնութեամբ արտաքոյ
Իտալիոյ զմեծ զայն մարտ մեծապէս աշ-

խատուԹեամբք և վտանգօք, անդուստ նո-
րա արբանեակք ընդ նորա հովանեաւն, 'ի
դրդանս յօրացեալք՝ այնպէս ոտնհար քա-
ղաքայնոցն լինիցին։

Ա՛ՐԴ Թուվ յայսպիսեաց ատոի սաս-
տիկ ևս յուզել խռովուԹեանն, և արձա-
կերասան զզօրականն գործել 'ի խուել և
'ի հարստահարել։ Ոյր աղագաւ և կեսար
'ի դարձին իւրում ԹողուԹիւն առնէր
Դոլոբելեայ. և այս երրորդ անգամ 'ի
հիւպատոս կարգեալ՝ չառնոյր իւր բար-
ձակից զԱնտոնիոս, այլ զԼեպիդոս։ Իսկ
յայնժամ գնոց գնեալ Անտոնիոսի զա-
պարանն Պոմպէի, իբրև հարցումն լինէր
զգնոյն՝ զայրացեալ ցասնոյր. և ասէ իսկ
ինքն Անտոնիոս՝ եԹէ ոչ չոքաւ ընդ կե-
սարու 'ի կռիւն Լիբիւոյ, իբրև չէր իսկ
զդարձ փոխարինին առեալ նորա զառաջ-
նոցն իւրոց զքաջաց նահատակուԹեանցն։
Սակայն և Թուվ վայր մի կարձեալ կե-
սարու զմոլեգնուԹիւնն զԱնտոնիոսի և
զանժուժկալուԹիւն զառնն, խոժոռ ա-
կամբ հայելով 'ի չափ կենացն նորա։ Որ-
պէս զի և զկեանսն զայն զնուր լքեալ Ան-
տոնիոսի՝ զհետ կրԹեցաւ ամուսնուԹեան.
և կին իւր ածէր այնուհետև զՓուլվիա ըզ-
կին Կղովդիոսի խաղմարարին։ Եւ էր այս
Փուլվիա՝ կին ոչինչ հպատակ կացեալ ա-
ստուածործուԹեանց և առ տնին խնամոցն.
և չառնոյր նա յանձն տիրանալ 'ի վերայ
ամուսնոյ սոսկականի առն, այլ իշխան
ինդրէր 'ի վերայ կալ առն իշխանի, և զօ-

բաւար՝ 'ի վերայ զօրաւարին։ Որպէս զի և Փուլվեայ շնորհապարտ արգեօք եցէ ինքնին կղէոպատրէ, զի կրթեաց մարդեաց նա զԱնտոնիոս տիրանալ 'ի կանանց. զի այնպէս ասպա զնա հեշտընկալ և ձեռնընտել ժողովեաց առ իւր՝ իբրու որ անդատին բընաւորեալ պատկառ կալ իշխանութեան կանանուոյն։

Սակայն Անտոնիոս գուն գործէր ցանգ խրախճամիտ պահել զՓուլվիա, և երիտասարդական և զուարթարար խաղու խնդացուցանել զնա։ Որպէս և յայնժամ յերթալ անդ բազմաց ընդ առաջ կէսարու յետ յաղթութեանն նորա Յիբերիա, էլ չոքաւ և Անտոնիոս. ապա յանկարծակի շռինդն հարեալ Յիտալիա մահուն կէսարու և թշնամեացն խուժելոյ, դարձաւ և ինքն 'ի Հռոմ. և 'ի հանդերձ ծառայի ծպտեալ գնաց գիշերի 'ի տուն իւր, և տուեալ զրոյց 'ի տանն՝ եթէ նամակ ունի յԱնտոնիոսէ առ Փուլվիա, մուծաւ առ նա այնպէս քօղարկեալ. իսկ յայնժամ Փուլվիա յոյժ տագնապեալ 'ի յոգին՝ մինչև զգիրն առեալ՝ հարցանէր եթէ ողջոյն եցէ Անտոնիոսի. իսկ Անտոնիոս անդ զթուղթն առաջի մատուցանէր նմա անմռունչ. իբրև կինն 'ի լուծանել էր զկնիքն և յընթեռնուլ, նա անդէն գիրկս ածեալ նմա համբուրէր։ Արդ զայսոսիկ մեք սակաւս 'ի բազմաց օրինակի աղագաւ պատմեցաք։

Բայց դարձ Յիբերիոյ արարեալ կէսա-

բու, արք աւագք առհասարակ ընդ առաջ
չոքան նմա բազմօրեայ ուղևորութեամբ.
և յայնժամ շուք առաւել ընկալաւ 'ի նը-
մանէ Անտոնիոս։ Քանզի զնա 'ի նոյն
կառս ընդ իւր առնոյր Կեսար Ճանապարհ
արարեալ ընդ Իտալիա. իսկ զկնի իւր
զԲրուտոս և զԱքիլլոս և զՀոկտաւիանոս՝
զորդի քեռորդւոյն իւրոյ, որ և ապա ա-
նուանեալ Կեսար՝ թագ կապեաց 'ի վե-
րայ Հռոմայեցւոց հարուստ մի ժամանակ։

Յետ այսորիկ այս հինգերորդ անգամ
կարգեալ Կեսարու հիւպատոս, անդէն
իւր բարձակից ընտրէր զԱնտոնիոս. բայց
ապա հրաժարեալ 'ի բարձէն՝ կամէր փո-
խանակ իւր կարգել զԴոլոբելլաս. իբրև
նա յանդիման Սինկղիտոսին մերկացաւ
զկամն, անդուստ սաստկապէս ընդդէմ
դարձեալ Անտոնիոս՝ յիշոցս բազումս ար-
ձակէր ընդդէմ Դոլոբելլայ, և ոչինչ ևս
պակաս լսէր 'ի նմանէ. որպէս զի և Կեսար
ինքնին զամօթի հարեալ ընդ խեռութիւնն,
'ի բաց եկաց յայնժամ 'ի խորհրդոյն։ Իսկ
իբրև միւսանգամ 'ի նոյն կրթեցաւ, յայն-
ժամ Անտոնիոս բողոք բարձեալ՝ եթէ հա-
ւահմայք հակառակ կան բանին, 'ի վերջէ
ուրեմն նա տեղի տայր և թողոյր այնպէս
զԴոլոբելլաս 'ի խոր խոցեալ։

Բայց թուի Կեսարու յընչաց քերել և
զԴոլոբելլաս ինքնին՝ ոչինչ պակաս քան
զԱնտոնիոս։ Քանզի պատմեն՝ եթէ ամ-
բաստանեալ երկոցուն նոցա յանդիման
Կեսարու իբրու դաւաճանս ոմանս, ասաց

կեսար՝ չէք երկիւղ յարանց յուրից և 'ի թաւամազից, այլ 'ի դեղնելոց և 'ի նիհարաց. և ակնարկի առնէր զԲրուտոս և զԿասիոս. յորոց և 'ի դաւակցութենէն արանցն՝ նորա մահն առ դուրս հասեալ կայր։ Սակայն և Անտոնիոս ինքնին յոչ կամաց իւրոց՝ պատճառս իմն գեղեցիկ սադրեաց նոցա՝ այսպիսի։ Յաւուրսն յայնոսիկ 'ի կատարել Հռոմայեցւոց զտօն անուանեալ Գայլոցն, զոր նոքա կոչէն Լուբերկալիա. և յայնժամ Կեսար յաղթողական պատմուճանաւ 'ի հրապարակի բազմեալ 'ի բեմին՝ 'ի զնին կայր ընթացիցն. քանզի և ընթանան վազեն իսկ յայնժամ շատք 'ի պատանեացն քաջազարմից և յիշխանաց՝ օծեալք իւղով և 'ի ձեռս փոկք սպիտակք. և հարկանեն դանեն նոքա 'ի խաղոյ՝ որոց և միանգամ պատահեն։ Արդ Անտոնիոս յայնժամ մի յընթացողաց անտի թողեալ զհայրենի սովորոյթն, և բոլորեալ թագ 'ի պսակ սարդենի՝ ընթացաւ 'ի բեմ անդր և օժանդակել ևս յընթացակցացն, առեալ դնէր զայն 'ի գլուխ Կեսարու՝ իբրու 'ի թագաւորութիւն ընծայել զնա։ Իբրև Կեսար մերժեաց և 'ի կողմն եղեալ յանձն չառնոյր, անդուստ ժողովուրդք առհասարակ խրախացեալք՝ ծափս մեծամեծս հարկանէին նմա. իսկ 'ի պնդել միւսանգամ Անտոնիոսի յանձն առնուլ զպսակն, միւսանգամ և Կեսար օտարանայր. մինչդեռ այնպէս հարուստ ժամն 'ի վեգ գային նոքա, 'ի

պնդէլ Անտոնիոսի՝ նուազունք միայն 'ի բարեկամացն հարկանէին ծափս. իսկ 'ի հրաժարելն Կեսարու 'ի Թագէն, միահամուռ ժողովուրդք անդանօր ծափահար լինէին բարձր ձայնիւ։

Եւ էր արդեօք սքանչելի իրս, զի այնպէս խնամով ժողովուրդն զդուշանայր արանցն՝ որ միանգամ Թագ կապել ձեռնհաս էին. և երբէք զանուն Թագաւորի չառնոյր յանձն՝ իբրու որ ազատութեանն գլխովին քակտիչ և տապալիչ եղէ։ Ապա Կեսար յարուցեալ 'ի բեմէն այնպէս 'ի խոր խոցեալ և զայրագին, 'ի բաց զպատմուճանն առեալ 'ի պարանոցէն՝ ձայն բարձեալ ասէր, մերկ աւադիկ զպաչանոց իւր մատուցանել այնմ՝ որ միանգամ փողոտելն կամեսցի զնա։ Իսկ իբրև և 'ի մի յանդրեաց անտի նորա եդաւ պսակն, 'ի վայր քարշեալ ձգէին զայն կէսք 'ի ժողովրդապետացն, և զհետ նոցա ընթանային ժողովուրդք 'ի ձայն մեծի ցնծութեան. բայց Կեսար 'ի բաց 'ի նոցանէն հանէր զաւագութիւնն։

Արդ այս բանք առաւել ևս պնդեցին հաստատեցին զԲրուտոս և զԿասիոս 'ի խորհուրդս իւրեանց, և այրընտիր այնուհետև 'ի գործ անդր արարեալ նոցա 'ի յոյժ նեղբին բարեկամացն, խորհուրդ խորհէին վասն Անտոնիոսի։ Կիսոց հաճոյ թուեցաւ առնուլ և զայրն 'ի դաւակցութիւնն. ընդդէմ դարձաւ Տրեբոնիոս. ասէր՝ եթէ յընդառաջել Կեսարու 'ի

դարձին յԻբերիոյ՝ ինքն խորանակից եղեալ և ուղեկից Անտոնիոսի, տակաւ այնպէս և զգուշահայեաց տեսութեամբ փորձ փորձեաց զկարծեաց նորա. և թէպէտ և ինքնին Անտոնիոս խելամուտ եղև փորձոյն, այլ ոչ հաւանեցաւ բանին. սակայն և ոչ 'ի վեր ինչ եհան առ Կեսար, այլ հաւատարմագոյնս զգուշացաւ գաղտնութեան խորհրդոյն։ Իբրև զայս ասաց Տրեբոնիոս, սկսան ևս խորհել նոքա՝ արդեօք յետ դաւոյն Կեսարու՝ պա՞տ ի՞ցէ և զԱնտոնիոս ինքնին դաւաճանել. բայց արդեալ կարձեաց Բրուտոս և ասէր, եթէ գործոյն՝ յոր մխին դոքա վասն օրինաց և արդարութեան՝ սուրբ և անարատ կալ պարտէ յամենայն անիրաւութենէ։ Բայց և զանգիտեալ 'ի զօրութենէն Անտոնիոսի և 'ի բարձէ աւագութեան առնն, կարգեցին վասն նորա զկէս 'ի դաւակցաց անտի՝ զի 'ի մտանել Կեսարու 'ի Սինկլիտոսն և 'ի կատարել գործոյն, զնա արտաքոյ կալեալ ժամավաճառութեամբ խօսս 'ի մէջ առցեն ընդ նմա վասն կարևոր իրաց։

Իբրև այնպէս ամենայնն 'ի դլուխ ելանէր ըստ դաշնաւոր խորհրդոյն, և Կեսար 'ի Սինկլիտոսին տապաստ անկանէր, յայնժամ 'ի շտապ տագնապի Անտոնիոս փոխեալ 'ի ծառայի կերպարան՝ զօղեալ թաքուցանէր զանձն։ Բայց քանզի չար և ոչ ումեք այլ հասուցանէին դաւադիրքն, և խմբեալ կացին 'ի Կապետոլիոն, ինքնին Անտոնիոս յառաջ մատեաւ ամոքէր զնո-

սա իջանէլ 'ի վայր և տայր ևս նոցա 'ի պա-
տանդի զիւր որդին. և 'ի նոյն օր գարձեալ
ընթրիս ետ նա Կասսիոսի, և Լեպիդոս՝
Բրուտոսի։ Ապա 'ի մի և զծերակոյտն խրմ-
բեալ՝ կայր և խօսէր, զի 'ի մոռացօնս ան-
ցեալքն դարձցին և կուսակալութիւնք ևս
'ի ձեռս տացին Կասսիոսի և Բրուտոսի։
Իբրև ծերակոյտն հաւանեցաւ, ապա և
վճիռ ևս 'ի նեղքս բերէր՝ մի ինչ փոխել
շրջել 'ի գործոց անտի Կեսարու։ Եւ այս-
պէս Անտոնիոս էլանէր արտաքս 'ի Սինկ-
ղիտոսէն մեծապէս փառօք յոյժ. զի և
զնա միայն համարեցան՝ որ արդեալ կար-
ճեաց զմարտ զընտանին. և մեծապէս զգօ-
նութեամբ և քաղաքականութեամբ առա-
քինացաւ յիրս այնչափ դժոխրմբերելիս և
աղմկայոյզս։

Սակայն և նոյն յարգ պատուականու-
թեան նորա առ խուժանին արագ արագ
'ի խորհրդոց անտի զառածեաց զնա. իբրև
անշուշտ ակն ունէր այրն գահերէց բար-
ձին՝ եթէ զԲրուտոս տապալեսցէ։ Ուստի
և դէպ եղեալ յայնժամ ածել արտաքս
զդիակն Կեսարու, կայր Անտոնիոս և խօ-
սէր նեղբոզ 'ի հրապարակի ըստ սովորու-
թեանն. իբրև արտաքոյ ակնկալութեանն
հեշտալուր 'ի բանն և ամոք զժողովուրդն
տեսանէր, առեալ խառնեաց նա 'ի գո-
վութիւնն և զխանդաղատանաց կիրս, և
աճեցուցանէր 'ի բանին զաշխարեալն ըզ-
գործն. և 'ի վախճանին՝ առեալ պարզեաց
և ընդ օդսն թօթափէր զհանդերձսն սպա-

նելոյն արիւնաշաղախ և 'ի սուսերաց ցաւատեալ. և արենախանձս և մարդախոշոշս կարդայր յայնժամ զդաւաճանն Կեսարու. և այնչափ 'ի սրտմտութիւն բարկութեան բրդեաց զմարդիկն, որպէս զի և յուղարկաւորութիւն հանդերձեալ դիականն և այրեալ զնա 'ի մէջ հրապարակին 'ի փայտակոյտ սանդղոց և 'ի տրապիզաց, առին 'ի ձեռս խանձողս վառեալս 'ի խարուկէն՝ ընթացեալք վազէին 'ի տունս մարդախոշոշին 'ի հուր դատել և յատակել։

Խուճապեցաւ Բրուտոս և արբանեակքն և փախուցեալք գնային 'ի քաղաքէն. և յայնժամ բարեկամք Կեսարու եկեալ խմբեցան ընդ Անտոնիոսի. և կին նորա Կալպուրնիա ինքնին վատահ եղեալ՝ առեալ բերէր 'ի տանէն և աւանդէր առ Անտոնիոսի բազում ինչ 'ի գոյից, և էր նոցա կշիռն չորեքհազար քանքարաց։ Տայր աւանդէր նմա և զԳիրն Կեսարու զյիշատակարանաց սահմանագրութեանց նորա և զխորհրդոց. և յայն յիշատակարանսն ապա յաւելուածով դասակարգեալ Անտոնիոսի զոր և միանգամ կամեցաւ, կարգեաց զբազումս յիշխանութիւն և զբազումս ընտրեաց 'ի Սինկղիտիկոս. ըզկէսս դարձոյց 'ի վտարանդութենէն, և զկէսս զերծոյց 'ի կապարանէն, ասելով՝ եթէ այսպէս իսկ սահմանագրեալ էր ինքնին Կեսարու։ Իսկ սոցա ամենեցուն անուն ընդ խաղ կարդային Հռոմայեցիք Քարոնէանս 2. քանզի 'ի յանդիմանել իւ-

բեանց գնացեալ ապաւինէին 'ի յիշատակագիրս անդր մեռելոյն։ Այլ Անտոնիոս գործէր ինքնիշխան և այլ ինչ ևս, զի և էր իսկ ինքն հիւպատոս, և եղբարք ևս նորա՝ իշխանացեալք 'ի քաղաքին. զի էր Գայիոս զօրավար, և Լեւկիոս՝ ժողովրդապետ։

Յետ այսորիկ եկեալ հասանէր 'ի Հռովմ Կեսար կրսեր՝ որպէս ասացաք՝ որդի քեռորդւոյ սպանեալոյն. և էր նա ժառանգ կարգեալ ընչից նորա. և 'ի ժամանակի սպանութեանն բնակէր նա յԱպողոնիա։ Զոքաւ անդէն յողջոյն Անտոնիոսի իբրև հայրենի բարեկամի, և ապա վասն աւանդիցն որ առ նմա՝ սկսաւ զրուցել. քանզի և պարտ էր նմա տալ բաշխել առն առն Հռոմայեցւոյ դրամակշիռս եօթանասուն և հինգ՝ ըստ պատուիրելոյ կտակին Կեսարու։ Զառաջինն Անտոնիոս ունչս զնովաւ արարեալ՝ իբրու զպատանեաւ, ասէր ոչ ինչ ողջախոհ զնա, այլ և 'ի գեղեցիկ խելաց թափեալ է դա և 'ի բարեկամաց անբաժ, որ խնդրէ այնպէս զանձամբ բեռն առնուլ դժոխրմբեր զպայազատութեանն Կեսարու։ Իբրև ոչինչ խոնարհեցաւ պատանին 'ի բանսն և պնդէր պահանջէր զարծաթն, ապա և Անտոնիոս բազումս անիրաւեցաւ առ նա 'ի բանս և 'ի գործս. քանզի և խոչընդոտն եղև նմա 'ի հետամուտն լինել նորա ժողովրդապետական բարձին. և 'ի կամել պատանւոյն պատրաստել վասն իւր զաթոռակն ոսկի զհօրն՝ որպէս և վճռեալ իսկ էր, սպառնայր նմա

Անտոնիոս 'ի բանտ արկանել՝ եթէ ոչ դա-
դարէ նա յինքն զխուժանն յանգուցա-
նել։ Իսկ իբրև պատանին անձնասուր 'ի
Կիկերոնէ եղև և առ այլս ևս ատելիս Ան-
տոնիոսի, և 'ի նոցա ձեռն շնորհս եգիտ
առ Սինկղիտոսին, և ինքնին ևս զմիտս յան-
դոյց զխուժանին, և զօրականս ևս փորձս
'ի գաղթականաց անսի առ իւր խմբէր,
զահի յայնժամ հարեալ Անտոնիոսի և
զբանիւք ընդ նմա անկեալ 'ի Կապիտոլի-
նի, 'ի հաշտութիւն եկին ընդ միմեանս։

Իսկ 'ի դալ գիշերոյն տեսիլ օտար տե-
սանէր 'ի քուն Անտոնիոս. թուէր նմա
զալ իւր կայծակնահար տեսանել։ Եւ ա-
պա յետ սակաւու համբաւ հնչէր, իբրու
որ գաւաճան նմա կեսարն իցէ. թէպէտ և
կեսար 'ի չքմեղս լինէր, ոչ կարաց զԱն-
տոնիոս հաւանեցուցանել։ Եւ ապա յայս-
մանէ միւսանգամ ոխերիմ թշնամութիւն
յուզեցաւ 'ի նոսա, և երկոքին միանգա-
մայն շուրջ ընթացեալք յԻտալիա, մե-
ծապէս խոստանային թոշակս, շարժէին
դրդէին զհին աւուրց զօրականն զգաղթա-
կանացն. և այր զարամբ եւլանէր, յինքն
զգինուորեալսն 'ի ժամուն խնդրէր ար-
կանել։

Իսկ անդուստ Կիկերոնէն այր մեծազօր
քան զամենեսեան 'ի քաղաքին և առհասա-
րակ դրդիչ մարդկանն ընդդէմ Անտոնիոսի,
կայր և խօսէր. և հուսկ ապա ամոքեաց
զՍինկղիտոսն՝ հրատարակել զայրն իբրև
թշնամի, իսկ առ կեսար առնուլ արձա-

կել գաւազանակիրս և զչուք զարդուց ըզ-
զօրավարի. և հրաման ևս տալ Պանսասայ
և Հիրտիոսի խաղալ մարտիւ և զԱնտոնիոս
'ի բաց հանել յԻտալիոյ։ Եւ էին սոքա
հիւպատոսք, և մարտ պատերազմի յարդա-
րեալ ընդ Անտոնիոսի մօտ 'ի քաղաքն
Միւտինէ՝ նիզակակից ընդ նոսա և Կեսար,
Թէպէտ և գյաղթութիւնն տարան, բայց
հիւպատոսք երկոքին տապաստ անկանէին։

Յայնժամ փախստեայ Անտոնիոսի գը-
նացեալ, վիշտք բազմադէմք հասանէին 'ի
վերայ առնն, և 'ի վեր քան զամենայն՝
վիշտ սովուն. բայց նա 'ի չարիս վշտացն
անգստին բնաւորեցաւ լաւագոյն ևս յան-
ձին բերել քաղաքավարութիւն. և 'ի ձա-
խողակ բախտին՝ նմանութիւն գեղեցիկ
զլաւի առն 'ի դէմս բերէր։ Եւ արդեօք
առհասարակ վշտատեսիցն անձանց գործ
իցէ՝ զյարգ զառաքինութեան ճանաչել.
սակայն և ո՛չ ամենեցուն արդեօք 'ի բախ-
տին փոփոխութիւնն՝ իցէ զհետ կրթել
բարւոյն՝ զոր գովէն, և փախչել՝ զոր ա-
տեան. նա՛ և իցեն ևս՝ որ յայնժամ առ
տկարութեանն առաւել ևս տեղի տացեն
տնկակից բարոյիցն, և ընկճեսցին 'ի խոր-
հուրդս իւրեանց։

Ուրդ Անտոնիոս յայնժամ օթինակ
սքանչելի 'ի նեղքս ընծայեաց զօրականին.
զի Թէպէտ և այր այնպէս գրգեալ և
գգուեալ յայնչափ գրգանս և 'ի շուայ-
տութիւնս սաստիկս, ըմբէր նա յայնժամ
անտրտունջ ջուր ժահահոտ. և ուտէր նա

պտուղս վայրենիս և արմատս։ Եւ պատ-
մեն եւ՝ յանցանել նոցա զԱլբեանսն՝ ու-
տել նոցա և կեղևս, և 'ի կենդանեաց ևս որ
յառաջագոյն նոցա անճաշակք էին։ Եւ
էր նոցա խորհուրդն երթալ խմբել յայն-
կոյս ընդ զօրականին Լեպիդեայ, որ և
թուէր բարեկամ Անտոնիոսի լինել. յորմ
ձեռն և մեծապէս օգտեալ իսկ էր 'ի բա-
րեկամութեանն Կեսարու։ Բայց ժամա-
նեալ առ նա և մերձ բանակեալ, իբրև նը-
շան չետես և ոչ զմի առ 'ի նմանէ մարդա-
սիրութեանն, հաստատեաց ինքնին փորձ
այնուհետև փորձել վերջին։ Էր իսկ յայն-
ժամ Անտոնիոսին գէս հերացն անյարդ և
խռուացեալ, և յետ հարուածոյն իւրոյ ե-
թող նա աճել թաւ մօրուացն. ապա և
հանդերձ արկեալ զիւրև գորշ, մերձ եկեալ
այնպէս 'ի ղակիշ անդր Լեպիդեայ, սկսաւ
խօսել։

Իբրև բաղումք խանդաղատեցան զնո-
վաւ՝ յայն կերպարան տեսեալ զայրն, և
ամոքեցան ևս 'ի բանից նորա, զահի հա-
րաւ Լեպիդոս. հրաման տայր 'ի ժամուն
անդէն հնչեցուցանել զփողն, զի խափան
լիցի բանիցն Անտոնիոսի։ Սակայն և առա-
ւել վասն այնորիկ 'ի գութ շարժեցան զօ-
րականք, և 'ի ծածուկ ևս բանադնաց ե-
ղեալ ընդ նմա, արձակեցին առ Անտոնիոս
զԷլիոս և զԿղովդիոս ծպտեալս 'ի հան-
դերձ բոզից, աղդ առնել նմա՝ աներկեան
քաջութեամբ խաղալ յարձակել 'ի ղա-
կիշ նոցա. քանզի և բաղումք անդանօր

կազմ կան առնուլ ժողովել զնա. և թէ նորա կամք իցեն՝ յոգի ևս հարցեն նոքա զԼեպիդոս։ Բայց Անտոնիոս բացէ 'ի բաց մերժեալ՝ ձեռն 'ի Լեպիդոս մխել, 'ի վաղուեան աւուրն առեալ ըՒ իւր զզօրն՝ փորձէր զհուն գետոյն անցանել, և առաջին ինքն մխեալ 'ի ջուրն ընթանայր յայնկոյս. անդուստ տեսանէր նա զբազումս 'ի զօրականէն Լեպիդեայ, զի ձեռս նմա կարկառէին և անցս 'ի զակշին գործէին։ Մի-ջամուխ Անտոնիոսի եղեալ և ընդ իւրև զամենայնն գրաւեալ, սակայն և մեծապէս մարդասիրութեամբ և հեզաբար գնաց ընդ Լեպիդոսի. ողջոյն տայր նմա, և հայր ևս կարդաց զնա. և թէպէտ և 'ի վերայ ամենայնին անշուշտ տիրացաւ, անուն զինքնակալի և զշուք միշտ պահեաց Լեպիդոսի. որպէս զի և ինքնին Փլակկոս Մունատիոս՝ որ ոչ հեռագոյնս ինչ անդ կայր բազմաձեռն գնդաւ՝ եկեալ խմբեսցի ընդ նմա։

Իբրև այսպէս 'ի մեծութիւն ամբարձաւ Անտոնիոս, միւսանգամ հասեալ կալեալ զԱլբեանն՝ հորդան տայր յԻտալիա՝ ածեալ ընդ իւր հետևակաց գունդս եօթն և տասն և այրուձի բիւր մի։ Թող զայսոսիկ, և այլ ևս գունդս վեց առեալ կարգեաց նա 'ի պահպանութիւն Գաղատիոյ ընդ Վարիոսի ումեմն, որ էր նորա մտերիմ և բաժակակից. որում և անուն կարդային Կ-ՈՓԻ-Ղ-ԷՆ, այն է՝ բաժակ։

Ապա յայնժամ Կեսար ոչ ևս կացեալ 'ի միամտութեանն ընդ Կիկերոնէի, իբրև

էր սա համակ յաղատութիւն անդր կըր-
թեալ, 'ի բարեկամացն ձեռն հրաւէր 'ի
խաղաղութիւն կարգայր Անտոնիոսի։ Եւ
այսպէս 'ի խորհուրդ խմբեալ երեքին նո-
քա 'ի կղզեակ մի՝ առ որով գնայր գետ,
կացին անդէն աւուրս երիս. մոռադիւրա-
գոյնս ընկերշակեցին նոքա յայնժամ յայլ
ինչ իրս, և առեալ իբրև ժառանգութիւն
հայրենի՝ այնպէս յիւրեանս բաժանէին
ողջոյն զտէրութիւնն. սակայն և կադ մե-
ծապէս յուզեցաւ 'ի նոսա վասն արանցն՝
զոր դատապարտ առնել հանդերձեալ էին.
և անդ այր այր խնդրէր 'ի մահ վարել
զթշնամին և ապրեցուցանել զմերձա-
ւորսն։ Բայց 'ի վերջէ յաղթեաց թշնա-
մեացն խէթ և ատելութիւն, և յարգ
մերձաւորաց և մարդասիրութիւն բարե-
կամաց առաթուր հարաւ. և առեալ Կե-
սար շնորհէր Անտոնիոսի զԿիկերոնն. և
Անտոնիոս Կեսարու՝ զԼեւկիոս Կեսար
զքեռի իւր. իսկ Լեպիդեայ թոյլ լինէր
սպանանել զՊաւղոս զեղբայր իւր։ Բայց
կէսք ասեն՝ Լեպիդոսի զՊաւղոս շնորհել
նոցա, որք խնդրեցին զմահն նորա։ Արդ
ինձ թուի՝ եթէ երբէք տուր և առ չեկաց
ուրեք անսգորոյն քան զայս և առաւել
աննուէր։ Քանզի սպանութիւն փոխա-
նակելով սպանութեամբ, միանգամայն
զարևն հատանէին և զորոց առնուին և
զորոց տային. այլ ահագին ևս էր անիրա-
ւութիւն նոցա առ բարեկամն, զորս այնպէս
'ի մահ մատնէին՝ թէպէտ և չատէին զնոսա։

Իսկ յետ դաշնաւորութեանն ինդրէին զօրականքն, զի և ամուսնութեամբ բարեկամութիւն հաստեսցի ընդ նոսա. և յայնժամ կին ածէր կեսար զկղովդիա ըզդուստր Փուլվեայ կնոջն Անտոնիոսի: Միաբանեալ և 'ի նոյն, ոգիս ապա երեքհարիւր տարագրութեամբ դատապարտ առնէին 'ի մահ: Ուստի և Անտոնիոս հրաման տայր խողխողել զԿիկերոնն, և կորել զնորա զգլուխն և զաչն՝ որով զՃառան արձանագրեաց նա ընդդէմ նորա: Իբրև բերին առ նա, նա յոյժ ցնծացեալ հայէր ընդ նոսա, և քրքիջ ևս շատ արձակէր առ խնդին. իսկ իբրև յագեցաւ, հրաման տայր դնել զայնոսիկ 'ի հրապարակի 'ի վերայ բեմբին, իբրու ոտնհար լինէր մեռելոյն. բայց նա անձամբ զանձն նշաւակէր՝ ոտնհար իւրումն եղեալ բախտին և զիւր իշխանութիւնն խաթարեալ:

Իսկ (Լեվկիոս) կեսար քեռի նորա՝ 'ի հետամուտն լինել նմա՝ չոքաւ ապաւինեցաւ առ քոյրն. 'ի դիմել դահճացն և 'ի մխել ուժգին 'ի յարկ անդր նորա, նա առ դուրսն արձանացեալ և զբաղուկսն տարածեալ, ձայն բարձեալ գոչէր բաղում անգամ. "Ո՛չ սպանջիք զկեսարն Լեվկիոս, մինչև սպանեալ զիս ինքն՝ որ զձերդ ծնայ զինքնակալ,,: Ապրիսի ոք էր կինն, և փրկեաց ապրեցոյց յայնժամ 'ի մահուանէն զեղբայրն:

Արդ երեցունց արանցդ տէրութիւն յոյժ գժոխրմբերելի եկաց Հռոմայեցւոցն.

բայց Անտոնիոս մեծապէս բամբասեցաւ, իբրու որ հինաւուրց էր քան զկեսար, և յաղթահարուստ քան զԼեպիդոս. և զի՝ այն ինչ թեթևացեալ առ 'ի գործոյն, նա միանգամ դարձաւ անձնատուր 'ի չափ տնկակից հեշտախտութեն։ Առ այս՝ և ոչ դուշնաքեայ դարձեալ ատեցին զնա վասն՝ յորում բնակէր. զի էր այն տուն Պոմպէի մեծի՝ որ պանչելին էր 'ի նոսա միանգամայն 'ի ժուժկալութենէն և 'ի կարգաւոր և 'ի ժողովրդասէր քաղաքավարութենէն և յերից յաղթանակացն նորա։ Քանզի և հանդարտէին իսկ ոչ Հռոմայեցիք տեսեալ զայն տուն բազում անգամ՝ զի փակեալ կայր առաջի զօրավարաց և առաջնորդաց և դեսպանաց՝ վարեալք թշնամանօք 'ի դրաց անտի. բայց լի էր տունն արամբք միմոսօք և ածպարարօք և գինէձան հացկատակօք. ոյց աղագաւ նա բազում ինչ վատնէր 'ի մթերից ընչից՝ զոր ժողովեաց կեղեալով և կեղեքելով։ Քանզի և ոչ զգոյս միայն վաճառէին նոքա զսպանելոցն, բարրանս 'ի վերայ ածեալ մերձաւորացն նոցա և կանանց նոցա, և հարկս ևս հանէին յամենայնէն, այլ և լուր առեալ՝ եթէ աւանդք եղեալ կան առ Վեստեան կուսանսն յեկաց ոմանց և 'ի քաղաքայնոց, գնացեալ անդր կապտէին։ Բայց քանզի Անտոնիոս ոչինչ ասէր շատ, աղաչէաց զկեսար բաժանել ընդ նմա ըզկեանսն։ Բաժանեցին նոքա յիւրեանս և զզօրն. և խաղացին գնացին միանգամայն

նոքա 'ի Մակեդոնիա մարտ գնել կռուել ընդ Բրուտոսի և ընդ Կասիոսի. և 'ի ձեռս տային Լեպիդեայ զառաջնորդութիւն հռովմայ:

Իբրև հասին նոքա անդր և 'ի մարտ պատրաստեցան, բանակ հարկանէին մօտ առ թշնամին՝ Անտոնիոս ընդդէմ Կասիոսի, և Կեսար ընդդէմ Բրուտոսի. բայց Կեսար ոչինչ այնպէս նահատակեցաւ. իսկ Անտոնիոս համակ յաղթական՝ 'ի ձեռս նորա մեծապէս յաջողեցան իրքն: Քանզի և յառաջնում անդ մարտի իսպառ վանեցաւ Կեսար. զի և 'ի ձեռաց զբանակն հանեալ՝ ինքն գաղտագնաց փախստեայ՝ վայրիկ մի ևս 'ի ձեռս անկանէր հետամտիցն. սակայն որպէս և գրեաց իսկ ինքն յիւր յիշատակարանն, կանխեաց տեղի ետ 'ի մարտէն 'ի պատճառս երազոյ ուրուք 'ի բարեկամացն: Իսկ անդուստ Անտոնիոս 'ի պարտութիւն մատնէր զԿասիոս. թէպէտ և կէսք ասեն՝ ոչ գտանել նմա յայնժամ 'ի մարտին. այլ յետոյ ուրեմն ժամանեաց 'ի խուճապ փախստեան թշնամեացն: Բայց Կասիոս ոչինչ գիտացեալ 'ի ժամուն վասն յաղթութեանն Բրուտոսի, անձին մահ առթէր 'ի ձեռն Պինդարոսի հաւատարիմ ազատագրելոյն, աղաչեալ զնա և հրամայեալ ևս:

Իսկ յետ աւուրց սակաւուց միւսանգամ մարտ մղեալ, 'ի պարտութիւն մատնեցաւ Բրուտոս և անձին առնէր. և տանէր Անտոնիոս զփառսն բազմագոյն մա-

սամբ, քանզի խօթ էր յայնժամ Կեսար։ Անդանօր 'ի վերայ դիականն Բրուտոսի զտեղի առեալ ինքնին Անտոնիոս, թէպէտ և դարձեաց ևս զնա վասն մահուն Գայիոսի եղբօրն իւրոյ՝ զոր սպան Բրուտոս 'ի վրէժ արեանն Կիկերոնի, սակայն և քան զԲրուտոս՝ առաւել զՀորտենսիոս ինասակար ասելով սպանութեանն, հրաման տայր անդէն 'ի վերայ շիրմին Գայոսի փողոտել զնա. իսկ 'ի վերայ Բրուտոսին առեալ արկանէր զմեծագին զիւր պատմուճանն ծիրանի, և պատուիրէր միում յաղատագրելոցն, հոգ տանել յուղարկաւորութեանն։ Իսկ իբրև իրազեկ եղև՝ զի պաշտօնեայն չայրեաց ընդ դիականն և զծիրանին, և խորեաց ևս բազում ինչ 'ի ծախուց յուղարկաւորութեանն, հրաման տայր սպանանել զնա։

Իսկ Կեսար դարձ արարեալ 'ի Հռոմ, կարծէր ոչինչ յերկարել 'ի կեանս 'ի խօթութենէ անտի։ Բայց Անտոնիոս չոքաւ ժողովել արծաթ ընդ ամենայն գաւառս արևելեան մասինն, և խաղայր անցանէր Յելլադա զօրու ծանու։ Քանզի և խոստումն կռեալ հինգ հազար դրամակրչռոյ առ մէն մի 'ի զօրականէն, առաւելագունից պէտք էին հարկաց և բաժից։ Սակայն և զՀելլենացիսն զառաջինն ոչինչ չարչարեաց. այլ էր նորա սփոփութիւն գնալ բազմել 'ի լուր պայքարացն բանասիրաց և 'ի զնին կալ մրցանացն և հանդիսատես լինել նուիրելոցն. և հեզագոյնս

առաջնորդէր 'ի դատաստանի, և խնդայր անուանել բարեկամ Հելլենացւոց, և առաւել ևս՝ Աթենացւոց, զորոց և զքաղաքն պարգևեաց մեծապէս ձրիւք: Ապա և Մեգարացւոցն կամելով ելանել զԱթենացւովքն, և ինչ մի գեղեցիկ ևս տալ տեսանել նմա, աղաչէին զնա կալ 'ի զնին ատենի խորհրդոյն նոցա: Նա 'ի վեր ելեալ և դիտեալ զննեալ, իբրև հարցաւ՝ ասել ինչ, ետ պատասխանի, "փոքր է և փուտ,,: Ա՛ռ այս՝ չափեաց նա և զոտաճարն Պիւթիոսի, իբրու կատարել պսակել զգործն. և խոստանայր զայն ծերակուտին:

Իսկ իբրև եթող նա յԵլլադա զԷվկիոս Կենսովրինոս, և ինքն անցանէր յԱսիա և 'ի վայելն վայելչանայր ընչաւէտութեն. և արքայք ևս յաճախեցին առ դուրս նորա, և տիկնայք ևս արքայից զմիմեամբք ելանէին յինքեանս յանկուցանել զնա պատարագք և գեղով անձանց. մինչդեռ կեսար 'ի Հռոմ յաղմուկս տաղտապէր շփոթից և 'ի մարտս, սա 'ի պարապութեան մեծի և յանդորրու դարձեալ միւսանգամ զառաջանէր՝ ձգեալ 'ի բնական կրկին՝ 'ի տնկակից իւր չափ կենաց: Ա՛ռ այս՝ և միջամուխ 'ի ներքս սպրդեալք յարքունիս նորա և տիրացեալք Անաքսենորք քնարահարք և Քսութոսք պարերգուք, և Մետրոդորոս ոմն կաքաւիչ, և այլ ևս ասիացի հրահանգացս այսոցիկ պար, գերազանցեալ 'ի խեղկատակ շաղակրատանն քան զմահահոտ օրահասան զիտալիոյ 3, ապա

այնուհետև դժոխքմբերելի էր ամենայնն, և առհասարակ ամենեքին յայսոսիկ աղուացեալ էին։ Քանզի և Ասիա ողջոյն էր իսկ արդարև իբրու զքաղաքն, զոր Սոփոկղէս ասաց քերթողն, "Լի խնկենեօք և նուագօք, միանգամայն և ողբովք,,։

Իսկ 'ի մտանել Անտոնիոսի յԵփեսոս, անդանօր յառաջոյ գնայր կանանին հանդերձաւորեալ իբրև արդարև Սանդարամետականս, և որեար և մանկտի՝ իբրև Շահապս վայրաց և իբրև Պանս ոմանս։ Էր և քաղաքն լցեալ 'ի բաղեղունս և 'ի նիզակաբունս սաղարթապատս, և սաղմոսարանօք և արնդօք և տաւղօք. և կարդային զնա՝ Դիոնեսիոս իրախաբեր և ամոք և համբոյր։ Եւ արդեօք էր նա կիսոց այնպիսի. սակայն և բազմաց աննուէր և անագորոյն։ Քանզի կապտէր 'ի տոհմկաց զգոյան, և տայր բաշխէր արիկայիցն իւրոց և հացկատակաց։ Առ այս՝ և կիսոց խնդրեալ 'ի նը-մանէ զգոյս զբազմաց կենդանեաց՝ իբրև զմեռելոց ոմանց, յաջողէին 'ի նոյն. և յայնժամ պարգևեաց ևս նա զտուն ուրումն Մագնեսացւոյ՝ խահարարի ումեմն, որ յոյժ համահամ՝ որպէս պատմեն՝ կազմեաց նմա ընթրիս։

Իսկ իբրև և հարկս երկրորդ 'ի վերայ եդ նա քաղաքաց քաղաքաց, յայնժամ Հիւբրէաս յառաջ մատեաւ, ջատագով մտանէր Ասիոյ, և խօսէր. և ինչ մի ևս ժտեցաւ նա ասել հեշտաբանս և ոչինչ անախորժ քմացն Անտոնիոսի՝ այսպէս.

«Եթէ երկիցս անգամ զօրեսս դու՝ ասէ՝ հարկս հանել 'ի միում տարւոջ, զօրեացիս դու ապա տալ մեզ և երկուս ունել ամբրայնոյ եղանակս, երկուս՝ և աշնայնոյ»։ Բայց ապա իբրև ուժգինս և յանդգնագոյնս ևս բարբառեցաւ նա վասն հարկս հարկանելոյ Ակիոյ քան բիւր տաղանդաց, և ասէր առ Անտոնիոս. «Եթէ չառեր չժողովեցեր դու զայդոսիկ, խնդիր արա՛ 'ի հարկահանացդ. ապ՛ եթէ առեր և չեն այժմ 'ի միջի, վճարեալ է ուրեմն վասն մեր»։ 'Ի բանից ասսի Հիւբրէասայ 'ի խոր խոցեցաւ Անտոնիոս. և անգիտանայր նա բազում ինչ յեղելոցն ոչ խօթամտութեանն ինչ աղագաւ, քան թէ պարզամտութեանն. զի և հաւատս համբուն ընծայէր այրն՝ որոց շուրջն կային։ Քանզի և էր իսկ Անտոնիոս 'ի բնէն պարզամիտ և հեղգամիտ. իսկ իբրև խելամուտ լինէր խակութեանն իւրոյ՝ զիղջ և ապաշաւ լինէր. և խոստովան ևս լինէր յանգիման զրկելոցն անձանց, և վարձս ևս մեծամեծս տայր, դարձեալ և պատուհասս սաստիկս. սակայն և թուէր իմն այրն՝ քան 'ի պատուհասելն՝ ծայրայեղ 'ի բարեգործելն։

Բայց և երգիծանք նորա զկծեցուցիչք և կատակք նորա մերձ ունէին և սփոփանս. քանզի և մարթէր փոխարէն հեգնաբանել և կատակել ընդ նմա. և ոչինչ պակաս 'ի խաղ առնել՝ խնդայր նա և 'ի խաղ լինելն. և այն եղև պատճառք վատթարելոյ բազում գործոց նորա։ Քանզի կարծեալ

նորա՝ եթէ համարձակախօսքն ընդ նմա 'ի կատակել իւրեանց՝ ոչինչ ապա մարդահաճեսցեն զնա 'ի լրջանալ իւրեանց, հեշտեաւ թակարթէր 'ի գովութիւնս նոցա. զայն ինչ զմտաւ չածէր, եթէ կէսք զհամարձակախօսութիւնն զայն առեալ խառնէին ընդ մարդահաճութեանն իբրու համեմունս բարկս՝ կարձել 'ի նմանէ զյափրանան զվայրավատին շաղակրատանացն իւրեանց 'ի դիներբուսն, և խաբել զնա՝ եթէ յորժամ յիրս կարևորս տեղի տան նմա՝ այն ոչ եթէ 'ի չնթել ինչ է, այլ զի յաղթին 'ի քաջախորհուրդ մտաց նորա։ Այսպիսի ոք անդստին 'ի բնութենէն գոլով Անտոնիոս, ապա և ախտ վերջին հարեալ իսպառ վարակեաց զայրն՝ տուփանքն Կղէոպատրայ. այն որ յուզեալ ամբոխեալ զկիրս բազումս ծածուկս զնորա և զհանդարտեալս, եթէ և ինչ մի ևս էր 'ի նմա լաւ և ողջախոհ, իսպառ սպուռ զնա եղծեաց ապականեաց։ Եւ ըմբռնեցաւ այրն 'ի տուփանաց անտի օրինակ զայս։

Իբրև հանդերձեցաւ վառեցաւ Անտոնիոս 'ի մարտ ընդդէմ Պարթևաց, յղեաց պատուէր առ Կղէոպատրէ գալ նմա ընդառաջ 'ի Կիլիկիա և անդ պատասխանի առնել վասն անձին զամբաստանութեանցն, իբրու որ բազում ինչ առաքեալ իցէ առ Կասիոս և Թիկունս ևս տուեալ իցէ նմա 'ի մարտ պատերազմի։ Իսկ որ յայնժամ հրեշտակութեամբ առաքեցաւ առ նա Դեղղիոս, իբրև եկեալ ետես զԿղէոպա-

տրէ և զննեաց և ծանեաւ զքաջութիւն և զուշիմութիւն բանիցն նորա, անդէն խե-
լամուտ լինէր՝ եթէ կին այնպիսի ոչ եթէ վիշտս ինչ միայն ջոեսցէ յԱնտոնիոսէ,
այլ և մեծապէս յոյժ Ճոխասցի առ նմա. ուստի և սկսաւ սպասս Եգիպտուհւոյն հար-
կանել. և յորդորէր ևս զնա՝ բանս իմն պատկանելով նմա 'ի Հոմերոսէնն տողից,
յառնել գնալ 'ի Կիլիկիա քաջահանդերձ և զարդարուն, և յԱնտոնիոսէ մի ինչ զան-
գիտել. այր՝ որ զուարթամիտ յոյժ է և մարդասէր առաւել քան զամենայն զո-
րավարս։

Խոնարհեալ Կղէոպատրեայ 'ի բանսն Դեղղիոսի, և հաստատեալ ևս 'ի միտս վասն
գեղոյ անձինն՝ 'ի գաշնաւորութենէ անտի յառաջագոյն ընդ Կեսարու և ընդ Գնէյո-
սի որդւոյն Պոմպէի, ակն ունէր հեշտին թակարթել ըմբռնել զԱնտոնիոս. քանզի
նոքա ծանեան զնա 'ի մանկութեան իւ-
րում և յանփորձութեանն. իսկ յայն-
ժամ գնայ նա առ Անտոնիոս 'ի բուն իսկ
'ի տիս գեղոյ կանանց և քաջութեան ու-
շիմութեան նոցա։ Ոյր աղագաւ հանդեր-
ձեցաւ կազմեցաւ և պատրաստեաց նա
պատարագս բազում և ինչս և զարդս, առ-
նուլ տանել 'ի բազմահարուստ անտի
գոյիցն և 'ի բարգաւաճ արքայութենէն.
և անկանէր նա յուղի մեծապէս վստահ
յանձն և 'ի հրապոյրսն և 'ի խեղդս շըր-
թանց իւրոց։ Ապա և հրաւիրանաց նամա-
կանի բազում ընկալեալ և յԱնտոնիոսէ

և 'ի բարեկամացն, այնպէս յընչաց քեր-
եաց և ծաղր արար զայրն, զի և ճանա-
պարհ նաւագնաց առնել փութացաւ ընդ
գետն Կիւդնոս 'ի նաւակ մի, որոյ խելքն
նորա յոսկւոյ, և առագաստքն պարզեալք
'ի ծիրանեաց, իսկ թիակքն յարծաթոյ՝
այնպէս վարեալք շարժեալք ներդաշնա-
կութեամբ 'ի ձայն տաւղի՝ միաբանութիւն
սրնգաց և քնարաց։ Իսկ ինքն 'ի նաւակին
անկեալ ընդ ոսկեճամուկ խորանաւն, պա-
ճուճեալ ճշդրտագոյնս նկարու իբրև զԱ-
փրոդիտէ. և նորա յաջմէ և յահեկէ մանկը-
տի՝ նկարելոց հանգուցատիպք Աստղկանց՝
հովահարէին զնա։ Որպէս և նաժիշտք նո-
րա գեղով գեղաւորք հանդերձ արկեալ
զՆերէիդեայ և զՀնորհաց՝ կէսք կային մօտ
առ քեղնն, և կէսք դարձեալ՝ առ ապա-
ւանդական։ Եւ գետափունք ողջոյն լի էին
'ի բուրմունս անուշից աղգի աղգի խնկե-
նեաց, և աստի անտի խուռն ընթանայր
մարդիկն հետևեալք ընդ երկայնութիւն
գետոյն. էին էին և որ անդր իջանէին 'ի
քաղաքէն 'ի տեսիլ հրաշիցն. և այնպէս
ապա արտաքս 'ի քաղաքէն թափեալ ամ-
բոխ առհասարակ հրապարակին, անդանօր
միայնակ մնայր Անտոնիոս բազմեալ 'ի բե-
մին. և այս համբաւ ընթանայր գնայր առ-
հասարակ, եթէ ինքնին Ափրոդիտէ հրա-
վիրանաւ յայց եկեալ է Դիոնիսեայ 'ի բա-
րեգործել Ասիոյ։

Ապա Անտոնիոս առաքէր հրաւիրէր
զնա յընթրիս. բայց Կղէոպատրէ խնդրէր

մանաւանդ զդալուստ նորա : Խոնարհեալ Անտոնիոսի հեշտաբար մարդասիրութիւն՝ ապագ չոքաւ առ նա . և գտանէր նա անդ հանդերձանս պատրաստութեան 'ի վերս քան զբան . իսկ որ առաւել յապուշ կրթեաց զնա, բազմաջահ լուսաւորութիւն լապտերացն : Քանզի ասեն՝ այնչափ զթիւ նոցա 'ի վերուստ 'ի վայր և 'ի ներքուստ 'ի վեր բորբոքեալ միանգամայն ընդ ամենայն կողմանսն , և այնպէս գեղեցիկս կարգեալ յօրինեալ 'ի դասաւորութեան տարազ և 'ի դիրս , ուր 'ի ձև բոլորշի , և ուր 'ի քառակուսի , որպէս զի և տեսարան 'ի յոյժ գեղաւորաց անտի 'ի դէմս բերէր և 'ի հոյակապիցն՝ զոր 'ի պատմութիւնս ընթեռնումք :

Բայց առ վաղիւն հրաւիրեալ զնա և Անտոնիոսի , թէպէտ և յոյժ ևս թեւակոխեաց գերազանցել զնովաւ և հոյակապ ևս գործել և Ձ՝գրտագոյնս , պակաս գտաւ յերկոսին միանգամայն և պարտեցաւ . և ինքն առաջին հեգնէր և յընչաց քերէր զանկածութիւն անփառունակ զիւրոց կոչնոցն : Յայնժամ ապա ուշ եդեալ Կղէոպատրեայ 'ի հեգնութիւնս Անտոնիոսի՝ բազում ինչ զինուորական և հետևակ , սկսաւ և ինքն զնոյն օրինակ զրուցաց վարել առ նա ամենայն համարձակութեամբ: Քանզի որպէս ասեն՝ գեղ նորա առանձինն չէր ինչ անզուգական , և ոչ յապուշ զտեսանելիսն կրթէր . սակայն որ ընդ նմա կենակից քաղաքավարութիւն զոգիսն ան-

զերծանելի թակարթէր. և նորա կերպա-
րան խաւն ընդ մեղմեխանս բերանոյն և
ընդ պչրանսն բարոյիցն 'ի ներքս բերեալ
առ կենակից մարդիկն, իբրև խայթիւ հար-
կանէր: Նաև զբարբառ ձայնին բերկրալի
էր լսել 'ի խօսել նորա. այնպէս բաւական
էր նա առնուլ շրջել արագ արագ զլեզուն՝
իբրու արդարև նուագարանս իմն բազմա-
զիս՝ յիւրաքանչիւր բարբառ զոր և կամէր.
զի և առ նուազուանս յոյժ 'ի բարբարոս
ազգաց թարգմանի պէտք եղեն նմա. այլ
բազմաց 'ի նոցանէն ինքնին գլխովին պա-
տասխանի առնէր, որպէս՝ Եթովպացւոցն
և Տրոգլոդացւոց և Եբրայեցւոց և Արա-
բացւոց և Ասորւոց և Մարաց և Պարթևաց:
Եւ պատմեն՝ և այլ ևս շատ լեզուաց նմա
տեղեակ և հմուտ լինել. ուր զի որ յա-
ռաջ քան զնա թագաւորք ոչ հանդար-
տէին ուսանել անգամ և զԵգիպտացւոցն
բարբառ. նա՛ և կէսք 'ի նոցանէն անհոգա-
ցեալ էին և զՄակեդոնացւոցն:

Արդ յայնժամ այնպէս 'ի հաղբս իւր
շաղեաց նա զԱնտոնիոս, որպէս զի և յոր-
ժամ 'ի Հռոմ կին նորա Փուլվիա 'ի վէգ
գայր ընդ Կեսարու վասն իրաց առնն,
դարձեալ և յորժամ կազմ վառեալ զօ-
րուն Պարթևաց 'ի Միջագետս, որում և
ինքնակալ պարթևական զԼաբինոս կարդա-
ցին զօրավարք արքային, և պատրաստեալ
էին դիմել յԱսորիս, նա յայնժամ 'ի կամն
խոնարհեալ Կղեոպատրեայ, ջոքաւ յԱ-
ղեքսանդրիա. և անդանօր անձնատուր 'ի

սփոփութիւնս և 'ի խաղս անտիականս պա-
ռապորդ կենաց, վասնզի ծախէր 'ի գըր-
գանս զժամանակն, ժամանակ՝ զոր "Ծախիք
մեծագնի յոյժ", կոչէաց Անտիփոնն։
Քանզի և ընկերշակութիւն հաստատեալ կայր
'ի նոսա՝ որում անուն կարդային Ամիդեոս
Վիրն, այն է՝ Անզուգական կեանք. և զոր-
հանապազ այր զընկեր հրաւիրէր 'ի կո-
չումս. և էր անչափութիւն ծախուցն՝ ան-
ըմբռնելի։

Առ այս՝ Փիղովտաս բժիշկ Ամիփասացի
պատմէր զայս ինչ յունկն Լամպրիասայ
հաւուն իմոյ, եթէ բնակեալ ինքն յայն-
ժամ յԱղեքսանդրիա վարժեալ յարուեստ-
ին իւրում, և ընտանացեալ ընդ ումեմն
յարքունի խախամոքից անտի, և իբրև պա-
տանի էր՝ հաւանեցաւ երբեմն երթալ տե-
սանել զմեծահաց հանդերձանս զընթ-
րեացն։ Իբրև մուծաւ 'ի խահանոցն Փիղով-
տաս, և եռեռս անպանոր՝ թող զբազմա-
մթերս զայլոց ինչ իրաց՝ դարձեալ և վա-
րազս ուրթ թուով 'ի խորով ա՛կեալ, կայր
և զարմանայր ընդ թիւ բազմութեան հրա-
ւիրելոցն. իսկ անդուստ խահարարն սկսաւ
ծիծաղել և ասէ. հրաւիրեալքդ չեն ինչ
բաղումք, այլ իբրև երկոտասանք են թը-
ւով. սակայն պարտ է միոյ միոյ 'ի համա-
դամիցդ անտխեղծ ունել զհանդերձանն՝
որ ժամ 'ի ժամէ խաթարեսցին արդեօք.
քանզի և դէպ տայ Անտոնիոսի հրաման
տալ ընթրեացն թերևս արագ արագ, թե-
րևս և վայրիկ մի զկնի. և դէպ ևս լինի յեր-

կարագոյն նուագ ձգել զժամանակն յըմ-
պել բաժակին կամ զբանիւք ինչ անկա-
նել, ուստի և կազմ և պատրաստ ունել
պարտ է, ասէր, ոչ ընթրիս մի՝ այլ բա-
զումս, իբրև դժուարին իցէ հաւաստի 'ի
վերայ կալ ժամուն և ժամանակին։

Զայսոսիկ պատմէր Փիղոմոտաս, և ասէր
դարձեալ՝ եթէ յետ ժամանակաց էր և
ինքն ընդ թիւ անցեալ բազմականացն ընդ
երիցագոյն որդւոյն Անտոնիոսի՝ ծնեալ նը-
սա 'ի Փուլվեայ. և մեծահաց ընթրէր նա
ցանդ առ նմա ընդ այլոց բարեկամացն՝
երբ և միանգամ սեղանակից հօրն չլինէր
որդին. և թէ՝ էր երբեմն զի և զբժիշկ զոմն
այլ՝ այր անհամբոյր՝ որ տաղտկալի ևս էր
բազմականին 'ի ժամ ընթրեացն, պա-
պանձեցոյց ինքն զնա այսպիսեաւ խնաս-
տակութեամբ. "Որ իւիք՝ ասէ՝ տասպա-
յեալ իցէ, ջուր ցուրտ պարտ է տալ. իսկ
արդ՝ որ տաղնապի ջերմամբ՝ տապացեալ
է, ապա ուրեմն ամենայն ջերմացելոցն՝
ջուր ցուրտ պարտ է տալ,,։ Իբրև վարա-
նեցաւ այրն 'ի բանն և պապանձեցաւ, ան-
դուստ յանձն իւր զուարճացեալ որդւոյն
Անտոնիոսի և 'ի քրքիջ հատեալ, դար-
ձաւ առ Փիղոմոտաս, և ասէր, "Զայս ա-
մենայն ոմ Փիղոմոտ, քեզ տամ 'ի պարգև,,. և մատնցոյց նմա զսեղանն առնէր՝
լի 'ի բազում և 'ի մեծամեծ կահուց բա-
ժակաց։ Փիղոմոտաս գոհութեամբ ըն-
կալեալ զոգւոյն բարեշաւութիւնն, սա-
կայն և ամենեին կարծէր իսկ ոչ՝ եթէ մա-

նուկ մի յայն չափ հասակի՝ իշխան լեցի 'ի վերայ այնչափ պարգևաց։ Բայց ապա յետ սակաւուց մի ոմն 'ի պաշտօնէից անտի առեալ կուտեալ յանօթ մի զկահան բաժակաց և բերեալ առ Փիղովտաս, ասէր՝ զի և մատնէհար 'ի վերայ դիցէ. իբրև նա յայնժամ ընդդէմ դարձաւ և ոչ ժողեցաւ առնուլ զպարգևան զայն, ասէ պաշտօնեայն. "Եւ զի՞նչ այլ դանդաղես ով հիքացեալ դու։ Ո՞չ գիտես եթէ պարգևատու կահուցդ է ինքնին որդին Անտոնիոսի. որ և ոսկի դոյնչափ կարօղ է պարգևել քեզ։ Այլ դու ինձ հաւանեալ փոխանակեա՛ մեզ զայդոսիկ ընդ արծաթոյ. զի թերևս հայր դորա խնդիր արասցէ միոյ իրիք 'ի ձեռագործաց այսի՝ 'ի վաղնջուց և 'ի հրաշակերտաց արուեստին,,։ Արդ զայսոսիկ բանս՝ ասէր մեզ հաւն իմ՝ ասէպ պատմել Փիղովտասայ։

Բայց Կլէոպատրէ յայնժամ զարուեստ մարգելուզուեթեանն ոչ 'ի քառեակ բաժանեաց դէմն՝ որպէս Պղատոն բաժանէ, այլ 'ի դիմակ դիմակ և գունակ գունակ. և զօրհանապազ եթէ 'ի լրջութեանն և եթէ 'ի սփոփութեան՝ նոր ախորժ և հրապոյրս 'ի նեղքս խառնեալ Անտոնիոսի, ոչ թողոյր զնա ոչ զցայգ և ոչ զցերեկ։ Քանզի և 'ի միասին ընդ նմա խաղայր նարտս, և 'ի միասին ըմպէր և 'ի միասին յորս եղանէր, և 'ի զինախաղութեան ևս նորա ինքնին կայր 'ի զնին։ Առ այս՝ և 'ի գիշերագնաց շրջել Անտոնիոսի և զտեղի առնուլ

կալ առաջի դրաց և պատուհանաց ռամկին և կատակաբանել զնոսա, ինքնին և Կղէոպատրէ աստանդէր ընդ նմա՝ հանդերձ արկեալ զաղախնոյ, քանզի և Անտոնիոս 'ի նոյն կարգ կերպարանէր զինքն. և դառնայր ապա այսրէն առեալ յանձն հանապազ ձաղանս, բազում անգամ և գան և խարազան։

Ուստի և բազումք խեթիւ՝ հայէին ընդ նա. Թէպէտ և ինդային ևս Աղեքսանդրացիք ընդ կատակսն, և ինքեանք ևս ընդ խաղ վարէին առ նա վայելուչս և գեղեցիկս. և զուարճացեալք ասէին՝ եթէ զՈղբերգակացն դա վարէ դիմակ առ Հռոմայեցիս, իսկ զԿատակերգացն՝ առ Աղեքսանդրացիս։ Իսկ 'ի բազմադէմ կատակացն նորա պատմել աստանօր՝ յոյժ վայրաբանել ինչ արդեօք։ Էր երբեմն Անտոնիոսի ձուկն որսալ առաջի Կղէոպատրեայ. և ցաջողեալ յորսն՝ որսնէր և զայրանայր. ապա 'ի ծածուկ պատուէր տայր ձկնորսացն դաղտաբար 'ի լուղ խորասոյզ կարթել 'ի կարթ նորա 'ի նախորսակ ձկանց անտի. իբրև այնպէս ձգեաց նա զկարթն երկիցս և երիցս, ոչ ծածկեցաւ դաւն յԵգիպտուհւոյն. սակայն կեղծաւորեալ յայնժամ զարմանս՝ պատմէր ապա զբանն առաջի բարեկամացն և յորդորէր ևս առ վաղիւն 'ի զնին կալ որսոյն։ Ուստի և բազումք մտեալ 'ի նաւակս, և յայնժամ Անտոնիոս 'ի խորս զգործին խաղացուցեալ, հրաման տայր Կղէոպատրէ միւսմ ուսեք

յիւրոց անտի՝ զի կանուխ քան զայլսն խո-
րասոյզ 'ի լիւղ կարթեսցէ 'ի կարթն Ան-
տոնիոսի ազատոյ տարեխ մի զՊոնտոսին։
Իբրև այնպէս յորսն խնդացեալ՝ 'ի վեր
զկարթն ձգեաց Անտոնիոս, և քրքիջք
յայնժամ արձակեցան մեծամեծք, ասէ
Կղէոպատրէ. "Թող անդր մեզ ոչ ինք-
նակալ դու զեղէգնդ, մեզ՝ որ Փարոսա-
ցւոց և Կանովպացւոց 'ի վերայ թագ կա-
պեալ եմք. իսկ քո, քաղաքք են՝ որսդ՝ և
արքայք և աշխարհք"։

Արդ՝ մինչդեռ յանհամութիւնս յայ-
տնիկ թարթափէր Անտոնիոս և իբրև մա-
նուկ զբօսնոյր, անդուստ գոյժք յան-
կարծ կրկին եկեալ հասանէին առ նա. մի
'ի Հռոմայ՝ եթէ Լեւկիոս եղբայր նորա և
Փուլվիա կին նորա գժտեալք և կռուեալք
ընդ միմեանս, և ապա 'ի կռիւ ընդ Կեսա-
րու եղեալք և սեռազերծք յամենայնէն
եղեալք՝ այնպէս փախստականք գնան
Յիտալիոյ։ Եւ միւս ևս դարձեալ՝ ոչինչ
պակաս գժնդակ քան զառաջինն, եթէ
Լաբինոս 'ի միասին ընդ Պարթևաց հասեալ
կալաւ զԱսիա Յեփրատայ և 'ի յԱսորւոց
մինչև 'ի Լիւդիա և 'ի Յոնիա։ Ապա յայն-
ժամ իբրև 'ի գինեբբուաց սթափեալ և
ըմբռնեալ Անտոնիոս, խաղայր գնայր նա
ընդդէմ Պարթևաց, և յառաջադէմ վա-
րեցաւ մինչև 'ի Փիւնիկէ։ Բայց գիր հա-
սեալ առ նա 'ի Փուլվիայ՝ կոծոյ և գան-
գատանաց, ապա երկերիւր նաւուք յու-
ղի անկանէր Յիտալիա կոյս։ Իսկ 'ի յուղ-

ւոջն առեալ ժողովեալ նա զբարեկամսն
փախստեայս Յիտալիոյ, իրազեկ առ 'ի
նոցանէն լինէր գրգռութեան մարտին առ 'ի
Փուլվեայ. քանզի և էր իսկ նա կին յանձ-
նապաստան և յանդուգն, և ակն ունէր 'ի
բաց 'ի Կղէոպատրեայ քէցել զԱնտոնիոս՝
աղմուկ յուզելով Յիտալիա. Արդ դէպ
տայր յայնժամ՝ 'ի նաւարկել Փուլվեայ
գալ տեսանել զայրն՝ հիւանդանալ նմա 'ի
Սիկիւոնի և մեռանել. ուստի և մեծա-
պէս յայնժամ յաջողեցաւ հաշտութիւն
ընդ Կեսարու։

Քանզի 'ի հասանել Անտոնիոսի Յիտա-
լիա, իբրև ոչինչ գանգատ զնմանէն կալաւ
Կեսար, և նա դարձեալ զամենայն զնչեան
զՓուլվեաւ արկանէր, յայնժամ ապա
բարեկամքն 'ի մէջ անցեալ ոչ ևս թոյլ
տային միջամուխ 'ի քնին զկապն առնուլ,
այլ 'ի հաշտ և 'ի համբոյր զերկոսին ա-
ծեալ, բաժանէին 'ի նոսա զտէրութիւնն.
և սահման զՅոնիացւոց ծոցն կարգեալ,
տային Անտոնիոսի զարևելից գաւառսն, և
Կեսարու՝ զարևմուտեայսն։ Իսկ Լեպիդեայ
ընդ ձեռամբ կարգէին զԼիբիա. և հաստա-
տեցին ևս՝ զի թէ ինքնին հիւպատոսանալ
չկամին՝ նոցուն բարեկամք այր ըստ առնէ
կարգեսցին 'ի հիւպատոս։

Բայց իրաւախոհութեանցդ այդոցիկ
գեղեցիկ կարծեցելոց՝ պէտք էին և աներ-
կևան հաւատոց. զոր և բախտն ինքնին 'ի
նեղբս մատոյց նոցա։ Քանզի էր իսկ Կե-
սարու քոյր Հոկտաւիա երիցագոյն քան

զնա, այլ ոչ համամայր, զի էր նա ծնեալ յԱնքարեայ, իսկ կեսարն 'ի Տատիայ. և սի-ր էր զքոյրն յոյժ կեսարն, զի էր իսկ նա՝ (որպէս ասեն՝) ստեղծուած սքանչելի 'ի մէջ կանանց. և այրիացեալ էր յայնժամ 'ի Գայիոսէ Մարկեղոսէ՝ որ կին ած զնա, և դէռ վախճանեալ էր. մեռեալ էր և Փուլվիա, և անկին համարեալ Անտոնիոս. զի թէպէտ և չժխտէր՝ ունել զկղեոպատրէ, սակայն և ասէր՝ ամուսնութեամբ ոչ կապել ընդ նմա. և 'ի մասինդ յայդմիկ իրաւամբք արդէօք հակառակէր նա սիրոյ Եգիպտուհւոյն: Արդ յայնժամ առհասարակ թախանձ արկեալ փութացուցանէին զամուսնութիւնն ընդ Հոկտաւեայ. ակն ունէին՝ եթէ կին այնպիսի գեղաւոր՝ միանգամայն և զգօն և հանճարեղ զուգեալ ընդ Անտոնիոսի և սիրեալ առ 'ի նմանէ ըստ արժանին իւրում, փրկութիւն և միաբանութիւն առթեացէ առհասարակ իրաց երկոցուն նոցա: Ուստի և 'ի նոյն միաբանեալ երկոցունցն, չոքան 'ի Հռոմ՝ անդանօր կատարել զհարսանիսն Հոկտաւեայ. և քանզի թոյլ չէր յօրինացն՝ յերկրորդ հարսանիս անցանել այրոյն՝ մինչև հոլովեալ ամսոց տասանց 'ի մահուանէ առնն, վճիռ ապա Սինկլիտոսին տուեալ՝ ներէր նոցա զչափ ժամանակին:

Բայց զայնու ժամանակաւ Սեքստոս Պոմպէոս կալեալ ընդ ձեռամբ զՍիկիլիա՝ աւար հարկանէր զԻտալիա, և նաւաց բազմութեամբ ասպատակաց՝ առաջնորդու-

թեամբ Մինասայ հինի և Մենեկրատեայ առեալ գրաւեաց զծովն և խցեալ կուրա-
ցոյց զնաւագնաց ուղին։ Այլ քանզի համ-
բոյր և մարդասէր գտաւ նա առ Անտո-
նիոս, և առեալ ժողովեաց նա զմայրն նո-
րա 'ի փախչել նորա հանդերձ փուլվեաւ
յիսաալիոյ, այնորիկ աղագաւ լաւ համա-
րեցան նոքա 'ի հաշտութիւն գալ և ընդ
Պոմպէի. և եկին ժողովեցան նոքա 'ի խոր-
հուրդ ընդ միմեանս 'ի հրուանդանն Մի-
սենեայ և յամբարտակն, Պոմպէոս՝ իւրով
նաւահանգիստն, և Անտոնիոս և Կեսար՝
մօտ նմա իւրեանց հեռևակօք։ Յուիտ
մոեալք հաստատեցին՝ զի Պոմպէոս կալ-
ցի զԱրդոն և զՍիկիլիա, և զծովն սրբեա-
ցէ յասպատակացն, և 'ի Հռոմ չափով
ամբարս առաքեսցէ ցորենոյ. զայս ուխտ
եդեալ՝ այր ընկերի ապա յընթրիս հրա-
ւէր կարդայր։ Վիճակ արկին, և ելանէր
նախ Պոմպէի ընթրիս տալ նոցա։ Իբրև
Անտոնիոս զվայր ընթրեացն հարցանէր,
Պոմպէոս մատնանիշ զաւագ նաւ իւր ցու-
ցէ՚ի վեցկարդեան թիոց, ասէ. "Անդա-
նօր. զի և մնաց իսկ այն Պոմպէի բնակա-
բան հայրենի,,։ Զայս ասէր նա՝ զկծանե-
լով զԱնտոնիոս, որ ժառանգեալ ուներ
զտուն Պոմպէի զհօրն իւրոյ։

Ապա նա 'ի խարսխի զնաւն յանդորրու
առկայացուցեալ, և կամուրջ ևս կապեալ
'ի նմա 'ի հրուանդանէն, այնպէս մտա-
դիր զուարթութեամբ հիւրընկալեաց
զնոսա։ Իսկ յայնժամ 'ի մեծ խրախճանն

սեղանոյն և 'ի զուարթաբանել յոյժ վասն Կղէոպատրեայ և վասն Անտոնիոսի, անդուստ Մինաս հէն մատուցեալ մօտ առ Պոմպէոս՝ զի մի լսիցեն նոքա, ասէր ցնա. "Կամիս զխարիսխս կորեալ զնաւուդ, տիրացուցից զքեզ ոչ Սիկիլիոյ միայն և Սարդոնի, այլ ողջոյն տէրութեանն Հռոմայեցւոց,,: Զայն լուեալ Պոմպէի, վայր մի մոախորհ եղեալ՝ ասէր. "Զայդ քեզ ոչ Մինաս՝ մինչև ինձ ասացեալ՝ պարտ էր գործել: Իսկ զարդիս շատացուք մեք ընդ առաջիկայսդ. քանզի և չէ իմ՝ ուխտադրուժ լինել,,: Ապա և ինքն յերկոցուն նոցա հրաւէր առեալ հիւրընկալութեամբ, այնպէս նաւեաց ջոքաւ յայնժամ 'ի Սիկիլիա:

Իբրև այս այսպէս կատարեցաւ, առեալ Անտոնիոս առաքէր յԱսիա զՎենտիդիոս կարձել սանձել զյարձակումն Պարթևաց. և ինքն շնորհս արարեալ Կեսարու՝ տայր կարգել զանձն 'ի քահանայ առաջնոյն Կեսարու: Եւ այնպէս միաբան սիրով գնային երկոքին նոքա յամենայն իրս քաղաքին և 'ի կարևորսն. սակայն և յել և ելս 'ի խաղսն՝ 'ի խոր խոցէր Անտոնիոս՝ ցանգ նկուն 'ի Կեսարէ եղեալ: Քանզի և էր իսկ առ Անտոնիոսի այր ոմն իղձ Եգիպտացի 'ի ծնընդահմայից անսի: Սա այս իղձ, կամ 'ի շընորհս Կղէոպատրեայ կամ թէ ճշգրիտ այնպէս հմայեալ, համարձակէր ասէր առ Անտոնիոս, եթէ շքեղ և հոյակապ բաղդին՝ ստուերածս 'ի վերայ ածցէ բաղդն

կեսարու. ուստի և խորհուրդ տայր նմա հեռագոյնս յոյժ ձգել 'ի պատանեւոյ անոի. և յաւել ևս ասել. "Քանզի քո Քաջն զանգիտէ 'ի նորայոյն. և աշխոյժ քոյդ գոլով և պերճ 'ի միայնութեան, 'ի մերձ կալ միւսոյն՝ անկած յարդարի և նուաստ,,: Եւ արդեօք դէպք իրացն թուեցան իմն զբան հաւատարմացուցանել զԵգիպտացւոյն. քանզի պատմեն՝ եթէ ցանգ 'ի վիճակընկէց լինել նոցա 'ի խաղոյ վասն ինչ իրիք՝ տեսանել թէ ո՞ւմ վիճակեսցի, կամ թէ 'ի խաղալ նարտ, կորուսանէր Անտոնիոս: Դարձեալ առ այս՝ 'ի տալ նոցա ստէպ 'ի վէգ ընդ միմեանս յառնել աքաղաղաց, բազում անգամ և մարտիկ կաքաւուց, յաղթականք կեսարուն լինէին: Ոյց աղագաւ և 'ի խոր Անտոնիոս խոցեալ թէպէտ և 'ի դէմս չքերէր, նա և հաւատ ևս ընծայեալ ըղձին, ելեալ գնաց յիտալիոյ և յանձն 'ի կեսար առնէր զառտինան իւր. և ածէր ընդ իւր զՀոկտաւիա մինչև յԵլլադա, յորմէ և եղև նմա դուստր մի:

Իսկ իբրև յԱթէնս ձմերէր Անտոնիոս, լուր հասանէր նմա յաջողութեան առաջին նահատակութեանցն Վենտիդեայ. որ 'ի պարտութիւն մատնեալ զՊարթևս 'ի մարտի, և տապաստ ևս արկեալ էր զԼաբինոս և զփառնապատէս զմեծ սպարապետ զՀերովդայ արքային: 'Ի լուր աւետեացն կոչունս պատրաստեաց նա Հելլենացւոց, և ինքնին դարձեալ ոստիկան ըմբշապետ կամեցաւ կալ 'ի վերայ Աթենացւոց. և

թողեալ 'ի տան զնշանակս զինքնակալու-
թեանն, եւ նա արտաքս բաձկոն արկեալ
և մոյկ յոտս, և վարոց առեալ զրմբշապե-
տացն, և հարեալ ընդ ուլն՝ այնպէս որո-
շէր զատանէր զրմբշամարտիկս պատա-
նեացն։ Եւ ապա 'ի չու անկանէր 'ի մարտ
պատերազմի, էառ պսակ մի 'ի նուիրական
ձեթենւոյն. և ջուր ամանով 'ի Կղէպսի-
դրայ 4, ըստ հրամանի պատգամին ա-
ռեալ տանէր ընդ իւր։

Իսկ յայնժամ Վենտիդիոս մարտ յար-
դարեալ 'ի Կիրրիւստիկէ ընդ Պակորուսի
արքայորդւոյն՝ որ զօրու ծանու Պարթևաց
միւսանդամ մեռեալ էր յԱսորիս, հարկա-
նէր վանէր զնա 'ի հարուածս մեծամեծս.
և անդանօր 'ի մէջ նահատակաց տապաստ
անկանէր և Պակորոս ինքնին։ Եւ ապա
այս հանգէս նահատակութեան գերահամ
բաւ՝ բնաւ իսկ ամենևին փոխանակեաց
զՀռոմայեցւոց աղէտն՝ որ առ Կրասսոս-
սիւ. և անդրէն միւսանգամ առեալ փա-
կէր զպատրեալն 'ի սահմանն Մարաց և
Միջագետաց. քանզի և հետ զհետէ պար-
տեալ նկուն եղեն նոքա միանգամայն 'ի
պատերազմունս երիս։

Բայց Վենտիդիոս յայնժամ ոչ կամե-
ցաւ յառաջամուխ ևս վանել հալածել
զՊարթևս՝ զանգիտեալ 'ի խէթոյն Անտո-
նիոսի. և հասանէր նուաձէր զապստամբսն,
և պատէր պաշարէր զԿոմմագենոս զԱն-
տիոքոս 'ի Սամոսատ քաղաքի։ Նա յողոք
անկեալ նմա և տաղանդս ևս հաղար 'ի

ներքս մատուցանէր նմա. և խոստանայր ևս կատարել զամենայն հրամայեալսն յԱնտոնիոսէ. այլ Վենտիդիոս ասէր առաքել առ Անտոնիոս ինքնին՝ որ մօտ հասեալ կայր, և ջտայր թոյլ կռել խաղաղութիւն ընդ նմա. քանզի կամէր գոնեա ինչ մի 'ի գործոց անտի ընծայել յանուն նորա. զի մի ասասցեն քաջապէս զամենայնն 'ի գլուխ 'ի Վենտիդեայ ասրեալ։

Իբրև յերկարագոյնս ձգեցաւ պաշարումն, և պաշարեալքն յուսահատ 'ի հաշտութենէն էղեն, 'ի դիմի հարան սաստկապէս. և յայնժամ վճարեալ և ոչինչ Անտոնիոսի՝ լի ամօթով և յոյժ ապաշաւեղեալ՝ յանձն առնոյր երեքհարիւր միայն քանքարօք հաշտել ընդ Անտիոքոսին. և վայր մի խաղաղեալ զերան Ասորւոց՝ խաղայր դառնայր յԱթէնս. և զարժանին շուք եդեալ Վենտիդեայ՝ արձակէր զնա հանդէս ածել զյաղթանակին։ Սա այս միայն Վենտիդիոս՝ մինչև ցայսօր ժամանակի սա միայն յաղթանակեաց 'ի վերայ Պարթևացոյր աննշան, սակայն 'ի բարեկամութէն Անտոնիոսի ճոխացեալ՝ յաջողեցաւ մխել 'ի նահատակութիւնս մեծամեծս. և քաջապէս առաքինացեալ՝ հաւատարմացուցանէր զզլոյց համբաւոյն վասն Անտոնիոսի և վասն Կեսարու, զայն՝ եթէ բարեբախտիկ ևս էն արքդ՝ յորժամ յայլոց ձեռն կռուին՝ քան թէ ինքնին առանձին։ Քանզի և Սոսիոս զօրավար Անտոնիոսի՝ շահատակութիւն բազում գործեաց յԱսորիս.

դարձեալ և Կանիդիոս Թողեալ յԱնտոնիոսէ յաշխարհին Հայոց, նուաճեալ ըղ-ժողովուրդ աշխարհին՝ միանգամայն և զարքայս զՎրաց և զԱղուանից, խաղաց յառաջագէմ մինչև 'ի Կաւկաս։ Ոյր աղագաւ և մեծապէս հնչեաց առ բարբարոսս համբաւ և փառք տէրութեն Անտոնիոսի։

Բայց Անտոնիոս միւսանգամ գրգռեալ ընդ Կեսարու 'ի համբաւոյ իմեքէ, յուղի անկաւ երեքհարիւր նաւուք յԻտալիա։ Իբրև Բրենդեսացիք ոչ ժողովեցին զհանդէս նաւացն, խաղաց չու արար նա ունել զՏարանտոն։ Եւ անդուստ առեալ արձակէր զՀոկտաւիա ըստ խնդրոյ նորա առ եղբայր իւր. որ 'ի միասին ընդ առն նաւարկեալ յԵլլադայ և էր նա յայնժամ յոլի՝ յետ ծնանելոյ նմա և դուստր երկրորդ։ Ապա Հոկտաւիա յուղղոջ պատահեալ Կեսարու, սկսաւ խօսել ընդ եղբօրն յանդիման բարեկամացն նորա Ագրիպպասայ և Մեկենասայ. կայր և գանգատէր յոյժ. և յողոք մեծապէս անկանէր, մի այնպէս Թողուլ լքանել զնա, և 'ի գերեցիկ բախտէն իւրմէ չուառացուցանել զնա. քանզի և առհասարակ մարդիկն ակնկառոյցք էն 'ի նա, կին՝ որ յինքնակալաց անտի երկուց՝ միոյն լծակից է, և միւսոյն քոյր։ ։ Զի եթէ և ձախողակ զօրացեալ խորհրդոյն, մարտ՝ ասէ՝ մղեսցի պատերազմի, անյայտ արդեօք իցէ՝ ո՛ւմ ումեք 'ի ձէնջ սահմանեալ յաղթութիւնն իցէ կամ պարտութիւնն։ Սակայն ինձ գլխովին ըստ եր-

կաքանչիւր ևս մասինդ հասցէ յայնժամ թշուառութիւն ,, :

Զայս ասաց քոյրն և խանդաղատեցաւ Կեսար 'ի բանից նորա , չու արար խաղաց 'ի Տարանտոն խաղաղասէր խորհրդով. և անդանօր ապա տեսիլ 'ի ներքս ընծայէր մարդկանն յոյժ բերկրալի , բանակ զօրաց ամբաւից 'ի ցամաքի՝ այնպէս առհասարակ լուռ և հանդարտ. դարձեալ և անդուստ բաղմահանդէս նաւաց տորմիղ՝ այնպէս անդորր և խաղաղ առ ափամբն . և բարեկամաց անդանօր պատահել միմեանց 'ի համբոյր սիրոյ : Իսկ կոչուն տայր առաջին Անտոնիոս . քանզի և 'ի բանիս յայսմիկ՝ խոնարհեցաւ Կեսար 'ի կամս քեռանն :

Ապա յուիսս խաղաղութեան մոռեալ այր ընդ ընկերի , տայր Կեսար դուստր երկուս Անտոնիոսի 'ի մարտ պատերազմի ընդդէմ Պարթևաց . և Անտոնիոս Կեսարու՝ նաւս հարիւր պղնձացուցակս : Բայց Հոկտաւիա առ այսոքիւք դարձեալ խնդրեաց և էառ յառնէն վասն եղբօրն և այլ ևս մակոյկս քսան թուով . և յեղբօրէն դարձեալ վասն առնն՝ այլ ևս զօրական հազար : Եւ մեկնեալ այր յընկերէ . խաղաց Կեսար 'ի մարտ ընդդէմ Պոմպէի. խնդրեր տիրանալ Սիկիլիոյ . իսկ Անտոնիոս թողեալ զՀոկտաւիա առ Կեսարու հանդերձ զաւակօքն նորա և որ 'ի Փուլվեայ , խաղայր գնայր յԱսիա :

Արդ անհնարին այն աղէտք Անտոնիոսի այնպէս զհարուստ ժամանակն ընդար-

մացեալ, տուփանքն ասեմ զԿղէոպատրէայ՝ որ յողջախոհ խորհրդոց անտի կարծէր Նկուն և Թմբրեալ, անդրէն միւսանգամ 'ի վերս վազեաց, և ըստ չափու մտաւորու- թեանն յԱսորիս հաղ քան զհաղ ամենա- ցաւ։ Եւ համբուն՝ որպէս Պղատոն ասաց՝ սանձակոտոր և անժուժկալ նորա երիվար հոգւոյն՝ կիցս արձակեալ հարեալ միան- գամայն առաթուր որ ինչ 'ի պարկեշտից և 'ի փրկաւէտից, առեալ զԿապիտոլն Փոն- տէյոս արձակէր առ Կղէոպատրէ՝ ածել բերել զնա ինքնին յԱսորիս։

Իբրև եկն եհաս Կղէոպատրէ, առեալ Անտոնիոս տայր նմա պարգև ոչ փոքր և գուշնաքեայ, այլ զՓիլոնիկէ գլխովին մա- տուցանէր նմա, զԿղեսուրն և զԿիւպրոս, և շատ ինչ 'ի Կիլիկիոյ։ Առ այսոքիւք՝ և զՀրէաստանի զկողմն՝ որ բալասան բերէ, և զողջոյն զնաբատացւոց զԱրաբիոյ զկողմն՝ Թեւակոխեալ 'ի ծոմն՝ որ արտաքոյ։ Այլ ընդ պարգևսն ընդ այն մեծապէս խոժո- ռեցան Հռոմայեցիք. և Թէպէտ և այլոց ևս սոսկականաց էտ պարգևեաց նա և չոր- ղորդպետութիւնս և արքայութիւնս զմե- ծաց ազգաց, և եհան ևս 'ի բազմաց զար- քայութիւնս նոցա, որպէս յԱնտիգոնոսէ Եբրայեցւոյ, զորոյ և զգլուխն էտ նա կարել սակրաւ՝ ածեալ 'ի հրապարակ, զի երբէք յառաջ ժամանակաւ պատուհաս զայն ոչ կրեաց ոք 'ի Թագաւորաց. սա- կայն և այնպէս անարգութիւն սպասար- կութեանցն նորա առ Կղէոպատրէ յոյժ

գԺոխըմբերելի եղև Հռոմայեցւոց։ Իսկ որ առաւել բամբասելի գործեաց զնա, զի որդիս երկուորեակ ծնեալ նմա 'ի Կղէոպատրեայ, անուն եդեալ միոյն՝ Աղեքսանդրոս, և միւսումն՝ Կղէոպատրէ, մականուանէր զառաջինն Արև, և զերկրորդն՝ Լուսին։

Բայց հնարիմաց եղեալ Անտոնիոսի դէմս տալ գեղանիս և ամօթալեացն անդամ և խայտալ 'ի նոսա, ասէր՝ եթէ պերճութիւն Հռոմայեցւոց տէրութեանն՝ ոչ 'ի տիրապետութեանց ինչ բարգաւաճեալ է, քան թէ 'ի մարդասէր ընծայաբերութեանցն. և զի՝ և քաջազգութիւնն ինքնին ծաւալի 'ի պայազատութիւնս և 'ի ձեռս արքայից բազմաց. և զի՝ և այսպէս ծնաւ նախահայրն նորա 'ի Հերակլեայ, այն՝ որ ողջոյն զիւր ձեռն չէառ Յամփիփեաց յարգանդ մի միայն, և ոչ պատկառ ինչ եկաց նա օրինացն Սողոնեան, և ոչ զանգիտեաց համարս տալ զյղութեանցն, այլ ձգնեցաւ թողուլ 'ի բնութեան շառաւիղս յիւրմէ շատ և արմատս ծննդոց։

Այլ ընդ աւուրս ժամանակացն այնոցիկ իբրև Փրատրաէս սպան զհայր իւր զԻրոմդէս և գլուաւեաց զարքայութիւնն, բազումք յայնժամ 'ի Պարթևաց անսի եղին փախստեայ գնային. հատուածեալ և Մոնէսիս այր հոյակապ և ձոխ՝ եկն անկաւառ Անտոնիոս։ Իսկ Անտոնիոս 'ի նմանութիւն զնորայն բերեալ՝ բախտին թեմիստոկղեայ, և 'ի վեդ զիւր ընչաւէտութիւնն

տարեալ և զմեծանձնութիւն՝ ընդ արքայիցն Պարսից, տայր պարգևէր առնն քաղաքս երիս զԼարիսսա և զԱրեթուսա և զՀերապոլիս՝ զոր յառաջն կոչէին Բորբիւկէ։ Իսկ իբրև առաքեաց արքայն Պարթևաց և կոչէր առ ինքն զՄոնէսիս 'ի հաւատ աջոյն իւրոյ, մտադիւրադոյնս յայնժամ Անտոնիոս դարձուցանէր առ նա զայրն. զմտաւ ածէր խաբել յայնմանէ զՓրաորտէս՝ իբրու խաղաղութիւն հաստել ընդ նմա, և խնդրէր ևս 'ի նմանէ դարձուցանել առ նա զդրօշակս Հռոմայեցւոց՝ զոր կալան նոքա առ Կրասսոսիւ, դարձեալ և զգերին կենդանի։

Յետ այսորիկ արձակեալ նա զԿղէոպատրէ յԵգիպտոս, ինքն յուղի անկաւ ընդ Արաբիա և ընդ Հայոց աշխարհն. և անդ եկեալ խմբեցան առ նմա ամենայն զօրք և արքայք նիզակակիցք բազում. յորս և յառաջեալ յամենեցունց զօրութեամբ էր Արտաւազդ արքայ Հայոց, և 'ի ձեռս տայր նա Անտոնիոսի վեց հազար արուձիոյ և եօթն հազար հետևակաց. և ապա Անտոնիոս հանդէս առնէր զօրուն։ Էր հետևակազօր Հռոմայեցւոց վեց բիւրուց, և այրուձին Իբերացւոց և Կեղտաց՝ համագունդ ընդ Հռոմայեցւոց՝ էր բիւր մի։ Իսկ թիւ այլ ևս խուժանին 'ի միասին ընդ այրուձիոյ և թեթևազէն զօրականին՝ էր երից բիւրուց։ Այլ կազմութիւն այնչափ հանդերձանացն և ստուարութիւն բանակացն, յորմէ և Հնդիկք ինքնին յայնկոյս Պակ-

արիացուց զարհուրեցան և Ասիա ողջոյն սասանեցաւ, ասեն՝ եթէ բնաւ իսկ անպիտան յարդարեցաւ Անտոնիոսի 'ի պատճառս Կղեոպատրայ։

Քանզի կանխեալ աճապարեալ ինքն 'ի գործ անդր՝ զի ապա երթեալ ձմերեսցէ ընդ նմա, մարտ մղեաց կանուխ. քան զժամանակն. և անկարգուութիւն և աղմկաւ առաջնորդեալ, ոչինչ առաքինացաւ ողջախոհ մտածութեամբ. այլ խելացեալ իբրու 'ի գեղատուութենէ իմաքէ կամ 'ի բժժանաց ոմանց կախարդեալ այրն՝ անքթիթ ակնկառոյց 'ի սիրուհի անդր, քան թշնամեացն յաղթել՝ փութայր ճեպէր մանաւանդ զդարձն առնել։ Քանզի և առաջին պարտ իսկ էր նմա անդէն 'ի ձմերոցի կալ յաշխարհին Հայոց. և զօրուն հանգիստալ լքելոյն և պարտասելոյ՝ զի ութ հազար ասպարիսաց հատեալ էր նոցա. և ապա 'ի գլուխ գարնանոյն՝ մինչչև Պարթևաց 'ի ձմերոցացն ելեալ՝ գիմել 'ի Մարս. բայց նա ոչինչ հանդարտեցաւ, և խաղայր յառաջ՝ թողեալ յահեկէ զՀայոց աշխարհն. և հասեալ յԱտրոպատէն 5, աւար հարկանէր զգաւառն։ Եւ զի նորա զհետ գնային աղխաղխեալ երեքհարիւր սայլք բեռնաբարձք մանգղիոնից 'ի պէտս պաշարման, յորս էր և խոյ մի՝ երկայնութիւն նորա ութսուն ոտնաչափից. և եթէ ինչ մի 'ի նոցանէն խորտակէր, հեշտին չէր դարմանել. քանզի և վերնագաւառն ինքնին փայտս բերէ ոչինչ այնպէս յաղթս եր-

կայնս և կուռս. ապա 'ի ձեռ փութոյն Անտոնիոս՝ իբրու խոչընդոտս զնոսա թողոյր զկնի. և դունդ մի և զօրավար զՏատիանոս թողեալ 'ի պահպանութիւն սայլիցն, ինքն խաղաց գնաց պաշարել զքաղաքն մեծ զՓրաորտեայ, յորում ամրացեալ կային որդիք և կանայք արքային Մարաց։ Այլ ապա արագ խելամուտ վիպակին լինէր Անտոնիոս՝ լի ելիք ելթող նա զկարևոր մենքենայսն. և յառաջադէմ զմտրան վարեալ՝ տայր կարկառ հողակոյտ ընդդէմ քաղաքին ամբառնալ, գործ բազմաժամանակեայ և յոքնաքիրտն։

Իսկ յայնժամ հորդան 'ի վայր տուեալ Փրաորտէս զօրու ծանու, լուր էառ ըզմանգլիոնաբեր սայլիցն՝ եթէ թողան զկնի, դունդ ստուար զայրուձիոյ զօրահատոյց առնէր 'ի վայր անդր. յորոց և 'ի նեղքս փակեալ Տատիանոս՝ սատակէր ինքն հանդերձ բիւր զօրականօք. իսկ բարբարոսացն տիրացեալ 'ի վերայ մանգլիոնից ջաղխէին խորտակէին. վարէին և գերի բազում, ընդ նոսա և զՊողեմոնն արքայ։ Եւ յայսմանէ ապա յոյժ 'ի խոր խոցեցան առհասարակ զօրականք Անտոնիոսի, այնպէս արագ արագ անակնկալ հանդիպեալք արկածին։ Անդ և Արտաւազդ Հայ՝ յուսաբեկ 'ի յաջողութենէն Հռոմայեցւոց, առեալ զզօր իւր և տեղի տուեալ դնայր. թէպէտ և ինքնին նա պատճառք մեծապէս եկաց մարտին այնորիկ։

Իբրև անդուստ հասեալ խաղացին Պար-

թեք յանդիման պաշարողացն՝ պարզերես նահատակեալք և 'ի բարբառ ևս սպառնալեաց ոտնհար լինէին, յայնժամ Ան-տոնիոս՝ զի մի անդէն յիւրեանց ակաստանին սասարկ ևս արտաթափ և միջաբեկ լի-ցին զօրականք՝ առեալ ժողովեալ տասն գունդս և վաշտս երիս զզօրավարացն սպա-ռազինաց և զամենայն այրուձին, ելանէր արտաքս կուտել ժողովել ամբար. թերևս օրինակ զայն ածեալ ձգեսցէ զթշնամին 'ի մարտ ճակատամարտ: Իբրև խաղաց ա-ւուր միոյ ճանապարհ, տեսանէր զՊար-թևս վարատել սփռել շուրջանակի, իբրու այն որ յուղղոջ անդ կամեսցին անկանել 'ի վերայ նորա. անդէն յանդիման երևե-ցուցանէր 'ի բանակին գնշան պատերազմին. սպա 'ի վայր զկորանն առեալ՝ իբրև ոչ մարտ դնել կռուել, այլ չու տալ զօրուն, այնպէս խաղայր անցանէր առաջի գնդին թշնամեաց՝ որ լուսնաձև կարգեալ դա-սեալ կային. և տայր պատուէր հեծելա-զօրուն՝ զի 'ի նահատակել թշնամեաց 'ի վերայ հետևակացն, յարձակեսցին և նոքա:

Բայց անդ այնպէս գեղեցիկ դասաւո-րութեամբ խաղալ Հռոմայեցւոց՝ տեսիլ սքանչելի 'ի ներքս բերէր Պարթևաց՝ որ անդանօր կարգեալ վառեալ մօտ կային, հիացեալք ընդ միաչափ անջրպետել խա-ղալ գնդաց գնդաց նոցա՝ միաբան անշը-շունչք հարեալք ճօճեալք զգեղարդունս: Իբրև նշանն տուաւ և հեծելազօրն նահա-տակեցաւ ձայնիւ և աղաղակաւ ընդդէմ

թշնամեացն, յայնժամ Պարթևք ընդդէմ դարձեալք կռուէին, թէպէտ և այնչափ մեծ նեռընկեցիւ չափ յանկարծակի 'ի վերայ խուժեցան Հռոմայեցիք։ Իսկ իբրև և հետևակազօրն 'ի ձայն մեծ աղաղակի և 'ի շաչիւն սաստիկ զինուցն խառնեցաւ 'ի ռազմին, երիվարք Պարթևացն շրջուցեալք և խռով հարեալք, մինչև 'ի կռիւն կաքաւեալք՝ 'ի փախուստ խուճապեցան Պարթևք։

Իսկ Անտոնիոս շտապաւ հետամուտ նոցա՝ մեծապէս ակն ունէր եթէ 'ի կռուին յայնմիկ իսպառ կամ թէ բազում ինչ վնասեսցի մարտ պատերազմին։ Բայց իբրև ասպարէզս յիսուն այնպէս վանեալ հետևակացն զՊարթևսն, և երիցս նոյնչափ հեծելազօրուն, դարձան հայեցան Հռոմայեցիք 'ի թիւ սպանելոցն թշնամեաց և գերուոյն, և այնչափ սակաւ գտանէին ըզգերին՝ երեսնիւ չափ, և զանկեալսն՝ ութսուն միայն, անկան բեկան լքան առհասարակ. ոչինչ հանդարտեցին, եթէ 'ի յաղթել նոցա՝ այնչափ նուազունք անկցին 'ի թշնամեացն. իսկ 'ի պարտիլ իւրեանց՝ նոյնչափ որեար՝ որչափ անդանօր առ սայլիւքն՝ տապաստ անկցին 'ի նոցանէ։

Ապա առ վաղիւն ժողովեալ զկարասին դէմ եդեալ գնային 'ի քաղաքն Փրատրտ և 'ի բանակետն իւրեանց. այլ յուղղոյն զառաջինն սակաւուց ոմանց պատահեալ 'ի թշնամեացն, ապա և բազմութեան նոցա, հուսկ ապա և առհասարակ զօրուն

նոցա, որ ձայն կարդային մարտի և 'ի կողմանց կողմանց 'ի կռիւ կաքաւէին՝ իբրու նահատակք ոմանք անպարտելիք և անվաստակք, ուստի և հազիւ ուրեմն բազում աշխատութեամբ հասեալ կալան նոքա զբանակետղն։

Իսկ իբրև անդուստ և Մարացն գոռոյթս տուեալ ընդդէմ հողաբլրոյն Հռոմայեցւոց, և ահ արկեալ 'ի փախուստ դարձուցին զախոյեանսն, սրտմտեալ Անտոնիոս 'ի վերայ վատացելոցն, պատուհաս զոտասանորդին՝ զոր կոչեն՝ 'ի վերայ ածէր նոցա։ Քանզի բաշխեալ բաժանեալ զնոսա ողջոյն 'ի տասնեակս տասնեակս, վիճակ արկեալ տայր սպանանել այր մի 'ի տասանց. և հրաման տայր՝ դարի մնացելոցն տալ փոխանակ ցորենոյ։

Բայց յայնժամ երկոցուն ևս կողմանցն յոյժ ծանրացաւ մարտ պատերազմին. իսկ որ առաջոյ ևս հանդերձեալ էր՝ յոյժ էր ահագին, քանզի Անտոնիոսի առ դուրս հասեալ կայր սոին. զի և կարէր իսկ ոչ այնուհետև ժողովել նա կերակուր առանց հարուածոյ և արեանց բազմոց։ Իսկ և անդուստ Փրառորտէս գիտէր իսկ քաջ՝ զի ամենայնին ժուժան Պարթևք, այլ հանդուրժեն ոչ՝ բացօթեադք 'ի ձմերոց արտաքոյ. և երկուցեալ զանգիտէր եթէ լքեալ թողցեն զնա 'ի կալ մնալ անդէն և 'ի տոկալ Հռոմայեցւոցն, զի և յետ աշնայնոյ հասարակածին սկսեալ իսկ էր օդոցն ժանտանալ։ Ապա հնարս նիւթեաց

նա այսպիսի։ Պատուէր եւ յայնժամ իշխանացն Պարթեւաց հեզաբար առ Հռոմայեցիսն դնալ՝ 'ի ժողովել նոցա ամբարս և յայլ ինչ ևս 'ի դէպս՝ ուր և միանգամ պատահեսցեն նոցա. և թոյլ տացեն նոցա կերակուր ամբարել, և զարմացին ևս ընդ քաջութիւն նոցա և իբրև մարտիկս գովեսցեն զնոսա, որպէս զի և սքանչացեալ իսկ են նոքա առ արքային Իւրեանց. և այնպէս տակաւ մերձ առ նոսա եղեալ երիվարօք՝ եպերեսցեն ևս զԱնտոնիոս, զի ուր Փրատուէս ինքնին խաղաղութիւն խնդրէ ընդ նոսա՝ խնայեալ յայնչափ գեղեցիկ զինուորութիւնն, Անտոնիոս յանձն չառնու և զտեղի առեալ կայ մնայ երկուց անապորոյն և ահագին թշնամեացն, սովուն ասեմ և ձմերայնոյն. յորոց և դժուարաւ արդեօք անձնապուր լինիցի՝ թէպէտ և Պարթեք ինքնին նմա կարապետք ուղղոյն լինիցին։

Յայսպիսեաց աստի իբրև բազումք յունկն պատմեցին Անտոնիոսի, նա թէպէտ և քաջալերեցաւ ևս, ոչինչ կամեցաւ արձակել բանբերս առ Պարթեն՝ մինչև հետազօտեալ 'ի բարեհամբոյր բարբառոսաց անտի՝ եթէ արդեօք ըստ մտաց խօսեսցին Իւրեանց արքայի։ Իբրև նոքա պատասխանի արարին՝ Այո՛. և խրախոյս ևս տային մի՛ ինչ ամենևին խիթալ զանգիտել. ապա Անտոնիոս առեալ յիւրոց անտի բարեկամացն արձակէր առ նա՝ խնդրէր միասանգամ զդրօշակսն և զդերին. զի մի թե-

բեւ կարծեսցեն՝ եթէ փրկութեամբ չափ միայն և փախստեամբն շատասցի։ Եւ պատասխանի Պարթեւն, զի 'ի բաց զենդիրն թողեալ՝ 'ի չուն փութասցի, և ինքն անդորրութիւն և խաղաղութիւն հանդերձեսցէ նոցա։

Յայնժամ Անտոնիոս արագ արագ ամփոփեալ զամենայն զաղեան, ժողովէր զխորանսն. և թէպէտ և ինքնին բաւական 'ի խօսել առ զօրականն և ամոքել զնոսա, զի և անդաստին 'ի բնութենէն առաւել քան զամենայն զօրավարս ժամանակին յաջողեալ իսկ էր ճարտարութեամբ լեզուին տանել բերել զզօրն, այլ յայնժամ յամօթոյն զգածեալ և 'ի տխրութենէ ոգւոյն սրտառուչ, ոչինչ քաջալերեցաւ ինքնին խրախոյս զինուորութեանն տալ. ապաստան զբանն առնէր 'ի Դոմիտիոս Էնոբարբոս։ Կէսք անդանօր զչարեցան՝ իբրև արհամարհեալք համարեցան զանձինս. այլ բազումք այն էին՝ որ 'ի գութ շարժեալ և պատճառին խելամուտ եղեալ՝ լաւ համարեցան առաւել ևս շուք և հլութիւն 'ի նեղքս բերել զօրավարին իւրեանց։

Իբրև այնպէս հանդերձեցաւ չու առնել յետս ընդ նոյն ճանապարհ՝ ընդ դաշտային և անմայրին, յայնժամ այր ոմն ազգաւ Մարուսացի՝ որ և քաջ իսկ հմուտ և տեղեակ էր սովորութեանցն Պարթեւաց, և էր ինքն հաւատարմութիւն մեծ ցուցեալ առ Հռոմայեցիս 'ի կռուի անդ առ մանդղիոնիքն, մատուցեալ առ Անտոնիոս

իրատ տայր՝ 'ի չուն յաջմէն ունել զլեռ-
նակողմանան, և մի զզօրականն զայն սպա-
ռազէն և զծանր խաղացուցանել ընդ ան-
պատսպար վայրսն և ընդ բացարձակ, և
վտանգել 'ի բազմութենէ անտի այրու-
ձիոյն Պարթևաց և 'ի տեղատարափ նետից
նոցա. որում և ուշ ինքնին եդեալ Փրաորտ-
էս հնարիմաց խորհրդով դաշինս կռեալ
մարդասէր՝ ետ նմա տեղի տալ 'ի պաշար-
մանէն: Եւ ասէր ևս նմա այրն՝ առաջնորդ
լինել նմա ընդ կարճոյ ճանապարհ, ուր և
առատապէս հանդերձեսցին նմա պաշարք:

Լուեալ Անտոնիոսի՝ 'ի խորհուրդ մտա-
նէր վասն բանին. աներկմիտ խորհրդով
կամէր նա առ Պարթևան լինել յետ կռե-
լոյ դաշանցն. բայց և ընդ կարճոյ ճանա-
պարհն հաւանեալ և ընդ անցս շինիցն առ-
նել ճանապարհ, խնդրէր 'ի Մարտացւոյն
գրաւական զհաւատոյն: Նա զանձն իւր
առաջի մատուցանէր՝ առնուլ ունել 'ի
կապանս՝ մինչև ածցէ բերցէ զզօրն յաշ-
խարհն Հայոց: Եւ այնպէս ասպա առեալ
կապեցին զայրն, և ածէր առաջնորդէր նա
զօրուն աւուրս երկուս խաղաղութեամբ:

Իսկ յաւուրն երրորդի՝ յորժամ ոչինչ
մտախորհ Անտոնիոս վասն Պարթևաց՝ չու
առնէր խաղայր յուշիկ յանդորրու, ան-
դուստ այրն Մարտացի գէտակն կալեալ 'ի
թումբ ինչ գետոյ՝ այն ինչ քանդեալ ա-
ւերեալ զթումբն, և անտի ջուր սաստիկ
յորդեալ ողողէր զանցս ճանապարհին նո-
ցա. արագ խելամուտ այրն 'ի վերայ եկաց

հնարիւց Պարթևացն 'ի գործ անդր. իբրու կամել նոցա դեռուիլ կուրացուցանել զու-ղին նոցա. վասն որոյ և խրատ տայր Ան-տոնիոսի զգուշանալ և արթուն կալ, իբ-րու եթէ առ դուրս կայցեն թշնամիք։ Մինչ այս մինչ այն, և Անտոնիոս դասէր կարգէր զգունդս վառեալս, և կազմէր պատրաստէր 'ի մէջ նոցա զարդնընկէցս և զպարսաւորս յարձակել անկանել 'ի վե-րայ թշնամեացն, անդուստ 'ի վեր երևե-ցան Պարթևք. շուրջ յածեալք ընթա-նային՝ կամէին 'ի նեղքս զզօրն Հռոմայե-ցւոց փակել, և յամենայն կողմանց 'ի նո-սա խռով հարկանել։

Իբրև անդուստ թեթևազէն զօրականք Անտոնի 'ի վերայ դիմեցին նոցա, և Պար-թևք աղեղնաձիգք վերս բազում եդին նոցա և բազում ևս առին 'ի կապարեայ գնտակաց Հռոմայեցւոց և յաշտէիցն, տե-ղի տուեալք մեկնեցան. իսկ իբրև անդրէն միւսանգամ յարձակեցան 'ի վերայ Հռո-մայեցւոց, յայնժամ կեղտք մեծաւ զօ-րութեամբ ընդդէմ զայրուձին խաղացու-ցեալ՝ հարին և վարատեալ ցրուէին, զի և զօրն ողջոյն ոչ ևս յանդիման երևեցան Պարթևք։ Ապա յայնմանէ հրահանգեալ Անտոնիոսի, առեալ ամրացուցանէր փա-կէր ոչ զվերջապահ միայն զօրուն, այլ և զթևան կրկին հանդերձ արդնընկէց ա-րամբք և պարսաւորօք. և այնպէս չուէր խաղայր 'ի ձև կարգեալ քառակուսի, և պատուէր այրուձիոյն տայր հարկանել վա-

նել զԹշնամին 'ի հրոսակին նոցա, այլ ոչ յոյժ բացաձիգս հետամուտ լինել նց։ Ոյր աղագաւ և Պարթևք զաւուրս չորս ոչինչ պակաս քան զՀռոմայեցին մնա-սեալք, վայր մի լքան բեկան. և խորհէին ևս տեղի տալ գնալ՝ պատճառեալք զժա-մանակ ձմերայնոյն։

Բայց ապա յաւուրն հինգերորդի Փլա-վիոս Գաղղոս այր քաջամարտիկ և յանձ-նապատան, ունէր նա և աւագութիւն 'ի զօրուն, յառաջ մատուցեալ առ Անտո-նիոս՝ խնդրէր բազմաձեռն գունդ 'ի Թե-թևազէն վերջապահ զօրականէն, և այրու-ձի ևս յառաջապահ գնդէն. կամէր ինչ մի նահատակութիւն 'ի ներքս ընծայել։ Առեալ յինքն զզօրականն, նոքօք հան-դերձ 'ի դիմի հարաւ Թշնամեացն՝ որ յար-ձակեցան 'ի նա. բայց նա տեղի չետ խբրու զառաջինն և ոչ վերջոտնեցաւ 'ի գունդ սպառազէն հետևակացն. այլ այնպէս սնդեալ արձանացեալ՝ սոսկապէս արու-թեամբ շահատակէր 'ի գոռին։ Իսկ ան-դուստ զօրագլուխք վերջապահին տեսեալ զայրն մեկուսացեալ 'ի նոցանէն՝ առաքէին կոչէին, այլ նա անսաց և ոչինչ։ Եւ պատ-մեն՝ եթէ անգանօր և Ցիտիոս այր գան-ձաւոր բուռն հարեալ զդրօշակէն խնդրէր դարձուցանել յետս, և լուտայր Թշնամա-նէր զԳաղղոս՝ զի զայնչափ քաջ որեար 'ի կորուստ մատնէ. իսկ և անդուստ Գաղղոս նախատեալ զնա՝ և հրաման ևս տուեալ իւրոցն անդէն զոտս 'ի բոյս հարկանել,

վերջոտնեալ տեղի տայր Տիտիոս։ Բայց Գաղղոս խոյացեալ յայնժամ 'ի հանդիպոյ 'ի Թշնամիս անդր, փակեցաւ 'ի ներքսքանզի և բազումք 'ի Թիկանց կուսէն խուժեցին պատեցին, և նա չիմացաւ։ Իբրև այնպէս 'ի կողմանց կողմանց հարաւ վանեցաւ այրն, առաքէր խնդրէր Թիկունս. բայց յայնժամ՝ Թուի Թէ՝ սպառազինաց ղօրագլուխքն (յորոց մի էր և Կանիդիոս այր մեծազօր առ Անտոնիոսի) սիալ գործեցին ոչինչ դուշնաքեայ։ Քանզի համախումբ միանգամայն զփաղանգն պարտ էր ածել անդր, և նոքա պահ 'ի պահ արձակէին 'ի վայրն նուազունս. և այնպէս փոխանակեալք զանկեալսն՝ վայրիկ մի եւ՝ մինչև գիտացեալ՝ ողջոյն և զզօրն 'ի կորուստ մատնէին և 'ի փախուստ։

Բայց Անտոնիոս անդուստ 'ի շտապ տագնապի գիմեալ 'ի Ճակատէն հանդերձ սպառազէն գնդաւն՝ 'ի գիմի հարկանէր Թշնամեացն. և արագ արագ վարեալ ընդդէմ նոցա և զգունդն երրորդ ընդ մէջ փախստէիցն, զտեղի կալաւ ընդդէմ նահատակացն։ Եւ անկանէին յայնժամ ոչ ինչ պակաս քան զերիս հազարս, և վիրաւորք մնային ոգիք հինգ հազար ածեալք 'ի բանակետն։ Էր ընդ վիրաւորսն և Գաղղոս ինքնին, Թափ խոցեալ 'ի մարմինն 'ի ջորից նետից՝ յորմէ և մեռաւ իսկ։ Այլ Անտոնիոս յայց մնացելոցն էլեալ՝ խրախոյս քաջալերէր կարգայր. համակ յարտասուս հատեալ էր և 'ի խոր խոցեալ. բայց

նոքա զուարթութիւն 'ի դէմս բերեալ և
զնորա աջոյն կալեալ, աղաչէին գնալ և
անձին հոգ ունել և մի այնչափ սրտցաւու-
թեամբ վարել առ նոսա. և ինքնակալիւ-
բեանց կարգային զնա և ողջ զանձինս ա-
սէին 'ի քաջողջութեան նորա։

Եւ արդեօք՝ թուի երբէք կացեալ
յայնժամ և ո՛չ ոք 'ի զօրավարաց, որ լաւ
ևս որեար՝ իբրու զԱնտոնիոս՝ առ իւր իրմ-
բեալ ունիցի, ո՛չ 'ի կորովութեան քա-
ջութեան, ո՛չ 'ի համբերատար ժուժկա-
լութեան, և ո՛չ յառոյգ հասակին նոցա։
Իսկ 'ի շուք պատկառանաց զօրականին առ
զօրավարն, և 'ի մտերմութիւն հնազան-
դութեան նոցա, և 'ի խնդրել առհասա-
րակ տոհմկացն և անտոհմիցն և իշխանացն
և սոսկականացն՝ քան զաներկեանութիւն
փրկութեան անձանց՝ առաւել ևս շնորհս
և պատիւ ունել առ Անտոնիոսի, արդեօք
ոչինչ խոնարհագոյն գտաւ նա յայսոսիկ
և քան զհինսն անգամ Հռոմայեցւոց։ Եւ
պատճառք էին բազում՝ որպէս և կան-
խեցաք ասացաք. քաջազգութիւն զարմին
նորա և կորովութիւն ճարտարաբանու-
թեան նորա և անկեղծաւոր պարզութիւնն
և պարգևաբաշխ ձեռն և մեծապարգև ձիրն
և ախորժ զուարթամտութիւն առնն 'ի
կատակսն և 'ի քաղաքավարութեանն։ Առ
այսոսիկ՝ և ախտակից արդահատանք և
սրտցաւութիւն նորա յայնժամ առ վշտա-
ւեալս որեարն, և լիութիւն նորա առ այր
այր 'ի պէտս իւրաքանչիւր, քան զառողջն՝

առաւել ևս զխօթ և զվիրաւոր մարդիկն՝ յառաջամիտս յարդարեաց առ նա։

Բայց յաղթութիւն այն 'ի ժամուն այնպէս իմն խրախուսեաց զՊարթևսն զյուսաբեկսն և զսրատաթափսն, և արհամարհոտս Հռոմայեցւոցն առաւդրեաց, որպէս զի և զտեղի առեալ կացին նոքա զգիշերն մօտ բանակին նոցա, դէտ ակն կալեալ 'ի խուճապ տագնապի փախստեան նոցա, զի ապա հասեալ կալցեն ամայի զխորանս նց և ժողովեսցեն զառ և զապուր նոցա։ Այլ 'ի ծագել առաւօտուն հասին խմբեցան բոլորեցան անդր Պարթևք բազմութիւն մեծ յոյժ. և ասեն զայրուձին նոցա ոչինչ պակաս քան զչորից բիւրուց. քանզի և թագաւորն՝ որ ոչ մխեցաւ ինքն յայնժամ 'ի կռիւն, արձակեաց անդր և զանձնապահ զիւր գունդն, իբրու 'ի գործ անկասկածելի և հաստատուն նահատակուէ։ Այլ յայնժամ կամեցեալ Անտոնիոսի հրապարակախօս առ զօրն լինել, խնդրեաց պատմուճան արկանել զանձամբ գորշ՝ զի առաւել 'ի գութ շարժեսցէ. իբրև ընդդէմ բարեկամքն դարձան, եւ նա արտաքս ծիրանի արկեալ զզօրավարութեանն և հրապարակախօս լինէր. գովէր գրուատէր 'ի նոցանէ զյաղթականն, և եպերէր այպանէր զփախստեայն։ Անդ առաջինքն քաջալերը խրախոյս կարդային նմա, և վերջինքն 'ի չքմեղս եղեալ՝ 'ի ներքս զանձինս մատուցանէին 'ի տասանորդեան պատուհաս կամ որ զինչ և կամեսցի. միայն նա՝ զոր և աղաչէին իսկ՝

առ անգամ մի վախճան վչտին արասցէ և տխրութեան ոգւոյն. Իբրև զայն լուաւ Անտոնիոս՝ ձեռս 'ի վեր ամբառնայր, աղաչէր զդիսն, զի եթէ 'ի վրէժինդիր Քաջաց ոք զառաջին նորա զնահատակութիւն վանէ զգեղեցիկս, 'ի գլուխս անդր նորա միայն կուտեսցին ողջոյն տուգանքն, և զորականն ողջանդամ և յաղթական ելցէ:

Ապա յաւուրն երկրորդի յարուցեալ 'ի չու անկանէին Հռոմայեցիք ամրապահեստ զգուշացեալք. և նորանշան բանն երևեցաւ յայնժամ Պարթևաց 'ի յարձակելն իւրեանց: Քանզի որ հաստատն կարծէին նոքա վազել այնուհետև յաւաբ և 'ի կապուտ կողոպուտ նոցա՝ քան թէ 'ի կռիւ ինչ ընդ նոսա, իբրև միւսանգամ տեղատարափն սկսաւ նետից, հզօրացեալ ևս գտին նոքա զՀռոմայեցիս և քաջութեամբ նահատակեալս՝ իբրու որք անպարտասելիք ոմանք իցեն. ուստի և միւսանգամ սրտաբեկ սրտաթափ լինէին: Համայն և այնպէս՝ ընդ զառ 'ի թափ բլրոցն յիջանել Հռոմայեցւոց, անդրէն յարձակեցան 'ի նոսա Պարթևք. և տակաւ և յուշիկ 'ի խաղալ նոցա, սկսան տեղալ նետս. բայց գունդ վահանաւորաց մեծաց եկեալ հասեալ՝ 'ի ներքս առեալ փակեցին զթեթևազէնսն Հռոմայեցւոց, և ամրածածուկ զնոսա առնէին զինուքն. քանզի առաջինքն 'ի գուճս անկեալ՝ 'ի հանդիպոյ ունէին զվահանսն. իսկ որք զկնի նոցա՝ ամբարձեալք զվահանսն 'ի վերոյ նոցա՝ և

այնպէս մի ըստ միոջէ և այլքն։ Եւ ձեն հանդուցեալ յարկաց ծածկութիւն, տեսիլ զթատրոնի 'ի դէմս բերէր. և է այս ամուր ապաստանի զօրականին անկասկածելի ընդդէմ տարափոյ նետից՝ սահեցուցանել և 'ի դերևս հանել զնոսա։

Իսկ Պարթևացն կարծեալ յայնժամ՝ եթէ այնպէս 'ի դուռս անկանել Հռոմայեցւոցն նշան խապառ սրտաթափութեանն լցէ և վատելոյն նոցա, 'ի բաց զաղեղունսն եդեալ և 'ի բուռն զնիզակսն առեալ՝ յարձակեցան կռուել 'ի մօտոյ։ Անդուստ յանկարծ Հռոմայեցիք միաբան աղաղակ սաստիկ բարձեալ 'ի վեր վաղեցին, և հարեալ վանեալ աշտէիւք 'ի բուին զյարձակեալսն, զնահատակսն տապաստարկանէին, և զայլսն առհասարակ 'ի փախուստ դարձուցանէին։ Եւ օրինակ ապա զայս նահատակեցան նոքա յայնժամ և յաւուրսն որ զկնի. և Ճանապարհ հատանէին սակաւ յոյժ։

Ապա սկսաւ սուին Ճարակել 'ի զօրուն. և կռուով մարտիւ գտանէին նոքա ցորեան սակաւ. և պակասէր ևս նոցա աղօրիք, զի և շատ 'ի նոցանէն թողեալ էր զկնի. քանզի և գրաստք բեռնակիրք՝ կէսք սատակեալ էին, և կէսք բեռնաբարձք էին խոթից և վիրաւորաց։ Եւ պատմեն՝ վաճառել կապիճ մի ատտիկեցի զցորենոյ՝ յիսուն դրամակշռոց. և նկանք դարեղէնք վաճառէին հաւասարակշիռ արծաթոյ։ Ապա բանջարաց և արմատոց զհետ կրթեալ

նոքա, սակաւս գտանէին 'ի սովորական ուտելեացն: Ուստի և կարի նեղ հասեալ նոցա խոտաբուստ լինել յանուտելեացն, խոտ մի սկսան ճարակել մահաբեր առ 'ի մոռացափ կրիցն: Քանզի որ միանգամ ուտէր 'ի նմանէն, յիշէր այնուհետև և ոչինչ, և ճանաչէր և ոչինչ, և գործ նորա միակ այն էր՝ շարժել և թաւալել զամենայն քար, զոր միանգամ և գտանէր. իբրու որ գործ միայն այն ի՛նչ ամենայն փուքթոյ արժանի: Եւ ապա անդ էր տեսանել առհասարակ զդաշտն լցեալ մարդկամբ՝ կորաքամակք 'ի յերկիր, պարապեալք ճրդնէին 'ի պեղել հանել քարինս և փոխադրել այլուր: Իսկ 'ի վերջէ ժայթքեալ նոքա մաղձ, և այնպէս մեռանէին. քանզի և միակ դեղթափ ախտին պակասէր առ նոսա դինի:

Եւ պատմեն՝ եթէ յայնժամ 'ի մահ տարածեալ բազմաց, անդուստ և Պարթևաց անդուլ 'ի վերայ կացեալ, ստէպ ձայն բարձեալ գոչէր Անտոնիոս. "Ո՛վ բիւրք բիւրք": Հիացեալ էր ընդ բիւրան Քսենոփոնտեայ, որ 'ի վայր 'ի Բաբելոնէ խաղացեալ ընդ երկայն ևս ճանապարհ, և մարտ եղեալ կռուեալ ընդ յոքնաթիւ ևս թշնամեացն, ողջանդամք ապրեցան: Սակայն և այնպէս ոչինչ կարացեալ Պարթևաց միջամուխ 'ի բանակն լինել հռոմայեցւոց, և ոչ զկարգն նոցա խանգարել, և պարտեալք ևս բազում անգամ և 'ի փախուստ դարձեալք, սկսան միւսանգամ

խաղաղութեամբ վարեալ առ որս 'ի խըն-
դիր Եւանէին կերակրոյ կամ ցորենոյ, և
ցուցեալ ևս նոցա զկորովն թուլացեալ
զաղեղանց, ասէին՝ դառնալ յետս այնու-
հետև և հետամուտ ոչ ևս լինել նոցա,
բայց օր մի միայն կամ երկուս նուազունք
'ի Մարաց զհետ խաղացեն նոցա. վիշտ և
ոչ մի հասուցեն, այլ պաշտպանեացեն
միայն բացաձիգ գիւղից: 'Ի բանն յայսո-
սիկ՝ համբոյրս ևս յաւելին նոքա գրկա-
խառն և մարդասիրութեան հանդէս. որ-
պէս զի և մեծապէս վստահացան Հռո-
մայեցիք. և Անտոնիոս ինքնին լուեալ՝ ա-
ռաւել ևս ցանկացաւ չուել ընդ դիւրն.
քանզի և լուաւ ևս ասել՝ զի անջուրք լեռ-
նակողմանքն իցեն:

Ապա ընդ ուղի ընդ այն դէմ եղեալ
Անտոնիոսի, դայր ապա հասանէր 'ի բա-
նակ անդր այր ոմն 'ի Թշնամեացն՝ Միհրը-
դատ անուն քեռորդի Մոնեսեայ, այն՝
որ անկեալ ապաւինեցաւ առ Անտոնիոս,
և պարգևեցաւ 'ի նմանէ երիւք քաղաքօք:
Արդ եկեալ սա խնդրէր այր մի տեղեակ
Պարթևաց բարբառոյն կամ Ասորւոցն՝ խօ-
սել ընդ նմա. ապա չոքաւ տուն նա Աղեք-
սանդրոս Անտիոքացի 'ի մտերմացն Անտո-
նի. յայտնեաց նմա զանձն Միհրդատ և
յիշատակ ածեալ երախտեացն Մոնեսեայ՝
հարցանէր զԱղեքսանդրոս. տեսանիցէ՞ նա
'ի հանդիպոյ զգօտիս զբլրոցն բարձանց 'ի
հեռաստան անդր. ասէ Աղեքսանդրոս՝ և
կարի իսկ քաջ. կրկնեաց Միհրդատ և ա-

սէ. "Առ ստորոտովք դոցա աւադիկ 'ի դարանի անցեալ նասին ձեզ Պարթևք ամենայն զօրօք։ Քանզի և կից են բլրոց դիւրք դաշտացդ լայն և արձակ. և անդ սպասեալ մնան ձեզ, խաբանօք ածեալ զձեզ ունել զուղին զայն՝ թողեալ զլեռնակողմանն։ Արդ՝ ընդ լեռնակողմնդ հասանէ ձեզ ծարաւ և քիրտն՝ յոր և սովորեալ իսկ է ձեր. բայց գիտուն լիցի Անտոնիոսի, զի ուղի ընդ դիւրն հատանելով Կրասոսին նմա պատահեսցեն աղէտք"։ Իբրև զայս ասաց, գնաց մեկնեցաւ։ Իսկ Անտոնիոս առեալ զլուր բանիցն, տագնապեցաւ յանձն իւր. 'ի խորհուրդ կոչեաց զքարեկամսն և զՄարդացին զայն առաջնորդ ճանապարհին, որ և զնոյն տայր խորհուրդ։ Քանզի և ճարտար դիտէր այրն, զի թէպէտ և 'ի թշնամեացն ազատ էին, գժնդակ էր չու ընդ դիւրն առնել, իբրև անճանապարհ էր ուղին. և սիրալ ևս թափառելոյ մեծապէս գործէր 'ի վայրն, և գժուարին էր ուղիղ առաջնորդել։ Իսկ առապար ուղի լեռնակողմանն՝ ասէ՝ վիշտս չունի, բայց միօրեայ միայն ճանապարհորդել անջուր։

Ապա 'ի նոյն հաստատեալ Անտոնիոս՝ յուղի անկանէր գիշերի ընդ լեռնակողմն. հրաման տայր զօրականին ջրոյ պաշար բառնալ. և քանզի շատից պակասէին ամանք, կէսք՝ 'ի գլխանոցս, և կէսք 'ի մորթիս յայնժամ ջրաբարձք եղեն։ Իրազեկ Պարթևացն եղեալ չուոյն Անտոնիոսի, իսկ և իսկ՝ թէ-

պէտ և գիշերի՝ արտաքոյ հայրենի սովորութեանն զհետ պնդեցան նոցա։ Արդակն ծագեաց, և նոքա հասեալք 'ի վայրն և մարտ եդեալ կռուէին ընդ վերջ զօրուն Հռոմայեցւոց. սոքա 'ի ոքնութենէն և յաշխատութենէն խոնջք և վաստակք, զի և էր իսկ նոցա 'ի գիշերին յայնմիկ ասպարէզս հատեալ երկերիւր և քառասուն. և տեսեալ ևս յայնժամ այնպէս յեղակարծումն 'ի վերայ զթշնամիսն հասեալ, սրբոտաթափք լինէին. առ այս և ծարաւն 'ի կռուոյն երթալով երթայր և սաստկանայր. քանզի միանգամայն էր նոցա և չուառնել և ընդ հրոսակին կռուել։

Իսկ որ յառաջոյ գնային, պատահեցան նոքա գետոյ՝ ջուր ունելով ցուրտ և ականակիտ, բայց աղի և թունաւոր էր ջուրն. որ խիթս ածէր ըմպելեացն անդէն փեռեկեալ զորովայնն, և սաստիկ ևս տայր պապակել։ Կանուխ նոցա ազդ վասն այնորիկ արարեալ իսկ էր այրն Մարդացի, սակայն և այնպէս նոքա սանձակոտորք՝ առեալ ըմպէին։ Ջուրջ գայր Անտոնիոս, աղաչէր աղերսէր, վայր մի ևս համբերել ժուժալ, քանզի և էր անդ ոչինչ 'ի բացեայ գետ ըմպելի. առ այս՝ և ընդ հուպ գտցեն նոքա զուղին յառաջոյ՝ անկոխ այրուձիոյն և առապար, ուստի և անշուշտ յետս թշնամիքն դարձցին։ Զայս ասաց, և զմարտիկսն զօրուն կոչէր յետս, և տայր նշան խորանս հարկանել՝ զի ընդ հովանեաւ զօրականքն զովացին։ Իսկ 'ի խորանահար լինել նո-

ցա, անդէն տեղի ետուն Պարթևք ըստ հայրենի սովորութեանն. և գայր յայնժամ միւսանգամ Միհրդատ, և խօսեալ ընդ Աղեքսանդրի որ չոքաւ առ նա, խորհուրդ տայր յետ վայր մի հանգստեան զօրուն՝ չու առնել սնդով 'ի գետ անդր. զի ցայն վայր հետամուտք Պարթևքն լինիցին, և անդրագոյն չանցանիցեն նոքա: Լուեալ Անտոնիոսի զբանն յԱղեքսանդրէ, տայր նմա սկիհս բազումս ոսկիս և բաժակս՝ տանել տալ Միհրդատայ. նա առնուլ էառ որչափ ինչ միանգամ բաւեաց ծածկել ընդ հանդերձիւն, և գնաց 'ի բաց:

Ապա ժողովեալ Անտոնիոսի զխորանն մինչդեռ աւուր կայր, յուղի անկան՝ վիշտս և ոչ մի կրեալ 'ի թշնամեացն, սակայն ինքեանք ինքեանց դառնագին յարդարէին զդիշերն զայն և յոյժ ահագին: Քանզի 'ի զօրականէն կէսք մեռեան յայնժամ 'ի մահուանս և 'ի կապուտ կողոպուտ այնոցիկ՝ որ արծաթ ունէին ընդ իւրեանս կամ ոսկի. և աւար ևս հարկանէին զինչս զգրաստուցն, 'ի վերջէ ապա և յաղին յարձակեցան Անտոնիոսի. հարկանէին ջարդէին և յիւրեանս առեալ բաժանէին զրմպանակս և զարապիզս մեծագինս: Անդ շուինդն անհրնարին հարեալ առհասարակ 'ի զօրուն 'ի սխալանաց անտի, (քանզի կարծեցին հրոս տալ թշնամեացն և հարկանել վանել 'ի նոցանէն). որ աղագաւ և Անտոնիոս կոչեալ յայնժամ առ ինքն զՀռամնոս՝ զմի յաղատագրելոց անտի իւրոց անձնա-

պահացն, ստիպէր երդմնի ձեռն յանձին հարկանել, զի 'ի հրամայել նմա՝ սրով հարցէ զինքն և զգլուխն առցէ. զի մի կենդանուոյն ձերբակալ 'ի թշնամեացն լինիցի, և մի ևս 'ի մահուն ծանիցի։ Իսկ մինչդեռ անդանօր բարեկամքն յարտասուս հատեալ էին, և քաջալերէր ևս նմա կարդայր այրն Մարդայի, ասէր՝ մոտ իսկ լինել գեռոյն, քանզի և սիւգ ծաւալանայր նոցա խոնաւ վայրին և օդ ցողագին շնչէր նոցա, յորմէ և դիւր լինէր շնչելոյ մարդկանն. և 'ի ժամանակէն ևս ուղևորութեանն ցուցանէր նա զկատարած ուղւոյն, քանզի և կարճատեալ իսկ էր գիշերն։ Յայնմ պահուգայլին հասանէին անդր և այլք, տային գիտել զաղմուկ շփոթիցն յընչաքաղցութէ անտի զօրականին և յանիրաւութենէ առն ընդդէմ եղբօր։ Ուստի և 'ի խաղաղել խուժանին յայնժամ յանհնարին խռովութենէն, նշան տայր ապա Անտոնիոս բանակ հարկանել։

Իբրև առաւօտն մերկացաւ, և զինուորութիւնն կարգ առեալ գեղեցիկ հանդարտեցաւ, անդուստ 'ի վերայ հասեալ Պարթևաց՝ նեռաձիգ լինէին 'ի յետամնաց զօրուն, և Անտոնիոս նշան տայր մարտի թեթևազէն զօրականին։ Իսկ սպառազէնք ամրաձաձուկ գործեալ միւսանգամ վահանօքն ըստ առաջին օրինակին, արձանացեալ կացին ընդդէմ տարափոյ նեռից թշնամեացն, որ և իշխէին ոչ՝ մոտել 'ի նոսա։ Եւ այնպէս տակաւ ճողոպրեալք և

տարադէմ եղեալ յառաջապահեստի Հռոմայեցւոց, հասանէին 'ի գետ անդր։

Յայնժամ Անտոնիոս զայրուձին Ճակատեցուցեալ առ ափամբն 'ի գիմի Թշնամեացն հարկանել, անցուցանէր նախ ըզխօթան։ Ապա և մարտիկք ինքնին ընդհուպ յաջողեցան ըմպել 'ի գետոյն. քանզի Պարթևացն յակն զգետն արկեալք անդէն զլարս Թուլացուցանէին զաղեղանցն, և խրախոյս ևս Հռոմայեցւոց տային անցանել գնալ, և 'ի գովութիւն մեծապէս առնուին զքաջութիւն նոցա։ Իբրև անցին խաղաղութեամբ և վայր մի կազդուրեցան, անդէն 'ի չու անկանէին՝ ոչինչ այնպէս վստահացեալք 'ի Պարթևան։ Իսկ յաւուրն վեցերորդի յետ վերջին կռուոյն, էկեալ հասանէին նոքա յԵրասխ գետ՝ որ զՄարս անջրպետէ 'ի Հայոց աշխարհէն. բայց անցք գետոյն դժնդակ երևէր, զի խոր էր և ահագին. և համբաւ ևս հարեալ էր՝ դարանամուտ Թշնամւոյն անդանօր 'ի վերայ անկանել յանցս նոցա։ Բայց իբրև անվտանգ անցանէին և զոտս իւրեանց առեալ կայուցին յաշխարհին Հայոց, յայնժամ նոքա անշուշտ իբրու եթէ յանդնդոց ինն զերծեալք ծովուն և գեռ ևս զցամաք սեսեալք, այնպէս երկիրպագանէին երկրին. և այր յարտասուս հատեալ՝ ընկերին գիրկս ածէր առ ինդին։ Ապա գնացեալ շրջէցան նոքա ընդ երջանիկ աշխարհն. և այնպէս սովեալ մարդիկն յղփացեալք անխափր 'ի կերակուր, յախտս

ջերանէին ջրդողութեան և խիթից որո-
վայնի։ Բայց Անտոնիոս հանդէս զօրուն
արարեալ՝ գտանէ տասսատ անկեալ եր-
կուց բիւրուց հեռեակաց և չորս հազար
այրուձիոյ. ոչ ամենեքին նոքա 'ի պատե-
րազմի, այլ կիսով չափ և աւելի՝ յախտից
հիւանդութեանց։

Իսկ յետ հրաժարելոյն նոցա 'ի Փրա-
ատեանց, Ճանապարհ արարին նոքա ա-
ւուրս քսան և եօթն, և պարտեցին նոքա
զՊարթևս 'ի կռիւս ութևտասն թուով,
բայց ոչ հաստատուն և խպառ յաղթեցին
նոքա. զի և խուն մի և ոչ համբուն վանե-
ցին զնոսա։ Ուստի և քաջայայտ իսկ պատ-
ճառք եկաց Արտաւազդ Հայ, զի 'ի գլուխ
զմարտն զայն չտարաւ Անտոնիոս։ Քանզի
եթէ այն վեց հազար և բիւր մի այրուձիոյն՝
զոր առեալ 'ի բաց գնաց Արտաւազդ 'ի
Մարաց աշխարհէն՝ կացեալ մնացեալ էր
առ Անտոնիոսի, վառեալք այնպէս ըստ
Պարթևացն Լարգի և փորձք և հմուտք 'ի
կռուել ընդ նոսա, արդեօք 'ի փախուստ
զՊարթևսն դարձուցանել Հռոմայեցւոցն՝
սոքա զհետ մտեալ փախստէիցն սատա-
կէին զնոսա. որպէս զի և 'ի դամ մի պար-
տիլ նոցա՝ ոչինչ քաջալերէին այնուհետև
նոքա, կամ այնչափ նուազ չգրգռէին ըզ-
մարտ պատերազմին։

Յաղագս այսորիկ 'ի սրտմտութիւն բար-
կութեան առհասարակ բրդեալք՝ ատե-
պէին զԱնտոնիոս վրէժ առնուլ 'ի Հայոյն.
բայց նա քաջամիտ խորհրդով ոչ վան

մատնութեանն կշտամբեաց ինչ զնա և ոչ յառ նա սիրոյն թերացաւ և 'ի հիւրամեծար պատուոյն. զմոռաւ ածէր զանաւագուն զորուն իւրոյ 'ի ժամուն և զբազում կարօտութիւնն : Սակայն յետ ժամանակաց ապա միեալ միւսանգամ Անտոնի յաշխարհն Հայոց, և բազում խոստմամբք և հրաւիրանօք ածեալ ամոքեալ զնա գալ առ ինքն, կալաւ զնա և կապեաց և տարաւ յԱղեքսանդրիա, ուրանօր և յաղթանակեաց : Բայց ընդ յաղթանակին հանդէս նորա մեծապէս խոժոռեցան Հռոմայեցիք. քանզի զդեղեցիկ հանդէսն և ըզհոյակապ զնոցուն հայրենեաց՝ էտ ընծայեաց նա Եգիպտացւոցն 'ի շնորհս Կղէոպատրեայ : Այլ այսոքիկ յետոյ ուրեմն պատահեցին :

Իսկ յայնժամ նա ուղղոյն ձեպ տուեալ 'ի ժամանակ դառնաշունչ ձմերայնոյն և 'ի ձիւնաբերս անդուլ, կորուսանէր յուղղոյ այլ ևս ութ հազար 'ի զօրականէն. և իջեալ 'ի ծովն հանդերձ սակաւուք ոմամբք 'ի վայր մի ընդ մէջ Բերիտայ և Սիդոնի՝ որում անուն կարդային Աւան Սպիտակ, անդ մնայր Կղէոպատրեայ. իսկ 'ի դանդաղել նորա՝ նա թալկանայր յոգին. և անդէն 'ի գինեբբուս աղուացեալ՝ չհանդուրժէր յերկար 'ի սեղանի. և ստէպ յարուցեալ 'ի գինեբբուս՝ դէտակն կալեալ հայէր տեսանել զնա, մինչև էկն եհաս նա՝ ածեալ ընդ իւր հանդերձս բազումս և արծաթ զօրականին : Կէսք ասեն՝ եթէ զհան-

գերձան առնուլ էառ 'ի նմանէն Անտոնիոս. այլ յիւրմէ անտի արծաթոյն բաշխեաց զօրականին՝ կեղծաւորեալ իբրու եթէ նա տացէ։

Բայց զայնու ժամանակաւ 'ի վեգ եկեալ կագէին ընդ միմեանս արքայն Մաբրաց և Փրատորտէս Մար 6, որպէս ասեն՝ 'ի պատճառս անկածին Հռոմայեցւոց. և գրգռեալ յուզեցան իրքն՝ զի և զանգիտեալ երկեաւ Մարն անկանել յարքայութենէն։ Ոյր աղագաւ առաքէր կոչէր նա զԱնտոնիոս. խոստանայր միամտել ընդ նմա հանդերձ զօրուն և մարտ դնել կռուել 'ի միասին ընդ նմա։ Իբրև զայն լուաւ Անտոնիոս՝ մեծապէս խրախուսեաց. քանզի և որ միայն պակաս էր նմա 'ի վանել Պարթևաց՝ այրուձիոյ բազմութիւն և աղեղնաւոր որերոյն, այն 'ի ներքս ընծայեցաւ նմա. ոչ 'ի խնդրել ինչ նորա, քան թէ 'ի մարդասիրութեամբ ընդունել զնա։ Ապա կազմեցաւ հանդերձեցաւ Անտոնիոս միանգամ ելանել ընդ Հայոց աշխարհն, և խօսէր ընդ Մարին առ գէտուին Երասխայ՝ մարտ յարդարել պատերազմի։

Այլ 'ի ժամանակին յայնմիկ 'ի Հռովմ ցանկացաւ Հոկտաւիա ծովագնաց լինել առ Անտոնիոս. հաւանեցաւ կեսար՝ ոչ 'ի շնորհս ինչ քեռն՝ որպէս պատմեն բազմագոյնք 'ի մատենագրաց, այլ զի արհամարհութիւն գտեալ նորա՝ պատճառս ապա գեղեցիկ զկռուոյ մարտին 'ի ներքս բերցէ նմա։

Հասեալ Հոկտաւիա յԱԹէնս՝ նամակ առնոյր յԱնտոնիոսէ. հրաման տայր Հոկտաւեայ մնալ նմա անդէն յԱԹէնս, և տեղեակ ևս առնէր զնա իւրում արշաւանին։ Թէպէտ և 'ի խոր խոցեցաւ Հոկտաւիա և քաջ իսկ ծանեաւ զպատճառանսն, առեալ գրէր նմա պատասխանի՝ հարցանէր ուրանօր կամք ելցեն առաքել յղել զոր միանգամ ընդ իւր ածեալ էր. քանզի բազում յոյժ հանդերձանի զզօրականին ածեալ էր ընդ իւր Հոկտաւիա. շատ և գեղեցիկ և արծաթ, և շատ ևս պարգևաց ձիրս վասն զօրագլխացն և բարեկամացն։ Աւ այսոքիւք՝ ածէր նա ընդ իւր և երկուս հազար ընտիր ընտիր զօրականին՝ 'ի զէն 'ի զարդ համակ սպառազէն շքեղ վառեալ իբրև վաշտս ինն պրետորեանս։ Այլ և զՆիգրոս զոմն բարեկամ Անտոնիոսի առեալ արձակեաց առ նա Հոկտաւիա. որ զհրեշտակութիւնն կատարեալ գովութիւս ևս սկսաւ ճահաւորս և արժանիս խօսել զՀոկտաւիայ։

Բայց անգուստ լուր կղէոպատրէ առեալ՝ եթէ զնովաւ 'ի մրցել ելեալ է Հոկտաւիա, երկեաւ՝ եթէ յանկարծ նա ոգւոյն բարեսոյմութեամբն և կեսարուն զօրութեամբն, միանգամայն և գեղեցիկ քաղաքավարութեամբն և սպասարկութիւնն յանկուցեալ զԱնտոնիոս, վեհագոյն անկառուելն անցեալ կայցէ և իսպառ տիրասցի նա 'ի վերայ առն իւրոյ. ապա 'ի կեղծաւորութիւն խոնարհեցաւ Կղէոպատրէ և

ծիւրէր ծնդէր յառ նա սիրոյն, և առեալ զմարմինն նիհարացուցանէր անսուաղու-թեամբք։ Յերթալ առ նա Անտոնիոսի, ակնկառոյց լինէր իբրև յապուշ հարեալ և հիացեալ. իսկ 'ի մեկնել նորա՝ իբրու հաշեալ և թաղծեալ։ Թեակոխէր նա բաղում անգամ և արտասուագին զանձն ցուցանէր. այլ անդէն և արագ սրբէր զարտասուան և ծածկէր, իբրու այն որ զանխուլ պահէր 'ի նմանէ։ Եւ ձգնէր նա յայսոսիկ՝ մինչդեռ Անտոնիոս հանդերձէր կազմէր խաղալ յԱսորուոց և խմբել ընդ Մարին։

Յայնժամ ապա մարդելոյզք խնամոտք վե Կղէոպատրեայ՝ սկսան շշնջել քրթմնջել. այպանէին զԱնտոնիոս իբրու այր աննուէր և անցաւ, որ զայնպիսի կին 'ի մահ վարեսցէ՝ որ ոդին զնորա միայն ոգւոյն կախեալ կայ. և Թէպէտ և Հոկտաւիա զուգեալ ընդ նմա 'ի շնորհս եղբօրն իւրոյ և 'ի պէտս քաղաքական իրացն՝ զանուն տարցի զլծակցի, իսկ Կղէոպատրէ դշխոյ այնչափ որերոյ՝ անուանեալ կոչի հարճ Անտոնիոսի. սակայն և ոչ յանուանէ անտի խորշի ինչ նա և կամ խոժոռի, միայն թէ թոյլ նմա լիցի տեսանել զԱնտոնիոս և կենակից լինել ընդ նմա, յորմէ և վրիպեալ՝ արդեօք ո՛չ ևս նա հանդարտեսցէ 'ի մարմնի։

Ապա 'ի վերջէ ուրեմն այնպէս անհնարին շարժեցին զԱնտոնիոս, որպէս զի և զանգիտեաց յանձնասպան ինչ կրիցն Կղէոպատրեայ. դարձաւ եկն յԱղէքսանդրիա.

և երկայնէր ձգէր զերս Մարին յեղանակ դարնայնոյն. Թէպէտ և ասէին ևս՝ աղ-մկեալ յայնժամ խռովութեամբ զերսն Պարթևաց։ Սակայն և միւսանգամ դնա-ցեալ նորա առ Մարն՝ բարեկամութիւն հաստէր ընդ նմա. և առեալ 'ի կին միում յորդւոց իւրոց որ 'ի Կղէոպատրեայ՝ զմի 'ի դստերաց ալքայլին մանկահասակ, դար-ձաւ յետս. պատաղեալ այնուհետև ող-ջոյն 'ի մարտ քաղաքական։

Իբրև այս այսպէս կատարեցաւ, եդ 'ի մտի Կեսար եթէ թշնամանեցաւ Հոկտա-ւիա. և իբրև դարձաւ քոյրն յԱթէնայ, հրաման տայր նմա երթալ բնակել առան-ձինն. բայց Հոկտաւիա ասէր՝ երբէք չթո-ղուլ զտուն բնակութեան զառնն. նա և խրատ ևս 'ի նեղքս բերէր Կեսարու՝ զի թէ ոչ պատճառք այլ ելցեն նմա մարտին ընդ Անտոնիոսի, անդր 'ի բաց թողուլ զպատ-ճառս զիւրոյ անձինն. քանզի և բնաւ իսկ գեղեցիկ չէ՝ ասէ, զի ինքնակալք մեծա-մեծք՝ մին առ սէր միոյ ուրուք 'ի կանանց, և միւսն առ իանդին՝ 'ի մարտ քաղաքի յուզեսցեն զՀռոմայեցիս, Զայս ասէր Հոկտաւիա, և առաւել ևս յարդեանց անտի հաստատէր։ Քանզի և կայր մնայր նա բնակութեամբ 'ի տան Անտոնիոսի, իբրու որ անդանօր ինքնին մերձ կացցէ. և զամենայն փոյթ 'ի մէջ առնոյր 'ի բա-րի և 'ի քաջավայելուչ դաստիարակու-թիւն որդւոցն՝ ոչ որ յիւրմէն միայն, այլև որոց 'ի Փուլվիայ. և առեալ ժողովեալ

ևս զբարեկամն Անտոնիոսի որ 'ի Հռոմ՝ հետամուտ խնդրել բարձս աւագութեան կամ այլ ինչ, զօրավիգն լինէր նոցա առ Կեսարու 'ի յաջողութիւն իրացն։ Այլ 'ի գործոց ասսի նա յոչ կամաց իւրոց զեան գործեաց Անտոնիոսի. քանզի այնուհետև ասեցին զնա՝ զի անիրաւեցաւ առ այն-պիսի կին։

Բայց և ասելի գտաւ Անտոնիոս և 'ի բաժանարար գոլոյ անսի իւրմէ յԱղէք-սանդրիա առ որդիսն իւր. որպէս զի և ողբերգական իմն թուեցաւ բանն, և ամբարտաւանութեան հանդէս, և հռոմատեաց կիրք։ Քանզի 'ի մի վայր խմբեալ զժողովուրդն յլմբշարան անդր, ուրանօր գահոյս կրկին ոսկի եդեալ իսկ էր 'ի վերայ արծաթի բեմքին, մի վասն իւր և միւս ևս՝ վասն Կղէոպատրեայ, և այլ ևս զնրստագոյնք վասն որդւոցն, անդանօր առաջին հրատարակէր զԿղէոպատրէ թագուհի Եգիպտոսի և Կիպրոսի և Լիբիոյ և Կղեսուրայ, և տայր նմա բարձակից 'ի տէրութեան զԿեսարիոն՝ կարծեալ ծնունդ զառաջնոյն Կեսարու, որ յղի եթող անդ զԿղէոպատրէ։ Եւ ապա անուն կարդացեալ Ալքայից Ալքայք՝ որդւոցն որ ծնան 'ի նմանէ և 'ի Կղէոպատրեայ, տայր Աղէքսանդրի 'ի ձեռս զՀայոց աշխարհն և զՄարաց, և զաշխարհն Պարթևաց՝ 'ի նուաճել իւրում։ Իսկ Պտղոմեայ՝ զՓիւնիկէ և զԱսորիս և զԿիլիկիա։ Եւ անդէն ևս 'ի հանդէս ածէր բերէր զերկոսին որդիսն, զԱ-

ղէքսանդրոս հանդերձաւորէր ըստ Մա-
րացն օրինակի՝ պսակ ունելով և խոյր ուղ-
ղաբերձ. իսկ զՊտղոմէոս զարդարէր 'ի կո-
շիկ և 'ի քղամիդ և յարտախուրակ պսա-
կակալ. քանզի այս իսկ էր հանդերձանք
արքայիցն պայազատաց Աղէքսանդրի. իսկ
առաջինն էր Մարաց և Հայոց։ Եւ իբրև
մանկունքն ողջոյն եւտուն իւրեանց ծնո-
ղացն, միումն Թիկնապահք շուրջ կային 'ի
Հայոց, և միւսումն՝ 'ի Մակեդոնացւոց։
Իսկ Կղէոպատրէ և յայնժամ և յայլ ևս
ժամանակ ապա յելանել իւրում արտաքս՝
բարձեալ բերէր պատմուճան այլ զնուի-
ական Խիդեայ, և իբրու Ն՞ր Ի՞է՞ հրա-
պարակէր զանձն։

Ապա կեսար 'ի Հռոմ քաղաքի յայս-
պիսեաց ասսի 'ի ներքս բերեալ առաջի
Սինկղիտոսին, և սուէպ ամբաստան զնմա-
նէ կացեալ առաջի Ժողովրդեան՝ գրգռէր
զիսուժանն ընդդէմ Անտոնիոսի։ Բայց և
Անտոնիոս արձակեալ արս 'ի Հռոմ՝ ամ-
բաստան կայր զնմանէ. և էին նորա գլուխք
ամբաստանութեանցն, առաջին՝ զի զՍի-
կիլիա հանեալ կեսար 'ի Պոմպէոսէ, չէտ
նմա մասն 'ի կղզւոյ անտի. երկրորդ ան-
գամ՝ զի յանօթ առեալ 'ի նմանէ նաւս
'ի մարտ պատերազմի, ոչ դարձոյց առ նա։
Եւ երրորդ անգամ՝ զի 'ի բաց զնչխանա-
կիցն մերժեալ զԼեպիդաս յաւագութիւն
և յամենայն պատուոյ կարձեալ զնա,
յինքն տարաւ զնորա զօրն և զդաւառն և
զհան։ Եւ 'ի վերջէ՝ զի բաշխեաց ետ նա

գոգցես ողջոյն զԻտալիա իւրում զօրակա-
նին, և չեթող ինչ իւրոցն։

Այլ ամբաստանութեանցն պատաս-
խանի առնէր Կեսար, զի 'ի Լեպիդոսէ 'ի
բաց եհան զտէրութիւնն, քանզի անիրա-
ւէր և ստահակեալ էր նա 'ի նմա. և զի՝
և 'ի տիրապետութիւնան իւր բաժին հան-
ցէ նա Անտոնիոսի, եթէ և Անտոնիոս բա-
ժանեսցէ ընդ իւր զաշխարհն Հայոց. և զի
Իտալիա ինքնին երբէք չանկանի զօրականին
Անտոնիոսի, քանզի և ունին իսկ նոքա
զՄարս և զաշխարհն Պարթևաց. զորս և ընդ
տէրութեամբ նուաճեցին Հռոմայեցւոց՝
քաջութեամբ կռուեալ 'ի միասին ընդ զօ-
րավարին իւրեանց։

Արդ մինչդեռ տակաւին անդանօր յաշ-
խարհին Հայոց դեգերէր Անտոնիոս, և
լուր էառ զբանից այսոցիկ, վաղվաղակի
հրաման տայր Կանիդեայ՝ զի Լեգէոնս
վեշտասան առեալ ինչէ 'ի ծով. և ինքն
ածեալ ընդ իւր զԿղէոպատրէ՝ խաղաց
յԵփեսոս. անդր 'ի կողմանց կողմանց ե-
կին ժողովեցան խմբեցան ամենայն նաւք՝
ութ հարիւր թուով միանգամայն հան-
դերձ բեռնաբարձ նաւուքն։ Եւ էր զեր-
կերիւրն 'ի նոցանէն տուեալ նմա ինքնին
Կղէոպատրէ. թող զքսան հազար տաղան-
դաց նորա և զկերակուր բաւական առհա-
սարակ զօրուն 'ի մարտին։

Բայց Անտոնիոս իբրև ամբեալ 'ի Դո-
միտիոսէ և յայլոց՝ հրաման տայր նաւա-
գնաց Կղէոպատրեայ լինել յԵգիպտոս և

անդանօր ակն ունել էլից պատերազմին, կասկածեցաւ Կղէոպատրէ եթէ 'ի հնարից ինչ հոկտաւեայ միւռանգամ նա 'ի հաշտութիւն բերցի ընդ Կեսարու. արծաթ յոյժ տուեալ 'ի հաւանութիւն ածէր զԿանիդիոս խօսել ընդ Անտոնիոսի վասն նորա և ասել, եթէ իրաւունք չէն 'ի բացէ 'ի կռուոյն կացուցանել զկին՝ մեծապէս նպաստամատոյց 'ի բանին. առ այս՝ և ոչ օգուտ ինչ արդէօք սրտաբեկ զԵգիպտացիսն առնել՝ որոց բազում է նիզակակցութիւն 'ի նաւս նորա: Դարձեալ առ այս՝ խոնարհագոյն ինչ չէ Կղէոպատրէ յիմաստութեան՝ քան զայլս 'ի թագաւորաց նիզակակցաց նորա. այն՝ որ հարուստ ժամանակ առանձին առաջնորդեաց լայնածաւալ արքայութեանն, և հարուստ ևս ժամանակ էկաց ընդ նմա և վարժեցաւ յիրս մեծամեծս:

Յայսպիսեաց բանից (քանզի և պարտիսկ էր այնուհետև ամենայնին 'ի բուռն անկանել Կեսարու) ածեալ հաւանեցաւ Անտոնիոս: Խմբեալ ապա առհասարակ զօրուն, էլին նաւեցին 'ի Սամոս. և թարթափեալ կային անդանօր 'ի դրդանս և 'ի սփոփութիւնս: Քանզի զորօրինակ հրաման 'ի վերայ կայր արքայից և կուսակալաց և չորրորդապետաց, ազգաց և ազանց և քաղաքաց քաղաքաց որ ընդ Աորիս և ընդ Մէոլտիդէ և ընդ աշխարհն Հայոց և ընդ Լաւրիացւոց, առաքել ածէլբերել զամենայն պէտս զմարտի պատերազմին,

սապէս և պատուէր 'ի վերայ կայր ամենայն վարժապետաց արուեստին Դիոնիսեան՝ յառնել երթալ 'ի Սամոս. և 'ի ժամանակին՝ յորում գոգցես ողջոյն տիեզերք շուրջանակի յոգւոց հանէր և ողբայր, յայս և եթ կղզի աւուրս բազում ձայն հնչէր արուեստականաց և նուագաց. քանզի և հանապազ անդանօր լի էին թատերք, և զմիմեամբ դասք եւանէին պարերդուաց: 'Ի նմա և 'ի քաղաքաց քաղաքաց կատարէր զոհ, և մէն մի 'ի նոցանէն եղն մի առեալ առաքէր անդր. 'ի նմա և արքայք այր զարամբ եւանէին 'ի մեծահանդերձ կոչունսն և 'ի լիաձեռն պարգևսն. յոյր սակս և շնչիւն առհասարակ էր, թէ զիարդ օրինակաւ ապա զյաղթութիւնն ինքնին տօնախմբեսցեն, որք աստուծոյ ըզմարտին հանդերձանան այնչափ հոյակապս տօնեն դոքա:

Իսկ իբրև այս տօնք կատարեցան, առեալ տայր Անտոնիոս զքաղաքն Պրիենեայ Ճարտարացն արուեստին Դիոնիսեայ 'ի բնակութիւն, և ինքն անցեալ ՅԱԹԷՆՍ՝ դարձեալ մոլէր 'ի սփոփութեանց խաղս և 'ի թատերս: Բայց անդ յայնժամ ՅԱԹԷՆՍ նախանձաբեկ լինէր Կղէոպատրէ ընդ շուք պատուոյն Հոկտաւեայ 'ի քաղաքին. քանզի սէր մեծապէս հարկանէին նմա ԱԹԵՆացիք: Ապա հնարիմաց կինն բազմաձիր պարգևօք յինքն զժողովուրդն յանկուցանէր. անդուստ և նոքա վՃիռ հաստատեալ պատիւս ձօնել

և նմա, առեալ նուիրակս արձակեցին նմա 'ի տուն՝ զորոյց տալ նմա զվճռոյն. յորոց մի էր և ինքնին Անտոնիոս՝ իբրու որ արդէն քաղաքացի Աթենացւոց։

Իսկ յետ այսորիկ արձակէր Անտոնիոս արս 'ի Հռոմ քաղաք, հանել վարել զՀոկտաւիա արտաքս 'ի տանէն։ Եւ ասեն՝ ելանել նմա արտաքս առեալ ընդ իւր զամենայն զորդիսն Անտոնիոսի՝ բայց յերկրցագունէն ծնեալ 'ի Փուլվիայ (քանզի էր նա առ հօրն). ելանէր Հոկտաւիա, ելանէր և լայր. և 'ի խորս ևս խոցեալ էր՝ գուցէ կարծեն եթէ և ինքնին նա ի՞նչ պատճառք մարտին այնորիկ։ Բայց Հռոմայեցիք՝ քան մեծի աղէտիցն Հոկտաւեայ՝ առաւել ևս արդահատէին Անտոնիոսին. մանաւանդ որոց միանգամ տեսեալ ևս էր զԿղէոպատրէ, որ առաւել չէր նա քան զՀոկտաւիա ո՛չ 'ի գեղն և ո՛չ յառուգութեան հասակին։

Իսկ անգուստ Կեսար լուր առեալ այնպէս արագ և զժիրաժիր կազմութեանն Անտոնիոսի և զմեծապէս հանդերձանացն, երկեաւ եթէ անդէն յամարայնի գերդռեսցի նա 'ի կռիւն, տագնապեցաւ յանձն իւր. քանզի և բազում ինչ իրք պակասէին նմա, առ այս՝ և խոժոռեալ ևս յոյժ էին մարդիկն վասն ծանրութեան հարկացն՝ զոր հանէր։ Քանզի այլք զչորրորդն զպրտղոց իւրեանց, իսկ աղատագրեալքն հարկս հարկանէին զութերորդն զգոյից, ուստի և առհասարակ քրթմնջիւն էր զնմանէ. և

Իտալիա ողջոյն լի էր խռովութեամբ և ամբոխիւ. վասն որոյ և 'ի մեծաց վրիպակացն Անտոնիոսի համարեցաւ և ժամանակաճառութիւնն նորա յայնժամ 'ի կռիւ անդր. զի ժամ պարապոյ եւ Կեսարուն պատրաստութեան, և խաղաղելոյ ամբոխիցն. քանզի և ժողովուրդք թէպէտ և 'ի հարկել անդ դառնացեալք՝ յետ հարկելոյն հանդարտէին:

Բայց յայնժամ առ Անտոնիոսի Տիտոս և Պլանքոս բարեկամք նորա աղք հիւպատեանք, թշնամանեալք 'ի Կղէոպատրեայ՝ (քանզի և մեծապէս ընդդէմ դարձան սոքա՝ չկամէին եթէ մերձ 'ի կռուին կայցէ կինն,) ապա եղին փախեան նոքա և չոքան առ Կեսար. և դուշակ լինէին նմա վասն կոտակին Անտոնիոսի. քանզի և էին իսկ նոքա տեղեակ գրելոցն 'ի նմա: Էր կոտակն ինքնին յաւանդ եդեալ առ Վեստեան կուսանան. առաքեաց Կեսար և խնդրեաց զայն 'ի նոցանէն. նոքա ասէ յանձն չառին, այլ ասէին՝ ինքնին Կեսարու գալ և առնուլ՝ եթէ կամեսցի: Ապա չոքաւ առ նոսա Կեսար և առեալ, նախ առանձին ինքն ընթերցեալ զկոտակագիրն, տողս նըշանակէր 'ի նմա արժանի ամբաստանութեան. ապա 'ի մի զՍինկղիտոսն խմբեալ՝ ընթեռնոյր յանդիման. այլ բազումք այն էին յատենին՝ որ խոժոռեցան. քանզի և օտարոտի իրս երևէր և դժնդակ՝ մարդոյ կենդանւոյ համարս տալ վասն որ զկնի մահուան իրացն: Իսկ 'ի կոտակի անդ ա-

ռաւել իմն ՀԳՆԷր կեսար զբան յուղարկաւորութեան թաղմանն։ Քանզի և պատուիրէր 'ի նմա Անտոնիոս, զի թէպէտ և 'ի Հռոմ մեռեալ՝ զմարմին իւր շքով անցուցեալ ընդ մէջ հրապարակին՝ առաքեսցեն յԱղեքսանդրիա առ Կղէոպատրէ։

Առ այս և Կալովինոս բարեկամ կեսարու՝ յամբաստանութիւնս ՀԼԱՍՈՒՆ Անտոնիոսի վասն Կղէոպատրեայ 'ի ներքս մատուցանէր պայն, զի առեալ ընծայեաց նա Կղէոպատրեայ զմատենադարանն զՊերգամեայ. յորս էին թուով քսան բիւր մատեանք միաթերթք։ Եւ զի՝ ուրեք 'ի կոչունն յանդիման բազմաց յարուցեալ նա ՀՄՇԷր զոտն Կղէոպատրեայ 'ի պայմանադրեալ խորհրդոց։ Եւ զի՝ և յանձին կալաւ նա յանդիման իւր ողջունել Եփեսացւոց զԿղէոպատրէ՝ անուն նմա կարդացեալ իւրեանց Տիրուհի։ Եւ զի՝ և բաղում անգամ յիրաւաբանել նորա 'ի բեմէն առ ՀՈՐՐՈՐԴԱՊԵՏս և առ թագաւորս, ընդունէր պնակս տուփանաց յեղինգնաքարէ և 'ի բիւրեղէ՝ առաքեալ 'ի Կղէոպատրեայ, և անդէն ընթեռնոյր նա զնոսա։ Եւ զի էր երբեմն՝ յորժամ անդ փուրնիոս այր ազագամեծար և ՀԱՐՈՏԱՐԱԲԱՆ առաւել քան զամենայն Հռոմայեցիս՝ ատենաբանէր առաջի Անտոնիոսի, շալակաւ յանցանել Կղէոպատրեայ ընդ հրապարակն, Անտոնիոս անդէն ընդ տեսանելն զԿղէոպատրէ՝ 'ի վեր վազեաց և թողեալ զդատն, այնպէս անՀնագրաւ զՀետ շալակին յու-

զարկէր զնա։ Այլ սակայն կարծեալ այն-
պէս էր՝ 'ի շատ ինչ կրս յայնժամ ստեալ
Կալովիոսի։

Բայց 'ի Հռոմ բարեկամք Անտոնիոսի
շուրջ ընթացեալք 'ի քաղաքին՝ աղերս
արկանէին խուժանին վասն նորա. և ա-
ռեալ ևս զԳեմինիոս 'ի Թուոյ իւրեանց՝
արձակեցին աղաչել ինքնին զԱնտոնիոս
պահ զգուշութեան ունել անձին և մի
անկանել յիշխանութենէն և թշնամի հրա-
տարակել Հռոմայեցւոց։ Հասեալ Գեմի-
նիոս յԵլլադա, կասկածեցաւ Կղէոպա-
տրէ եթէ վասն Հոկտաւեայ խօսել եկեալ
իցէ այրն։ Արդ թէպէտ և յայնժամ հա-
նապազ ծանակ Գեմինիոս լինէր 'ի ժամ
սեղանոյն. և տեսանէր ևս զանձին անար-
գութիւն՝ 'ի յետին բազմեցուցեալ 'ի բար-
ձին, ժուժայր համբերէր այրն՝ դէտակն
կալեալ ժամուն խօսել առանձինն ընդ
Անտոնիոսի։ Իսկ իբրև անդէն յընթրիան
հրամայեցաւ նմա ասել զպատճառ զիւրոյ
գալստեանն, ետ պատասխանի Գեմինիոս.
եթէ են իսկ նորա բանք խօսել ընդ Ան-
տոնիոսի 'ի լրջութեան ժամուն նոցա. իսկ
զոր նա ճարտար գիտէ և 'ի լրջութեան և
'ի գինեհարութեանն, բնաւ իսկ լաւ իցէ
արդեաք տեղի տալ Կղէոպատրեայ՝ գնալ
յԵգիպտոս։ Արտմտեալ Անտոնիոսի ընդ
բանն, ասէ Կղէոպատրէ. "Քա՛ջ իսկ գոր-
ծեցեր ո՛վ Գեմինիէ, զի խոստովան զՃըշ-
մարտութիւնն եղեր կանուխ քան զխոշ-
տանգանս տանջանաց,,։ Եւ ապա Գեմի-

նիոս յետ աւուրց սակաւուց փախուցեալ անտի՝ դարձաւ 'ի Հռոմ։

Իսկ յետ այնորիկ հացկատակ որեարն Կղէոպատրեայ 'ի բաց վարեցին և զբաղումս ևս այլ 'ի բարեկամացն Անտոնիոսի. զի և հանդարտէին իսկ ոչ նոքա խեռութեան արանցն և խեղկատակութեանն. էր 'ի նոսա և Մարկոս Սիղանոս և Դեղղիոս պատմագիր. որ զանգիտեալ իմն ասէր և 'ի գաւանաց ինչ Կղէոպատրեայ, իրազեկ եղեալ 'ի Գղաւկոսէ բժշկէ։ Եւ էր նա գրգռեալ զԿղէոպատրէ յասել իւրում երբեմն յընթրիս, եթէ նոցա քացախ մատուցանիցի, յորժամ անդ 'ի Հռոմ Սարմենտոս գինի քամէ զփաղերինեանն։ Եւ էր այս Սարմենտոս՝ մանուկ 'ի զբօսեցուցչաց անտի Կեսարու, որոց անուն կարգան Հռոմայեցիք Տէլիա, Բերկրանք։

Արդ յորժամ կազմեցաւ պատրաստեցաւ Կեսար, վՃիռ տային այնուհետև մարտի պատերազմի ընդդէմ Կղէոպատրեայ, և հանել յԱնտոնիոսէ զտէրութիւնն՝ զոր ընդ իշխանութեամբ գրաւեաց նա կնոջ։ Եւ ասէր ևս յայնժամ Կեսար՝ այնպէս իմն դեղեալ դիւթեալ զԱնտոնիոս, զի և այնուհետև տէր անձին չէր նա. և թէ՝ մարտ ընդ Հռոմայեցիս եդեալ կռուին Մարդիոնն ոմն նեբքինի, և Փոթինոս ոմն, և Իրաս ոմն կին վարսայարդար Կղէոպատրեայ, և Քարմիոն անուն. քանզի 'ի սոցա ձեռն առաջնորդէին իրք տէրութեանն բազմագոյն մասամբ։

Եւ ասեն յայնժամ, մինչչև գրգռեալ մարտին պատահել նշանացս այսոցիկ. Պիսաւրա քաղաք ժառանգութեան Անտոնիոսի՝ յորում գաղթական բնակեցոյց նա մօտ յԱգրիա, հողաթաւալ անդնդասոյզ լինէր։ Դարձեալ և մի 'ի քարեղէն անդրեաց Անտոնիոսի կանգնեալ յԱլբա, քիրսն վիժէր աւուրս բազումս. և թէպէտ ջնջէին սրբէին՝ չկասէր քիրսն։ Առ այս՝ և 'ի դեգերել նորա 'ի Պատրէս, կայծակնահար հրդեհեցաւ մեհեանն Հերակլեայ։ Նա և յԱթէնս Դիոնեսիոս 'ի Հսկայամարտութեանն 7, հողմավար թաւալգլոր եկեալ հոսէր 'ի թատրոն. զի և զձեռս իւր 'ի վեր տանէր Անտոնիոս 'ի Հերակլէս. և 'ի քաղաքավարութեան կենացն ճգնէր նախանձաւոր Դիոնիսեայ լինել. և տայր կարդալ զանձն Դիոնեսիոս կրսեր՝ որպէս և ասացաք։ Եւ նոյն մրրիկ դարձեալ փոթորկեալ՝ վանեաց ի հար յԱթէնս զանարի անդրիան զԵւմենեայ և զԱտտալոսի՝ և էին այն անդրիք վերասառեալք՝ Անպոնիոսի, և տապալ յերկիր կործանէր զնոսա միայն յայլոց բազմաց՝ որ կային անդ։ Առ այսոքիւք և յաւագ նաւն Կղէոպատրեայ՝ անուանեալ Անտոնեան՝ նշան տեսանէին նորասքանչ. քանզի ծիծառունք բոյնս եդեալ 'ի նմա 'ի նեղքոյ խեղացն, 'ի վերայ հասին այլք 'ի ծիծառանց և 'ի բաց զառաջինսն վարեալք՝ սատակէին զձագսն։

Էր այնուհետև հասեալ ժամանակ մարտին, և էին Անտոնիոսի նաւք 'պատերազ-

մականք ոչինչ պակաս քան զՀինգ հարիւր. յորս էին բաղումք ուԹ կարգեան և տասն կարգեան Թիւոց, զարդարեալք շքեղ և փառաւորք յոյժ. էին նորա և տասն բիւր հետևակաց և բիւր մի և երկու հազար հեծելոց. և Նիզակակից խմբեալ կային ընդ նմա արքայք բաղումք 'ի Ներքոյ ձեռին նորա: Բոկքոս Լիբէացւոց. Տարկոնդեմոս վերին Կիլիկիոյ, և Կապադովկիոյ Արքեղայոս, իսկ Պափղագոնիոյ Փիղադեղփոս, իսկ Կոմմագինեայ Միհրդատ, և Ատաղաս Թրակիոյ: Այս ամենայն Թագաւորք էին ընդ Անտոնիոսի: Բայց և Պողեմոնն արձակեաց նմա զոր 'ի Պոնտոսէ. և Մանքոս յԱրաբիոյ. սակէս և Հերովդէս Հրէայ. դարձեալ և Ամիւնտաս արքայ Լիւկասնացւոց և Գաղատացւոց: Առ այսքիւք՝ և յարքայէն Մարաց եկն առ նա զոր 'ի Թիկունս:

Իսկ անդուստ և բանակ Կեսարու կազմեալ վառեալ կայր երկերիւր և յիսուն նաւուք պատերազմի, և ուԹ բիւրուք հետևակաց, և այրուձի՝ որչափ և Անտոնիոսին: Եւ տերուԹիւն իշխանուԹեանն Անտոնիոսի ձգեալ տարածէր յԵգիպտայ և 'ի Հայոց աշխարհէն մինչև 'ի Յոնիսիոն և 'ի Լիւբիկեցիս. իսկ Կեսարուն՝ 'ի Լիւբիկեցւոց անտի ընդ միջոցն որ է մինչև յՈվկէանոսն արևմտեան, և յՈվկիանուն մինչև 'ի ծուին Տիւրրենեան և Սիկիլեան. առ այս՝ և ընդ ձեռամբ էր Կեսարու ողջոյն մասն Լիբիոյ՝ որ կայ հանդէպ Իտալիոյ և Գա-

զատիոյ և Իբերիոյ՝ մինչև 'ի Հերակլեան արձանն։ Իսկ էր Անտոնիոսին՝ միւս մասն 'ի Կիւրենեայ մինչև յԵթովպիա։

Բայց Անտոնիոս այնչափ ինն կրթեալ 'ի մեծարանս երեսաց կնոջ, որպէս զի և հզօր յոյժ գոլով նա ցամաքին բանակաւ, առեալ 'ի նաւականն ապստարէր զամենայնն 'ի շնորհս Կղէոպատրեայ. Թէպէտ և տեսանէր ևս, զի զօրավարք եռաթիոց առ պակասութեան խուժանին նաւաց, յափշտակէին յԵլլադայ՝ 'ի վերայ այլոց աղէտից նորա՝ զուղևորս և զնշանս և զհրնձողս և զպատանեակս. և նաւքն նորա չէին ևս այնպէս կազմ և պատրաստք, զի շատից 'ի նոցանէն նուազունք էին թիավարք, ուսուի և ծանրանաւեալք գնային։ Իսկ կեսարուն նաւք՝ թէպէտ և ոչինչ այնպէս բարձունք և յաղթք, թեթևք էին և արագաշարժք, և նաւաստիք 'ի նմա կատարեալք թուով։ Եւ այսպէս ապա կազմեալ պատրաստեալ նաւահանդիսին նորա 'ի Տարանտոն և 'ի Բրինդեսիոն, առաքէր ազդառնէր Անտոնիոսի մի ևս ժամավաճառութեամբ զզօրն խաղացուցանել. քանզի և անարգել շնորհեսցէ իսկ նա հանդիսին նորա նաւակայանս և նաւահանդիստս. դարձեալ և զնուր հետևական յետս 'ի ծովափանցն նհանջեսցէ ասպարէզ մի, մինչև զօր նորա յանդորրու 'ի ցամաք ելեալ բանակ հարցէ։ Իսկ անդուստ և Անտոնիոս մեծապանծ ճոխացեալ, թէպէտ և երիցագոյն ևս քան զԿեսար՝ ձայն տայր նմա 'ի

հանդէս մենամարտիկ. և եթէ յայնմանէն տեղի տայ, հրաւէր կարդայր նմա մարտ մղել բանակացն 'ի Փարսաղիա, որպէս անդ ուրեմն կեսար և Պոմպէոս:

Բայց յայնժամ կեսար՝ մինչդեռ Անտոնիոս զտեղի առեալ կայր յԱկտիոն 'ի նոյն վայր՝ ուր կայ այժմ Նիկոպոլիս, ա-ճապարեալ անցեալ ընդ Յոնիսիոն եհաս կալաւ զԵպիդոռոսի զաւանն՝ որ անուանեալ կոչի Տորիւնէ: Սրոտաբեկ յայնժամ եղեալ Անտոնիոս (քանզի և ցամաքին զօրք նորա յեռամենացք եղեն), անդուստ կղէոպատրէ հեգնեալ ասէր. "Եւ զի՞նչ ուրեմն դժնդակ իցէ, եթէ դադարեալ նըստի կեսար 'ի վերայ Տորիւնեայ 8 ,,:

Ապա Անտոնիոս յառաւօտուն պահու 'ի խաղալ անդ Թշնամեացն, երկեաւ եթէ հասեալ կալցէն նոքա զնաւսն Թափուր 'ի մարտկաց, առեալ վառէր զԹիավարսն. և կարգէր դասաւորէր այնպէս 'ի ցոյցս 'ի վերայ տախտակամածին, և ամբարձեալ կազմ առ 'ի կախ զԹիակսն յաջմէ և յահեկէ նաւացն, դարձուցանէր զառաջակողմն նոցա ընդդէմ Թշնամեացն 'ի բերան նաւահանգստին Ակտեայ՝ իբրև կազմ պատրաստ Թիավարօք 'ի կռիւ մարտի. յորմէ և կեսար դաւեալ 'ի խաբանացն, տեղի տուեալ վերջոտնէր: Թուի Թէ բազում աչալրջութեամբ եհատ Անտոնիոս և ըզջուրն 'ի Թշնամեաց, փակեալ զայն և արգելեալ յամբարտակս. զի և այլոց վայրաց ՝չուրջանակի սակաւ էր ջուրն և չար:

Իսկ և առ Դոմիտիոս վարեցաւ նա մեծապէս մարգասիրութեամբ ընդդէմ կամացն Կղէոպատրեայ։ Քանզի յախտանալ Դոմիտեայ ջերմամբ՝ էլեալ 'ի մակոյկ մի անցանէր առ Կեսար. և թէպէտ և յայնժամ 'ի խոր խոցեցաւ Անտոնիոս, առեալ առաքէր առ նա զամենայն աղին նորա հանդերձ բարեկամաքն և ծառայիւք։ Իսկ Դոմիտիոս սրտառուչ եղեալ ընդ խայտառակեալ անհաւատարմութեանն և մատնութեանն, վաղվաղակի առ ցաւ սրտին մեռանէր։ Բայց լքին թողին յայնժամ զԱնտոնիոս՝ և Ամիւնտաս և Դէյոտարոս՝ 'ի կողմն անցեալք Կեսարու։

Եւ այնպէս յամենայնի վատթարեալ յայնժամ նաւահանգիստն Անտոնիոսի, և վերջացեալ ևս առ օրին հաստատութիւն տալ նաւացն, միւսանգամ դառնայր նա 'ի խորհուրդ բանակին ցամաքի։ Նաև Կանիդիոս յայնժամ զօրավար բանակին տեսեալ զմեծապէս վտանգն, շրջէր 'ի խորհրդոյն և իրատ տայր Անտոնիոսի զԿղէոպատրէ ինքնին առնուլ արձակել 'ի բաց. և տեղի տուեալ 'ի Թրակիա կամ 'ի Մակեդոնիա՝ անդանօր մարտ մղել 'ի ցամաքի. զի և Դիկոմէս արքայ Գետայց խոստանայր նմա առաքել 'ի Թիկուն զօր սասանիկ. և ասէր ևս Կանիդիոս՝ ամօթ և ոչ մի ինչ զծուէն տալ շնորհել Կեսարու, այն՝ որ հրահանգեալ իսկ էր 'ի նմա 'ի Սիկիլեան մարտին. սակայն դժոխրամբերելի կիրք ինչն և դժպհի՝ եթէ Անտոնիոս քա-

ջափորձ առաւել 'ի կռիւ ցամաքին՝ 'ի գործ ոչինչ զկորովութիւնն վարեալ և զդեղեցիկ կազմութիւն զամբաւից զօրուն, 'ի նաւան բաժանեալ քայքայեսցէ զզօրութիւնն։ Յայսր ամենայնի վերայ զօրացաւ տիրացաւ Կղէոպատրէ, և տայր վճիռ 'ի ներքս բերել զնաւամարտ պատերազմին. ինքն դէտ ակն կալեալ էր 'ի փախուստ, և զիրսն իւր հանդերձեալ՝ ո՛չ այնչափ 'ի յաղթութիւնն նպաստամատոյց, քան թէ 'ի հեշտին փախուստ՝ 'ի վատթարել իրացն։

Այլ անդանօր 'ի վայրին էին սրունք երկայնաձիգք մինչև 'ի նաւակայս անդր բանակին. և ընդ այն վայրան սովորէր Անտոնիոս անցանել գնալ անկասկած։ Լուր առեալ Կեսարու 'ի միոյ ուրուք 'ի ծառայիցն, յասել նորա՝ եթէ մարթ է ըմբռնել զԱնտոնիոս յիջանել նորա ընդ սրունս ընդ այն, առաքեաց անդր դարանամուտս. որ և այնչափ յաջողեցան նոքա, զի և զայրն յառաջընթաց Անտոնիոսի ձերբակալ առնէին, քանզի և կանուխ վաղեցին նոքա արտաքս 'ի դարանէն. իսկ Անտոնիոս յայնժամ զոտս արձակեալ 'ի խուճապ տագնապի մազապուր ճողոպրէր։

Արդ իբրև հաստատեցաւ խորհուրդ նաւամարտութեանն, առեալ Անտոնիոս այրեր զԵգիպտացւոց զնաւան՝ բայց 'ի վաթսնից. և կազմեաց պատրաստեաց զլաւան և զյաղթան 'ի նաւաց՝ յերեքկարգեան թիոց մինչև 'ի տասնկարգեանն, և ամբարձաւ 'ի նոսա երկուս բիւրս զօրականաց

սպառազինաց, և երկու հազար՝ աղեղնաւորաց։ Եւ ասեն՝ եթէ անդ այր ոմն հետևակամարտ քաջ 'ի գնդապետաց անտի՝ որ և 'ի բազում պատերազմունս զինուորեալ ընդ Անտոնիոսի և նորա համակ լի էր սպեղաբ մարմնին, անցեալ յայնժամ մեռ առ Անտոնիոս, յոգւոց հանեալ ասէր. "Եւ առ ի՞նչ ապա քո՝ ոմ ինքնակալ՝ յերկուացեալ է ընդ վերոս ընդ այսոսիկ և ընդ այս սուսեր. ապաստան եղեալ է քո 'ի լաստափայտս չնչինս։ Մարտ 'ի ծովու թող Եգիպտացիք եղեալ կռուեսցին և Փիւնիկեցիք. իսկ մեզ տուր զցամաք, ուր հաստաբուն ոտիւք՝ վարժեցաք մեք կամ մեռանել կամ յաղթել թշնամեաց"։ Զետ պատասխանի Անտոնիոս, այլ ձեռամբացի և երեսաբ չասի ակնարկի արարեալ առնն՝ իբրու խրախոյս քաջալերի կարդալով նմա, անց գնաց յուսակոտուր և ինքն գլխովին. որպէս զի և 'ի խնդրել անդ նաւապետացն թողուլ լքանել զառագաստն, նա հրաման տայր առնուլ ընդ իւրեանս 'ի նաւին. պատճառեալ՝ զի մի ոք 'ի թշնամեացն փախստեամբ ճողոպրեսցի։

Բայց զայն օր, դարձեալ և զաւուրս երիս ըստ նմանէ՝ ծփեալ ծովն 'ի սասակաշունչ հողմոց սանձէր զդոռն. իսկ 'ի հին գերորդումն աւուր դադարեալ հողմոյն և հանդարտեալ ծովուն, դրդռեցան 'ի մարտ։ Զաջոյ թևն ունէր ինքնին Անտոնիոս և Պոպղիկողաս. իսկ կելիոս՝ զձախոյն. և 'ի

միջոցին կային Մարկոս Հոկտաւիոս, և Մարկոս Ինտէյոս։ Իսկ անդուստ Կեսար զԱգրիպպաս ընծայէր 'ի զօրավարութիւն ձախոյն, և յանձն իւր առնոյր զաջոյ թևն։ Իսկ ցամաքին զօրու Անտոնիոսին առաջնորդէր Կանիդիոս. և Կեսարուն՝ Տաւրոս. և կրկին այս զօրավարք ճակատեալ 'ի կարգ պատերազմի առ ափամբն, այնպէս արձանացեալ կային 'ի խաղաղութեան։

Բայց յինքնակալաց անտի յայնժամ Անտոնիոս ճեպով ընթանայր գնայր ամենայն ուրեք թեթևընթաց նաւու, և 'ի յաղթահարուստ ամբութենէն իւրոց նաւացն քաջալերէր զզօրն կորովի մարտ մղել իբրև 'ի ցամաքի, և պատուէր տայր զեկավարացն զտեղի առնուլ ընդդէմ թափոյ հրոսակին թշնամեաց, արձանացուցեալ այնպէս զնաւսն իբրու 'ի խարսխի՝ պահ կալեալ 'ի դժուարամատոյց կիրճ նեղուցին։ Իսկ Կեսար՝ ասէն՝ եթէ կանուխ ընդմուտ առաւօտուն էլ արտաքս 'ի խորանէն. և շրջեալ տեսանել զնաւսն, պատահեցաւ առն ումեմն՝ որ էշ վարէր. եհարց զանունն, և ծանուցեալ զնա, ետ պատասխանի այրն. "Անուն իմ Եւտիքոս է (այս է՝ Բարեբաղդ). և է իսկ իշոյն՝ Նիկոն (այս է՝ Յաղթող)"։ Ուստի և Կեսար զայն վայր զարդարեալ յետոյ 'ի ցուցակս նաւացն, կանգնէր անդանօր և էշ մի և այր մի 'ի պղնձոյ։ Ապա և զայլևս կողմանսն զճակատամարտին 'ի զնին արկեալ, եկեալ 'ի նաւ իւր յաջոյ թևն, անդուստ դէտ-

ակն կալեալ հայէր հիացմամբ 'ի թշնամին, զի այնպէս անշարժք ամենեքին կային 'ի կիրճս իւրեանց. զի և ըստ ական կշռելոյ՝ իբրև խարսխեալք ոմանք երևէին նաւք նոցա։ Եւ հարուստ ժամ այնպէս կարծեալ զնոսա, ուստեր կառեալ և զիւրան 'ի բացեայ իբրև ութ ասպարիսաւ։

Էր ժամ վեցերորդ աւուրն, և ծովն ծփեալ 'ի հողմոյն, ոչինչ այնուհետև հանդարտեցան Անտոնիոսեանք. ապաստան 'ի բարձրութիւն լաստափայտիցն եղեալք անարեաց՝ իբրու անվանելեաց ոմանց, այնպէս յառաջ խաղացին 'ի ձախոյ թևոյն։ Իբրև զայն ետես Կեսար, յանձն իւր զուարճանայր. և զնաւն յաջոյ թև անդր յետս տարեալ, խնդրէր ևս տարադէմ 'ի գոգոյն և 'ի նեղուցացն զթշնամին արտաքս բերել. և շրջան զնոքօք առեալ արագ և թեթև նաւուքն՝ 'ի ներքս զնոցայցն փակել և կռուել, որ այնպէս յաղթք և 'ի նաւաստեացն նուազեալք՝ ծանրանաւեալք վերջանային։

Իբրև խազմն գրգռեցաւ, անդ էր տեսանել ոչ գռոյթս իմն և հրոս սաստիկ զնաւացն կամ հարկանել խորտակել. քանզի նաւք ծանրագանգաղք Անտոնիոսին վերջացեալք 'ի թափոյ հրոսակի՝ յորում մանաւանդ հաստատեալ կայ յաղթահարել սաստկութեամբ. իսկ Կեսարուն՝ ոչ անձնապահք միայն լինէին գնալ ոգորել առաջակողմամբքն ընդ քաջամուր և անկռուելի պղնձացռուկաննաւաց թշնամւոյն,

այլ և իշխէին իսկ ոչ մօտ բազխել ընդ կողն անգամ. քանզի և դիւրախորտակելիք ևս լինէին նոցա ցուակքն ընդհարեալք 'ի գոգան յայն՝ այնպէս յաղթահարուստ քառակուսի ամրացեալ առաղձիւք՝ ագուցիկ ընդ միմեանս և երկաթակապ։

Արդ այս մրցանք հանգունատիպ արդեօք հետևակամարտ կռուոյ, նա և ճշդիրստագոյնս ասել՝ պատուարամարտ ռազմին. քանզի և էր անդ միանգամայն տեսանել զերիս և զչորս 'ի նաւացն Կեսարու շուրջ զմիով պատեալ 'ի նաւացն Անտոնի, և կռուել մաքառել յասպարս և 'ի գեղարդունս և 'ի նետս և 'ի հրահոսանս. իսկ և անդուստ Անտոնիոսեանք փքնընկէց լինէին և նետընկէցք 'ի մահարձանացն փայտեայ։ Իսկ յայնժամ Ագրիպպաս ձգեաց երկայնեաց զմիւս թևն առնուլ 'ի ներքս զթշնամին փակել. անդուստ և Պոպլիկոլաս ստիպեալ ընդդէմ տարածել զիւրան՝ զատեալ բաժանեցաւ 'ի միջոյ անտի նաւացն։

Իբրև այնպէս խռով հարաւ 'ի նոսա, և և անդուստ ևս Արրունտիոս խառնեցաւ ընդ նոսա 'ի գոռն, մինչ այս մինչ այն՝ անսահման էր նաւամարտն և դեռ ևս քաջ քաջի պատահեալ էր, յանկարծակի յեղակարծու�նաւք վաթսուն Կղէոպատրեայ անդէն պարզեալք զառագաստս, փախուցեալ գնային ընդ մէջ մարտկացն, (քանզի և էին իսկ նոքա գաստաւորեալք յետոյ մեծամեծ նաւացն, և 'ի ճռ-

զոպրեալ իւրեանց 'ի միջոյ նոցա խառով հարկանէին)։ Յապուշ հարան թշնամիք և հայէին ընդ նոսա, տեսեալ այնպէս յաջողակ վարեալ հողմով 'ի Պեղոպոննիսոս կոյս։

Իսկ Անտոնիոս այնուհետև յայտնի իսկ նշաւակեալ զանձն, ոչինչ առաքինացաւ ոչ իբրև իշխան և ոչ իբրև մարդ, և ոչ վայր մի իմաստնացաւ այրն 'ի խորհուրդս իւր, այլ (ըստ որում ասաց ոմն ընդ խաղ, եթէ՝ Հոգի սիրողին կեայ 'ի մարմին օտարին), այնպէս ձգեալ քարշեցաւ նա 'ի կնոջէն յայնմանէ, իբրու որ անշուշտ անդրստին 'ի բնութենէն կապեալ և ածեալ բերեալ ընդ նմա։ Քանզի անդէն իբրև 'ի չու անկեալ ետես նա զնաւն Կղէոպատրեայ, մոռացօնք նմա ամենայնն լինէր. և մատն եղեալ՝ լքեալ զորս անդ 'ի մահ անձնագրաւք կուուէին 'ի վերայ նորա, եղեալ 'ի հնգաթիվ մի հանդերձ արամբքն որ միայն զհետ եղին նորա՝ այն էր Աղեքսանդրոս Ասորի և Սկեղղիոս, զհետ պնդեցաւ կնոջն. որ ինքն 'ի կորուստ մատնեալ, և զնա դարձեալ 'ի կորուստ յուղարկէր։ Իսկ Կղէոպատրէ խմացեալ զհետամուտ լինել նորա, նշան մի ամբարձեալ 'ի նաւէն՝ և այնպէս զնա 'ի ներքս 'ի նաւ իւր առնոյր ժողովէր։ Բայց յայնժամ Անտոնիոս՝ ոչ ինքն զԿղէոպատրա տեսեալ և ոչ նա զնա, այնպէս միայնակ անցեալ յառաջակողմն նաւուն՝ նստէր առանձինն լուռ և անմրուունչ, առեալ զգլուխն ընդ մէջ երկուց ձեռաց դաստակացն։

Յայնժամ 'ի Լիբիւրնեան արագ նաւացն Կեսարու զհետ պնդեալ նորա, տայր Անտոնիոս շրջել զառաջակողմն նաւուն 'ի դիմի հետեւամտիցն, և առհասարակ վանէր զնոսա. միայն Եւրիկղէս Լակոնացի զտեղի կալեալ արձանանայր. և տէգ մի ձօձեալ 'ի տախտակամածէն՝ խնդրէր արձակել խոցել զԱնտոնիոս. իսկ Անտոնիոս արձանացեալ յառաջակողման անդ՝ ասէր. "Եւ ո՞ այն ոք իցէ, որ այնպէս հալածէ զԱնտոնիոս,,: Նա ետ պատասխանի և ասէ. "Ես ինքնին Եւրիւկղէսն եմ որդի Լաքարեայ. որ 'ի բախտէն Կեսարու վրէժ զմահուն խնդրեմ զհօրն իմոյ,,:

Քանզի այս Լաքարէս ամբաստանեալ իբրև աւազակ, գլխատեցաւ յԱնտոնիոսէ: Բայց Եւրիւկղէս թափ չետ 'ի նաւն Անտոնիոսի, և եկեալ բախէր ցոկաւն և հարկանէր զմիւս աւագ նաւն (քանզի և երկուք կային անդ). և առ 'ի շեղ շուրջ պատեալ զնովաւ, հասեալ կալաւ զնա. առ և զմի այլ 'ի նաւացն՝ յորում կային անօթք պատուականք սեղանոյ: Իբրև տեղի ետ գնաց Եւրիւկղէս, եկեալ միւսանգամ Անտոնիոս ըստ առաջին նմանութեանն այնպէս նստէր անմուն. և աւուրս երիս զնոյն օրինակ անցուցանէր առանձին միայնակ յառաջակողմն նաւուն. կիրս կրեալ կամ զսրամտութեան բարկութեան կամ զամօթոյն վասն Կղէոպատրեայ, մինչև եկեալ հասանէր 'ի Տենարոն: Անդանօր ապա 'ի մէջ անցեալ կա-

նայք յընտանեաց նոցա, ածեալք ամո-
քէին զերկոսին զնոսա նախ ընդ միմեանս
խօսել, ապա և 'ի միասին ընթրել, ապա և
'ի միասին ննջել։

Զկնի այսորիկ ոչ սակաւք 'ի բեռնա-
բարձ նաւաց անտի և բազումք ևս 'ի բա-
րեկամացն խմբեալ առ նոսա յեռ փա-
խըստականն, գոյժ տային զպարտութեան
նաւահանգիստին. սակայն և զբոյց եռուն
ողջ անարատ մնալոյ բանակին ցամաքի։
Ապա Անտոնիոս արձակէր պատուիրակս
առ Կանիդիոս, հրաման տայր ճեպով տե-
ղի տալ հանդերձ բանակաւն յԱսիա ան-
ցեալ ընդ Մակեդոնիա. և ինքն 'ի չու
հանդերձեալ 'ի Տենարիոյ 'ի Լիբիա, ըն-
տրեաց նաև մի բեռնաբարձ բազում մթե-
րից ընչից և մեծագին կահուց արքունեաց
արծաթոյ և ոսկւոյ, և տայր զայն 'ի պար-
գև բարեկամացն. հրաման տայր բաժա-
նել յիւրեանս և անձնապուր 'ի բաց գնալ։
Իբրև նոքա հրաժարեցան 'ի բանէն, և յար-
տասուս ևս հատեալ էին, նա բազում
մարդասէր խնամովք քաջալերեալ զնոսա
և աղերս ևս արկեալ և 'ի հաւանութիւն
զնոսա ածեալ, արձակէր առ Թէոփիլոս
կուսակալ Կորնթոսի. և գրէր տայր նմա
փոյթ պնդութեան ունել վասն արանցն,
և 'ի ծածուկ պահել զնոսա, մինչև հաշտ
արասցեն նոքա զկեսարս։ Էր այս Թէոփի-
լոս հայր Խպպարքոսի՝ որ շնորհս մեծապէս
գտեալ էր առ Անտոնիոսի, որ և առաջին
յաղատագրելոց անտի իւրոց անց նա 'ի

կողմն Կեսարու. և կալաւ ապա զքնակու-
թիւն իւր 'ի Կորնթոս։ Այս ինչ վասն ի-
րացն Անտոնիոսի։

Իսկ անդուստ նաւահանգէս նորա յԱկ-
տիոն ժամն հարուստ 'ի դիմի հարեալ ար-
ձանացաւ ընդդէմ Կեսարու. և ապա 'ի
տասներորդ ժամուն պարտութիւն խոս-
տովանէր. քանզի և մեծապէս ճնաստեցաւ
յահագին մրրկէ հարեալ յառաջակող-
մանս իւր։ Եւ եղեն յայնժամ անկեալք
ոչինչ աւելի քան զհինգ հազար. և 'ի գե-
րութիւն վարեցան նաւք երեքհարիւր՝ ըստ
որում գրեաց ինքնին Կեսար։

Իսկ փախստեանն Անտոնիոսի բազումք
էին իրազգածք. և որք միանգամ լսէինն՝
զառաջինն անհաւատալի կարծեցին. ոչինչ
կարէին կալ 'ի վերայ՝ եթէ գունդս հե-
տևակաց ինն և տասն անպարտելիս թողեալ
լքեալ և այրուձի բիւր մի և երկու հազար,
և այնպէս 'ի բաց չուեացէ, իբրու որ ոչ
բազում անգամ ընդ կրկին ևս բախտն
անցեալ իցէ, և 'ի մրցանս բիւրս և 'ի մարտս
բիւրս հրահանգեալ ոչ իցէ։ Բայց զօրա-
կանք նորա անձկացեալ էին նմա, և դէտ-
ակն կալեալ մնային ուստեք վաղվաղակի
տեսանել զնա. առ այս՝ և հաւատարմու-
թիւն այնչափ և առաքինութիւն 'ի դէմս
բերին նոքա, զի և յետ համբաւելոյ փա-
խստեան նորա, նոքա միաբանք հաստա-
տունք այնպէս կացին մնացին աւուրս
եօթն, և զկեսարուն փոյթ ինչ չառնէին,
որ հրեշտակս առեալ արձակէր առ նո-

սա։ Ալ ապա 'ի վերջէ գիշերագնաց փա-
խըստեայ առ նա եղեալ Կանիդիոս զօրա-
վար նոցա և լքեալ զբանակն, այնուհետև
և նոքա այնպէս ամայիք և մատնեալք յիւ-
րեանց իշխանաց, անձնատուր առ յաղթա-
կանն լինէին։

Իսկ յետ այսորիկ Կեսարու նաւեալ
ՅԱԹԷՆս և հաշտեալ ընդ Հելլենացիս,
տայր բաշխէր նոցա 'ի քաղաքս քաղաքս
զմնացուած ցորենոյ զօրականին՝ որ 'ի նե-
ղութեան կային կապտեալք 'ի դրամոյ և
'ի ծառայից և 'ի գրաստուց։ Բայց Նիկար-
քոս նախահաւն մեր պատմէր՝ Եթէ ամե-
նայն մեր քաղաքացիք բռնադատեցան
յայնժամ բառնալ բերել 'ի վայր 'ի վե-
րայ Թիկանց իւրեանց մինչև 'ի ծովն Ան-
տիկիւրեան չափ ցորենոյ, և երագել փու-
թալ յընթացս 'ի հարուածս խարազանաց.
և Թէ՝ օրինակ զայս տարան նոքա բեռն
մի, և Թէ՝ 'ի չափել անդ զերկրորդն և 'ի
բառնալ նոցա զայն, անդուստ համբաւ
հարաւ հարուածոյն Անտոնիոսի, ուստի և
յանդորր եղանէր քաղաքն. քանզի անդէն
փութապէս 'ի փախուստ խուճապեցան
պաշտօնեայք և զօրականք Անտոնիոսի, և
քաղաքացիք առեալ յիւրեանս բաժանե-
ցին զցորեանն։

Իսկ յայնժամ Անտոնիոս հասեալ ժա-
մանեալ 'ի Լիբիա, յառաջոյ արձակէր
զԿլեոպատրա 'ի Պարետոնիոյ Եգիպտոս.
և ինքն մնեալ 'ի խորս յահագին անապա-
տին յայսկոյս յայնկոյս Թափառեալ շըր-

ջէր հանդերձ երկու միայն բարեկամք. այն է՝ Արիստոկրատէս հռետոր Յոյն, և Լուկիլիոս Հռոմայեցի. այն՝ զորմէ յայլում ևս վայրի պատմեցաք մեք եթէ 'ի Փիլիպպէ ժամ փախստեան տուեալ Բրուտոսի, անձնատուր լինէր հետամուտքն կեղծաւորեալ եթէ Բրուտոսն իցէ. և ապա ապրեալ 'ի ձեռն Անտոնիոսի, հաւատարիմ այնուհետև և անդրդուելի կայր առնմա մինչև խապառ:

Բայց Անտոնիոս՝ յորժամ և կուսակալն զօրուն Լիբիոյ նշկահեաց զնա, խնդրէր այնուհետև երթալ զիւրովին. այլ արգելին զնա բարեկամք և ելեալ չոքաւնա յԱղեքսանդրիա. անդ գտանէր զԿղէոպատրա ձեռն 'ի գործ արարեալ 'ի գժընդակ և 'ի մեծ: Քանզի է անդանօր կիրճ անջրպետ կարմիր ծովուն 'ի ծովէն Եգիպտոսի, և բաժանէ զԱսիա 'ի Լիբիոյ. արդ նա առեալ զնաւատորմիղ իւր 'ի վայր անձկագոյն կրճին անջրպետուութեան առ 'ի ծովուցն իբրև երեքհարիւր ասպարիսաց, ձեռնամուխ լինէր ձգել տանել զնաւսն ընդ վայրն և իջուցանել 'ի ծոցն Արաբիոյ, և բազում ընչիւք և բազմաձեռն զօրու չու առնել գնալ բնակել 'ի սահմանս տարագէմն, խոյս տուեալ 'ի ծառայութենէ և 'ի մարտէ: Իսկ իբրև Արաբացիք բնակաւորք յԱպառաժին այրեցին զառաջին նաւսն՝ զոր ձգեաց տարաւ նա, և Անտոնիոս ինքնին ասէր՝ եթէ ողջոյն է տակաւին բանակին իւրում որ յԱկտիոն, ա-

պա և Կղէոպատրէ յետս եկաց 'ի խորհրդոյն. և պահ զգուշութեան կարգէր 'ի մուտան Եգիպտոսի։

Այլ Անտոնիոս այնուհետև լքեալ թողեալ զքաղաքն և զբարեկամացն կենակցել, շինեաց իւր ապարանս ծովափնեայ մօտ 'ի Փարոս՝ յառաջագէմ 'ի ծով անդր ամբարձեալ հողաբլուր մի. և անդէն դադարեալ նստէր փախուցեալ 'ի քաղաքավարութենէ մարդկան. և ասէր՝ նախանձաւոր նմանող կենացն լինել Տիմոնի, իբրև նմանօրինակ և նա պատահեցաւ աղէտից. քանզի ինքնին և նա 'ի բարեկամացն անիրաւեալ և անշնորհակալու կիրս տեսեալ, խիթայր այնուհետև յամենայն մարդոյ և ատեայր զնոսա։ Էր Տիմոն Աթենացի, և էր նա առ ժամանակօք պեղոպոննիսեան պատերազմին, ըստ որում և է մեզ ժողովել 'ի քերթուածոց անտի Արիստոփանեայ և Պղատոնի, յորս և 'ի կատակերգաց հանդէս հանեն և ծանակեն նոքա զայրն զայն աննուէր և զմարդատեաց։ Եւ զզուէր գարշէր Տիմոն յամենայն կենակից քաղաքավարութէ մարդկան. և գիրկս ածեալ սիրով համբուրէր միայն զԱղկիպիադէս՝ զայր պատանի և յանձնապատան։ Զարմացեալ Ապիմանտոս և խնդրեալ զպատճառն, եւ պատասխանի Տիմոն՝ սիրել զպատանին, իբրև ճանաչէր զի վիշտ բազում ածցէ նա 'ի վերայ Աթենացւոց։ Եւ միայն Ապիմանտեայ է զի յայց եղանէր Տիմոն՝ իբրու հանգունա-

տիպ առն և նախանձաւոր կենաց իւրոց։ Եւ էր երբեմն երկոցուն սոցա միայն ընթրել 'ի միասին 'ի տօնին անուանեալ՝ Քովեանց. և ասէր Ապիմանտոս. "Բարի, զիարդ ով Տիմոն գեղեցիկ են կոչունքս մեր". Եւ պատասխանի Տիմոն. "Սակայն եթէ դու մերձ ոչ կայիր"։

Եւ պատմեն՝ յաւուր միում 'ի ժողովել Աթենացւոց յատենի, ելեալ նա 'ի բեմն և յայնժամ 'ի լռութիւն դարձեալ առհասարակ և յակձիռս եղեալ ընդ նոր պատահումն, սկսաւ խօսել Տիմոն և ասէ. "Է՛ իմ գաւիթ փոքրիկ ո՞ Աթենացիք, ուր բուսաւ թզենի. զորմէ և կախեցան իսկ բազումք 'ի քաղաքացեաց ասի. արդ հանդերձեալ իմ շինել զվայրն, կանխեալ գամ առհասարակ ձեզ ազդ առնել, զի թէ և 'ի ձէնջ ևս կամեցին կախել զդմանէ, փութասցին մինչև թզենիդ կտրեալ իցէ"։ Իսկ իբրև մեռաւ Տիմոն՝ թաղեցաւ յԱղիս մերձ 'ի ծով. և անդանօր ծովային կարկառեալ 'ի դուրս, և շուրջանակի ծփեալ ալեացն՝ անկոխ և անմատոյց գործէր մարդոյ զգերեզմանն։ Եւ էր 'ի նմա արձանագրութիւն այսպիսի.

Զոգին արձակեալ զչուառականն,
անկեալ կամ 'ի վայրիդ։
Մի խնդրեր զանունն։ Զարեաւ, ով չարք,
'ի կորուստ դնացէք։

Եւ ասեն՝ զդամբանագիր զայս՝ մինչեւ մեռեալ՝ քերթեալ նորուն Տիմոնի։ Իսկ միւս այլ զհամբաւի հարեալն՝ է ինքնին Կալլիմաքեայ.

Ես ինքնին Տիմոն մարդատեաց
բնակեմ ասատանօր։
Այլ դու անց գնա, և բիւրս ինձ կարդա
աւաղս։
Բայց անցցես միայնակ։

Սրդ 'ի բազմաց անտի յաղագս Տիմոնի, շատ լիցին սակաւք այս։

Բայց յայնժամ Կանիդիոս ինքնին եկեալ առ Անտոնիոս գոյժ տայր զկորուստեան բանակին՝ որ յԱկտիոն, և զոր ոչ ասեն նմա՝ եթէ և Հերովդէս հրէայ հանդերձ գնդօքն և վաշտիւքն խմբեցաւ ընդ Կեսարու. և թէ՝ և այլք ևս 'ի կուսակալաց վտարանջեալ կան. որպէս զի և արտաքոյ ջնեաց ուրեք ոք հաւատարիմ առնա։ Բայց 'ի գուժից աստի արտաբեկեցաւ նա և ոչինչ, այլ իբրու մտադիւրագոյնս ինքն կարձեալ 'ի յուսոյն՝ կարձել ընդ նմին և զտաղտապանն, եւ ինք եթող զծովափնեայ բնակութիւնն՝ որում անուն կարդաց նա Տիմոնիոն։ Յայնժամ առ զնա Կղէոպատրէ ժողովեաց յարքունիս իւր. և նա առեալ զքաղաքն դարձուցանէր 'ի կոչնոց խրախուանս և 'ի գիներբուս. և տայր բաշխէր ձիրս պարգևաց, և առեալ գրէր 'ի դաս պատանեաց զորդին Կղէոպատրէայ

և զկեսարու. և տայր մատուցանէր Ան-
տիւղոսի իւրում որդւոյն՝ որ 'ի Փուլ-
վիայ՝ զանծիրանի և զայրական զպատմու-
ճանն։ Ոյց աղագաւ՝ և աւուրս բազումս
էր անդ յԱղէքսանդրիա տեսանել միայն
խրախճանս և կայթս կաքաւուց և տօնս։
Բայց ապա ինքնին նոքա զընկերութիւն
զայն Անդ-գոկան կենաց 'ի բաց բարձեալ,
փոխանակ կարգէին այլ ոչինչ խոնարհա-
գոյն 'ի գրգանս և 'ի փափկութիւնս և յա-
ղակատանս, և անուն կարգացին այնմ՝
Մահակցոց ընկերութիւն։ Քանզի առեալ
գրէին զանձինս յայն ընկերութիւն բա-
րեկամք դաշնաւորք 'ի մահակցութիւն
անդր, և աղճատեալ էին նոքա 'ի կոչումն՝
հրաւիրեալ այր զընկեր։

Այլ 'ի ժամանակին յայնմիկ Կղէոպա-
տրէ բիւրապատիկ փորձ փորձէր, պա-
տրաստէր իւր միանգամայն զամենայն ազգ
մահառիթ թունից. և 'ի գիտել իմանալ՝
որ 'ի նոցանէն անվնաս և անցաւ իցէ՝ ա-
ռեալ փորձէր զայն 'ի վերայ պատժաւո-
րացն առ 'ի մահ։ Եւ տեսեալ՝ եթէ թոյնք
արագամահք՝ են իսկ և դառնակսկիծք 'ի
մահուն. իսկ ամոքք թոյնք՝ չեն իսկ արագա-
վախճանք, դարձաւ նա փորձ փորձել և
զգազանացն. և իւր իսկ տեսանելով տայր
փոփոխ 'ի նոցանէն առնուլ մերձեցուցա-
նել յիրեարս, և զօրհանապազ ուշիւ վար-
ժէր 'ի փորձան յայնոսիկ։ Եւ այնպէս ա-
պա փորձեալ գոգցեա ոչՁոյն զմահացուսն՝
գտանէր զի խայթ Ասպիդ օձին միայն՝ ան-

ցաւ և անթառաչ թմբրութիւն նիրհական և քնէածութիւն խոր 'ի վերայ արկանէ, և քիրան քնքուշ ընդ երեսան վիժեցուցանէ, և յափշտութեան զզգայարանսն ընդարմացուցանէ, և ապա հարեալքն այնպէս հեշտին վատեալ նուաղին և թալկանան. և իբրու որք խոր 'ի քուն ննջեալքն իցեն, այնպէս յոյժ գժուարին նոքա թօթափել զքուն՝ սթափիլ և յառնել։

Բայց յետ այսորիկ Կղէոպատրէ և Անտոնիոս առեալ միանգամայն գեսպանս արձակեցին առ Կեսար յԱսիա. խնդրէր Կղէոպատրա զարքայութիւն Եգիպտոսի վասն իւրոց զաւակաց. իսկ Անտոնիոս հայցէր թողուլ նմա կեանս վարել առանձին յԱթէնս, եթէ չկամի ինալ նմա յԵգիպտոս։ Եւ քանզի բարեկամք նուազեցան, և խիթային ևս՝ եթէ դասալիք լինիցին, առեալ արձակեցին առ Կեսար զԵւփրոնիոս զվարժապետ որդւոց իւրեանց։ Քանզի և Ալեքսաս Լաոդիկեցի՝ այն որ զհամբաւի հարաւ 'ի Հռոմ 'ի ձեռն Տիմագենեայ, և շնորհս մեծապէս գտեալ էր առ Անտոնիոսի առաւել քան զամենայն հելլենացիս, և էր ինքն գործի զօրաւոր 'ի ձեռս Կղէոպատրեայ ընդդէմ Անտոնիոսի՝ վանեալ նովաւ զգեղեցիկ մտածութիւն նորա առ Հոկտաւիա, էր սա այս Ալեքսաս հրեշտակութեամբ առաքեալ առ Հերովդէս արքայ՝ արգելուլ զնա մի ձեռն տալ 'ի թշնամին։ Բայց Ալեքսաս կացեալ առ նմա և մատն Անտոնիոսի եղեալ, ժոե-

ցաւ և յանդիման ելանել Կեսարու՝ վրս-
տահացեալ 'ի Հերովդէս. իսկ օգնեաց
նմա ոչինչ Հերովդէս, այլ արագ արագ
ձերբակալ եղեալ մատնիչն՝ առաքեցաւ
կապանօք 'ի հայրենիս իւր. և անդ 'ի հրա-
մանէն Կեսարու 'ի մահ վարեցաւ: Եւ
այնպէս առ կենդանութեամբն իսկ Անտո-
նիոսին ելոյծ Ալէքսաս զվրէժ մատնու-
թեանն:

Արդ յայնժամ Կեսար ոչ լուաւ խրն-
դրուածացն Անտոնիոսի. իսկ առ Կղէո-
պատրէ տայր պատասխանի՝ գտանել զա-
մենայն մարդասիրութիւն առ 'ի նմանէ,
եթէ միայն 'ի մահ զԱնտոնիոս վարեսցէ
կամ թէ 'ի բաց հալածեսցէ: Զայս ասաց,
և 'ի միասին ևս ընդ դարձելոցն առ Կղէո-
պատրա արձակեաց և զԹիւրէոս զմի յա-
զատագրելոց անտի իւրոց, այր ոչինչ ան-
հանձար, և բաւական իսկ էր համոզակեր
բանիւք կալ և խօսել 'ի դիմաց ինքնակալ
պատանւոյն ընդ կնոջն ընդ այնմիկ՝ ընդ
գոռոզ և ընդ պերճ և 'ի գեղ անձինն սոն-
քացեալ: Ապա զբանիւք անկեալ նորա
ընդ Կղէոպատրեայ յերկարագոյնս քան
զայլս և մեծապէս ևս շուք ընկալեալ, կաս-
կածեցաւ Անտոնիոս. եւ ունել զայրն և
դանել, և ապա առեալ արձակէր զնա առ
Կեսար. գրէր տայր՝ եթէ ցասոյց զնա ա-
զատագրեալն իւր՝ թշնամանօք և անարգա-
նօք, իբրև ինքնին նա յիւրոց անտի աղէ-
տիցն դիւրապատրաստ այնուհետև է 'ի
ցասումն: Եւ յաւել ասել Անտոնիոս.

"Իսկ դու եթէ ոչինչ չափով հանդարտեացես բանին, է՛ իսկ առ քեզ ազատագրեալն իմ Իպպարքոս. տուր և դու զնա կախել և գանել, զի հաւասար կացցուք 'ի բանիդ,, :

Եւ յայսմանէ 'ի բաց յանձնէն քերեալ Կղէոպատրա զամենայն բիծ և զկասկած զԱնտոնիոսին, ապաս մեծապէս սկսաւ հարկանել նմա՝ և զօր ծննդոց իւրոց խոնարհագոյնս կատարեալ և ըստ տանել ժամանակին, տօնախմբեաց ապա զծնունդն Անտոնիոսի հոյակապս յոյժ և ամենապայծառ, որպէս զի և բազումք 'ի հրաւիրեալոց անտի յայն կոչունն՝ ալքատք եկին և մեծատունք դարձան :

Իսկ անդուստ 'ի Հռոմայ Ագրիպպաս ստէպ գրէր առ Կեսար և հրաւիրէր, գրէր և ցուցանէր՝ զի պէտք են նմա 'ի ժամանակին յայնմ լինել 'ի Հռոմ. որ աղագաւ և յամեաց յայնժամ պատերազմ : Բայց յանցանել ձմերայնոյն խաղայր գնայր միւսանգամ Կեսար ընդդէմ Անտոնիոսի. ինքն ընդ Ասորիս, և զօրավարք նորա ընդ Լիբիա : Ապա հասեալ կալեալ զՊեղուսիոն, համբաւ հարկանէր եթէ Սելեւկոս ինքնին զայն 'ի ձեռս տուեալ ելցէ իւր 'ի հաւանութէն Կղէոպատրեայ. իսկ Կղէոպատրէ 'ի չքմեղս եղեալ տայր 'ի ձեռս Անտոնիոսի զկին և զորդիս Սելեւկոսի սպանանել զնոսա :

Արդ՝ էին Կղէոպատրեայ դամբարանք և շիրիմք կից մեհենին Իսիդեայ՝ յոյժ հրա-

շակերտք և հոյակապք, գեղեցիկք և բարձունք. անգանօր եւ բառնալ տանէլ Կղէոպատրէ միանգամայն զամենայն զարքունի կահ և զկարասի պատուական, ոսկի և արծաթ և զմիրուիստ և մարգարիտ և ապանոս և փղոսկր և կինամոմոն, միանգամայն և ջահս բաղում և խծուծ։ Ոյր աղագաւ և զանգիտեալ Կեսար՝ եթէ յուսակտուր կինն հուր հարեալ ապականեսցէ զայնչափ ըզգանձն, անգուլ առաքէր առ նա և մարդասիրութեան հանդէս բաղում 'ի ներքս բերէր նմա 'ի յոյս բարւոյ ակնկալութեան. միանգամայն և ինքն յառաջագէմ խաղայր 'ի քաղաք անդր։ Իբրև եհաս, և բանակ մօտ յԻպպոդրոմոն հարկանէր, էլ արտաքս Անտոնիոս և 'ի վերայ անկանէր. և մարտ եղեալ քաջութեամբ 'ի փախուստ դարձուցանէր զայրուձին նորա, և զհետ մտեալ հալածէր մինչև 'ի բանակեղ նոցա։ Ընդ յաղթութիւն ընդ այս խայտացեալ Անտոնիոս՝ դարձ արար եմուտ յարքունիսն, և այնպէս սպառազինեալ համբոյր տայր Կղէոպատրայ, և զայր մի 'ի զօրականէն առաջի մատուցանէր նմա, որ քաջութեամբ արութեամբ նահատակեալ իսկ էր 'ի կռուին. որում և մրցանակ քաջութեանն ընծայէր նմա Կղէոպատրէ զբրահ ոսկի և սաղաւարտ։ Առնուլ էառ այրն զպարգևն, և 'ի գիշերին դասալիք եղեալ անցանէր առ Կեսար։

Իսկ Անտոնիոս յայնժամ ձայն ասպարիսի միւսանգամ կարդայր Կեսարու 'ի

ՌԵՆամարտութիւն. իբրև պատասխանի ա-
բար Կեսար, եթէ էն իսկ արդեօք Անտո-
նիոսի բազում ճանապարհք առ 'ի մահ,
ած զմոռաւ Անտոնիոս՝ զի մահ նմա չիք
լաւ քան զկռուոյն. և հաստատեաց մարտ
յարդարել պատերազմի միանգամայն ընդ
ծով և ընդ ցամաք։ Ապա իբրև յընթրիս
բազմեալ էր, հրամայէր որպէս ասեն՝ ըս-
պասաւորացն գինի մատռուակել նմա և
մտադիւրագոյնս ևս քան զայլ աւուրցն
պաշտել զնա, իբրև անյայտ իցէ զպաշտօն
զայն հարկանել նոցա առ վաղիւն. կամ
թէ ո՞ գիտէ՝ այլոց տերանց 'ի սպասու կալ
նոցա, և ինքեան գիտասցեն 'ի մահ տա-
րածել և ոչ ուրեք դտանել։ Ցայն բան
յարտասուս ցնդեցան բարեկամք. բայց ա-
սէր Անտոնիոս, ոչ եթէ 'ի կռիւ մարտի
առնու ածէ զնոսա, այլ քան զյաղթու-
թիւն և քան զփրկութիւն՝ խնդրէ մանա-
ւանդ մահ փառաւոր։

Արդ պատմեն՝ եթէ զհասարակ գիշե-
րաւն մինչդեռ 'ի խորին լռութեան կայր
քաղաքն և սաստիկ ևս թաղծեալ էին առ-
հասարակ յարհաւրաց անտի և յահէ հան-
դերձելոցն, յանկարծակի ձայնք լսելի
լինէին՝ ձայնք նուագածուաց ամենայն
ազգաց արուեստականաց, և աղաղակ
ամբոխից խնծղալից հնչմամբ և 'ի կայթս
և 'ի կաքաւս Պայից և Պարկաց, իբրու
եթէ 'ի շաչիւն շառաչիւն պարս պա-
րել զԴիոնիսեայ. և դղրդիւն այն յու-
զէր իբրև ընդ մէջ քաղաքին՝ 'ի դուռն

կողմն որ հայերը 'ի գունդ անդր Թշնամեաց. և հաղ քան զհաղ սասակացեալ յոյժ յոյժ՝ ապա ելանէր արտաքս ընդ նոյն դուռն: Իսկ որք քննութեամբ յայնժամ 'ի վերայ կացին հրէշեցն, հաստատեցան 'ի միտս՝ եթէ դիք ինքնին լքին թողին այնուհետև զԱնտոնիոս. այն դիք՝ զոյր զնմանութիւնն նա յանձին բերել հանապազ Թեւակոխեր:

Ապա 'ի ծագել առաւօտուն՝ առեալ զզօր ցամաքին Անտոնիոս՝ կարգէր 'ի վերայ բլրոյն 'ի հանդիպոյ քաղաքին. ինքն դէտակն կալեալ հայերը 'ի տորմիզ նաւացն իւրոց, այն ինչ նոքա անցեալք հատանէին զանդունդս 'ի գիմի Թշնամեացն հարկանել. անդուստ արձանացեալ դիտեր Անտոնիոս զնահատակութիւն զօրականին իւրոյ 'ի ծովուն: Այլ իբրև նոքա Թիավարեալք մօտ հասին առ Կեսարեանսն, ողջոյն տուեալ նոցա և առեալք 'ի նոցանէ՝ եկին խմբեցան ընդ միմեանս և հանդէս մի նաւաց առհասարակ կարգեցան կազմեցան նոքա. այնպէս յառաջադէմ գային խաղային ընդդէմ քաղաքին: Իբրև զայն յակն արկանէր Անտոնիոս, դարձեալ և յայրուձիոյն իւրմէ լքեալ ետես զանձն՝ որ անցին առ Թշնամիսն, ապա և հետևակազօրն իւր խորտակեալ, այնուհետև կորակոր վերջոտնէր 'ի քաղաքն, բողոք բարձեալ գոչէր՝ եթէ մատնեցաւ ինքնին 'ի Կղէոպատրեայ և 'ի ձեռս տուաւ արանցն՝ ընդ որոց մարտ եդեալ կռուէր 'ի վերայ

նորա։ Իսկ Կղէոպատրէ երկուցեալ 'ի սրտմտութենէ առն և 'ի յուսահատ կը-րիցն, չոքաւ ապաւինեցաւ 'ի գերեզման անդր. և առնոյր իջուցանէր զսահանսն և ամրացուցանէր նգոք և աղխիւք, և արձա-կէր գուժաբերս առ Անտոնիոս՝ եթէ մե-ռաւ Կղէոպատրէ։ Հաւատաց Անտոնիոս և ասէր ցանձն իւր. "Եւ ի՞մ իմիք այլ մնալ, ո՞վ Անտոնիէ։ Արդ աւադիկ բաղդն ինքնին առ բարձ 'ի քէն զմիակ և զնչխա-րեալ պատճառս զանձնասիրութեան ,,։ Ասաց և եմուտ 'ի սենեակն, և լուծեալ զլանջապանակ զրահիցն, ասէր. "Ո՞վ Կղէոպատրէ, ոչ ցաւէ ինձ վրէպ 'ի քէն կացեալ, իբրև արագ արագ 'ի նոյն վայր գամ և ես. այլ զի այնպիսի գոլով ինքնա-կալ՝ քան զկին խոնարհագոյն գտանիմ ես 'ի քաջարութեան ,,։

Եւ էր Անտոնիոսի ծառայ մի հաւատա-րիմ՝ Երոս անուն. զսա 'ի վաղ ժամա-նակաց աղաչեալ իսկ էր՝ մահ տալ նմա 'ի խնդրել նորա. և յայնժամ խնդրէր 'ի նմանէ Անտոնիոս լնուլ զխոստումն։ Նա մերկեալ զսուրն ամբարձ՝ իբրու զԱնտո-նիոս հարկանել, և յետս կոյս դարձու-ցեալ զերեսան՝ հարեալ խոցէր զանձն։ Դիտապաստ այնպէս անկեալ ծառայն առ ոտս տեառն իւրոյ, գոչէր Անտոնիոս. "Վա՜յ քեզ ո՛վ Երոս. ոչինչ հանդարտ-եալ քո 'ի բանիդ, ուսուցանես առնել ինձ՝ զոր պարտն է ,,։ Զայս ասաց և ինք-նին մխեալ սուր յորովայնին, այնպէս ան-

կանէր 'ի վերայ բազմոցին։ Բայց վէր առեալ ոչինչ արագամահ, և բղխումն եւ արեանն արգելեալ եկաց 'ի բազմոցէ անտի, և ինքն ուշաբերէր. աղերսէր աղաչէր զորս անդն կային՝ մահ առթել նմա. իբրև նոքա արտասքս փախեան 'ի սենեկէն, անդուստ նա ձայն բարձեալ գոչէր՝ գելոյր գալարէր, մինչև եկեալ հասանէր առ նա 'ի Կղէոպատրեայ Դիոմիդէս գպիր. պատուէր ունէր առնուլ տանել զնա առ նա 'ի գերեզմանն։

Իբրև լուաւ Անտոնիոս՝ եթէ կենդանի է Կղէոպատրա, հրաման տայր փութոյ սնդուրթեամբ պաշտօնէիցն բառնալ զինքն. և այնպէս բարձեալ բերէր 'ի վերայ բազկաց նոցա մինչև 'ի դուրս յարկին նորա։ Այլ Կղէոպատրա զդուրսն չէբաց, այլ կարկառեալ ընդ պատուհանն պարանս և առստանս 'ի վայր խաղացուցանէր. յորս և առեալ սնդեալ զԱնտոնիոս, այնպէս 'ի վեր ձգէր զնա Կղէոպատրա հանդերձ երկու կանամբքն՝ զոր ածեալ իսկ էր ընդ իւր 'ի գերեզման անդր։

Իսկ որ յայնժամ մերձն կային, ասէին եթէ տեսարան այլ աշխարհի առաւել քան զայն երբէք չեկաց յաշխարհի։ Քանզի այնպէս 'ի վեր առեալ ձգեալ լինէր Անտոնիոս շաղախեալ համբուն յարիւն և յապաժոյժ. և մինչդեռ ինքն ոգորէր կռուէր ընդ օրհասի մահուն, ձգէր կարկառէր միանգամայն զձեռսն առ Կղէոպատրա, և գուն գործէր Ճգնէր և ինքն ամ-

բառնալ 'ի վեր. քանզի և չէր իսկ գործն հեշտին վասն կանանց. անդուստ և զԿղէոպատրա էր տեսանել ընդ քիրսն հարեալ ձգել քարշել զպարանն բուռն հարեալ երկոքումբք ձեռօքն՝ 'ի խոնարհ կոյս կարկառեալ զանձն, որում և խրախոյս քաջալերը կարդային նմա որ 'ի ներքոյ կային, և գործակից ևս լինէին և վաստակէին։ Իբրև այնպէս 'ի վեր առ քարշեաց զնա 'ի ներքս և ընկողմնեցոյց, եկեալ հանդերձապատառ լինէր Կղէոպատրա 'ի վերայ նորա, և զձեռս իւր առեալ ծեծէր կոծէր և զկուրծսն ցեռէր. և իւրովք իսկ երեսօքն մաքրէր ջնջէր զապաժոյժ զապաւառ արեանցն Անտոնիոսի, և տէր իւր կարդայր զնա և այր իւր և ինքնակալ իւր ձայնէր զնա. և յանհնարին արտցաւութենէն՝ զիւր աղէտսն 'ի մոռացօնս դարձուցեալ իմն էր Կղէոպատրա։

Իսկ Անտոնիոս ողբքէր ամոքէր զկոծ և զաշխար նորա. խնդրեաց այնուհետև գինի յարբումն, կամ զի 'ի ծարաւոյն պապակէր, կամ զի այնպէս արագավախճան մահ խնդրէր։ Իբրև առ և արբ, իրատ տայր Կղէոպատրեայ՝ անդրժելի պահեալ զանձին փառսն՝ փութալ ապրեցուցանել զանձն, և առաւել քան զամենայն բարեկամսն Կեսարու վստահ 'ի Պրոկլէյոս լինել. առ այս՝ և մի ողբալ արտասուել զնա յաղագս վերջին աղէտիցն նորա. նա և առ երջանիկս ունել զնա վասն առաջին գեղեցիկ բախտիցն նորա, իբրև առաւել քան

զամենայն մարդ գերահամբաւ գտաւ նա և յոյժ մեծազօր. և ապա 'ի վերջէ ոչ ա-
ռանց հանդիսից արուեստեան նահատակու-
թեան՝ այր Հռոմայեցի նկուն գտաւ յառ-
նէ Հռոմայեցւոյ :

Իբրև այսպէս այն ինչ շնչասպառ Ան-
տոնիոս լինէր, և Պրոկլէյոս արագ եկեալ
հասանէր 'ի վայր անդր 'ի դիմաց Կեսա-
րու : Քանզի իբրև անձին արար Անտոնիոս
և ածաւ առ Կղէոպատրա, յայնժամ Դեր-
կէտէոս մի 'ի թիկնապահացն նորա առեալ
զդաշոյն նորա և թաքուցեալ՝ խոյս տայր. և
ընթացեալ առ Կեսար՝ ինքն առաջին զը-
րոյց տայր նմա զմահուն Անտոնիոսի, և
ցուցանէր և նմա զսուրն արիւնաշաղախ :
Իբրև զայն լուաւ Կեսար, տեղի ետ եմուտ
'ի ներքին սենեակ խորանին. անդ արտա-
սուս իջուցանէր 'ի վերայ առն մերձաւո-
րին իւրոյ, որ բարձակից իշխանակից ևս
կացեալ ընդ նմա և նիզակակից ևս էր նմա
'ի բազում պատերազմունս և 'ի բազում
ևս այլ գործս : Իսկ յետ այնորիկ առեալ
'ի ձեռս զնամականին և կոչեալ զբարե-
կամսն ընթեռնոյր առաջի. ցուցանէր նո-
ցա զիաՀրդ առ բարիոք գրեալսն իւր և
արդարութեամբ և հեզաբար, անդուստ
Անտոնիոս պատասխանի առնէր նմա միշտ
շինականագոյնս և յաւակնագոյնս :

Ապա առեալ արձակէր զՊրոկլէյոս՝
պատուէր սնդապէս տայր նմա՝ ըստ ձեռն-
հաս կարի գուն գործել հնարել կենդան-
ւոյն զբռամբ ձգել զԿղէոպատրա. քանզի

երկուցեալ զանգիտէր վասն մթերից դան-
ձուց նորա, և գիտէր ևս մեծապէս շուք
յաղթանակին իւրոյ ածել և զնա 'ի հան-
դէսն։ Բայց Կղէոպատրա յայնժամ յանձն
չառնոյր անձնատուր առ Պրոկլէյոս լինել.
այլ խօսեցան նոքա ընդ միմեանս, կացեալ
ինքն 'ի յարկին, և Պրոկլէյոս արտաքոյ
առ դուրսն. և թէպէտ քաջամուր ևս
պնդեալք և աղխեալք էին, անցս տային
ձայնին։ Ընդուստ խօսէր Կղէոպատրա և
թախանձէր զարքայութիւնն վասն որդւոց
իւրոց. իսկ Պրոկլէյոս քաջալեր խրախոյս
տայր նմա և համբուն վստահ 'ի Կեսար
առնէր զնա։ Եւ իբրև այնպէս խօսեցաւ,
և զնեաց ևս քաջ և մանր զվայրն, ե-
կեալ պատմէր զամենայնն Կեսարու։
Ապա անդրէն արձակեցաւ խօսել ընդ
Կղէոպատրայ և Գալղոս. որ և օրինակ ըզ-
նոյն կացեալ առ դուրսն արտաքոյ՝ եր-
կայնէր ձգէր կամաւ զՇառ բանիցն. իսկ 'ի
նմին պահու Պրոկլէյոս յեցուցեալ սան-
դուղս ելանէր մտանէր 'ի ներքս ընդ պա-
տուհանն՝ ընդ որ զԱնտոնիոս 'ի ներքս
ձգեցին կանայք. և վաղվաղակի իջանէր 'ի
վայր հանդերձ երկու պաշտօնէիւք 'ի
դուրսն, մինչդեռ Կղէոպատրա պարա-
պեալ էր խօսել ընդ Գալղոսի։

Իսկ մի ոմն 'ի կանանցն փակելոց 'ի ներքս
ընդ Կղէոպատրեայ իրազգած եղեալ, ձիչ
բարձեալ սաստիկ գուժեաց. "Հիքացեա՛լդ
դու Կղէոպատրէ, ըմբռնեցար կենդան-
ւոյն"։ Նա դարձեալ յետս և տեսեալ

անդանօր զՊրոկլէյոս, փուքթացաւ անձին առնել. (քանզի և ունէր իսկ նա դաշնակ մի զաւազակաց 'ի կամարին)։ Ապապարեաց Պրոկլէյոս և ունէր զնա երկոքեանքն ձեռօքն, և ասէր այսպէս. "Անիրաւիս դու ով Կղէոպատրէ, 'ի քեզ ինքն և 'ի Կեսար գլխովին. քանզի կարձես 'ի նմանէ զգեղեցիկ հաւատիս զմարդասիրութիւն նորա. և տաս ևս բամբասել զիշխանն զայն հեզահամբոյր առաւել՝ իբրու անհաւատարիմ և անողոքելի,,։ Ասաց, և առ հան 'ի ձեռաց նորա զսուրն. և զհանդերձան ևս նորա առեալ թօթափէր, արդեօք ինչ դեղ մահու 'ի ծածուկ կալցէ նա ընդ հանդերձիւքն։ Ապա յետ այնորիկ արձակեաց առ նա Կեսար զմի ոք յաղատադրելոց անտի իւրոց Եպաֆրոդիտոս անուն. պատուէր ետ նմա փուքթոյ պնդութեամբ կենդանի պահել զԿղէոպատրա. իսկ յայլն ամենայն յոյժ հեզաբար և ամոք քաղաքավարել ընդ նմա։

Իբրև այս այսպէս կատարեցաւ, եկեալ մտանէր 'ի քաղաքն Կեսար, զբանիւք անկեալ 'ի միասին ընդ Արիոսի իմաստասիրի և զձեռանէն կալեալ. զի այրն այն այնպէս գեղեցիկ շուք առեալ 'ի նմանէն՝ ականաւոր ևս կայցէ և սքանչելի առ քաղաքացիսն։ Իսկ մտեալ յրմբշարան անդր և ելեալ 'ի բեմքն պատրաստեալ նմա, անդուստ յակն արկեալ առհասարակ զմարդիկն սրբոտաբեկ լի՛ արհաւրօք և կորակոր յերկիր, հրաման տայր 'ի վեր կանգնել. և ասէր

թողուլ ժողովրդեան զամենայն զվնասն, առաջին 'ի մեծարանս երեսաց Աղեքսանդրի հիմնադրի քաղաքին. երկրորդ անգամ՝ զի ընդ դեղ և ընդ մեծութիւն քաղաքին հրաշացեալ իսկ է նա. և երրորդ անգամ՝ 'ի շնորհս Արիոսի իւրում բարեկամի։

Այսչափ ուրեմն պատուեցաւ Արիոս 'ի Կեսարէ, որ և բարեխօս ևս եկաց նա առ նմա վասն բազում մարդկան. յորոց մի էր և ինքնին Փիղոստրատոս, այր՝ քան զամենայն սոփեստէս ժամանակին առաւել քաջուշիմ յանպատրաստից 'ի Ճառան. սակայն և արտաքոյ արժանեաց առեալ զանձն ընծայեաց Ակադեմիոյ, ուստի և Կեսարու ատելի էին վարք նորա, և չլսէր ևս զաղերսն նորա։ Այլ Փիղոստրատոս աճեցուցեալ երկայնեալ զալիս սպիտակափառ մօրուացն, և աղաբողոն գորշ արկեալ զանձամբ, ունէր միշտ զհետոցն Արիոսի, և յեղյեղէր ստէպ զսողն. "Փրկեն իմաստուն զիմաստունս, եթէ իցեն իմաստունք"։ Զայն լուեալ Կեսարու թողութիւն առնէր առնն, առ 'ի զերծ 'ի մահանացն առնել մանաւանդ զԱրիոս, քան թէ յերկիւղէն զՓիղոստրատոս։

Իսկ յորդւոցն Անտոնիոսի զԱնտիւղոս ծնեալ նմա 'ի Փուլվիայ՝ Թէոդորոս դաստիարակն 'ի ձեռս մատնեալ թշնամեացն, 'ի մահ վարէին. բայց 'ի գլխատել զնա զօրականին, հանեալ դաստիարակին զակն մի պատուական յոյժ՝ որ 'ի պարանոցին նո-

բա, առեալ կարէր զայն 'ի կամարին իւրում. և իբրև յուրաստ եղև և նշաւակեցաւ այրն, 'ի խաչ ելանէր։ Բայց զայլս յորդւոցն՝ որ 'ի Կղէոպատրեայ՝ 'ի դիսպահոջ արարեալ հանդերձ դայեկօքն, 'ի պատուի կալաւ զնոսա։ Իսկ զԿեսարիոս կարծեալ որդի Կեսարու, մայր նորա հանդերձ բազմահարուստ ընչիւք արձակեալ իսկ էր 'ի Հնդիկս ընդ Եթովպիա. այլ նորա դաստիարակ Հռոդոն՝ հանգուցեալ Թէոդորի, ամոքեաց զնա դառնալ յետս՝ իբրու 'ի Կեսարէն հրաւիրեալ յարքայութիւն։ Ապա 'ի խորհուրդ վան այնորիկ մտեալ Կեսարու, պատմեն՝ ասել Արիոսի. "Զէ՞ բարւոք բազմութիւն Կեսարուց"։ Եւ Կեսար յետ մահուն Կղէոպատրեայ, ետ սպանանել զնա։

Բայց յայնժամ Թէպէտ և բազումք յարքայից և բազումք ևս 'ի զօրավարաց խնդրեցին ինքնին Թագել զԱնտոնիոս, Թոյլ չետ Կեսար հանել 'ի Կղէոպատրեայ զմարմին նորա. և ետ նմա Թաղումն տալ Անտոնիոսի բազմահանդերձ յոյժ և հոյակապ և արքենի՝ ձեռօք իսկ իւրովք, շնորհեալ նմա զամենայնն ըստ կամաց նորա։

Յետ այսորիկ Կղէոպատրեայ տագնապեալ ջերմամբ առ սաստիկ վշտին և ցաւոցն (քանզի և 'ի հարուածոց անտի կոծեալոյ անձինն՝ նորա եռացեալ և պալարացեալ էին լանջք), խնդրէր նա այնուհետև յայնց պատճառանաց անսուաղ կալ 'ի կերակրոց, և այնպէս անխափան զարևն

հատանել։ Էր նորա ընտանի բժշկապետ Ողիմպոս, և նմա 'ի վեր հանեալ ճշմարտութեամբ զմիտան, ունէր զնա իւր խորհրդական և գործակից 'ի վատել մարմնոյն, ըստ որում և ինքնին Ողիմպոս աւանդեաց 'ի պատմութեան իւրում վասն իրացս այսոցիկ։ Կասկածեալ Կեսարու, սպառնալիս 'ի վերայ կապեաց Կղէոպատրեայ վասն որդւոց նորա. և այնպէս ահաբեկ արար զկինն, զի և տեղի տուեալ այնուհետև՝ իբրու յանկուսելին իմն վանեալ մենքենայից, խոնարհեցաւ 'ի դարման և 'ի կերակուր մարմնոյն 'ի ձեռաց ամենեցուն։

Իսկ յետ աւուրց երկուց ինքնին Կեսար յարուցեալ ջոքաւ առ նա խօսել և ոփոփել զնա։ Կայր նա անկեալ 'ի մահճին՝ այնպէս հէք և չուառական. տեսեալ զԿեսար մտանել 'ի ներքս, կանգնեցաւ 'ի վեր շապիկ միայն արկեալ, և խոնարհեցուցանէր առաջի այնպէս երիթացեալ՝ զնուռուացեալ զգլուխն և զդէմն, դողդոջուն ձայնիւ և թալկացեալ աչօքն. և երևէին ևս բազում խաղաւարտք առ լանջքն. և թուէր համբուն՝ նորա ոչինչ լաւագոյն կալ մարմնոյն քան զհոգին։ Սակայն և շնորհք նորա և պերճութիւն գեղոյ վայելչութեան նորա չէր ողջոյն շինչեալ. և թէպէտ և այնչափ հիքացեալ, 'ի ներքուստ անտի ցայտէր և ցոլանայր 'ի կերպարանաց գիտակին նորա։ Ապա Կեսար միւսանգամ ընկողմնեցուցեալ զնա, և մատ առ նմա

նստեալ, սկսաւ Կղէոպատրա 'ի չքմեղս վասն անձինն լինել, և զամենայն զգործն 'ի վեր հանէր 'ի հարկ անդր և յահն Անտոնիոսի։

Իբրև Կեսար պատասխանի արար և հեր-քեաց և նշաւակեաց ևս զնա յամենայնի, նա յայնժամ 'ի պաղատանս դառնայր. ինդրէր 'ի գութ խանդաղատանաց շարժել զնա, իբրու եթէ սաստիկ ինն անձկացեալ կենաց. և ապա 'ի վերջէ տայր 'ի ձեռս նորա զհամար գանձուցն իւրոց։ Իբրև անդանօր Սելեւկոս մի 'ի գործակալացն Կղէոպատրայ կայր և ցուցանէր՝ իբրու իրս ինչ գաղել և թաքուցանել նմա, 'ի վեր յայնժամ յանկարծ վազեալ Կղէոպատրեայ, և բուռն զհերացն առեալ զՍելեւկոսին՝ ապտակ բազում ածէր յերեսս նորա. 'ի ծաղր հատաւ. Կեսար. և 'ի խաղաղել զկինն, ասէր Կղէոպատրէ. "Եւ ո՞չ արդեօք գժոխըմբերելի իցէ ո՞վ Կեսար, զի 'ի խոնարհել քո ասա դալ առիս և խոսել ընդ իս՝ թէպէտ և յայս սահման վիճակի, անդուստ իմ ծառայք գուշակ զինէն կայցեն՝ ունել ինձ 'ի պահեստի ինչ մի 'ի կանացի կահուց, ոչ 'ի զարդ ինչ հիքացելոյ անձինս՝ այլ պարգև գուշնաքեայ տալ Հոկտաւեայ և քումդ Լիվիայ, զի ապա 'ի նոցա ձեռն գտից ես զքեզ գթած և առաւել մարդասէր,,։ Խնդաց Կեսար, հաստատեալ 'ի միտս եթէ որ այնպէս խոսի, սիրէ ուրեմն կեալ։ Ապա բարբառեալ առ նա՝ ո՞չ զայնոսիկ միայն թողուլ նմա,

այլ և յայլ ինչ ևս լիաձեռն գտանել առ նա առաւել քան զակնկալութիւն նորա, ասաց և գնաց 'ի բաց. համարեցաւ այն պէս խաբել զնա, բայց խաբեցաւ ինքն գլխովին։

Ա՛ՐԴ յայնժամ 'ի բարեկամն Կեսարու էր Կուռնելիոս Դոլոբելլաս՝ պատանի հոյակապ և երևելի։ Սա խանդաղատեալ 'ի վերայ Կղէոպատրեայ, և շնորհս արարեալ նմա՝ զոր և խնդրեալ իսկ էր, առաքեաց ազդ առնել նմա 'ի ծածուկ. եթէ Կեսար ինքնին հանդերձեալ է 'ի ջուանկանել ընդ ցամաք ընդ Ասորիս, և հաստատեալ է խաղացուցանել և զնա յաւուրն երրորդի հանդերձ որդւովքն։ Իրաղդած Կղէոպատրեայ եղեալ, յառաջ քան զամենայն աղաչեաց զԿեսար թոյլ տալ նմա գնալ նուիրել նուէրս 'ի վերայ Անտոնիոսի. առեալ զինդիրն ջոքաւ 'ի գերեզմանն. և անկեալ 'ի վերայ շիրմին հանդերձ կանամբք ոմամբք յընտանեաց անտի, ասէր այսպէս. "Ո՞վ սիրեցեալդ Անտոնիէ, վայր մի յառաջ թաղեցի զքեզ ի մովք իսկ ապատ ձեռօք. և արդ աւադիկ զնուէր զայս ձօնեմ ես գերի և 'ի դիպահոյ կացեալ, զի մի կոծելով զիս ինքնին կամ աշխատ ջայլելով եղծանիցեմ ինչ զծառայ զայս մարմին, մարմին գերի և պահեալ 'ի վերայ քո յաղթանակին։ Մի՛ այլ պատուոյ ակնալցես դու յինէն՝ բայց նուիրացդ այդոցիկ. զոր վերջին առցես դու քեզ 'ի Կղէոպատրեայ՝ որ գերի գնաց։

քանզի ցորչափ կեցալք մեք երկոքեան, ինչ և ոչ մի որոշեաց 'ի միմեանց. այլ 'ի մահուն՝ զանգիտեալ եմ եթէ փոխանակեսցուք մեք զվայրս. դու աստէն Հռոմայեցիդ հանգուցեալ 'ի հող. ես չուառական դիտապատ յիտալիա, այսչափ ինչ միայն քումդ բաժանորդ գաւառին: Այլ եթէ դիք որ անդանօր հզօրք իցեն և կարողք (քանզի աստանօրքդ մատն եղեն մեզ), մի՛ զքոյդ կին Թողցես կենդանի, և մի՛ հանգարտեսցես դու՝ յիս ինքն ածիլ 'ի յաղթանակի. այլ աստէն տացես ինձ ծածկիլ և թաղիլ ընդ քեզ, որ 'ի կիրս բիւրուց ի-մոց աղէտից՝ չլիք ինձ այլ սաստիկ առաւել և դժոխըմբեր իբրու սուղ զայս ժամանակ՝ զոր կեցի առանց քո ,,:

Ողբ զայս կարդաց Կղէոպատրէ, և պասկօք բոլորեր և գիրկս ևս ածէր շիրմին. և ապա հրաման տայր պատրաստել նմա ըզբաղանին: Իբրև լուացաւ, բազմեցաւ 'ի սեղան և ճաշեաց մեծահաց: 'Ի նմին պահու եկեալ հասանէր անդր 'ի դաշտէն այր ոմն՝ ունելով կողով 'ի ձեռին. հարցեալ 'ի պահապանացն վասն բեռինն, նա 'ի վեր զտերևան առեալ՝ ցուցանէր զամանն թըզովք լի: Զարմացեալ նոցա ընդ գեղ մրգացն և ընդ մեծութիւնն, նա ժպտեալ ասէր նոցա առնուլ անտի. և ապա նոքա հաւատացեալ մուծանէին 'ի ներքս զգեղջուկն:

Իբրև ճաշն կատարեցաւ, առեալ Կղէոպատրա սնակ մի առաքէր առ Կեսար՝

դրեալ և կնքեալ. և արտաքս զամենեսեան հանեալ՝ բայց 'ի կանանց անտի երկուց, փակէր զդուրսն: Իսկ կեսար լուծեալ ըզպնակն և ընթերցեալ զաղերս նորա և զժուռեալ՝ թաղել զնա 'ի միասին ընդ Անտոնիոսի, անդէն խելամուտ եղեալ իրացն՝ զառաջինն խնդրեաց ինքնին ընթանալ դիմել առ նա. այլ ապա արձակէր զայլս 'ի շտապ տագնապի գնալ տեսանել զեղելն: Սակայն դէպք իրացն արագ արագ վճարեցան: Քանզի դիմեալ անդր շտապաւ պատուիրակացն, և գտեալ անտեղեակ գլխովին զպահապանն, բացին զդուրսն. և տեսանեն մեռեալ զԿղէոպատրա՝ հանգուցեալ 'ի մահիճ ոսկի և զարդարեալ 'ի զարդ արքունի: Իսկ անգանօր յերկուց կանանց անտի՝ մին Էրաս անուն, տապաստ անկեալ կայր և նա առ ոտս նորա. և միւսն՝ անուն Քարմիոն, դեղեալ դանդաչէր ծանրացեալ գլխով. համայն և այնպէս յօրիներ բոլորեր զպսակն զգլխովն Կղէոպատրեայ: Եւ յասել անդ ուրումն առ նա 'ի սրտմտութիւն բարկութեան. "Գեղեցիկ արդեօք իրաւ ո՞վ Քարմիոն,,. նա ետ պատասխանի. "Եւ կարի յոյժ գեղեցիկ արդեօք և 'ի ճահ կնոջն՝ որ ճետ ունի զայնչափ արքայից,,: Եւ կրկնեալ և ոչինչ, անդ և ինքն մատ մահճին անկեալ թաւալեցաւ:

Արդ՝ պատմեն ածեալ նմա զԱսպիդ օձն հանդերձ թղուվքն՝ և 'ի վերուստ ծածկեալ տերևովք. և թէ՝ նորա ինքնին հրա-

ման տուեալ իցէ՝ շանթել գազանին այ-
նորիկ 'ի մարմին իւր՝ առանց գիտելոյ իւ-
րոյ. և թէ՝ յառնուլ նորա զթուզան տե-
սեալ զգազանն՝ ասել. "Ա՞ստ ուրեմն է
դա". և ապա 'ի խայթ նորա մատուցա-
նել ինքնին մերկ զբազուկն։ Իսկ կէսք ա-
սեն՝ ունել նորա զԱսպիդն օձ փակեալ 'ի
սափորի. և յիլ ոսկի գրգռեալ և զայրա-
ցուցեալ զգազանն ինքնին Կղէոպատրեայ,
նա թափ տուեալ ունէր զբազկէն նորա։
Այլ զՃշմարիտն գիտաց և ոչ ոք. քանզի
և ասացին եւ ունել նմա զթոյնն ամփո-
փեալ 'ի զմեղին մի փոր. և ունէր գաղեալ
զմեղին զայն 'ի մէջ վարսիցն։

Բայց 'ի մարմին նորա ոչ տեսին խայթ
խածուածոյ, և ոչ նշան ինչ թունից, և
ո՛չ 'ի սենեկի անդ գտին զգազանն. թէ-
պէտ և ասէին՝ հեռս ինչ տեսանել զգա-
զանին մատ 'ի ծովահայեաց կողմն սենե-
կին՝ ուր էին և պատուհանքն։ Սակայն և
կէսք ասացին՝ 'ի բազկին Կղէոպատրայ
տեսանել կրկին դուզնաքեայ և աղօտ խայ-
թից։ Թուի և Կեսար հաւատս ընծայել
ասողացն. քանզի և 'ի յաղթանակին իւ-
րում տանէր դրոշեալ մի 'ի նմանութիւն
Կղէոպատրայ՝ Ասպիդ օձ կախեալ զնմա-
նէն։ Արդ՝ օրինակ զայս ասեն պատահեալ
իրացն։

Իսկ յայնժամ Կեսար թէպէտ և 'ի
խոր խոցեցաւ ընդ մահ կնոջն, հիացեալ
էր ընդ քաջութիւն ոգւոյն. և հրաման
տայր թաղել զմարմին նորա շքով և ար-

քայօրէն 'ի միասին ընդ Անտոնիոսին։ Դարձեալ և երկու այն կանայք յուղարկաւորութիւն առին պատուով 'ի հրամանէն նորա։ Եւ մեռաւ Կղէոպատրա ամաց երեսուն և ինուն, յորոց և թագ կապեաց նա զամս քսան և երկու. և 'ի սոցանէ աւելի քան զչորեքտասան ամ թագաւորեաց ընդ Անտոնիոսի. Իսկ վասն Անտոնիոսի կէսք ասեն՝ ամս ունէլ յիսուն և երիս. և կէսք դարձեալ՝ յիսուն և վեց։

Բայց զպատկերսն Անտոնիոսի տապալեցին. այլ Կղէոպատրեայն՝ կացին յակատանի, քանզի Արքիբիոս ոմն մի 'ի բարեկամացն նորա հազար տաղանդ 'ի նեղքս մատուցեալ կեսարու, ապրեցոյց զայնոսիկ յարկածիցն Անտոնիոսին։ Եւ եթող Անտոնիոս յերից անսի կանանց իւրոց որդիս եօթն. և էր երէց 'ի նոսա Անտիւղոս, զոր միայն ետ սպանանել կեսար։ Իսկ զայլսն առեալ ժողովեաց Հոկտաւիա, սնուցեալ զնոսին 'ի միասին ընդ իւրոց որդւոցն. և ամուսնացոյց զԿղէոպատրէ դուստր զԿղէոպատրեայ դշխոյին ընդ Յոբասայ արքային՝ այր բարեհամբաւոյր յոյժ. իսկ զԱնտոնիոս զծնեալն 'ի Փուլվիայ այնպէս բարգաւաճ յարդարեաց, զի և զկնի Ագրիպպասայ՝ որ յառաջին բարձի էր առ կեսարու, և զկնի որդւոցն Լիվիայ՝ որ էին յերկրորդին, զերրորդ բարձն ունէր այս Անտոնիոս։

Եւ էին Հոկտաւիայ դստերքք երկու 'ի Մարկեղոսէ, և ուստր մի Մարկեղոս անուն. զսա յորդէգիրս իւր ընկալաւ Կեսար և փեսայացուցանէր ևս իւր զնա. իսկ զմի յերկուց դստերացն տայր Ագրիպպասայ: Բայց երբև այն ինչ փեսայացեալ՝ մեռանէր այս Մարկեղոս, և երբև փեսայ այլ 'ի բարեկամն հաւատարիմ հոգայր Կեսար դտանել, ասէր յայնժամ Հոկտաւիա՝ պարտ է Ագրիպպասայ արձակել զիւրն և փոխանակ առնուլ զդուստր զԿեսարուն: Հաւանեցաւ Կեսար, ապա և Ագրիպպաս ինքնին. ուստի և Հոկտաւիա առեալ զիւր դուստրն տայր Անտոնիոսին, և Ագրիպպաս առնոյր զԿեսարուն: Իսկ էին և այլ դստերքք Անտոնիոսի մեծին և Հոկտաւեայ. մին հարսնացաւ Դոմիտիոսի Ենոբարբեայ, և զմիւսն՝ անուն Անտոնիա երևելի 'ի պարկեշտութեան և 'ի գեղն՝ էած Դրուսիոս որդի Լիվիայ և ուրջու Կեսարու: Յամուսնութենէ ասսի ծնաւ Գերմանիկոս և Կղաւդիոս, այն որ ապա իշխանացաւ: Իսկ յորդւոց անտի Գերմանիկոսի՝ Գայիոս իշխանացեալ վեր 'ի վերոյ՝ ոչ հարուստ ժամանակ, ապանաւ հանդերձ որդւովն և կնաւն: Իսկ Ագրիպպինա՝ ծնեալ յԵնոբարբոսէ որդի մի Լուկիոս Դոմիտիոս անուն, ամուսնացաւ ապա ընդ Կղաւդիոսի Կեսարու: Եւ Կղաւդիոս յորդէգիրս իւր առեալ զորդին նորա, անուանեաց զնա Ներոն Գերմանիկոս. և թագ կա-

պեաց սա յաւուրս մեր և սպան զմայր իւր. և վայրիկ մի ևս առ խեռուԹեանն և անմՀաուԹեանն իւրոյ հիմն 'ի վեր առնէր սա զտէրուԹիւնն Հռոմայեցւոց. և եկաց նա հինգերորդ Թուով 'ի պայազատուԹենէն Անտոնիոսի։

---

## ԶՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ

## ԴԵՄԵՏՐԻ
## ԵՒ
## ԱՆՏՈՆԻՈՍԻ

ԼՍԻ արդ՝ քանզի մեծամեծք հանդերձեցան փոփոխութիւնք երկոցուն սոցա, առաջին մեք զզօրութիւն նոցա և զշուք փառացն 'ի քնին առցուք։

Արդ՝ Դեմետրի հայրենատուր եկաց տէրութիւնն և նախապատրաստ, քանզի և բարգաւաճ իսկ էր Անտիգոնոս առաւել քան զամենայն պայազատս թագին. և մինչև Դեմետրի յարբունս հասեալ, նա խաղաց գիմեաց և բազում ինչ գրաւեաց յԱսիոյ։

Իսկ Անտոնիոս հայր ունելով պարկեշտ և ցած, այլ ոչ և մարտիկ, և որ 'ի մեծաց ինչ չեթող որդւոյն հասանել 'ի փառս ա-ւագութեան, քաջալերեցաւ զօրավիգն իւր առնել զտէրութիւնն կեսարու՝ ո-

բում և ոչ մերձաւոր ինչ էր ըստ զարմին. և եկաց ժառանգ բարեացն՝ զոր ստացաւ նա 'ի քիրտն երեսաց. և ինքնին միայնակ յառաջագէմ խրոխտուսեալ՝ այնչափ զօրացաւ, զի և յերկուս ողջոյն զտէրութիւնն բաժանեալ զՀռոմայեցւոց, ընտրեաց իւր և առ զերևելի զմասանն. և բազում անգամ ևս՝ ինքն մերձ ոչ գոլով պարտեաց զՊարթևս 'ի ձեռն իւրոց պաշտօնէից և զօրավարաց. և մինչև 'ի ծուխն Կասպից եհար վանեաց զազգս խուժադուժս զԿաւկասուն։

Բայց և բամբասանքն ինքնին գլխովին՝ որ զնմանէն, հաւաստիս 'ի ներքս բերեն մեծութեան նորա։ Քանզի հայրն Դեմետրի մեծապէս հաւանեցաւ ածել որդւոյն 'ի կին զՓիլլա դուստր զԱնտիպատրոսին, իբրու կին վեհագոյն՝ թէպէտ և անցեալ ըստ տիս։ Իսկ Անտոնիոսին՝ դժպատեհ համարեցան զամուսնութիւնն ընդ Կղէոպատրեայ, կին մեծազօր առաւել և շքեղ քան զամենայն թագաւորս ժամանակին՝ բայց յԱրշակայ։ Քաջայայտ ուրեմն կայ մեծաշուք աւագութիւն առն, զոր վեհագունիցն ևս քան զիւր զըղձացեալն՝ արժանի զնա համարէին մարդիկ։

Բայց 'ի խորհուրդ տիրանալոյն նոցա, անբամբաս գտաւ Դեմետրիոս 'ի նուաճել և յիշխել 'ի վերայ մարդկանն՝ որ սովորեալ ևս էին իշխել և տեառն 'ի խնդիր ելեալք։ Այլ Անտոնիոսի խիստ էր և բըռնաւորական ընդ լծով զժողովուրդն առ-

նել զՀռոմայեցւոց, այն ինչ նոքա լծընկէցք 'ի միապետութենէն կեսարու։

Իսկ որ առաւել վեհ և հոյակապ 'ի նահատակութիւնս նորա, մարտ պատերազմին նորա ընդդէմ Կասսիոսի և Բրուտոսի. բայց կրթեցաւ 'ի կապտել յաղատութենէ զհայրենի քաղաքն և զքաղաքացիսն։ Ուր Դեմետրիոս ինքնին՝ մինչև պաշարեալ յաղէտս իւր ամբաւս՝ ցանգ հոգացաւ յաղատութիւն հանել զԵլլադա, և վանել վարել զգունդս պահակաց 'ի քաղաքաց քաղաքաց. և ոչ իբրև զԱնտոնիոսն գործեաց՝ սպանեալ 'ի Մակեդոնիա զազատարարսն Հռովմայ և ընդ գործն խընդացեալ։

Միայն բարձրագլուխ կայ 'ի գովութիւնսն Անտոնիոսի լիաձեռն և մեծապարգև ձիրք նորա. բայց Դեմետրիոս և 'ի մասինդ այնչափ ինն գերազանցէ, որչափ զի առաւել ընծայաւորեաց նա զթշնամիսն, քան թէ Անտոնիոս զբարեկամսն։ Եւ եթէ գովեցաւ Անտոնիոս հրաման տուեալ թաղել զԲրուտոս շքով, իսկ Դեմետրիոս միանգամայն և զանկեալսն 'ի թշնամեաց առհասարակ թաղեաց, և զդերին առեալ արձակեաց առ Պտղոմէոս բազում ընչիւք և պարգևօք։

Այլ 'ի բարեբաստութիւնսն թէպէտ և երկոքին նոքա խեռացեալ ստահակէին, մեղկեալք 'ի գրգանս փափկութեան, սակայն և բամբասէ և ոչ ոք՝ եթէ Դեմետրիոս 'ի բարեկրութիւնս իւր և 'ի սփոփութիւնսն

երբէք յուլացաւ 'ի դէպ ժամանակ գեղեցիկ նահատակութեանցն, այլ գրդայր փափկանայր այրն՝ միայն 'ի բազում պարապութեանն. և 'ի զբօսանս իւր առնոյր զԼամիա՝ ըստ որում յառասպելին անդ՝ յորժամ խաղալ կամէր և ննջել. իսկ յորժամ հանդերձէր վառել 'ի մարտ պատերազմի, չէր նորա նիզակն բոլորեալ 'ի բաղեղն, և ոչ նորա սաղաւարտ յիւղս բուրէր անուշից, և ոչ 'ի սրակապանաց կանանուոյն արտաքս 'ի կռիւն ելանէր խնծղագին և ծաղկապսակ, այլ զերդս կարկեալ զպարուց և զկայթից, և զձայն լռեցուցեալ զդիներբուաց, դառնայր լինէր նա յայնժամ "Աննուէրն Արեսի պաշտօնատար", ըստ բանին Եւրիպիդեայ. և երբէք նա չանկաւ չուառացաւ 'ի սփոփութեանց անտի իւրոց, կամ յանարի վատասրտութենէն:

Բայց Անտոնիոսին իրք, զոր օրինակ է մեզ տեսանել 'ի նկարս՝ զի Ռմիպղէ 9 'ի ձեռաց հանէ Հերակլեայ զվիրդն, և յաուիծենուոյն տեռազերծ առնէ զնա, սակէս բազում անգամ Կղէոպատրա զզէնան հանեալ զԱնտոնիոսին, և 'ի հրապոյրս իւր թակարդեալ զնա, ածէր ամոքէր գալ զբօսանել և սփոփել ընդ նմա 'ի ծովափունան Կանովպեան և Տափոսիրեան, թողեալ լքեալ զմեծամեծ նահատակութիւնս զառաձեռինան և զկարևոր զարշաւանն: Եւ հատբուն նա ոչինչ ընդհատ 'ի Պարիսայ, խոյս տուեալ 'ի մարտէն՝ գը-

նայր անկանէր 'ի ծոց անդր նորա, նա և վատթարագոյն քան զՊարիս. զի նա յետ պարտութեանն փախուցեալ անկաւ յառագաստն. իսկ Անտոնիոս 'ի փախուստ դառնայր և թողոյր զյաղթութիւնն՝ զհետոց կալեալ զկղէոպատրեայ։

Առ այս դարձեալ՝ կանայք բազումք եղեն Դեմետրի. և չէր նմա արդելեալ բանն՝ սերունդ գոլով նա 'ի Փիլիպպոսէ և յԱղեքսանդրէ, և զհետ երթայր սովորութեան ազգայիցն Մակեդոնացւոց, ըստ որում Լիւսիմաքոսի և Պտղոմեայ. և շքով և պատուով գնայր նա առհասարակ ընդ նոսա։ Իսկ Անտոնիոս ածէր նախ կանայս երկու, զոր իշխեաց և ոչ ոք երբէք 'ի Հռոմայեցւոց. և ապա 'ի բաց վարէր զոստանիկն և զօրինաւոր զամուսինն՝ առ 'ի շնորհս օտարին, ընդ որում զուգեցաւ ընդդէմ օրինաց։ Ուստի և յամուսնութեանց անտի Դեմետրի աղէտք և ոչ մի պատահեցին. իսկ միւսումն՝ անհնարինք։

Այլ յայսր ամենայնի վերայ՝ 'ի շամբշութիւնն Անտոնի չէիք գտանել ամբարշտութիւն հաւասար Դեմետրիոսին։ Քանզի և գրեն պատմագիրք, եթէ 'ի դղեկէ անտի Աթենայ տարագիր 'ի բաց վարէին առհասարակ շունք. քանզի այս կենդանի անիսիր բնաւորեցաւ խառնակիլ յայտնի։ Իսկ Դեմետրիոս գլխովին 'ի Կուսանոցի անդ Աթենասայ լինէր ընդ պոռնիկս, և պղծեաց ևս նա կանայս բազում զքաղաքացեաց։ Դարձեալ և զանազորոյն ըղ-

կիրան՝ անհաղորդական արդեօք այնպի-
սեաց գրգանաց փափկութեանց՝ դոցէ ոք
և զայն 'ի հեշտախտութեանն Դեմե-
տրի. զի և փոյթ ինչ չտարաւ նա՝ մանա-
ւանդ եթէ և կարի նեղ հասոյց, այնպէս
հիքաբար մահու պատանուոյն՝ որ դեղեցիկ
ևս էր և պարկեշտ առաւել քան զամենայն
Աթենացիս. և մեռաւ նա՝ զի միայն ապ-
րեսցի 'ի պղծութենէն։ Եւ սակաւուք
ասել, Անտոնիոս անժուժկալութեամբն
անիրաւեցաւ յանձն իւր. իսկ Դեմետրիոս՝
յայլս։

Իսկ առ մերձաւորս իւրեանց՝ յամենայ-
նի անբամբաս գտաւ Դեմետրիոս. իսկ Ան-
տոնիոս՝ զիւր քեռին 'ի ձեռս տայր թշնա-
մեաց՝ զի դամադիտ լիցի 'ի մահն Կիկերոնի. գործ ապիւնախանձ և յոյժ անագո-
րոյն. այնչափ՝ զի և հաղիւ ուրեմն արդեօք
թողութիւն գտանէր Անտոնիոս, եթէ եր-
բէք մահն ինքնին Կիկերոնի գին փրկու-
թեան հասանէր լինել քեռւոյն։

Իսկ յերդմնահարութիւնս երկոցուն
սոցա և յուխտադրուժ 'ի կիրան, մին՝ 'ի
դիպահոլ զԱրտաւազդ առնելով, և միւսն՝
զԱղեքսանդրոս 'ի մահ վարելով, պատ-
ճառս իմն՝ առհասարակ ասեն ունել Ան-
տոնիոսի. իբրու որ ելիք եթող զնա Ար-
տաւազդ 'ի Մարս և մատն եղև. իսկ վասն
Դեմետրի ասեն բազումք՝ բարբանս կար-
կատել 'ի գործ անդր ամբաստանութեանն,
և վրէժխնդիր լինել՝ զի անիրաւեցաւ ինքն,
և ոչ անիրաւեաց։

Աւ այս՝ և 'ի յաջողակ եւս նահատակութեանց նոցա, Դեմետրիոս անձամբ անձին 'ի գլուխս տարաւ զգործն. իսկ Անտոնիոս՝ ինքն մերձ չգոլով յաղթութիւնս զգեղեցիկսն և զմեծամեծսն կատարեաց 'ի ձեռն զօրավարացն:

Եւ ապա՝ երկոքին նոքա 'ի ձեռաց ըզտերութիւնն հանէին իւրեանց իսկ ինքեանք, այլ տարօրինակ. քանզի մին թողաւ լքաւ՝ 'ի բաց 'ի նմանէն կացեալ Մակեդոնացւոցն. իսկ միւսն եթող եւեթ՝ խոյս տուեալ յորոց մարտ եդեալ նահատակէին 'ի վերայ նորա. որպէս զի՝ և յանցեաւ մին 'ի տաղտկացուցանել իւրում այնպէս զզօրականն. և յանցեաւ միւսն՝ 'ի դրժել իւրում քաջիկ մտերմութեան իւրոցն առ նա և հաւատարմութեանն:

Իսկ 'ի վերջէ՝ և ոչ միոյ ուրուք 'ի նոցանէն մահն գովելի ոչ է. սակայն առաւել այպանելի է Դեմետրիոսինն: Քանզի ժուժեաց գերութեանն, և 'ի դիպահոլ արգելեալ՝ յանձին կալաւ եռամեայ աւուրս շահել կենացն, 'ի գինի և յորովայն՝ իբրու զանբանս ոմանս՝ կրթեալ և մտաբերեալ: Իսկ Անտոնիոս թէպէտ և վատասիրտս և աշխարելիս և անփառունակս, սակայն և մինչև թշնամւոյն տիրացեալ 'ի վերայ մարմնոյն՝ անձին արար 10:

---

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Այս է՝ 'ի Միջերկրեայ Ծովէն։

2. Ածանցեալ 'ի Քորէէ, այն է առասպելեալն Ալևոր՝ անգեղեայ ժահադէմ պաշտօնեայն մեռելոց 'ի դժոխս. իբրու ասել՝ Սահմանապրոնիւռ մեռելոյն։

3. Κηρας, Օրահաս մահու և ժանտ ախտ, կոչէ Պլուտարքոս զշամբուշ թատերականն, զոր յիտալիոյ ածեալ էր Անտոնիոս։

4. Յն. Κλεψυδρα. այս է՝ Գաղտաջուր, կամ Գողաջուր։ Անուն աղբերն 'ի դղեկին Աթենայ։ Իբրև է զի նուազէր ջուր նորա և ցամաքէր, և վասն այնորիկ կոչեցաւ այնպէս։

5. Այս է՝ Ատրպատական աշխարհ։

6. Ալիք 'ի Յն. օրին. ունին Քրոորքէս Պորին։

7. Այս անուն էր տեղւոյն, յորում մարտ պատերազմին նկարեալ էր Հսկայիցն Տիտանեանց ընդդէմ աստուածոց։

8. Երկանիշ է բառն՝ Տորիանէ. մի՝ անուն յատուկ տեղւոյն, զոր կալաւ Կեսար. և միւս ևս՝ նշանակէ Շէրեթ. և յայս

վերջինն ակնարկեալ հեգնէ Կղէոպատրա։

9. Ոմիաղէ, թագուհի Լիւդիոյ։

10. Յայսր ամենայնի վերայ, Թէպէտ և յոյժ այպանելի է Դեմետրինն, առաւել մեծեղեռն է Անտոնիոսինն։ Քանզի Անտոնիոս՝'ի վեհապոյն իւր բարին մեծապէս անիրաւեցաւ՝ 'ի կեանսն. բառնալով ինքնին զայն՝ զոր ինքն չէտ։ Իսկ Դեմետր ա-նարդեաց զկեանսն անբանաբար՝ ոչինչ ա-ռաքինացեալ 'ի նմա։ Ուստի և երկոքին 'ի մահուն անիրաւեցան 'ի կեանսն, մին՝'ի գոյութիւն նորա, և միւսն՝ 'ի լաւութիւն նորա։

---

# ՊԼՈՒՏԱՐՔԵԱՅ

## ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ԴԻՈՎՆԻ

ԵՒ

ԲՐՈՒՏՈՍԻ

## ԴԻՈՎՆ

ՈՐՊԷՍ Սիմոնիդէս ասէ, ոմ Սոսիէ Սենեկիոնն, եթէ ոչինչ ցասեաւ Եղիոն ընդ Կորնթացիան, զի նորա ընդդէմ զինուորեցան նոքա 'ի միասին ընդ Աքայեցւոց, զի և Գղաւկոս անդստին 'ի ծագմանէն Կորնթացի՝ ինքնին մոադիւրագոյնս նիզակակից էր Եղիոնի. Սակայն և ոչ 'ի դէպ ելեալ արդեօք Հռոմայեցւոց և Հելլենացւոց բոլոր ունել ընդդէմ Ակադեմիոյ, երկոցուն նոցա միապէս օգտեալ 'ի մատենէ սատի՝ յորում վարք Բրուտոսին արձանագրեալ կայ և Դիոնին: Յորոց մին կենակից Պղատոնի եկաց, և միւսն 'ի Պղատոնին վարդապետութիւնսն վարժեցաւ. ուստի և երկոքին միանդամայն իբրու 'ի միոյ ըմբշարանէ արուաքս ելին 'ի մրցմունս մեծամեծս: Եւ չեն ինչ արդեօք սքանչելիք, եթէ նոքա 'ի բազմադէմ գործս նա-

հատակեալք հանգունատիպս, հարազատս, հաւատոիս գեղեցիկ 'ի ներքս բերին վարժապետին իւրեանց յառաքինութեան անդր. հաւատարմացուցանել՝ եթէ պարտ է տերութեան և բախտին անանձնատ զիմաստութիւնն ունել և զարդարութիւն, որպէս զի գործք քաղաքականք՝ լաւք կայցեն և մեծամեծք: Քանզի զոր օրինակ Հիպպոմաքոս որ զբմբիշն օծանէր, ասէր՝ եթէ զվարժեալն զիւր նա ճանաչէր զնոսա 'ի հեռատանէ, թէպէտ և զմիս ևս 'ի տանել նոցա 'ի հրապարակէն. սակայն և 'ի դէպ ելցէ արդեօք բանից հրահանգ մարդկանն զուգաշաւիղ լինել գործոցն նոցա, ընդ վայելչականին պատկանեալ և զհանգունատիպ չափ և թիւ:

Ա՛ռ այս՝ և բախտին փոփոխութիւնք նմանօրինակ պատահեալք յերկոսին 'ի նոսա՝ քան ըստ ընտրութեանն՝ մանաւանդ ըստ դիպաց, նմանք միմեանց յարդարեն զվարս նոցա: Քանզի և երկոքին նոքա վճարեցան 'ի կենաց աստի, մինչև տարեալ զգործս իւրեանց 'ի կէտ նպատակին, երբէք ո՛չ առեալք ոգի 'ի բազում և 'ի մեծաց հակառակութեանց: Իսկ որ առաւել սքանչելին է, զի և երկոցուն նոցա յայտնեցաւ կատարած նոցա 'ի դից անտի, առ աչօք ինչ թաղծալից երևութացեալ երկոցուն սոցա. և այս համբաւ հռչակ հարաւ յարանց անտի դլխովին՝ որ երեսս ինչ չառնեն այսպիսեաց իրաց. իբրու որ ողջախոհ մարդոյ պատահեալ երբէք ո՛չ

ինչ տեսանել զառաջօք տեսիլ զդից կամ զկերպարան ինչ. այլ թէ մանկանն և խոթամիտ կանանին և որք առ վատասրտութեան բանդագուշեալքն, զառածեալք 'ի միտս կամ թէ անաւագեալք 'ի մարմին՝ երևակութիւնս ծնանել բնաւորեցան այնպէս սափաստուտս և վայրավատինս. և անապաշտութեամբ կարծեն ունել անձանց դ!նս ինն ոխերիմ:

Սակայն եթէ Դիոնն և Բրուտոս՝ որք մեծախորհուրդք և իմաստասէրք՝ որք ոչ ինչ այնպէս դիւրըմբռնելիք 'ի կրից, այնչափ անհնարին շաթժեցան 'ի խօլական ցնորիցն, զի և բարեկամաց իւրեանց Ճառարկեալ պատմեցին զբանն, ո՛չ գիտեմ՝ եթէ այնուհետև հարկ իցէ մեզ ընդունել զբան զայն նորանշան յոյժ 'ի կարի վաղընջուց բանսն, եթէ՝ Այսք չարք և ոխերիմք խանդացեալք ընդ առաքինի մարդիկն և հակառակամարտք գործոց նոցա՝ ամբոխս և արհաւիրս 'ի վերայ ածեն նոցա. մարտ եգեալ կռուին և ճգնին վանել զառաքինութիւն նոցա. զի մի յանկարծ մարդիկն այն անդրդուելիք կացեալք 'ի լաւութեան և ամբիծք վարուք, ապա յետ մահուն՝ լաւագունին քան զիւրեանցն հանդիպեսցին մասին 1: Այլ զայսոսիկ այլում Ճառի թողլի է մեզ: Իսկ զարդիս 'ի բանս յայս երկոտասանեորդ զուգակշիռ Վարուցս՝ նախապատում լինցուք զերիցագունէն:

Դիոնեսիոս երէց թագ կապեալ՝ վաղվաղակի կլին ածէր զդուստր Հերմոկրա-

տեայ Սիրակուսացւոյ։ Այլ չև հաստա-
տեալ յիւրում տէրութեանն, յապստամ-
բութիւն ընդդէմ նորա դրդեալք Սիրա-
կուսացւոց, այնչափ իմն ահագին անիրա-
ւութեամբ կքրեցան նոքա 'ի կին անդր
նորա, որպէս զի և զիւրովին գնաց կինն։
Բայց ապա միւսանգամ զարքայութիւնն
զբռամբ արկեալ Դիոնեսիոս և զօրացեալ,
ածէր դարձեալ կանայս երկու 'ի նմին ժա-
մանակի. մի յաշխարհէն Լոկրացւոց Դո-
վրիդէ անուն, և միւս ևս՝ բնիկ Սիրակու-
սացի Արիստոմաքէ անուն, դուստր Հիպ-
պարինոսի աւագ առն 'ի մէջ Սիրակուսա-
ցւոց, բարձակից Դիոնիսեայ՝ յորժամ նա
զառաջինն կարգեցաւ զօրավար պատերազ-
մի ինքնիշխան։

Եւ պատմեն՝ ածել զնոսա 'ի կին 'ի
միում աւուր. և թէ՝ գիտաց և ոչ ոք,
առ ո՞ 'ի նոցանէն նախ եմուտ նա. և թէ՝
զամենայն ժամանակն նա յետ այնորիկ
միապէս վարեցաւ առ երկոսեանն. քան-
զի և երկոքին նոքա ցանգ 'ի միասին ըն-
թրէին ընդ նմա, և ընդ նմա փոփոխ ննջէին
'ի գիշերի, թէպէտ և խուժան Սիրակու-
սացւոց կամէր՝ զի սուաւել քան զէկն
նախապատիւ 'ի բարձին շուք առցէ բը-
նակն։ Այլ դէպ եղև՝ եկին նախ ծնանել
զաւակ Դիոնիսեայ. և այն օգնեաց կնոջն
վասն ազգին իւրոյ։ Իսկ Արիստոմաքէ հա-
ւուստ ժամանակ եղեալ ընդ Դիոնիսեայ՝
մնաց ամուլ. թէպէտ և անձկայր յոյժ
Դիոնեսիոս ունել 'ի նմանէ զաւակ, որպէս

զն և տայր 'ի վերջէ սպանանել զմայր Լո-
կրուհւոյն, բիծ կարկատեալ եթէ դեղ
խառնեաց նա Արիստոմաքեայ։

Աբդ՝ եղբայր Արիստոմաքեայ գոլով
Դիոնէն, շուք ունէր առ բռնաւորին զա-
ռաջինն 'ի մեծարանս երեսաց քեռն. այլ
ապա հանձար բազում 'ի դէմս բերեալ՝
և անձամբ անձին շնորհս եգիտ առաջի նո-
րա. զն և բռնաւորն ինքնին յոյժ սիրեաց
զնա, և պատուէր ևս ետ գանձաւորացն
իւրոց տալ Դիոնէի զոր միանգամ և խըն-
դրեսցէ, բայց և 'ի նմին աւուր ցուցցեն
նմա զտուեալն։ Եւ քանզի անդատին 'ի
բնութենէն էր Դիոնէն հանճարիմաստ և
մեծախորհուրդ և քաջ, առաւել ևս բար-
գաւաճ գտաւ՝ յորժամ յաստուածային
գոգցես ազգմանէն եկն եհաս Պղատոն 'ի
Սիկիլիա. ոչ 'ի մարդկային ինչ խորհրդոց
ածեալ անդր, այլ որպէս երևիդ՝ եթէ 'ի
դից ոմն հիմն 'ի վաղնջուց արկեալ զազա-
տութեանն Սիրակուսացւոց, և նիւթեալ
ընդոտնեալ զբռնակալութիւնն, ած ձը-
գեաց զնա յԻտալիոյ 'ի Սիրակուսա. և
կենակից կենցաղակից լինել իմաստասիրին՝
յաջողեաց Դիոնէի. որ թէպէտ և պատա-
նեակ, սակայն և կարի հեշտալուր առա-
ւել քան զամենայն կենակիցսն Պղատոնի,
և յոյժ յառաջամիտ յառաքինութիւն.
ըստ որում եթող մեզ գրով ինքնին Պղա-
տոն, և արդիւնքն ևս վկայեցին գլխովին։

Քանզի թէպէտ և սնեալ նա առ բռնա-
ւորին 'ի վարս անկած, և 'ի կեանս իմն

յեղյեղուկ և անաւագ, և 'ի ճոխաբար սպասարկութեան և 'ի գրգանս գժսկիս, և սովորեալ և աղճատեալ 'ի քաղաքավարութեան՝ որ 'ի հեշտութիւնս հաստատուն գիտիցէ զբարին և 'ի մեծութիւնս, այն ինչ նա զճաշակ առեալ զիմաստուն բանից և զառաքինակրօն զիմաստասիրութեանն, անդէն վառեցաւ բորբոքեցաւ հոգի նորա 'ի նմա. և 'ի բուսոյ անտի բարուցն խրախուսեալ՝ հեշտընկալ յառաքինութիւն և 'ի ցածութիւն, ակն ունէր գեղեցիկ պարզմտութեամբ՝ եթէ և ինքնին Դիոնեսիոս զնոյն օրինակ զգածեացի 'ի հանճարոյ բանիցն այնոցիկ. ուստի և գուն գործեալ, հաղիւ ուրեմն յաջողեցաւ՝ զի կենակից Պղատոնի ինքնին և բռնաւորն լուիցէ նմա։

Ա՛յլ պայքար երևելի լինէր 'ի կենակցութեան անդ յաղագս առաքինութեան մարդոյ, և մասնաւոր՝ յաղագս արիութեան. և քանզի կայր և ցուցանէր Պղատոն՝ եթէ արիանալ մարթ է ամենայնի առաւել՝ քան բռնաւորաց. և դարձուցեալ զբանսն յաղագս արդարութեան, երջանիկ կարդայր զկեանս արդարոց, և հէգ և թշուառական՝ զանիրաւացն, ոչ ևս այնուհետև հանդուրժեաց բռնաւորն, իբրու որ կշտամբեալ ինքնին 'ի բանից անտի. և սրտնէր ցասնոյր և՛ ընդ որս մերձն կացեալք յակնիռս՝ հաւանէին ընդ իմաստասէրն շարժեալք 'ի բանից նորա. ապա 'ի վերջէ 'ի սրտմտութիւն բարկութեան

բրդեալ հարցանէր զՊղատոն, առ ի՞նչ նա
եկն ի հաս անդր 'ի Սիկիղիա. իբրև պատաս-
խանի եառ իմաստասէրն՝ եթէ 'ի խնդրել
զայր լաւ. կրկնեաց բռնաւորն և ասէ.
"Այլ ուրեմն՝ օ՞ն և օ՞ն դիք՝ թուիցի քեզ
չև գտանել այր այնպիսի,,:

Ապա յետ այնորիկ զմոաւ ածեալ
Դիոնէսի, զի ո՛չ ցայնվայր կայցէ բարկու-
թիւն բռնաւորին, առեալ 'ի բաց արձա-
կէր զՊղատոն, որ և ինքնին նա փուրթացաւ
մեկնիլ. և տայր զնա յեռաթի մի՝ յորում
և Պողիս Սպարտացի յուղի անկեալ գնայր
յայնժամ յԵլլադա: Բայց Դիոնէսիոս ա-
զաչեաց զՊողիս 'ի ծածուկ սպանանել 'ի
ճանապարհին զիմաստասէրն. կամ եթէ՝
զայն չկամի՝ գոնեա վաճառել զնա. յո-
լում և իմաստասէրն ինքնին ոչինչ արդեօք
ինասեացի՝ ասէ. այլ այր նա գոլով ար-
դար՝ երջանիկս արդեօք կեցցէ և 'ի ծա-
ռայանալ իւրում: Ուստի և պատմեն՝ ա-
ծեալ Պողիս զՊղատոն յԵգինա՝ անդանօր
վաճառել զնա. քանզի և էր յայնժամ
մարտ Եգինացւոց ընդ Աթենացիս. և վը-
ճիռ ևս տուեալ էր նոցա՝ զայր Աթենա-
ցի հասեալ յԵգինա 'ի վաճառ հանել:

Սակայն և ո՛չ այնպէս 'ի պատուոյն ինչ
իւրմէ անկանէր Դիոնէս առ Դիոնիսեայ.
նա և զեռպանութիւնք երևելիք յանձն
եղեն նմա, արձակեալ հրեշտակութեամբ
առ Կարքեդոնացիս: Եւ աքանչացաւ նա
յոյժ առ նմա, զի և ինքնին բռնաւորն
յանձն առնոյր՝ Դիոնէսի ևեթ խօսել ընդ

նմա ամենայն համարձակութեամբ. որ և պարզերես ասէր՝ որ ինչ միանգամ 'ի միտս անկանէր նորա, ըստ որում և յորժամ վասն Գեղոնէի յանդիմանեաց զնա։ Քանզի խաղ երբեմն արարեալ Դիոնիսեայ զարքայութիւնն Գեղոնէի և ասացեալ ևս, եթէ անչուշտ Գեղոնէ եկաց Սիկիլիոյ Գեղոն, այն է՝ ծաղր. որք լուանն՝ կեղծաւորեցան զարմանալ ընդ հեգնութիւն բանին. իսկ անգուստ Դիոնէի խոժոռեալ՝ ասէր ցԴիոնեսիոս։ "Այլ քո ինքնին բռնացեալ է, զի 'ի շնորհս Գեղոնէի հաւատացին քեզ. բայց 'ի շնորհս քո հաւատացեն և ոչ ումեք"։ Քանզի և արդեօք տեսիլ գեղեցիկ յոյժ՝ եցոյց Գեղոնէ ըզմիապետութիւն քաղաքին. իսկ Դիոնեսիոս՝ վատթար յոյժ։

Արդ որդիք երեք գոլով Դիոնիսեայ առ 'ի Լոկրուհւոյն. և չորք յԱրիստոմաքեայ, և 'ի նոցանէն երկուք՝ դուստր Սոփրոսինէ և Արետէ, զՍոփրոսինէ ած 'ի կին մի ոմն յորդւոց նորա՝ անուն Դիոնեսիոս, և զԱրետէ՝ եղբայր նորա Թէարիդէս։ Այլ ապա 'ի մեռանել եղբօրն, առնոյր Դիոնէ զԱրետէ՝ զդուստր քեռն։

Յետ այսորիկ 'ի դժուարին խօթութիւն անկեալ Դիոնեսիոս մերձ 'ի մահ, գուն գործէր Դիոնէ խօսել ընդ նմա առանձինն վասն որդւոցն Արիստոմաքեայ. բայց յայնժամ բժշկաց երեսս արարեալ պայազատի թագինն՝ չետուն նմա ժամ պարապոյ. և ըստ որում Տիմէոս ասէ՝ խառնեալ և դեղ

թմբրեցուցիչ Դիոնիսեայ՝ զոր և խնդրեացն իսկ, և զգայաղերկ արարեալ զնա՝ այնպէս մահահամբոյր գործեցին զթմբրութիւնն։

Սակայն և այնպէս յառաջնում անդր կենակցութեան բարեկամացն ընդ Դիոնիսեայ կրսերոյ՝ այնպէս իմն քաջութեամբ խօսեցաւ առ նա Դիոնն յաղագս լաւութեան կարգի իրաց ժամանակին այնորիկ, որպէս զի և 'ի հանճարեղ խորհրդեան իւրում՝ իբրև մանկունս ոմանս նշաւակեաց նա յայնժամ զայլսն. դարձեալ և 'ի համարձակախօսութեան իւրում՝ զնոսա իբրև ծառայս ոմանս բռնաւորութեանն. որք առ վատութեանն և առ ահին բազում ինչ շնթելով խորհուրդ տային պատանեկին։

Իսկ որ առաւել հիացոյց առհասարակ զնոսա, զի մինչդեռ երկուցեալ զանգիտէին նոքա 'ի մօտալուտ վտանգէ արքայութեանն 'ի կողմանց անտի Կարքեդոնացւոց, եկաց Դիոնն և ձեռն յանձին հարկանէր՝ զի թէ հաշտութիւն խնդրէ Դիոնեսիոս պատանին՝ ինքն նաւագնաց մտադիր լեցի 'ի Լիբիա և զմարտն շինջուսցէ դեղեցիկ պայմանօք. ապա եթէ կռուեալ խնդրէ՝ ինքնին նա իւրովք իսկ ծախուք պատրաստեսցէ նմա 'ի կռիւ անդր քաշտիս նաւաց յիսուն թուով։ Մեծապէս զարմացաւ Դիոնեսիոս պատանին ընդ մեծանձնութիւն առնն, և յոյժ մտադիրագոյնս ընդունէր զյառաջամիտ պարգևն։ Իսկ այլք յայնժամ իբրու կշտամբեալս

լեն տեսեալ զանձինս 'ի պերճութենէն Դիոնէսի և իբրև նկունս 'ի զօրութենէ առն, սկսան այնուհետև յամենայն 'ի բանս դառնացուցանել զպատանին ընդդէմ նորա. բաղբաղայս կարկատէին՝ իբրու դէտ, ակն կրթիլ նմա զբռամբ զոհերութիւնն ունել միջնորդաւ ծովուն, և նաւուք իւրովք ոչՁոյն զիշխանութիւնն միանգամայն յորդիսն յանկուցանել Արիստոմաքեայ 'ի քեռորդիս իւր։

Սակայն և պատճառք ևս զօրաւոր և յայտնի նախանձուն նոցա և ատելութեն, էր այլազգի չափ կենացն Դիոնէսի և անկենակից լինել նորա ընդ նոսա։ Քանզի նոքա վաղվաղակի 'ի փաղաքշանս մեղմեի բանից սպրդեալք կենակիցք կենցաղակիցք ընդ պատանւոյ բռնաւորին՝ որոյ և սնունդն իսկ նորա վատթար էր, հանապազ 'ի ներքս բերէին նմա տուփանս և սփոփութիւնս ժամավաճառս 'ի գինեբբուս և 'ի կանայս, և այլ ինչ ևս 'ի նշաւակ գերդանաց. յորոց և ամոքեալ բռնաւորութիւնն՝ որպէս ամոքի երկաթ, համբոյր առ հնազանդեալսն երևէր. և ժանտութիւնն ամարդութեանն թողանայր, ոչ եթէ 'ի հեզութենէ ինչ, քան թէ 'ի կնամարդի կրից իշխանին։ Ուստի և տակաւ դամ քան զդամ ճարակեալ գրգանացն և վանեալ զպատանին, այնուհետև լուծեալ խզէին և կապանքն ադամանդեայք, որովք Դիոնեսիոս երէց ասէր կապել պրկել զմիապետութիւնն։ Քանզի և պատմեն իսկ՝

ձգել երկայնել պատանուոյն զառաջինն զդիներբուս իւր անդուլ մինչև ցաւուրս ինանուն, և զբոլոր զայն ժամանակն՝ արքունեաց նորա անկոխ և անմատոյց լինել յառաքինի մարդկանէ և 'ի հանճարեղ բանից. քանզի և առհասարակ դրաւեալ իսկ էր ողջոյն միանգամայն յարբեցութեանց և 'ի խեղկատակութեանց և 'ի նուագաց և 'ի կայթից և 'ի բանդագուշանաց։

Այլ աղագաւ և Դիոնն դժպհի լինէր նոցա, զի երբէք չանկղնտանայր 'ի զբօսանս և 'ի սփոփութիւնս անախականս. ուստի և նոքա լեզուագարէին, և յառաքինութիւնս առնն զախտից անուանսն պատկանագրէին. ամբարտաւանութիւն՝ զպերճութիւն նորա կարգային. և ժպրհութիւն՝ զհամարձակախօսութիւնն. զխրատ նորա՝ ամբաստանութիւն ասէին. և զի մեղսակից չէր նոցա՝ արհամարհութիւն անձանց։ Եւ արդեօք էին իսկ նորա բարք անդատին 'ի բընութենէն անհամբոյր և պերճ և դժուարընդելև դժուարամատոյց. քանզի և դժպհի և խստամբեր էր ընկերութիւն նորա ոչ պատանուոյն այնմիկ միայն՝ որոյ և լսելիք նորա դրդեալք և խանդարեալք էին 'ի շնթելոց բանից, այլ և շատից մոերմաց նորա և որք սիրէին ևս զպարզութիւն և զպերճութիւն բարուց նորա. զի և խոժոռեալ իսկ էին ընդ գնացս նորա, և յանդիմանէին ևս զնա իբրև վայրենի և 'ի քաղաքականն անընդել՝ առ որս դիմէինն առնա։ Այր աղագաւ և Պղատոն ինքնին յետ

ժամանակաց՝ իբրու մարդարէացեալ գրէր առ նա, անձնապահ զգոյշ կալ յանձնա-հաճութենէ, որ բնակակից է՝ ասէ՝ միայ-նութեան։

Արդ թէպէտ և 'ի ժամանակին յայն-միկ մեծապէս էր պատիւ առնն 'ի գործոց անտի. իբրու մի միայն կամ թէ անշուշտ առաւել քան զայլսն յաջողեալ յոտին ունել զդեգևեալն բռնաւորութիւն, սա-կայն և գիտէր իսկ քաջ և նա զնախաթոռ զաւագութիւն անձինն ոչ 'ի շնորհս ինչ՝ քան թէ յակամայս 'ի պէտս բռնաւորին։ Եւ խելամուտ լինէր Դիոնն, զի պատճառք բանին է ինքնին անհրահանգ կեանք բռ-նաւոր պատանւոյն. ուստի և հնարէր ճըգ-նէր առնուլ ընծայել զնա 'ի քաղաքավա-րութիւնս առաքինիս և ազատականս, և ճաշակս տալ նմա առնուլ զբարեհամբոյր բանից և զբարեզգեաց հրահանգաց. զի մի ևս նա յառաքինութենէ երկիցէ, այլ քաղցրասցի 'ի բարին. զի և չէր իսկ այս Դիոնեսիոս բնութեամբ 'ի բռնաւորաց ոք 'ի ժանտագործից. այլ հայր նորա զանգիտէր՝ եթէ երբէք որդին զգօնացեալ և ընդ հանճարեալ մարդոյ թարթափեալ և քաջալերեալ, հաղթ լարեսցէ և զտէրու-թիւնն 'ի նմանէն հանցէ. վասն այնորիկ առեալ փակեաց զնա 'ի տան, ուրանօր պատանեակն համբուն պարապորդ և 'ի գործոց անփորձ, զբօսնոյր դեգերէր՝ որ-պէս պատմեն՝ կառս կերտել փոքրիկս և լապտերս և աթոռակս 'ի փայտէ և տրա-

պիզա։ Քանզի Դիոնեսիոս երկեց՝ այր երկ-
միտ յամենայն մարդոյ միանգամայն խի-
թայր զանգիտեր, և առ ահին մեծապէս
զգուշութեամբ ակնածէր. որպէս զի և ոչ
'ի հերս գլխոյն թոյլ տայր վարսավիրային
ածելի վարել, այլ յաւուրց աւուրս եր-
թայր առ նա 'ի բրսաց ոմն, և առեալ
կայծակն՝ զվարսն շուրջանակի խանձո-
ղէր։ Իսկ 'ի սենեակ նորա՝ չէր թոյլ ոչ
եղբօրն և ոչ որդւոյն՝ մտանել իւրեանց
սեպհական ագանելեաք, այլ մինչև մտեալ
պարտ էր 'ի զգեստէն մերկանալ, և այլ
հանդերձ արկանել, ցուցեալ այնպէս
մերկ առաջի պահապանացն։

Էր երբեմն Լեսպինեայ եղբօր նորա
առաջի առնել նմա գիրս ինն զվայրաց. և
առեալ զնիզակն 'ի միոյ անտի 'ի թիկնա-
պահացն՝ նովաւ հովանագրեր յանգիման
զտեղին։ Իսկ յայնժամ կարի սրտմտեալ
Դիոնիսեայ, ապանանէր զայրն՝ որ զնի-
զակն ետ նմա։ Եւ ասէր Դիոնեսիոս՝ անձ-
նապահ 'ի բարեկամացն լինել, տեսեալ
զնոսա հանձարեղս և մտադիւրագոյնս յիշ-
խել քան յիշխիլ։ Եւ 'ի մահ ևս վարեաց
նա զՄարսիւաս զոմն՝ զոր և ինքնին յաւա-
գուութիւն զօրավարութեան հասուցեալ
էր. քանզի ետես զինքն յերազի ապանեալ
'ի նմանէ. իբրու այն՝ որ այն տեսիլ 'ի
քուն երևուութացաւ նմա 'ի տունչենային
խորհրդոց անտի առնն։ Նաև ընդ Պղատոն
ինքնին սրտմտեալ ցասեաւ նա՝ զի չասաց
զնա քաջարի քան զամենայն մարդ. և ա-

պա առ արհաւրացն և վատասրտութեանն լի՛ էր հոգին նորա այնչափ չարութեամբ։

Ա՛ՐԴ յայնժամ սեսեալ Դիոնէսի՝ որպէս ասացաք՝ զորդի նորա յոյժ թերակատար և անբաժ 'ի գեղեցիկ հրահանգաց և զբարեսոհմութիւն ոգւոյն ժանտացեալ, քաջալերէր 'ի նեբքս բերէր նմա թարթափել յուսումն և մեծապաղատ աղաչել զվերն զայն իմաստասիրաց յառնել գալ 'ի Սիկիլիա. և 'ի գալն՝ ամենևին հպատակ կալ նմա՝ զի այնպէս նորա բարք և վարք գեղայարդալք եղեալ յառաքինակրօն բանից անսի, և ինքն հանգունատիպ եղեալ աստուածայնոյն այնմիկ և ամենագեղեցիկ Սկզբնատպին գոյից (որում հնազանդեալ առաջնորդութեանն սիրելբք ամենայն՝ յանպատրաստ անզարդութենէն զարդ աշխարհիս 'ի վեր եղեալ է), մեծապէս և անձին իւրում հանդերձեսցէ երջանկութիւն, մեծապէս և իւրոցն քաղաքայնոց. որ առհասարակ զակամայ գործեցեալսն առ 'ի հարկէ իշխանութեանն՝ մտադիւրագոյնս յայնժամ 'ի նեբքս բերցեն, մարդասիրապէս առաջնորդեալք 'ի նմանէ իբրև 'ի հօրէ՝ ժուժկալութեան կարգօք և արդարութեամբ. և որ ինքն բռնաւոր՝ դարձցի 'ի թագաւոր։ Քանզի և կապանք ադամանդեայք՝ չեն իսկ արդեօք՝ որպէս ասէր հայր նորա՝ ոչ ահ երկիւղին, ո՛չ բռնութիւն, ո՛չ յոքնաթիւ նաւատանդէս, և ո՛չ ևս բազմաձեռն գունդ պահապանաց բիւրուց բարբարոսաց, այլ մտերբ-

մութիւնն ինքնին գլխովին և յօժարամբ-
տութիւն և հլութիւն հնազանդելոցն, որ
յառաքինութենէ անտի իշխանին և յար-
դարութենէն բնաւորեցան 'ի նոսա. և
թէպէտ և են իսկ կապանք այս ամոք ա-
ռաւել քան զկարծրունսն զայն և զնիստն,
անվանելիք են և անիզելիք 'ի հաստատու-
թիւն տէրութեանն: Ա՛ռ այս դարձեալ՝
անփառունակ և արհամարհ կայ իշխանն,
որ մեծապէս խնամով փոյթ յանձին կա-
լեալ իցէ զարգարել պաճուճել զմարմինն,
և պերճանալ և անկղնտանալ 'ի դրդանս
և 'ի հանդերձանս ապարանիցն, և ապա 'ի
քաղաքավարելն և 'ի խօսել՝ ընդհատ ո՛չ
իցէ 'ի ռամկաց խուժանին, և զհոգւոյն
զարքունիսն ո՛չ զարդարեսցէ 'ի զարդ շը-
քեղ և արքունի:

Ապա ստէպ յայսպիսեաց աստի 'ի
ներքս բերեալ նմա Դիոնն, և զանխուլ
ևս սերմանեալ ինչ ինչ 'ի բանիցն Պղատո-
նի, գեղեցիկ մոլութեամբ անհնարին վա-
ռեաց զԴիոնեսիոս կրսեր, լսել զվարդա-
պետութիւն Պղատոնի և կենակից նմա լի-
նել: Ոյր ապագաւ և ստէպ գային հա-
սանէին յԱթէնս նամականի առ 'ի Դիո-
նիսեայ, և խնդրուածք 'ի Դիոնէ, առ
այսոքիւք՝ և 'ի Պիւթագորեանց անտի Ի-
տալիոյ. ապերս արկանէին և նոքա Պղա-
տոնի՝ յուղի անկանել անդր և սանձել
կորովի վարժիւքն զնորատիք զոգին զար-
ձակերասանն զայն 'ի մեծի յայն աւագու-
թեանն և 'ի զօրութեանն:

Ապա Պղատոն (որպէս ասէ իսկ ինքն) ամօթ համարեալ՝ եթէ արդեօք կարծեսցեն բանիւք չափ միայն սահմանել ջանից նորա, և ձեռնամուխ 'ի գործ ելօժարել, յանձին կալաւ. և զի՝ և ակն ևս ունէր՝ զի թէ և զայրն զայն միայն մաքրեալ սրբեսցէ՝ իբրու որ գլխաւոր մասն և առաջնորդական, այնուհետև և զԱիկիլիա ողջոյն աւաքեսցէ զիսօթացեալն։

Բայց յայնժամ հակառակամարտքն Դիոնիի զանգիտեալ 'ի փոփոխութենէն Դիոնիսեայ, ածին հաւանեցուցին զնա դարձուցանել 'ի վտարանդութենէն զՓիղիստոս՝ այր Ճարտարաբան և բարոյից բըռնաւորացն ներկուռ, ախոյեան զնա ընդդէմ արձանացուցանել Պղատոնի և իմաստասիրութեան։ Քանզի և էր իսկ այս Փիղիստոս 'ի բնէ ժամանակացն զօրավիգն յառաջամիտ 'ի հաստատութիւն բռնաւորութեանն. և էր իսկ նորա պաշտպանեալ դղեկին, ուր էր նա գնդապետ հարուստ ժամանակ։ Եւ համբաւ հնչէր՝ մոռեալ նորա և առ մայր Դիոնիսեայ երիցու. և չէր այն զանխուլ 'ի բռնաւորէն։ Բայց իբրև Լեպտինոսի եղեն դատերք երկու 'ի կնոջէն՝ զոր պղծեաց նա (թէպէտ և կին էր նա արամբի), և ետ զմին Փիղիստեայ՝ զանխուլ 'ի Դիոնիսեայ, զայրացեալ բըռնաւորին՝ բանտարգել 'ի կոձեղս առնէր զկին զայն զԼեպտինեայ և 'ի Սիկիլիոյ վըտարանդի հանէր զՓիղիստոս. նա ջոքաւանկաւ առ հիւրս իւր յԱդրիա, ուր և

թուի արձանագրեալ նորա բաղում ինչ 'ի պատմութեանց իւրոց 2, 'ի պարապութեան իւրում. քանզի և դարձաւ նա ոչ ևս 'ի Սիկիլիա առ կենդանութեամբն Դիոնիսեայ երիցու. այլ միայն յետ մահուն նորա՝ կիրք ոիսերիմ թշնամեացն Դիոնիսի՝ որպէս ասացաք՝ դարձուցին զնա. քանզի և գիտէին իսկ զՓիղիստոս ընկերչակել իւրեանց և զօրավիգն մեծ բռնաւորութեն: Որոյ և եկեալ հասեալ առ նոսա, անդէն ձեռն տայր բռնաւորութեանն:

Այլ դէպ տայր յայնժամ և յայլոց ոմանց յուզել զրպարտութեանց և ամբաստանութեանց առաջի բռնաւորին ընդդէմ Դիոնիսի, իբրու մոտաբերել 'ի վանել զտէրութիւն նորա 'ի միասին ընդ Թէոդոտեայ և ընդ Հերակլիտեայ. քանզի և անշուշտ ակն ունէր Դիոնիս (որպէս երևիդ) 'ի գալուստ Պղատոնի՝ 'ի ձեռն նորա կարձել 'ի բռնաւորութենէն զտիրապետականն զայն և զինքնաբաւ իշխանութիւն, և ածել յարգարել զԴիոնեսիոս իբրև իշխան համբոյր և օրինաւոր: Իսկ թէ երբէք ընդդէմ դարձեալ չամոքեացի՝ 'ի մտի եդեալ էր վանել զնա, և առնուլ ածել զՍիրակուսացիս 'ի քաղաքաւորութիւն անդր իւրեանց. ոչ եթէ ընկերհաշտութեանն երեսս ինչ առնէր, այլ զի քան զբռնաւորութիւնն՝ զայն լաւ ևս համարէր վասն այնոցիկ, որ աւագպետութիւն գեղեցիկ յանձին չկալցեն:

Իբրև այս այսպէս հանդերձեցաւ, գայր

հասանէր Պղատոն 'ի Սիկիլիա. և յերևել անդ իւրում՝ շուք մեծ և ինամ սքանչելի պատրաստեցաւ առն։ Քանզի յինքանել իւրում յեռաթիոցն՝ կազմ անդանօր եդիտ նա զմի 'ի կառաց անտի արքունի շքեղ զարդարեալ, և անդ բռնաւորն ինքնին զոհ մատուցանէր՝ իբրու երջանկութիւն մեծ հասեալ ի յարքայութեան իւրում։ Ընդ այս՝ և կոչնոցն պարկեշտութիւն, և արքունեացն համեստութիւն, և բռնաւորին գլխովին հեզութիւն յունկընդրութիւնս իւր, սքանչելապէս յուսացուցանէին առհասարակ զքաղաքացիսն 'ի լաւութիւն նորա. և անդ էր տեսանել առհասարակ զամենեսեան վառ և բորբոք 'ի դպրութիւնս և յիմաստասիրութեան. և ապարանք բռնաւորին՝ որպէս ասեն՝ ողջոյն յայնժամ մրրկեալ էին 'ի փոշի՝ 'ի սաստիկ խուռնընթաց վարժելոցն յերկրաչափականին հրահանգս։

Իբրև աւուրք 'ի վերայ անցին՝ 'ի նմին իսկ յապարանսն բռնաւորին զոհ ըստ հայրենի սովորութեան կատարէին. և անդանոր Քարոզն ըստ սովորութեանն յաղօթել իւրում՝ երկայն աւուրքք հաստատուն բռնաւորութեանն կալ անդրդուելի, պատմեն՝ մերձ կացեալ յայնժամ Դիոնիսեայ՝ ասել այսպէս. "Եւ լռեսցես դու ոչ, կարդալ մեզ զնզովսդ զայդ"։ Իբրև զայն լուան Փիղիստոս և համախոհքն՝ 'ի խոր խոցեցան. զմտաւ ածէին՝ զի անվանելի ուրեմն այնուհետև կացցէ Պղա-

տոնի զօրութիւնն, եթէ այնպէս նա աւուրս սակաւ ընդ պատանեւոյն դեգերեալ՝ համբուն շրջեաց և աշակերտեաց զնա։

Ապա այնուհետև նոքա ոչ այր ըստ առնէ և 'ի ծածուկ, այլ առհասարակ միախուռն և յայտնի սկսան գատափետ զԴիոնն առնել. ասել՝ եթէ յայտնի դա ուրեմն նկրտի հմայել դիւթել զԴիոնեսիոս Ճարտարախօսութեամբն Պղատոնի. զի հրաժեշտ նա մոգիւր յիշխանութէն տուեալ, առեալ փոխեսցէ դա զնոյն յորդիան Արիստոմաքեայ՝ քեռի ինքն գոլով նոցա։ Իսկ կէսք յայնժամ և խոժոռեալ կային, եթէ՝ յառաջ ժամանակաւ դիմեալ Աթենացւոց 'ի Սիկիլիա սատար զօրու նաւաց հանդիսից և ցամաքին, և հարեալք տապաստ անկան՝ մինչև տիրացեալ Սիրակուսայ. իսկ զարդիս նոքա 'ի ձեռն միոյ ուրուք սոփեստեսին իւրեանց կռուեալք վանեսցեն զբռնակալութիւնն Դիոնիսեայ, ամոքեալ զնա 'ի բաց կալ յիւրոց անսի բիւրուց թիկնապահաց, և թողուլ լքանել զեռաթիս նաւաց չորեքհարիւր, և զայրուձի բիւր մի, և հետևակազօր՝ բազմութիւն յոյժ. և երթալ խիլ արկանել յուզել յԱկադեմիա զբարին զայն զդաղանին, և խնդրել երջանկութիւն 'ի ձեռն երկրաչափականին, և թողուլ անդանօր 'ի ձեռս Դիոնի և քեռորդւոց Դիոնի զերջանկութիւն արքայութեանն և զմեծութեանն և զդրդանացն։

Ապա յայնմանէ զառաջինն իւրեթ 'ի

ներքս անկեալ, և յետ այնորիկ սրամտու-
թիւն յայտնի և հակառակութիւն, բերէին
տային յայնժամ 'ի ծածուկ նամակ մի առ
Դիոնեսիոս գրեալ 'ի Դիոնէսէ առ ոստի-
կանս Կարքեդոնացւոց. յորում և պա-
տուիրէր նա նոցա՝ 'ի խօսել նոցա հաշտու-
թիւն ընդ Դիոնիսեայ, մի ինչ ամենևին
պայմանել՝ եթէ և ինքն մերձ ոչ կայցէ.
իբրու որ 'ի նորա ձեռն յաջողեսցին նոքա
կարգ տալ իրացն: Զայն նամակ ընթեր-
ցեալ Դիոնիսեայ առաջի Փիղիստոսի և 'ի
խորհուրդ մտեալ ընդ նմա՝ որպէս ասէ
Տիմէոս՝ մտերմութիւն կեղծաւորեցաւ
Դիոնէսի, և քաղցր և հեզաբար վարեալ
ընդ նմա և խաղաղութեան ողջոյն տուեալ
նմա, և այնպէս 'ի մի կողմն տարեալ զնա
և միայն ընդ միայն ածեալ 'ի ծովափն 'ի
ներքոյ գղեկին, անդանօր հանեալ ցուցա-
նէր նմա զնամակն և կշտամբէր զնա, որպէս
թէ ընդդէմ իւր դաւակից ընդ Կարքեդո-
նացւոցն ելցէ: Իբրև Դիոնէս պատրաստե-
ցաւ 'ի չքմեղս լինել, ոչինչ հանդարտեաց
Դիոնեսիոս. և անդէն վարեալ մղեալ զնա՝
ըստ դիպելոյ ժամուն՝ որ անդ 'ի մակոյկ
մի, հրաման տայր նաւաղեցն վաղվաղակի
տանել զնա 'ի բաց և հանել յԻտալիա:

Իբրև այս եղև, անագորոյն առհասա-
րակ թուեցաւ բանն և դժոխըմբերելի. և
էր այնուհետև տուն բռնաւորին ողջոյն
համակեալ 'ի սուգ կանանեոյն. և ժողո-
վուրդ Սիրակուսացւոց 'ի վարանս տարա-
կուսի՝ տագնապեալք 'ի շուինդն յանկարծ

և յամբոխ շփոթից 'ի պատճառս Դիոնէսի, և 'ի խէթ երկիւղի յերեսաց բռնաւորին։ Քաջիկ խելամուտ եղեալ Դիոնեսիոս և զահի ևս հարեալ, շուրջ գայր մխիթարէր սիրիէր զբարեկամն և զկանանին. ասէր՝ ոչ 'ի վտարանդութիւն ինչ արձակեալ զԴիոնէս, այլ վայր մի հեռացուցեալ. զի մի ապա ինքն ստիպեսցի 'ի մերձ կալ նորա՝ սրամտել և ժանտանալ ինչ յանձնահաճութեան առնն։ Ապա տուեալ նաև երկու 'ի ձեռս ծառայիցն Դիոնէսի, հրաման տայր նոցա առնուլ ժողովել 'ի նոսա զամենայն զմեծութիւն Դիոնէսի և զծառայսն՝ որ կամիցին, և խաղալ գնալ առ նա 'ի Պեղոպոննիսոս։ Եւ էին Դիոնէսի ինչք և գոյք բազում յոյժ, և կահ և կարասի տան նորա՝ դոգցես ոչինչ ընդհատ յարքային. զոր և 'ի մի կուտեալ յայնժամ բարեկամացն յղեցին առ նա, և բազում ևս այլ առաքեցին առ նա կանայք և բարեկամք. զի և 'ի պատուական կարասւոյ անտի և 'ի բազմահարուստ մեծութենէն շքեղ երևեցաւ նա 'ի մէջ Հելլենացւոց, նա և 'ի ճոխութենէ վտարանդւոյն այնորիկ քաջ յերևան գայր բազմագանձ զօրութիւն բռնաւորութեանն։ Ընդէն ապա Դիոնեսիոս բնակեցուցանէր և զՊղատոն 'ի դղեկին. և այնպէս շքով կերպարանեալ հիւրասիրութի մեծ և մարդասէր, հնարիմաց եղև պահ արկանել նմա՝ զի մի թերևս նաւագնաց անկցի զհետ Դիոնէսի, լինել վկայ անիրաւութեանն։

Իսկ ապա միջնորդաւ ժամանակին և կենակից քաղաքավարութեամբ, զոր օրինակ ամոքի գազան և ձեռնընդեալ լինի մարդոյ, սակայն բնաւորեցաւ Դիոնեսիոս քաղցրանալ 'ի քաղաքավարութիւն Պղատոնի և 'ի բանս բերանոյ նորա. որպէս զի և զսէր բռնաւորական սիրեաց զնա, և ինդրէր ինքն միայն սէր առնուլ 'ի Պղատոնէ և սքանչանալ առ նմա 'ի վեր քան զամենայն մարդ, յօժարէր 'ի նա ապաստան զիրսն առնել և զբռնաւորութիւնն գլխովին, եթէ միայն նա նախամեծար քան զիւրն՝ չարացէ զԴիոնիսի բարեկամութիւնն։ Բայց էր Պղատոնի դժոխամբերելի այս կիրք բռնաւորին, այն՝ որ մոլեալ իսկ էր արդարև իբրև զտարփածուս ոմանս հիւքացեալս առ 'ի խանդէն, և ընդ ժամանակ սուղ նա բազում անգամ գժտէր, և բազում ևս հաշտ լինէր, և բանս ողոքանաց արկանէր, և անձկացեալ յոյժ էր 'ի լուր վարդապետութեան նորա, և 'ի հաղորդութիւն վարժից իմաստասիրութեան նորա. միանգամայն և զամենի հարկանէր 'ի մոլորեցուցչաց անտի իւրոցն՝ իբրու եղծանիլ ապականիլ 'ի նոցանէ։

Զայսու ժամանակաւ յուզեալ մարտի պատերազմի՝ առեալ Դիոնեսիոս արձակէր 'ի բաց զՊղատոն, նախ գաչն եդեալ ընդ նմա գարձուցանել զԴիոնիս 'ի ժամանակ գարնայնոյն, որում և դրժեաց. սակայն առեալ առաքեաց առ նա զհասս զկալուածոց նորա, աղաչեալ զՊղատոն 'ի

էքմեղս անձինն վասն ժամադիր դաշինն անցանելոյ 'ի մարտին պատճառս. քանզի և 'ի լինել հաշտութեանն՝ դարձուցէ ա-բրադ զԴիոնն։ Խնդրէր ևս, զի և ինքնին Դիոնն հանդարտեալ՝ մի ինչ նորութիւն 'ի ներքս բերցէ, և մի զնմանէն չարախօս կայցէ առ Հելլենացիս. յոր և գուն գոր-ծեաց Պղատոն 'ի յաջողել նմա. և ան-դրէն միւսանգամ առեալ զԴիոնն յիմաս-տասիրութիւնն, թարթափեցուցանէր զնա ՅԱկադեմիա։ Եւ բնակէր Դիոնն 'ի քա-ղաքին առ ումեմն Կալիպպոսի՝ այր ակա-նաւոր. և գնոց գնեաց նա կալուած մի 'ի զբօսանս իւր. զոր և 'ի նաւել իւրում 'ի Սիկիլիա՝ ետ նա 'ի պարգև Սպեւսիպպոսի, ընդ որում և կենակից քաղաքավարէր նա առաւել քան ընդ ամենայն բարեկամն իւր ՅԱթէնս. քանզի և Պղատոն ինքնին խնդրէր քաջցրացուցանել զբարն Դիոնի 'ի քաղաքավարութիւն հեշտ և համբոյր և զուարթաբան առն՝ որպիսի ոք Սպեւսիպ-պոսն էր. ուստի և Տիմոնն անուն կար-դայր նմա՝ "Քաջ հենգնաբան,,։

Իսկ էր երբեմն Պղատոնի 'ի խաղսն՝ տալ ժողովրդեան պարերգութիւն զմանկտոյն. և յայնժամ Դիոնն հանդերձէր կազմէր զպարն և զամենայն զծախսն յանձնէն ընոյր, քանզի և Պղատոն ինքնին թոյլ ետ նմա զձիր զայն 'ի ներքս մատուցանել Ա-թենացւոց, զի քան փառս անձին իւրում՝ առաւել ևս նմա հանդերձեսցէ մտերմու-թեան սէր։ Եւ գնայր շրջէր Դիոնն և 'ի

քաղաքս քաղաքս, և մնանէր յաշխարհա-
խուռմբ 'ի Ժողովն, և ընդ աւագ որերոյն
Թարթափէր և ընդ քաղաքագէտ մարդ-
կանն. և 'ի չափ կենացն ոչինչ հետևակս
'ի դէմն բերէր նա, կամ Թէ բռնաւորա-
կանս, կամ Թէ պչրանս. նա պարկեշտու-
Թիւն յամենայնի յանձին բերէր և առա-
քինուԹիւն, և արիուԹիւն, և գեղեցիկ
ջանս 'ի դպրուԹիւնս և յիմաստասիրու-
Թեան. ոյր աղագաւ և սիրելի առհասա-
րակ գտաւ և փարելի, և շուք ևս յանձն
ձգեաց աշխարհական, և հրովարտակս ևս
վասն իւր 'ի քաղաքաց քաղաքաց. առ
այս՝ և Լակեդեմոնացիք ինքնին գրեցին
զնա Սպարտացի. և ոչինչ փոյԹ եղև նո-
ցա վասն բարկուԹեանն Դիոնիսեայ, որ
'ի ժամանակին ԹիկուՆս ևս տուեալ էր
նոցա 'ի մարտին ընդդէմ Թեբայեցւոց:

Եւ պատմեն՝ 'ի ժամանակին յայնմիկ
գնալ Դիոնի յայցելուԹիւն Պոլիդովրո-
սի Մեգարացւոյ, որ և աղաչեալ իսկ էր
զնա. և էր Պոլիդովրոս՝ որպէս երևի՝ այր
բազմահարուստ և հզօր, և տեսեալ անդ
առ դուրս նորա ամբոխ մեծ և բազմու-
Թիւն մարդկան գիմեալ առ նա, և դժուա-
բամասոյց էր մտանել առ նա և խօսել,
դարձաւ Դիոնի առ բարեկամն՝ որ դժգը-
մնեալք խոժոռէին, և ասէ. "Եւ զի՞նչ
ապա եպերեսցուք զդա: Եւ մեք ինքնին
առ Սիրակուսացիս զնոյն գործէաք միշտ,,:

Բայց յետ այսորիկ Դիոնեսիոս խան-
դացեալ և զանգիտեալ ևս՝ զի մտերմացաւ

Դիոնն ընդ Հելլենացին, զանց արար առաքել նմա զհասան. և ոստիկան ևս 'ի վերայ գոյից նորա կարգէր 'ի գործակալաց իւրոց։ Բայց և զձախողակ կարծիս վասն իւր զիմաստասիրացն 'ի պատճառս Պղատոնին՝ կամելով քերել, բազմութիւն 'ի քաջաց գիտնոց նոցա ժողովեաց առ իւր. և պատուասիրութեամբ թեւակոխեալ առհասարակ յաղթահարել 'ի պայքարի, չարաչար 'ի ներքս բերէր նա զվարդապետութիւնն Պղատոնի թերակատար խորհրդով. և սկսաւ ապա միւսանգամ անձկալ նմա, և դատապարտ զանձն առնէր զի ոչ վարեցաւ նովաւ յորժամ մերձն կայր, և ոչ ներկուռ ուսաւ զչքնաղ ուսմունս նորա։ Եւ իբրև բռնաւոր՝ ցանգ անկարգացեալ և բուռն յանձուկ սրտին, և գիւրամոքելի յամենայն 'ի կիրս, վառեցաւ բորբոքեցաւ միւսանգամ առ Պղատոն և զամենայն մենքենայս շարժէր, և ածէր ամոքէր զԱրքիտաս Պիւթագորեան միւսանգամ կոչել զնա՝ երաշխաւոր եղեալ նմա 'ի խոստմանն. քանզի և 'ի ձեռն Պղատոնի հաստեցաւ ընդ նոսա յառաջագոյն բարեկամութիւն և հիւրասիրութիւն։

Ապա Արքիտաս առեալ առաքէր առ Պղատոն զԱրքեդեմոս. անդուստ և Դիոնեսիոս արձակեաց նմա եռաթիս նաւաց և բարեկամն ևս աղաչել գալ առ նա. առ այս և յայտնապէս գրեաց զայս ինչ, զի կամագիւտ ամենևին չլինիցի Դիոնն՝ եթէ Պղատոն յանձին չկալցէ գալ 'ի Սիկիլիա.

ապա եթէ հաւանեսցի, կատարեսցին ա-
մենայն կամք Դիոնիսի։ Նաև առ Դիոնիս
գային հասանէին պաղատանք բազումք 'ի
գիմաց քեռն և ամուսնոյն, թախանձ ար-
կեալ նմա ազատել զՊղատոն՝ անսալ Դիո-
նիսեայ և մի ինչ պատճառս 'ի նեղութս ար-
կանել գրգռութեան։ Եւ այսպէս ապա
Պղատոն՝ որպէս ասէ իսկ ինքն՝ այս երիցս
անգամ յանձուկս հասանէր Սիկիլիեան,
" Անդրէն միւսանգամ զմահաբերն զայն
անցանել հատանել զԲարիւբդէ ,, ։

Բայց ընդ դալուստս նորա մեծապէս
խնդաց Դիոնեսիոս, մեծապէս և Սիկիլիա
նորոգեցաւ 'ի յոյսն. ուխտիւք ցանկայր
և ձգնէր ևս փութոյ պնդութեամբ՝ նախ-
աթոռ քան զՓիղիստոս բազմեցուցանել
զՊղատոն, և զիմաստասիրութիւնն՝ քան
զբռնաւորութիւն։ Առ այս և կանայք
փոյթ խնամոց յոյժ ունէին վասն նորա. և
Դիոնեսիոս ինքնին եցոյց յայտնի՝ վստահ
'ի նա լինել առաւել քան յամենեսեան.
քանզի և թոյլ տայր նմա մտանել առ նա՝
մինչև հետազօտեալ զնա։ Իսկ իբրև և
ինչս բազում 'ի պարգև ստէպ նմա 'ի նեղութս
մատուցանէր, և Պղատոն յանձն չառնոյր,
անդուստ Արիստիպպոս Կիւրենացի որ
մերձն կայր, զայս ասաց. Դիոնեսիոս ա-
ռատաձեռնէ՝ և ոչ ինչասի. քանզի որոց
շատ պէտք են՝ սակաւ տայ. և որ չառնու
ինչ՝ Պղատոնի՝ շատ տայ։

Այլ յետ առաջին հիւրամեծարու-
թեանցն՝ սկսաւ Պղատոն խօսել վասն Դիով-

նի. և յայնժամ զառաջինն յերկարաձգե-
ցան իրք վասն բանին այնորիկ, ապա և
կշտամբանք 'ի ներքս եկին և խոժոռու-
թիւնք 'ի նոսա զանխուլ յարտաքնոց.
քանզի և Դիոնեսիոս ինքնին ունէր 'ի ծա-
ծուկ, և գուն ևս գործէր գեղեցիկ հիւ-
րասիրութեամբ և պատուով առ Պղատոն՝
ուծացուցանել զնա 'ի սիրոյն Դիոնի:
Այլ և ոչ ինքնին Պղատոն զառաջինն նը-
շուակէր զուխտադրուժ և զսուտակաս-
պաս կիրս նորա, և ժուժայր բերէր և կեղ-
ծաւորէր: Մինչդեռ օրինակ զայս զգա-
ծեալ էր այր ընդ ընկերին, և կարծէին
զանխուլ յայլոց զգժտութիւնսն, ան-
դուստ Եղիկոնն Կիւզիկեցի 'ի մտերմացն
Պղատոնի՝ նախապատում լինէր խաւար-
ման արևուն. և 'ի կատարել անվրէպ նա-
խաքարոզ բանին՝ յոյժ հիացեալ բռնաւո-
րին, տայր նմա պարգև արծաթոյ տաղանդ
մի: Իսկ յայնժամ և Արիստիպպոս զուար-
թաբանեալ առ խնամատարսն ասէր, և
ինքնին նա մարգարէասցի զանհաւատալին
զբան. իբրև աղաչեցին զնա յայտնել ըզ-
բանն, ասէ. "Մարգարէանամ աւադիկ.
քան թէ սակաւ մի անցեալ իցէ՝ զի Պղա-
տոն և Դիոնեսիոս դարձցին միմեանց 'ի
թշնամիս,,:

Ապա 'ի վերջէ ուրեմն առեալ Դիոնի-
սեայ 'ի վաճառ հանէր զդոյս Դիոնի, և
զարծաթն առ իւր կալաւ: Իսկ զՊղատոն
ինքնին՝ որ բնակէր 'ի դրախտին շուրջ ըզ-
տամբն, առեալ բնակեցուցանէր 'ի մէջ

վարձկանաց զօրականին, որք և 'ի վաղնջուց իսկ նոքա ատէին զնա և խնդրէին սպանանել, իբրու որ խորհուրդ Դիոնիսեայ տայր՝ թողուլ զբռնաւորութիւնն և կեալ անպահասան։ Իբրև յայս սահման վտանգին Պղատոնի՝ լուր վասն բանին էառ Ադիւտասս, անդուստ պնդագէսպանս և նաւացուուկ երեսնաթի առեալ արձակէր, խնդրէր զայրն 'ի Դիոնիսեայ. ասէր՝ եթէ Պղատոն ըստ երաշխաւորութեանն Ադիւտասայ յարուցեալ աներկեան չոքաւ 'ի Սիրակուսա։

Ապա Դիոնեսիոս քերեալ յանձնէ ըզխէթ թշնամութեանն ընդ Պղատոնի, 'ի մեկնել անդ նորա կոչունս և մարդասիրութիւն բազում 'ի նեղքս բերէր նմա. և եղև՝ զի և համարձակեալ ևս ասել առ նա, "Անշուշտ գու ոչ Պղատոն, շատ և մեծապէս ամբաստան կացցես գու զմէնջ՝ առ որս խմաստասիրեն ընդ քեզ,,. Նա ժպտեալ էտ պատասխանի և ասէ. "Քա՛ մի լիցի յԱկադեմիա այնչափ նուազութիւն բանից, զի և զքէն յիշատակ արասցէ ոք,,։ Եւ օրինակ զայս ապա՝ ասեն՝ առաքել յետս զՊղատոն։ Սակայն և զոր ինչ գրեաց ինքնին Պղատոն, ոչինչ այնպէս միաբան կայ ընդ այսոցիկ։ Բայց յայնժամ Դիոնի զչարեալ վասն բանից այսոցիկ, և յետ սակաւու լուր ևս առեալ՝ որ ինչ պատահեաց իւրում ամուսնոյն, յայտնի այնուհետև 'ի թշնամութիւն դարձաւ ընդ Դիոնիսեայ։ Իսկ Պղատոն գրեալ առ Դիոնե-

սիոս՝ ընդ քոզով իրազեկ զնա առնէր։ Եւ դէպք եղեն բանին օրինակ զայս։

Յետ տարագրութեանն Դիոնի, իբրև զՊղատոն 'ի բաց արձակեալ հանդերձեալ էր Դիոնեսիոս, յանձն արար նմա տեղեկանալ 'ի ծածուկ, արդեօք հաճեսցի՞ Դիոնի զի այլ ոք 'ի կին ածցէ զամուսին նորա. քանզի և համբաւ հնչէր՝ եթէ ճշմարիտ և եթէ ստայօգ՝ յատելեաց անտի Դիոնի, եթէ այն ամուսնութիւն ոչ ըստ կամացն կատարեցաւ Դիոնի. և թէ՝ ծանր է նմա կենակից կնոջն այնմիկ լինել։ Ապա իբրև ՅԱԹԷՆս եհաս Պղատոն և խօսեցաւ ևս ընդ Դիոնի վասն ամենայնին, առեալ գրէր առ բռնաւորն նամակ. զայլ ինչ ի բաց 'ի նմա խօսէր դիւրիմաց ամենեցուն. իսկ զայնմանէն՝ միայն բռնաւորին գիտէլի. քանզի ասէր՝ խօսեցայ ընդ Դիոնի վասն բանին այնորիկ, և անշուշտ զայրասցի Դիոնն՝ եթէ զայդ բան գործեսցէ Դիոնեսիոս։

Բայց զի 'ի ժամանակին գոյր տակաւին յոյս հաշտութեան նոցա, ոչինչ նոր գործեաց Դիոնեսիոս առ քոյրն, թողոյր զնա այնպէս բնակել 'ի միասին ընդ մանկանն՝ զոր ծնաւ 'ի Դիոնէ։ Իսկ իբրև 'ի հակառակութիւն անհաշտ դարձան նոքա ընդ միմեանս, և Պղատոն այնպէս խոժոռեալ արձակեցաւ 'ի բաց 'ի Սիկիլիոյ, յայնժամ առեալ բռնաւորին զԱրետէ՝ տայր ընդդէմ կամաց նորա Տիմոկրատեայ միում 'ի բարեկամացն. և նմանօղ չգտաւ Դիոնե-

սիոս կրաեր մարդասիրութեան հօրն իւրոյ 'ի Նմանաօրինակ դէպսն։ Քանզի դէպ եղև (որ և է իսկ պատահել), զի թշնամանացաւ ընդ Նմա Պողիւքսենոս քեռայր նորա, և էր անուն քեռն թեատէ. իբրև գաղտագնաց 'ի Սիկիլիոյ առ ահին լինէր Պողիւքսենոս, կոչեաց Դիոնեսիոս զքոյր իւր և յանդիմանէր զնա, զի գիտելով չափ զփախուստ զառնն՝ 'ի վեր չէհան Նմա, յայնժամ քոյրն անզարհուրելի և բնաւ իսկ աներկիւղ, եւ պատասխանի և ասէ. "Արդ ուրեմն թուիմ ես քեզ ոմ Դիոնեսիէ յոյժ չուառական կին և անարի, զի իրազգած փախստեան առն իմոյ՝ ոչ և ես ինքնին ինդրեցի նաւել ընդ Նմա և հասարակորդ լինել բախտին նորա։ Բայց ես իրազգած չեղէ, ապա թէ ոչ՝ սիրելի էր ինձ՝ քան թէ քոյր բռնաւորի՝ մանաւանդ կին կոչել Պողիւքսենեայ փախստէի,,։ Եւ պատմեն՝ 'ի լուր այս համարձակաձայն բանին թեատեայ յոյժ հիանալ բռնաւորին. և Սիրակուսացիք ինքնին առհասարակ մեծապէս զարմացեալ էին ընդ առաքինութիւն նորա. զի և յետ քակելոյ բռնաւորութեանն՝ զնոյն շուք արքունի և զսպաս հարկանէին Նմա. և 'ի մահուն ևս քաղաքացիք նորա աշխարհաւ յուղարկաւորութիւն կարդեցին Նմա։ Իսկ պատմել զայս աստանօր, արդեօք ոչ զարտուղութիւն իցէ անօգուտ։

Ապա յետ այնորիկ Դիոնն դառնայր 'ի պատերազմ. բայց ընդդէմ կայր այնմ

Պղատոն 'ի պատճառս հիւրութեան իւրոյ առ Դիոնիսեայ, դարձեալ և յաղագս ծերութեանն ինքնին Դիոնի։ Իսկ Սպեւսիպպոս և այլք ևս 'ի բարեկամացն նիզակակիցք էին Դիոնի. և թելադիր ևս լինէին նմա ապրեցուցանել զՍիկիլիա, որ անդուստ մատուցեալ առեալ տատանէ առ նա, և մտադիւր ևս յօժարութեամբ ժողովեսցէ զնա։ Քանզի և 'ի ժամանակին յորում դեգերէր Պղատոն 'ի Սիրակուսա, անդանօր և Սպեւսիպպոս առաւել քան զնա կենակից ընդ քաղաքայնոցն՝ 'ի վերայ եկաց խորհրդոց նոցա. զի թէպէտ և զառաջինն ոչինչ ժուեցան խօսել ընդ նմա համարձակ՝ խիթային եթէ լրտես բռնաւորին իցէ. իբրև վստահ յայրն եղեն, յետ այնորիկ առհասարակ ամենեքին միաբան աղերսէին գալ հասանել անդր Դիոնի. թէպէտ և նաւք ոչ գուցեն նորա և ոչ հեռակազօր, և ոչ այրուձի, շատ իցէ եթէ զիարդ և իցէ 'ի նաւ մի բեռնաբարձ ամբարձեալ ինքն հասցէ անդր առ նոսա, տացէ Սիկիլիացւոց ունել 'ի ձեռն զանձն նորա և զանուն նորա ընդդէմ Դիոնիսեայ։

Իբրև զայս բանս լուաւ 'ի Սպեւսիպպեայ, քաջալերեցաւ Դիոնի. և զօրաժողով լինէր այնուհետև վարձու 'ի ծածուկ և յայլոց ձեռն, և զանխուլ ունէր զխորհուրդ մտացն։ Եւ էին նմա ձեռնտու 'ի բանին և բազումք յաւագորերոյն, և բազումք և յիմաստասիրաց, յորս և Եւդեմոս Կիպրացի. յոյր 'ի մահուն՝ տրամախօ-

սութիւն վասն հոգւոյ գրեաց Արիստոտէլ 'ի վերայ նորա, որպէս և Տիմոթէոսիդէս Լեւկատացի. և առեալ նոքա նիզակակից ածին առ նա և զՄիլտոս Թեոսաղացի՝ այր հարցուկ. որ և նա թարգմանեալ իսկ էր յԱկադեմիա: Իսկ յորոց միանգամ վտարանդեալ լեալ էին 'ի բռնաւորէն ոչինչ պակաս քան զՀազար, ոգեալ միայն քսան և հինգ թուով միամտեցան յարշաւանին. իսկ այլք առհասարակ զահի հարեալք լքին զնա: Եւ էր նատոց պատերազմին կղզի Զակիւնթացւոց, ուր և եկին խմբեցան զօրականք իբրև ութ հարիւր. բայց էին նոքա առհասարակ այրընտիր զօրընտիր 'ի բազում և 'ի մեծ նահատակութիւնս, մարմնով քաջակիրթք, և 'ի հրահանգս վեհագոյնք և յարիութեան, և յաջողեալք 'ի խրախոյս և յեռանդն քաջութեան խուժանին՝ զոր ակն ունէր Դիոնն ունել կազմ անդ 'ի Սիկիլիա: Բայց իբրև իրազեկ եղեն նոքա պատրաստութեանն կռուոյն ընդդէմ Դիոնիսեայ և Սիկիլեոյ, զահի հարեալք խորշեցան և խոտէին զխորհուրդն. իբրու այն որ առ զայրացուա՝ խելացնոր ախտիւ և մոլեգինս, կամ թէ 'ի գեղեցիկ յուսոյ անբաժ, այնպէս անձնադրաւ լինի Դիոնն 'ի փորձ դժնդակ. և զայրացեալ սրտմտէին ընդ զօրագլուխն և ընդ զօրաժողով մարդիկն, զի անդէն 'ի սկզբան 'ի վեր չհանին նոցա զբան պատերազմին այնորիկ:

Այլ Դիոնն իբրև հրապարակախօս ա-

ռաջի մերկանայր նոցա, զիարդ բռնաւորութեն ինքնին գլխովին նկուն է և փուտ. և զայն ևս տայր գիտել նոցա՝ զի ոչ իբրև զօրականս ոմանս առեալ խաղացուցանէ զնոսա անդր, քան թէ իբրև զօրագլուխս Սիրակուսացւոց և այլոց ևս բնակաւորացն Սիկիլիոյ, այն՝ որ 'ի վաղնջուց իսկ նոքա խլրտեալք են 'ի վտարանջէլ. առ այս՝ և զկնի Դիոնի իբրև և Ակկիմենէս ինքնին հրապարակախօս եղև՝ այր նախաթոռ Ա-քայեցւոց փառօք և զարմիւ, և էր ինքն ևս նիզակակից մարտին, ապա այնուհետև 'ի հաւանութիւն եկին զօրականք:

Եւ էր յայնժամ տապ սաստիկ ամարայնոյն, և շնչէին անդուլ 'ի ծովուն Եւռեսեան հողմունք, և կէս լուսնին լուսապատար էր. և յայնժամ Դիոնն զոհ պատրաստեալ հոյակապ Ապողոնի՝ 'ի շուք հանդիսի չու արարեալ գնայր 'ի տաճար նորա հանդերձ զօրականաքն՝ 'ի զէն 'ի զարդ սպառազինութեամբ վառեալք առհասարակ: Իբրև զզոհն կատարեաց, տայր բազմականին կոչունս յասպարիսին Զակիւնթացւոց. և անդանօր հիացեալ էին մարդիկն ընդ շուք հանդերձանաց արծաթոյ և ոսկւոյ բաժակաց և սեղանոցն՝ 'ի վեր քան զընչաւէտութիւն սոսկականի առն. և 'ի միտս եկեալ ասէին, եթէ այր ոք այնպիսի հինաւուրց և այնչափ մեծութեան տէր, արդեօք չէր ինչ նա ձեռնամուխ 'ի բազմավտանգ գործն, թէ չէր նորա գեղեցիկ յոյս հաստատութեան, և բարեկամացն

'ի Սիկիլիա չէր նմա պատրաստեալ թիկունս բազում և զօրաւոր։

Իսկ յետ նուիրացն և առաւորական աղօթիցն խաւարէր լուսին։ Ոչինչ զարմացաւ Դիոնն. քանզի և տեղեակ իսկ էր նա խաւարածիր շրջանին և ստուերանալոյ լուսնին և անջրպետ ընդ արեգական ձգելոյ երկրին. բայց սրտաթափ զօրականն լինէր. և քանզի քաջալերութեան պէտք էին նոցա, յառաջ մատեաւ ինքնին Միլտաս հարցուկ՝ խրախոյս կարդայր ակն ունել յաջողակ ելից, քանզի և գիք ինքնին ակնարկի առնեն խաւարումն ածել լուսապայծառ հանդիսից. և քանզի չիք 'ի ժամանակին լուսաւոր առաւել քան զԴիոնիսեայ բռնակալութիւնն, արագ ապա շինուացեն նոքա զլոյսն նորա՝ 'ի հաստատել զոտս իւրեանց 'ի Սիկիլիա. զայս առաջի ամենեցուն հրապարակեաց Միլտաս։ Իսկ յաղագս Մեղուացն՝ որ շուրջ թափառեալք բզզէին զնաւուքն Դիոնի, և ապա պար կապեալ եկին նստան 'ի խելն, ասէր Միլտաս առանձինն առ Դիոնն և առ բարեկամն, զանդիտեալ՝ մի արդեօք քաջիկ նորա նահատակութիւնքն՝ առ սուղ ժամանակ ծաղկափթիթք՝ թարշամեացին ապա։

Եւ պատմեն՝ շատ հրեշից նշանաց պատահել և նմին իսկ Դիոնիսեայ։ Քանզի Արծիւ մի կորզեալ զնիզակն 'ի ձեռաց միոյ 'ի թիկնապահացն, և յօդս 'ի վեր տարեալ, ձգէր ապա 'ի վիհ անդր։ Դար-

ձեալ՝ և ծովուն առ ոտամբ գղեկին՝ ջուր քաղցր էր ըմպելի օր մի ողջոյն. զոր և յայտնի վկայեցին ամենայն ճաշակելիք։ Առ այս դարձեալ՝ և խոնկորք յայնժամ ծնան անդամովք անվթար, բայց առանց ունկանց. ուստի և իղձք և գուշակք ասէին զայն նշան վտարանջութեան և անհնազանդութեան, իբրու ոչ ևս ունկն բառնաւորութեանն մատուցանել քաղաքայնոց։ Իսկ զքաղցրութիւն ծովուն ասէին նշանակ փոփոխելոյ չար և ձախողակ ժամանակացն՝ 'ի լաւ անդր և 'ի գեղեցիկ վասն Սիրակուսացւոց։ Բայց զարծիւն ասէին արբանեակ Արամազդայ, և զնիզակ՝ կնիք իշխանութեան և տէրութեան. յայտ ա՜բարեալ՝ եթէ վեհագունին դից հասանէ վանել հարկանել զբռնակալութիւնն։ Եւ պատմէ մեզ զայսոսիկ Թէոպոմպոս։

Արդ յայնժամ զօրականք Դիոնի առհասարակ ամբարձան 'ի նաւս երկուս բեռնաբարձս, և զհետ երթայր նոցա և նաւ երրորդ ոչինչ մեծ, և այլ ևս երկուք երեանաթիք։ Եւ թող զզէնս զօրականին, այլ ևս վահանս երկու հազար առեալ տանէր ընդ իւր Դիոնն և բազում յոյժ նետս և աշտէս, և ամբար բազում, զի մի ինչ պակաս լիցէ յայնժամ 'ի ծովագնացս ուղին։ Քանզի և ողջոյն ապաստան էին նոքա յուղղոյն՝ 'ի հողմ և 'ի ծով. իբրև երկնչէին նոքա մնալ 'ի ցամաք, և լուեալ ևս էին՝ զի 'ի Յապիւգիա նաւուք դարանեալ նստի Փիղիստոս։ Ապա նաւագնացք

լեալ նոքա 'ի սիւգ հանդարտ զաւուրս երկոտասան, դայլն հասանէին յերեքտասանեորորդում աւուր 'ի Պաքիւնոն հրուանդան Սիկիլիոյ։ Անդ յառաջեալ զեկավարին հրաման տայր փութալ եւանել արտաքս. զի թէ երբէք զատցին ասէ 'ի ցամաքէն կամ թէ թողցեն նոքա զհրուանդան զայն, այնուհետև աւուրս բազում և գիշերս բազում օթեւացին նոքա յանդունդս, գէտ ակն կալեալք հարաւային հողմոյն ամարայնոյ։ Բայց Դիոնիսի երկուցեալ եւանել այնպէս մօտ առ Թշնամիսն, յայլ վայր տարագէմ անցանէր յառաջ 'ի Պաքիւնեայ։

Իբրև հողմն շնչեաց ուժգնակի յԱրջոյն, առնոյր վարէր բազմակոհակ աւէօքն զնաւսն 'ի բացեայ 'ի Սիկիլիոյ, և անդ փայլատակունք հատանէին և որոտմունք յերևեալ Արկտուրոսին 3, և մրրիկ ահագին յերկնից, և տեղատարափ Թափեալ անձրևաց։ Ուստի և սրտաթափք զարհուրեալ նաւատեացն, և յայսկոյս յայնկոյս ծփեալք Թափառականք, ապա յանկարծ տեսանէին վարեալ զնաւսն 'ի մրրկէն 'ի Կերկինա հանդէպ Լիբիոյ, ուր առատապար յոյժ և գժուարամատոյց է կղզին։ Անդ վայրիկ մի ևս բախեալ խորտակեալ էր նաւաց նոցա 'ի ժայռից անտի, և հազիւ ուրեմն նոքա վերդս անարիս ընդդէմ կալեալ այնպէս ճողոպրէին, մինչև հանդարտեալ զնջանէր ահագին մրրիկն. և հանդիպեալ ապա նաւու՝ անդուստ խմացան ըղ-

վայրն զայնոսիկ, որոց անուն կարդան՝ Գլուխք մեծին Սիւրտեայ։

Անդանօր կառեալք կապեալք դժկամակս ընդ հանդարտութիւն օդոցն և հակառակեալք այր ընդ ընկերի, յանկարծ 'ի ցամաքէն շնչէր սիւդ հարաւոյ. ակն ամենեքին չունէին նոքա հարաւոյն և փոփոխութեանն այնմիկ չհաւատային. իբրև տակաւ զօրացաւ հողմն և սաստկացաւ, պարզեցին զառագաստսն և խնդրուածս կարգեալ առ դիսն՝ այնպէս յուղի անկան 'ի խորս 'ի Լիբիոյ 'ի Սիկիլիա, և յուշիկ ընթացեալք գային հասանէին 'ի հինդերորդում աւուր 'ի Մինոա քաղաք փոքրիկ 'ի Սիկիլիա ընդ ձեռամբ Կարքեդոնացւոց։

Եւ դէպ եղև յայնժամ լինել անդ Սիւնաղոսի իշխանին Կարքեդոնացւոյ՝ հիւր և բարեկամ Դիոնէի. այլ ոչինչ գիտէլով նորա զնմանէն և զնաւաց նորա, դուն գործէր խափանել անդր զէլս զօրականին. բայց նոքա 'ի զէն 'ի զարդ վազեալք արտաքս և սպանեալ և ոչ զոք (քանզի և զայն պատուէր տուեալ էր նոցա Դիոնէն 'ի մեծարանս բարեկամութեան Կարքեդոնացւոյն), և 'ի փախուստ զհակառամարտսն դարձուցեալ՝ մտին և առին զքաղաքն։ Բայց ապա պատահեալ միմեանց երկուց զօրավարացն և ոգեոյն տուեալք, դարձուցանէր Դիոնէն առ Սիւնաղոս ոգի զքաղաքն. և Սիւնաղոս վանս տայր զօրականին, և կազմէր պատրաստէր՝ զպէտս

Դիոնէի։ Իսկ որ առաւել ևս խրախուսեաց զզօրականն, զի յայնժամ ըստ դիպաց 'ի Սիկիլիոյ մեկնեալ գնացեալ էր Դիոնեսիոս։ Քանզի վայր մի յառաջ խաղաց նա ուրթսուն նաւուք յԻտալիա։ Ուստի և զօրականին յորդոր տուեալ Դիոնէի՝ անդէն ոգի առնուլ, իբրու որ շատ ժամանակ չարչարեցան 'ի ծովուն, նոքա յանձն չառին՝ ՃգնեալՔ 'ի գործն աղաչէին զԴիոնէն վաղվաղակի առնուլ ածել զնոսա 'ի Սիրակուսա։

Ապա նա թողեալ անդէն զամենայն զաւելորդն զվնուն և զաղխին, և ապաչեալ զՍիմնալոս առաքել առ նա զայնոսիկ 'ի դէպ ժամուն, ինքն 'ի չու անկաւ 'ի Սիրակուսա։ Իսկ յուղղոջ անդ խմբեցան նախ ընդ նմա երկու հարիւր այրուձի յԱկրագանտացւոց անտի բնակելոց յԵկնոմոն, ապա և Գելովացիք։ Եւ ապա ապրագ արագ հուչակ հարեալ բանին 'ի Սիրակուսա, յայնժամ Տիմոկրատէս՝ որ զամուսինն առեալ էր զԴիոնէին և զքոյր Դիոնիսեայ, և ոստիկան կայր նա 'ի վերայ բարեկամացն՝ զոր եթող 'ի քաղաքին, 'ի շտապ տագնապի առեալ արձակէր հրեշտակ առ Դիոնեսիոս և գիր, ազդ առնէր զգալուստն Դիոնէի. և ինքն անդէն խաղաղէր հանդարտէր զաղմուկ խռովութեանքաղաքին, քանզի և առհասարակ յայնժամ շարժեցան խլրտեցան. այլ քանզի և ոչ իսպառ հաւատացին և երկնչէին ևս՝ վասն այնորիկ և հանդարտեցան։

Իսկ նամակաւոր հրեշտակին առ Դիոնեսիոս՝ օտարոտի պատահեցան դէպք։ Քանզի անցեալ այրն յԻտալիա, և հասեալ զՀռիդինէ, 'ի փուԹալ իւրում 'ի Կաւլոնիա կողմն գտանէր անդ զԴիոնեսիոս, հանդիպեցաւ միում 'ի ծառայից նորա՝ որ բարձեալ տանէր պատրուճակ այն ինչ յազեալ. առեալ 'ի նմանէ բաժին 'ի մսոյն՝ փուԹայր անդրէն 'ի ճանապարհ իւր։ Եւ ուղևորեալ այնպէս այրն մասն մի զգիշերոյն և վաստակեալ յուղևոյն խնդրէր նինջ մի առնուլ. 'ի կողմն եղև և ննջէր յանտառի ուրեք՝ որպէս դէպ եղև՝ առ ճանապարհաւն. իսկ յայնժամ զհետ հոտոյն 'ի վերայ հասեալ անդր գայլ մի և յափշտակեալ զմին կապեալ 'ի պարկին՝ գնայր 'ի բաց, տարեալ ընդ իւր և զպարկն գլխովին՝ յորում եդեալ էր այրն զգիրն։ Իբրև զարԹեաւ այրն և իրազգած եղև, 'ի զուր 'ի խնդիր ելանէր նա ասա և անդ ընԹացեալ հարուստ ասպարէզս. ապա հաստատեցաւ ոչ գնալ առ բռնաւորն առանց գրոյ, այլ տարադէմ գնալ յերեսաց նորա։ Եւ յայսմանէ ապա անագան ուրեմն լուր յայլոց ոմանց առնոյր Դիոնեսիոս զմարտին Սիկիլիոյ և զարշաւանին զայնորիկ։

Իսկ Դիոնի յայնժամ յառաջադէմ խաղացեալ, եկին խմբեցան ընդ նմա Կամարինացիք. և ընԹացան և առ նա բազմուԹիւն ոչ սակաւ 'ի Սիրակուսացւոց՝ որ արտաքոյ յադարակս վտարանջեալ իսկ

էին։ Բայց Լէոնտացիք և Կամպանացիք՝ որ 'ի միասին ընդ Տիմոկրատեայ պահէին զԵպիպոլէ՝ 'ի սուտ ինչ համբաւոյ զոր եհար Դիոնէն՝ խբրու առաջին 'ի քաղաքս նոցա խաղալ, թողին լքին զՏիմոկրատէս և չոքան 'ի Թիկուանս մերձաւորաց իւրեանց։ Լուր զբանին առեալ Դիոնէսի՝ որ բանակեալ կայր 'ի Մակրաս, խաղացոյց գիշերի զզօրն, և չուեաց 'ի գեան Անաբոս՝ հեռի 'ի քաղաքէն ասպարիսաք տասն։ Անդ դադարեալ զչուն՝ յաղէր 'ի վերայ գեոյն, յաղօթս կայր առ Արեգական ծագեալ։ և անդ միաբան իղձք և գուշակք աւետաւորք յաղթութեան լինէին նմա առ 'ի գլոց։ Եւ մերձակայիցն տեսեալ զԴիոնէն պատկեալ յայնժամ 'ի զսէին, պատկէին և նոքա առհասարակ 'ի նոյն խրախոյս քաջալերութեան։

Իսկ որք խմբեցան ընդ նմա 'ի Ճանապարհին, չէին պակաս քան զհինգ հազար։ Թէպէտ և այնպէս վայրավատինք վառեալ էին 'ի զէնս՝ զոր և միանգամ 'ի ձեռս բերին, սակայն արութեամբ քաջութեամբ լցին նոքա զթերին զսպառազինութեանն, որպէս զի և 'ի խաղացուցանել զնոսա Դիոնէսի՝ խաղային գնային խընդագինս և 'ի ձայն աղաղակի խրախոյս միմեանց կարդային յաղաւութիւն անդր։ Իսկ 'ի Սիրակուսացւոց անտի որ 'ի քաղաքին արք ականաւորք և տոհմիկք, պատմուճան արկեալ սուրբ և պայծառ՝ գընային նոքա ընդառաջել նմա առ դուրան։

Բայց խուժան ժողովրդեան խռնեցան յարձակեցան յայնժամ 'ի բարեկամն բռնաւորին, և ժողովեցին բարձին զո-ղեարն՝ որ անուանեալ կոչին՝ Լրտեսք և գուշակք, արք աննուէրք և թշնամիք աստուածոց. որ շրջէին յածէին ընդ քա-ղաքն խառն ընդ Սիրակուսացւոց, և մխէին սպրդէին յամենայն իսկ յիրս, և երթեալ ապա զբոյց տային բռնաւորին զխորհրդոց և զբանից զառն առն: Եւ սոքա ապա ա-ռաջին յայնժամ լուծին զվրէժ 'ի հա-լուածս գանից արանցն՝ որոց միանգամ և պատահեցան նոքա:

Իսկ Տիմոկրատէս 'ի ժամուն ոչ կարա-ցեալ երթալ միանալ ընդ պահապանն դղեկին, հեծեալ 'ի ձի փախստեայ գնայր 'ի քաղաքէն. փախչէր, և առհասարակ յընդհանուրս արհաւիրս պակուցանողա-կանս համբաւէր, մեծացուցանէր զզօրու-թիւն Դիոնի. զի մի թերևս քաղաքացիք զնա կարծեսցեն զարհուրեալ 'ի գուշնա-քեայ պատճառաց:

Յայնժամ և Դիոնի յառաջամուխ ե-ղեալ գայր երևէր նա վառեալ շքեղ յա-ռաջոյ ամենեցուն, ասսի 'ի կողմանէ ու-նէր նա զեղբայր իւր զՄեգակղէս, և ան-ուն զԿալիպպոս Աթենացի, պատկեալք երկոքին նոքա: Զհետ ապա ընթանային նորա հարիւր զօրականք յեկաց անտի անձ-նապահպանք նորա. իսկ այլք միաբան զարդարեալք գնային խաղային 'ի ձեռն գնդապետաց իւրեանց յանդիման 'ի զնին

Սիրակուսացւոց, որք առեալ ժողովեցին զնոսա՝ իբրու որ ածեալ բերիցեն նուիրական և աստուածայնագոյն հանդէս, ընծայաբերք 'ի նոցա քաղաքն լինելով մշտանգամ ազատութեան և ընկերհաշտութեան զկնի քառասուն և ութ ամաց։

Եկեալ մտեալ ապա Դիոնէի ընդ Մենեմիդեան դրունն, լուեցուցանէր զաղմուկն 'ի ձայն փողոյ և քարոզ տայր կարգալ, եթէ Դիոնէս և Մեգակլէս եկեալ հասեալ կան 'ի միջոյ զբռնաւորութիւնն բառնալ, և 'ի բռնաւորէն զՍիրակուսացիս փրկել և զամենայն բնակաւորս Սիկիլիոյ։ Ապա և ինքնին կամեցեալ հրապարակախօս լինել, դէմ եդեալ ջոքաւ 'ի վեր յԱքրադինա։ Եւ անդ Սիրակուսացիք կարգեալ եդեալ էին աստի և անտի 'ի ճանապարհին սպանդս և սեղանս և բաժակս, և յանցանել գնալ նորա՝ փունջս փունջս ծաղկանց և երեխայրեաց ձգէին 'ի նա, և ուխտիւք ևս իբրու առ ոմն 'ի դից՝ դիմէին առ նա։ Եւ էր անդանօր 'ի նեբքոյ դղեկին և Պենատապիւղեայ Արևահոլուին (ժամացոյց) ականաւոր և բարձրահայեաց 'ի սեակլ ամենեցուն՝ կանգնեալ 'ի Դիոնիսեայ. անդր 'ի վեր ելանէր Դիոնէ, և անդուստ հրապարակախօս լինէր, քաջալերելով զարխոյս կարդալոյ քաղաքայնոցն հաստատուն զազատութիւնն պահել։ Իսկ նոքա առ հասարակ խնդացեալք և խանդակաթք առ նա, զնա ինքնին և զեղբայր նորա կարգէին եդին զօրավարս ինքնիշխանս. առ

այս՝ և ըստ խնդրոյն նոցա ընտրեցին յայն-
ժամ և այլ ևս աւագս քսան թուով բար-
ձակից Իշխանս՝ յորոց կէսք 'ի վտարան-
դեացն անտի էին որ դարձան ընդ Դիոնին։
Բայց յայնժամ ըղձիցն գուշակութեամբ
գեղեցիկ թուեցաւ նշան, զի ընդ ոտիւքն
'ի հրապարակախօսութեանն ունէր Դիոնն
զհոյակապն զայն պատուասիրութիւն և
զհրաշակերտուած զբռնաւորին. բայց քան-
զի հրաշակերտն՝ յոյր վերայ կացեալ զօ-
րավար հանդիսացաւ Դիոնն՝ էր ինքնին
Արևահոլոնն, խնթացեալ զանգիտէին գու-
ցէ կիրս արագ արագ զհոլովելոյ բախտին
կրեսցեն այն շահատակութիւնք։ Իսկ յետ
այնորիկ հասեալ կալաւ Դիոնն զԵպիպո-
ղէ, և ազատէր արձակէր անտի զբանտար-
գեալսն 'ի քաղաքացեացս, և շերտափակ
պատէր պաշարէր զդղեակն։

Ապա յաւուրն եօթնեերորդի գայր հա-
սանէր Դիոնեսիոս ընդ ծով և մտանէր 'ի
դղեակն. և 'ի նմին պահու գային հասա-
նէին առ Դիոնն սայլք բեռնաբարձք զի-
նուցն՝ զոր թողեալ իսկ էր նորա առ Սի-
նաղոսի. և առեալ բաշխէր տայր քաղա-
քացեացն. անդ և այլք վառեցան զարդա-
րեցան և նոքա ըստ բաւականի ձեռինն, և
զօրականս յառաջամիտս և արիականս 'ի
ներքս ընծայեցան։

Յայժամ Դիոնեսիոս արձակեաց ա-
ռանձին դեսպանս առ Դիոնն փորձել
զնա. իբրև նմա ազդ արար Դիոնն խօսել
հրապարակաւ ընդ Սիրակուսացւոց՝ իբրու

այնուհետև ընդ ազատաց ոմանց, սկսաւ ապա բռնաւորն 'ի ձեռն դեսպանաց առաջի առնել նոցա բանս համբոյրս և մարդասէրս. խոստումն կուէր 'ի չափու ըզհարկան ունել, և թեթևացուցանել նոցա զվաստակս զինուորութեանն ըստ կամաց նոցա։ Բայց Սիրակուսացիք յընչաց քերէին զխոստմունսն. իսկ Դիոնն պատասխանի զայս առնէր դեսպանացն, մի՛ և այլ Դիոնիսեայ խօսել ընդ Սիրակուսացւոց՝ մինչև հրաժեշտ յիշխանութենէն տուեալ. և ապա 'ի հրաժարել նորա՝ ինքնին նա զօրավիգն ըստ կարի լինելոյն նմա 'ի պէտսն նորա և ըստ բաւականի ձեռինն 'ի չափաւորսն, անմոռաց ունելով որ առն նա զմերձաւորութիւնն։ Հաւանեցաւ Դիոնեսիոս, և անդրէն արձակէր դեսպանս, խնդրէր գալ 'ի Սիրակուսացւոց անտի 'ի գղեակ անդր խօսել վասն հասարակաց օգտին. ածել 'ի հաւանութիւն և գալ 'ի հաւանութիւն։ Ապա արս ընտիրս և վկայեալս առեալ արձակէր առ նա Դիոնն. և անդուստ 'ի բարձանց գղեկին ձայն հնչէր աշխարհաքարոզ առ Սիրակուսացիս, եթէ 'ի բաց Դիոնեսիոս դնէ աւադիկ զբռնակալութիւն 'ի շնորհս անձին՝ քան եթէ Դիոնին։ Սակայն նենդ էր բանն և դաւ բռնաւորին, և որոգայթ նիւթեալ ընդդէմ Սիրակուսացւոց։ Քանզի առեալ արդելեալ առ իւր զարան պատգամաւորս զքաղաքին, և վաղ քաջ ընդ առաւօտն արբեցուցեալ անապակաւ զվարձկանսն

զօրականին, արձակէր 'ի շտապ տագնապի դուռն տալ հարկանել վանել զշերտաւիակ պատնէշ զՍիրակուսացւոցն։

Իսկ 'ի յեղակարծ հրոսակին յայնմիկ և 'ի վանել քանդել բարբարոսացն զպատնէշն յանդուգն յարձակմամբ և ահագին դղրդմամբ, զտեղի կալաւ անդէն և ոչ ոք ընկրկել զնոսա, բայց յեկաց զօրականին Դիոնէսի։ Նոքա անդէն արագ 'ի շառաւիղէն ահագին դիմեալք 'ի շերտափակն, 'ի շտապ տագնապի 'ի զօրավիգն օգնականութեան, և լսէին իմանային և ոչինչ 'ի ձայնէ աղաղակի և 'ի խուճապելոյ անտի Սիրակուսացւոցն փախստէից՝ մխեալք 'ի խռան եկացն և տագնապաւ ճողոպրեալք ընդ մէջ նոցա. մինչև ինքնին Դիոնէս տեսեալ՝ զի զձայնն լսէ և ոչ ոք, յարդեանց անակնջուցեալ զոր առնել պարտն էր, յարձակեցաւ նահատակեալ 'ի վերայ բարբարոսացն. և անդէն գոռ ահագին պատերազմի յարդարէր զնոքօք, յերևան եկեալ միանգամայն և թշնամեացն և բարեկամացուստն և առհասարակ միախուռն սլացեալ հասանէին անդր բարձր բարբառով. բայց 'ի տիոց հասակին ծանրացեալ էր Դիոնէս՝ անբաւական շահատակութեան մարտին, թէպէտ և սաստիկ հզօր և արութեամբ լի։ Մինչդեռ այնպէս արձանացեալ բերէր նա ախոյենիցն և տապաստ ևս արկանէր 'ի նոցանէ, տիգահար վէր ընկալաւ 'ի ձեռին. իսկ ապա և 'ի ձիգ նետից նոցա և 'ի հարուածս ձեռաց՝ հա-

զիւ ուրեմն ամրածածուկ նա 'ի զրահիցն՝ հարեալ բախեցաւ 'ի խուռն աշտէից և 'ի նիզակաց, թափ ծակեալ և վահանին նո-ցա, և 'ի թափոյ անտի արձակելոց զինուցն բեկելոց՝ 'ի վերջէ ուրեմն տապալեալ յերկիր անկանէր Դիոնն։

Իսկ յահագին գոռին յայնժամ զեր-ծեալ նա 'ի ձեռս զօրականին, կարգէր իւր փոխանակ զօրավար զՏիմոնիդէս. նա յերիվար աշտանակեալ՝ շուրջ ընթացեալ ընդ քաղաքն սանձէր կարձէր զփախուստ Սիրակուսացւոցն, և յԱքրադինայ առեալ ածեալ փութապէս զեկս զօրականին՝ որ անդ 'ի պահպանութեան, դրդեաց վա-ռեաց զնոսա այնպէս առոյգս և քաջա-սիրտս 'ի դիմի բարբարոսացն, որ և ան-կեալ իսկ էին նոքա այնուհետև 'ի քա-ջութենէ իւրեանց։ Քանզի մինչդեռ ակն ունէին ըստ առաջին յարձակմանն հոր-դան բուռն 'ի քաղաքն տուեալ՝ բնաւ իսկ տիրանալ, և ապա յեղակարծումն արանց պատահեալ քաջաց և մարտկաց, տեղի այնուհետև ետուն վերջոնեալք 'ի դղեակ անդր. դարձեալ և Հելլենացիք սաստիկ հարեալ վանէին զնոսա, մինչև 'ի վերջէ իսպառ թիկնադարձոյցք չոքան փակեցան 'ի պատուարս իւրեանց, տապաստ արկեալ ոչինչ աւելի քան զեօթանասուն և չորս 'ի զօրացն Դիոնի, սակայն հարուած առա-ւել ևս առեալ 'ի նոցանէ։ Ապա 'ի չբ-նաղ և 'ի հոյակապ յաղթութեանն Սի-րակուսացիք 'ի մեռեալս հարիւր պսակեցին

զեկա զօրականին. և եկեալ դարձեալ՝ պատակ ոսկի առաջի ընծայէին Դիոնի։

Յետ այսորիկ ելեալ գային պատուիրակք 'ի Դիոնիսեայ առ Դիոն՝ բերեալ նամականի 'ի կանանց մերձաւորաց նորա. յորս էր և նամակ մի՝ ունելով երեսագիր, Ա՝ Հայրն, 'ի դիմաց Հիպպարինոսի. (Քանզի այս էր անուն որդւոյն Դիոնի. Թէպէտ և Տիմէոս անուն ասէ զնորա՝ Արեոէոս՝ յԱրեոսեայ մօրէն. այլ ինձ թուի՝ ասանօր առաւել Տիմոնիդեայ հաւատալ առն բարեկամին Դիոնի և նիզակակցի)։ Արդ այլ ամենայն նամականին աշխարհաբ ընթերցան լու 'ի լու Սիրակուսացւոց, և էին 'ի նոսա պաղատանք շատ և աղերս առ նա 'ի կանանւոյն։ Իսկ ելբրև յանձին չկալան Սիրակուսացիք բանալ յատենի և ըզկարծեալ նամակ որդւոյն, առեալ ուժգին բանայր զայն Դիոնն. և գտանէ զայն Դիոնիսեայ. որ Թէպէտ և առ Դիոնն գրեալ, բայց արդիւնք բանից առ Սիրակուսացիսն կրթէր. քանզի այն նամակ 'ի վերին երեսա՝ պաղատանաց և անձին պատասխանւոյ, էր իսկ 'ի ներքոյ ամբաստանութիւն զԴիոնէ։ Քանզի 'ի նմա յիշատակ առնէր Դիոնեսիոս, զոր ինչ միանգամ նա յառաջ մտադիր և կամակար նահատակեցաւ 'ի կողմն բռնաւորութեան. առ այս՝ և էին 'ի նմա սպառնալիք ընդդէմ փարելի սիրելեացն նորա քեռն և որդւոյն և ամուսնոյն. դարձեալ և յանդիմանութիւնք մեծամեծք խաւսն ընդ ցա-

ւագին գանգատանաց։ Իսկ որ անհնարին չարժեաց զԴիոնն, զի հրապուրէր զնա Դիոնեսիոս՝ մի զբռնակալութիւնն տապալել, այլ զանձամբ առնուլ. և մի յաղաւութիւն զժողովուրդն հանել՝ որ առեայ զնա, և յիշաչար ևս է, այլ յինքն զսէրութիւնն տանել և յանդորրու զբարեկամն իւր և զմերձաւորսն կացուցանել։

Իբրև զայս ամենայն ընթերցան, անդուստ Սիրակուսացիք ոչինչ հիացեալ զարմացան (որպէս և արժան իսկ էր) ընդ անցաւորութիւնն Դիոնի և ընդ մեծանձնութիւնն, զի այնպէս մարտ եղեալ քաջութեամբ մաքառէր այրն ընդ կարևոր մերձաւորութիւնս արեանն 'ի սէր առաքինութեան և արդարութեան. այլ խնթացեալ զանգիտէին՝ եթէ 'ի պատճառաց անտի թերևս կարի նեղ հասցէ առնն խնայել ներել բռնաւորին, ուստի և այլուստ զօրավարի 'ի խնդիր յայնժամ դարձան նոքա. և լուր ևս առեալք զմիւսանգամ դարձին Հերակլիդեայ, առաւել ևս խնդացեալք խրախուսեցին։

Եւ էր այս Հերակլիդէս մի 'ի վտարանդեաց անտի, այր փորձ 'ի զօրավարութեանէ և վկայեալ յառաջնորդութեան զօրուն առ բռնաւորօքն. սակայն և ոչինչ անդրդուելի էր նա 'ի խորհուրդս իւր, նա և յեղյեղուկ առ ամենայնն, և ոչինչ հաստատուն 'ի հաղորդութեան գործոցն՝ որ աւագութիւն 'ի ներքս բերէն և զփառս։ Սա այս Հերակլիդէս 'ի պայքար եկեալ

ընդ Դիոնէի 'ի Պեղոպոննիսոս, եդ 'ի մոի
խաղալ նաւէլ առանձինն ընդդէմ բռնա-
ւորին իւրովք իսկ նաւուքն. և հասեալ 'ի
Սիրակուսա եօթն եռաթիովք և երիւք
ևս այլ նաւուք, զոտանէ յայնժամ զԴիո-
նեսիոս միւսանգամ պաշարեալ, և զՍի-
րակուսացին մեծապէս խրախուսեալ:
Ապա նա անդէն սպրդէր միջամուխ շնորհս
գտանել առաջի ժողովրդեան. քանզի և
էր իսկ բնութեամբ համոզակեր այրն և ո-
ղոքաւոր խուժանին՝ որում և սիրելի իսկ
է սպասարկութիւն. ոյր աղագաւ և հեշ-
տին յինքն յանկուցանէր՝ զորս միանգամ
ստամբակեալ և սոնքացեալ առ 'ի յաղ-
թութենէն ընդ սկամբ իմն հայէին ընդ
պերճութիւնն Դիոնէի՝ իբրու որ դժոխքմ-
բերելի և անպատկանաւոր ռամկին. քան-
զի և մինչև գարձեալ նոքա 'ի ժողովուրդ,
խնդրէին ընկերհաշտութիւն ժողովրդա-
կան: Ուստի և ինքնին նոքա խմբեալ յա-
տեան, առեալ կարգեցին զՀերակղիդէս
նաւապետ իշխան. բայց Դիոնէի անդր 'ի
վերայ հասեալ, կայր և գանգատէր, և
ասէր՝ եթէ իշխանութիւն այն Հերակղի-
դեայ է իսկ ինքնին տապալիչ իշխանու-
թեանն՝ զոր յառաջագոյն նոքա ետուն
նմա. (իբրև չէ նա այնուհետև հրամանա-
տար ինքնիշխան, զի այլք իշխեն 'ի ծո-
վուն). իբրև զայս ասաց, Սիրակուսացիք
յայնժամ թէպէտ և յոչ կամաց՝ 'ի բաց
զիշխանութիւնն հանէին 'ի Հերակղիդեայ:

Իբրև այս եղև, առաքեաց Դիոնէն կո-

չէաց զՀերակղիդէս 'ի տուն իւր. և վասն մի անդանօր զչարեալ ընդ նմա՝ զի ոչ գեղեցիկ կարգաւ և ոչ 'ի հատարակաց օգուտ, այլ 'ի փառախնդրութեանն աղմուկ շարժեաց ընդդէմ նորա 'ի ժամանակին՝ յորում և դոյզն մեղն շատ է հիմն 'ի վերս զամենայնն առնել։ Եւ անդէն ապա առեան հրամայէր, և համբաւէր զՀերակղիդէս 'ի զօրավար նաւաց. և հաւանեցուցանէր զժողովուրդն տալ նմա անձնապահապետս՝ որպէս և անձին իւրում։

Յայնժամ Հերակղիդէս բանիւք և կերպարանօք սպասարկութիւն 'ի նեղքս բերեր Դիոնիսի, և շնորհապարտ զանձն դաւանէր և խոնարհութեամբ ևս գնայր ընդ նմա և զամենայն հրամայեալսն 'ի գլուխս տանէր։ Բայց 'ի նեղքոյ զանխուլ եղծանէր խանգարէր նա զիսուժանն և զորս հետամուտք նորութեանց էին, և շարժէր խլրտէր զնոսա. և այնպէս 'ի մեծապէս տագնապ առեալ թակարթէր զԴիոնիս և յանհնարին վարանս։ Զի թէ երբէք պայմանագիր ընդ Դիոնիսեայ եղեալ՝ թողոյր նմա ելանել արտաքս 'ի գղեկէն, ամբաստան կային՝ եթէ խնայեաց և ապրեցոյց զբրուտնաւորն. ապա եթէ ըստ միտս գնացեալ Սիրակուսացւոց՝ հաստատուն 'ի պաշարմանն կայր, թուէր այնպէս՝ յոտին զմարտն պահել զի հարուստ ժամանակ տիրասցի նա և յահի զքաղաքացիսն կալցի։

Էր յայնժամ Սովսիս ոմն այր ականաւոր 'ի Սիրակուսացիս 'ի չարութեան և 'ի

լրբութեան. կարծեալ այնպէս էր՝ եթէ ծայր ազատութեան ի՛ցէ գլխովին ապերասանութիւն լեզուի։ Արդ սա այս այր հաղթ նիւթեալ Դիոնէի, առաջին յաւուր միում յոսն կացեալ յատենի ժողովոյն, լուտանս բազում արձակէր Սիրակուսացւոց՝ իբրու խօթամտաց ոմանց, զի զերծեալք 'ի նեղբուստ ձեռին բռնաւորի անմոի և արբեցողի, լուրջ և զուարթուն իշխանի մոին նոքա ընդ լծով։ Եւ այսպէս ապա յայտնի թշնամի զանձն ցուցեալ Դիոնէի, տեղի տայր յայնժամ 'ի հրապարակէն. և ապա առ վաղիւն տեսանէին զնա մերկ խայտառակ ընթացեալ ընդ քաղաքն՝ համակ տրիւնաշաղախ 'ի գլուխն և 'ի դէմն, իբրու որ 'ի փախուստ 'ի հետամոից ոմանց խուճապեալ ի՛ցէ. և դիմեալ մտեալ այնպէս վայրավատին 'ի հրապարակ անդր, բողոք բառնայր՝ եթէ դարան գործեցաւ նմա 'ի զօրաց անտի յեկացն Դիոնէի. և առեալ ցուցանէր նոցա զգլուխն վիրաւոր։ Եւ գտանէր նա յայնժամ՝ իւր սիստակիցս բազումս կարևորս, և ցանուին ընդ Դիոնէ, իբրու ընդ վայրենի այր և ընդ բռնաւոր. որ զհամարձակութիւն խօսելոյն հնարեցի կարձել 'ի քաղաքացեաց 'ի մահուանս և 'ի վտանգս։

Արդ թէպէտ և 'ի ժամուն առհասարակ ամբոխեալ խռովեցաւ հրապարակն, յառաջ մատեաւ արձանացաւ Դիոնէ, կայր և պատասխանի առնէր վասն անձին. և տայր ևս գիտել նոցա՝ զի է Սովսիս եղ-

բայը միոյ 'ի Թիկնապահաց անուն Դիոնի-
սեայ, և 'ի նմանէն հրապուրեալ է գա-
խառվել ամբոխել զքաղաքն. քանզի և
Դիոնիսեայ ինքնին չլիք այլ հնար փախչ-
տեան, բայց 'ի գժտութեան և 'ի հակա-
ռակութեանէ քաղաքացեացն ընդ միմեանս:
Ապա առ եաւեղ և զվերն Սովսիդեայ է-
կեալ բժշկաց և 'ի քնին առեալ, գատ-
նէին 'ի վերին երեսս զհարուածն և ոչ
յուժգին զարկիս. քանզի և վերք սրոյ
խորագոյնք ևս են առաւել ևս 'ի միջոցին,
իսկ էր Սովսիսայ վերն գուշնաքեայ համ-
բուն. առ այս՝ և ցիրուցան համասփիռ.
ուստի և դիւր մերթ լինէր ցաւոյն, և
մերթ զայրանայր: Յետոյ գային հատա-
նէին և արք ոմանք ծանօթք. և ածին բե-
ռին նոքա 'ի ժողովն անդ ածելի, և պատ-
մէին՝ եթէ 'ի Ճանապարհին պատահեցին
նոքա Սովսիսայ այնպէս արիւնաթաթաւ.
և ասէր՝ փախչէլ 'ի ձեռաց եկաց զօրակա-
նին Դիոնէսի. իբրու որ գեռ ևս վերաւո-
րեալ առ 'ի նոցանէն. և իբրև նոքա զչեռ
մոին զօրականին, տեսին և ոչ զոք. այլ
զածելին գտին 'ի ներքոյ փապարին վիմի՝
ուստի տեսին զնա ելանել արտաքս:

Իբրև այսպէս նշաւակեալ առակեցաւ
Սովսիս, անդուստ և ընտանիք նորա հա-
ւատուս ևս այլ 'ի ներքս բերին. վկայե-
ցին՝ եթէ մինչև լուսացեալ աւուրն էլ
Սովսիս 'ի տանէն միայնիկ մնջիկ ածելի 'ի
ձեռին: Ապա այնուհետև դատախազք
Դիոնէսի խորչեցան մերժեցան, և անդ ժո-

ղովուրդք 'ի մահ զՍովսիս գատապարտեալ՝ հաշտէին ընդ Դիոնէի։ Սակայն և խնթային ևս տակաւին 'ի վարձկան զօրականէն՝ որ 'ի քաղաքին. մանաւանդ զի և գոռ ևս էր կռիւն 'ի ծովուն ընդդէմ բըռնաւորին։ Իսկ իբրև և Փիղիստոս էկն ետհաս 'ի Յապիւգեայ բաղում եռաթիովք 'ի թիկունս Դիոնիսեայ, ասէին յայնժամ Սիրակուսացիք՝ եթէ հետևակազօր սպառազէնք են եկեալ այդոքիկ, և պիտանիք ոչ ևս եղիցին նոքա 'ի կռուին, և կայցեն նոքա այնուհետև հպատակ իւրեանց՝ որ նաւամարտիկք են և զօրացեալք 'ի նաւս։

Զայս ասացին, և ապա առաւել ևս ամբարձան գոռոզացան, զի քաջապէս նահատակեալք 'ի ծովու պարտեցին նոքա զՓիղիստոս, ընդ որում և անագորոյնս և խժդժագոյնս գնացին։ Քանզի պատմէ Եփորոս, եթէ ձերբակալ զնա արարեալ, ինքնին յայնժամ Փիղիստոս զևւրովին գընաց։ Սակայն Տիմոնիդէս՝ որ անդատին 'ի բնէն 'ի նոյն գործ միջամուխ ընդ Դիոնէի՝ գրելով առ Սպեւսիպպոս խմոստասէր՝ պատմէ, եթէ կենդանւոյն ձերբակալ եղև Փիղիստոս, քանզի բախեալ եռաթի նորա հարաւ ընդ ցամաք. և թէ՝ Սիրակուսացիք նախ 'ի զրահիցն կապտեալ զնա և մերկ խայտառակեալ, և էր նա ծեր հինաւուրց. ապա զգլուխն կտրեալ՝ զդիակն 'ի ձեռս տային մանկտոյն. պատուէր տուեալ ձգել քարշել զնա ընդ Ակրագինա և հոսել ապա ընդ պարեխս և ընդ քարահանքս։ Իսկ

Տիմէոս առաւել ևս ոտնհար եղեալ, ասէ՝ եթէ զդիակն Փիղիստեայ ընդ սրունսն նորա ընդ կաղ՝ ձգէին 'ի քարշ մանկտին 'ի քաղաքին 'ի խաղ և 'ի ծանակ Սիրակուսացւոցն. որ կացեալ 'ի զնին հայէին այնպէս ձգեալ զարունիցն զայրն՝ որ ասացեալ երբեմն էր առ Դիոնեսիոս՝ եթէ ոչ հասցէ Դիոնիսեայ փախչել 'ի բռնակալութենէն 'ի ձի արագ, այլ մնալ զի 'ի քարշ ընդ սրունսն ձգեսցի: Թէպէտ և բարբառեցաւ զայս յայնժամ Փիղիստոս առ Դիոնեսիոս իբրև զօտարին բան, և ոչ զիւրն:

Բայց Տիմէոս պատճառս առեալ ոչինչ յանիրաւի՝ 'ի Փիղիստեայ ջանիցն և 'ի հաւատոյն առ բռնաւորութիւն անդր, յաղեցուցանէ զանձն 'ի հայհոյութիս առնն: Ոյր աղագաւ և ներող արդեօք գտանիցի նա առ հարատահարեալ որեարն, եթէ արդեօք այնպէս անագորոյնք՝ մինչ 'ի դիակն անդր անզգայ կուտեալ թափեալ իցէ նոցա զցաւումն: Սակայն ոչք զկնի նորա պատմագրեցին զայսոսիկ և ոչք առ կենդանութեամբն կրեցին և ոչինչ յառնէն, նա 'ի մատեանս ևս առնն վայելեցին, համբաւոյն իւրեանց պատկառ կալ նոցա արժան էր, և մի ոտնհար թշնամանօք լինել կրիցս աղէտիցն, յորում և այր ոք առաքինի ըստ ձախողակ բախտին պաշարեսցի:

Դաև ոչ ինքնին Եփորոս ողջախոհանայ 'ի գովել իւրում զՓիղիստոս: Եփորոս այն՝ որ թէպէտ և ճարտարութեամբ յաջողեալ դիմակս զգեցուցանել գեղեցիկս՝

գործոց անիրաւութեան և վարուցն վատ-
թարութեան, և հնարագէտ լինել 'ի բանս
փարելիս և 'ի պաճուճեալս, ոչինչ կարաս-
ցէ նա՝ թէպէտ և զամենայն հնարս հնա-
րեսցի ճողոպրել զանձն 'ի մատենագրու-
թիւնս իւր 'ի բամբասանաց անոմ խանդա-
կաթ ըղձին իւրոյ առ բռնաւոր մարդիկն.
զի և առաւել քան զամենեսեան հեռա-
մուտ եղև դա և սիրեաց զգրգանս և զշ-
ղրութիւն և զընչաւէտութիւն և զմերձա-
ւորութիւն զբռնաւորացն: Իսկ որ ոչ զՓի-
ղիսատեայ գործսն գովէ, և ոչ նորա աղէ-
տիցն ոանհար լինի, նա է ողջամիտ:

Ապրդ իբրև Փիղիսատոս մեռաւ, առա-
քեաց Դիոնեսիոս առ Դիոնն, ասէր՝ տալ
նմա 'ի ձեռս զդղեակն և զգէնս և զվարձ-
կանս զօրականին և թոշակս ևս տալ նո-
ցա զամիսս հինգ. և խնդրէր միայն վասն
անձին թոյլ տալ երթալ յԻտալիա ան-
խաբ պայմանօք. և անդէն բնակութիւն
կալեալ վայելել 'ի հասս մասին գեանոյ՝
որում Գիւատասս անուն կարդան. վայր
լայնարձակ և արգաւանդ յիշխանութեանն
Սիրակուսայ, և երկայնի ձգի նա 'ի ծովէն
մինչև 'ի միջերկրեայն: Իբրև ոչինչ հաւա-
նեցաւ Դիոնն, և ազդ ևս արար նմա՝ ա-
ղաչել նմին իրի զՍիրակուսացիսն, սոքա
ակն ունելով կենդանւոյն ունել զԴիոնե-
սիոս, 'ի բաց վարեալ մերժեցին զդես-
պանսն: Այլ Դիոնեսիոս յանձն զդղեակն
արարեալ Ապողոկրատեայ երիցագոյն զա-
ւակին, և ինքն գէտակն կալեալ յաջողու-

թեան հողմոյն և ամբարձեալ 'ի նաւս զո-
րեարն և զկարասին՝ որ սիրելի նմա և
պատուական, յուղի անկանէր զանխուլ
'ի Հերակղիդեայ նաւապետ իշխանէն։

Իսկ իբրև Հերակղիտէս շատ նախատե-
ցաւ 'ի քաղաքայնոցն, և աղմուկ ևս յու-
զեցին ընդդէմ նորա, նա գաղտ 'ի ծա-
ծուկ առաքեաց զՀիպպոմենէս զոմն հռե-
տոր խուժանին, դրդել վառել զխուժանն՝
խնդրել զբաշխ զգեստնոյ. առաջի եդեալ՝
եթէ հաւասարութիւնն մայր է ազատու-
թեան, իսկ աղքատութիւնն՝ մայր ծա-
ռայութեան վասն չքաւոր մարդկանն։
Ապա և ինքնին Հերակղիդէս զօրավիգն
կացեալ հռետորին այնմիկ, և իւրովք կու-
սակցօքն նկուն զԴիոնն արարեալ՝ որ ընդ-
դէմ դառնայր բանին, ած հաւանեցոյց
զՍիրակուսացիսն վՃիռ 'ի ներքս բերել
վասն բանին այնորիկ. առ այս՝ և 'ի միջոյ
բառնալ զթոշակ եկաց զօրականին, և ըն-
տրել կարգել զօրավարս այլ և ազատ կալ
'ի ճոխութենէն Դիոնի։

Ապանոքա գուն գործեալք այնպէս ոգի
առնուլ միանգամայն արագ արագ 'ի բրա-
նաւորութենէն՝ իբրու 'ի բազմաժամանա-
կեայ խօթութենէն, և գործ գործել 'ի
տարաժամու՝ իբրու որք ինքնիշխանք գըլ-
խովին լցեն, վատթարացան 'ի գործս իւ-
րեանց, և ասեցին զԴիոնն՝ որ իբրև զՃար-
տար բժիշկ խնդրեր տակաւին ունել զքա-
ղաքն 'ի պահս ճշգրիտ և քաջախորհուրդ։
Իբրև այսպէս 'ի ժողով խմբեցան ընտրել

կարդել իշխանս նորս, յայնժամ 'ի հաստատակ ամարայնոյն դէպ տայր ահագին ամպրոպաց յուզել շարժել և երևութանալ ձախողակ նշանակաց այնպէս անդուլ զաւուրս հնգետասան. պակեան ժողովուրդք և բարեպաշտութեան ահիւ պաշարեալք 'ի բաց կացին յայնժամ կարգել զօրավարս այլ:

Իբրև հռետորք խուժանին վառեցան կազմեցան 'ի կատարումն գործոյն ընտրութեան, զի պարզ և յստակ յայնժամ հանդարտեցան օդք, դէպ եղև սայլաձիգ եզին՝ որ թէպէտ և համբոյր և ձեռնընդել խուժանին, գրգռեալ յայնժամ ընդդէմ խթանին՝ թօթափել զսամեռէս, և այնպէս տագնապաւ վազս առեալ 'ի թատրոն անդր, ահ և խռով հարկանէր 'ի ժողովրդեան, և խուճապեալք ցիրուցան լինէին. և ապա անդուստ վազիւք կայթս հարեալ՝ քանդէր աղարտէր զամենայնն 'ի վայրն առհասարակ քաղաքին՝ զոր միանգամ ընդ բռամբ կալան թշնամիք: Սակայն և այնպէս Սիրակուսացիք ոչինչ երեսս արարեալ այսոցիկ, առեալ ընտրեցին զօրավարս քսան և հինգ թուով, յորոց մի էր և ինքնին Հերակլիդէս:

Առ այս դարձեալ՝ և գաղտաբար նոքա առաքեցին փորձ փորձել զեկաց զօրականին՝ որ ընդ Դիոնիսի՝ հրապուրել յապստամբութիւն, և հրաւէր նոցա կարդային 'ի միաբանութի իւրեանց, խոստանային հաւասարել զնոսա ընդ իւրեանս յառաջնորդ

գուԹեան քաղաքին։ Բայց նոցա զՀրապոյրսն յանձն չառեալք, և այնպէս հաւատարիմք և մտադիւր յօժարութեամբ 'ի մէջ իւրեանց առեալ զենուք զԴիոնն, և շուրջ անձնապահպանեալք նորա, այնպէս առեալ ածէին զնա արտաքոյ քաղաքին. չար ումեք չարարին, կշտամբանս միայն շատ արձակէին՝ որոց միանգամ պատահէին. զանչնորհակալու կերպ նոցա և զխեղաԹիւր զբարսն յերեսս հարկանէին։

Իսկ Սիրակուսացիք յայնժամ արհամարհեալ զսակաւաձեռն գնդաւ նոցա, և զի և տեսանէին ևս զնոսա ոչինչ նահատակեալ 'ի կռիւն, խուսիս առեալ բազմութիւն յոյժ յարձակեցան և մոլեգինս զհետս մտին՝ իբրու այնպէս հեշտին զնոսա 'ի քաղաքն անգ նկուն առնել և առհասարակ տապաստ արկանել։ Իբրև այնպէս յայն հարկ և 'ի պատահար շտապեցաւ Դիոնն, կամ մարտ գնել կռուել ընդ քաղաքացեացն կամ անդէն տապաստ անկանել ընդ եկացն, յողոք անկանէր նոցա, ձեռս կարկառեալ ձգէր, մատնանիշ առնէր նոցա զդրդեակն լի և զեղուն տակաւին Թշնամեաք արամբք՝ որ անգուստ 'ի պատուարաց անտի 'ի բարձանց 'ի զնին կացեալ հային յամենայն գործս նոցա։

Իբրև ոչինչ բաւական եղև հանդարտել զբռնութիւն խուժանին, և տեսեալ ևս զքաղաքն իբրու յանդունդս ծովուն՝ այնպէս հողմակոծ ծփեալ 'ի հռետորաց անտի, հապա ձայն էտ իւրում զօրականին,

անձնապահ եղեալ 'ի հրոսից յարձակմանն՝ այնպէս միայն աղաղակ մեծ բառնալ և 'ի շաչիւն շառաչիւն զինուցն ահ արկեալ Սիրակուսացւոց՝ ընթանալ վազել. յորոց և ոչ մի ոք 'ի նոցանէն հանդարտեցաւ յակաստանին, այլ առհասարակ 'ի փախուստ խուճապեցան ասա անդ ընդ փողոցս, թէպէտ և հետամուտ չէր ոք։ Քանզի անդէն կոչեալ յեռս Դիոնէի զիւրսն, առեալ ածէր զնոսա առ Լէոնտինացիս։

Եւ այսպէս ապա զօրագլուխք Սիրակուսացւոց այսանօք կատակեալք յայնժամ 'ի դասուց կանանուոյն, և յանձանց զամօթն քերեալք՝ անդրէն միւսանգամ վառեցին կազմեցին զքաղաքացիսն և զհետամտին Դիոնէի. հասին առ նա յանցս ինչ գետոյ, և զայրուձին յառաջ վարեցին 'ի վեգ ընդ նմա։ Իբրև տեսին զի ոչ ևս նա ժուժայ բերէ խեռուութեան նոցա հեզաբար և հայրօրէն, և համակ 'ի սրտմտութիւն բարկութեան բրդեալ՝ վարէր տագնապաւ զիւր գունդն ընդդէմ կարգեալ և ճակատեալ, զոտս արձակեալ անդրէն 'ի փախուստ անարգաբար ևս խուճապեցան քան զառաջինն. և վերջոտնեալք մտանէին 'ի քաղաք անդր՝ ոչինչ բաղմաց տապաստ արկեալ 'ի նոցանէն։

Իսկ Լէոնտինացիք մեծապէս հիւրընկալութեամբ և շքով առեալ ժողովեցին զԴիոնէն, և մարգասիրեալ առ զօրականն նորա թոշակօք, և 'ի քաղաքացիս ևս իւրեանց գրեցին զնոսա։ Ապա առեալ ա-

ռաքէին գէսպանս առ Սիրակուսացիս. ինդրէին առնել իրաւունս եկաց զօրականին. իսկ անդուստ և Սիրակուսացիք արձակեցին արս առ Լէոնտինացիս ամբաստանս զԴիոնէ։ Իբրև ժողովեցան առհասարակ նիզակակիցք առ Լէոնտինացիս, 'ի խորհուրդ մտեալք վասն բանին՝ դատապարտ առնէին զՍիրակուսացւոց գործն։ Բայց նոքա նիզակակցաց դատաստանին էրեսս չարարին. խեռացեալք յողն կացին, և ունկն մատուցեալ և ոչ ումեք, 'ի գործ զզօրագլուխսն վարէին՝ խուժանին ծառայս և ակնածուս։

Յետ այսորիկ գային հասանէին 'ի քաղաք անդր եռաթիք նաւաց արձակեալք 'ի Դիոնիսեայ. էր ընդ նոսա Նիւպսիոս Նէապոլսեցի՝ բերեալ ցորեան և արծաթ 'ի թիկունս պաշարելոցն։ Մարտ յայնժամ մղեալ նաւամարտ՝ յաղթական գտան Սիրակուսացիք և հասին կալան նաւս չորս զբռնաւորին։ Ապա 'ի յաղթութենէն յայնմանէ 'ի վեր վաղեալ Սիրակուսացւոց, և զևնծղանս իւրեանց՝ յանիշխանութեան անդ իւրեանց՝ առեալ դարձուցեալ 'ի գինեբբուս և յընկերշակութիւնս անմիտս, այնպէս իմն անհոգացան զանձանց, զի որ անշուշտ կարծեցին զբռամբ զդղեակն ունել, նոքա և զքաղաքն անգամ հանին 'ի ձեռաց։

Քանզի գէտակն կալեալ Նիւպսիասայ՝ տեսանէր զի առողջ մի մասն չէր 'ի քաղաքին. այլ խուժան ռամկին անդուստ 'ի

ծագմանէ աւուրն և զգիշերն ևս խորու-
թեան երկայնէր ձգէր անկղեուացեալ 'ի
ձայնս արնգաց և 'ի իրախուռնս խնձոյից.
իսկ և զօրագլուխք ինքնին իրախացեալ
կային 'ի հասարակ հանդէս շուայտութեն,
և սատէին ինչ ոչ գինեհար մոլեգնելոցն.
ժամ գոռեալ պարապոյ՝ ձայն էտ, հրոս
առհասարակ տայր 'ի պատնէշ անդր, և
վանեալ հարեալ և քանդեալ զնա արձա-
կերասան բարբարոսացն, հրաման տայր
բռնանալ ըստ կամի և ըստ կարի՝ առհա-
սարակ որոց և միանգամ պատահեացին։

Ապա Սիրակուսացիք անդէն խելա-
մուտք յայնժամ աղէտից իւրեանց, դան-
դաղագոյն և անբաւականք այնուհետև
յելս իրացն, այնպէս պակուցեալք զսր-
հուրեալք կային։ Քանզի և էր իսկ համ-
բուն տեսանել անդ ոչ այլ, բայց կապ-
տեալ կողոպտեալ և աւար հարկանեալ և քա-
ղաքի քանդեալ, 'ի մահ վարեալ արանց, և
սասպալեալ պատուարաց, և յակառն գերի
վարեալ մանկտոյն և կանանուոյն 'ի ձիչ գու-
ժի և ողբոց լալուութեան։ Իսկ յայնժամ
և զօրագլուխք յուսաբեկք իբրու վճա-
բեալ այնուհետև վասն քաղաքին, և ոչ
զքաղաքացիսն խմբեալ ինչ բաւական էին
ընդդէմ թշնամեացն՝ որ խառն առհասա-
րակ միջամուխ կային ընդ նոսա։

Ապա յայն աղէտ ամբաւ տարակուսա-
նաց քաղաքին, և վասնդ ևս մօտալուտ
առ դուրս հասեալ կայր Աքրագինայ.
ուստի և առհասարակ թէպէտ և գիտէին

իսկ քաջ զմիակ յոյս ակնկալութեան փրկութեան իւրեանց, ժառեցաւ և ոչ ոք անուանել զնա. զամօթի սատակապէս հարեալ էին ընդ անշնորհակալու կիրս իւրեանց, որով անմոռացան նոքա զԴիոնէն: Սակայն և 'ի վերջէ իբրև կարի նեղ հասանէր տագնապին, անդուստ 'ի նիզակակցաց անտի և յայրուձիոյն ձայն մի 'ի դուրս արձակեցաւ. ասէր կոչել դարձուցանել զԴիոնէն, և զՊեղոպոնէսացւոց հրաւէր կարդալ 'ի Լէոնտինացւոց անտի: Իբրև այնպէս հետ ընդ հետ լուր եղև ձայնին այնորիկ և մեծաձայն ևս հնչեցաւ, անդէն և Սիրակուսացիք սղաղակ բարձին առհասարակ խնդացեալք և յարտասուս հարեալք. ուխտիւք անձկային 'ի գալուստ առնն, ցանկային միւսանգամ տեսանել զկերպարանն. և 'ի յուշ ևս ածէին զքաջութիւն և զարութիւն ոգւոյ զառնն 'ի վտանգս անհնարինս. զի և ոչ անզարհուրելի միայն ինքնին գլխովին, այլ և քաջալերութեամբ ընդոյր առհասարակ՝ մարտ դնել կռուել քաջութեամբ ընդ թշնամիսն:

Ապա փութապէս զԱքքոնտիդէս և զՏելեսիդէս առեալ արձակեցին առ նա՝ զարս 'ի նիզակակցաց անտի, և հինգ ևս այլ այր ընդ Եղանիկոսի՝ այրընտիր յայրուձիոյն: Նոքա մարակ 'ի կուշտ երիվարին հատեալ զուսին 'ի շտապ տագնապի, եկեալ հասանէին առ Լէոնտինացիս 'ի կարճատեալ աւուրն: Անդ իջեալք յերիվարէն և առոտս անկեալ արտասուօք Դիոնէի, զոյց

տային նմա զաղէտիցն Սիրակուսացւոց։ Իսկ 'ի Լէոնտինացւոց անտի ընթացեալք 'ի վայրն, և բազումք ևս 'ի Պեղոպոննիսացւոց եկեալ կացեալ շուրջ զԴիոնիսիս, և տեսեալ զտաղնապ զոլորքաւոր սրանցն, խելամուտ լինէին իրացն նորութեան։

Ապա Դիոնիսի առեալ զնոսա վաղվաղակի ածէր յատեանն, և ընթացան փութապէս ժողովուրդք գունդագունդ. անդր մտեալք Աքքոնիսիդէս և Եղանիկոս՝ սղագունիւք 'ի ներքս բերին առեալն զամբաւ աղէտս զՍիրակուսացւոց, և թախանձ արկեալ ժողէին յեկաց անտի ձեպել ձեռն տալ նոցա, 'ի մոռացօնս դարձուցանել զթշնամանն՝ զոր թշնամանեցին զնոսա. քանզի և ինքեանք դառնագոյն ևս լուծին զվրէժն քան զպատուհասել նոցա ինքնին՝ որ թշնամանեցանն։

Իբրև նոքա վախճան արարին պաղատանացն, կայր այնպէս առհասարակ թատրոնն 'ի խոր լռութեան։ Ապա յոտն եկաց Դիոնիս. իբրև էառ 'ի խօսել, գերարտասրն գեղոյր սանձէր զձայն բարբառոյն. իսկ եկք զօրականին ափոփանս նմա մատուցեալ, և ինքնին կարեկից լինէին առն, մինչև վայրիկ մի ոգի առեալ Դիոնիսի, սկսաւ խօսել և ասէ. «Ո՞վ Լակեդեմոնացիք և դուք ինքնին նիզակակիցք, խմբեցի զձեզ աստանօր 'ի խորհուրդ վասն ձերոց իսկ անձանց. իսկ վասն իմ չէ արդեօք գեղեցիկ խորհել ինչ աւադիկ՝ 'ի կորնչել Սիրակուսացւոց։ Եւ թէ երբէք յաջողեա-

ցի ինձ ոչ՝ վրկել զնա, գնամ ես անդր արկանել թաղել զնա 'ի հրայրեացս և յաւերակս խոց հայրենեաց։ Այլ եթէ ձեզ կամք իցեն միաբանեցարուք ձեռն տալ անհանձարիցդ այդոցիկ Սիրակուսացւոց և հիքացեալոց, օ՞ն առեալ կանգնեցէք յարուցէք զդաստակերտդ ձեր՝ քաղաք Սիրակուսացւոց։ Ապա եթէ տակաւին սրբոմտեալ ձեր ընդ Սիրակուսացիս՝ զանց առնէք զդոքոք, սակայն և այնպէս վարձս զարժանին ընկալջիք դուք 'ի գից անտի զառաջին առաքինութեան ձերոյ և զառ ի խնամոցն ձերոց. յուշ ածեալ ձեր զԴիոնն, զի չէիք չեթող զձեզ 'ի չարչարանս ձեր առաջինս, և չէիք դարձեալ զքաղաքացիսն յաղէտս նոցա 'ի վերջինս,,։ Այն ինչ բանքն 'ի բերան նորա էին, յոտն կացին եկքն աղաղակ բարձեալ թախանձարկեալ, զի վաղվաղակի հասցեն 'ի Թիկունս առ նոսա. իսկ յայնժամ հրեշտակք Սիրակուսացւոց դիմեալք գիրկս ածէին և համբուրէին զնոսա, աղաչէին զդիս՝ բազում բարիս տալ շնորհել Դիոնեի, բազում՝ և եկացն այնոցիկ։ Իբրև ամբոխն հանդարտեցաւ, ապա հրաման տայր Դիոնն վաղվաղակի 'ի զէն դառնալ. և յետ ընթրեացն նովին զինուք 'ի նոյն վայր միահամուռ խմբել. եդ 'ի մտի զնոյն զայն գիշեր չու առնել խաղալ 'ի Թիկունս։

Իսկ անդ 'ի Սիրակուսա զօրագլուխք Դիոնիսեայ զեան մեծապէս հասուցեալ քաղաքին զտիւն ողջոյն՝, 'ի գալ գիշերոյն

տեղի եւ տուն 'ի գղեակն, նուաղունք ո-
մանք տապաստ արկեալ 'ի գնդէն նոցա։
Զայն իբրև տեսին հռետորքն Սիրակուսա-
ցւոց, ակն կալեալ հանդարտել այնուհե-
տև Թշնամեացն, խրախոյս առեալ ան-
դրէն հրապոյր 'ի նեղքս խառնէին քաղա-
քացեացն Թողուլ 'ի բաց զԴիոնն, և 'ի
գալուստ նորա հանդերձ եկօքն չառնուլ
ժողովել զնա, և ոչ իբրև հզօրագունից ո-
մանց տեղի նոցա տալ 'ի քաջութեան.
այլ ինքեանք զինքեանս ապրեցուցանել և
զհայրենիսն և զազատութիւնն։ Ուստի և
միւսանգամ առեալ արձակեցան հրեշ-
տակք առ Դիոնն յիշխանաց անտի խա-
փանել զգալուստ նորա. սակայն 'ի նոյն և
այլք դարձեալ առաքեցին առ նա յաս-
պետաց և յականաւորաց քաղաքին փու-
թացուցանել զուղին։ Եւ վասն այնորիկ
յուշիկ և տակաւ յառաջ խաղայր Դիոնն։
Եւ ապա 'ի խոր գիշերի՝ որք ատէինն
զԴիոնն գնացեալ կալան զդուրսն, իբրու
սպդելուլ խափանել զնա։

Բայց Նիւպիոս անդրէն միւսանգամ
առեալ խաղացուցանէր 'ի վայր 'ի գղե-
կէն զվարձկանս զօրականին բազմագոյն ևս
Թուով և զկորովիսն. և բնաւ իսկ քան-
դեալ տապալեալ զպատնէշն, ընԹանայր
ընդ քաղաքն և յապականութիւն կար-
գէր։ Եւ անդ էր տեսանել ոչ զարս միայն
գիտապաստ արկեալ, այլ և զկանանին և
զմանկտին. աւարին փոյԹ տակաւ էր նո-
ցա, և առհասարակ զամենայնն յաղարտ

վարէին։ Քանզի և Դիոնեսիոս ինքնին յուսահատ յամենայնէն, և դառնապէս յատելութիւն բերեալ առ Սիրակուսացիսն, զվաղափուլ բռնակալութիւնն՝ զի այսպէս ասել՝ խնդրէր յաւերական թաղել քաղաքին։ Ուստի և նորա զօրականք աճապարեալք կանուխ քան զզօրավիգն Դիոնէսի, աւերած արագավախճան փութացան հրայրեացս ածել քաղաքին. և զամբարս 'ի ձեռս առեալ հրձիգ եղեն 'ի մերձաւոր վայրսն, իսկ 'ի հեռաստանն յաղեղանց անտի հրընկէցք լինէին։ Յորմէ 'ի փախուստ Սիրակուսացւոցն խուճապեալ, որ 'ի ձեռս անկան ընդ փողոցսն՝ 'ի մահ վարեցան. իսկ որք 'ի տունս մտին, դարձեալ և անդուստ խուճապեալք արտաքս յերեսաց հրոյն, անդանօր և շատք յապարանից 'ի հուր դատեալք և 'ի վայր հոսեալք՝ անկանէին 'ի վերայ ցիրուցան խուճապելոցն։

Ապա յայն աղէտս ամբաւ տարակուսին հասարակ հաւանութեամբ առեալ բանային զգուրսն առաջի Դիոնէսի. իսկ նա անդուստ լուր առեալ զփակելոյ թշնամեացն 'ի դղեակն, ոչինչ տագնապաւ վարէր զզօրն։ Բայց 'ի լուսանալ առաւօտուն՝ եկեալ հասեալ նախ այրուձի զօրականին, պատմէին եթէ անդրէն 'ի ձեռս մատնեցաւ քաղաքն. ապա յանդիման եղեն նմա և այլ ևս հրեշտակք 'ի հակառակորդաց անտի նորա՝ աղաչէին փութալ ձեպել. իսկ 'ի սաստիկ ևս կրթել կրկին՝

յայնժամ և Հերակղիդէս ինքնին առեալ արձակէր զիւր եղբայրն. ապա և զԹէոդոտէս զիւր քեռին, աղաչէր աղերսէր փութալ 'ի Թիկունս. զի և չլինք ոք այնուհետև՝ ասէր՝ ախոյեան ընդդէմ Թշնամեացն, և ինքն վերաւոր կայ, և վայրիկ մի ևս սպառսպուռ քաղաքն 'ի հուր դատեսցի։ Եւ էր ինքն Դիոնն 'ի հասանել գուժին առ նա՝ հեռի 'ի դրաց անտի ասպարէզս վաթսուն. և պատմեալ զայն բօթ յունկն զօրականին Իւրոյ, խրախոյս տուեալ՝ ոչ յուշիկ այնուհետև, այլ 'ի խուճապ տագնապի առեալ ածէր զնոսա 'ի քաղաքն, մինչդեռ յուղղոջ ժամ 'ի ժամէ կուռ միմեանց զհետ հասանէին գուժաբերք փութացուցանել զնա։

Ապա այնպէս սքանչելի արագութեամբ և յառաջամիտ խորհրդով չու տուեալ եկաց զօրականին, գայր հասանէր՝ մոռանէր ընդ դրունսն յայն կողմն որ անուանեալ կոչի Եկատոմպեդոն. և փութապէս հատուած արձակէր 'ի վերայ Թշնամեացն զԹեԹևաղէն զօրականին 'ի խրախոյս քաջալերութեան Սիրակուսացւոյ։ Իսկ ինքն կարգ դասաւոր տուեալ սպառազինացն, և այլոցն առհասարակ որ 'ի քաղաքէն եկին խմբեցան ընդ նմա, կարգէր կազմէր խումբս և երկայնէր տարածէր 'ի Թևսն, և 'ի գունդս գունդս բաժանէր, զի այնպէս 'ի կողմանց կողմանց միանգամայն հորդան ահագին տայցէ։

Իբրև այնպէս կազմեցաւ պատրաստե-

ցաւ, և աղօթս և խնդրուածս առ դիան կարգեաց, ապա խաղայր շարժէր առհասարակ ընդ մէջ քաղաքին ընդդէմ գնդի թշնամեացն. և յայնժամ աղաղակ մեծապէս բարձեալ Սիրակուսացւոցն, խնդացեալք առհասարակ, և 'ի դռուին և 'ի դռչիւն խառն ընդ խնդրուածս և ընդ խրախոյս քաջալերութեան առն ընկերի իւրում, փրկիչ զԴիոնէն կարդային և աստուած, և զեկս զօրականին նորա՝ եղբարս իւրեանց և քաղաքակիցս: Բայց անդ և ոչ ոք այնպէս անձնասէր և խնամոտ կենացն, որ ոչ առաւել ևս փոյթ խնամոց 'ի դէմս բերէր 'ի ժամուն առ Դիոնէն ինքնին միայն՝ քան վասն այլոցն առհասարակ. այն ինչ նա այնպէս յառաջագէմ նահատակ խաղայր դիմագրաւ ընդ ապաժոյժ ընդ ապաւառ արեանցն և ընդ ահագին հրայրեացսն, և 'ի բազմակոյտ անկելոց դիականցն ընդ երեսս հրապարակաց:

Բայց և թշնամիք անդուստ արհաւիրս արկանէին, դազանաբար մրմռեալք և կարդեալք ճակատեալք ընդ երկայնութիւն շերտափակին, և անմուտ և դժուարամատոյց ևս գործէին զվայրն: Բայց որ առաւել սրտաթափ զզօրականն առնէր Դիոնէի, և որ մեծապէս խոչ ընդ ոտն նոցա, տագնապ հրոյն գլխովին. զի յայնժամ առհասարակ շուրջանակի նշոյլք ահագինք հատեալ բոցոյն՝ որ զքաղաքն ծախէր լափէր, համայն և այնպէս անցեալք զհուրն 'ի վերայ աւերակացն, և ընդ մէջ խանձո-

զայն հոսելոց ընթացեալ սաստիկ վտան-
գաւ, և ընդ մրրկեալ փոշին յառաջամուխք,
համագունդ այնպէս միաբան ոչ խանգա-
րեցին զկարգն։ Իբրև 'ի թշնամիս անդր ե-
կին խառնեցան, անդանօր նուազունք ընդ
սակաւուց առ անձկութեան վայրացն և
անհարթութեան 'ի վեգ եկեալ կռուէին։
Մինչև խրախոյս առհասարակ ձայնիւ մե-
ծաւ Սիրակուսացւոցն բարձեալ, 'ի վերջէ
ապա նկուն եղեալ պարտեցան Նիւպ-
սեանք, այլ շատք 'ի նոցանէն փախստեայք
ապրեալք 'ի դղեակ անդր մերձաւոր. իսկ
որք արտաքոյ վարատեցան, 'ի սուր սու-
սերի մաշեցան եկաց զօրականին՝ 'ի հե-
տամուտ լինել նոցա։ Բայց 'ի ժամուն
բերմանէ ոչինչ կարացին նոքա վայելեալք
ընդ յաղթութիւնն, խնդալ ցնծալ և մի-
մեանց գիրկս ածել՝ որպէս և բնաւորե-
ցանն յետ գեղեցիկ նահատակութեանցն.
քանզի տագնապաւ դարձան յայնժամ
Սիրակուսացիք 'ի տունս իւրեանց, և հա-
զիւ ուրեմն վաստակեալք զբոցն շիջուցա-
նէին զգիշերն ողջոյն։

Իբրև այգն զառաւօտն մերկացաւ, հռե-
տորք խուժանին անձամբ զանձինս դա-
տապարտ արարեալ, փախստեայ գնացին.
և իշխեաց և ոչ ոք 'ի նոցանէն դադարել
անդէն՝ բայց 'ի Հերակղիդեայ և 'ի Թէո-
դոտեայ. սոքա եկեալ առ Դիոնն անձ-
նատուր լինէին, խոստովանեալք զանիրա-
ւութեան զգործն՝ մաղթէին գթալ 'ի նո-
սա, զոր ոչն ցուցին նոքա առ նա։ Պարտ

և արժան է՝ ասէին՝ Դիոնէսի՝ այն որ յա-
մենայն իսկ յառաքինութիւնս վեհագոյն
է և անզուգական, վեհ և 'ի յաղթութեան
բարկութեանն կայցէ քան զնոսա՝ որ այն-
պէս անշնորհակալու կիրս յանձին բերեալ
ժանտացան. և զարդիս խոնարհին տեսի
տան նմա յայն ինչ՝ յորում յառաջագոյն
գրգռեցան ընդ նմա, յաղթահարեալք
յառաքինութենէն նորա։

Մինչդեռ Հերակղիդէս օրինակ զայս
մաղթէր, անդուստ բարեկամք Դիոնէսի
պնդէին մի խնայել արանցն չարաց և յա-
չաղկոտաց, և զՀերակղիդէս ինքնին 'ի
ձեռս տալ զօրականին. և բնաջինջ 'ի քա-
ղաքէն զմարդահաճութիւն խլել զխազ-
մարար խուժանին, ախտ մոլեկան ոչինչ
պակաս քան զբռնաւորութիւնն ինքնին
գլխովին։ Բայց Դիոնէսի հանդարտեալ
զնոսա, ասէր՝ եթէ հրահանգք վարժից
այլոցն զօրավարաց բաղում ինչ կրթեալ
են 'ի զէնս և 'ի գոռն, իսկ ինքն հարուստ
ժամանակ վարժեցաւ յԱկադեմիա վեհա-
գոյն լինել բարկութեան կրիցն և նախան-
ձուն և յամառութեան. և ոչ 'ի գութ
մարդասիրութեան միայն առ բարեկամս
և առ առաքինի մարդիկն, այլ և 'ի թշնա-
մանս ևս անձինն գիւրամոքելի լինել և
հեզ և հանդարտ առ ինքնակարան. և
խնդրէ ևս ինքն վեհագոյն Հերակղիդեայ
լինել՝ քան 'ի զօրութեան և 'ի հանճարն՝
առաւել ևս 'ի հեզութեան և յարդարու-
թեան։ Քանզի և լաւութիւնն ինքնին

յայսոսիկ անշուշտ հաստատեալ կայ. իսկ 'ի գեղեցիկ նահատակութիւնս մարտից՝ թէպէտ և ոք 'ի մարդկանէ չգուցէ, սակայն և բախտն գլխովին բաժանորդ միջամուխ է։ Ապա եթէ Հերակղիդէս առ նախանձուն ուխտագրուժ և չար է, չէ՛ պարտ և Դիոնէի առ բարկութեանն զառաքինութիւնն աղարտել. քանզի թէպէտ և օրէնք սահմանեն զվրէժինդրութիւն զրկանացն իբրև արդար առաւել՝ քան զնախ զրկելն, սակայն և բնաւորեցաւ դա 'ի նմին տկարութենէ։ Եւ ասէր ևս Դիոնէ, չէ՛ իսկ չարութիւն մարդոյ այնպէս անագորոյն և անընդել, զի և (թէպէտ և դժուարին արդեօք) ոչինչ փոխեսցի նա 'ի շնորհաց անտի՝ տեղի տուեալ ստէպ ստէպ երախտաւորացն։ Զփաստ զայս յառաջ բերեալ յայնժամ Դիոնէի, արձակեաց զՀերակղի դէս, և զոր ընդ նմա։

Եւ յետ այսորիկ դարձաւ նա 'ի պատել փակել շուրջանակի զդղեակն. և հրաման տայր Սիրակուսացւոց, զի այր այր 'ի նոցանէն շերտ մի հաստաբուն կըտրեալ ածցէ մօտ անդր. ապա 'ի գիշերին՝ յորժամ Սիրակուսացիք 'ի քուն կային, նա 'ի գործ պարապեցուցեալ զեկս զօրականին, շերտափակ պատէր զակառն զանխուլ յամենեցուն. որպէս զի և 'ի գալ աւուրն հիացեալ զարմացան առհասարակ և քաղաքացիք և թշնամիք ընդ արագութիւն գործոյն։ Ապա և թաղումն տուեալ անկելոց Սիրակուսացւոց, և յաղատու-

թիւն արձակեալ զկալեալսն՝ ոչինչ պակաս քան զերկու հազար, ատեան գումարէր։ Անդ յառաջ մատուցեալ Հերակլիդէս խորհուրդ տայր կարգել զԴիոնն զօրավար ինքնիշխան ընդ ծով և ընդ ցամաք. իբրև հաւանեցան արք երևելիք, և փութացուցանէին ևս զկատարումն խորհրդոյն, անդուստ խուժան նաւազին և արուեստաւորաց ամբոխեալ խոժոռեցան, զի այնպէս սոսկացաւ Հերակլիդէս 'ի նաւակալ իշխանութենէն. և ասէին՝ թէպէտ և յայլ ինչ իրս յառաջագէմ ոչ ի-ցէ այրն, սակայն և յամենայնի ժողովրդասէր առաւել է դա քան զԴիոնն և հպատակ խուժանին։ Ապա հաւանեցաւ Դիոնն, և զնոյն իշխանութիւն դարձուցանէր առ Հերակլիդէս։ Իսկ յետ այնորիկ իբրև ընդդէմ դարձաւ նոցա 'ի բաշխ գետնոյն և 'ի տանցն՝ զոր և խնդրէին իսկ նոքա, և ջրեաց ևս զյառաջագոյն կարգեալ սահմանն վասն այնորիկ, խոժոռեցոյց զնոսա և 'ի խոր խոցեաց։

Այր աղագաւ և Հերակլիդէս միւսանգամ 'ի պատճառաց ասի, մինչ էր ինքն 'ի Մեսինա, գրգայր և շնթէր զօրականին և նաւազին որ անդր նաւեցին ընդ նմա. և գրգեաց վառեաց զնոսա ընդդէմ Դիոնի՝ իբրու որ 'ի բռնակալութիւն անդր կրթեսցի, միանգամայն և գաղտաբար բանագնաց լինէր ընդ Դիոնիսեայ 'ի ձեռն Փարակեայ Սպարտացւոյ։ Իբրև կասկածեցան վասն այնորիկ արք աւագք Սիրա-

կուսացւոց, յուզեցաւ աղմուկ 'ի բանակին. և յայնմանէ պակասեաց կերակուր և սովեցան Սիրակուսացիք, և 'ի վարանս ամբաւ տարակուսի պաշարեցաւ Դիոնն. ուստի և բարեկամքն նախատէին զնա, զի ինքնին հակառակ անձին իւրոյ առեալ բարձրացոյց զՀերակղիդէս զայր վայրագ և զյաչաղկոտ և զխեղաթիւր։

Իսկ յայնժամ Փարակէս մօտ 'ի Նէապօլիս բանակ հարեալ յԱկրագանդինա, թէպէտ և արտաքս խաղացոյց Դիոնն զՍիրակուսացիս, այլ ձգէր յերկարէր 'ի ժամանակ բարեպատեհ զկռիւ մարտին։ Իբրև բոլոք յայնժամ բառնայր Հերակղիդէս և նաւաստիք ընդ նմա, եթէ չեն կամք Դիոնի սահմանաւոր մարտիւ վախճան առնել պատերազմին՝ զի հանապազորդ կայցէ զօրավար, բռնագատեալ մղեաց մարտ՝ յորում և պարտեցաւ։ Բայց քանզի ոչինչ մեծապէս էր հարուածն, և զօրականք՝ քան յայլ ինչ պատճառաց՝ առաւել ևս յանձանց և 'ի հակառակութեանն շփոթեալք խառնակեցան, նա անդրէն հանդերձեցաւ կազմեցաւ 'ի կռիւն, և կարգ տայր զօրականին և քաջալերէր խրախուսէր։

Իբրև առաջին պահ էր գիշերոյն, լուր հասանէր զի Հերակղիդէս չու տուեալ նաւահանգիստին, դէմ եդեալ նաւէ 'ի Սիրակուսա. 'ի մոի եդեալ է հասանել ունել զքաղաքն և 'ի բաց զնա մերժել հանդերձ զօրուն։ Ապա Դիոնի առեալ

ընդ իւր վաղվաղակի զընտիր ընտիր զքա-
ջաց և զկորովեաց զօրականին, ձիաւորեալ
ողջոյն զցայգն, և զերրորդ ժամու աւուրն
եկեալ հասանէր առաջի գրաց քաղաքին,
հատեալ ասպարէզս եօթն հարիւր։ Իսկ
Հերակղիդէս Թէպէտ և Ճեպ սատակ եւ
նաւացն, վերջացեալ գտաւ. ուստի և
նաւեալ յետս, և աստանդական Թափա-
ռէր. կէտ նպատակի ունէր և ոչ մի, բայց
ըստ գիպաց պատահեցաւ Գեսիւղեայ
Սպարտացւոյ, որ ասէր նաւագնաց 'ի Լա-
կեդեմոնիոյ գնալ 'ի Սիկիլիա՝ լինել ա-
ռաջնորդ մարտին, որպէս անդ Էրբեմն
Գիւլիպպոս։

Մատգիւրագոյնս ժողովեալ զնա Հե-
րակղիդէս, և առեալ կապեաց յինքն
զայրն՝ զի այսպէս ասել՝ Իբրև զյուռու-
Թուլունս իմն ընդդէմ Դիոնէի, և այն-
պէս շքով և պանծանօք ցուցանէր զայրն
առաջի նիզակակցացն. և առեալ պատուի-
րակ առաքէր 'ի Սիրակուսա, Թախանձէր
զքաղաքացիսն ընդունել 'ի զօրավար զայրն
Սպարտացի։ Եւ պատասխանի Դիոնէ և
ասէ, են իսկ բաղում զօրավարք Սիրա-
կուսացւոց. և եԹէ Սպարտացւոյ առն
պէտք իցեն, ինքնին իսկ է գլխովին այրն՝
գրեալ 'ի քաղաքացի Սպարտոյ. և այն-
պէս ապա յուսահատ ամենևին յիշևա-
նուԹենէն լինէր Գեսիւղոս. սակայն և
երԹեալ առ Դիոնէ 'ի հաշտ զՀերակղի-
դէս ածէր ընդ նմա. և վստահ ևս առնէր
զնա 'ի դիմաց Հերակղիդեայ ծանր ծանր

երդմամբք և ուխտիւք. ձեռն յանձին հա-
րեալ երդնոյր և ինքնին Գեսիւղոս՝ վերէժ-
խընդիր լինել Դիոնէի և պատուհասել
զՀերակղիդէս 'ի խեռանալ նորա։

Իսկ յետ այսորիկ Սիրակուսացիք ա-
ռեալ լուծին զնաւաց բանակն. քանզի և
չէին իսկ պէտք այնուհետև, և ծախ ևս
մեծապէս էր նաւորդացն, դարձեալ և
զօրավարացն պատճառք մեծամեծք ամ-
բոխից, և պարապեցան միայն 'ի պաշա-
րումն գղեկին. քանզի և շերտաւորս ան-
դրէն փակեալ իսկ էին նոքա շուրջանակի։
Ապա յայնժամ օգնականութիւն և ո՛չ
ուստեք հասեալ պաշարելոցն, և ամբարն
ևս պակասեալ նոցա, և աղմուկ ևս յու-
զեալ ստահակութեամբ վարձկանաց զօ-
րականին, յայնժամ յուսակտուր յելից
բարեաց Դիոնիսեայ որդին առեալ դա-
շինս կռէր ընդ Դիոնէի. և տայր նմա 'ի
ձեռս զգղեակն հանդերձ զինուք և ամե-
նայն պատրաստութեամբ. և ինքն առեալ
ընդ իւր զմայրն և զքոյրսն, և լցեալ եռա-
թիս նաւաց հինգ, գէմ եդեալ գնայր
առ հայր իւր, յանդորրու նմա զուղին
կացուցեալ Դիոնէի։ Իսկ յայնժամ 'ի
Սիրակուսացւոց և ոչ ոք հանդարտեցաւ
ո՛չ կալ 'ի զնին չուոյն. և թէ ոք երբէք
մերձ չեկաց, կարդային զնոսա բողոք բար-
ձեալ՝ զի ոչ գտան յայնժամ գալ տեսա-
նել զօրն զայն և զարևուն զայն ծագել 'ի
վերայ ազատացն Սիրակուսացւոց։ Քանզի
եթէ և մինչև ցայսօր ժամանակի յօրինակս

երևելիս փոփոխութեանց բախտին՝ վեհագոյն կայ և ականաւոր գէպ փախըստեանն Դիոնիսեայ, քանիցն ապա կարծեացեալ գու զժամուն զայնորիկ զինդութիւնն և զմեծապէս խորհուրդս մնաց նոցա՝ որ գուշնաքէիւք տապալեալ քանդեցին զհաստատարուստն զայն քան զամենայն բռնաւորութիւն։

Եւ այսպէս ապա 'ի չու Ապողոկրատէս անկեալ, և Դիոնն 'ի գղեակ անդր ելեալ, ոչինչ հանդարտեցին յայնժամ կանայք մնալ մտիցն նորա, ընդ առաջ ելեալ գայլին նմա առ դուրսն։ Անդ Արիստոմաքէ ածէր բերէր ընդ իւր զորդին Դիոնի, և Արետէ զհետ նորա գայր գերարտօսրալից և 'ի վերանս տագնապի՝ զոր ողջոյն տուեալ խոսեացի ընդ առն իւրում նա՝ որ զուգեցաւ ընդ այլում։ Ապա Դիոնն առաջին գիրկս ածեալ քեռնն և ապա մանկանն, յառաջ զԱրետէ մատուցեալ նմա Արիստոմաքէ, ասէր այսպէս. " Մեք ինքնին ոմ Դիոնն՝ 'ի քում վտարանդութեանդ հիքացեալ չուառացաք. բայց 'ի գալուստ քո և 'ի յաղթութեան քում, տխրութիւն զամենայն բարձեր 'ի մէնջ առհասարակ, բայց 'ի սմանէ միայնոյ, զոր ես հիքացեալ՝ տեսի 'ի բռնադատ կամաց առ քոյին կենդանութեամբ զուգեալ ընդ այլում։ Արդ գեղեցիկ բախտին տիպացուցեալ զքեզ 'ի մեր վերայ, զինչ արդեօք իցեն խորհուրդք կամաց քոց առ սա ինքն վասն բռնադատ կրիցն։ Արդեօք իբրև քեռւոյ ողջոյն տա-

ցէ դա քեզ, եթէ և դարձեալ իբրև առն։։
Զայս ասաց Արիստոտելէ. իսկ Դիոնն
յարուցանս ցնդեալ խանդակաթ գիրկս
արկանէր լծակցին. և առեալ 'ի ձեռս
տայր նորա զորդեակն, և հրաման տայր
նմա գնալ կալ 'ի տուն ուր բնակէր նա,
քանզի և զդղեակն գլխովին ետ նա 'ի ձեռս
Սիրակուսացւոցն։

Իբրև այս ամենայն այսպէս վայելուչ
կատարեցաւ, ոչինչ կամեցաւ նա վայելել
'ի վայելս առաջակայ բարօրութեանցն,
մինչև շնորհս մեծապէս կալեալ բարեկա-
մացն, և ձրիւք զնիզակակիցսն ընծայեալ
և առաւել ևս շքով բարեգործեալ ընտա-
նեացն 'ի քաղաքին և եկաց օտարաց, 'ի
վեր քան զկար անձին առաքինացեալ առ
նոսա 'ի լիութեան մասին. իսկ առ իւր
անձն դուզնաքեաց և պարկեշտագոյնս շա-
տանայր, բաւական անձին համարեալ ըզ-
հասարակն և զանպաճոյճն։ Այր աղքատ
և աքանչացաւ նա առհասարակ, զի և ոչ
Սիկիլիա միայն յայնժամ և Կարքեդոն,
այլ և ողջոյն Եւրոպա իբրև յակաճիռս ակն-
կառոյց էր 'ի բարեբաստութիւն անդր
առն. և մարդիկ ժամանակին ոչինչ այլ
համարեցան մեծ ևս քան զնա. և թուէր
իմն՝ այլուստ ումեք երբէք 'ի զօրավարաց
չունել այնչափ արութիւն քաջութեան և
գեղեցիկ բախտ։

Հաստատն և այնպէս պարկեշտութիւն
մեծապէս 'ի դէմս բերէր այրն 'ի զգեստս և
'ի դասս ծառայից և 'ի սեղանին. իբրու

որ ընդ Պղատոնին անշուշտ դեգերեալ կայր անդանօր յԱկադեմիա, և ոչ 'ի մէջ զօրագլխացն Եկաց և 'ի մէջ վարձկանացն, որք 'ի դիւր քրտանց և յեղս վտանգաց բը-նաւորեցան նոքա զեղխել հանապազօր 'ի շուայտութիւնս և 'ի սիոփութիւնս։ Ուստի և անդուստ Պղատոն գրէր զայս առ նա, եթէ առհասարակ սիեզերք 'ի նա միայն ակնկառոյց են։ Իսկ ինքն Դիոնն էր իսկ ակնկառոյց յայն վայր միոյ քաղաքին՝ յԱկադեմիա, և գիտէր նա իւր և հանդի-սատեսս և դատաւորս ոչ զայլ ոք, բայց զորս կայինն յԱկադեմիա. որք և ոչ 'ի նահա-տակութիւնս ինչ հրաշացեալ կային Դիոն-նի, և ոչ յարութիւն քաջութեանն, և ոչ 'ի յաղթութեան զօրութեանն, այլ դէտ-ակն միայն կալեալ զննէին, եթէ 'ի յաջո-ղակ բախտին զի՞նչ նա վայելուչս առաքի-նասցի և համեստագոյնս, և զիարդ նա յաւագամեծար 'ի գործսն՝ 'ի չափու յայն-ժամ կալցի զանձն։

Արդ՝ նա ինքն հաստատուն ամենեալ կայր՝ մի՛ ինչ սանձել մի ինչ կարձել զտրն-կակից պերճութիւնն 'ի գնացսն, և ոչ զիսրը-թին զիւր քաղաքավարել առ խուժանին. թէպէտ և իրաց ժամանակին քաղցրամոք բարոյից պէտք էին. և Պղատոն ինքնին՝ որ-պէս ասացաք՝ առեալ յանդիմանէր զնա. և գրէր ևս առ նա՝ եթէ անձնահաճու-թիւնն ինքնին բնակակից միայնութեան է։ Սակայն քաջայայտ իսկ էր նորա անդատին բոյս բարուց անպատկանաւոր 'ի յամ-

քել. և խնդրէր ևս նա սանձ արկանել Սի-
բակուսացւոց, որ գրդեալք և գգուեալք
յոյժ էին։ Քանզի և Հերակղիդէս միւսան-
գամ յողն կացեալ, առաջին իբրև յա-
տեան կոչեցաւ, հրաժարեցաւ. ասէր՝ ե-
թէ 'ի սոսկականաց է, և եկեղեցասցի նա
յաշխարհօրէն ժողովին ընդ այլոց քաղա-
քացեաց։ Ապա և ամբաստան զԴիոնէնն
կայր, զի ոչ քանդեաց տապալեաց նա
զակառն և ոչ դարձեալ թոյլ ետ ժողո-
վրդեանն յարձակելոյ հարկանել վանել
զգերեզմանն Դիոնիսեայ, և առնուլ գէշ
արկանել զդիակն նորա. և զի՝ ած եբեր
ևս նա 'ի Կորնթոսէ արս խորհրդականս
իւր և բարձակից իշխանս, սրոնեալ և զչա-
րեալ ընդ քաղաքացիսն։ Եւ արդեօք կո-
չեալ իսկ էր նա 'ի Կորնթացւոց անտի.
ակն ունէր հեշտին ևս նոքօք հանդերձ
կարգել յօրինել զքաղաքաւորութիւնն
ըստ խորհրդոց իւրոց, և խորհեալ իսկ էր
կարձել զբուն ռամկապետութիւնն, իբ-
րու այն որ ոչ կարգ ինչ քաղաքական ի-
ցէ, այլ ըստ Պղատոնի առասացութեանն՝ վա-
ճառանոց ամենայն ազգի քաղաքականուէ։

Եւ խնդրէր նա առնուլ հաստատել
կարգ լակոնացի և կրետացի, և բարե-
խառնութիւն գործել զռամկին և զթա-
գաւորի, և զաւագպետութիւնն ոստիկան
'ի վերայ կացուցանել և իշխան իրացն կա-
ցուցանել։ Քանզի և տեսանէր իսկ նա ըզ-
կարգ առաջնորդութեան զԿորնթացւոցն։
Իբրու առաւել աւագպետական, և ոչ

բազում ինչ 'ի հասարակացն գործէին նոքա առ խուժանին։

Բայց քանզի խիթայր Դիոնէս, եթէ մանաւոր Հերակղիդէս ընդդէմ դարձցի խորհրդոց նորա, և գիտէր ևս զնա խռովեցուցիչ այր և յեղյեղուկ և խաղմարար, ձեռն ապա յայնժամ տայր հաւանութեան արանցն՝ որ 'ի վաղնջուց իսկ էին ցանկացեալ զարևն հատանել զառնն և արգելեալ էին 'ի նմանէ. ուստի և նոքա մտեալ 'ի տուն Հերակղիդեայ՝ սպանին զայրն։ Բայց ընդ մահ առնն կարի յոյժ 'ի խոր խոցեցան Սիրակուսացիք։ Ամլ սակայն և յուղարկաւորութիւն շքեղ հանդերձեալ նմա Դիոնէսի, և ինքնին ևս 'ի դիահանան հեռեալ հանդերձ զօրականաք, ապա և հրապարակախօս ևս առ ժողովուրդն եղեալ, թողութիւն առնէին նմա. խելամուտ եղեն՝ եթէ անհնարին իրք իցեն հանդարտել խաղաղել զալէկոծն քաղաք, ցորվայր հոմիշխան կայցեն Հերակղիդէս և Դիոնէս։

Իսկ էր յայնժամ Դիոնէսի ընկեր Աթենացի այր՝ Կալիպպոս անուն. որ ծանօթ և մտերիմ լեալ էր նմա՝ որպէս ասէ Պղատոն՝ ոչ 'ի դպրութեանց ինչ վարժից, այլ զի 'ի նեբքոյ ձեռին նորա նուիրեալ իսկ էր Դիոնէս 'ի խորհուրդն նուիրականն, դարձեալ և 'ի պատճառս միջամուխ կենակից քաղաքավարութեանն։ Սա այս այր բաժանորդ 'ի զինուորութեան մրցանան և շուք մեծապէս տարեալ

էր. որպէս զի և 'ի միասին ընդ Դիոնէի ինքն առաջին յամենայն նիզակակիցսն ե-մուտ 'ի Սիրակուսա պսակ 'ի գլուխ. քան-զի և եկաց իսկ նա 'ի շահատակութիւնսն երևելի և ականաւոր։

Այլ երբև Դիոնէի կորեան 'ի պատե-րազմի աւագ և լաւ որեար 'ի բարեկամացն նորա, և մեռեալ իսկ էր և Հերակղիդէս, և յառաջնորդէ անբաժ տեսանէր նա զժո-ղովուրդ Սիրակուսացւոց. և զի՝ և զօրա-կանք ևս Դիոնէի 'ի նա յանկչէին, յայն-ժամ ապա յեղեռն մեծ անկղիտացեալ այլն առաւել քան զամենայն մարդ և ակնկալեալ անշուշտ զՍիկիլիա առնուլ գրաւել 'ի մրցանակ հիւրասպանութեանն, և որպէս կէսք ասեն՝ առեալ նա և տա-զանդս քսան 'ի Թշնամեաց անտի 'ի վարձ սպանութեանն, երթեալ սադրէր հրա-պուրէր յեկաց անտի զօրականին ընդդէմ Դիոնէի, բուռն զդաւանաց հարեալ՝ յոյժ խորամանկ և նենգապատիր չարութեամբ։ Քանզի ցանգ լրտեսաբար զրոյցս առ Դիոնէ բերեալ զզօրականին ընդդէմ նորա՝ կամ Ճշմարիտ կամ ստայօդս, այնչափ ինն յօ-բացաւ առ Դիոնէի 'ի հաւատարմութեան իւրում. որպէս զի և թոյլ ետ առնն գաղտ 'ի ծածուկ խօսել, և արձակ համարձակ չարախօս ևս զԴիոնէն լինել առ 'ի հրա-մանէն նորա՝ ընդ ում ումք և կամէր, զի մի ոք ամենևին 'ի գաղտամետ Թշնամեաց և յատելեացն Դիոնէի 'ի ծածուկ կացցէ։ Ոյր աղագաւ և Կալիպպոս այնուհետև

համարձակ գտանէր զարս չարս և զնենգամիտս, և ձգէր յանկուցանէր յիւր դաւանանն. իսկ թէ երբէք ոք հերքեալ զհրապոյրս զառնն՝ երթայր և գուշակ լինէր Դիոնիսի, ոչինչ ամբոխեալ արանէր Դիոնիս. խնդայր 'ի նեղքոյ՝ զի զհրամայեալն զիւր 'ի գլուխս տանի Կալիպպոս։

Արդ իբրև նիւթեալ լարեցան գլխովին հաղբքն, խօլական ինն առ աչօք մեծ և ահագին երևուութացաւ Դիոնիսի։ Քանզի էր երբեմն զի ընդ երեկս նստեալ նա 'ի գաւթի տան իւրոյ միայնակ առանձինն և մտայոյզ, անգուստ յանկարծակի շառաչիւն լուեալ 'ի միւս կողմանէ գաւթին, և զաչսն դարձուցեալ յայն կողմն՝ զի և չէր իսկ օրն բնաւ նսեմացեալ, տեսանէր կին յաղթահասակ հարստի, 'ի զգեստն և 'ի դէմս երեսացն ոչինչ աննման 'ի Կատաղեաց անտի Ողբերգակացն. առեալ աւել ածէր տանն։ Պակեաւ Դիոնիս և զահի յոյժ հարեալ՝ առաքէր կոչէր զբարեկամսն, և պատմէր նոցա զտեսիլն. և աղաչէր ևս զնոսա կալ մնալ և օթեալ առ իւր, զի և զարհուրեալ յոյժ էր նա և այլ յայլմէ եղեալ էր. և երկնչէր զանգիտէր՝ եթէ 'ի միայնութեան իւրում՝ դարձեալ նոյն խօլական երևուութացի նմա. բայց նա կրկնեաց ոչ։

Իսկ յետ աւուրց սակաւուց դէպ եղև զի որդի նորա այն ինչ պատանի, առ թաղծութեան ինչ կրից և բարկութեան 'ի գուշնաքեայ և յանտիական պատճառաց,

գլուխ 'ի վայր զանձն հոսեաց 'ի յարկէն և բարձաւ մեռեալ։ Ապա յայն աղէտն Դիոնէի՝ առաւել ևս Կալիպպոս թեւակոխեաց 'ի դաւն. և հուչակ եհար 'ի Սիրակուսացիս, եթէ անզաւակ այնուհետև կացեալ Դիոնէի՝ 'ի մոլ հաստատեալ է կոչել զԱպողոկրատէս զորդի Դիոնիսեայ և պայազատ կարգել զնա. քանզի էր իսկ նա յեղբօրէ կնոջ իւրոյ և 'ի դստերէ քեռն իւրոյ։

Ապա այնուհետև խնթացեալ զանգիտեալ էր Դիոնէ, դարձեալ և կանանին վասն դաւանացն, զի և 'ի կողմանց կողմանց ցուցակութիւնք գային նոցա. բայց Դիոնէ՝ որպէս երևի՝ տագնապեալ և 'ի խոր խոցեալ վասն իրացն Հերակղիդեայ, և զեղջ և ապաշաւ եղեալ, և հանդարտեալ ոչ՝ վասն սպանութեանն, իբրու ընդ կեղտ անուն քաղաքավարութեան իւրոյ և նահատակութեանցն իւրոց, ասէր մոգիւրագոյնս մեռանել բազում անգամ, և խողխողել այնուհետև յումմէ և ի՝ցէ. եթէ այնպէս անձնապահ կեանս վարել նմա պարտ ի՝ցէ ոչ 'ի թշնամեաց միայն, այլ և 'ի բարեկամաց ինքնին գլխովին։

Եւ իբրև ետես Կալիպպոս, զի փութոյ պնդութեամբ այնուհետև 'ի քնին զերան առնոյր կանանին, զահի հարեալ չոքաւ առ նոսա և ժիտէր և յուրաստ լինէր, և արտասուէր, և զանձն 'ի ներքս մատուցանէր տալ նոցա հաւատ զոր և կամեսցին նոքա։ Նոքա խնդրեցին կռել նմա զմեծ

զերդումն, զոր և կատարեն նոքա օրինակ զայս։ Որ միանգամ հաւատ զայն ուխտել հանդերձեալ է, իջեալ 'ի մեհեանն Ցեսմոփորուհեացն 4, զկնի զոհից ինչ՝ արկեալ զանձամբ ծիրանի զդիցուհւոյն, և կալեալ ջահ մի վառեալ, այնպէս երդնու։ Ապա զայս ամենայն կատարեալ Կալիպպոս և երդմամբ ջափ յուրատ լեալ, այնպէս իմն ապա խաղ արար նա զդիցուհեօքն, զի և դէտաակն կալեալ 'ի տօն դիցուհւոյն՝ յոր երդուաւն, 'ի գլուխ հան նա զսպանուԹիւնն 'ի տօնան անդ օրիորդացն. ոչինչ Թերևս աձեցուցեալ զեղեռնն յայնպիսումն աւուր դիցուհւոյն, քանզի և մեծապէս ամբարշտուԹի էր արդեօք առ դիցուհին, եԹէ և յայլ ժամանակ սպանանէր զնուիրեալն Ներ, այրն՝ որ նուիրեացն զնա։

Աւրդ յայնժամ յոքնաԹիւ յոյժ բազմացեալ սատարք անօրէնուԹեանն այնորիկ, և բազմեալ Դիոնն ընդ բարեկամացն 'ի սենեակ մի բաղմակմբեան, կէսք 'ի դաւաճանացն կարգեցան կացին արտաքոյ շուրջանակի զտամբն, և կէսք առաջի դրացն և պատուհանացն։ Իսկ որք պատրաստեցանն մնալ 'ի նա ձեռն՝ էին 'ի ԶակիւնԹացւոց անտի, և մոին նոքա 'ի ներքս անզէնք բաձկոնաւ միայն. իսկ յայնժամ որ արտաքոյ կային՝ առին փակեցին զդուրան, և ձգէին և ունէին պնդապէս զփեղկան. բայց որք մոինն՝ դիմեալք 'ի վերայ Դիոնի, գուն գործէին հեզձամղձուկ առնել զայրն և խեղդել. իբրև ոչ կարացին, խլն-

դրէին սուր։ Այլ իշխեաց և ոչ ոք բանալ զդուրսն, քանզի բազումք էին ընդ Դիովնի 'ի սենեկի անդ, Թէպէտ և համարձակեցաւ և ոչ ոք ձեռն տալ նմա. այր այր խնդրէր զանձն ապրեցուցանել 'ի սպանումեանն Դիոնէի։ Ապա հարուստ մի դեղերեալ, յայնժամ Լիւկոնէն Սիրակուսացի դաչոյն մի կարկառէր ընդ պատուհանն, տայր միում 'ի Զակինթացւոց անտի. և այնպէս իբրև սպանդ փողոտեցին անդ զԴիոնէն, որ այնպէս հարուստ ժամ ընդարմացեալ պակուցեալ կայր։ Առին ապա վաղվաղակի արկին 'ի բանտ զքոյր նորա և զկին նորա յոլ. և դէպ եղև հիւքացելոյ կնոջն անդէն 'ի բանտին այնպէս հիւքաբար ծնանել, և ծնաւ արու. զոր և քաջալերեալ սնուցանէին զնա կանայք՝ ողոքանօք յանկուցեալք զպահապանն. զի և Կալիպպոս յայնժամ պատաղէալ յոյժ էր։

Քանզի անդէն յետ սպանումեանն Դիովնի մեծապէս փառաւորեալ Կալիպպոս ըբռամբ ունէր զՍիրակուսա, և գրեաց ևս նա վասն այնորիկ 'ի քաղաքն անդր Աթենացւոց. յորմէ՝ և յետ ասառուածոց՝ 'ի նմանէն առաւել պարտ էր ակնածել նմա և զանգիտել, այնպիսի մեծեղեռն ինչասու պարտ եղեալ։ Բայց թուի արդարանալ բանին՝ որ ասէ, եթէ այն քաղաք բերէ մարդիկ՝ որ թէ առաքինութեամբ լաւացեալք լցեն, ամենաբարիք են. իսկ թէ յոռութեամբ վատթարեալք լցեն՝ ամենաչարք են. զոր օրինակ և աշխարհ նոցա

գլխովին մեղր բերէ աղնիւ յոյժ, միանգամայն և մոլեխինդ չարաթոյն յոյժ։

Ա՛ՅԼ յետ այնորիկ ոչինչ երկար ժամանակ եկաց Կալիպպոս 'ի բամբասանս բահտին և աստուածոյն՝ իբրու որք անհոգացեալ իմն իցեն նոքա, եթէ մարդ այնպէս ամբարշտութեամբ մեծաւ տիրացեալ զբռամբ կալցի զամենայնն. այլ արագ արագ պաշարեաց զնա արժանահաս պատուհասն։ Քանզի երթեալ նորա տիրանալ քաղաքին Կատանայ, անդէն 'ի ձեռաց հանէր զՍիրակուսա։ Եւ պատմեն՝ ասել նմա յայնժամ, եթէ՝ քաղաք մի կորոյս, և պանրաքերոց մի ժառանգեաց 5։

Իսկ իբրև յետ այնորիկ խաղաց նա և 'ի վերայ Մեսինացւոց, նորա տապաստանական զօրականք բազում յոյժ, ընդ որս և որք սպանին զԴիոնէն։ Բայց 'ի Սիկիլիա և ոչ մի ոք 'ի քաղաքացն առեալ ժողովեաց զնա. այլ առհասարակ ատելի եղեալ և հալածեալ, չոքաւ 'ի Հռեգիոն. ուրանօր և կեանս վարեալ հիւքաբար, և անձեռնհաս 'ի պահել զվարձկանսն, ապա 'ի վերջէ սպանաւ նա 'ի Լեպտինեայ և 'ի Պոլիպերքոնտեայ. և ըստ դիպաց՝ 'ի նոյն դաշոյն՝ որով ասեն սպանեալ զԴիոնէն. զի ծանեան զայն 'ի չափոյն՝ զի կարճ էր իբրև զլակոնացի դաշոյնսն. դարձեալ և 'ի կերտուածոյն՝ զի ճարտարուեստ էր և հրաշակերտ։ Արդ Կալիպպոս օրինակ զայս ելոյծ զվրէժն։ Իսկ իբրև Արիստոմաքէ և Արետէ հանան 'ի բանտէն, առեալ ժողո-

վեաց զնոսա Իկետէս Սիրակուսացի 'ի բա-
բեկամաց անսի Դիոնիսի. և թուի՝ ամե-
նայն հաւատարմութեամբ և պատուով
պահել զնոսա և խնամ տանել նոցա. այլ
ապա հրապուրեալ 'ի թշնամեացն Դիով-
նի, պատրաստեաց նոցա նաւակ՝ իբրև 'ի
Պելոպոննիսոս առաքել զնոսա. և հրա-
ման տայր 'ի նաւարկութեանն սպանանել
զնոսա և ամալ 'ի ծով։ Իսկ կէսք պատմեն՝
եթէ կենդանւոյն նոքա արկան 'ի ծով
հանդերձ մանկամբն։ Բայց ապա և ինք-
նին Իկետէս ելոյծ զվրէժ արժանի յան-
դգնութեանն. քանզի ինքն ձերբակալ 'ի
Տիմողեոնդեայ՝ սպանաւ, և Սիրակուսացիք
սպանին զնորա դստերս երկու 'ի վրէժ-
խնդրութիւն Դիոնիսի. զորոց 'ի Տիմո-
ղեոնդեայ վարսն ոճով արձանագրեալ է։

---

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Յոյժ հրաշալի է այս իմաստ Պլուտարքեան։ Վարդապետութիւն է Ճշմարտութեանս մերոյ՝ զոր յառաջ բերէ Պլուտարք, 'ի կռիւ հանապազորեայ մարտի հրեշտակացն չարաց՝ ընդ առաքինի մարդկանն, զի մի յանկարծ լցցեն նոքա զդատարկացեալ զիւրեանց տեղին։ Պլուտարքն մեր ժամանակակից գոգցես Առաքելոցն սրբոց, և առաւել ևս՝ աշակերտացն նոցա, այր յոյժ հետախոյզ, ինձ թուի անշուշտ՝ բազում ինչ լուեալ է 'ի մերոց, զոր և Յոյժ վաղնջուց բան կուլէ։

2. Այս Փիղիստոս գրեաց զպատմութիւնն Եգիպտոսի՝ երկոտասան գիրք. զՍիկիլիոյ՝ մետասան. և զԴիոնեսիոսի երիցու՝ վեց։ Մեծապէս գովէ զնա Կիկերոնն. և կոչէ ևս զնա "Թուկիդիդէս փոքր"։

3. Αρκτουρος. Է մին 'ի մեծագոյն աստեղաց Սայլին։

4. Θεσμοφόρος. այն է՝ Օրէնադիր. անուն դիցուհեաց, Դեմետրի և Պերսեփոնի։

5. Ակնարկէ 'ի լծորդս ձայնիցն. ՅՆ. Քաղանի, և Փաղանի։ Առաջինն էր անուն քաղաքի, զոր կալաւ. և երկրորդն նշանակէ՝ և զդործին զայն զնոհակերաց։

# ԲՐՈՒՏՈՍ

ԱՐԿՈՍԻ Բրուտոսի էր նախահայրը Յունիոս Բրուտոս, զոր պղնձի կանգնեցին հինքն Հռոմայեցւոց 'ի Կապիտոլիոնի 'ի մէջ թագաւորաց սուսերամերկ, իբրու որ հզօրեղապէս եհար վանեաց զՏարկուինեանսն։ Այլ քանզի էր նորա բոյս բարուցն անգաստին 'ի բնութենէն խիստ և կարծր իբրև պողովատիկ սուսերաց, և անամոք 'ի բանէն, թափ տուեալ սրտմտութեան կրիցն ընդդէմ բռնաւորաց՝ մինչ և յորդեսպանութիւն անդր կրթեցաւ։

Բայց Բրուտոս այս՝ զորոյ զվարուցն բուռն հարեալ եմք աւադիկ, 'ի չափու զբարան բերեալ 'ի հրահանգս գեղեցիկ վարժից, և 'ի խոհականութեան բանին 'ի ձեռն իմաստասիրութեան, և զբոյս բարուցն զպերճ և զհեզ՝ դրդեալ 'ի մեծա-

մեծ նահատակութիւնս, թուի քաջամոյն յոյժ լինել 'ի լաւն և յառաքինին. որպէս զի և ատելիք նորա գլխովին 'ի դաւանան ընդդէմ Կեսարու, զբարիոք ինչ 'ի գործ անդր՝ զայն Բրուտոսին ընծայեն. իսկ որ ինչ դժնդակ 'ի նմա՝ զայն 'ի Կասիոս անդր 'ի վեր հանեն, այն՝ որ թէպէտ և Բրուտոսին մտերիմ և բարեկամ, ոչինչ հանդունասիպ էր նմա 'ի պարզութեան և յանկեղծաւոր 'ի բարսն։

Իսկ Սերվիլիա մայր նորա զիւր զարմն ասէր ՃԵտեալ յԱղասայ Սերվիլիոսէ, որ 'ի հայթհայթանս բռնակալութեան տեսեալ զՄաղլիոս զՊոմպոնիոս և խռով 'ի ժողովրդեան հարկանել, առեալ դաշոյն մի ընդ անթոմն՝ չոքաւ 'ի հրապարակն. և մերձ առ այրն եղեալ իբրու զիրաց ինչ խօսել ընդ նմա. իբրև խոնարհեցաւ առ նա այրն՝ խոցեալ սպանանէր զնա։

Եւ յայսմիկ միաբան են առհասարակ. բայց 'ի հայրենի զարմին նորա՝ որք միանգամ 'ի թշնամութիւն կքրեցան ընդ Բրուտոսի վասն սպանութեանն Կեսարու, ասեն ոչ լինել նմա 'ի սերնդոց անտի առն՝ որ զՏարկուինեանսն վանեաց. քանզի և ասեն՝ ոչ թողուլ նմա զաւակ 'ի սպանութեան որդւոցն. այլ թէ էր սա 'ի ռամկաց՝ որդի տնտեսի ուրուսն Բրուտոսի, և թէ 'ի սուղ ժամանակաց միջամուխ գտաւ յաւագութիւնս։ Սակայն Պոսիդոնիոս իմաստասէր պատմէ, եթէ թէպէտ ըստ պատմաբանիցն սպանան որդիք

երկու Բրուտոսի յարբունս հասեալք, այլ մնաց կենդանի երրորդն տղայ մանուկ, յորմէ և սերեցաւ Ճեան։ Առ այս՝ և արք երևելիք 'ի տանէ անտի առ իւրովքն ժամանակօք, նմանութիւն բերէին 'ի դէմս զանդրոյն զնախնոյն Բրուտոսի։ Այլ վասն այսորիկ այսչափ։

Արդ եղբայր Սերվիլեայ մօրն Բրուտոսի՝ էր ինքնին Կատոն իմաստասէր. որում և նախանձաւոր գտաւ Բրուտոս առաւել քան զամենայն Հռոմայեցիս, քեռի գոլով նորա, ապա և աներ։ Եւ համբաւն՝ ամենայն իմաստասիրացն Հելլենացւոց տեղեակ էր նա հրահանգացն, և ոչինչ խորշէր ունկն դնել նոցա. սակայն էր նա մասնաւոր հետամուտ վարժարանին Պղատոնի. և ոչինչ այնպէս զհետ կրթեալ նորոյն Ակադեմեայ, կամ որ միջականն անուանեցաւ, բոլորապտուղ նուիրեցաւ հնոյն այնմիկ։ Ուստի և մեծապէս արգոյ և սքանչելի էր նմա Անտիոքոս Ակաղոնացի. և բարեկամութիւն և կենակցութիւն հաստեաց նա ընդ եղբօր նորա ընդ Արիստոնի. և թէպէտ և քան զբազումս յիմաստասիրաց խոնարհագոյն այր 'ի վարժս գիտութեանց, ընդ վեհագունիցն մրցէր նա 'ի պարկեշտութեան վարուցն և 'ի հեզութեան։ Իսկ այն Եմպիւղոս՝ (զոր նա 'ի թուղթսն և բարեկամք ևս նորա ստէպ յիշատակեն իբրև կենակից նորա), էր հռետոր, և արձանագրեաց նա մատեան փոքրիկ՝ այլ ոչ հետևակ ինչ, Յաղագս

սպանութեանն Կեսարու, և մատեանն մակագրի՝ Բրուտոս։

Եւ էր ինքնին Բրուտոս մեծապէս հրահանգեալ 'ի Հռոմայեցւոց բարբառն 'ի հրապարակախօսութիւնս զօրականին և 'ի վէգս պայքարաց. բայց 'ի Հելլենացւոցն՝ է իսկ տեսանել ուրեք ուրեք 'ի թուղթս նորա, զի առաւել ճգնի նա յոճ հանճարիմաստ և լակոնացի կարճառօտ. ըստ որում և 'ի պատարաստել իւրում 'ի մարտ պատերազմի, գրեաց առ Պերգամենացիս՝ այսպէս. "Լսեմ տալ ձեզ արծաթ Դոլոբելլայ. եթէ կամակար եղուք, անիրաւեցայք առ իս. ապ՝ եթէ ակամայ, յայտնի արարէք՝ տալով ինձ կամակար"։ Սա՛պէս և առ Սամոսացիս. "Խորհուրդք ձեր՝ ասէ՝ փանաքիք, գործքդ՝ դանդաղք։ Զի՞նչ վախճան կարծէք զդոցա"։ Եւ յայլում ևս թղթի գրէ առ նոսա վասն Պատարացւոց այսպէս. "Քսանթիացիք ապախտ արարին զերախտեաքս. զՀայրենի աշխարհն կալան 'ի գերեզման անմոռութեան իւրեանց։ Իսկ Պատարացիք՝ յիս ապաստանք՝ յաջողեցան յամենայնի անդըրժելիք յազատութեան։ Ձեզ ապա անկ է ընտրել կամ զՊատարացւոցն խորհուրդ, կամ զՔսանթիացւոցն բախտ"։

Եւ մինչդեռ տակաւին պատանեակ էր Պրուտոս, չոքաւ 'ի Կիպրոս ընդ քեռւոյն իւրոյ Կատոնի՝ յարշաւանին ընդդէմ Պտղոմեայ։ Բայց Պտղոմէոս յայնժամ զնուրովին գնացեալ, և Կատոնի 'ի կարևոր

պատճառաց զտեղի կալեալ 'ի Հռոդոս, արձակէր անդր զմի ոմն 'ի բարեկամացն Կանինիոս անուն՝ 'ի պահ դանձուց արքունի, այլ ապա խնդրացեալ ընդ այրն՝ եթէ երբէք խորհեսցէ, գրէր առ Բրուտոս ձեռամբ նաւել գնալ 'ի Կիպրոս 'ի Պամփիլիոյ, ուր դեգերեալ կայր նա յայնժամ գարմանել զնոսթութիւն իւր։ Եւ նաւէր գնայր անդր Բրուտոս գժկամակ յոյժ, պատկառեալ 'ի Կանինիոսէ՝ զի այնպէս անփառունակ մերժեցաւ այրն 'ի Կատոնէ. և զի՝ և զգործ պաշտամանն զայնորիկ ոչինչ աղնուական և արժանի համարեցաւ անձին, իբրու որ պատանեակ էր և վարժից հպատակ։ Համայն և այնպէս գեղեցիկ պատկառ կացեալ իրացն, դովութիւն ընդունէր 'ի Կատոնէ, և զամենայն զկարասին՝ արծաթոյ փոխանակեալ, ինքնին բազում ինչ յարծաթոյն առեալ տարաւ 'ի Հռովմ։

Ապրդ՝ յայնժամ յերկուս հերձեալ քաղաքին, և Կեսար և Պոմպէոս մարտ ընդ միմեանս եգեալ և յաղմուկս շփոթից յուզեալ տէրութիւնն, կարծիս իմն էր այնպէս՝ ձեռն 'ի Կեսար տալ Բրուտոսի, (քանզի և հայր նորա սպանեալ իսկ էր 'ի հրամանէն Պոմպէի). բայց նա զհասարակացն նախամեծար քան զիւրսն արարեալ, և զպատճառս մարտին Պոմպէի իրաւացի ևս դատեալ քան զԿեսարուն, միամտեցաւ ընդ Պոմպէի։ Եւ որ յաւաղ ժամանակաւ 'ի պատահել նմա և ոչ խո-

սէր անդամ, պիղծ համարէր զբանիւք անկանել ընդ առն սպանողի հօրն. այլ յայնժամ հպատակեալ նմա իբրև առաջնորդի հայրենեաց, եւ նաւեաց իբրև ետեղակալ 'ի Սիկիլիա ընդ Սեստիոսի՝ որում վիճակեցաւ գաւառն։

Բայց քանզի անդանօր պատճառք չգոյր մեծաց նահատակութեանց. և 'ի ժամանակին յայնմիկ Կեսար և Պոմպէոս ճակատեալ իսկ էին 'ի ռազմ սահմանաւոր մարտի, եւ չոքաւ 'ի Մակեդոնիա ինքնակամ նահատակեալ 'ի նոյն կռիւ։ Եւ ասէն՝ յայնժամ Պոմպէի խնդագին և հիացեալ 'ի մտել նորա՝ յոտն յառնել և համբուրել զնա յանգիման բազմութեանն իբրև զայր աւագամեծար քան զամենեսեան։ Իսկ նա 'ի բանակին ողջոյն զժամս աւուրն՝ յորժամ չէր ընդ Պոմպէի, զվարժիւք գայր և զգրովք, ոչ միայն զայլ ժամանակն՝ այլ և որ յառաջ քան զօրն ըզմեծի պատերազմին։ Եւ էր ժամանակն խոր ամարայնոյ, և մեծապէս էր տապն, և բանակք հարեալ էին առ Ճախճախուտս։ Իսկ Բրուտոսին դանդաղեցան վրանաբարձքն, և թէպէտ և խոնջ էր նա և վաստակ, հազիւ ուրեմն զհասարակ աւուրբ առեալ օծումն և Ճաշեաց սակաւ մի. և ապա մինչ այլք յայնժամ կամ 'ի քուն դարձան կամ 'ի յոյզս տագնապէին մոաց վասն հանդերձելոցն, նա նստաւ գրեաց մինչև ցերեկոյ ծայրաքաղ արարեալ զՊողիւբիոս։

Եւ պատմեն՝ և Կեսարու ինքնին խնամ տանել Բրուտոսի, և պատուէր տալ զօրապետացն խնայել 'ի նա և մի սպանանել 'ի կռուին. և յանձնատուրն լինել՝ ածել զնա առ իւր. իսկ դիմադարձ եղեալ՝ թողուլ երթալ և մի բուռն առնել նմա։ Եւ ասեն՝ բարեգործել զայս 'ի շնորհս Սերվիլեայ մօր Բրուտոսի. քանզի դեռ տիւք պատանի գիտաց (որպէս ասեն) զՍերվիլիա զմոլեալն 'ի նա. և ծնաւ Բրուտոս 'ի ժամանակին՝ յորում սատիկ էս էր տապ սիրոյն, և իբրև զորդի իւր կարծէր զնա Կեսար։

Եւ պատմեն՝ եթէ էր երբեմն 'ի Սինկղիտոսին ասեան կարևոր վասն Կատիլինեայ, յոյր ձեռն և վայրիկ մի էս քաղաքն հիմն 'ի վեր տապալէր, և անդ մօտ միմեանց բազմեալ էին Կատոնն և Կեսար՝ անմիաբանք 'ի կարծիս. իսկ 'ի նմին պահու ածեալ արտաքուստ տոմսակ մի առ Կեսար, ակսաւ նա ընթեռնուլ առանձինն. իբրև անդ Կատոնն բողոք բառնայր ընդդէպ սահեհ գործն Կեսարու, որպէս թէ հրեշտակս և նամականի առնուլ նմա առ 'ի թշնամեացն. և շատից էս ամբոխեալ յայնժամ, ապա Կեսար առեալ տայր զպնակն ինքնին առ Կատոնն, նա առեալ և ծանուցեալ զգիր զայն զանժուժկալուն թեան զՍերվիլեայ քեռն իւրոյ, ձգեաց առ Կեսար և ասէ. "Կա՛ զգիրդ արբեալդ դու,,. և ինքն դառնայր անդրէն 'ի ճառ բանիցն իւրոց։ Եւ այսպէս տուփանքն Սեր-

վիլեայ առ Կեսար զհամբաւի հարեալ էր։

Ապա յետ հարուածոյն Փարսաղեան և փախստեանն Պոմպէի 'ի ծով, պատեալ պաշարեալ զակշին նորա՝ Բրուտոս թաք-թաքուր արտաքս ելանէր ընդ դուրսն՝ որ հանեն 'ի ձահիճ մի ջրակուտակ պուրակաց եղեգնաշամբից։ Իսկ անդուստ գիշերագնաց ելեալ՝ անկաւ 'ի Լարիսսա, և առեալ գրէր անուն առ Կեսար. ցնծացաւ նա ընդ փրկութիւն նորա՝ և պատուիրէր գալ առ ինքն. և ոչ միայն զվնասն եթող նմա, այլ և ընդ մտերիմս իւր յոյժ պատուեաց զնա։ Իսկ իբրև յայնժամ գիտէր և ոչ ոք ասել ուրանօր փախեաւ Պոմպէոս և վարանէին առհասարակ, անդ Կեսար ձեմ առեալ առանձինն ընդ Բրուտոսի՝ փորձ փորձեաց զկարծեաց նորա. իբրև զբանիւք անկեալ եռեռս զի ճարտար գուշակեաց վասն փախստեանն Պոմպէի, թողեալ զայլոցն խորհուրդ՝ դէմ եդեալ խաղայր յԵգիպտոս։ Այլ զՊոմպէոս՝ որ յԵգիպտոս չոքաւ՝ որպէս գուշակեացն Բրուտոս, օրհաս մահուն անդանօր ժողովեաց զնա։

Բայց Բրուտոս յետ այնորիկ հաշտեցուցանէր զԿեսար և ընդ Կասսիոսի. բարեխօս եկաց նա և վասն արքային Լիբիոյ, և թէպէտ 'ի բազում ամբաստանութեանց պաշարեալ էր այրն, խնդրեաց և աղաչեաց և էառ վասն նորա բազում ինչ յարքայութենէն։ Եւ պատմեն՝ եթէ 'ի լսել Կեսարու առաջին զպայքարել նորա՝

ասէր առ բարեկամն. «Ո՛չ գիտեմ՝ զինչ խնդրէ պատանիդ. սակայն և զոր միանգամ խնդրէ, ուժգինս խնդրէ»։ Քանզի և անդրդուելի էր Բրուտոս և ոչինչ այնպէս առ ամենայն աղաչաւորս հեշտալուր, այլ ողջախոհ և քաջախորհուրդ կշռութեամբ ձեռնամուխ եղեալ 'ի լաւն, այնուհետև ապա սաստիկս և աղդողագոյնս ճգնէր նա 'ի գլուխ տանել՝ զոր խնդրէրն։ Բայց էր նա առ անիրաւ խնդիրսն անողոքելի և անամոք, և զհեշտալուր զկիրսն առ լրբենի աղաչաւորսն՝ զոր կէսք պատկառանս կոչեն ակնածու՝ յոյժ դժպատեհ իրս դնէր առն աւագի. և ասէր նա բազում անգամ, եթէ որք զլանալ ինչ երբէք ոչ գիտեն, թուի իմն ոչ քաջասընունդ լեալ նց 'ի տիս առոյգուէ իւրեանց։

Յետ այսորիկ հանդերձեալ Կեսարու անցանել 'ի Լիբիա ընդդէմ Կատոնի և Սկիպիոնի, յանձն առնէր Բրուտոսի զԳաղատիա՝ որ յայսկոյս Ալբեանց, 'ի գեղեցիկ բախտ գաւառին։ Քանզի ուր այլք 'ի գաւառաց՝ 'ի կուսակալացն խեռութենէ և յընչաքաղցութենէն չարչարեալք էին՝ իբրու եթէ 'ի թշնամեաց ձեռաց հանեալք բռնութեամբ, իսկ Բրուտոս գիւր եղև գաւառին այնմիկ և քաջալերութիւն անցեալոց չարչարանաց նոցա. և ողջոյն զարդասիս բարեացն 'ի վեր 'ի Կեսար հանէր, որպէս զի և Կեսար ինքնին շուրջ եկեալ Յիտալիա 'ի դարձին իւրում՝ մեծապէս ցնծայր տեսեալ զքաղաքն զկուսակալու-

թեանն Բրուտոսի և զԲրուտոս ինքնին՝ նմա 'ի փառս մեծութեան, որ և կենցաղակից իւր էր բազում շքով։

Եւ քանզի բազում բարձք են զօրավարականք, թուէր ինն՝ զի աւագամեծար բարձն՝ զոր անուանեալ կոչեն Քաղաքական, Բրուտոսի վիճակեսցի կամ Կասիոսի։ Իսկ կէսք ասեն՝ եթէ երկոքին նոքա 'ի ներքոյ խեթացեալք ընդ միմեանս յառաջնոց անտի պատճառաց, առաւել ևս յայնժամ կագեցան վասն բարձին այնորիկ, թէպէտ և մերձաւորք ևս էին միմեանց. քանզի զՅունիա քոյր Բրուտոսի ունէր Կասիոս։ Իսկ և կէսք ասեն՝ եթէ կագին նոցա պատճառք էր ինքնին Կեսար, որ 'ի ծածուկ յուսացուցանէր և խոստանայր զօրավիգն կալ միոյն, մինչև գրգռեցան նոքա 'ի վեգ գալ այր ընդ ընկերի։ Եւ յայնժամ Բրուտոս 'ի պայքարին զգեղեցիկ համբաւ զանձինն և զառաքինութիւն՝ ախոյեան ընդդէմ կանգնէր բազմադէմ և հոյակապ նահատակութեցն Կասիոսի ընդդէմ Պարթևաց։ Իսկ Կեսար լուեալ զպայքարսն նոցա և 'ի խորհուրդ ընդ բարեկամսն մտեալ՝ ասէր. "Բանքդ Կասիոսի իրաւացիք ևս են, սակայն և զաւագ բարձն Բրուտոսի տալ արժան է,,։ Եւ տայր տպա այլ բարձ Կասիոսի. իսկ նա ոչ այնչափ վասն բարձին այնորիկ շնորհակալու եղև, որչափ սրտնեցաւ՝ զի վրիպեաց յառաջնոյն։

Աւրդ յայնժամ Բրուտոս բաւական

իսկ էր և յայլ ինչ իրս Ձոխանալ 'ի զօրու-
թենէ անտի Կեսարու. քանզի և կարէր՝
եթէ կամէր՝ բարձերէց 'ի բարեկամն Նորա
լինել և մեծապէս աւագանալ։ Սակայն
նա յանկուցեալ յընկերութիւնն Կասսիո-
սի՝ ուծանայր 'ի Կեսարէ. ոչ զի յետ պա-
տուասիրութեան պայքարին՝ հաշտեցաւ
ինչ ընդ Կասսիոսի, այլ զի հանապազօր
խրատ լսէր 'ի բարեկամաց մի ինչ ամոքել
և պասրիլ 'ի Կեսարէ, նա՛ անձնապահ ևս
լինել 'ի բռնաւոր Նորա հանդիսից սիրոյ
առ նա և 'ի շնորհացն՝ ոչ 'ի պատուել ինչ
զառաքինութիւն Նորա, քան թէ 'ի վա-
տել զուժ Նորա և վանել զքաջութիւնն։

Բայց և ոչ Կեսար ինքնին գլխովին ան-
կասկած էր, և լսէր ևս բամբասանս զԲրու-
տոսէ. և թէ զանգիտէր ինչ ևս 'ի քաջու-
թենէն Նորա և յաւագութենէն և 'ի բա-
րեկամացն, սակայն անվեհեր էր 'ի բոյս
բարուց առն։ 'Ի վերայ այսր՝ և առաջին
անգամ լուեալ եթէ Անտոնիոս և Դոլո-
բելլաս գաւ նիւթեն, ասէր՝ փոյթ չունել
զարանցգ զայդոցիկ զյուրից և զգիսաւո-
րաց, այլ ոչք գեղնեալքն ի ցեն և վտիտք,
և ակնարկէր նա զԲրուտոս և զԿասսիոս։
Եւ յետ այնորիկ ամբաստանեալ ոմանց
զԲրուտոսէ, և ազգ ևս արարեալ Կեսա-
րու անձնապահ 'ի նմանէն լինել, նա ձեռն
ձգեալ և շոշափեալ զիւր մարմնին, ա-
սէր, "Եւ զի՞նչ, ոչ ևս թուի ձեզ՝ սպա-
սել մնալ Բրուտոսի մահացու մարմնոյս
այսմ"։ Զայն յայտ առնէր՝ եթէ յետ

վախճանին իւրոյ՝ Բրուտոսի միայնոյ հաս-
ցէ ունել զմեծազօր զայն աւագութիւն։

Եւ արդեօք թուի՝ նախաթոռ Բրու-
տոսի անշուշտ բազմել 'ի քաղաքին, եթէ
խուն մի ժամանակ բերէր ժուժայր նա
երկրորդ բարձին զկնի Կեսարու, և թոյլ
տայր վատել զօրութեան նորա և թօշնել
փառաց շահատակութեանց նորա։ Այլ
Կասսիոս այր բարկացայտ և սրտեայ, այն
որ առաւել Կեսարատեաց յառանձինն
պատճառաց, քան եթէ բռնաւորատեաց
'ի պատճառս հասարակաց, վառեաց բոր-
բոքեաց զԲրուտոս. ուստի և ասէին՝ Բրու-
տոսի չհանդուրժել ընդ թագաւորութին,
իսկ Կասսիոսի՝ ատել զթագաւորն. որում
և էին իսկ պատճառք այլ գրգռութեան
նորա ընդդէմ Կեսարու, որպէս և Եհան
էառ 'ի նմանէն Կեսար զառիւծունսն,
զոր ինքնին Կասսիոս՝ հանդերձեալ յամ-
բարապետութիւն, ածեալ պատրաստեալ
իսկ էր. իսկ Կեսարու գտեալ 'ի Մեգարա
զդազանն զայնոսիկ յառնուլ քաղաքին
այնորիկ 'ի Կաղինոսէ՝ կալաւ վասն իւր։
Եւ պատմեն՝ աղէտս բազում դազանացն
այնոցիկ հասուցանել Մեգարացւոցն.
քանզի Մեգարացիք յառնուլ քաղաքին
իւրեանց խորտակեալ զգաւազիղսն և լու-
ծեալ զկապանսն՝ իբրու քար ընդ ոան
տալ 'ի հորդան թշնամեացն, դարձան ա-
ռիւծունք խոյացան ընդդէմ Մեգարա-
ցւոցն. որոց և 'ի խուճապել նոցա յայս-
կոյս յայնկոյս անդէնս՝ գէշագէշ պատա-

ռեցան 'ի գազանացն. որպէս զի և տեսիլ աշխարհելի և նոցուն թշնամեացն եղեն նոքա։

Արդ զայս ասեն մեծապէս պատճառս դաւաճանութեանն Կասսիոսի, բայց չասեն ուղիղ։ Քանզի անդատին 'ի բնէ էր Կասսիոս թշնամի և ատելի բռնաւոր մարդկանն, ըստ որում և 'ի տղայութեան իսկ տիան 'ի դէմս եբեր 'ի նմին վարժարանի գոլով ընդ Փաւստոսի որդւոյն Սիւլլայի։ Սա այս Փաւստոս պանծանօք 'ի մէջ մանկանց վարժարանին 'ի գովութիւն առեալ բարձրացուցանէր զինքնակալութեն զհօրն. իսկ անգուստ Կասսիոս յարուցեալ բռնցի հարկանէր զնա. և ասա դայեակք Փաւստոսի և ընտանիք քարշեալք զԿասսիոս 'ի դատել, թոյլ չետ Պոմպէոս. և կոչեցեալ առաջի իւր զերկոսին զմանկունսն՝ հարցանէր վասն բանին, և պատմեն՝ ասել յայնժամ Կասսիոսի. "Արդ ա՛ղէ ո՛վ Փաւստէ, զնոյն բան՝ որ գրգռեաց զիս՝ քաջալերեա՛ց դու ասել և առաջի առնս, զի միւսանգամ ջախեցից ես զկզակ քո"։ Այսպիսի ոք էր Կասսիոս։ Իսկ Բրուտոս դրդեցաւ վառեցաւ 'ի գործ անդր 'ի բաղում բանից անտի իւրոց ընտանեացն, և 'ի բաղում ևս զրուցաց և 'ի գրուածոց քաղաքացեացն։ Քանզի առ պատուանդանի անդրւոյն Բրուտոսի իւրոյ նախահօր՝ որ զարքայից տէրուն տապալեաց, առեալ գրեցին նոքա այսպէս. Իոյ՝ Ռէ էր արդ 'ի մէջի Բրուտոս. և դարձեալ՝ Օ՜ Ռէ պոխուն էնդանի էր Բրուտոս։ Իսկ և 'ի բեմի անդր Բրուտոսի՝

որ յայնժամ զօրավար էր, առաւօտուց էր տեսանել առհասարակ գրուածս իմն այսպիսի, եթէ՝ Ընջէ՞ դու ուրէ՞ ոչ Բրու-տոս. և թէ՝ Ա՛ղուցա դու լիս ինքնին Բրուտոս։

Բայց պատճառք էին ինքնին հացկատակքն Կեսարու, հայթհայթեալք նմա պատիւս՝ որ նախանձուկս արկանէին. ըստ որում և է՛ զի բոլորեցին ևս նոքա գիշերայն պսակ յանդրիս նորա, թեղադիր եղեալք խուժանին՝ թագաւորի անուն կարգալ նմա փոխանակ իշխանապետի. թէպէտ և ընդ հակառակս պատահեցին իրք, զոր և ոճով գրեալ իսկ է մեր 'ի վարսն Կեսարու։

Արդ յայնժամ Կասսիոս փորձ փորձեալ զբարեկամացն իւրոց ընդդէմ Կեսարու, առհասարակ նոքա խոստացան ձեռն տալ նմա՝ եթէ միայն Բրուտոս կացցէ նոցա 'ի գլուխ. քանզի նոցա 'ի գործ անդր պակասէր և ոչինչ՝ ոչ ձեռն և ոչ արութիւն քաջութեան. բայց պէտք էն նոցա մեծապէս համբաւոյ առն՝ որպիսի ոք Բրուտոսն էր, իբրու նմա նախասկիզբն գործոյն լինել և առընթեր կալ և իրաւացուցանել. ապա թէ ոչ՝ վատասրտեալ նոցա 'ի գործն, դարձեալ և կասկածելիք առաւել լինիցին նոքա յետ այնորիկ, իբրու այն՝ թէ երբէք Բրուտոս 'ի գործոյ անսի հրաժարէր ո՛չ՝ թէ արդեօք գեղեցիկ էին պատճառքն։

Յայսոսիկ ապա մտախորհ Կասսիոս, եւ չոքաւ ինքնին առ Բրուտոս առաջին

այն նուագ յետ գժտութեան նոցա։ Իբ-
րև հաշտեալք հիւրամեծարք եղեն այր
ընկերին, հարցանէր զնա Կասսիոս. ար-
դեօք կամք լցեն նմա խմբիլ 'ի Սինկղիտոս
յամնամսի անդ Մարտի. քանզի ասեն՝ եթէ
յայնժամ հանգերձեալ իսկ է բարեկա-
մայն Կեսարու բան 'ի մէջ առնուլ վասն
թագ կապելոյն նորա. իբրև պատասխանի
ետ Բրուտոս, եթէ ոչ. կրկնեաց Կաս-
սիոս. "Եւ զի՞նչ ապա եթէ կոչեսցեն
զմեզ,,։ Ասէ Բրուտոս. "Պարտ անձին
համարիմ՝ ոչ լռել. այլ ընդդէմ դառ-
նալ, և կանուխ քան զաղատութիւնն 'ի
մահ տարածիլ,,։ Յայնժամ առաւել ևս
քաջալերեալ Կասսիոսի՝ ասէր. "Եւ ո՞ոք
ապա 'ի Հռոմայեցւոց ասսի հանդուր-
ժեսցէ այդպէս կանուխ մեռանել քեզ։
Թերևս ինքնին քո զքեզ անգիտացեալ է
ով Բրուտէ. կամ կարծիցես Թերևս, ե-
թէ արք ոստայնանկք և արք պանդոկա-
պետք գրեցին սփռեցին այնպէս 'ի քումդ
բեմի, և ոչ արք աւագք ինքնին գլխովին և
Ճոխք քաղաքին գործեցին զայդ։ Նա՛ ա-
ւանիկ յայլոց սնոտի զօրավարաց ձիրս միայն
խնդրեն պարգևաց և տեսարանս Թատե-
րաց և մրցանս մենամարտկաց, այլ 'ի քէն
ժտին պահանջեն իբրև պարտս իմն հայրե-
նի՝ զտապալել քանդել բռնաւորութեն։
Կազմ վառեալ կան աւագիկ բերել վասն
քո զամենայնն, եթէ այնպիսի զքեզ ինք-
նին 'ի դէմս բերցես, որպիսի ոք խնդրեն
գոքա և ակն ունին,,։ Յետ այսորիկ գիրկս

ածեալ Բրուտոսի՝ համբուրեաց զնա, և մեկնեալք յայնժամ դարձան իւրաքանչիւր առ բարեկամս։

Իսկ էր յայնժամ Կայիոս Լիգարիոս ոմն անուն 'ի բարեկամաց անտի Պոմպէի. ուստի և ամբաստանեալ՝ թողութիւն առնէր նմա Կեսար։ Սա այս այր ոչինչ շնորհակալու միտս ստացեալ վասն թողութեանն, նա զչարեալ և սրտնեալ ընդ իշխանութիւնն՝ որ աղագաւ վտանգեցաւ նա, էր իսկ նա թշնամի Կեսարու, և էր 'ի մտերմաց անտի Բրուտոսի իբրու զայլն։ Յաւուր միում 'ի խօթանալ նորա, ջոքաւ առ նա Բրուտոս, և մտեալ 'ի սենեակ նորա ասէր. "Ո՞վ Լիգարիէ, իսկ յո՞րում ժամու խօթացեալ է քո"։ Իսկ նա անդէն յարուցեալ յարմուկն 'ի վեր և կալեալ զաջոյն նորա՝ ասէր. "Այլ եթէ ինչ մի արժանի անձինդ ո՞վ Բրուտէ խորհեալ է քո, նա առողջ եմ ես"։

Ապա գաղտաբար հետազօտութեամբ փորձեալ 'ի Ծանօթան իւրեանց՝ յորս միանգամ վստահքն էին, 'ի վեր հանէին նոցա զբանն՝ ընկալեալք 'ի դաւանան. և այրընտիր առնէին ոչ 'ի մտերմաց միայն, այլ և առհասարակ 'ի յանձնապատանից անտի, և որք յաչս զկեանս դնիցեն։ Եւ վասն այնորիկ զանխուլ պահէին զխորհուրդն 'ի Կիկերոնէ, թէպէտ և վստահք ևս էին յայրն և սիրէին առաւել քան զամենեսեան. իբրև զի մի՛ ընդ ոնկակից վատասրտութեանն բարդեացէ Կիկերոնն

'ի հասակէն յայնժամ և զդեղեանս զծե-
ռունեացն՝ 'ի ծայր անդր անէրկեանու-
թեան խնդրելով ապահովել զամենայնն
խորհրդովք իւրովք, զանգիտեցին՝ եթէ
վատեսցէ ինչ նա զաշխոյժս նոցա, ուր
ժրութեան պէտք էին 'ի գործն։ Սակայն
և ընդ այլ բարեկամն եթող յայնժամ
Բրուտոս և զՍտաղիլոս Եպիկուրեան և
զՓաւոնիոս զսիրող Կատոնին. քանզի էր
երբեմն 'ի պայքարել և յիմաստասիրել
նորա ընդ նոսա, իբրև բացէ 'ի բաց շրջան
զբանիւք առեալ՝ հետազօտեաց զնոսա
վասն այսպիսեաց ինչ, եւ պատասխանի
Փաւոնիոս՝ եթէ մարտ քաղաքին դառ-
նագոյն ևս է քան զմիապետութիւն անի-
բաւ։ Իսկ և Ստատիլիոս ասաց, եթէ՝ չէ
արժան առն իմաստնոյ և հանճարեղի 'ի
վտանգ անձնադրաւ լինել և տագնապել
'ի պատճառս չարաց և անմտաց։ Բայց
Լաբէոնն որ անդ մերձ կայր, ընդդէմ
դարձաւ երկոցուն նոցա. իսկ Բրուտոս
յայնժամ՝ իբրու եթէ դժուարալոյժ ի՛ցէ
պայքարն, լուռ և եթ կայր։

Ա՛յլ յետ այնորիկ իբրև Լաբէոնն 'ի
վեր հանէր զխորհուրդն, նա մտադիւրա-
գոյնս հաւանէր, և խորհուրդ ևս տայր
առնուլ ընդունել և զմիւս այլ Բրուտոս
զմականուանեալն Ալբինոս, թէպէտ և ոչ
ինչ ժիրաժիր այր և անվեհեր. սակայն և
զօրացեալ էր նա ունել ընդ ձեռամբ ըզ-
բազմութիւն մենամարտակաց 'ի հանդէս
տեսարանի Հռոմայեցւոցն. առ այս և ար-

գոյ էր նա առ Կեսարու։ Իբրև Լաբէոնն և Կասսիոս խօսեցան ընդ նմա, նա չէտ ինչ պատասխանի. և ապա առանձին խօսեալ նա ընդ մեծին Բրուտոսի, իբրև առաջնորդ գործոյն ծանեաւ զնա, խոստացեալ նմա գործակից լինել մտադիւր յօժարութեամբ։ Սակայն և այլ շատք ոմանք և ականաւորք դաշնաւոր լինէին դաւանացն 'ի համբաւոյ անուն Բրուտոսին։

Եւ ապա նոքա ոչ երդումն կռեալք, և ոչ այր զընկեր 'ի ձեռն զոհից ապահովեալ՝ այնպէս իմն 'ի ծածուկ առհասարակ կալան զբանն և գաղտաբար միաբանեցան, որպէս զի Թէպէտ և 'ի գուշակութեանց անուն, Թէպէտ և 'ի հրէշից, Թէպէտ և 'ի հմայից սպանդիցն յայտնի առնէին դիք զհանդերձելոցն, ոչինչ հաւատացաւ բանն։

Արդ՝ յայնժամ Բրուտոս տեսեալ զի զնմանէ կախեալ կային արք աւագամեծարք և տոհմիկք և առաքինիք՝ որ 'ի Հռովմ, և քաջ ևս խելամուտ եղեալ վըտանգին, հնարէր ձգնէր արտաքոյ տան իւրոյ անդորրանալ 'ի տագնապիչ խորհրդոցն. սակայն 'ի տուն իւր մտեալ և 'ի գիշերի իշխան չէր անձին իւրում. մեծապէս տագնապ արտին և յոչ կամացն վանէր զնա, և 'ի քնոյն ընդոստուցանէր։ Եւ սաստկապէս նա յայնժամ ծփեալ 'ի ծով խորհրդոյն և մտայոյզ 'ի գժնդակութեն գործոյն, դէպ եղև կնոջն նորա 'ի միասին ննջեալ՝ խելամուտ լինել նորա անհնարին

խռովութեանն և ոգետանջ կրեցն յիրս
ինն բազմածուփ և 'ի դժուարին։ Էր ա-
նուն կնոջն Պորկիա. և դուստր էր նա՝ որ-
պէս ասացաք՝ Կատոնի, և Բրուտոս քե-
ռորդի նորա՝ ած զնա, և չէր նա կոյս, այլ
'ի վախճանել առաջին առն՝ եկաց այրի.
սակայն էր նա մատաղատունկ, և էր նորա
մանուկ փոքրիկ յառաջին անկողնոյն՝ Բիւբ-
ղոս անուն. որոյ կայ մինչև ցայսօր արձա-
նագրութիւն փոքրիկ մատենի, և է այն
յիշատակարան գործոցն Բրուտոսի։

Ա՛ՐԴ Պորկիա կին իմաստասէր և այրա-
սէր, և լի՛ արութեամբ և զգօնութեամբ,
ոչինչ միսեցաւ հարցանել զԲրուտոս վասն
գաղտնեացն նորա, մինչչև փորձ զայս փոր-
ձեալ 'ի վերայ անձին իւրոյ։ Քանզի ա-
ռեալ կտրոց մի զվարսավիրայցն՝ որով
կտրեն զեղնգունս, և յառագաստէն ար-
տաքս զամենայն աղջկունսն արձակեալ,
միսեաց զկտրոցն յաղդեր իւրում և խորա-
գոյնս գնէր զվէրն. իսկ 'ի յորդահոս
բղխմանէ արեանն վայր մի առ տագնա-
պին տանջէր յանհնարին ցաւոցն, և տա-
պանայր ջերմամբ, և սարսռէր 'ի վիրէն։
Տագնապեալ և ինքնին Բրուտոս 'ի խոր
թաղծութեան վասն բանին, նա յանհնա-
րին 'ի ցաւան խօսել սկսաւ այսպէս և ա-
սէ. "Ես ինքնին ո՞վ Բրուտէ՝ Կատոնի
դուստր 'ի տուն քո եկի, ո՛չ բաժանորդ
միայն քոյին անկողնոյ և սեղանոյ իբրու
զհարճս ոմանս, այլ լինել քեզ միանգա-
մայն հասարակորդ 'ի բարիս, հասարակորդ

և 'ի ձախողակս։ Արդ՝ 'ի քոյդ չեմք ինչ ինձ ամենևին պատճառք դանգատել վասն ամուսնութեանս. բայց յիմոց ասել՝ զոր հանդէս զհոգւոյ իմոյ կամ զոր շնորհս երբէք կալցես դու, եթէ երբէք ես չեղէց բաժանորդ ոչ գաղտնեաց կրից քոց և ոչ հոգոց անձկութեանց՝ յորում հաւատոց պէտք իցեն։ Գիտակ իսկ եմ, եթէ 'ի բնէ աղգ կանանց տկար բնաւորեցաւ և 'ի գաղտնութիւն անբաւական. սակայն և դաստիարակութիւն գեղեցիկ ոմ Բրուտէ և ընդ առաքինեաց թարթափել՝ զօրացաւ տիրանալ 'ի վերայ բարուց, և ինձ ինքնին վիճակեցաւ դուստր լինել Կատոնի և կին Բրուտոսի։ Յորս յառաջ ոչինչ այնպէս քաջալերեալ, այլ զարդիս ճանաչեմ զանձն իմ անվանելի և 'ի կիրս ցաւոց,,։ Իբրև զայս ասաց Պորկիա, և առեալ ցուցանէր նմա զվէրն. պատմէր և զփորձն զոր փորձեաց 'ի վերայ անձինն, շուարեցաւ Բրուտոս. և 'ի վեր յերկինս զձեռսն ամբարձեալ, աղաչէր զդիս տալ նմա լինել ամուսին արժանի Պորկիայ՝ քաջիկ 'ի գլուխ զգործն տանելով։ Եւ ապա դարման խնամոց տանէր վասն Պորկիայ։

Իսկ յաւուրսն յայնոսիկ ատեան մեծ ժողովոյ ծերակուտին սահմանեալ, յորում և ակն ունէին գալ երևել և կեսարու, խորհուրդ խորհեցան 'ի նմին աւուր ձեռնամուխ 'ի գործն լինել։ Քանզի յայնժամ պարտ էր նոցա անդանօր առհասարակ խմբել՝ անկասկածելիք գոլով, և ան-

գանօր 'ի գլուխ զմեծ գործն հանեալ՝ այ-
նուհետև բնաւ իսկ զլաւ որեարն և զաւագ
ձեռնտու իւրեանց գտանել յաղատութի
անդր։ Թուէր իմն նոցա և տեղին ինքնին
յաստուածուստ պատրաստեալ և նոցա
քաջադէպ։ Քանզի էր այն դահլիճ 'ի
սրահ բազմոցաւոր շուրջ զԹատրոնիւն.
անգանօր և պատկեր Պոմպէի՝ զոր կանգ-
նեաց նմա քաղաքն՝ 'ի զարդարել Պոմպէի
զվայրն դահլիճաք և Թատրոնիւ։ Արդ՝ 'ի
նոյն վայր հրաւիրեցաւ առեան Սինկղի-
տոսին 'ի հասարակել ամսոյն մարտի, զոր
օր Հռոմայեցիք կոչեն Իդոսք Մարտի.
որպէս զի և Թուէր իմն՝ ուրուն 'ի Քա-
ջացն անգանօր ածել բերել զայրն զայն 'ի
վրէժինդրութիւն Պոմպէի։

Ապա 'ի ժամադրեալ աւուրն, առեալ
տանէր Բրուտոս դաշոյն մի 'ի կամարի
պատմուճանին՝ զոր գիտէր միայն կին նո-
ցա, և այնպէս դէմ եդեալ գնայր 'ի
վայրն. իսկ այլք 'ի դաւակցացն խմբեալք
առ Կասիոսի, հեռեէին 'ի հրապարակ
անդր ընդ որդւոյն նորա՝ որ զայն օր հան-
դերձէր առնուլ զպատմուճան՝ զոր ասէն
Ապրական. և անդուստ ապա միահամուռ
անցին նոքա 'ի դահլիճն Պոմպէի, ակն-
կալեալք փութանակի գալստեանն Կեսա-
ր 'ի Սինկղիտոսն։ Եւ անդ էր ապա
հիացմամբ տեսանել՝ որ միանգամ գիտակն
էր առաջարկութեան գործոյն՝ զանզար-
հուրելի զկիրս և զանդրդուելի զհաստա-
տութիւն սրտի զդարանելոց մարդկանն 'ի

մեծապէս վտանգին։ Քանզի և էին իսկ բազումք 'ի նոցանէն անդ զօրավարք և նատեալք յունկնդրութիւն և յիրաւաբանութիւն, ոչ միայն հեզաբար այնպէս իբրու յանդորրու պարապեալք՝ ունկն դնէին դիմելոցն առ նոսա և պայքարացն նոցա, այլ և ճշդրտագոյնս դատ վարէին և ողջախոհ խորհրդով, փութոյ պնդութեամբ։ Դէպ եղև յայնժամ զի այր ոմն ընդ վզեալ հնազանդել դատաստանին, բողոք բառնայր 'ի Կեսար, գոչէր բարձր և վկայութիւն դնէր. իսկ յայնժամ Բրուտոս հայեցեալ շուրջ յորս կայինն, ասէր. "Կեսար ոչ ինչ արդելու զիս, և ոչ արդելցէ երբէք գործել ըստ օրինացն"։

Այսպէս ուրեմն անզարհուրելիք էին նոքա. թէպէտ և բազում ինչ իրաց դէպ եղև պատահել 'ի ժամուն՝ որ բաւական իսկ էին սրտաթափ սրտաբեկ առնել զնոսա։ Առաջին և առաւել քան զամենայն՝ անագանել յայնժամ Կեսարու մինչև 'ի տարաժամել աւուրն, արդելեալ 'ի տան 'ի կնոջէն իւրմէ, և խափանեալ ևս ելանել արտաքս 'ի տանէն 'ի հմայից ինչ ըղձից։ Իսկ երկրորդ, զի մատուցեալ անդ ոմն այր առ Կասկաս՝ որ 'ի դաւակցաց անտի, և կալեալ զաջոյն, ասէր. "Դու ո՞վ Կասկաս 'ի ծածո՛ւկ կալցես 'ի մէնջ զդաղտնիսդ։ Բայց նա՛ աւանիկ Բրուտոս ինքնին 'ի վեր եհան ինձ զամենայնն"։ Զարհուրեալ Կասկասայ, կրկնեաց այրն ժպտելով. "Եւ զիարդ ապա բաւական իցես

գու ոմ երանելի, այդպէս արագ մեծա-
նալ, հետամուտ լինելով քո ամբարապե-
տութեանն ,, : Բայց յայնժամ պատրեալ
Կասկաս ընդ երկբանութիւնն առաջին,
վայրիկ մի ևս 'ի վեր զգաղտնութիւնն հա-
նեալ էր առնն : Դարձեալ և երրորդ, զի
և Պոպիլիոս Լենաս 'ի ծերակուտէն՝ ող-
ջոյն տուեալ յայնժամ Բրուտոսի և Կաս-
սիոսի յոյժ զուարթամիտս, հծծեաց մեղ-
մով յունկն նոցա և ասէ. " Իմ աղօթք
վասն ձեր՝ տանել ձեզ 'ի դլուխս զոր 'ի մտի
ունիք. և քաջալերս ևս տամ մի գանդա-
ղել, քանզի և ո՛չ լռեալ կայ բանդ ,, :
Զայս ասաց և ջոքաւ 'ի բաց, և Թողոյր ըզ-
նոսա անդէն 'ի մեծ վարանս, զի այնպէս
'ի վեր եալ բանն :

Առ այս դարձեալ 'ի նմին պահու գայր
հասանէր առ Բրուտոս մի ոմն 'ի ծա-
ռայից նորա խուճապեալ 'ի տանէն, գոյժ
զայս տայր եթէ մահ առ դուրս կայ կնոջն
նորա : Քանզի յայնժամ Պորկիա բնաւ
որտաթափ վասն հանդերձելոյն, և ոչինչ
հանդուրժեալ մեծապէս տագնապի խոր-
հրդոյն, հազիւ ուրեմն հանդարտէր 'ի
տան, և առ ամենայն շ չիւն արտաքս իբրև
մոլեգին այսահար վազէր, և կայր հար-
ցանէր առհասարակ եկելոցն 'ի հրապա-
րակէն, զինչ գործեսցէ Բրուտոս. և ան-
դուլ բանբերս առեալ կուռ արձակէր
անդր մի զհետ միոյ : Իսկ 'ի վերջէ 'ի յեր-
կարաձգել ժամանակին՝ անկաւ բեկաւ
կինն 'ի բազմածուփ կրից հոգւոյն, և նո-

բա վանեալ զօրութիւն մարմնոյ, ոչ ժամանեաց յառնել մտանել 'ի սենեակն, այնպէս նստեալ արտաքոյ 'ի միջոցին՝ նուաղեալ թալկացաւ յընդարմանալ ոգւոցն, և գոյն հատաւ երեսաց նորա և բարբառն համբուն պակասեաց 'ի նմանէ։ Յայնժամ աղջկունք տանն ձիչ սաստիկ բարձեալ, և գրացիք առ դուրսն ընթացեալք, անդէն հռչակ այս հարկանէր՝ եթէ մեռաւ Պորկիա։ Իբրև նա վայր մի ապա ոգի առեալ և 'ի միտս եկն, շուրջ եկեալ կանանցին սպաս հարկանէին նմա։ Իսկ անդուստ Բրուտոս 'ի լուր գուժին թէպէտ և անկաւ բեկաւ՝ որպէս 'ի դէպ արդեօք, չէլիք չէթող նա զհասարակաց գործն, և ոչ ընկճեցաւ այրն 'ի կրից անտի առտնին աղէտից։

Մինչ այս մինչ այն, լուր յայնժամ հասանէր 'ի վայրն գալատեանն Կեսարու՝ ածեալ շալակաւ. քանզի արտաբէ կեալ Նորա 'ի ձախողակ հմայից անտի զոհիցն, եդ 'ի մտի ոչինչ 'ի մեծաց սահմանել կարդել զայն օր, այլ երկայնել ձգել՝ պատճառեալ զտկարութիւնն։ Իսկ ելեալ 'ի շալակէն, մատեաւ առ նա Պոպիլիոս Լենաս՝ այն որ վայր մի յառաջ գեղեցիկ զելս իրացն մաղթեաց Բրուտոսի և Կասիոսի, և առկայացուցեալ զնա՝ այնպէս յերկարագոյնս խօսէր ընդ նմա, և նա մտադիր ուշունէր բանիցն։ Ուստի և երդմնակիցքն յայնժամ (զի այսպէս կոչեացուք զնոսա) իբրև ոչ լսէին զբանսն Պոպիլեայ, և 'ի վա-

րանաց իւրեանց դուշակեցին զԽօսան զայն՝ իբրու որ առակումն ի՝ցէ դաւանացն, զարհուրեցան. և ընկեր առ ընկեր հայեցեալք՝ 'ի բանի լինէին առհասարակ ակնարկի և 'ի կերպարանս դիմաց, զիւրովին երթալ արագ արագ, և մի սպասել մնալ ձերբակալ նշաւակութեանն։

Եւ մինչդեռ անդ Կասսիոս և այլք ոմանք ձեռն ածեալ 'ի նեբբոյ պատմուճանին յերախակալսն՝ կամէին մերկել զդաշոյնսն, անդուստ Բրուտոս դէտ ակն կալեալ 'ի ծէքել մարմնոյն Լենասայ՝ իբրու աղաչաւորի անձին և ողբաւորի, և ոչ ամբաստանողի, լուռ էկաց և ինչ ոչ ասաց, քանզի և խառն 'ի խուռն անդանօր կային բազումք յօտարաց, սակայն 'ի զուարթութենէ դիմացն վստահ առնէր զԿասսիոս և զընկերսն։ Իսկ Լենաս համբոյր տուեալ ապա աջոյն Կեսարու, գնայր 'ի բաց. քաջ իսկ յայտ արար՝ եթէ վասն անձին և վասն գործոց ինչ իւրոց զբանիւ անկաւ յայնժամ։

Ապա ծերակուտին յառաջ քայլեալ 'ի տեղի ժողովոյն, յայնժամ և այլք շուրջ էկին զաթոռուն Կեսարու՝ իբրու 'ի խօսել ընդ նմա. և ասեն՝ եթէ Կասսիոս յայնժամ դարձուցեալ զերեսս 'ի պատկեր անդր Պոմպէի, յօգնութիւն կարդաց զնա՝ իբրու որ անշուշտ լսիցէ. բայց Տրեբոնիոս առեալ զԱնտոնիոս առ դուրսն, և անդ 'ի ճառս զբուցաց դեգերեալ ընդ նմա՝ այնպէս արդելոյր արտաքոյ։

Իբրև 'ի նեբբս մտանէր Կեսար, յոտն

եկաց Սինկղիտոսն. և իբրև բազմեցաւ, առ-
հասարակ նոքա բոլորեալ զնովաւ, յառա-
ջամուխ վարեցին յիւրեանց անտի զՏիւղ-
ղիոս Կիմբրոս, որ մատուցեալ աղերս ար-
կանէր Կեսարու վասն եղբօրն իւրոյ վտա-
ռանգի եղելոյ։ Անդ 'ի միասին և այլք առ-
հասարակ յողոք անկանէին առ Կեսար,
կալեալք զնորա ձեռացն և համբուրեալք
զնորա լանջսն և զգլուխն։ Իբրև նա զա-
ռաջինն 'ի բաց յողոքանաց անտի արդե-
լոյր զնոսա, տեսեալ զի 'ի բաց չգնան,
բռնութեամբ յոտն յառնէր։ Յայնժամ
Տիւղղիոս երկոքումբք ձեռօքն բուռն հա-
րեալ զպատմուճանէն Կեսարու՝ քարշէր
ձգէր յուսոցն. յայնժամ Կասկաս (քան-
զի յետոյ նորա կայր), ձգեալ առաջին
զսուրն, վերս 'ի վերայ դնէր յուսն նորա,
այլ ոչինչ խորագոյնս։ Իբրև յետս կոյս
խուճապեցաւ Կեսար, և պինդ կալեալ
զերախակալն, գոչեաց մեծաձայն 'ի բար-
բառ հռոմայեցի. "Կասկա՛ս ամբարիշտ,
զի՞նչ գործես,,։ Անդուստ և Կասկաս 'ի
լեզու յոյն կարդայր իւր 'ի թիկունս
զեղբայրն։

Յայնմ պահու Կեսար հարուածս ա-
ռեալ և 'ի բազմաց, և շուրջ հայեցեալ և
փրկութիւն անձին խնդրեալ, իբրև ան-
դուստ և զԲրուտոս ինքնին յակն արկա-
նէր մերկեալ զսուրն ընդդէմ իւր, թոյլ
այնուհետև արարեալ ձեռին Կասկասայ՝
զոր պնդապէս ունէր, և զպատմուճան
իւր զգլխովն ածեալ՝ անձնատուր անդա-

նոր 'ի վերս 'ի հարուածս թողոյր զմարմինն։ Իսկ յայնժամ նոքա այնպէս անդուլ և այր զարամբ 'ի վերայ խոյացեալք մարմնոյն բազմախուռն սուսերօք, այր զընկեր վիրաւորէին. որպէս զի և Բրուտոս ինքնին խառն ընդ այլոց 'ի սպանութիւն անդր, խոցեցաւ 'ի ձեռան. և այլք առհասարակ յարիւն և յապաժոյժ շաղախեցան 'ի ժամուն։

Իբրև օրինակ զայս մահ ընկալաւ Կեսար, յայնժամ Բրուտոս 'ի մէջ եկեալ՝ կամէր հրապարակախօսութեամբ քաջալեր ծերակուտին կարդալ և ունել առ իւր զնոսա։ Սակայն առհասարակ նոքա զահի հարեալք վարատեալք 'ի փախուստ խուճապեցան. և անդ էր առ դուրսն տեսանել ամբոխ խառնամբոխ և աղմուկ անհընարին՝ թէպէտ և հետամուտ ոչ ոք էր. քանզի և էին իսկ նոքա հաստատեալք սպանանել և ոչ զոք, այլ առհասարակ զամենեսեան յազատութիւն կարդալ։ Մինչ խնդրէին նոքա 'ի խորհրդեան անդ իւրեանց ընդ Կեսարուն 'ի մահ և զԱնտոնիոս վարել. զի էր իսկ նա հակամիտեալ 'ի միապետութիւն անդր և ստամբակ էր և զօրացեալ իսկ էր նա մոերմութեամբն ընդ զօրականին. և առաւել ևս՝ զի 'ի բոյս բարուց առնն յանձնապաստան և փառախնդիր՝ յաւելոյր 'ի ժամուն և հիւպատեան աւագութիւնն, իշխանակից գոլով Կեսարու. բայց Բրուտոս ընդդէմ դարձաւ խորհրդոյն. նախ զօրաւոր բանիւք

կրթեցաւ յարդարութիւնն, ապա և յու-
սացուցանէր ևս 'ի փոփոխութիւնն Անտո-
նիոսի. քանզի ակն ունէր՝ եթէ այնպիսի
այր որպիսի ոք Անտոնիոսն էր՝ բարեհամ-
բոյր և պատուասէր և փառամոլ, 'ի բաւ-
նալ Կեսարու՝ նիզակակից և ինքնին լինի-
ցի յաղատութիւն հայրենեացն, նախան-
ձաւոր եղեալ ընդ նոսա 'ի գործն գեղե-
ցիկ և 'ի լաւ։ Այսպէս ուրեմն Բրուտոս
ապրեցոյց զԱնտոնիոս, որ և 'ի ժամուն
զահի հարեալ՝ ծպտեալ այնպէս իբրև զմի
'ի ռամկաց 'ի փախուստ գնայր։

Իսկ յետ այնորիկ Բրուտոս և ընկերք
նորա չոքան եկին 'ի Կապետովկիոն արիւ-
նաշաղախ ձեռօք, և ցուցեալք ևս մերկ
զսուրս իւրեանց՝ հրաւէր յաղատութիւն
կարդային քաղաքացեացն։ Բայց անդ
զառաջինն էր լսել ոչ այլ, բայց աղաղակ
և գոչիւն. իսկ յայսկոյս յայնկոյս փարա-
տեալ վազել խառնամբոխին յետ գործոյն
դառնութեանն՝ սաստիկ ևս յուզեաց զաղ-
մուկ շփոթիցն. այլ իբրև տեսին՝ զի 'ի մահ
վարեն և ոչ զոք, և աւարառութիւն չէր
ամենևին իրաց հրապարակին, յայնժամ
ծերակոյտն և բազումք ևս 'ի խուժանէն
քաջալերեալք եկանէին և նոքա 'ի վեր 'ի
Կապետովկիոն առ մարդիկն։ Իբրև բազ-
մութիւնն խմբեցաւ, հրապարակախօս լի-
նէր Բրուտոս. խօսէր բանս յանկուցիչս
խուժանին և ճահաւորս նահատակութե-
գործոյն։ Կ,մա ծափս հարեալ առհասա-
րակ՝ ձայն կարդային ի՛ջանել 'ի վայր. ոք

և իջին իսկ քաջալերեալք 'ի հրապարակն. ապա զհետ նորա և այլք համախուռն փոխեցան։

Անդանօր Բրուտոս պար առեալ յաբանց բազմաց աւագաց և մեծապէս պատուով ածեալ 'ի նոցանէն 'ի բարձանց անտի՝ գայր հասանէր մինչև 'ի բեմն։ Իսկ յայն տեսիլ բազմութեան ժողովոյն, խառնամբոխ խուժան ռամկին թէպէտ և ցանգ պատրաստ յաղմուկս շփոթից, խորշեցաւ եկաց. և այնպէս համեստ և լռիկ սպասեալ մնային ելից իրացն։ Ապա յառաջ մատուցեալ Բրուտոս, և առհասարակ հանդարտեալք ունկն դնէին բանից. այլ թէ ոչ ամենեքին նոքա հաճեցան միաբան ընդ եղեալսն, յայտնապէս ցուցին նոքա. քանզի 'ի սկսանել անդ Կինայի 'ի բանս իւր և յամբաստան կալ զԿեսարէ, 'ի սրտմտութիւն բարկութեան բրդեալք և յիշոցնատուք ևս լինէին Կինայի, որպէս զի և ալքն յայնժամ միւսանգամ չոքան ապաւինեցան 'ի Կապետովլիոն. ուր և զանգիտեալ Բրուտոսի 'ի սաստիկ պաշարմանէն, արձակէր 'ի բաց զականաւոր մարդիկն՝ որ ընդ նմա անդր ելեալ էին. զի մի որ բաժանորդ չեղեն գործոյն՝ վտանգեսցին ինչ։

Բայց 'ի վաղուեան աւուրն ժողովեալ ծերակուտին 'ի տաճարին Երկրի, իբրև անդանօր Անտոնիոս և Պղանկոս և Կիկերոնն ատենախօսք եղեն յաղագս միաբանութեան սիրոյ, զի մոռացօնք այ-

նուհետև լինիցին անցիցն անցելոց, հաճոյ թուեցաւ ծերակուտին ոչ միայն անպատուհաս զարան արձակել, այլ զի և հիւպատոսք ինքնին խորհուրդ 'ի մէջ առցեն յայնժամ վասն պատուելոյ զնոսա։ Իբրև սահմանեցան իրքն, արձակեցաւ և ատեանն։ Ապա Անտոնիոս զիւր որդին 'ի պատանդի առաքեալ 'ի Կապետովլիոն, այնուհետև գայր ինքեանք Բրուտոս հանդերձ ընկերօքն. և անդ միահամուռ զմիմեանց աջոյն կալեալ՝ այր ընկերի գիրկս ածէր, տայր Անտոնիոս կոչունս Կասսիոսի, և Լեպիդոս Բրուտոսի, սապէս և այլոցն՝ այր ոք 'ի մտերմաց անտի նոցա և 'ի բարեկամացն։

Իսկ առ վաղիւն ընդ այգս այգուն միւսանգամ խմբեալ Սինկլետոսին, նախ առաջին շուք եդեալ մեծարէին զԱնտոնիոս, զի այնպէս հանդարտեալ զինչոյց նա զսկիզբն զքաղաքին մարտի. պպա 'ի գովութիւն առան Բրուտոս և որք մերձն կային, իսկ յետ այնորիկ բաշխ առնէին գաւառաց. Բրուտոսի 'ի ձեռս ետուն զԿրետէ, և Կասսիոսի զԼիբիա. Տրեբոնիոսի զԱսիա. և Կիմբրոսի զԲիթիւնիա. և միւսում՝ Բրուտոսի զԳաղատիա՝ որ առ Երիտանոսիս։ Ապա բանք 'ի մէջ անկան և վասն կտակին և յուղարկաւորութեանն Կեսարու. և խնդրէր Անտոնիոս աշխարհաւ ընթեռնուլ կտակին, և գիսկանն Կեսարու ոչ 'ի ծածուկ և անփառունակ յուղարկաւորութիւն տալ, զի մի և յայն,

մանէն գրգռեսցի խուժանն. բայց պնդա-
գոյնս ընդդէմ դարձաւ Կասսիոս։

Իսկ Բրուտոս ձեռն տայր Անտոնիոսի,
յորում և թուի միւսանգամ մեղանչել
Բրուտոսի։ Քանզի յառաջ խնայեալ
Անտոնիոս, բամբասեցաւ՝ զի պատուար
ած նա ընդդէմ դաւանացն զայր թշնամի
զվայրագ և անկռուելի. դարձեալ և յայն-
ժամ ձեռն տուեալ Անտոնիոսի 'ի բան
յուզարկաւորութեան թաղմանն, զամե-
նայնն միանգամայն աղարտեաց։ Քանզի
նախ առաջին յիւրում կտակին սահմա-
նեալ Կեսար տալ միում միում 'ի հռո-
մայեցւոց գրամակշիռս եօթանասուն և
հինգ, դարձեալ և 'ի նմին կտակի թողոյր
նա ժողովրդեանն զդրախտս իւր՝ որ յայն-
կոյս գետոյն ուր է այժմ տաճար Բախ-
տին. ուստի և մեծապէս յայնժամ սրբ-
տակաթ առ Կեսար լինէին քաղաքացիք։
Իսկ յետ այնորիկ և 'ի բերել դիականն
Կեսարու 'ի հրապարակ անդր, յայնժամ
Անտոնիոս ըստ սովորութեանն կարդայր
նմա ներբող։ Իբրև ետես զի շարժեցաւ
խուժանն 'ի բանից անտի, ապա և 'ի գութ
խանդաղատանաց կրթէր զնոսա՝ և առեալ
կալեալ զարիւնաթաթաւ զպատմուճանն
Կեսարու, մեկնէր պարզէր և ցուցանէր
հրապարակին զծակոտուած և զանբաւու-
թիւն զնոցուածոցն։ Իբրև զայն տեսին՝
առհասարակ յայնժամ աղմուկ յուզե-
ցաւ. կէսք բողոք բարձեալ գոչէին 'ի մահ
զմարդասպանն վարել. իսկ կէսք (որպէս

յառաջ գործեցին վասն Կղոդիոսի խազ-
մարարք խուժանին), կորզեալ 'ի կրպակաց
սանդուղս և տրապիզս և 'ի մի վայր կու-
տեալ շեղջեալ՝ խարոյկ մեծ գործեցին. և
'ի վերայ զդիակնն հանդուցեալ՝ անդանօր
այրէին ընդ մէջ մեհենից բազմաց և ընդ
մէջ բազում անմատոյց և անդրժելի վայ-
րաց ապաստանի։ Իբրև հրոյն բոցք արձա-
կեցան, 'ի կողմանց կողմանց վազեալ մար-
դիկն 'ի խարոյկ անդր և առեալք կոր-
զեալ խանձողս, ընթանային 'ի տունս սպա-
նողացն հրձիգ առնել զնոսա. բայց նո-
ցա աճապարեալք ամրացան և զերծան
'ի վտանգէն։

Իսկ էր յայնժամ Կիննաս ոմն անուն
քերթող, չէր ինչ նա բաժանորդ խորհրդ-
դոյն, նա և բարեկամ էր նա Կեսարու.
թուէր սմա յերազի հրաւիրեալ յընթրիս
'ի Կեսարէ, և յանձն չառնուլ երթալ.
սակայն և ժառեալ մեծապէս և զձեռանէն
ևս կալեալ Կեսարու՝ ածել տանել զնա
'ի վայր մի անդորր և խաւարին, և դժկա-
մակս և յապուշ հարեալ զհետ ընթանալ
նմա։ Յերազոյ ասսի դէպ լինէր առն ջեր-
մամբ տապանալ զդիշերն ողջոյն, բայց ընդ
առաւօտն ոչինչ հանդարտեալ վերջանալ
'ի յուզարկաւորութենէն Կեսարու, մինչ-
դեռ արտաքս զդիակնն ածէին, նա չոքաւ
եմուտ 'ի խուան խուժանին 'ի ժամուն՝
յորում դառնացեալ ևս էր արտմտութիւն
խուժանն. իբրև տեսին զայրն, և կարծե-
ցին ո՛չ զայլ ոք Կիննաս, այլ զնոյն զայն

որ վայր մի յառաջ 'ի Ժողովին Թշնամանեալ խակ էր զԿեսարը, 'ի վերայ դիմեալ գէշ արկանէին զնա։

Յայմանէ զահի հարեալ Բրուտոս և ընկերքն, տեսին զի և Անտոնիոս փոխեցաւ, ելին մեկնեցան 'ի քաղաքէն. առաջին զտեղի կալան յԱնտիոն. ասէին գառնալ միւսանգամ 'ի Հռոմ 'ի հանդարտել բարկութեանն. ակն ունէին զի հեշտեաւ հեզասցի խուժանն՝ անհանձար որեար և վաղվաղակ 'ի Թափ կրկցն. մանաւանդ զի և զծերակոյտն տեսին յիւրեանց կողմն. որ Թէպէտ և զանց արար՝ որ զԿիննան խողխողեցին, բայց յուզէր խնդրէր և ըմբռնէր զորս միանգամ խանձողք 'ի ձեռս դիմեցին 'ի տունս նոցա։ Առ այս դարձեալ՝ զի և Ժողովուրդն ինքնին խոժոռեալ ընդ Անտոնիոս, իբրու որ 'ի միապետութիւն անդր կրթեալ էր, անձկային Բրուտոսի և դէտ ակն կալեալ մնային գալստեան նորա, զի և իբրև զօրավար պարտ էր հանդէս տալ խուժանին զտեսարանացն։

Բայց Բրուտոսի լուր առեալ զի բազումք 'ի զինուորացն Կեսարու՝ որ և գեոին և քաղաքս ևս առեալ էին 'ի նմանէ, դարանակալ են նմա, և այր ըստ առնէ տակաւ սպրդին 'ի Հռոմ քաղաք, ոչինչ համարձակեցաւ երթալ անդր։ Սակայն և Ժողովուրդն 'ի բաց կալ նորա՝ վայելեաց 'ի հանդէսս տեսարանացն մեծապէս շքով և անհնարին ծախու։ Քանզի և գնոց գընեալ նորա գաղանս բազում թուով, պա-

տուէր եա և ոչ զմի 'ի նոցանէն կամ պարգևել կամ պահել ունել, այլ զամենայն միանգամայն 'ի պէտս վարել հանդիսին։ Եւ ինքն ինքեալ 'ի Նէապոլիս՝ խօսեցաւ և սակ արկանէր ընդ բազմաց արուեստագիտաց Դիոնիսեան խաղուցն. առ այս՝ և վասն Կանուտիոսի ուրումն քաջափորձ առն 'ի Թատերս՝ առեալ գրէր առ բարեկամս իւր, զի ածեալ հաւանեցուսցէն զնա յառնել երթալ 'ի Հռոմ քաղաք. զի և էր իսկ բռնութեամբ վարել զայր ոք Հելլենացի. և գրեաց եա առ Կիկերոնն, աղաչէր՝ անպատճառ երթալ կալ նմա ինքնին 'ի զնին տեսարանացն։

Այսոցիկ այսպէս եղելոյ, անդուստ փոփոխութիւն այլ 'ի վեր երևեցաւ 'ի գալստենէ անտի Կեսարու կրսերոյ։ Էր սա Թոռն քեռն մեծին Կեսարու. որ և գրով կարգեալ էր զսա իւր որդի և ժառանգ. իսկ 'ի մեռանել նորա՝ էր պատանին յԱպողոնիա՝ պարապեալ 'ի ճարտասանութեան. և անդ ակնկալեալ մնայր Կեսարու մեծի՝ որ հաստատեալ իսկ էր խաղալ վաղվաղակի ընդդէմ Պարթևաց։ Իբրև լուաւ պատանին զբօթ մահուն, էլ չոքաւ 'ի Հռոմ և զանուն առեալ զԿեսարու՝ յինքն զժողովուրդն յանկուցանէր. և բաշխեալ քաղաքացեացն զՀրիտակ արծաթոյ զսպանելոյն, իւրով իսկ հերձուածոնն նկուն առնէր զԱնտոնիոս, և բաժանեալ ևս ինչս՝ խմբէր առ իւր զբաղումս 'ի զօրացն Կեսարու։

Եւ քանզի և Կիկերոնն ոխերիմ Անտոնիոսի՝ կուսակից գտաւ պատանեւոյն Կեսարու, անդուստ Բրուտոս սոստկապէս յանդիմանէր զնա. գրէր՝ եթէ Կիկերոնն ուրեմն ոչինչ գժկամակի ունել Տէր, այլ զանգիտէ միայն յոխերիմ տեառնէ. և կրթեալ է նա 'ի ծառայութիւն ամոք և մարդասէր՝ ըստ գրոյն իւրոյ և ըստ բանիցն, եթէ՝ Այս Կեսար այր լաւ է։ Եւ յաւել ասել Բրուտոս. "Այլ սակայն մերն նախնիք՝ երբէք և ոչ հեզոց հանդուրժեցին տերանց"։ Իսկ վասն անձին իւրոյ տայր գիտել, եթէ ցայն վայր՝ ոչ 'ի կռիւ և ոչ 'ի խաղաղութիւն հաստատեալ է, այլ թէ՝ երբէք ոչ կալ 'ի ծառայութեան. և զարմացեալ ևս է՝ զի ինքնին Կիկերոնն զանգիտէ 'ի քաղաքին մարտէն՝ յորում վտանգք մեծամեծք, և չզանգիտէ յանարգաբար և յանփառունակ խաղաղութենէն. և թէ՝ 'ի վարձ փոխարինի մերժելոյ իւր զԱնտոնիոս 'ի բռնաւորութենէն, ինդրէ նա բռնաւոր զԿեսար կարգել։ Այսպիսի ոք եկաց Բրուտոս յառաջին թուղթս իւր։

Բայց յայնժամ կէաք կուսակիցք պատանեւոյն Կեսարու, և կէաք՝ Անտոնիոսի, և զօրականք ինքնին 'ի վաճառաշահութեի եղեալք՝ իբրև 'ի ձայն մունետկի՝ այնպէս երթային յարէին որ միանգամ շատ 'ի ներքս մատուցանէր նոցա։ Ուստի և Բրուտոս յուսակտուր այնուհետև՝ եդ 'ի մտի թողուլ զքանեալ զԻտալիա. և ընդ ցամաք

անցեալ ընդ Լեւկանիա չոքաւ յԵղէա ծովահայեաց։ Իբրև անդուստ հանդէր-ձեցաւ Պորկիա դարձ 'ի Հռոմ առնել՝ գուն գործէր ունել 'ի ծածուկ զմեծապէս կիրս սրտին. սակայն և պնակ մի նկարու՝ մատն լինէր կրիցն նորա. Թէպէտ և էր ինքնին Պորկիա այրասիրտ։ Իսկ ունէր նկարն վէպ զՀելենացւոց, յորժամ զՀեկտոր յուղարկէր Անդրոմաքէ՝ և առեալ զմանկիկն 'ի ձեռացն Հեկտորայ, և դարձուցեալ զաչսն հայէր 'ի Հեկտոր անդր։ Ապա 'ի պնակին յայնմիկ զպատկեր ձիշդ-գրիա զիւրոց կրիցն տեսեալ Պորկիա, յարտասուս ցնդեցաւ. և ստէպ յաւուրն երթեալ առաջի պնակին, արտասուս իջուցանէր։ Ոյր աղագաւ և Ակիլիոս ոմն բարեկամ Բրուտոսի՝ բարբառեցաւ առ նա զտողն Անդրոմաքեայ առ Հեկտոր 1։ "Այլ ինձ դու ով Հեկտոր՝ հայր ես և մայր արգոյ և հարազատ և լծակից առոյգ"։ Իսկ Բրուտոս ժպտեալ՝ ետ պատասխանի. "Այլ ինձ չիք ասել առ Պորկիա զՀեկտորայ զտողն. եթէ՝ դու յոստայնն և յաղէկատն. և հրամանն տացես դու աղջկանցդ։ Քանզի թէպէտ և 'ի մարմինն իւր ոչինչ յաջողեսցի Պորկիա իբրև զմեզ 'ի հաւասար նահատակութիւն քաջութեան, սակայն և հոգւոյն վասն հայրենեացն՝ արութեամբ քաջութեամբ առաքինասցի դա իբրև զմեզ"։ Զայսոսիկ արձանագրեաց մեզ Բիւբղոս որդի Պորկեայ։

Ապա յուղի անկեալ Բրուտոս՝ չոքաւ

յԱԹԷՆս. և անդանօր մեծապէս հիւրընկալութիւն գտեալ 'ի ժողովրդոց 'ի ձայն ցնծութեան և 'ի շուք հրովարտակաց. եմուտ լուծանել առ ումեմն 'ի հիւրոց անտի։ Անդանօր հպատակ եղեալ 'ի լուր վարժից Թէոմնիստեայ Ակադեմեան, և Կրատիպպոսի Ճեմականի, և խնամասիրեալ 'ի միասին ընդ նոսա, կարծէր իմն այնպէս գլխովին պարապորդ և անգործ. սակայն և գաղտ 'ի ծածուկ պատրաստէր կազմէր նա 'ի մարտ պատերազմի։

Քանզի և առեալ արձակեաց զԵրոստրատոս 'ի Մակեդոնիա, յանկուցանել որ անդ զվերակացուս զօրականին. և ինքն սպաս հարեալ որսայր զդասս պատանեաց եկեալ 'ի քաղաք անդր 'ի Հռովմայ 'ի հրահանգս վարժից. յորոց մի էր և ինքնին Կիկերոնի որդին. զոր և մեծապէս 'ի գովութիւն առեալ Բրուտոս, ասէր՝ "Յոյժ հիացեալ եմ ընդ պատանին և յարթնութեանն նորա և 'ի քուն նորա. զի այնպէս ազատանձնեայ է և բռնաւորատեաց,,.

Ապա յայտնապէս այնուհետև բուռն հարեալ Բրուտոսի 'ի գործ իւր, իբրև լուր էառ՝ զի նաւք Հռոմայեցւոց գիմեալ գան յԱսիոյ լի գանձուք, և է ընդ նոսա զօրավար այր լաւ և ծանօթ իւր, ջոքաւ ընդ առաջ նորա մօտ 'ի Կարիւատոն։ Անդանօր խօսեալ ընդ նմա, ածէր հաւանեցուցանէր տալ նմա 'ի ձեռս զնաւական, և զնա առեալ բազում շքով հիւրընկալէր. զի և էր իսկ օրն՝ Ծննդոցն Բրուտոսի։ Իսկ

'ի խրախուն անդ ժամ հասեալ բաժակին, նուէրս հանէին 'ի յաղթութիւնն Բրուտոսի և յազատութիւնն Հռոմայեցւոց։ Անդուստ և Բրուտոս ինքնին՝ հաստատեալ և ևս զկոչնականն, խնդրէր բաժակ մեծ. և առեալ 'ի ձեռին, 'ի ձայն բարձր՝ և ոչ մի ինչ 'ի պատճառաց դիրդեալ՝ գոչեաց յանկարծ զտողն. "Այլ զիս 'ի կորուստ օրահաս մատնեաց, և Ղէտուվայ որդին 'ի մահ վարեաց"։ Առ այս՝ և պատմեն՝ եթէ յելանել իւրում 'ի մարտ վերջին 'ի Փիլիպպէ, նշան բաշխէր զօրականին իւրոյ՝ անուն Ապոլլոն։ Որ ասագաւ համարին և զբարձրաձայն նորա գոչել յայնժամ, նախաքարոզ ձայն աղէտից անձինն։

Յետ այսորիկ տայր նմա և Անտիստիոս յիսուն բիւրս դրամակշռոց՝ զոր տանէր յԻտալիա. յայնժամ և առհասարակ զօրականք Պոմպէի աստանդական թափառականք 'ի Թեսսաղիա՝ մոտագիւրագոյնս եկեալ խմբեցան առ Բրուտոսի. առ Էհան նա և 'ի Կիլիկիայ հինգհարիւր այրուձի, զոր առեալ ածէր նա յԱսիա առ Դոլոբելլաս. ապանաւեալ 'ի Դեմետրիադէ՝ ուստի զէնս շատ բառնային տանել Անտոնիոսի՝ որ կերտեցան նոքա յառաջադոյն 'ի հրամանէն Կեսարու մեծի 'ի մարտ ընդդէմ Պարթևաց, հասեալ կալաւ զնոսա Բրուտոս։ Առ այսոքիւք՝ և 'ի Հորտենսիոսէ զօրավարէ առեալ զՄակեդոնիա, և միաբանեալ խմբեալ ընդ

նմա թագաւորք և կուսակալք շուրջանա-
կի, լուր առնոյր զի Գայիոս եղբայր Ան-
տոնիոսի ջու արարեալ յԻտալիոյ՝ խաղայ
շտապաւ գալ միանալ ընդ զօրուն Գաբի-
նիոսի՝ որ յԵպիդամնոս և յԱպողոնիա։

Ապա աճապարեալ Բրուտոսի հասա-
նել կանուխ տիրանալ զօրուն այնմիկ,
փութապէս առեալ զզօրականն՝ անկաւ
յուղի 'ի վայրս դժուարինս 'ի ձիւնաբերան.
և անդ հարուստ միջոցաւ անցեալ տարա-
դէմ հեռանայր նա յաղխէ ամբարոցն։
Իբրև մերձ եղև յԵպիդամնոս, անգանիր
'ի քրանաջան վաստակոցն և 'ի ցրտոյն ըմ-
բռնեցաւ յախտ շնչաղց։ Իսկ ախտ այս
բնաւորեցաւ մանաւանդ յանասունս և 'ի
մարդիկ՝ որք 'ի ձիւնաբերան աշխատես-
ցեն. կամ զի ջերմութիւնն ինքնին փա-
կեալ արգելեալ համբուն 'ի ներքս 'ի պա-
ղելոյ անտի մարմնոյն և խտանալոյն 'ի վե-
րին երեսն, արագ արագ ծախեսցէ զկե-
րակուրն. կամ զի նրբին և բարկ ոգի
ձեանն լուծելոյ՝ անցեալ թափ 'ի ներքս 'ի
մարմին անդր՝ վարատեալ վանեսցէ ար-
տաքս միանգամայն զամենայն ջերմութի.
քանզի և թուի թէ նոյն այն ջերմութիւն՝
շնչեալ յելն իւր առ 'ի ցրտոյն՝ որում
պատահէ 'ի վերին երեսս մարմնոյն՝ քիրան
վիժեցուցանէ յախտին յայնմիկ։ Այլ
յաղագս այսորիկ այլուր ճոխագոյն ևս
պայքարեալ է մեր։

Ապա յայնժամ Բրուտոս անկեալ
նուալեալ 'ի քաղցուն, և գտեալ և ոչ

առ ումեք 'ի բանակին կերակուր, բռնա-
գատեցան ծառայքն գիմել առ Թշնամին,
և մերձեալք առ դուրսն խնդրէին հաց 'ի
պահապանացն։ Նոցա լուեալ զսխան
Բրուտոսի, ինքնին եկեալ մատուցանէին
նմա հաց և ջուր. ոչ փոխարէն և Բրու-
տոս՝ յառնուլ քաղաքին մարդասիրէր ոչ
առ պահապանսն միայն, այլ 'ի մեծարանս
նոցա՝ և առ ամենեսեան առհասարակ։

Արդ Գայիոս Անտոնիոս մեսեալ յԱ-
պողոնիա, անդր հրաւիրէր կոչէր զզօրա-
կանն՝ որ շուրջ զվայրոքն, բայց քանզի
դէմ եդեալ գնային նոքա առ Բրուտոս,
և լուր ևս առ եթէ և Ապողոնիացիք կու-
սակիցք են նմա, թողեալ ապա զքաղաքն
զայն՝ չու արար 'ի Բուլթրոտոն. և առա-
ջին անդ յուզուջ կորուսանէր գունդս ե-
րիս՝ 'ի սուր սուսերի մաշեալ Բրուտոսին։
Ապա հանդերձեալ կազմել բռնութեամբ
հասանել ունել վայրս առ Բիւղիդեաւ՝
զոր ունէին Թշնամիք, և մարտ յարդարեալ
ընդ Կիկերոնի յաղթեցաւ. քանզի և
ունէր իսկ Բրուտոս զսա 'ի զօրավար, և 'ի
նորա ձեռն յաջողեցաւ նա 'ի նահատա-
կութիւնս բազումս։

Այլ ապա Բրուտոս 'ի վերայ հասեալ
Գայիոսի 'ի Ճախին վայրսն, և 'ի մեծ հե-
ռաստան վարաստեալ զնա, չետ թոյլ ի-
րոցն անկանել 'ի վերայ. այլ այնպէս պա-
տեալ պաշարեալ զնա այրուձիոնն, հրա-
ման տայր խնայել 'ի զօրականն, իբրու որ
'ի մօտոյ ի ուր ի ցեն գլխովին. որ և կատա-

րեցաւ իսկ. քանզի անձնասուր այնուհետև լինէին նոքա նմա հանդերձ զօրավարաւն. ուստի և եղև յայնժամ Բրուտոս բանակ մեծ։ Իբրև այնպէս հարուստ ժամանակ 'ի մեծապէս պատուի կալաւ նա զԳայիոս, և ոչ զնշանակս աւագութեան նորա հանէր 'ի նմանէն. Թէպէտ և Կիկերոնն ինքնին և այլք շատք՝ որպէս ասեն՝ գրէր անդուստ 'ի Հռովմայ և խրատ տայր բառնալ զկեանս առն։ Բայց ապա 'ի ծածուկ բանագնաց եղեալ նորա ընդ զօրապետաց և աղմուկ յուզեալ, առեալ զնա Բրուտոս եդ 'ի նաւ մի 'ի պահ զգուշութեան։ Իսկ յայնժամ զօրականք՝ որ ուծացեալք ջոքան յԱպողոնիա, կոչէին կարդային միւսանգամ զԲրուտոս. Իբրև պատասխանի ետ Բրուտոս՝ եթէ ոչ այն է հայրենի սովորոյթ Հռոմայեցւոց. նա՛ նոցա արժան է ինքնին գալ առ իւրեանց զօրավար և ողբել զցաւուն նորա, զոր իւրեանց ինասուն գրգռեցին, ապա նոքա եկեալ առ նա և յողբ անկեալ, թողութիւն գտանէին 'ի Բրուտոսէ։

Բայց յետ այսորիկ հանդերձեալ Բրուտոսի խաղալ յԱսիա, լուր հասանէր նմա խոփոխութեանն եղելոյ 'ի Հռովմ։ Քանզի Կեսար կրսեր հզօրացեալ 'ի Սինկղիտոսին ընդդէմ Անտոնիոսի և վարեալ վանեալ զնա յԻտալիոյ, արհաւիրս արկանէր խնդրէր հիւպատոսութիւն ընդդէմ օրինաց. և ունէր պահէր զօր սաստիկ, որ և ոչ պէտք ինչ էին յայնժամ քաղաքին։

Իսկ իբրև եռեաս նա՝ զի խոժոռեցաւ Սինկ-
ղիտոսն, և զի և ակնկառոյց ևս 'ի Բրու-
տոս եղեալ՝ վՃիռ ետ և հաստատեաց նմա
զկուսակալութիւնն, զահի հարաւ. և
հրեշտակս առ Անտոնիոս արձակեալ՝ հրա-
ւէր 'ի բարեկամութիւն կարդայր նմա. և
կարգեալ կացուցեալ զզօրականն շուրջ
զքաղաքաւն, առնոյր զհիւպատոսութեան
բարձն՝ դեռ ևս պատանի. քանզի զքսա-
նամենեակ միայն էր, որպէս ասէ իսկ ինքն
յիւր Ցիշատակարանն։

Իբրև այս եղև, անգէն դատաստան մա-
հու զԲրուտոսէ բանայր յատենի և զար-
բանեկաց նորա, զի սպանին նոքա առանց
քննութեան դատաստանի զայր նախաթոռ
և յոյժ աւագամեծար. և կացոյց ամբաս-
տան Բրուտոսի զԼեւկիոս Կորնիփիկիոս,
և ամբաստան Կասիոսի՝ զՄարկոս Ագրիպ-
պաս։ Իբրև նոքա չերևեցան, դատապարտ
եղեն. զի ստիպեցան դատաւորք 'ի վերայ
ածել զդատակնիքն։ Եւ պատմեն՝ 'ի ձայ-
նել քարոզին 'ի բեմէն զԲրուտոս ըստ սո-
վորութեանն յատեան դատաստանի, ան-
դուստ բազմութեան ժողովոյն յայտնա-
պէս հեծել և յոգւոց հանել. և թէ՝ ե-
րևելի որեարն անդանօր գլխակոր ընդ եր-
կիր պշնոյր 'ի խոր լռութեան. և թէ՝ և
Պոպլիոս Սիլիկիոս արտասուս հեղոյր, որ
աղագաւ յետ սակաւու ընդ տարագրեալ
մահապարտն համարեցաւ և նա։ Իսկ յետ
այնորիկ միաբանեալ երեքին նոքա ընդ մի-
մեանս կեսար և Անտոնիոս և Լեպիդոս,

բաժանէին յիւրեանս զգաւառսն. և մահուանս և տարագրութիւնս վճռաւ 'ի ներքս բերին երկերիւր քաղաքացնոց, յորս և 'ի մահ վարեցաւ ինքնին Կիկերոնն։

Գոյժ այսոցիկ հասեալ 'ի Մակեդոնիա, յայնժամ Բրուտոս ստիպեալ 'ի հարկէն, առեալ գրէր առ Հորտենսիոս 'ի մահ վարել զԳայիոս Անտոնիոս 'ի վրէժխնդրութիւն արեանն Կիկերոնի և միւսոյն Բրուտոսի. մին 'ի նոցանէ բարեկամ էր նորա, և միւսն՝ մերձաւոր ևս զարմիւ։ Ուստի ապա յետ ժամանակաց ձերբակալ Անտոնիոս զՀորտենսիոս արարեալ 'ի Փիլիպպէ, ետ փողոտել զնա առ շիրմին եղբօրն իւրոյ։ Իսկ յաղագս մահուն Կիկերոնի՝ ասէր Բրուտոս՝ զամօթի մանաւանդ հարկանել 'ի պատճառն մահուն, քան թէ ախտակից ընդ մահն լինել. և թէ՝ շատ այպանէ նա զբարեկամն՝ որ անդ 'ի Հռոմ, իբրև կան դոքա 'ի ծառայութեան առ ինքասուն անձանց՝ քան եթէ բռնաւորացն. և բերեն ժուժան դոքա տեսանել ակն յանդիման զայն ինչ, զոր և ոչ լսել անգամ ժուժել արժան էր նոցա։

Ապա անցեալ յԱսիա զօրու ծանու Բրուտոս և 'ի զէն 'ի զարդ գեղեցիկ վառեալ, հանդերձէր կազմէր տորմիղ նաւաց 'ի Բիւթիւնիա և մօտ 'ի Կիւզիկոն, և ընդ ցամաք յուղի անկեալ ընդ քաղաքս քաղաքս, յանդորրու կացուցանէր և ունկընդրութիւն տայր կուսակալացն, և ա-

ռաքեաց յԱսորիս՝ կոչէր առ ինքն զԿասսիոս յԵգիպտոսէ. խելամուտ առնէր՝ եթէ զիարդ նոքա աստանդեալք գնան յածին զոր խմբել՝ վանել հարկանել զբռնաւորսն, և յազատութիւն 'ի վեր զհայրենիսն հանել, և ոչ եթէ անձանց ինչ տէրութիւնս պատրաստել. ուստի և արժան այնպէս է նոցա՝ յուշ ածել հաստատութեամբ զառաջարկութիւն խորհրդոյն ոչ ինչ տարագէմք յԻտալիոյ. նա՝ և արագ արագ անդր հասեալ ձեռն տալ քաղաքին։

Հաւանեցաւ Կասսիոս և իջեալ 'ի սահմանացն, ընդ առաջէր նմա Բրուտոս. և պատահեցան նոքա այր ընկերի մօտ 'ի Զմիւռնա. և այն առաջին նուագ եղեն նոքա ընդ միմեանս՝ յորմէ հետէ 'ի Պիրէան մեկնեցան այր յեղբօրէ՝ մին յԱսորիս և միւսն 'ի Մակեդոնիա։ Եւ խնդացին երկոքին նոքա և մեծապէս քաջալերեցան տեսեալ զմիմեանց զպատրաստութիւն զօրուն։ Քանզի որք յԻտալիոյ մեկնեալք իբրև վտարանդիք ոմանք՝ հէք և չուառականք, անինչք և անզէնք, չէր նոցա և ոչ նաւ մի կազմեալ, և ոչ զօրական մի, թող թէ քաղաք մի 'ի կողմն նոցա. և ապա 'ի վերայ անցեալ ոչինչ հարուստ ժամանակ, դասն նոքա վառեալք կազմեալք 'ի նաւս և 'ի հետևակազօր և յայրուձի և յինչս՝ քաջ իսկ բաւականք մարտ դնել կռուել 'ի վերայ տէրութեանն Հռոմայեցւոց։

Ընդ Կասսիոս զզուգահաւասարն կամէր առնուլ պատիւ և տալ Բրուտոսի,

սակայն Բրուտոս կանխէր զնա. ստէպ յայց
ելանէր նմա, զի նա էր երիցագոյն հասա-
կաւ, և մարմնով ոչինչ այնպէս յաջողեալ
յաշխատութեան վաստակս։ Եւ էր ինք-
նին Կասսիոս համարեալ այր յաջողակ
յոյժ յիրս պատերազմի. այլ անհամբոյր
և ցասմնոտ, և որ ահ արկանելով խնդրես-
ցէ տիրել. սակայն և առ կենակիցսն բնա-
ւորեցաւ նա առաւել ինն զուարճախօս և
ծաղրածու։ Իսկ զԲրուտոս ասէն՝ 'ի սակս
առաքինութեանն՝ փարելի խուժանին, և
յոյժ սիրելի բարեկամացն, և արանց լա-
ւաց զարմանալի, իսկ ատելի և ոչ նոցուն
թշնամեացն անգամ։ Քանզի և հեզ էր
նա առաւել և մեծանձն, և անվանելի 'ի
կրից ցասմանն և 'ի հեշտութենէն և յին-
չաքաղցութէն, ողջախոհ մտածութեամբ
անդրդուելի ցանգ կացեալ մնացեալ 'ի
լաւութեան և յարդարութեան։ Եւ մե-
ծապէս սիրելութիւն և փառս 'ի նեբքս
եբեր նմա ողջմտութիւն հաւատոց նորա.
ոչքան զի և ոչ վասն մեծին Պոմպէի յու-
սային ինչ արդեօք՝ 'ի վանել իւրում զկե-
սար՝ եթէ զիւր զօրութիւնն հպատակես-
ցէ օրինացն, այլ թէ միշտ զբռամբ զիրսն
կալցէ, յանկուցանելով զխուժանն՝ յա-
նուանս ինն հիւպատոսութեան և իշխա-
նապետութեան, կամ թէ իցէ այլ ինչ
աւագութիւն հեշտ և ախորժ։

Իսկ վասն Կասսիոսին՝ սասսիկ առն և
բարկացայտ, այն՝ որ բազում անգամ թողոյր
լքանէր զարդարն վասն օգտակարին, ան-

շուշտ հաստատեալ էին՝ եթէ մարտ է-
գեալ կռուի դա, և աստանդական թա-
փառի գնայ և վտանգաց դիմադրաւէ 'ի
հանդերձել անձին իւրում տէրութիւն,
և ոչ յաղաւորութիւն ինչ յանդորը զքա-
ղաքացիսն հանել։ Քանզի և այլք ոմանք
որ յառաջագոյն քան զնոսա, Կիննասք և
Մարիոսք և Կարբոնէսք, որ 'ի մրցանակ
իւրեանց կռուոյն և յառ և յապուր կար-
գեցին անձանց զՀայրենիսն, սոքա յայտ-
նապէս արդեօք մարտ եղեալ կռուեցան
առ 'ի բռնանալ։ Ալ վասն Բրուտոսին՝
պատմեն՝ եթէ և ոչ թշնամիքն ինքնին
բամբասեցին զնա երբէք վասն փոփոխու-
թեդ այդորիկ. նա՛ զի և Անտոնիոսի՝ լուան
բազումք՝ ասել, եթէ Բրուտոս միայն
դաւ գործեաց Կեսարու ,դրդեալ 'ի քաջու-
թէ և 'ի լաւութէ գործոյն՝ զոր կարծեաց.
իսկ այլք առհասարակ դաւադիրք լինէին
առ ատելութեանն իւրեանց և առ մախա-
նացն ընդդէմ Կեսարու։ Ուստի և Բրու-
տոս ինքնին 'ի գրելոց անտի իւրոց յայտնի
'ի դէմն բերէ, եթէ ոչ 'ի զօրութիւն ինչ
իւր ապաստանեալ կայ, քան թէ յառա-
քինութիւն անդր։ Քանզի և այն ինչ հան-
դերձեալ միսիլ 'ի կռիւն, առեալ գրէր
նա առ Ատտիկոս, եթէ գործք իւր՝ գե-
ղեցիկ վիճակեալ են բախտի. քանզի կամ
յաղթութեամբն յաղատութիւն հանցէ
զՀռոմայեցւոց ժողովուրդն, կամ մա-
հուամբն՝ ազատասցի 'ի ծառայութենէն.
և թէ՝ այլ ինչ իրք առհասարակ յանդոր-

բու էն նոցա և հաստատուն, բայց մի ինչ անյայտ կայ, արդեօք աղատք կէցցեն դոքա, կամ թէ մեռցին։ Առ այս և ասէ դարձեալ՝ եթէ Մարկոս Անտոնիոս զարժանին վրէժ լուծանէ զանմտութեանն իւրոյ. իբրև որ բաւական էր նա դասիլ ընդ Բրուտոսից և ընդ Կասիոսից և ընդ Կասուսիից, չդքաւ յարեցաւ 'ի Հոկտաւիոս. և եթէ զարդիս ոչ նկուն եղեալ պարտեսցի 'ի միասին ընդ Հոկտաւէայ, արագ ապրագ ապա մարտ յուզեսցէ ընդդէմ նորա։ Եւ թուի 'ի բանիդ Ճշգրտագոյնս գուշակել Բրուտոսի վասն հանդերձելոցն։

Իսկ մինչդեռ առ միմեանս 'ի Զմիւռնիա կային երկոքին նոքա, խնդրէր Բրուտոս 'ի Կասիոսէ բաժանորդ լինել բազմամթեր արծաթոյն նորա, քանզի և ամենայն դրամք սպառեցան Բրուտոսի 'ի պատրաստութեան մեծի նաւահանդիսին, որով և զծուէն ողջոյն զնեալքինն՝ գոգցես ընդ բռամբ ունէր։ Իբրև բարեկամք Կասիոսի յանձին չկալան զինդիրն, առ պատճառէ՝ որպէս թէ զինայաբար պահեալն և զյաչաղանօք կուտեալ զարծաթն՝ արժան չէ Բրուտոսի վարել 'ի յանկուցանել զժողովուրդն և յընծայել զզօրականն. բայց Կասիոս առեալ տայր Բրուտոսի զերրորդն արծաթոյն իւրոյ։

Եւ այսպէս միւսանգամ նոքա մեկնեալ այր յընկերէ 'ի գործ իւրաքանչիւր, Կասիոս յառնուլ անդ իւրում զՀռոդոս՝ մարդասիրութիւն և հեզութիւն ոչ բերէր

յանձին. Թէպէտ և 'ի մուտս իւր 'ի կղզին՝ լուեալ վասն անձին անուն Թագաւորի և տեառն, էտ պատասխանի և ասէ. "Ո՛չ Թագաւոր եմ էս և ո՛չ տէր, այլ սպանող և պատուհասադիր տեառն և Թագաւորի,,:

Իսկ Բրուտոս գնացեալ ինդրէր 'ի Ղիւկիացւոց արծաթ և զոր. իբրև անդ Նաւկրատէս հռետոր ժողովրդեանն յապստամբուԹիւն դրդեաց զքաղաքն, և քաղաքացիք ելէլ հասին կալան զբարձունս բլրոցն՝ իբրու քար ընդ ոտն լինել Բրուտոսի, առեալ նա անդէն զայրուձին 'ի ժամ ՀաշՀոյն նոցա՝ արձակէր 'ի վերայ, տապաստ արկեալ 'ի նոցանէն արս վեցհարիւր. և ապա հասեալ կալեալ շէնս և աւանս, արձակէր յաղատուԹիւն առհասարակ զամենեսեան առանց փրկանաց, զմտաւ ածէր մարդասիրուԹեամբն յինքն զժողովուրդն զայն յանգուցանել. իբրև նոքա ստամբակք զարեցան վասն ինասուն՝ և հեզուԹեանն և մարդասիրուԹին երեսս չարարին, նա 'ի ներքս 'ի քաղաք անդր 'ի ՔսանԹոն խաղացուցեալ զքաջամարտիկսն, պաշարմամբ 'ի նեղ արկանէր զնոսա: Եւ գնայ անդանօր գէտ առ երի քաղաքին, և նոքա 'ի լիւղ խորասոյզ անկեալ, այնպէս 'ի փախուստ զերծանէին. սակայն և ցանցս արկեալ 'ի խորս 'ի ծոց գետոյն ըմբռնէին զնոսա. քանզի բոժոժք 'ի ծայրս ուռկանացն կապեալք, անդէն զցանցելոցն նշան արձակէր: Իսկ 'ի գիշերոյն ժամ ՔսանԹացիք արտաքս վազեալ, հրձիգ լինէին

'ի մանդղլոնս Հռոմայեցւոց. սոքա իրազ-
գած եղեալ և հարեալ վանեալ զնոսա 'ի
նեղեալս 'ի պատուարսն, անդուստ հոգին
ուժգնակի առեալ վարէր զՀուրն 'ի պսակս
պատուարացն, և գնայր ծաւալէր բոցն և
ունէր զմերձակայ տունսն. զանգիտեալ
Բրուտոսի վասն քաղաքին, հրաման տայր
զօրականին 'ի Թիկունս հասանել և զՀուրն
շիջուցանել:

Բայց Լիւկիացիք յայնժամ մոլեգինս
յանկարծ բերեալք 'ի Թափոյն՝ բնաւ խե-
լայեղք և յուսակտուրք, զորոց և զկիրս
Թափոյն 'ի ժամուն ճշգրտեացէ ոք ար-
դեօք միայն 'ի մոլեկան իղձ մահուն: Քան-
զի առհասարակ նոքա յայնժամ 'ի միա-
սին ընդ մանկտոյն և ընդ կանանուոյն ա-
զատք և ծառայք և ամենայն չափ հասակի՝
'ի բաց վարեալք վանէին 'ի պատուարաց
անտի զՀռոմայեցիսն՝ որ դիմեալ դային
շիջուցանել զբոցն. և ինքնին նոքա բար-
ձեալք բերեալք պուրակս պուրակս եղե-
գանց և փայտս և որ ինչ այլ լուցկիք՝ ա-
ռեալ ծաւալէին զՀուրն 'ի քաղաքին, ար-
կեալ 'ի նմա զամենայն ճարակ և զնիւթ
զբոցոյն, և այնպէս զուարթացուցեալ
բորբոքէին: Իբրև այնպէս ընթացեալ առ-
հասարակ բոցն՝ պատեաց կալաւ զքաղաքն
ողջոյն, և նշոյլք մեծամեծք հատանէին,
անդուստ Բրուտոս 'ի խոր խոցեալ՝ ձիա-
ւորեալ արտաքոյ շուրջ զքաղաքաւն,
անձկայր խնդրէր ձեռն տալ քաղաքին, և
զձեռան առեալ ձգէր կարկառէր առ

Քսանթացիս անդր, աղերսէր խնայել ապրեցուցանել զքաղաքն, բայց լուաւ նմա և ոչ ոք. խնդրէին առհասարակ զանձանցն կորուստ՝ զիարդ և ի՞նչ. և ո՛չ ոք միայն և կանայք, այլ և տղայ մանկունքն, կէսք ձիչ բարձեալ և գոյժ արկեալ այնպէս վազէին 'ի մէջ բոցոյն, և կէսք 'ի վայր 'ի պատուարաց անտի հոսէին զանձինս, և կէսք ընթացեալք 'ի ներքոյ սուսերաց հարցն մերկեալք զպարանոցս՝ այնպէս ժողէին զհարուածն: Եւ այնպէս ապա աւեր ամայի քանդեալ քաղաքին, անդ տեսանէին և կին մի որ զդիակնացեալ որդոյն կախեալ զպարանոցէն՝ այնպէս 'ի խեղդ ելեալ էր, և ջահ մի ևս բորբոքեալ 'ի ձեռին՝ այնպէս հրձիգ լեալ էր 'ի տունն:

Ապա Բրուտոս ոչինչ հանդուրժեալ 'ի զնին գերաշխարհելի տեսարանին և լուեալ ևս զպատմութիւնն, յարտասուս հատաներ. ետ քարոզ կարգալ, խոստանայր մրցանակ զօրականին՝ որ միանգամ ապրեցուսցէ զայր ոք Լիւկիացի: Եւ ասէն՝ եթէ որք 'ի ժամուն ո՛չ յաջողեցան 'ի փրկութիւն, եղէն ոգիք հարիւր և յիսուն միայն: Այսպէս ուրեմն Քսանթացիք յայնժամ յետ հարուստ ժամանակաց իբրու եթէ 'ի լուսն հասեալք շրջանին սահմանելոյ վասն աւերածին իւրեանց, կրկին միւսանգամ մոլեգնեալք նորոգեցին զաղէտն զնահատարցն իւրեանց: Քանզի զնոյն օրինակ նոքա անդ ուրեմն և 'ի Պարսից պատերազմին հուր հարեալք զքաղաքէն

իւրեանց, անձամբ զանձինս ամայացուցին։

Իսկ 'ի ժամանակին յայնմիկ տեսեալ Բրուտոսի ընդդէմ իւր դարձեալ և զքաղաքն Պատարացւոց, վարանէր տագնապեր հրոսակ տալ քաղաքին. զանդիտեաց 'ի նմանօրինակ ինչ կրից յուսահատութեանն։ Ապա հասեալ կալեալ 'ի կանանց անտի քաղաքին, և նոյնհետայն արձակէր զնոսա ազատս առանց փրկանաց։ Ղոքա դստերք գողով և կանայք աւագաց քաղաքին, եկեալ պատմէին նոցա զմեծապէս զարդարութիւն և զպարկեշտութիւն Բրուտոսի. և ամոքէին հաւանեցուցանէին զնոսա տեղի տալ և յանձն նմա ըզքաղաքն առնել։ Եւ այնպէս առհասարակ ամենեքին խոնարհեալք անձնատուր 'ի Բրուտոս եղեն, հիացեալք ընդ համբոյր բարան և ընդ մարդասէր 'ի վերս քան զակնկալութիւն իւրեանց։ Քանզի ուր Կասսիոս 'ի ժամանակին՝ ստիպեաց առհասարակ զՀռոդացիս առնուլ բերել նմա այր իւրաքանչիւր զոսկին և զարծաթն իւրեանց, և կուտեալ մթերեաց տաղանդս իբրև ութ հազար. և աշխարհաւ դարձեալ տուգանէր զքաղաքն այլ ևս հինգհարիւր տաղանդոյ. իսկ Բրուտոս յայնժամ խընդրեալ 'ի Լիւկիացւոց արանցն՝ միայն հարիւր և յիսուն, հարստահարութիւն և ոչ մի գործեալ ընդ նոսա՝ այնպէս դէմ եդեալ յուղի անկաւ 'ի Յոնիա։

Եւ անդանօր 'ի գործս բազումս նահատակեցաւ նա յիշատակաց արժանիս. պա-

սիւ և պատուհաս 'ի նեղքս բերելով արժանաւորացն։ Բայց ես պատմեցից 'ի նոցանէ ինչ մի՝ որ առաւել նմա հեշտ և բաղձալի, զնոյն և ամենայն լաւորերոյն Հռոմայեցւոց։ Քանզի իբրև մերձ յԵգիպտոս և 'ի Պելուսիոս լինէր մեծն Պոմպէոս, յորժամ նա վրիպեալ 'ի մեծ տէրութենէն փախստեայ գնայր յերեսաց Կեսարուն, յայնժամ հազարապետք արքային Եգիպտոսի՝ որ տակաւին մանուկ, 'ի խորհուրդ մտին հանդերձ բարեկամքն վասն Պոմպէի, և չէր միաբան խորհուրդն. կէսք ասէին՝ առնուլ ժողովել զՊոմպէոս, և կէսք վարել զնա յԵգիպտոսէ։ Իսկ անդանօր Թէոդոտոս ոմն Քիացի վարժապետ վարձկան հռետորականին՝ բնակակից արքայի, և արժանացաւ յայնժամ մտանել 'ի խորհուրդն առ 'ի չգոյէ լաւացն, կայր և ցուցանէր նոցա՝ եթէ որ ժողովել կամին զայրն, և որ դարձեալ՝ վարել հանել զնա, միանգամայն նոքա խորհրդակորոյսք էն. իսկ որ 'ի ժամուն քաջապէս խորհուրդ՝ այն միայն, առնուլ ժողովել զՊոմպէոս և ապա սպանանել. և վախճան առնէր իւրում Ճառին՝ ասելով, եթէ՝ "Մեռեալն ոչ խածանէ,,։ Իբրև ընդ խորհուրդ ընդ այն հաւանեցաւ ատեանն, յայնժամ ապա՝ օրինակ գերարտօսրալից և անակնուանելի աղէտից լինէր Պոմպէոս մեծ, ջա՛ն և գործ հռետորականին և ճարտարախօսութեան Թէոդոտեայ. որպէս և նոյն այն խմաստակ ասէր պանծանօք։ Իսկ

յետ սակաւու 'ի վերայ հասեալ յայն-
ժամ կեսարու, այլք 'ի ինքասակարացն
Պոմպէի զարժանին լուծեալք պատուհաս՝
չարաչար սատակեցան։ Իսկ Թէոդոտոսն
այն՝ վայր մի տակաւին կեցեալ առ 'ի
բախտէն անփառունակ կենաց և մուրիկ և
Թափառական, սակայն և ոչ ծածկեցաւ
'ի Բրուտոսէ՝ 'ի գալ նորա յԱսիա. ա-
ծեալ բերաւ առաջի խմատակն՝ և եղոյծ
զպատուհասն. և այնպէս անուն՝ քան 'ի
կենացն առաւել ևս համբաւեցաւ 'ի մա-
հուանէն։

Բայց Բրուտոս 'ի ժամանակին յայնմիկ
առաքեր կոչէր զԿասիոս 'ի Սարդիս. և
ընդ առաջ գնայր նմա 'ի գալուստ նորա
հանդերձ բարեկամաքն. և անդ առհասա-
րակ զօրականք 'ի զէն 'ի զարդ վառեալք՝
ինքնակալ անուն կարգացին երկոցուն նո-
ցա։ Ամլ զոր օրինակ 'ի նահատակութիւնս
մեծամեծս բնաւորեցաւ պատահել՝ որոց
միանգամ բազում լցեն բարեկամք և զօ-
րավարք 'ի ներքոյ ձեռին նոցա, զնոյն և
յայնժամ պատճառս ինն կագի և գժտու-
թեան յերկոցուն ևս կողմանց յուզեալ
ընդ նոսա, այն ինչ եկին հասին 'ի Սար-
դիս՝ անդէն փուԹանակի մտին փակեցան
երկոքին նոքա 'ի սենեակ մի և զդուրան
առարկեալ և առեալ 'ի ներքս և ոչ զոք,
սկսան նախ դանդատ ունել այր զընկերէ.
ապա և 'ի կշտամբանս կրԹեցան բանքն և
յամբաստանութիւնս. իսկ յետ այնորիկ
և յարտասուս ցնդեալք և կոծ եղեալ

առ ցաւս սրտին, անդ որ արտաքոյ կային բարեկամք՝ զարմացեալ ընդ թափ ցասմանն և ընդ բարբառ ձայնիցն, երկուցեալ զանգիտէին չարի իմիք պատահել. սակայն արգելեալ էին մտանել 'ի ներքս։ Բայց Մարկոս Փառիլիոս՝ նախանձաւոր Կատոնի, ինչ մի կամէր իմաստասիրել 'ի ժամուն ոչ 'ի խոհականութենէն, քան թէ 'ի յանդուգն և 'ի մոլեգին կրից. ուստի և փութացաւ մտանել առ նոսա 'ի ներքս. ընդդէմ դարձան սպասաւորքն և արգելուին. սակայն և սանձել զՓառիլիոս դժնդակ էր՝ յոր զինչ և գործ միանգամ միսէր այրն. այնպէս իմն բուռն և գիմադրաւ էր նա յամենայնի՝ զի և ոչ Սինկղիտոսեան բարձին Հռոմայեցւոց երեսս ինչ առնէր նա. և էր բազում անգամ Կիւնիկեան համարձակախօսութեամբն ամոքէր զկսրթնութիւնն, զի և 'ի խաղ և 'ի ծաղր հատանէին ընդ դժպատեհ կիրս առնն։

Արդ սա այս այր յայնժամ բուռն ապարեալ արանցն, և մղոն տուեալ դրացն, այնպէս միսեալ 'ի ներքս, կերպարանաւոր ձայնիւն կարդայր զտողն՝ զոր 'ի բերանոյն Նեստորի քերթեաց Հոմերոս. "Այլ ինձ ունկն դիք, զի երկոքին դուք կրսեր քան զիս էք". և որ ըստ նմանէն տողք։ Անդանօր Կասսիոս 'ի ծաղր հատանէր. իսկ Բրուտոս 'ի բաց մերժեալ զայրն, անուն կարդայր նմա Կիւնիկեան ծանծաղամիտ, և Կիւնիկեան կերպարանաւոր։ Սակայն և այնպէս վախճան տուեալ յայնժամ նո-

քա կագին իւրեանց , վաղվաղակի 'ի բաց կացին :

Ապա ընթրիս տուեալ Կասսիոս , անդր հրաւէր բարեկամացն կարդայր Բրուտոս . իբրև ակուսքն բոլորեցաւ , անդուստ գայր հասանէր Փաուլինոս լուացեալ , վկայեաց Բրուտոս՝ եթէ անկոչ գայ այրն . և հրամայէր նմա տեղի 'ի թեւս բազմականին . նա բռնութեամբ անց յառաջ և եկն բազմեցաւ 'ի միջակին . և եղեն այն օր կոչունք ոչինչ անբաժ 'ի շնորհաց և յիմաստասիրականէն :

Իսկ յաւուրն երկրորդի հրապարակագոյժ առնէր Բրուտոս զդատապարտութիւն և զվատ անուն զԼեվկիոսի Պեղասայ , ամբաստանեալ իբրև գող 'ի Սարդիացւոց անտի . և էր սա այր Հռոմայեցի կացեալ զօրավար , յոր և վստահ ևս էր Բրուտոս . իբրև զդատակնիքն լուաւ Կասսիոս՝ 'ի խոր խոցեցաւ . քանզի և սակաւ աւուրբք յառաջ նա առանձինն կշտամբեալ զերկուս 'ի բարեկամացն ըմբռնեալ 'ի նոյն յանցանս , և ապա հրապարակաւ արձակեաց զնոսա , և վարէր ևս նոքօք իբրև զառաջինն : Ուստի և եպերէր զԲրուտոս իբրև որ ծայրայեղ հակամիտեալ յօրէնս և յիրաւունս՝ 'ի ժամանակին յորում հնարաւոր քաղաքավարութեան և մարդասիրութեան պէտք էին :

Ալ Բրուտոս խրատ տայր նմա յուշ ածել զԻդոսան զմարտի ամսոյն՝ յորում 'ի մահ զկեսար վարեցին . այն՝ որ չարչարէր և նեղէր անձամբ և ոչ զոք 'ի մարդկա-

նէ, սակայն և զօրավիգն կայր գործելեացն։ Եւ ասէր Բրուտոս. "Վասն որոյ եթէ բարուր դեղեցիկ երբէք կայցէ՝ զանց զի-բաւամբք առնել, լաւ ևս էր յայնժամ հանդարտել բերել զհարստահարել զբա-րեկամացն Կեսարու, քան զմերոցն. քանզի յայնժամ բամբասանս միայն կու-տէաք անձանց զանարի վատութեան, իսկ զարդիս՝ զանիրաւութեանն և մեք ինքնին, հասարակորդ եղեալ միանգամայն և վատ-գաց և աշխատութեանց"։ Այսպիսի ինչ էին խորհուրդք մտացն Բրուտոսի։

Իսկ յետ այնորիկ հանդերձեալ Բրու-տոսի մեկնել յԱսիոյ. ասեն՝ նշան ահա-գին երևութանալ նմա։ Քանզի էր իսկ Բրուտոս անդսահին 'ի բնէն հակող յոյժ, և 'ի վաստակոց անսի իւրոց և 'ի ժուժկա-լութենէն՝ յոյժ համառօտ քնոյ տայր զանձն. զցերեկ երբէք նա ոչ ննջէր, իսկ զգայդ՝ միայն 'ի ժամուն յորժամ գործել ոչ կարէր կամ կենակից ումեք լինել, այ-լոցն առհասարակ 'ի քուն մտեալ։ Իսկ 'ի ժամանակին՝ յորում գոռայր մարտ պա-տերազմին՝ մեծապէս պատաղեալ նա համ-բուն 'ի կարևորագոյնսն և մտայոյզ վասն հանդերձելոցն. իբրև կանուխ երիկունն անօար քնոյ տայր զանձն յետ կերակրոյն, ապա զարթուցեալ զբոլոր գիշերն անցու-ցանէր պարապեալ 'ի կարևորսն։ Եւ այն-պէս 'ի գլուխ հանեալ զկրսն և յարդա-րեալ, նստեալ ապա թարթափէր 'ի վեր-ծանութիւն գրոց մինչև ցերրորդ պահն.

յորում ըստ սովորութեանն Եւանէին առ նա հարիւրապետք և հազարապետք։

Աւրդ՝ յորժամ հանդերձեալ էր չու առնել յԱսիոյ հանդերձ բանակաւն, էր 'ի գիշերին խաւար աղջամուղջ. և էր նորա 'ի վրանին լուցեալ լոյս աղօտաճաճանչ, և կայր յայնժամ բանակն ողջոյն 'ի խոր լռութեան։ Մինչդեռ անդ Բրուտոս հսկէր և խորհէր և զմտաւ ածէր, թուէր յանկարծ լսել ոտնաձայն 'ի մուտան. իբրև դարձաւ հայեցաւ առ դուրսն, և տեսանէր խօլական ինչ առ աչօք սոսկալի և օտար, վիթխարի մարմնով և ահագին, որ մատեաւ եկաց առ նմա լուռ և անշշունչ։ Քաջալերեալ Բրուտոսի՝ հարցանէր, և ասէ. "Ո՞ ոք արդեօք ի՛ցես դու, 'ի մարդկանէ կամ յաստուածոց. և առ ի՞նչ քո եկեալ է ասա առ մեզ,,։ Եւ պատասխանի խօլականն ցած ձայնիւ, և ասէ. "Ինքնին Քաջն քո եմ չար, ո՛վ Բրուտէ. և տեսցես դու զիս 'ի Փիլիպպէ,,։ Պակուցեալ և ոչինչ Բրուտոսի, կրկնեաց և ասէ. "Այ՛ տեսից զքեզ,,։ 'Ի նոյն անհետացեալ խօլականին, կոչեաց Բրուտոս զծառայսն, և իմացեալ զի ձայն լուան նոքա և ոչինչ, և տեսին կերպարան և ոչինչ, անդէն կայր մնայր և հսկէր դարձեալ։ Բայց վաղ քաջ ընդ այդն չոքաւ առ Կասսիոս և պատմէր նմա զտեսիլն։

Իսկ Կասսիոս՝ Եպիկուրոսի վարժարանին հպատակ այր, որ և բաղում անգամ վասն այնոցիկ 'ի պայքար ևս մտեալ էր

ընդ Բրուտոսի, եւ պատասխանի և ասէ. «Մեր վարդապետութիւն այն է ոմն Բրուտէ, եթէ մեք ինքնին ոչ զամենայնն ստուգապէս զգամք և տեսանեմք. այլ զաղփաղփուն է զգայութիւնս մեր և խաբող. և թէ՝ սաստիկ հզօր է և արագ միտքս մեր 'ի շարժել զնա և 'ի փոխել յամենայն իսկ պատկեր և 'ի տիպ՝ յորժամ և չէ ինչ 'ի միջի գոյաւոր: Քանզի տպաւորութիւնդ այդ հանգունատիպ է մոմոյ. և հոգի մարդոյ ունելով յինքեան միանգամայն և ըզկեղծեալն և զկեղծողն, իշխան է նա գիւրագոյնս գունակ գունակ գործել զնա և ինքնին կերպարան զգեցուցանել նմա: Զայս քաջայայտ գործեն յոյզք երազոցդ 'ի քունել մերում, զորս շարժէ զօրութիւնն երևակիչ 'ի գուշնաքեայ պատճառէ, և տայ ապա նոցա զազգ ազգ զկրից և զկերպարանաց: Այս զօրութիւն բնաւորեցաւ միշտ 'ի շարժման, և շարժումնդ այդ՝ երևակութիւն իմն է և խորհուրդ: Արդ և 'ի քեզ ինքնին՝ մարմնդ խոնջեալ աւադիկ և պարտասեալ բնութեամբ՝ յուզէ և ծփէ զմիտսդ: Եւ հաւատարիմ չէ արդեօք եթէ գուցեն իսկ Քաջքդ, և ոչ դարձեալ՝ թէ գուցեն ևս՝ եթէ կերպարան իցէ նոցա մարդոյ կամ ձայն կամ զօրութիւն ձգել հասանել մինչև առ մեզ, որում և անձկանօք ես ինքնին փոփաքէի. իբրև էր մեզ այնուհետև ապաստան ոչ 'ի զէնս միայն լինել և յերիվարս և 'ի բազում նաւահանդէս, այլ և յօգնականութիւն անդր

դիցն՝ 'ի զօրավարել աստ մերում աւադիկ 'ի նահատակութիւնս յոյժ նուիրականս և յոյժ գեղեցիկս ,, : Այսպիսեաք բանիւք Կասսիոս ամոքէր հանդարտէր զԲրուտոս :

Արդ յայնժամ 'ի չու անկեալ զօրականին , անգուստ արծուիք երկու իջեալք 'ի բարձանց 'ի վերայ առաջին դրօշակացն , այնպէս ուղեկիցք զհետ երթային զօրուն , բուծեալք և կերակրեալք 'ի նոցանէ մինչև 'ի Փիլիպպէ . ուր և աւուրբ միով յառաջ քան զկռիւն թռուցեալք 'ի բաց գնային : Իսկ Բրուտոս բազում յոյժ 'ի ժողովրդոց յուղղոջ անդ ընդ ձեռամբ հնազանդեցոյց . և թէ երբէք քաղաք մի կամ իշխանութիւն մի արտաքոյ կայր , նիզակակից և զԿասսիոս ունելով՝ խաղայր և նկուն առնէր առհասարակ մինչև 'ի ծով անդր 'ի հանդիպոյ Թասոսի :

Անդանօր նոքա 'ի վերայ հասեալ Նորբանոսի՝ որ բանակ հարեալ նստէր 'ի վայրսն՝ զոր Ստէնք կոչեն և մօտ 'ի Սիւմբոլոն , և պատեալ պաշարեալ զնա , ետուն նմա վերջոտնել և թողուլ զվայրսն , և վայրիկ մի ևս հասեալ ունէին նոքա զզօրն . քանզի յետամնաց վերջացաւ կեսար առ 'ի խօթութենէն : Սակայն Անտոնիոս դիմեաց անդր յօգնութիւն շտապաւ անհնարին , զի և կարաց իսկ ոչ հաւատալ Բրուտոս : Եկեալ հասանէր ապա և կեսար ինքնին յետ տասն աւուրց . և բանակ հարեալ կայր ընդդէմ նորա Բրուտոս , իսկ Կասսիոս բանակեցաւ ընդդէմ

Անտոնիոսի։ Բայց զդիւրն որ ընդ մէջ երկուց բանակաց՝ անուանեալ կոչեն Հռոմայեցիք՝ Դաշտք Փիլիպպեան։

Եւ անդ էր տեսանել յայնժամ խըմբեալ գումարեալ ընդդէմ միմեանց զօրութիւնս ահագինս զՀռոմայեցւոցն։ Թէպէտ և՝ ի թիւ բազմութեանն ոչինչ սակաւ խոնարհագոյնք էին նոքա զԿեսարուն, ՝ի զարդ զինուցն և ՝ի շուք գեղոյն պքանչելի էր զօրն Բրուտոսին։ Քանզի և շատ ինչ ՝ի զինուցն նոցա համակ ոսկի և արծաթ առատապէս հանդերձեցաւ նոցա. Թէպէտ և ինքնին Բրուտոս յայլ ինչ իրս՝ ՝ի չափ կենաց ՝ի պարկեշտ և ՝ի ժուժկալ կրթէր զզօրագլուխսն. զմտաւ ածէր եթէ արդեօք հարստութիւնք ինքնին ՝ի ձեռս բարձեալք զօրականին և զանձամբք նոցա, աշխոյժս և արութիւն քաջութեան յորդեսցեն ՝ի պատուասէր մարդիկն, և քաջամարտիկ ևս զընչաքաղցն յարդարեսցեն՝ նահատակեալ ՝ի վերայ զինուցն՝ իբրև ՝ի վերայ փարթամ կարասւոյն։

Բայց յայնժամ Կեսար ՝ի նեղքս ՝ի ՝ի զակշին քաւութիւն սրբութիւն կատարեալ, տայր բաշխէր ցորեան սակաւ և դրամակշիռս հինգ առն առն ՝ի զօրականէն վասն զոհից։ Իսկ Բրուտոս խաղ ապարեալ զաղքատութեամբն կամ թէ ըզժլատութեամբն, նախ սրբէր քաւէր ըզզօրն յերևանի ըստ սովորութեանն. ապա տայր բաշխէր սպանդ բազում գնդաց գընդաց և դրամակշիռս յիսուն առ մէն մի ՝ի

զօրականէն, և այնպէս մոագիւր ևս յօ-
ժարութեամբ կազմեցաւ պատրաստեցաւ
բանակն։ Բայց 'ի քաւութեանն՝ չարա-
գուշակ իմն հմայից թուեցաւ պատահել
Կասսիոսի. քանզի գաւազանակիրն եկեալ
մատուցանէր նմա պսակ շրջուն։ Եւ ասեն
ևս յառաջ ժամանակաւ 'ի հանդէս ինչ
տեսարանաց՝ Յաղթանակ մի ոսկի Կաս-
սիոսի շուրջ բերեալ, անկանէր 'ի գետին՝
'ի գթել անդ բարձողն առն։ Առ այս
դարձեալ՝ և բազումք 'ի գիշակեր թռչնոց
գային երևէին զօրհանապազ 'ի բանակին։
Եւ տեսին ևս պարս մեղուաց գնացեալ
ուրեք 'ի նեբքս 'ի ղակշին, զոր և առեալ
փակեցին զտեղին իղձք և գուշակք զգու-
շացեալք կրօնիցն, այն՝ որ տակաւ և զԿաս-
սիոս ինքնին շրջէր զառածանէր 'ի վարդա-
պետութեանցն Եպիկուրայ. իսկ զզօրա-
կանն համբուն և 'ի տագնապ ևս առեալ
պաշարեաց, որ աղագաւ և Կասսիոս չէր
ինչ յօժարեալ յայնժամ 'ի կռիւն և
խնդրէր ժամավաճառ յերկարաձգել ըզ-
մարտն, քանզի և էին իսկ նոքա հաստա-
հարուստք արծաթով, բայց 'ի զէնս և 'ի
բազմութեան ոյժերոյն վերջացեալք էին։

Բայց Բրուտոս և անդուստ 'ի սկզբանէ
թեւակոխեալ իսկ էր նախավախճան կնքել
զմարտն. զի կամ զհայրենի աշխարհն յա-
զատութիւն 'ի վեր հանցէ, կամ զի առ
անգամ մի վճար արասցէ կարեաց և վրշ-
տին առհասարակ մարդկանն՝ առ 'ի ծա-
խուց անտի և յարշաւանացն և 'ի հոգոյն։

Նաև զայն ևս ետես՝ զի իւրն այրուձի 'ի նահատակ շահատակութիւնն և 'ի մեկնակաղէն յասպատակին դէզեցիկս մրցեցան և յաղթեցին, քաջալերեցաւ նա յանձն իւր։ Եւ քանզի և բազումք յայնժամ դասալիք լինէին առ Թշնամիս անդր, էին էին և որ 'ի նոյն կիրս ամբաստանեալք կասկածելիք եղեն, ապա վասն այսոցիկ յատենի խորհրդոյն բազումք 'ի բարեկամացն Կասիոսի ձեռն ետուն խորհրդոյն Բրուտոսի։ Իսկ 'ի բարեկամն նորա միայն Աստեղիոս ընդդէմ դառնայր, կամէր սպասել մնալ ձմերայնոյն. հարցանէր զնա Բրուտոս, զոր շահ անձին առաւել ևս կարծեսցէ նա ունել յետ տարւոյ միոյ. ետ պատասխանի այրն և ասէ. "Թէ ոչ այլ ինչ, կեցից շատ ևս ժամանակ"։ Խոժոռեցաւ Կասիոս ընդ պատասխանին, և զայրացոյց Աստեղիոս ոչինչ սակաւ և զայլսն։ Ապա խորհուրդ հաստատեցին մարտ դնել կռուել առ վաղիւն։ Յայնժամ Բրուտոս առեալ ընթրիս մեծապէս քաջալերութեամբ, և 'ի զրոյցս ևս զբօսեալ իմաստասիրականին, գնաց 'ի ննջել։

Բայց Կասիոս՝ ըստ որում Մեսսալաս պատմէ, առեալ ընդ իւր նուազունս 'ի բարեկամաց՝ ընթրէր ուրոյն. և կայր նա մոայոյզ և անմուունչ, և չէր իսկ նա այնպիսի 'ի բնէն իւրմէ. աւարտեալ զընթրիսն՝ կալեալ զձեռացն Մեսսալեայ պնդապէս, որպէս և սովորն իսկ էր՝ մտերմութիւն ցուցեալ, ասէր նմա զայս 'ի յոյն լեզու.

"Ինքնին ես վկայեմ քեզ ով Մեսսալէ, զի դէպքն Պոմպէի մեծի անշուշտ աւագիկ և ինձ պատահեն. քանզի ստիպիմ 'ի միում միայն կռուի 'ի վերայ ազատութեան հայրենի աշխարհին քուեայ արկանել: Սակայն և քաջալերեալ եմք՝ դէտակն կալեալ 'ի բախտն, յորմէ՝ Թէպէտ և մեր վատացեալ 'ի խորհուրդս՝ յերկուանալ չէ արժան,, : Կատարեալ զբանն՝ ասէ իսկ ինքն Մեսսալաս՝ եթէ գիրկս ածեալ նմա Կասսիոս, և առ վաղիւն գարձեալ հրաւիրեր զնա յընթրիս՝ զի էր օր ծննդոց նորա:

Իբրև առաւօտն մերկացաւ՝ վաղ քաջ յերևան հանէին 'ի զակշին Բրուտոսի և 'ի Կասսիոսին՝ զնշանակ կռուոյն՝ զպատմուճանն ծիրանի: Եւ ապա նոքա եկեալ առ միմեանս զբանիւք անկանէին 'ի միջոցի երկուց բանակաց: Սկսաւ խօսել Կասսիոս և ասէ. "Իցէ թէ ով Բրուտէ՝ էր մեզ յաղթել. և այնպէս ապա զամենայն ժամանակն դեղեցիկս կեալ մեզ ընդ միմեանս: Այլ քանզի անյայտք գոն մեծամեծ նահատակութիւնք մարդկան, եթէ երբէք օտար ինչ 'ի խորհրդոց մերոց դէպ տացէ պատերազմին, ոչինչ հեշտին իցէ միւսանգամ տեսանել այր զընկեր. զի՞նչ խորհուրդ իցէ քո վասն փախստեանն և վասն մահուան,, : Եւ պատասխանի Բրուտոս և ասէ: "Մինչդեռ տակաւին պատանի, ով Կասսիէ, և անփորձ յիրս, ոչ գիտեմ զիարդ արդեօք ես յիմաստասիրութիւն

կրթեալ մեծ ինչ խօսեցայ՝ ստգտեալ զկատուն՝ զի անձին արար. իբրու այն թէ ո՛չ բարեպաշտութիւն իցէ և ո՛չ գործ արժանի առն՝ ընկճել առ 'ի Քաջէն, և չբերել արուեստիւ քաջութեամբ զամենայն զդէպան, այլ խոյս տալ փախչել։ Սակայն զարդիս 'ի դէպս յայսոսիկ այլազգագոյնս հանդիպիմ. եթէ ո՛չ դեղեցիկս յաջողեսցէ մեզ Աստուած զառաջակայսդ, չելանեմ ես 'ի խնդիր միւսանգամ այլ յուսոյ և այլուր կազմութեան. այլ ճոլոպրիմ 'ի կրից ատի՝ գովելով զբախտն. քանզի անդ ուրեմն յԻդոսան Մարտի տուեալ իսկ զիմ կեանսն իմոց հայրենեաց, այլ կեանս կեցի ես ապա վասն նորա ազատ և փառաւոր ,,։ Ժպտեցաւ ընդ բանն Կասսիոս, և գիրկս ածեալ Բրուտոսի ասէր. " Խորհրդովդ այդուիկ խաղաղացուք ուրեմն մեք ընդդէմ թշնամեաց. քանզի կամ յաղթեացուք, կամ երկիցուք ոչ 'ի յաղթականէն ,,.

Ապա յետ այնորիկ յանդիման բարեկամացն կային խօսէին նոքա յաղագս կարգի դասաւորութեանն. Բրուտոս խնդրէր 'ի Կասսիոսէ տալ նմա զառաջնորդութիւն զաջոյ թևոյն. զոր և անկ առհասարակ Կասսիոսի ասէին՝ 'ի փորձոյ անտի առն և 'ի հասակէն։ Բայց նա ետ նմա, և հրաման ևս տայր Մեսսալէայ՝ որոյ էր իսկ ընդ ձեռամբ գունդ յոյժ քաջամարտիկ որերոյ՝ երթալ կալ յաջոյ թևի անդ։ Յայնժամ ապա Բրուտոս ածէր խաղա-

ցուցանէր արտաքս զայրուձին շքեղ վա-
ռեալ. և անդ արագ արագ և զհետեւակա-
զօրն 'ի նեղքս արկանէր։

Իսկ անդուստ զօրականք Անտոնիոսի
զկսրաման 'ի ձախին վայրաց անտի՝ ուր մօտ
բանակեալ կային, ածէին բերէին 'ի դաշտն,
խնուլ կուրացուցանել Կասսիոսի զձանա-
պարհն 'ի ծովակողմն անդր։ Բայց կե-
սար հանդարտեալ կայր 'ի բանակն՝ և չէր
անդ մերձ առ խօթութեանն, և զօրականք
նորա յանդորրու ոչինչ ակն ունէին կը-
ռուոյն թշնամեաց. համարեցան՝ եթէ գը-
ռոյթ միայն տան նոքա 'ի գործ զօրուն. և
փոքու նեռտաձգութեամբ և աղմկաւ շար-
ժեալ խռով հարկանեն 'ի գործ անդր։
Ուստի և ոչ գէտակն կալեալ 'ի հանդի-
պոյ 'ի ձակատել կալ թշնամեացն, զար-
մացեալ էին ընդ գոչիւն բազում աղաղա-
կին՝ որ այնպէս անսպագոյնս հնչէր գայր
'ի խրամոց անտի։

Յայնժամ 'ի կողմանէ անտի Բրուտո-
սի գայլին հասանէին պնակք առ զօրա-
գլուխսն՝ յորս և գրեալ իսկ կայր նշանն.
և 'ի ժամուն ինքն ձիաւորեալ ընթացեալ
ընդ դունդս դունդս, և խրախոյս քաջա-
լեր տուեալ, անդանօր նուազունք զտեղի
կալան լսել իմանալ զնշանն, իսկ բազումք
անդէն արագ արագ խումբս առեալ 'ի
ձայն բարձր աղաղակի յարձակեցան ան-
կան 'ի վերայ թշնամեացն։ Բայց յանկարգ
հրոսակէ անտի խռով հարեալ 'ի գունդսն
և անչատեալ քակեալ, առաջին՝ Մեսսա-

ղայն, ապա և որ կից կային նմա, շարժե-
ցան անկան առ երի ձախոյ թևոյն Կեսա-
րու. և անդ թեթևս մարտուցեալ ընդ վեր-
ջապահ գնդին, նուազունս տապաստ ար-
կանէին. սակայն հարեալ բեկեալ զծայր
թևոյն, անցին յառաջ և յարձակեցան
'ի բանական:

Իսկ Կեսար՝ վայր մի յառաջ (ըստ ո-
րում և պատմէ իսկ ինքն 'ի Ցիշատակա-
րանս իւր) գնացեալ էր այլուր, հրաման
առեալ 'ի տեսլենէ իմեքէ՝ երևութացեալ
'ի քուն Արտովրիոսի Մարկոսի բարեկա-
մին, տեղի տալ Կեսարու արտոքս քան
զբանական: Եւ համարեցան յայնժամ՝ ե-
թէ մեռաւ Կեսար. քանզի և շալակ նորա
այնպէս թափուր ամենայն ուստեք նե-
տահար և տիգահար խոցեալ կայր 'ի թըշ-
նամեաց: Եւ որ միանգամ յայնժամ 'ի
ձեռս անկան, 'ի մահ վարեցան. անդ տա-
պաստ անկանէին և երկու հազարք 'ի Լա-
կեդեմոնացւոց՝ որ միւսանգամ 'ի թի-
կունս փութացան 'ի վայրն: Իսկ ոքք 'ի
ներքս չփակեալ զզօրն Կեսարու, յարձա-
կեցան 'ի նոսա Ճակատ առ Ճակատ, ան-
գէն հարին խորտակեցին զնոսա. զի և էին
իսկ նոքա աղմկեալք և սրտաթափք, և այն-
պէս լեգէոնս երիս 'ի սուր սուսերի մաշե-
ցին. և անկան մոին խառն ընդ փախըս-
տէիցն 'ի բուն բանական, խրախուսեալք
'ի յաղթութենէն, զի և զԲրուտոս ընդ
իւրեանս ունէին:

Իսկ յոր ինչ խելամուտ չեղեն անդ

յաղթականք, Կեսար 2 ինքնին եցոյց զայն յաղթեցելոցն. քանզի մերկ և կապուտ այնպէս մնացեալ փալանդին թշնամեաց, յորմէ զատուցեալ իսկ էր թեւն աջոյ, յարձակեցան նոքա 'ի վերայ նորա. սակայն և ոչինչ կարացեալ վանել հարկանել զմիջոցն՝ գոռ և սաստիկ պատահեալ կռուոյ, բայց հարին բեկին զթեւն ձախոյ որ խըռովեալ իսկ էր, և տեղեակ չէր իրաց միւսոյ թեւոյն. և զհետ ապա մտեալ փախըստէիցն մինչև 'ի բուն բանակ անդր, աւար հարկանէին. և չէր 'ի միջի և ո՛չ մի յինքնակալաց անտի նոցա։ Քանզի Անտոնիոս՝ որպէս ասեն՝ 'ի սկզբան հրոսակին թշնամեաց վերջոտնեցաւ 'ի ճախին անդր. և Կեսար ինքնին՝ որ այլուր գնացեալ իսկ էր 'ի զակչէն իւրմէ, ո՛չ ուրեք երևէր։ Նաև կէսք 'ի զօրականէն յառաջ մատուցեալ առ Բրուտոս՝ ասէին սպանեալ զայրն, և ցուցանէին ևս զարիւնաշաղախ սուսերն, և նմանութիւն ևս տային զկերպարանին նորա և զտիոց հասակին։

Ապա յայնժամ ճակատ զօրուն վանեալ խորտակեալ 'ի մեծամեծ հարուածս զդիմակացան, թուէր իմն համբուն յաղթական Բրուտոսի եւանել, որպէս և անդուստ նկուն Կասսիոս գոռաւ։ Իսկ որ միայն յայնժամ եղծեաց աղարտեաց զերս նոցա, զի ո՛չ Բրուտոս չոքաւ 'ի թիկունս Կասսիոսի՝ զոր յաղթական համարեցաւ, և ո՛չ Կասսիոս եկաց մնաց Բրուտոսի՝ զոր կորուսեալ համարեցաւ։ Բայց Մեսսաղաս

'ի հաւատոյս յաղթութեան իւրոյ կողմանն՝ 'ի նեղքս բերէ արծուիս երիս և շատ ևս այլ դրօշակս՝ զոր հանին 'ի թշնամեաց. և թշնամիք՝ և ոչ մի 'ի նոցանէն։

Արդ իբրև տեղի ետ մեկնեցաւ Բրուտոս յետ աւարառութեան բանակացն Կեսարու, հիացեալ կայր զի զվրանն աւադ զԿասիոսի ոչինչ տեսանէր այնպէս բարձր ըստ սովորութեանն և պերճ և երևելի, և ոչ դարձեալ զայլս յիւրեանց վայրին. քանզի և շատ 'ի նոցանէն հարեալ տապաստ կայր 'ի թշնամեաց անտի 'ի յարձակել նոցա։ Իսկ որ առաւել սրակնեայք էին, ասէին յայնժամ տեսանել 'ի հեռաստան բազում ինչ փայլատակել, և վահանս բազումս արծաթի յայսկոյս յայնկոյս յածել գնալ 'ի բանական Կասիոսի. և կարծել ինչ չէր նոցա՝ եթէ թիւ բազմութեանն այնորիկ և 'ի զէն 'ի զարդ այնպիսի՝ լցեն դոքա անդ խումբ պահապանաց. և ոչ դարձեալ անդուստ երևէր ինչ բազմակոյտ դիականցն. զոր արդեօք յակն արկանել մարթ էր, եթէ այնչափ գնդաց պարտեալ տապաստ անկեալ էր։

Ապա վասն այսոցիկ անդէն 'ի վարանս տադնապեցաւ Բրուտոս վասն հարուածոյն. թողեալ անդ պահապանս 'ի բանակին թշնամեաց, յետս կոչէր զՀետամուտսն և խմբէր ժողովէր. հասատատեաց 'ի թիկունս խաղալ Կասիոսի։ Իսկ առ Կասիոսիւ դէպք իրացն կատարեցան օրինակ զայս։ Զէր իսկ նա հաւանեալ ընդ առաջին այն

հրոսակ զօրականին Բրուտոսի՝ մինչեւ ա-
ռեալ Նոցա ոչ նշան և ոչ կարգ. և ոչ
դարձեալ գովեաց ինչ՝ զի այնպէս յետ
յաղթութեանն արագ գիմեցին նոքա յա-
ւար և 'ի կապուտ կողոպուտ. և ոչինչ
հոգացան առնուլ պատել և 'ի նեղքս զթըշ-
նամին փակել։ Ոյր աղագաւ և 'ի սակաւ
մի ժամավաճառ դանդաղանաց անտի իւ-
րոց՝ քան 'ի քաջութենէ ինչ և 'ի խոր-
հրդոյ թշնամեաց զօրագլխացն, ինքն պա-
շարեալ 'ի նեղքս փակեցաւ յաջոյ անտի
թևոյն թշնամեաց։ Ուստի և տագնապաւ
'ի փախուստ խուճապեալ այրուձիոյն 'ի
ծովակողմն անդր, և տեսեալ Կասսիոսի և
զվերջոտնեալ հետեւակացն, գուն գործէր
առկայացուցանել և խրախոյս կարդայր
նոցա, և կորզեալ զդրօշակն 'ի դրօշակա-
կրէն՝ որ 'ի փախուստ խուճապէր, առեալ
հարստէր առաջի ոտիցն. այլ և ոչ որ
զիւրեն էին՝ կացին այնուհետև յակաստա-
նի. իբրև կարի նեղ եհաս՝ վերջոտնեցաւ և
ինքն 'ի բլուր մի ընդ սակաւուց՝ անդուստ
հայեալ տեսանել 'ի դաշտն։ Այլ նա տե-
սանէր և ոչինչ, կամ թէ հազիւ ուրեմն
նշմարէր զաւարեալ զիւրոյ բանակին, քանզի
էր իսկ ինքն վատատես։ Իսկ որ զնովաւն
կային, տեսանէին 'ի հանդիպոյ խաղալ
բազում այրուձիոյ, զոր արձակեալ իսկ
էր ինքնին Բրուտոս։ Բայց Կասսիոս խի-
թացաւ զթշնամեաց՝ եթէ հետամուտք
նմա իցեն։ Առեալ զՏիտիննիոս 'ի նիզա-
կակցաց անտի իւրոց՝ արձակէր գիտել։

Իբրև նա մերձ եղև յայրուձին, քաջ իսկ ծանեան զնա, և տեսեալ զաւագ այրն զիւրեանց բարեկամ և զհաւատարիմ Կասիոսի, ձայն բարձեալ գոչէին առ ցնծալ իւրեանց. և ծանօթք նորա իջեալ 'ի վայր յերիվարէն՝ առեալ զաջոյն նորա և գիրկս ածէին նմա. իսկ և այլք այնպէս շուրջ եկեալ զնովաւ առ անչափ խնդին 'ի նուագս Պէանից և 'ի կայթ և 'ի դոփիւն, մինչև ապա այն իրք պատճառք եղեն անհնարին աղէտից։ Քանզի անդուստ թուեցաւ Կասիոսի, եթէ անշուշտ ուրեմն 'ի նեղքս 'ի թշնամեաց անտի փակեցաւ այնպէս Տիտիննիոս. և աւաղ զայս կարդաց յայնժամ Կասսիոս. "Բաբէ բաբէ, առ սէր սասոիկ կենաց կացաք մնացաք մեք տեսանել և զայր բարեկամն՝ այնպէս յափշտակեալ 'ի թշնամեաց անտի,,։

Ապաց և չոքաւ եմուտ 'ի վրան մի ամայի՝ առեալ ընդ իւր զՊինդարոս զմի յաղատագրելոց անտի իւրոց, զոր և միշտ շրջեցուցանէր ընդ իւր 'ի ժամանակէ անտի հարուածոցն Կրասսոսի, ունել զնա կազմ 'ի հարկս վերջինս։ Բայց յայնժամ ձողոպրեալ Կասսիոսի 'ի ձեռաց Պարթևացն, իսկ զարդիս առեալ ածեալ զքղամիդ իւր զգլխոնէն, և այնպէս մերկ զպարանոց իւր առաջի մատուցանէր Պինդարոսին և տայր կտրել 'ի բաց։ Քանզի և գտին իսկ զնորա գլուխն առանց մարմնոյն։ Այլ զՊինդարոս յետ սպանութեանն ետես և ոչ ոք 'ի մարդկանէ. ուստի և կէսք կասկածեցան

եթէ 'ի մահ վարեաց նա զԿասսիոս ա-
ռանց հրամանին նորա :

Իբրև այս եղև , ապա յետ սակաւու 'ի
ծանօթս գային հեծելաղօրք, և եկն երևե-
ցաւ Տիտիննիոս պսակեալ 'ի նոցանէն .
գայր ընդառաջել Կասսիոսի . իսկ իբրև
'ի ձայնէ կոծոյն և յաղաղակէ բարեկա-
մացն , զի առհասարակ ողբս առեալ լային
և աշխարէին , 'ի վերայ եհաս նա աղէտից
և սիսալանաց զօրավարին , անդէն մերկեաց
զսուրն և դառնապէս նզովեալ զանձն՝ զի
յոյժ անագանեաց , գնայր զիւրովին :

Իսկ անդուստ Բրուտոս լուր առեալ
զհարուածոյն Կասսիոսի, ստիպաւ խաղայր
գայր 'ի կողմն նորա . իբրև մերձ եղև 'ի
բանակն նորա , անդ լսէր զմահն նորա :
Ընկեալ գերարտօսրալից 'ի վերայ դիա-
կանն , ձայն արձակէր կարդայր զնա աւագ
այր վերջին 'ի Հռոմայեցիս , իբրու ոչինչ
այնուհետև ծնանել 'ի քաղաքին այր այն-
պիսի արի և աշխոյժ . ապա յօրինէր զար-
դարէր զնա շքով· և զի մի 'ի պատճառս
անգանօր յուղարկաւորութեանն աղմուկ
ամբոխից յուզեսցի , առեալ առաքէր զնա
'ի Թասոս : Յետ այնորիկ 'ի մի խմբեալ
զամենայն զօրականն՝ սփոփէր մխիթարէր .
և տեսեալ զնոսա այնպէս մերկ և կապուտ
'ի կարևորացն , առն առն 'ի նոցանէ խոս-
տացաւ դրամակշիռս երկու հազար 'ի դար-
ման տուգանացն : Քաջալերեցան նոքա 'ի
բանից անտի նորա , և հիացեալ կային
ընդ գեղեցիկ առատաձեռնութիւն նորա .

և 'ի գնալ նորա զհետ ընթանային նորա, ծափս հարկանէին մեծամեծս, գովէին օրհնէին զնա իբրև միայն 'ի չորից ինքնակալաց անտի անպարտելի 'ի մարտին։

Եւ արդեօք յարգեանց անտի իրաւապէս համարեցաւ նա 'ի կուռին վեհագոյն իւրոց թշնամեացն. քանզի սակաւաթիւ լէգէոնիւք եհար խորտակեաց առհասարակ զսխոյեանսն. իսկ եթէ և ողջոյն զիւրան 'ի գործ անդր վարեալ էր, յորոց շատք զանց զթշնամեօքն արարեալ՝ դիմեցին յաղին նոցա, արդեօք և բնաւ իսկ կողման թշնամւոյն 'ի պարտութիւն մատնեալ էր յայնժամ։

Արդ 'ի կողմանէ անտի Բրուտոսի տասպատաս անկան ոգիք ութ հազար 'ի միասին ընդ սպատարկուաց զօրուն՝ զորս Բրիգայս կոչէր Բրուտոս. իսկ 'ի թշնամեացն՝ կրկին ևս առաւել, որպէս ասէ Մեսսալա։ Ոչ աղագաւ և յոյժ անկան բեկան նոքա, մինչև հասեալ առ Անտոնիոս ընդ երեկս մի ոմն 'ի ծառայից անտի Կասսիոսի՝ Դեմետրիոս անուն, որ անդէն կապտեալ զդիակն եբեր նմա զքղամիդն և զսուրն։ Զայսոսիկ ածեալ առ Անտոնիոս, այնպէս ինն քաջալերեալ խրախուսեցին զօրականքն, զի և 'ի ծագել աւուրն առեալ հանէր զնոսա 'ի զէն 'ի զարդ վառեալ միւսանգամ 'ի կռիւ մարտի։

Իսկ Բրուտոսի տեսեալ՝ զի և երկոքին ևս բանակք իւրոյ կողմանն 'ի ծուփս տագնապին. քանզի բանակ իւր առանձին լի

և խուռն էր 'ի խումբս գերեալոյն, ուստի և պարտ էր մեծապէս պահ զգուշութեան կարգել. իսկ Կասսիոսինն՝ դժկամակս բերէր ընդ ձեռամբ կալ օտար զօրավարի. առ այս՝ և բանակ պարտեալ խեթիւ ընդ յաղթականն հայէր. ապա լաւ համարեցաւ Բրուտոս զինու զարդու կազմունել զզօրականն, բայց 'ի կռիւ չմխել։ Իսկ 'ի գերեալոյն՝ հրաման տայր սպանանել 'ի նոցանէ զծառայիցն բազմութիւն՝ որք պարայածեալք 'ի զօրուն կասկածելիք էին. և արձակէր 'ի բաց զբազումս յազատ որերոյն. և ասէր՝ եթէ քան 'ի նմանէ՝ առաւել ևս 'ի թշնամեաց անտի դոքա ձերբակալեալ են, և են իսկ դոքա առ նոսա ըստուգապէս 'ի գերեաց կարգի և 'ի ծառայից, իսկ առ իւր եղիցին դոքա ազատք և քաղաքացիք։ Բայց տեսեալ զի անհաշտ ատելութեամբ են առ նոսա բարեկամքն և զօրադլուխքն, թաքոյց և դաղտաբար արձակեալ 'ի բաց ապրեցուցանէր զարան։

Էր 'ի գերին և Վոլումնիոս ոմն միմոս, և Սակուլիսոն ոմն խեղկատակ, զորոնք զանց առնէր Բրուտոս. այլ ածին կացուցին զնոսա յանդիման նորա բարեկամքն. ամբաստան լինէին եթէ և ոչ յայնժամ 'ի բաց կացին արքդ այդոքիկ յերգիծանողական բանից իւրեանց։ Իսկ յայնժամ Բրուտոս՝ որ յայլ ինչ պատաղեալ կայր՝ լուռ ևեթ կայր։ Բայց Մեսսալաս Կորբինոս խորհուրդ տայր՝ գանիւք հարուածոց ջարչարել զարան 'ի վրանին և արձա-

կել զնոսա այնպէս մերկս խայտառակս առ զօրավարս Թշնամեացն, զի տեսցեն ե-
Թէ զոյս ոմանս հացակիցս իւրեանց և զովոզս
ինդրեն դոքա և 'ի ժամանակի զօրավա-
րուԹեան իւրեանց։ 'Ի լուր բանին կէսք
'ի ծաղր հատան, այլ Պոպղիոս Կասկաս՝
այն որ առաջին խոցեաց զԿեսար, ասէ.
"Ընչուչտ մեք ոչինչ գեղեցիկս սուգ 'ի
ներքս բերեմք Կասսիոսի վախճանելոյ,
այդպէս 'ի կատակս կրԹեալ և 'ի ծաղր։
Իսկ դու ինքնին ով Բրուտէ, ցուցցես իսկ
քաջ՝ քո քանիսն ի՞նչ յիշատակ առ այդ
զօրավար, կամ պատուհասելով կամ ա-
պրեցուցանելով զարսդ՝ որ հեգնաբար
այնպէս խաղ առնեն զդովաւ և բանդա-
գուշեն"։ 'Ի սրտմտուԹիւն բարկուԹեան
բրդեցաւ Բրուտոս, և ասէ. "Եւ առ ինչ
ապա ով կասկաս յինէն հարցանէք, և ո՛չ
դուք ինքնին առնէք զոր ձեզն Թուի"։
Զպատասխանի զայն նորա համարեցան
նոքա իբրև հաւանել ընդդէմ չուառական
մարդկանն, և առին 'ի բաց զարսն և 'ի մահ
վարեցին։

Ապա Բրուտոս տայր բաշխէր պարգևս
զօրականին, և վայր մի կշտամբեալ զնոսա
զի այնպէս խառն 'ի խուռն դիմեալք յար-
ձակեցան նոքա 'ի Թշնամիս անդր, ո՛չ նշա-
նին սպասեալ մնացին և ո՛չ հրամանին նո-
րա, և խոստանայր նոցա յետ քաջապէս
նահատակուԹեան մարտին զաւարառու-
Թիւն զքաղաքաց երկուց զԹեսսաղոնի-
կեայ և զԼակեդեմոնիոյ։ Իսկ ողջոյն 'ի

վարան Բրուտոսի այս միայն էն յանցանք անջատագովելի. Թէպէտ և անդուստ Կեսար և Անտոնիոս մրցանակս տային իւրեանց զօրականին յոյժ վատթարագոյնս. իբրև հանին մերժեցին նոքա գոգցես ողջոյն յիտալիոյ զհին բնակաւորսն, զի զնոցա զաշխարհն և զքաղաքսն կալցեն մարդիկն՝ որոց երբէք չանկանէր աշխարհն։

Ալ արդեօք Կեսարուն և Անտոնիոսին չէր այլ նպատակն կէտ 'ի մարտին յայնմիկ, բայց իշխել և տիրանալ։ Իսկ յաղագս Բրուտոսին՝ յառաքինութեան համբաւոյ անտի առն գեղեցիկ կարծիս վասն նորա ունէին ժողովուրդք՝ զի ոչ յաղթել խնդրէ այրն և ոչ դարձեալ ապրիլ, բայց առաքինութեամբ և արդարութեամբ. մանաւանդ յետ մահուն Կասսիոսի, որ ինքն սադրիչ և դրդիչ Բրուտոսին 'ի գործս յանդգնութեան համարեալ էր։

Եւ արդ զորօրինակ 'ի նաւադնաց ուղին 'ի խորտակելքեղոյն, յայնժամ նաւաստիք գուն գործեն՝ առեալ փայտս բևեռեն պնդեն 'ի տեղին, ոչինչ արդեօք քաջագէպս՝ սակայն և հնարեն նոքա այնպէս 'ի պէտսն բերեալք 'ի հարկէն. սա՛պէս և Բրուտոս 'ի յոքնաթիւ զինուորութեանն և 'ի ծուփս անդ վարանացն ոչ ինչ ունելով այլ զօրավար հանդիսատակչիւ, ստիպեցաւ այրն 'ի գործ առնուլ զորս մերձն կային, և ասել և առնել շատ ինչ զոր լաւ նոքա համարէին. և 'ի վերջ քան զամենայն գուն գործէր Թեսակոխէր յայն

ինչ՝ զոր 'ի քաջիկ հրահանգ կարծէր զ-
րականին Կասսիոսի, քանզի և էին իսկ
նոքա անընդելք. զի 'ի բանակին անիշխանք՝
յոյժ յանդգունք էին և յանձնապա-
տանք, և ապա ընդդէմ թշնամեացն կարի
վատասիրտք 'ի հարուածոյն՝ զոր առին։

Սակայն և ոչ Կեսարուն և ոչ Անտո-
նիոսին իրք՝ լաւագունին վիճակեալ էին,
քանզի կերակուր նուազեաց նոցա. և բա-
նակ հարեալ նոցա 'ի վայրս զնստագոյնս՝
սաստիկ և դժոխրմբեր ձմերայնոյ սպա-
սեալ մնային։ Քանզի պատեալ շուրջա-
նակի 'ի լճաց և 'ի ճահճաց, և յետ մար-
տին անձրևք տեղացեալ աշնայնոյն, տղմա-
սիկ և ջրապարպատ զեղան վրանք նոցա. և
ապա ցուրտն 'ի վերայ անկեալ՝ տառամա-
նիք պատեցին զնոսա։ Իբրև յայն տագ-
նապ տարակուսի պաշարեալ կային, ան-
դուստ և դոյժ հասանէր առ նոսա խոր-
տակելոյ զօրուն նոցա 'ի ծովու։ Քանզի
Յիտալիոյ առաքեալ առ Կեսար բազմա-
ձեռն գնդի, 'ի վերայ նոցա անկեալ նա-
ւացն Բրուտոսի հարուածս եդին, և ճո-
ղոպրեալ զերծան նուազունք յոյժ 'ի նո-
ցանէ. որ և այնչափ իմն յետ այնորիկ սո-
վալլուկ տանջեցան, զի և զառագաստս և
զապաւանդակս ծամել և ուտել նոցա։

Զայն գոյժ առեալ Կեսարու և Անտո-
նիոսի՝ փուլթային ձեռքին՝ մինչև Բրու-
տոսի խրազգած եղեալ գեղեցիկ ելից խ-
րոյ կողմանն, մարտ սահմանաւոր յարդա-
բերելընդ նմա։ Քանզի և դէպ եղև 'ի միում

անդ աւուր մղէլ մարտին ընդ ցամաք և ընդ ծով. բայց Բրուտոս քան 'ի չարու-թենէ ինչ զօրավարաց նաւացն՝ 'ի ձախո-ղակ բախտէն՝ անդիտացաւ զյաղթութիւն զաւուրս քան. որպէս զի և ձեռնամուխ նա չլինէր արդեօք 'ի մարտն երկրորդ, քանզի և հարուստ ժամանակ զպէտս զօ-բականին կազմեալ պատրաստեալ իսկ էր. և էր ևս նորա բանակ հարեալ բոլորեալ 'ի վայր մի անխաբ՝ անդրժելի 'ի ձմերայնոյն և ամրածածուկ 'ի թշնամեացն. առ այս՝ և հաստատուն և աներկեան տիրացեալ ևս էր 'ի ծովուն, և 'ի ցամաքին դարձեալ ինքն զթշնամին հարեալ էր. և մեծապէս յու-սով քաջալերութեամբ խրախուսեալ էր։

Այլ սակայն ոչինչ այնուհետև՝ որ-պէս երևիր՝ հանդարտեալ իրացդ առաջ-նորդել 'ի բազմաց ձեռս, և պարտ այն-պէս լինելով 'ի միապետութեան անցանել վիճակ, Աստուած ինքնին՝ որ զքարընդոտն զայն այր զմիապետականին 'ի միջոյ 'ի բաց կամէր բառնալ, անագանեցոյց զհամբաւ զայն գեղեցիկ եղիցն, թէպէտ և վայրացն յոյժ մերձ կայր Բրուտոս իրազգած լինելը։

Քանզի հանդերձեալ նորա 'ի կռիւն, աւուրբ յառաջ գայր մոտանէր ընդ ե-րեկս 'ի բանակ նորա Կղովդիոս ոմն այր 'ի թշնամեաց անտի դասալիք. զրոյց եբեր ե-թէ լուր առեալ Կեսարու զհարուածոյ իւրոյ նաւահանգիստին, տագնապաւ ձեպէ մղէլ զմարտն։ Այլ բանից առն հաւատս ընծայեցին և ոչինչ, և ո՛չ դարձեալ յան-

գիման զնա հանին Բրուտոսի. բնաւ իսկ անդոսնեցին զայրն՝ իբրու որ անտեղեակ գլխովին կամ թէ սուտակասպաս աւեռաւոր՝ գտանել շնորհս։

Իսկ 'ի գիշերին յայնմիկ՝ ասէն եթէ նոյն խօլական 'ի նոյն կերպարան անդրէն երևուեցաւ Բրուտոսի, և խօսեցեալ և ոչինչ, այնպէս անմռունչ անհետանայր 'ի միջոյ։ Բայց Պոպղիոս Վոլուսինիոս՝ այր իմաստասէր, այն որ անդստին 'ի սկզբանէն նիզակակից էր Բրուտոսի, ոչինչ գրէ վասն նշանիս այսորիկ. այլ ասէ՝ արծուոյն առաջնոյ պատեալ ծածկեալ համբուն 'ի մեղուաց. և թէ՝ մի ոմն 'ի գնդապետաց անտի 'ի բազուկ իւր քրտնէր ինքնահոս աւիշ վարդագոյն, թէպէտ և սրբէին ևս բազում անգամ և ջնջէին՝ ոչինչ եկաց. և թէ՝ մինչև ռազմին խառնեալ՝ արծիւք երկու սաւառնեալք սլացան 'ի միմեանս 'ի միջոցի երկուց բանակաց և 'ի վէգ եկեալ կռուեցան. անդ առհասարակ 'ի խոր լռութեան այր այր ակնկառոյց էր 'ի նոսա, մինչև որ Բրուտոսին կողման արծիւն՝ տեղի տուեալ 'ի փախուստ սրանայր։ Ա՛ռ այսոքիւք՝ և յոյժ զհամբաւի հարան դէպք առնն այնորիկ Եթովպացւոյ, որ 'ի բանալ դրաց զակշին՝ եկ ընդառաջեաց արծուէկիր զօրականին, և անդէն սրախողխող եղև այրն 'ի զօրացն, զի վատախտար զայն համարեցան նոքա։

Ա՛ռ իբրև 'ի դուրս զփաղանգն ածեալ Բրուտոսի ճակատեցոյց ընդդէմ թշնա-

մեացն, անդանօր հարուստ մի այնպէս ըզ-
տեղն առեալ մնաց. քանզի դէտակն կա-
լեալ 'ի զօրն, վարանեցաւ 'ի միտսն և խի-
թայր ևս վասն ոմանց. առ այս և զայրու-
ձին իւր տեսանէր ոչինչ այնպէս յառա-
ջամիտ 'ի նահատակութի, այլ կայրն մնայ-
ին նոքա նահատակելոյ հետևակացն: Ա-
այս՝ և դէպ տայր յայնժամ քաջամարտիկ
առն ուրումն և յոյժ պատուեալ վասն
արութեան քաջութեանն՝ յանկարծակի
ձիաւորեալ գալ քերել առ Բրուտոսիւ
և անցանել առ Թշնամիս անդր, և կոչէր
անուն առն Կամուլատոս. զոր տեսեալ
Բրուտոսի՝ կարի յոյժ 'ի խոր խոցեցաւ:
Ապա այնուհետև 'ի սրտմտութի բրդեալ
և զանգիտեալ ևս 'ի մեծ ապստամբութէ
և 'ի մատնութենէ, արագ արագ խաղայր
ընդդէմ Թշնամեացն. և հոլովէր խոնար-
հէր արևն 'ի ժամ իններորդ:

Եւ այնպէս յիւրմէ Թևոյն յաղթական
եղեալ Բրուտոսի, արձակ արձակ հասանէր
վանէր զձախոյ Թև Թշնամեացն, և վերջոտ-
նեալ նոքա տեղի տային. անդուստ և այ-
րուձին յարձակեալ 'ի Թշնամիսն յաղ-
թիկեալ նոցա, գոյթս 'ի միասին ընդ հե-
տևակացն եռուն առհասարակ ընդդէմ
նոցա: Բայց ձախոյ Թևն Բրուտոսի՝ զան-
գիտեալ եթէ 'ի նեղքս փակեսցի 'ի խա-
ղացուցանել զօրադլխացն զնուազունսն
ընդդէմ յոքնաթիւ Թշնամեացն, որոշեալ
զատաւ 'ի միջոցէ ճակատուն, և ոչինչ
հանդարտեալ 'ի գիմի Թշնամեացն հար-

կանել՝ 'ի փախուստ դառնայր առաջին։ Իսկ որ վանեալ վարատեցին զնոսա, անդէն արագ ընթացան եկին 'ի Նեբքս առնուլ փակել զԲրուտոս. յայնժամ Բրուտոս 'ի մեծապէս խուճապ տագնապին՝ նահատակեցաւ գործեաց նախճիրս անհընարին կորովի բազկաւ և քաջապէս խորհրդով, որչափ ինչ միանգամ երբէք առաքինասցի զօրավար և զօրական տանել զյաղթութիւնն։ Սակայն և յոր ինչ յաջողեցաւ նա յառաջին մարտին, 'ի նոյն ինաստեցաւ յերկրորդին։ Քանզի յայնժամ ողջոյն այն կողմն թշնամեաց որ պարտեցաւ, անդէն և տապաստ անկաւ. իսկ զարդիս 'ի պարտութիւն մատնեալ զօրականին Կասիոսի, նուազունք միայն տապաստ անկան. իսկ ոչք տպրեցանն, ահաբեկք յոյժ յառաջին հարուածոյն սրտաբեկ սրտաթափ առնէին զբազումս 'ի զօրացն։

Յայնմ պահու Մարկոս որդի Կատովնի մարտ եդեալ կռուեալ 'ի մէջ պատանեաց քաջաց և առաքինեաց, թէպէտ և խոնջ և վաստակ, ոչ 'ի փախուստ դարձաւ և ոչ տեղի ինչ տայր երբէք. այլ ձեռն 'ի գործ արարեալ, և 'ի ծանօթս ևս զինքն բերեալ և զանուն զհայրենին տուեալ, այնպէս 'ի վերջէ տապաստ արկանէր 'ի բազմակոյտ դիականցն թշնամեաց։ Յայնժամ դիաթաւալ խաղային և ամենայն քաջ նահատակք անձնագրաւք 'ի մահ 'ի վերայ Բրուտոսի։

Իսկ էր 'ի բարեկամս անդր նորա Լու-

կիլլիոս ոմն այր քաջ և առաքինի։ Սա այս Լուկիլլիոս տեսեալ զհեծելազօրս 'ի բարբարոսաց, որ 'ի հետամուտ պնդեալ յանձնապաստանք այնպէս վարաղաբար յարձակեցան ընդդէմ Բրուտոսի, խորհուրդ 'ի մտի եդ սանձել ունել զնոսա, և 'ի կշիռ զանձն դնել։ Ապա վայր մի յեռս կացեալ, ձայն բարձեալ ասէր առ նոսա՝ ես ինքնին Բրուտոսն եմ, և հաւատացուցանէր զնոսա և աղաչէր առնուլ ածել զինքն առ Անտոնիոս մանաւանդ՝ քան առ Կեսար. ասէր զանգիտել 'ի միոյն և վրստահ 'ի միւսն լինել։ Նոքա խնդացեալք առհասարակ ընդ գիւսն, և կարծեալք սքանչելի հանդիպել բախտի, առեալ տանէին զայրն, և էր ընդ երեկս. և արս ևս կանուխ արձակեցին 'ի խմբէն իւրեանց ազդ առնել Անտոնիոսի։ Նա խնծղագին յարուցեալ ընդ առաջ գնայր սրանցն որ ածէին զնա. իսկ որք լուան զկենդանւոյն ածել Բրուտոսի, խուռներնթացք գիմեալ կէսք ախտակից լինէին բախտի առն, և կէսք անարժան փառաց առն վարկանէին զբանն, զի առ սէր կենաց այնպէս յանձին կալաւ ձերբակալ որս 'ի բարբարոսացն լինել։

Իբրև մերձ եղեն, զտեղի կալեալ Անտոնիոս վարանէր՝ զիարդ արդեօք պարտիցէ առնուլ ժողովել զԲրուտոս։ Իսկ Լուկիլլիոս յանդիման եղեալ համարձակագոյնս և քաջասիրտս բարբառեցաւ և ասէ. " Զ Մարկոս Բրուտոս ոչ Անտոնիէ 'ի

թշնամեաց կալաւ և ոչ ոք, և ոչ կարաս-
ցէ երբէք. և ճշ թէ այնչափ ինչ չզօրեաս-
ցէ բախտ ընդդէմ առաքինութեան, այլ
զի ցանգ վիճակին հանդիպեսցի դա ար-
ժանի իւրում անձին՝ եթէ կենաց և եթէ
մահու։ Եւ ես ինքնին որ խաբեցի զզօրա-
կանդ քո, այսր հասեալ կամ. ոչինչ հրա-
ժարեմ վասն այդորիկ 'ի չարաչար տան-
ջանաց ,, ։ Ասաց Լուկիլլիոս, և անդ առ-
հասարակ յափշութիւն հարան՝ որ մերձն
կային. իսկ Անտոնիոս զաչսն առ մարդիկն
դարձուցեալ՝ որ ածին զնա, ասէր. "Ան-
շուշտ դուք ո՞վ նիզակակիցք, իբրև թշնա-
մանեալք ոմանք խոժոռեալ կայք ընդ
խաբանսդ. բայց ձեզ գիտուն լիցի, զի
որս կալեալ է ձեր լաւագոյն ևս քան
զինդրեալն ձեր։ Քանզի 'ի խնդիր ելէք
թշնամւոյն, և արդ բարեկամ մեզ ածեալ
բերէք։ Եթէ էր իմ ասասէն Բրուտոս ընդ
ձեռամբ կենդանւոյն, օ՜ն և օ՜ն դիք՝ վա-
րանեալ էր իմ՝ զիարդ վարել ընդ առնն։
Արդ յաջողեսցի ինձ, քան թշնամիս՝ ա-
ռաւել ևս բարեկամս 'ի ձեռս բերել յայս-
պիսեաց ասոի արանց ,, ։ Ասաց, և գիրկս
ածէր Լուկիլլիոսի, և առեալ տայր զնա
'ի ձեռս միոյ 'ի բարեկամացն. և ապա 'ի
գործ վարեալ զնա՝ ցանգ հաւատարիմ և
անդրդուելի եգիտ զնա յամ 'ի գործս։

Իսկ Բրուտոս անցեալ ընդ դեռ մի, ո-
րոյ ավուանք իւր անտառախիտք և անկոխք,
ոչինչ կարի մխեցաւ 'ի ներքս, քանզի և
էր իսկ գիշեր. եկն նստաւ յանձաւ մի՝ և

'ի վերոյ վէմ ահագին կարկառեալ 'ի դուրս. էին ընդ նմա սակաւք 'ի զօրավարացն իւրոց և 'ի բարեկամացն. և անդանօր նա առաջին վերակնեալ ընդ երկինս աստեղազարդ, տոլս կրկին յառաջ եբեր կարդաց. զմին 'ի նոցանէն ալձանագրեաց ինքնին Վոլումնիոս, իբր այն, "Արամազդ, մի ծածկեսցի 'ի քէն այսց պատճառք աղէսից 3 ,,: Իսկ զմիւսն ասէ նոյն այր 'ի մոռացօնս դարձուցեալ 4 : Եւ ապա յետ սակաւու այր ըստ առնէ յիշեալ զբարեկամն յականէ յանուանէ որ յանդիման իսկ իւրոց աչաց գիտասպաստ անկան 'ի մարտին, իսոր յոգւոց հանէր յայնժամ Բրուտոս, մանաւանդ յորժամ զՓլաբիոս յիշէր և զԼաբէոնն. էր Լաբէոնն ինքնին ետեղակալ իւր, և Փլաբիոս եպարքոս աբուեստագործացն:

'Ի նմին ժամու մի ոմն յարանց անտի նորա պասքեալ 'ի ծարաւոյն, և զԲրուտոս ինքնին 'ի նոյն կիրս տեսեալ, առեալ սաղաւարտընթացաւ 'ի վայր 'ի գետ անդր. իսկ յայնժամ շուինդն հարեալ յայնկոյս գետոյն, անդէն Վոլումնիոս և 'ի միասին Դարդանոս զինակիր վազեցին տեսանել. և կացեալք վայր մի և դարձեալ այսրէն՝ խնդրէին ջուր յարբումն. իսկ Բրուտոս կարի ինն ժպտեալ 'ի Վոլումնիոս կողմն՝ ասէր. "Արբին ողջոյն. բայց այլ բերցեն ձեզ ,,: Եւ անդրէն զնոյն այր առաքէին զջրոյ. բայց վտանգեցաւ այրն յայնժամ վայրիկ մի ձերբակալ 'ի թշնամեացն լինել,

և հազիւ ուրեմն մաղապուր լինէր՝ առեալ վէրս յանձին։

Բայց ապա 'ի միտս եղեալ Բրուտոսի, զի ոչ շատք տապաստ անկան 'ի կռուին, յանձն առնէր Ստատիւղիեայ գնալ անցանել ընդ մէջ Թշնամեացն. (զի և ճանապարհ այլ չէր գնալ տեսանել զբանակն), և ողջ դառեալ անդանօր զկրան, ջահ մի ամբառնալ նոցա 'ի նշան, և դառնալ այսրէն։ Իբրև ողջանդամ անց այրն 'ի բանակն, առեալ ամբառնայր զջահն. բայց իբրև բազում ժամանակ 'ի վերայ անցին, և ոչ դառնայր անդրէն, յոգւոց եհան Բրուտոս, և ասէ. "Բաբէ, եթէ ողջ էր Ստատիւղիոս, անշուշտ դարձեալ էր այսրէն"։ Եւ դէպ եղև արդեօք առն 'ի դարձին 'ի ձեռս անկանել Թշնամեացն, և խողխողել 'ի նոցանէն։

Ապա իբրև գիշերն յառաջէր, յայնժամ Բրուտոս 'ի բազմոցին 'ի Կղիտոս կոչին խոնարհեալ յընտանին իւր՝ խօսեցաւ 'ի ցած ընդ նմա։ Լուռ եկաց Կղիտոս, և սկսաւ արտասուել. իսկ նա դարձաւ միւսանգամ առ Դարդանոս զինակիր, և առանձին զբանիւք անկանէր ընդ նմա։ Եւ ապա 'ի վերջէ խօսել և ըստ Վոլումնիոսի յունարէն, յուշ ածէր նմա զվարդապետութիւնն և զհրահանգն՝ յոր վարժեցան, և աղաչէր զնա ձեռն 'ի սուր ինքնին արկանել, և օգնել նմա 'ի հարուածին։ Իբրև Վոլումնիոս և այլք ևս յանձին ոչ կալան, և յասել անդ ուրումն՝ եթէ դե-

գերել այնուհետև չէ՛ արժան, այլ փախ-
չել պարտ է, կանգուն եկաց Բրուտոս և
ասէ. "Անշուշտ փախչել պարտ է. բայց
ոչ ոտիւք, այլ ձեռօք"։

Ապա զուարթագինս զաջ իւր կարկա-
ռեալ առ ամենեսեան, կայր և ասէր զմե-
ծապէս խնդութիւն սրտին, զի դաւ ինչ
չետես 'ի բարեկամացն, և զի ցաւէ նմա
միայն 'ի վերայ բախտին հայրենի աշխար-
հին. և զի՝ քան զյաղթականն՝ երջանիկ
առաւել համարի զանձն, ոչ յերեկն և
յեռանդն միայն, այլ և յառաջական,
թողեալ փառաւոր յիշատակ զառաքի-
նութեան. յոր ոչինչ արդեօք յաջողես-
ցին՝ ասէ՝ յաղթականքդ 'ի զէնս և յընչա-
էտութեան իւրեանց. քանզի և կարաս-
ցեն ինչ ոչ վայելել դոքա զիշխանութիւդ՝
որ ոչն անկանէ նոցա, 'ի մահ անօրէնքդ
զարս վարելով զարդարս, և չարքդ զառա-
քինիս։ Իբրև զայս ասաց, խրատ տայր նո-
ցա և աղաչէր ապրեցուցանել զանձինս
իւրաքանչիւր. և ինքն 'ի կողմն մի տեղի
ետ հանդերձ երկոքեանքն ոմանքն և երիւք.
յորոց մի էր և Սարատոնէսն մտերիմ նո-
ցա 'ի պատճառս հռետորական վարժիցն։
Առ սա մերձ եկեալ Բրուտոս, և 'ի դե-
տին երկոքեանքն ձեռօքն սուր մերկ վար-
սեալ հարստեալ ընդ երախակալն, անկա-
նէր 'ի վերայ և այնպէս զրաւէր 'ի կենացն։
Իսկ կէսք ասեն, եթէ ոչ ինքնին, այլ
Սարատոնէսն 'ի շատ թախանձանացն Բրու-
տոսի 'ի ներքոյ կալաւ զսուրն՝ յետս կոյս

զաչսն դարձուցեալ, և Բրուտոս թափ տուեալ անկանէր 'ի վերայ լանջացն և անդէն մեռանէր։

Իսկ Մեսսալաս բարեկամ Բրուտոսի յետ ժամանակաց 'ի հաշտութիւն եկեալ ընդ Կեսարու, յաւուր միում պարապոյ առեալ զՍտրատոնիկէս և առաջի մատուցեալ նմա ասէր արտասուօք. "Սա այս այր է, ով Կեսար, որ զվերջին սպաս ի մոյն եհար Բրուտոսի,,։ Զնա սիրով հիւրընկալեալ Կեսարու, և միշտ նիզակակից իւր առեալ զնա 'ի գժուարին նահատակութիւնն, և 'ի կռուին որ յԱկտիոն, գտանէ զնա իբրև զմի 'ի քաջաց անտի իւրոց Հելլենացւոցն։

Բայց յաղագս Մեսսալասայ պատմեն, եթէ իբրև գովեցաւ 'ի Կեսարէ այրն՝ զի որ երբեմն 'ի Փիլիպպէ իւր ոխերիմ թշնամի 'ի շնորհս Բրուտոսի, սակայն և յԱկտիոն մոտաղիւրագոյնս նահատակեցաւ 'ի վերայ նորա, ասէ Մեսսալաս. "Ես ինքնին ով Կեսար, միշտ կողմն և մասն կալայց զլաւին և զարդարոյն,,։

Բայց Անտոնիոս գտեալ զդիակն Բրուտոսի, հրաման տայր գլուզարդել 'ի յոյժ պատուական ծիրանեաց իւրոց։ Եւ ապա իբրև լուաւ զգողանալ ծիրանւոյն, 'ի մահ մատնէր զգողն. և զնշխարսն Բրուտոսի առեալ առաքէր առ մայր նորա Սերվիլիա։

Իսկ յաղագս Պորկիայ կնոջն Բրուտոսի պատմէ Նիկոլայոս իմաստասէր և Վալերիոս Մաքսիմոս, եթէ հաստատեալ նորա

անձին առնել, և ո՛չ թոյլ եղեալ նմա 'ի բարեկամացն որ շուրջն կային և ցանգ պահէին, նա ինքնին կայծակունս 'ի հրատէն կորզեալ արտաքս՝ առեալ կլանէր, և պընդապէս փակեալ զբերանն, այնպէս զրաւէր 'ի կենացն։ Բայց սակայն և նամակ մի Բրուտոսի շուրջ յածեալ է գրեալ առ բարեկամն. յորում բողոք մեծապէս ունի և ողբայ զՊորկիա՝ իբրու որ անհոգացեալ և լքեալ 'ի նոցանէն ի՛ցէ. ուստի և նա առ խօթուլթեանն հաստատեալ ի՛ցէ մանաւանդ եւանել 'ի կենացն։ Արդ՝ թուի ոչինչ քաջ տեղեկանալ Նիկողայոսի վասն ժամանակին. քանզի և նամակդ ևս՝ եթէ արդեօք 'ի հարազատաց անտի ի՛ցէ Բրուտոսի, տայ մեզ գիտել միանգամայն և զկիրս խօթուլթեան և զսէր կնոջն և զորինակ մահուն նորա։

---

# ԶՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ

## ԴԻՈՎՆԻ
## ԵՒ
## ՄԱՐԿՈՍԻ ԲՐՈՒՏՈՍԻ

Լ.Ի արդ՝ շատ ինչ քաջալաւ հանդի-
պեալ արանցդ այդոցիկ, և առաջին՝ զի
այնպէս 'ի դուշնաքեայ պատճառաց այն-
պիսի մեծամեծք երևեցան նոքա, որ-
դեօք այս պանծալի ևս ի՝ցէ վասն Դիոնէսի։
Քանզի և ոչ ոք արդեօք պարծեսցի զօրա-
վիգն լեալ Դիոնէսի 'ի բանիդ յայդմիկ,
ըստ որում Բրուտոսի՝ Կասսիոս, այր՝
թէպէտ և ոչ հանգիտակշիռ նմա յառա-
քինութեան և 'ի շուք համբաւոյն, սա-
կայն և 'ի գոռին և 'ի քաջութեան և յու-
շիմութեան և 'ի նահատակութիւնն՝ զօ-
րավիգն եկաց ոչինչ պակաս քան զԲրու-
տոս ինքնին գլխովին։ Նա՝ և կէսք նմա
գրեն զսկիզբն ողջոյն զնահատակութեն,
և զնա պարագլուխ անզարհուրելի ասեն

խորհրդոյն ընդդէմ Կեսարու առ Բրուտոս։ Իսկ անդուստ քաջայայտ կայ՝ անձամբ անձին կազմել Դիոնէի և հանդերձել՝ որպէս զէնս և զարդս և նաւս և զօրս, սակէս և բարեկամս և նիզակակիցս նահատակութեան գործոյն։

Առ այսոքիւք՝ զի և ոչ գանձ և զօրութիւն կթէր Դիոնէն 'ի գործոց անտի իւրոց և 'ի մարտէն գլխովին, իբրու Բրուտոսայլ և զիւրական գանձն 'ի պէտս վարէր մարտին, և յազատութիւն քաղաքացնոցն ծախէր զհասան՝ զոր առնոյր 'ի վտարանդութեան անդ իւրում։

Դարձեալ առ այս՝ Բրուտոս և Կասսիոս ոչինչ կարացեալ կեալ յանքոյթ նաւահանգիստ՝ վտարանդեալք 'ի Հռովմայ, այլ 'ի մահ դատակնքեալք և հալածեալք, ապաւինեցան 'ի կռիւ անդր բերեալք 'ի հարկէն. և ապաստանք յամրութիւն զինուց՝ դիմագրաւ դտան քան վասն քաղաքացնոց՝ առաւել ևս վասն անձանց։ Իսկ Դիոնէ՝ թէպէտ և 'ի ձեռս էր նորա կեալ 'ի վտարանդութեանն աներկիւղ և խնդագին ևս քան զբռնաւորն ինքնին՝ որ վտարանդեացն զնա, համայն և այնպէս կամակարութիւն պտի 'ի մեծապէս վտանգ առեալ ձգէր զանձն 'ի փրկութիւն Սիկիլիոյ։

Եւ արդեօք նոյն չէր Ճողոպրել 'ի Դիոնիսեայ զՍիրակուսացիս, և 'ի Կեսարէն զՀռոմայեցիս. քանզի առաջինդ և ոչ ինքնին յուրատատ ինչ լինէր զբռնաւորութին և յաղէտս ամբաւ պատեալ պաշարեալ էր

զՍիկիլիա։ Իսկ տիրապետութիւն կեսարուն՝ թէպէտ և 'ի միեալ անդ քիրան ոչ դոյզն հասոյց հակառակ կողմանն, այլ յընդունելութեան իւրում և 'ի յաղթութեանն տեսաւ նա իբրև անուն միայն և կերպարան միայն. և ոչ գործ մի անագորոյն և ոչ բռնաւորական ինչ 'ի նեղքս եբեր նա. այլ և յորժամ և ինքնին իրացն միապետութեան պէտք էին, նա իբրև յոյժ հեզահամբոյր բժիշկ 'ի նեղքս ընծայեցաւ յԱստուծոյ։ Ոյր աղագաւ և 'ի մահուն իւրում անձկացան նմա ժողովուրդք Հռոմայեցւոց, և դառնացան ևս անհաշտելիք ընդ դաւաճանն կենացառնն։ Իսկ Դիոնն յոյժ բամբասեցաւ յիւրոց անտի քաղաքացեաց, զի թոյլ եւ Դիոնիսեայ գնալ 'ի Սիրակուսայ, և չեհար չաղարտեաց զգերեզման բռնաւորին՝ որ յառաջ քան զնա։

Նաև 'ի նահատակութիւնս զինուորութեան նոցա տեսանեմք զԴիոնն զօրավար անստգիւտ՝ 'ի գլուխ տանել քաջութեամբ զգործն՝ յոր ինքնին միեցաւ, և 'ի դարմանել և 'ի լաւ անդր հաստատել զնանդարեալսն յայլոց։ Իսկ Բրուտոս՝ թուի թէ ոչինչ զգօնացաւ 'ի վերջին 'ի սահմանաւոր մարտին. և ոչ դարձեալ 'ի պարտիլ իւրում իմաստնացաւ ինչ յոտին կանգնել, այլ սրտաբեկ սրտառուչ յուսակտուր լինէր. և ոչ դարձեալ քաջալերեցաւ արձանանալ հաստատուն իբրու Պոմպէոս ընդդէմ բախտին. և այն զի յոյս

մեծապէս կայր տակաւին յառաջոյ 'ի զէնս իւր և 'ի զօրն, և իւրովք իսկ նաւուք յանդորրու տիրացեալ իսկ էր ծովուն։

Բայց են բամբասանք Բրուտոսի մեծ յոյժ, զի փրկութիւն գտեալ նա 'ի ձեռաց Կեսարու, և ինքնին ևս փրկեալ 'ի նորա ձեռն զգէրին՝ զոր միանգամ կամեցաւ, և համարեալ ինքն բարեկամ և պատուեալ առ 'ի նմանէ 'ի վերս քան զբազումս, իւրովք իսկ ձեռօքն գործակից լինէր սպանութեան նորա։ Եւ արդեօք 'ի բամբասանաց ասոյ ազատ է Դիոնն. այն՝ որ ընտանի գոլով Դիոնիսեայ և բարեկամ, առաջնորդէր իրացն նորա, և գործակից լինէր 'ի յաջողութիւն նոցա. և ապա վերատարանդեալ 'ի հայրենեացն և թշնամանեալ 'ի կին անդր իւր, և վրիպեալ 'ի գոյից իւրոց, մարտ ապա յայտնի մղեաց ընդդէմ նորա օրինաւոր և արդար։

Այլ սակայն զնոյն զայդ 'ի հակառակն շրջեսցէ ոք արդեօք։ Քանզի մեծապէս յոյժ գովութիւն արանցդ այդոցիկ՝ է ինքնին դոցա թշնամութիւնն ընդդէմ բռնաւորաց և չարատեցութիւն նոցա, զոր և բնաւ իսկ անկեղծութեամբ և անարատութեամբ 'ի ներքս եբեր Բրուտոս. քանզի 'ի կշիռ եդ նա զանձն յազատութիւն հասարակաց, և պատճառք առանձին չէր ինչ նորա գրգռութեան ընդդէմ Կեսարու։ Իսկ Դիոնն՝ արդեօք մարտ եդեալ չկռուէր ընդ Դիոնիսեայ, թէ չէր նորա ինքնասեալ առ 'ի նմանէ. և քաջայայտ է

մեզ 'ի նամակաց անտի Պղատոնի՝ եթէ զիարդ նա ոչ ինքնին տեղի տուեալ 'ի բըռնաւորին վայրաց, այլ վտարանդի 'ի բըռնաւորէն եղեալ՝ դիմեաց ապա հարկանել վանել զնա։

Առ այս դարձեալ՝ Բրուտոս 'ի շահ օգտի հասարակաց, միանդամայն և բարեկամ եղև Պոմպէի՝ որում թշնամին էր, և թշնամի ընդդէմ կքրեցաւ Կեսարու. իբրու այն՝ որում կէտ մի միայն թշնամութեանն ի՝ցէ և բարեկամութեանն, արդարութիւնն գլխովին։ Իսկ Դիոնն շատ ինչ գործեաց 'ի հաճել զԴիոնեսիոս, ցոր վայր սա վստահացեալ էր 'ի նա. և առ բարկութեն տապա 'ի յերկուանալն՝ մարտ ընդդէմ նորա մղեաց։ Ոյր աղագաւ և ոչ ամենայն բարեկամք նորա հաւատացին, իբրու որ զԴիոնեսիոս մերժեալ 'ի բաց՝ գուցէ ինքն զանձամբ զիշխանութիւնն առցէ, ամոքեալ զքաղաքացիսն 'ի ձայն իմն անուան հեշտ և համբոյր քան զբռնաւորութեանն։ Բայց յաղագս Բրուտոսի ասէին նորուն իսկ թշնամիք, եթէ 'ի դաւակիցն Կեսարու նա միայն 'ի սկզբանէն մինչև ցկատարած, կէտ նպատակի կալաւ միայն զՀռոմայեցւոցն նորոգել 'ի հայրենին քաղաքաւորութիւն։

Նաև հանդերձ այսոքիւք՝ մրցանք ընդդէմ Դիոնիսեայ բնաւ իսկ չէ հանգունատիպ մրցանացն ընդդէմ Կեսարու։ Քանզի և 'ի կենակցաց անտի ընտանեացն Դիոնիսեայ չէր ոք արդեօք՝ որ չանգոսանէր չխո-

տէր զայրն, տեսեալ զնա բազում անգամ ԹարԹափեալ և զբօսեալ 'ի գինեբբուս և 'ի նարաս և ընդ դասս կանանուոյն։ Իսկ խորհուրդ խորհեալ 'ի վանեալ հարկանեալ զԿեսար, և զանգիտեալ ոչ յուշիմուԹենէն առն այնորիկ և 'ի զօրուԹենէն և 'ի բախտէն, յոյր համբաւոյն միայն՝ քուն աչաց չտային ՊարԹևաց արքայք և Հնդկաց, արդեաք վեհագունին յոյժ գործ ելցէ հոգ. ւոյ՝ այնպէս անմեղկեալ յահէն կացեալ մնացեալ 'ի խորհուրդս արուԹեան քաջուԹեանն։ Ուստի և այն ինչ երևեալ Դիոնիսի 'ի Սիկիլիա, ոչ սակաւ ինչ բիւրք մարդկան խմբեցան առ նա ընդդէմ Դիոնիսեայ։ Իսկ շուք համբաւոյն Կեսարու վախճանելոյ առեալ բարձրացոյց 'ի գեղեցիկ վիճակ զբարեկամն նորա. և անուանն ինքնին գլխովին առեալ ամբարձ զանուանակիրն նորա յապիկար մանկուԹենէն վաղվաղակի 'ի բարձ նախաԹոռ Հռոմայեցւոց. ոչք և զանուն զայն իբրև յուռուԹուլունս իմն առին զանձամբ ընդդէմ ԹշնամուԹեանն և զօրուԹեն Անտոնիոսի։

Ապա եԹէ ոչ զայն ինչ ասէ, եԹէ Դիոնիս մեծամեծ մարտիւք 'ի բաց զբռնաւորն մերժեաց, իսկ Բրուտոս զԿեսար 'ի մահ վարեաց զմերկն զայն և զանպահապան անձն. Դա՛ այդ աւագիկ մեծապէս ուշիմուԹեան նշանակ է և քաջուԹեան՝ արժանի առն զօրավարի. ժամ բարեպատեհ ինդրեալ՝ ունել որսալ անպահապան և մերկ զայր մի այնպիսի մեծազօր և ճոխ։

Քանզի և ոչ իսկ ապան զնա յանկարծակի յեղակարծումն 'ի վերայ անկեալ, և ոչ միայնակ կամ ընդ սակաւուց ոմանց, այլ ընդ հարուստ ժամանակ նիւթեաց մենքենայեաց զիսորհուրդ դաւոյն, և երթեալ վանեաց զնա հանդերձ այլովք բազմաք ուխտապահ ընկերօք. ուստի կամ նա յառաջագոյն քաջապէս խորհրդով այրընտիր արար 'ի լաւորերոյն, կամ ընտրելով զորս վստահն էին 'ի նա՝ քաջագոյնս և ազիւագոյնս յարդարեաց զնոսա: Իսկ Դիոնէն կամ ձախողակի ընտրութեամբն ապատան եղև յարս վատթարս, կամ 'ի լաւութենէն նոցա 'ի վատթարն շրջեաց զնոսա 'ի վարելն զնոսա. յորոց և ոչ մին 'ի դէպ ելեալ խոհականի առն: Նաև ինքնին Պղատոն յանդիմանէ զնա, զի բարեկամս ընտրեաց այնպիսիս՝ յորոց և 'ի կորուստ մատնեցաւ:

Ա՛ռ այսոքիւք դարձեալ՝ 'ի մահուն Դիոնէի չեկաց ոք վրէժխնդիր. իսկ վասն Բրուտոսին՝ և թշնամիք գլխովին փոյթ կալան վասն նորա: Զի Անտոնիոս շքով յուղարկաւորութիւն պատրաստեաց նմա. և Կեսար զյառաջագոյն շուք պատուոյն պահեաց նմա: Քանզի էր իսկ Բրուտոսի անդրի պղնձի կանգնեալ 'ի Մեդիոլան քաղաք Գաղատիոյ որ յայսկոյս Ալպեանց. և յետ ժամանակաց զնոյն անդրի տեսեալ Կեսարու յոյժ նմանատիպ առն և հրաշակերտ գործ, ետես և քայլեաց յառաջ. և ապա վայր մի զտեղի կալեալ՝ առաքեաց

կոչեաց լու 'ի լու բազմութեանն զիշ-
խանս քաղաքին, և ասէր, եթէ զդրժել
զդաշանց խաղաղութեան տեսանէ նա ա-
ւադիկ 'ի քաղաքին նոցա, զի կայ 'ի ներքս
նորա մի ոմն 'ի Թշնամեաց անտի իւրոց։
Նոքա զառաջինն՝ որպէս և 'ի դէպ ար-
դեօք՝ ժխտեցին, և գիտելով ոչ՝ թէ զում-
մէ ասիցէ, հայէին ընդ միմեանս տարա-
կուսեալք։ Իբրև Կեսար դարձաւ յան-
դրին կողմն, և խոժոռ դիմաք ասէր. " Եւ
չիցէ՞ դա աստ կանգնեալ՝ Թշնամի գոլով
մեր ,,. Նոքա և ևս զարհուրեալք՝ լուռ ե-
ղեն։ Յայնժամ Կեսար ժպիտ ընդ քիմն
բերեալ՝ կայր և գովէր զԳաղատացիսն,
իբրև անգրդուելիք կրթեցան նոքա 'ի բա-
րեկամս իւրեանց՝ թէպէտ և 'ի ձախողակ
դէպս նոցա. և հրաման տայր այնպէս կալ
մնալ Անդրոյն 'ի տեղւոջ իւրում 5։

---

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Հոմերոս. Եղիական. Հագներգ. Զ.

2. Կէսք յօրին. Ցն. ὁ Καῖσαρ. և կէսք՝ ὁ καιρός. այս է՝ ժամանակն։

3. Ի Տողս Եւրիպիդեայ Քերթողի։

4. Իսկ միւս Տողն, ըստ որում յառաջ բերեն այլք 'ի մատենագրաց, սաստիկ ևս է ասիւք։ Քանզի ասեն՝ խո՛ր յոգւոց ասել յայնժամ Բրուտոսի յանհնարին աղէտսն. "Բա՜ՀԷ հիքացեալդ Առաքինութիւն, անուն ուրեմն ես դու. իսկ ես ինքն՝ քեզ իբրև գործոյ պատկառ կացի։ Այլ դու ծառայ ես բախտին,,։ Այսչափ ինչ միայն իմաստասիրեացեն հեթանոսք անյոյսք՝ վասն առաքինութեան իւրեանց։

5. Ասանօր վախճան է Զուգակշիռ Վարուցն Պլուտարքեայ. և որ զհետ գան վարք, առանձինք են և չէ՛ զայնոսիկ զուգակշռել ընդ միմեանս։

---

# ԳԼՈՒՏԱՐՔԵԱՑ

## ԱՐՏԱՀԻՍ

# ԱՐՏԱՀԷՍ

ԳՈՒԱՂԻՆՆ որ 'ի Թագաւորս Պարսից Արտաշէս, հեղուԹեամբ և մեծանձնուԹեամբ վեհագոյն, անուանեալ կոչեցաւ Երկայնաձեռն. քանզի և էր իսկ նորա ձեռն աջոյ երկայն քան զձախոյն, և էր նա որդի Քսերքսեայ։ Իսկ երկրորդն՝ զորմէ առեալս ենք 'ի գրել, կոչէր Մնեմոնն, և էր նա 'ի դատերէ առաջնոյն։ Քանզի և որդիք չորք ծնան Դարեհի 'ի Պարիւսատեայ. անդրանիկ Արտաշէս, յետ նորա Կիւրոս. և ըստ նոցանէ երկուք ևս այլ կրսերքք՝ Ոստանէս և Ոքսաթրէս։ Եւ էր Կիւրոս անուանեալ 'ի նախնոյն Կիւրոսէ, զոր ասեն անուանել յԱրեգակնէ. քանզի Կիւրոս կոչեն Պարսիկք զԱրեգակն։ Իսկ Արտաշէսի առաջին անունն էր Արշակ. Թէպէտ և Դինոնն ասէ, Ոարտէս. այլ չէ՛ ինչ հաւանական՝ եԹէ Կտեսիաս

(Թէպէտ և են իսկ 'ի մատեանս նորա զա-
ռանցանք և անհամուրթիւնք ազգի ազգի
առասպելեաց բանդագուշանաց), անգի-
տասցի զանուն արքային առ որում դե-
գերեալ էր, բժշկապետ գոլով արքային և
տիկնոջն և մօրն և զաւակացն:

Արդ՝ Կիւրոս անդստին յառաջին տիոցն
բուռն էր և յանդուգն, իսկ միւսն՝ հեղ
առաւել յամենայնի և բնութեամբ ամոք
և համբոյր 'ի Թափս կրից: Սա այս ըստ
հրամանի ծնողացն ած 'ի կին օրիորդ գե-
ղեցիկ և լաւ. և ապա ունէր զնա առ իւր
ընդդէմ կամաց նոցա: Քանզի 'ի մահ
մատնեալ արքային զէղբայր հարսինն, իսոր-
հէր 'ի կենաց բառնալ և զհարսն գլխատին:
Այլ Արշակայ յողոք անկեալ մօրն և ար-
տասուս բազում հեղեալ. 'ի վերջէ ուրեմն
յաջողէր ապրեցուցանել զնա և առ իւր
ևս ունել զնա. սակայն մայր նորա ըղձա-
կամ էր առ Կիւրոս և խնդրէր Թագաւո-
րեցուցանել զնա: Ուստի և առաքեաց կո-
չեաց զնա 'ի ծովէն, յորժամ և անկեալ
խօթանայր Դարեհ: Յարեաւ էկն Կիւրոս
և մեծապէս յուսացեալ էր 'ի ջանս մօրն
լինել ժառանգ Թագին: Քանզի և էր իսկ
Պարիւատեայ 'ի բանին յայնմիկ պատ-
շառս գեղեցիկ, յորում և ինքնին Քսերք-
սէս նախնին յաջողեցաւ 'ի Թեղադրու-
թենէն Դեմարատեայ. քանզի ծնաւ նա
զԱրշակ՝ յորժամ 'ի սոսկականաց ոք էր
Դարեհ, իսկ զԿիւրոս՝ մինչ Թագաւորն էր:
Համայն և այնպէս ոչինչ կարաց մայրն

'ի հաւանութիւն զարքայն ածել, այլ զանդրանիկն իւր առեալ կացուցանէր թագաւոր, փոխեալ զանուն նորա Արտաշէս։ Իսկ Կիւրոս նախարար կարգեցաւ Լիւդիոյ և զօրավար ծովեզերեայ գաւառացն։ Այլ վայր մի զկնի մահուն Դարեհի ելեալ չոքաւ արքայ 'ի Պասարգադա՝ նուիրել անգանօր յարքունի նուէրսն 'ի քրմաց անտի Պարսից։ Եւ է անդ տաճար՝ մարտիկ Դիցուհւոյն, զոր Ամենասգլխովին ասացէք զք Թերևս։ Արդ պարտ է նուիրելոյ անձինն մտանել 'ի տաճարն և զիւր պատմուճանն 'ի բաց եդեալ՝ արկանել պատմուճան զնախնոյն Կիւրոսի՝ մինչև կացեալ էր նա Թագաւոր. ապա ուտել պաղատիտ մի Թզոյ, և ծամել զբևեկն, և ըմբել բաժակ զշիճուկ կաթին։ Իսկ Թէ բաց յայսցանէ գործին և այլ ինչ, զանխուսէ յայլոց։

Արդ հանդերձեալ Արտաշէսի գործել զայսոսիկ, գայր հասանէր առ նա Տիսափերնէս ածեալ ընդ իւր զմի 'ի քրմաց անտի. այն որ գաստիարակութեամբ զԿիւրոս մարզեալ էր 'ի սովորոյթսն հայրենի 'ի մանկութեան նորա, և վարժեալ ևս էր զնա 'ի մոգութեան. բայց քուրմն Թաղծութիւն 'ի դէմս բերէր առաւել քան զամենայն այր պարսիկ, զի չէկաց Կիւրոս ժառանգ Թագին. ուստի և 'ի գուշակ լինել նորա զԿիւրոսէն, համբուն գտանէր հաւատս։ Քանզի գուշակ լինէր՝ դարան 'ի Կիւրոսէ գործեալ Արտաշէսի 'ի մեհենի անդ, իբրու 'ի մերկանալ արքային զհան-

դերձն՝ 'ի վերայ անկանիլ Կիւրոսի և սպա-
նանել զնա։ Արդ կէսք ասեն՝ 'ի դիպա-
հոչ արարեալ զԿիւրոս վասն ամբաստա-
նութեանն. և կէսք դարձեալ՝ եթէ մտեալ
նորա 'ի մեհեանն և ղողեալ, մատնեցաւ 'ի
քրմէն. իբրև 'ի մահ վարէին զԿիւրոս,
մայր նորա առեալ զնա 'ի մէջ գրկացն և
'ի հիւսս վարսից իւրոց պարուրեալ զնա և
զնորա պարանոցն կապեալ ընդ իւրումն,
այնպէս ճիչ բարձեալ և պաղատանս ձայ-
նեալ և ողբս առեալ՝ ապրեցուցանէր և
առեալ առաքէր զնա անդրէն 'ի ծով անդր-
ուրանօր նա ոչ շատ համարեալ զտէրու-
թիւնն և յուշ անձինն ածեալ՝ ոչ զչնորհն
'ի պաղատանաց անտի մօրն, այլ զձերբա-
կալ լինելն, դրդեալ և 'ի կրից ցասմանն,
ևս քան զևս վառեցաւ 'ի թագն։ Իսկ կէսք
պատմեն՝ նշկահել նմա զարքայն զի էգոյր
նմա ռոճիկ բաւական հանապազօրեայ սե-
ղանոյն. բայց անհամուրթիւն են բանքն,
զի թէ ոչ այլ ինչ, էր նորա մայր՝ յիւրոց
անտի դոյից արդեօք տալ նմա որչափ
և կամէր։

Եւ են իսկ հաւաստիք յայտնի մեծու-
թեան ընչեղութեան նորա 'ի վարձկանս
զօրականին, զոր ունէր և պահէր նա 'ի
տեղիս տեղիս 'ի ձեռն բարեկամաց իւրոց
և հիւրոցն, որպէս պատմէ Քսենոփոնն։
Քանզի տակաւին ղանխուլ պահեալ նա
զկազմութիւն պատրաստութեանցն, ոչ 'ի
մի վայր խմբեալ պահէր զզօրն, այլ էին
նորա ոստիկանք 'ի կողմանս կողմանս, որ

այլ և այլ պատճառանօք զօրաժողովառ-
նէին յեկաց անսի։ Այլ ապա զԼսէթ կաս-
կածանաց արքային 'ի դերևս հանէր մայլ
նորա. նա և ինքնին Կիւրոս գեղեցիկ հլու-
թեամբ առեալ գրէր միշտ առ եղբայրն.
Է զի շնորհս խնդրէր 'ի նմանէ, և Է զի
ամբաստան կայր զՏիսափերնեայ, իբրու-
որ խանտացեալ է ընդ նմա և հակառակ
նորա։ Սակայն և արքայն ինքնին 'ի բնէն
դանդաղկոտ էր, և իբրև հեզութիւն առ-
հասարակ համարեալ էր բանն։ Եւ ան-
դրստին 'ի սկզբանէ շատ իսկ նախանձաւոր
կրթեցաւ նա քաղցրութեան բարոյից մի-
սոյն Արտաշէսի իւրում անուանակցի, և
առհասարակ մարդասիրէր՝ որք մերձե-
նային առ նա. առատանայր 'ի պատիւ և
'ի շնորհս արժանաւորացն, նա և զպատիժ
ևս պատուհասին զամենայն քաղցր գոր-
ծէր. խնդայր 'ի հիւրամեծարութիւնս ան-
ձին՝ ոչինչ պակաս քան զորս 'ի Ներքս բե-
րէին նմա կամ որք ընդունէին 'ի նմանէ,
և համբուն զուարթ և մարդասէր էր նա 'ի
տուրան, որ զի և զամենայն նուէր թէպէտ
և յոյժ գուշնաքեայ՝ ընդունէր մտադիւ-
րագոյնս։ Որպէս և Ովմիսէս ոմն ածեալ
առաջի նորա նուռն մի մեծ յոյժ, ասէր
Արտաշէս. "Երդուեալ 'ի Միհր, զի
այրդ այդ և զքաղաք մի փոքրիկ վաղվաղա-
կի մեծ գործեսցէ, եթէ 'ի ձեռս տա-
ցուք դմա,,։

Իսկ և յուղղոջ այլք ոմանք առաջի մա-
տուցեալ նմա իրս ինչ, անդ այր ոմն գոր-

ծաւոր՝ իբրև ոչինչ այլ էր 'ի ձեռին ընծայել նմա, ընթացեալ 'ի գետն և առեալ ջուր երկոքումբք ափովք՝ այնպէս մատուցանէր նմա։ Յանէն իւր զուարճացեալ Արտաշէս՝ առաքէր տայր առնն բաժակ մի ոսկի և հազար ևս Դարեհեան։ Իսկ Եւկլիդաս Լակոնացի լեզուագարեալ ընդդէմ արքային լրբենի ժպրհութեամբ, պատուիրեաց 'ի ձեռն հազարապետին ասել առնա. "Մարթ է քեզ ընդդէմ արքային ասել զոր կամիս, այլ ինձ՝ ասել և առնել"։ Եւ էր երբեմն յորս ուրեք ցուցեալ նմա Տիրիբազոս պատառեալ զկանդին զարքունի (այն է՝ պատմուճան պարսկական), հարցանէր արքայն, զինչ պարտ իցէ առնել. ասէ Տիրիփազ. "Արկցես դու այլ, և զայդ ինձ տացես"։ Արար ըստ բանին արքայն, և ասէ. "Տամ քեզ զայդ ո՞ Տիրիբազէ. այլ պատուիրեմ մի զգենուլ"։

Բայց Տիրիբազ անսասանեալ հրամանին (չէր ինչ չարամիտ այրն, այլ անհանձար և ծանծաղամիտ), անդէն զանձամբ արկանէր զպատմուճանն. առ այս՝ և 'ի պարգևաց անտի ոսկւոյ՝ զարդ կանանց արքունի, արկանէր պճնէր զանձն։ Իբրև առհասարակ արտմոեցան, Ծիծաղեցաւ արքայն և ասէ. "Զզարդսդ ոսկի շնորհեմ տանել քեզ՝ իբրև կնոջ. և զայդ պատմուճան՝ իբրև անմոի"։ Իսկ 'ի սեղան արքայի ըստ սովորութեան կարգին բազմէր և ոչ ոք բաց 'ի մօրէ արքայի և 'ի տիկնոջէն. 'ի վերոյ արքային բազմէր մայրն, բայց տի-

կինն յետ արքայի. իսկ Արտաշէս և զերկուս զեղբարսն կրսեր զՈստանէս և զՈքսաթրէս առաքէր կոչէր 'ի սեղան իւր։

Իսկ որ առաւել հեշտ և փարելի էր Պարսիկ որերոյն, զի տեսանէին զկառն զՍտասիրայ զոսկինոջ արքայի քօղազերծ 'ի վարագուրաց, զի և կանանց ռամկին մարթ էր ողջոյն տալ նմա և մօտել առ նա. ուստի և այն դշխոյ փարելի յոյժ էր ժողովրդեան։ Այլ սակայն և որք 'ի ժամանակին՝ արք հետամուտք նորութեան և ձեռներէց՝ զայս ասէին՝ եթէ իրաց աշխարհին պէտք են Կիւրոսի, իբրու առն վեհագունի վիճակեալ ոգւոյ և մեծանձին և մարտիկ առն և բարեկամաց սիրողի. և թէ՝ լայնածաւալ արքայութեանն պէտք լցեն արիական և պատուասէր արքայի։

Ապա այնուհետև վստահ եղեալ Կիւրոսի՝ ոչինչ պակաս 'ի յօժարութիւն սրտի մարդկան վերնագաւառացն, քան որ շուրջ զիւրեն կային, կազմեցաւ պատրաստեցաւ 'ի մարտ պատերազմի. և առեալ գրէր առ Լակեդեմոնացիս, թելադիր լինէր ձեռն տալ նմա և առաքել զօրս։ Խոստանայր զօրականին երիվար՝ եթէ հետի գան, և կառս՝ եթէ ձիաւորք գան. և տալ նոցա գեօղս՝ եթէ անդաստանաց միայն տեարք լցեն, իսկ թէ գեօղից տեարք են՝ մատուցանել նոցա քաղաքս. և թոշակ ևս տալ նոցա դրամ ոչ թուով, այլ կշռով։ Ապա և շատ ինչ անճնապարծ՝ յաւելոյր և ասէր, եթէ սրտեայ է առաւել և անդրդ-

դուեալ քան զեղբայր իւր, և է իսկ ինքն առաւել խմաստասէր և ճարտար ևս վարժեալ 'ի մոգութեան, և գինեմբուռ առաւել է քան զնա և գինեւոյ առաւել տոկայ. իսկ իւր եղբայրն վատ արանց է և կնամարդի, որ զի և յորսս բարակաց՝ և ոչ յերիվարին իւրում գիտէ հանդարտել. իսկ 'ի մարտս պատերազմաց՝ և ոչ յիւրում դահին նստել բազմել: Ապա Լակեդեմոնացիք առեալ զԱկիւտաղաս մի յղեցին առ Կղէարքոս, հրաման տուեալ նմա՝ կատարել զամենայն կամն Կիւրոսի:

Յայնժամ Կիւրոս չու առնէր խաղայր գնայր ընդդէմ արքային, ածեալ իւր բազմութիւն յոյժ բարբարոսաց. և 'ի Յունաց վարձկանաց իբրև երեք հազար և բիւր մի, և պատճառս ցանգ պատճառէր նորա զարշաւանին զայնորիկ: Սակայն և խորհուրդ մտացն ոչինչ զանխուլ կացեալ հարուստ ժամանակ, երթեալ Տիսափերնէս զբոյց տայր արքային: Մինչ այս մինչ այն՝ աղմուկ շփոթից յուզեալ յարքունիս, յաւէտ նմն 'ի Պարիւսատէ 'ի վեր հանէին զպատճառ մարտին այնորիկ. և խիթային և ամբաստան ևս կային զբարեկամացն նորա: Իսկ յայնժամ Ստատիրա կարի 'ի խոր խոցեալ վասն մարտին, նեղէր տագնապէր զՊարիւսատէ, բոլոր բարձեալ ասէր. "Ո՞ւրանօ՞ր ի՞ցեն արդ հաւասարդ այդոքիկ: Ո՞ւր և ձայնք պաղատանացդ, որով ապրեցուցեալ քո զդաւաճանն եղբօր, առեալ ըզմեզ արդ արկեր 'ի կռիւդ յայդ և յաղէտս

ամբաւ ,, : Յայսմանէ յատելութիւն բե-
բեալ ընդ Սոատիրայ Պարիւսատէ՝ անդա-
ոին 'ի բնէն յոյժ ցասմնոտ կին , և որ իր-
ժաբար ևս վարէր 'ի Թափ կրիցն , և ոխա-
կալ հնարէր դաւել զՍոատիրէ 'ի կենաց:

Ապ՝ Դիոնոսիս գրէ , 'ի գլուխ հանեալ
զդաւն 'ի ժամանակի անդ մարտին : Բայց
Կտեսիաս ասէ՝ յետոյ ուրեմն : Եւ ինձ
թուի՝ եթէ վերջինդ մերձ գոլով իրացդ՝
ոչինչ անտեղեակ արդեօք ժամանակին ի-
ցէ . նա՛ զի և ոչինչ ունելով պատճառ 'ի
պատմութեան իրացն փոփոխել կամակար
զժամանակն ( թէպէտ և սակայն է գտանել
զայս 'ի պատմութիւնս առն , որ 'ի ճըշ-
մարտութենէն դառնայ յառանցիկն և յա-
ռասպելականն ) , վասն որոյ և մեք զնոյն
գործ կարգեացուք անդանօր՝ ուր և կար-
գեացն նա :

Ապ յայնժամ Կիւրոսի յառաջ խա-
ղացեալ, լսէր համբաւ՝ իբրու ոչինչ արագ
մարտ մղել արքայի և ոչ ձեպել 'ի վեդ
ընդ նմա . այլ սպասեալ մնայ 'ի Պարսս՝
մինչև 'ի կողմանց կողմանց զօրքն խմբեացին
առ նա : Քանզի և իրամ ևս հատեալ էր
ընդ մէջ դաշտին՝ լայնութիւն տասն ( քայ-
լից ) , և խորութիւն նոյնչափ , և երկայնու-
թիւն չորեքհարիւր ասպարիսաց , և թոյլ
ևս ետ անցանել Կիւրոսի և յառաջ խա-
ղալ ոչինչ կարի հեռի 'ի Բաբելոնէ: Այլ
Տիրիբազ որպէս ասեն՝ առաջին համար-
ձակեալ ասէր ցարքայն , մի խոյս 'ի մար-
տէն տալ , և լքանել թողուլ զՄարս և

զԲաբէլոն, և մի զՍուսան գլխովին, և վերջոտնիվ կալ 'ի Ներքս 'ի Պարս. Նա՛ զի և էն իսկ Նորա կազմ և առ ձեռն զօր բազմապատիկ յոյժ քան զԹշնամւոյն, և նախարարք բիւրք էն Նորա և զօրավարք քաջամարտիկք և քաջախորհուրդք քան զԿիւրոսին: Իբրև զայն լուաւ Թագաւորն՝ դըրդեցաւ վաղվաղակի 'ի կռիւն:

Եւ անդէն զառաջինն յերևան հանեալ բանակ մի ինն տուն բիւրուց զօրաց շքեղ վառեալ և կազմեալ՝ ահաբեկ առհասարակ զԹշնամին առնէր. որ յանդուգն յարձակմամբ և յընչաց ևս քերեալ, այնպէս խաղային դիմէին խառն 'ի խուռն և անզէնք: Ապա յայնժամ մեծապէս սըրտաԹափ առնէր զնոսա Արտաշէս, որպէս զի և Կիւրոս ինքնին անհնարին տագնապեցաւ, և աղաղակ ուժգին բարձեալ հազիւ ուրեմն բաւական լինէր կարգ տալ զօրուն: Իսկ անդուստ արքային լուռ և անշըշունչ և քայլ 'ի քայլ յառաջ զիւրսն խաղացուցեալ, յոյժ հիացուցանէր զՀելլենացիսն 'ի տեսիլ գեղեցիկ կարգին. այն ինչ նոքա ակնկալեալ մնային խառնագոչ աղաղակի և խառնամբոխ հրոսակի և սաստիկ ամբոխից ամբաւ խուժանին:

Ապա Արտաշէս քաջիկ խորհրդով առեալ կարգէր ընդդէմ Հելլենացւոց 'ի հանդիպոյ իւրոյ փաղանգին կառս քաջամուրս գերանդազէնս, զի 'ի Թափ յարձակման նոցա ընդոստնեալ բեկցէ զկարգ դասաւորուԹեան նոցա՝ մինչև 'ի գոռն

միսեալ էր։ Արդ զմարտ զայս պատերազ-
մի պատմեցին բազումք. բայց Քսենոփոն-
'ի տեսիլ ական գլխովին առեալ բերէ ըզ-
բանն, Ճշգրիտ 'ի գէմս զնահատակութիւն
ածելով զառն առն. ոչ իբրու վաղնջուց
անցելոցն պատմիչ, քան թէ որ անդէն ա-
ռաջի իսկ աչաց գործեացին իրքն. իսկ 'ի
կենդանագիր պատմութեանն շարժէ վա-
ռէ նա զականջալուրն, իբրու որ զնա ևս
գլխովին 'ի նոյն նահատակութիւն առեալ
նահատակեցուցէ, որպէս զի և ոչ բանա-
ւոր ոք այր յանձին կալցէ արդեօք առնուլ
կրկնել զմիանգամ պատմեալսն. բայց թէ
'ի նեղքս բերցուք մեք զարժանիսն յիշա-
տակաց, զոր միանգամ զանց արար այրն
'ի պատմել։

Արդ՝ զտեղն Ճակատու պատերազմին
կարգային Կունաքսա, և է այն հեռի 'ի
Բաբելոնէ հինգհարիւր ասպարիսաք։ Բայց
մինչև ձեռն 'ի գործ արարեալ, խրատ
տայր Կղէարքոս Կիւրոսի՝ յետոյ Մակե-
դոնացւոյն կալ և մի դիմագրաւ լինել։
Եւ պատմեն՝ տալ պատասխանի Կիւրոսի.
"Զի՞նչ ասես ո՞վ Կղէարքէ։ Հրամայե՞ս
դու ինձ 'ի հետամուտ լինել թագին, ա-
նարժան լինել թագին"։ Ուստի և վրի-
պակ մեծապէս գործեաց Կիւրոս, այն-
պէս յանդուգն անձնագրաւ 'ի վտանգս
լինելով անհնարինս. սակայն և ոչինչ պա-
կաս, թերևս և մեծ ևս սխալեաց Կղէար-
քոս, զի ոչ Ճակատեցոյց զՀելլենացիսն
ընդդէմ արքային, և զայնոյ թիւն առեալ

խաղացուցանէր մօտ 'ի գետ անդր, զի մի 'ի նեղքս վակեսցի։ Քանզի թէ յամենայն նի զանգորրութիւն խնդրէր նա և այնչափ ինչ փոյթ էր նորա խոյս տալ յամենայն ձախողակացն, լաւ ևս ուրեմն էր անդէն առ տնին դադարել նմա։ Սակայն գամ մի 'ի ցամաք ելեալ 'ի ծովէն զինու զարդու ասպարէզս բիւրս անբռնադատ 'ի մարդոյ և խորհուրդ կալեալ նստուցանել զԿիւրոս 'ի գահ արքունի, ապա յետ այնորիկ 'ի զննել խարել այնպէս զդիրսն և զդասաւորութիւն կարգին՝ ոչ 'ի փրկութիւն զօրավարին յորմէ զթոշակն առնոյր, այլ զի անձին տեղի պատրաստեսցէ կռուոյ յանքոյթ և յանգորրու, հանգուցատիպ ամենևին ցուցաւ մարդոյ՝ որ առ ահի մօտալուտ վտանգին յամենայն խոհականութենէ վրիպեալ ելցէ 'ի բուն նահատակութեան արշաւանին այնորիկ։

Քանզի և քաջայայտ իսկ կայ յանցիցն անցելոց, եթէ և ոչ մի ոք 'ի դասաւորաց անտի որ շուրջ զարքայիւն՝ ունէր ինչ 'ի դիմի հարկանել հրոսակին Հելլենացւոց, և 'ի վանել ընկրկել նոցա և 'ի փախչել արքային կամ 'ի տապաստ անկանել, անդ Կիւրոս տարեալ զյաղթութիւնն՝ ապրէր և 'ի գահն բազմէր։ Ոյր աղագաւ և յաւէտ տարապայման զգուշաւորութեանն Կղէարքոսի, քան թէ Կիւրոսի յանդգնութեանն ընծայեսցէ ոք արդեօք զվատթարել իրացն և զմահն Կիւրոսի։ Քանզի եթէ արքային գիտացեալ ինչ էր զվայր դա-

սաւորութեան Հելլենացւոցն, 'ի նուազ առնել զհարուած զիւրոցն՝ արդեօք զը-տեալ էր զվայր յոյժ տարադէմ յիւրմէն և յիւրոցն. ուստի ոչ ինքն գիտաց զպար-տութիւն իւր յայնմ կողմանէ, և ոչ Կիւ-րոս օգտեցաւ ինչ 'ի յաղթութէ Կղէար-քոսի. զի օրհաս մահուն կանխեաց նորա։ Եւ արդեօք ինքնին Կիւրոս խելամուտ ե-ղև լաւութեան մասինն, ուստի և պա-տուէր տայր Կղէարքեայ Ճակատել 'ի մի-ջոցին. այլ նա պատասխանի տուեալ՝ լա-ւագունին ևս փոյթ ունել յաջողութեան, հիմն 'ի վեր տապալեաց զամենայնն։

Քանզի թէպէտ և հարուած զամենայն ածին Հելլենացիք 'ի վերայ բարբարոսացն, և յառաջ ևս անցեալ հարին վանեցին ըզ-նոսա հարուստ ասպարէսս, բայց Կիւրո-սին՝ որ յերիվար աշտանակեալ էր 'ի քաջ, բայց խստերախ և ամեհի, անուն Պասա-կաս, ընդդէմ խաղաց դիմեաց (որպէս Կտեսիաս ասէ) Արտագերսէս զօրավար Կատուսիացւոց, ձայն բարձեալ գոչեաց և ասէ. "Ո՞վ դու Կիւրոսին խանգարիչ անուան, անուն գեղեցիկ ևս 'ի Պարսից աշխարհին. այր անիրաւ քան զամենայն մարդ և խելայեղ, այսր եկեալ է քո ա-ծեալ ընդ Ճանապարհ ձախողակ զքաջագ զայդ Հելլենացւոց յառ և յապուր գան-ձուցն Պարսից. ակն կալեալ է քո տա-պատ զքոյինդ արկանել տէր և զեղբայր, սակայն են իսկ նորա բիւրք բիւրուց ծա-ռայից՝ կորովի ևս քան զքեզ. և տեսցես

դու արագ արագ աւագիկ։ Քանզի ասէն արագ գլուխդ քո բարձցի 'ի քէն, մինչև քո զերեսս արքայի տեսեալ լցէ ,,։ Ասաց և Թափ արձակեաց զտէգն. այլ պատեան զրահիցն Կիւրոսի անտեղի տալի՝ անիսոց պահեաց զնա, Թէպէտ և գրգուեցաւ ևս 'ի Թափ սաստկութեան հարուածոյն։ Իբրև զերիվարն դարձոյց Արտագերսէս, անդուստ և Կիւրոս նիզակահար 'ի նա եղեալ, Թափ զսայրն վարեալ անցուցանէր ընդ անրակն պարանոցին։ Արդ՝ միաբան առհասարակ զմահն Արտագերսեայ պատմեն յայնժամ 'ի ձեռաց Կիւրոսի։

Այլ յաղագս մահուն Կիւրոսի՝ քանզի պարզապէս և սղագունիւք անց Քսենոփոնն (Իբրև չէր նա մօտ 'ի վայր անդր), արձանագրեացուք մեք զպատմեալն Դինով նեայ ոճով, ապա և զԿտեսեայն։ Արդ՝ պատմէ Դինոնն, եթէ յետ մահուն Արտագերսեայ մարակ 'ի կուշտ ձիավարեաց Կիւրոս յառաջամուխ 'ի ճակատ արքային. անդ եհար խոցեաց զերիվար նորա, և տապալէր արքայն. իսկ Տիրիբազ արագ արագ յերիվար այլ ամբարձեալ զարքայ, ասէր այսպէս. "Յուշ քեզ ցանգ լիցի ով արքայ օրս այս. քանզի և է իսկ անմոռաց յիշատակաց արժանի ,,։ Բայց Կիւրոս անդուստ միւսանգամ շահատակեալ երիվարաւն՝ անդրէն 'ի գետին տապալէր զարքայն։ Իբրև և երրորդ անգամ յարձակեցաւ, 'ի սրամտութիւն մեծապէս բրդեալ արքային, ասէր առ որս շուրջն կային.

Լա՛ւ ևս է չապրեալն։ Ապա և յարձակեցաւ ընդդէմ Կիւրոսի, որ այնպէս յանդգնութեան և յանձնապատման յառաջ վարեցաւ 'ի տարապ նեռելոյն, և նեռ մի արձակեաց ընդդէմ. նեռաձիգ յայնժամ և նիզակակից.քն լինէին Արտաշէսի։ Ընդ անկանէր վերաւոր Կիւրոս՝ որպէս կէսք ասեն՝ 'ի ձեռաց արքային, և կէսք եթէ հարրաւ նա յառնէ Կարիացւոյ. որում և արքայն 'ի մրցանակ քաջութեանն տայր նմա տանել ցանգ 'ի զինուորութեանն աքաղաղ ոսկի 'ի ծայր աշտէին յառաջոյ գընդին. քանզի և Կարիացւոց արանց՝ Աքաղաղ անուն կարդան պարսիկք, 'ի պատճառս ցցունից վերջից սաղաւարտացն նց։

Իսկ պատմութիւնն Կտեսեայ ծայրաքաղ և 'ի կարճոյ այսպիսի ինչ է։ Յետ սպանութեանն Արտադերսեայ խաղաց Կիւրոս երիվարաւն ընդդէմ արքային, և արքայն ընդդէմ նորա, երկոքին միանգամայն լուռ և անմեռունչ։ Ընդ Արիէոս բարեկամ Կիւրոսի աճապարեալ հարկանել զարքայ, այլ ոչ խոցեաց զնա։ Ապա և արքային արդնընկէց եղեալ՝ վիրեալ 'ի Կիւրոսէ, հար և սպան զՏիսափերնէս զայր հաւատարիմ Կիւրոսի և զքաջ։ Յայնժամ և Կիւրոսի նեռ մի արձակեալ յարքայն, թափ ընդ զրահն անցուցեալ խոցեաց զանջան, և միւսր գնայր սայրն՝ որչափ մատանց երկու, և 'ի հարուածոյն տապալ յերիվարէն անկանէր արքայն։ Իսկ որք շուրջ զարքայիւն՝ խուճապեալք 'ի փա-

խուստ գառնային. բայց ինքն արքայ յա-
րուցեալ հանդերձ սակաւուք ոմամբք՝ ընդ
որս և Կտեսիաս ինքնին, վերջոտնեալ էլա-
նէ 'ի բլուր մի մօտ՝ և անդէն հանդարտէր։

Բայց անդուստ Կիւրոս պատեալ պա-
շարեալ 'ի Թշնամեաց, և հարուստ մի ա-
ծեալ տարեալ յամեհի երիվարէն, և գի-
շեր ևս 'ի վերայ հասեալ, այնպէս զան-
խուլ 'ի Թշնամեացն մնայր, և հեռամուտ
'ի բարեկամացն խնդրէր։ Այլ նա ընդ
յաղթութիւնն փքացեալ և մեծապէս իր-
բախուսեալ, յայսկոյս յայնկոյս վազս ա-
ռեալ երիվարաւն, ձայն բարձեալ գոչէր.
"Տեղի տուք չուառականքդ,,։ Անդ ստէպ
ստէպ զնոյն ձայն կրկնեալ և երեքկնեալ
'ի լեզու պարսիկ, կէսք անդ երկրպագեալ
տեղի տային։ Իսկ 'ի նմին պահու խոյր
Կիւրոսին անկեալ 'ի գլխոյն, անդուստ
պատանի մի պարսիկ Միհրդատ անուն՝
Թափով քերեալ առ նովաւ նեռահար
խոցէր զնա 'ի քունն մօտ յաչն, այլ գի-
տէր ոչ՝ ո՞ ոք էցէ այրն։ Իսկ 'ի յորդահոս
բիսմանէ արեանն և 'ի պոռուոից գլխոյն և
'ի ԹալկուԹենէն տապաստ անկանէր Կիւ-
րոս, և երիվարն 'ի ներքուստ զերծեալ
աստ անդ Թափառեալ վազէր. իսկ զիրիլոն
զերիվարին տեռազերծեալ ժողովէր ա-
րիւնաԹաԹաւ՝ ընկեր առնն որ զԿիւրոսն
խոցեաց յայնժամ։

Ապա 'ի վերջէ վայր մի ոգի առեալ Կիւ-
րոսի 'ի վիրացն, յայնժամ սակաւք 'ի ներ-
քինեացն որ ընդ նմա՝ գուն գործեցին յայլ

երիվար ամբառնալ զնա և ապրեցուցանել. իբրև նա անբաւական յաշտանակել և խնդրեաց ևս հետի գնալ, տուեալ զօրավիգն ածէին զնա. այնպէս վատեալ մարմնով գեղեցիր նա յընթացսն ծանրացեալ և կորակոր գլխոնէն. թէպէտ և յաղթական ևս զանձն գնէր, լուեալ անդուստ զաղաղակ փախստէիցն՝ որ ձայն բարձեալ իւրեանց արքայ կարդային զԿիւրոս և իրն դրէին խնայել։

Իսկ 'ի նմին պահու Կաւնիացիք ոմանք հիքացեալք և չքաւորք՝ որ զհետ գնային զօրայ արքունի 'ի գործս անարդ սպասաւորութեան, անդ հանդիպեցան և իբրև բարեկամք խառնեցան ընդ արանցն Կիւրոսի։ Իբրև ապա զծիրանի կարմիր լանջապանս զարանցն զնեալ գիտեցին, և զի որերոյ արքային առհասարակ սպիտակք են, ծանեան զնոսա 'ի Թշնամեաց անտի։ Ապա մի ոմն 'ի նոցանէն քաջալերեալ՝ 'ի թիկանց կուսէն փքին 'ի Կիւրոս արձակէր, զոր և ճանաչէր իսկ ոչ. իբրև էհար կըտրեաց զերակն նորա մօտ 'ի կարթ ծնգացն, տապալեցաւ Կիւրոս, և անդէն հարեալ զքարի 'ի քունն վիրաւոր, փչեաց զոգին։ Այսպիսի ինչ է պատմութիւնն Կտեսեայ, յորում իբրև գուլ և բութ սուսերաւ հաղիւ ուրեմն այնպէս փողոտեալ սպանանէ զայրն։

Իսկ յետ մահուն Կիւրոսի՝ Արտասիւրաս Ակն արքայի 1, ըստ դիպաց անցեալ երիվարաւն 'ի վայր անդր և զկոծ և

զաշխարան լուեալ զնեբքինեացն. հարցանէր ցայրն՝ որ առաւել հաւատարիմ 'ի նոսա. "Ո՞վ ոք ի՞նչ այրդ ո՞վ Պարիսկէ, առ որում դուդ նստեալ արտասուես"։ Եւ պատասխանի այրն և ասէ. "Եւ ո՞չ տեսանես ո՞վ Արտասիւրէ՝ ասէն գիտապատ զԿիւրոս"։ Հիացաւ Արտասիւրաս և քաջալեր նեբքինւոյն կարդայր և հրաման ևս տայր նմա պահ գիսականն ունել. և ինքն հապճեպ ընթացեալ առ Արտաշէս, այն որ բնաւ իսկ յուսակտուր 'ի գերեցիկ յաղթութենէն, էր և վատթարեալ յոյժ առ 'ի վերացն և 'ի ծարաւոյն, խընդագինս զբոյց տայր արքային, զի ինքնին գիտապատ էտես զԿիւրոս։ Իբրև զայն լուաւ արքայն, անդէն յորդորեցաւ ինքնին հասանել 'ի վայրն, և հրաման ևս տայր Արտասիւրայ ածել զնա. բայց համբաւ լուեալ յայնժամ զմեծի աղաղակի զյաղթութեան Հելլենացւոցն, և զի տիրացան նոքա ամենայնին, և զհետ ևս մտեալ վանեն զփախստեայն, երկեաւ և լաւ համբրեցաւ առնուլ արձակել անդր արս բազումս տեսանել ստուգել զկրոն. և գնացին յայնժամ արք թուով երեսուն հանդերձ ջահիւք լուցելովք։

Իսկ անդանօր արքային յոգիս ապաստան պատակեալ 'ի ծարաւոյն, յայսկոյս յայնկոյս շուրջ ընթանայր վաղէր Սատիբարլանէս նեբքինի, խնդրէր ջուր. քանզի անջրդի էր վայրն, և տարադէմ ևս էին նոքա 'ի բանակացն։ Իբրև հուսկ ապա

գէպ տայր նեբքինեւոյն պատահել առն ու-
մեմն 'ի Կաւնիացւոց անտի հիքացեալոցն, և
ունէր նա ջուր 'ի հնացեալ տկին ժահա-
հոտ և չար՝ իբրև ուրթից ըմպանակաց, ա-
ռեալ զայն վաղվաղակի մատուցանէր ար-
քային։ Իբրև ողջոյն զայն քամեաց ար-
քայն, հարցանէր ցնա նեբքինին, իբրու որ
յոյժ անախորժ պատահեցաւ նմա ըմպե-
լին. իսկ արքայ երդնոյր զերդումն 'ի գիս,
զի երբէք գինի այնպէս քաղցրահամ ոչ
ճաշակեաց նա, երբէք և ոչ ջուր այնպէս
թեթև և ականակիտ. "Որպէս զի եթէ
և ինձ՝ ասէ՝ գտանել զայրն չյաջողէ, որ
զայդ ջուր էտ քեզ՝ մրցանակ տալ նմա,
մաղթեմ 'ի գիցն՝ զի ինքնին նոքա երանե-
լի զայրն զայն արասցեն և ընչաւէտ,,։

Իբրև այս այսպէս կատարեցաւ, դար-
ձան եկին շտապաւ երեսունքն առ արքայ.
ցնծութեամբ լի և ուրախութեամբ զրոյց
բերէին զանկարծելի աւետեացն։ Ապա
Արտաշէս վստահ 'ի բազմութիւն մարդ-
կանն որ շուրջ զիւրև յայնժամ խռնեալ
խմբեցան, յարուցեալ ելանէր 'ի բլրոյն
բազում զամբարոք բորբոքելովք։ Հասեալ
'ի գիսակն, և ըստ օրինի Պարսից 'ի բաց 'ի
գիսականէն կորեալ զաջոյ ձեռնն և ըզ-
գլուխն, հրաման տայր ածել առ ինքն
զգլուխն. և կալեալ զայն զերկայնագէս
հերացն և զթաւ՝ այնպէս առեալ ցուցա-
նէր բազմութեանն, որ դեռ ևս յերկուա-
ցեալք 'ի փախուստ դառնային։ Իբրև զայն
տեսին նոքա, հիացեալք զտեղի առին և

յերկրպագութիւն դարձան աղքայի. և ապա անդէն եօթն բիւրուց արանց խմբեալ ընդ նմա, այնպէս խաղայր դառնայր Արտաշէս հանդերձ նոքօք 'ի բանական: Բայց էր նորա (որպէս Կտեսիաս ասէ) ածեալ 'ի մարտ անդր բիւրս քառասուն: Իսկ Դիոնոսիոս և Քսենեփոնն յոյժ առաւել ասեն զթիւ զօրականին: Այլ զթիւ անկելոցն՝ պատմէ Կտեսիաս, իբրև ինուանց հազարաց զրոյց տալ Արտաշէսի. բայց ինքն ոչինչ պակաս քան զերկուց բիւրուց՝ ասէ երևեալ անկելոցն 'ի դաշտին: Սակայն պայքարեալ են վասն բանին:

Այլ զոր պատմէ Կտեսիաս՝ վասն հրեշտակութեամբ գնալոյ իւրոյ խօսեալ ընդ Յունաց 'ի միասին ընդ Փայիղղոսի Զակիւնթացւոյ և ընդ այլոց բազմաց, յոյժ սուտ: Քանզի և Ճարտար իսկ գիտէր Քսենոփոնն՝ եթէ Կտեսիաս դեղերեալ կայր ընդ արքայի, և յիշատակէ ևս զնա. և քաջայայտ ևս է՝ անցեալ նորա ընդ մատեանսն ընդ այնոսիկ. ուստի եթէ ստուգապէս Կտեսիաս թարգմանութեամբ չոքաւ խօսել վասն մեծաց իրաց, արդեօք ոչինչ անանուն թողոյր զնա Քսենոփոնն, ըստ որում և անուանէ իսկ նա զՓայիղղոս Զակիւնթացի: Սակայն՝ որպէս երևիդ՝ զարմանալի պատուասէր գոլով Կտեսիասդ այդ, դարձեալ և ոչինչ պակաս Լակոնասէր և Կղէարքասէր, ցանգ յիւրում պատմութեանն վայրս իմն ընծայէ նա անձին՝ յորս մերձ ինքնին գոլով՝ բաղում և գեղեցիկ նահա-

տակութիւնս յիշատակէ զԿղէարքէայ և զԼակեդեմոնիոյ.

Բայց զկնի պատերազմին՝ առեալ արքային պարգևս չքնաղս յոյժ և մեծամեծս յղէր առ որդին Արտագերսէայ՝ զոր սպան Կիւրոս. մեծապէս պատուեաց և զԿոտսիաս և զայլսն. և գտեալ ևս զԿաւնային զայն այր՝ որ զտիկն ջրոյն մատոյց, զայրն զայն անենչան և զչքաւոր՝ առեալ բարձրացոյց և ընչաւէտ գործեաց: Բայց և 'ի պատիժ պատուհասի յանցաւորացն գեղեցիկ չափաւորութիւն 'ի ներքս բերէր Արտաշէս: Քանզի 'ի ժամանակի անդ մարտի պատերազմին Արբակէս ոմն Մեդացի գնացեալ անձնատուր առ Կիւրոս, և ապա յետ մահուն Կիւրոսի դարձ անդրէն արարեալ առ արքայ, նա իբրև պարտ համարեալ զայրն անարի վատասրտութեան, և ոչ մատնութեան ինչ կամ չարանիւթ կամաց, հրաման տայր նմա բոզ մի մերկ վերելեակ զպարանոցաւն առեալ, այնպէս շրջեցուցանել զօր մի ողջոյն ընդ հրապարակն: Առ այս դարձեալ՝ հրաման տայր երիւք աղամբք ծակել զլեզու առն ուրումն, որ բայց 'ի դասալիք փնտռուէն, ստութեամբ ևս մնապարծէր տապատ ինքնին զերկուս 'ի թշնամեացն արկեալ:

Բայց արքային յայնժամ կարծեալ ինքն և կամեցեալ ևս առհասարակ ամենեցուն այնպէս կարծել և ասել՝ եթէ ինքնին արքայ է կաց սպանող Կիւրոսի, առեալ ընծայս առաքէր Միհրդատայ՝ այն

որ առաջին հար խոցեաց զԿիւրոս. և ընծայաբերիցն արանցն պատուիրեաց արքայ ասել ցայրն. "Արքայ պատուէ զքեզ ընծայիւքդ, զի դու ինքնին գտեալ զվերարկու տարաղ զերիվարին Կիւրոսի, ածեր առ նա"։ Առ այս՝ և 'ի խնդրել պարգև յարքայէն Կարիացւոյ առնն՝ որ խոցեաց զԿիւրոս 'ի կարթ ծնգացն և տապալեաց զնա, հրաման դարձեալ տայր արքային պարգևաբեր արանցն, ասել ցնա. եթէ "Զպարգև զայդ տայ քեզ արքայ 'ի մրցանակ երկրորդ աւետեացն. քանզի առաջին Արտասիւրաս, և յետ նորա դու ինքնին զրոյց ետուր զմահուն Կիւրոսի"։

Արդ Միհրդատ անմռունչ գնաց 'ի բաց, թէպէտ և 'ի խոր խոցեալ. այլ ջուառականն այն Կարիացի առ անմոռութեանն կիրս կրեաց զհասարակացն։ Քանզի 'ի վեր վազեալ՝ որպէս երևիդ՝ և եղծեալ յառձեռն բարեացն, եդ 'ի մտի հետամուտ վե հագունիցն լինել. ուստի և ոչինչ շատացեալ ընդ պարգևն իրրև 'ի մրցանակ աւետեացն առ Արտաշէս, խոժոռէր սրտնէր. վկայութիւն եդեալ բոլոք բառնայր եթէ ինքնին նա սպան զԿիւրոս և ոչ այլ ոք, և յանիրաւի զրկեն զնա 'ի փառաց անտի։ Լուեալ արքային և 'ի սրամտութիւն մեծ բերդեալ՝ հրաման տայր դլխատել զնա։ Անդ մերձ գտեալ մոր արքային, ասէ. "Մի՛ դու օրինակ զայդ 'ի մահ վարեսցես զմարդախանձ զԿարիացիդ զայդ ո՞վ արքայ. այլ դա յինէն առցէ զար-

ժանին մրցանակ ժպրհութեան բանիցն ,, :
Եւ առեալ յարքայէն զայրն, հրաման
տայր Պարիւսատէ դահճացն 'ի խոշտան-
դանս մատնել զնա աւուրս տասն, ապա
փորել հանել զաչս նորա, և ապա առնուլ
հեղուլ ընդ ականջս պղինձ ջերմաջերմ՝
մինչև սատակեսցի :

Յետ սակաւուց և ինքնին Միհրդատ
առ անմտութեանն կորեաւ հնքաբար :
Քանզի հրաւիրեալ նա յընթրիս միաբա-
նութեամբ ներքինեաց արքային և մօր ար-
քային, ելեալ գնայր անդր արկեալ ըզ-
պատմուճանն և զզարդսն ոսկի՝ զոր ա-
ռեալ էր 'ի թագաւորէն : Մինչդեռ անդ
ընթրէին, մի ոմն երևելի 'ի ներքինեաց ան-
տի Պարիւսատեայ սկսաւ ասել այսպէս.
" Քանի՞ գեղեցիկ պատմուճանդ իցէ ո՞վ
Միհրդատ, զոր արքայ ետ քեզ : Քանի՞ն
գեղեցիկ և մանեակքդ և ապարանջանք :
Քանի՞ պատուական յոյժ և սուսերդ : Ան-
շուշտ նա զքեզ երջանիկ յարդարեաց և
ականաւոր առ ամենեսեան ,, : Իսկ անդ
Միհրդատ, որ արբեալ ևս էր, ասէ. " Եւ
զի՞նչ այդոքիկ իցեն ո՞վ Սպարամիքսէ : Ե՛ս
ինքնին յաւուրն յայնմիկ առ արքային ևս
լաւագունիցն և գեղանեացն արժանի
զանձն իմ ընծայեցի ,, : Յայնժամ Սպա-
րամիքսէ ժպտեալ ընդ քիմն, կրկնեաց
և ասէ. " Ոչինչ խանդամ ես ո՞վ Միհրը-
դատ. այլ քանզի Հելլենացիքդ ասեն՝ ե-
թէ գինին է ճշմարտութիւն ինքնին գըլ-
խովին, ա՛ղէ դու՝ զի՞նչ այն քաջիկ նա-

հատակութիւն իցէ կամ մեծ՝ դտանել զտեղաւորեալ հանդերձ զերիվարին Կիւրոսի և բերել զայն առ արքայ ,, ։ Ասէր այսպէս, ոչ զի զՀշմարիտն անգիտանայր, այլ խնդրէր յանդիման բազմականին առակել Միհրդատայ զանձն. դրդէր դըրդուէր զծանծաղամտութիւն զառնն, որ 'ի շաղակրատել ևս առեալ էր, և 'ի գինւոյն տիրացեալ ևս էր ։

Ապա ոչ ևս ժուժեաց Միհրդատ, և ասէ. " Առէք դուք խօսել՝ որպէս ախորժէքդ՝ զտարաղուց զերիվարիդ և զանհամութեան բանիցդ. այլ ես յայտնապէս ասեմ ձեզ՝ զի զԿիւրոս ինքնին սպանին ձեռքս այս իմ ։ Քանզի ոչ տարապարտ ընդ օդդ արձակեցի ես զնմ նետ որպէս Արտագերսէս, այլ վայրիկ մի ևս հարկանէի ես զնա ընդ աչսն. և հարեալ դիպեցուցեալ թափ ընդ քունն, յերկիր զնա տապալեցի. և մեռաւ նա 'ի վերայ անտի ,, ։ Իսկ անդանօր բազմականն նախատեսս կատարածի և ձախողակ բաղդին Միհրդատայ՝ խոնարհ ընդ երկիր պշնուին. իսկ կոչնատէրն ասէր. " Ա՛ղէ դու ո՞վ Միհրդատ արբցուք մեք այժմ և կերիցուք՝ երկրպագութիւն բախտին տալով արքային, անդր 'ի բաց զզրոյցսդ թողեալ՝ որ 'ի վեր են քան զմեզ ,, ։

Իբրև ընթրիքն կատարեցան, գնացեալ ապա նեղբինւոյն գուշակ բանիցն լինէր առ Պարիւատէ, և նա առ արքայն. 'ի սրտմտութիւն բարկութեան բրդեցաւ ար-

քայ, Լբրու որ այնպէս նշաւակեալ առա-
կեցաւ 'ի բանէն, և վրիպեալ գտաւ 'ի դե-
ղեցիկ և 'ի փարելի մրցանացն 'ի յաղթու-
թեանն իւրում։ Քանզի և կամէր իսկ առ-
հասարակ Յունաց և բարբարոսաց համա-
րել այնպէս, եթէ 'ի կռուին և 'ի շահա-
տակութեանն տարեալ նա վերս յեղբօ-
րէն, և եղբայրն խոցեալ 'ի նմանէն տա-
պաստ անկեալ իցէ։ Ապա հրաման՝ տայր
սպանանել զՄիհրդատ փակեալ 'ի մէջ
կուրից, և են այս լրկանք կուրից անհնա-
րինք՝ այսպիսի ինչ։ Առնուն կուրս երկու
միաչափս և զուգադիրս միմեանց շուրթն
առ շուրթն, և 'ի միում 'ի նոցանէն ա-
ռեալ տարածեն յորսայս զպատժաւորն.
ապա 'ի վերայ զմիւս կուրն յարմարեալ
կափուցանեն, և նորա արտաքոյ մնան
գլուխն և ձեռքն և ոտքն. իսկ ողջոյն մար-
մինն փակեալ կայ 'ի ներքս. ապա տան
առնն ուտել. թէ յանձն չառնու՝ բռնա-
դատեն 'ի նոյն ուժգին խթեալ ընդ աչն.
իսկ յետ կերակրոյն, տան ըմպել մեղր և
կաթն խառնեալ՝ հեղեալ ընդ բերանն, և
թափեն ևս ընդ երեսս նորա. և դարձու-
ցանեն հայեցուցեալ ընդ արեգդէմն զաչս
նորա. և անդ խու՛ռ ձանձրոց փարեալ
զերեսաքն ոստեն ողջոյն։ Իսկ յետ այսո-
ցիկ հնգացեալն 'ի ներքս անդր կատարեալ
զամենայն զպէտս կարեացն՝ զոր միանգամ
բնաւորեցան մարդիկ յետ կերակրոյն և
ըմպելւոյն, ապա 'ի խիխաւրասից անտի և
'ի նեխելոյ աղբեացն տողան ելանէ որ-

դանց և ՃՃեաց, և հաշէն մաշէն նոքա ըզ-
մարմինն, և զեռան սողին մինչև յախոն-
դիս ներքինս։ Եւ անդ է տեսանել՝ 'ի մե-
ռանել պատժաւորին և 'ի բաց զվերին
կուրն առնուլ, ծախեալ կերեալ զմար-
մինն, և եռանդն անհնարին զՃՃեացն, ու-
նել զաղիան և ուտել զնա։ Զաւուրս եօթն
և տասն այնպէս լլկանօք ծախեալ Միհրը-
դատ, հաղիւ ուրեմն 'ի վերջէ ջարամահ
լինէր այրն։

Իսկ որ տակաւին ևս պահեալ կայր Ճա-
բակ 'ի զայրուց Պարիւսատեայ, այն է՝
Մեսաբատէս ներքինի արքային, որ եհատ
զդլուխն և զձեռսն Կիւրոսի։ Բայց քանզի
նա ինքնին պատճառս 'ի ներքս ոչ բերէր
որսալ զինքն, դաւ նիւթեաց Պարիւսատէ
այսպիսի։ Էր իսկ Պարիւսատէ անդստին
'ի բնէն կին հնարագէտ, և էր նա յաջո-
ղեալ յոյժ 'ի խաղ նարտի. և նախ քան
զմարտ պատերազմին նստեալ խաղայր ըս-
տէպ ընդ արքային։ Իսկ և յետ պատերազ-
մին դարձեալ՝ էր երբեմն զի պարապորդ
գտեալ նորա զԱրտաշէս և 'ի խնդիր սիրո-
փութեան, ասպարէզ կարդաց նմա 'ի
նարտ անդր՝ Դարեհեան հազար դահեկա-
նաց, և կամաւ 'ի -ապատութիւն մատնեալ
'ի խաղուն և զտոյժ ոսկւոյն հատուցեալ,
կեղծաւորեցաւ ապա և կնձիռն 'ի դէմս իւր
արձակէր և սրտնէր։ Իսկ անդէն 'ի թա-
խանձել նորա՝ նարտ միւսանգամ արկա-
նել 'ի վերայ ներքինւոյն, հաւանեցաւ
արքայն։ Եւ դաշն կռեալ զի մայրն և ար-

քայն արս հինդ 'ի բաց առեալ յիւրեանց հաւատարմացն, ապա զոր ոք այր խնդրեսցէ յաղթօղն 'ի մնացեալոցն՝ զնա 'ի ձեռս տացէ յաղթեալն։ Դաշն զայս եդեալ՝ նստան 'ի խաղալ։ Անդանօր մայրն Ճիգն զամենայն թափեալ և բիւրապատիկ ճարտարեալ 'ի խաղուն և յաջողեալ ևս 'ի ձիգ քուեայցն և յաղթեալ, առնոյր յինքն ըստ դաշինն զՄեսաբատէս Նեբքինի, քանզի և չէր նա 'ի թուոյ անտի ազատ կացելոցն. և մինչև արքային կասկածեալ ինչ 'ի բանին, առեալ տայր զնեբքինին 'ի ձեռս դահճացն. հրաման տայր կենդանւոյն մորթեզերծ առնել զնա, և զմարմինն առ 'ի շեղ 'ի խաչս երիս բևեռել, և յայլ ցից ուրոյն զմորթն վարսել։

Իբրև զայս արարին, 'ի խոր խոցեալ արքային սրտմտեցաւ ընդդէմ մօրն. նա ծիծաղեալ ասէր հենգն. "Անշուշտ կարի վատիկուրթեամբ գրգռացեալ է քո, որ այդպէս սրտնիս ընդ հինաւուրց նեբքինիդ ընդ ջար։ Դարեհեանս հազար ես ինքնին տուժեցի 'ի նարտիդ, և լուռ ևս կամ և հանդարտեալ եմ,,։ Թագաւորն թէպէտ և խոժոռեալ ևս յայնժամ ընդ խաբանսն, գրգռեցաւ և ոչինչ ընդ նմա։ Բայց Ստատիրա՝ որ և յայլ ինչ իրս յայտնապէս հակառակէր Պարիւսատեայ, խոժոռեալ սրտնեցաւ և յայնժամ, զի այնպէս զարս նեբքինիս զհաւատարիմս արքայի՝ անագորոյնս և անիրաւս 'ի մահ վարեաց նա։

Զայնու ժամանակաւ Տիսափեռնէս դրբ-

ժեալ երդմնակուռ դաշինն և դաւեալ զԿղէարքոս և զայլս 'ի զօրավարացն, ձեր-բակալ առնէ և առաքէ 'ի շղթայս առ արքայ Արտաշէս։ Եւ պատմէ Կտեսիաս՝ եթէ խնդրեաց 'ի նմանէ Կղէարքոս սանտր, և սանտրեալ զինքն, և մեծապէս հաճեալ՝ պարգևէր նմա փոխարէն զիւր մատանին՝ նշան բարեկամութեանն ընդ մերձաւորսն և ընդ ընտանիսն իւր որ 'ի Լակեդեմոնիա. և ունէր մատանին քանդակ 'ի կնքին զօրիորդաց Կարիւացւոց 'ի պարս կաքաւուց։ Եւ քանզի այլք 'ի կալանաւորացն որ ընդ Կղէարքեայ՝ ծախէին շատ ինչ 'ի կերակրոյն զոր առաքէին նմա, և բաժին նուազէր Կղէարքեայ, պատմէ Կտեսիաս՝ եթէ հոգ կալեալ ինքնին՝ յաջողէր կերակուր առատ առաքել Կղէարքեայ, և ուրոյն ևս՝ այլոց զօրականացն. և ասէ՝ յաջողեալ 'ի նոյն 'ի շնորհաց և 'ի հրամանէն Պարիւսատեայ. և թէ՝ օր ըստ օրէ ընդ այլ կերակրոյն առաքեալ առ Կղէարքոս և ապուխտ, նա ազդ առնէր նմա խնդրուածովք յղել առ ինքն գաղտաբար և դանակ փոքրիկ մխեալ 'ի միսն. քանզի խիթայր եթէ թոյտ անագորոյն ինչ կրից արքային վախճանեսցէ ըզկեանսն. և թէ՝ Կտեսիաս առ ահին ոչ հաւանեցաւ բանին. և թէ՝ ինքնին արքայն երդմամբ խոստացաւ մօրն որ բարեխօս կայր վասն Կղէարքեայ՝ ոչ սպանանել զնա. բայց դրդեալ ապա 'ի Աստատիրայ՝ 'ի մահ առհասարակ մատնեաց զկալանաւորսն՝ բայց 'ի Մենոնէն. ուստի և այնուհետև

ձեռնամուխ Պարիւատէ լինէր դէզակուր գաւէլ զԱտատիրա։

Բայց (Կոէսիաս) ոչ 'ի դէպ լինչ ասէ 'ի բանիդ յայդմիկ, յեցեալ յանբանաւոր պատճառս իրացն, յասէլ իւրում՝ իբրու վասն Կղէարքոսին մխէլ Պարիւատեայ յեղեռն բաղմավասանգ՝ 'ի մահ վարէլ զօրինաւոր ամուսին արքայի, յորմէ և եղեն իսկ նմա որդիք պայազատք Թագին։ Այլ քաջայայտ իսկ՝ զկեղծիս զայդ զողբերգակ կցկցէ նա առ 'ի յիշատակէ իւրոյն Կղէարքեայ։ Քանզի և պատմէ դարձեալ՝ եթէ այլոց զօրավարաց դիակունք գէշ արկան շանց և թռչնոց, իսկ Կղէարքեայ դիակն թաղեալ ծածկեցաւ 'ի մրրկէլ հողմոյն և կուտէլ 'ի վերայ մարմնոյն հողակոյտ բազում. իսկ 'ի հողակոյտն բուսեալ ապա արմաւենեաց, և 'ի սուղ ժամանակի անտառ աքանչելի թաւացեալ հովանացաւ վայրացն. որպէս զի և արքայն ինքնին յոյժ զիրջ և ապաշաւ լինէր, իբրու որ զԱտուածոց սիրելին զայր սպան նա զԿղէարքոս։

Ապրդ՝ Պարիւատէ 'ի վաղնջուց ասէլուլթենէն առ Սատիրա և 'ի խանդէն, տեսեալ զզօրութիւն անձինն հատարմատ 'ի շուք պատկառանաց արքային առ նա, իսկ զԱտատիրայն՝ հատահարուատ 'ի սէր և 'ի հաւատ արքային առ նա, եդ 'ի մտի նենգել զնա, նահատակեալ՝ որպէս ինքն կարծեաց՝ յիր մեծ և 'ի բաղմավասանգ։ Էր նորա նաժիշտ հաւատարիմ յոյժ և շը-

նորհս մեծապէս գտեալ առ նմա՝ Դիդէ անուն. Դիոնոսն ասէ՝ օժանդակել սմա 'ի դեղել զՍտասիրա. բայց Կոտեսիաս՝ եթէ գիտակից միայն էր նա յակամայ կամն։ Իսկ զդեղատուն Ստասիրեայ, Կոտեսիաս կոչէ Բիլիտարէ, և Դիոնոսն՝ Մելանտէ։

Արդ յետ յառաջագոյն գժտութեան կագին նոցա սկսան նոքա միւսանգամ կենակից քաղաքավարութեամբ ընթրել 'ի միասին. սակայն և այր յընկերէն խիթայր և անձնապահ լինէր, և առնուին ուտէին նոքա ցանդ 'ի նոյն և 'ի մի կերակրոյ։ Իսկ է 'ի Պարսս թռչուն փոքրիկ՝ որոյ չիք կղկղանք, այլ ճարպալից են նորա ախոնդիք. ուստի և կարծեն կենդանւոյն այնմիկ սնանել յօդոյ և 'ի ցողոյ, և անուն կարգան նմա՝ Ռիւնտակէս։ Արդ ասէ Կոտեսիաս, եթէ Պարիւսատէ առեալ դանակ փոքրիկ դեղամուխ 'ի միոյ երեսացն, և յօշեալ զմի 'ի թռչնոց անտի և դեղեալ այնպէս զմի բաժինն, ինքն արկանէր 'ի բերանն ըզբաժինն անշաղախ և սուրբ՝ և ուտէր, և զդեղեալն առեալ տայր Ստասիրեայ. Բայց Դիոնոսն ասէ՝ Մելանտեայ և ոչ Պարիւսատեայ կորել դանակաւն և դնել առաջի Ստասիրեայ զդեղեալ միան։

Իսկ յետ այնորիկ երբև յոգւոց պարզել պատատան լինէր Ստասիրա դառնապէս ցաւովք և չարալուկ, խելամուտ եղեալ պատճառի աղէտիցն՝ խիթացուցանէր զարքայն ընդդէմ մօրն. որ և ինքնին արքայ 'ի վերայ հասեալ իսկ էր անագո-

րոյն կրից մօրն և աննուէր ոգւոյն։ Ոյր ա-
ղաչաւ անդէն սաստկապէս ճչգիւ 'ի քնին
առեալ զբանն, ձերբակալ առհասարակ
առնէր զծառայս և զտաճարապետս Պարիւ-
սատեայ և 'ի խոշտանգանս մատուցանէր.
բայց նա առ իւր զԳիդէ պահէալ հա-
րուստ ժամանակ 'ի սենեակս իւր, յանձն
չառնոյր 'ի ձեռս տալ զնա արքային՝ զոր
խնդրէր. մինչև Գիդեայ ինքնին աղաչէալ
երթալ գիշերի 'ի տուն իւր, իրազեկ ար-
քայն եղև, և դարանամուտ կարգեալ՝ ձեր-
բակալ առնէր և 'ի մահ վարէր։ Իսկ 'ի
Պարսս ըստ օրինաց կարգին սպանանեն ըզ-
դեղատուս՝ օրինակ զայս։ Առնուն վեմ
լայն և զգլուխն պատժաւորին 'ի վերայ
հանգուցանեն, և այլ վեմ առեալ հար-
կանեն և ծեծեն՝ մինչև 'ի ջախել ջարդել
երեսացն և ողջոյն գլխոյն։ Եւ օրինակ զայս
մահ ընկալաւ Գիդէ։ Իսկ Պարիւսատեայ
յայնժամ ոչ չար ինչ այլ ասաց Արքայ
Արտաշէս և ոչ գործեաց, այլ առեալ
արձակէր զնա 'ի Բաբելոն՝ ուր և ինքնին
ընտրեաց երթալ. և ասէր ցմայրն՝ ցոր վայր
նա անդ լցէ՝ արքայի երբէք ոչ տեսանել
զԲաբելոն։ Եւ էին առ տնին իրք Արտա-
շէսի այսպիսի։

Բայց յետ այսորիկ իբրև Թեւակոխեաց
Արտաշէս, որպէս զԿիւրոս՝ նկուն և զՀել-
լենացիսն առնել որ 'ի միասին ընդ նմա 'ի
վեգ ելին, և այնպէս յանդորրու կալ յար-
քայութեան իւրում, ոչինչ յաջողեցաւ
ունել զնոսա. քանզի նոքա յետ մահուն

Կիւրոսի առաջնորդի և այլոց զօրավարացն զերծան փախստեամբ յարքունեացն։ Բայց յայնժամ հաւաստեաւ իրք Պարսկացդ և արքային առակեալք և նշաւակեալք էին 'ի մթերս ոսկւոյ և 'ի գրգանս փափկութեան և 'ի դասս կանանւոյն. իսկ այլն ամենայն ամբարտաւանութիւն էր և մեծաբանք անոտեաց։ Որ աղագաւ և Եղլադա ողջոյն յայնժամ խրախոյս առեալ՝ ունչս առնէր զբարբարոսաքն։ Իսկ մասնաւոր և Լակեդեմոնացւոցն դժպատեհ թուէր և դժոխըմբերելի իրս ոչ խաղալ գիմել 'ի ժամանակին, և 'ի ծառայութենէ յանդորր հանել զՀելլենացիսն Ասիոյ, և վախճան առնել թշնամանաց և ոտնհարութեանց նոցա առ 'ի բարբարոսաց անտի։ Եւ յառաջ իսկ ժամանակաւ մարտ մղեալ էր Լակեդեմոնացւոց նորին աղագաւ նախ առ զօրավարութեամբն Թիմբրոնեայ, և ապա Դերկիւլիդայ։ Բայց ոչինչ այնպէս նահատակեալ արժանի, 'ի ձեռս տային յայնժամ Ագեսիղայոսի արքայի զառաջնորդութիւն մարտին։

Սա այս Ագեսիղայոս խաղացեալ նաւուք յԱսիա, անդէն նահատակութիւնս մեծամեծս 'ի ներքս ընծայէր և ստանայր նա համբաւ մեծ. հարկանէր վանէր զՏիսաֆերնէս 'ի Ճակատամարտ պատերազմի, և ապստամբեցուցանէր քաղաքս։ Իբրև զայն եռեռս Արտաշէս, մտահոգ եղեալ հնարիմաց խորհրդով մարտ դնել կռուել ընդ Հելլենացւոց, առեալ արձակէր յԵլ-

լադա զՀերմոկրատէս Հռոդացի՝ գանձ բազում ոսկւոյ տուեալ 'ի ձեռս. Հրամանն տայր երթալ կաշառաբեկ առնել զարս տաղս և զզօրս քաղաքաց, և այնպէս դրդել վառել զՀելլենացիս՝ մարտ յօրինել ընդդէմ Լակեդեմոնացւոց։ Իբրև 'ի գլուխ զբանն տարաւ Հերմոկրատէս և զմեծամեծս քաղաքաց դրդեաց 'ի միամտութիւն մարտին այնորիկ, խռով սաստկապէս հարեալ ոգւոյն 'ի Պեղոպոնեսոս՝ առաքեալ կոչեցին յԱսիոյ զԱգեսիղայոս իշխանք Լակեդեմոնացւոց։ Եւ պատմեն՝ 'ի դարձին իւրում ասել Ագեսիղեայ առ բարեկամն, եթէ 'ի բաց յԱսիոյ վտարէ զնոսա արքայ 'ի ձեռն երից բիւրուց աղեղնաւորաց. և ակնարկէր բանիւն զդահեկանն Պարսից՝ որ տիպ 'ի վերայ ունէր զաղեղնաւորի։

Իսկ յետ այնորիկ արքայ և 'ի ծովէն ամի վանեաց վարեաց զԼակեդեմոնացիս 'ի ձեռն Կոնոնի Աթենացւոյ, որ խմբեցաւ ընդ Փարնաբազայ զօրավարի։ Քանզի այս Կոնոնն յետ նաւամարտութեանն առ գետոնն Եգոսի՝ տեղի տուեալ բնակէր 'ի Կիպրոս. ոչ եթէ անձին շատ համարեցաւ անդէն կալ յանդորրու, այլ զի սպասեալ մնայր նա իրացն փոփոխութեան, իբրու դարձագարձ շարժմանց 'ի ծովուն։ Ապա զմտաւ ածեալ՝ եթէ խորհրդոց մտաց նորա զօրութեան պէտք են, և զօրութեան արքայինն՝ խոհականի առն պէտք են, առեալ գրէր նամակ մի առ արքայ վասն խորհրդոյն իւրոյ։ Պատուէր ետ նամակա-

բեր հրեշտակին տալ զնամակն՝ մանաւանդ 'ի ձեռս Զենոնիի Կրետացւոյ, կամ՝ Պոլիւկրիտեայ Մենոէացւոյ. (էր Զենոնիս պարանցիկ, և Պոլիւկրիտոս՝ բժիշկ). իսկ թէ երկոքին դոքա չեցեն անդանօր, տալ 'ի ձեռս Կտեսեայ բժշկի:

Արդ՝ ասեն տալ զնամակն յայնժամ 'ի ձեռս Կտեսեայ, և առնուլ գրել սմա 'ի նամակին յաւելուածով 'ի գրեալն Կոնոնիի առ արքայ, զի և զԿտեսիաս ինքնին արձակեսցէ առ Կոնոնիս՝ իբրև պիտանի այր 'ի ծովականն: Սակայն Կտեսիաս ասէ՝ ինքնակամ կամաք արքայի յանձն առնել նմա զգործն զայն: Եւ այսպէս ապա Արտաշէսի տարեալ գյաղթութիւն 'ի ձեռն փարնաբազայ և Կոնոնիի 'ի նաւամարտութեանն 'ի Կնիդոն, հանէր զտէրութիւն ծովուն 'ի Լակեդեմոնացւոցն և ողջոյն զԵլլադա յայնժամ յինքն յանկուցանէր. որպէս զի և ինքեր ասպա ընդ Հելլենացւոց զհռչակելին զայն հաշտութիւն, որում անուն կարդացին՝ Հաշտութիւն Անտալկիդեայ:

Էր այս Անտալկիդաս Սպարտացի որդի Լէոնտեայ: Սա խնամոտ կուսակից արքայի, եւ յանձն առնուլ Լակեդեմոնացւոց զի առհասարակ հելլենացի քաղաքք Ասիոյ և ամենայն կղզիք ասիական կողմանն հարկատուք արքայի կացցեն՝ ըստ դաշին հաշտութեանն այնորիկ ընդ Հելլենացւոց. (եթէ հաշտութիւն արդեօք արժան իցէ կոչել զոտնհարութիւն զայն

զԵլլադայ և զմատնութիւնն, որպէս զի և մարտի պատերազմի երբէք չեղև կատարած այնչափ անփառունակ պարտելոյ կողմանն)։ Ոյր աղագաւ և Արտաշէս թէպէտ և առհասարակ ատեայր միշտ զՍպարտացիս, և (որպէս Դիոնոսիոս ասէ) լիրբս առաւել ունէր զնոսա քան զամենայն մարդ, համայն և այնպէս 'ի գնալ առ նա Անտաղկիդեայ 'ի Պարսս, մեծապէս յոյժ սիրեաց զնա։ Եւ էր երբեմն՝ զի և պսակ 'ի ծաղկանց առեալ 'ի ձեռն և յետ ընթրեացն թաթաւեալ յիւղ անոյշ յոյժ մեծագին, այնպէս առաքէր զայն Անտաղկիդեայ. որպէս զի և առհասարակ հիացեալ էին ընդ մեծութիւն սիրոյն։ Բայց էր բանն՝ ըստ իմոց կարծեաց՝ յոյժ քաջագէպ առնն շուք գտանել այնպէս գրգռելից, և ունել զայն պսակ՝ իբրու այն որ պար կաքաւեաց 'ի Պարսս, 'ի դէմս բերելով զԼիսիմաքոս և զԿալլիկրատիդէս։ Ուստի և Ագեսիղայոս լուեալ՝ ըստ որում և դէպ տայ՝ ասել ուրումն, եթէ "Աւա՜ղ Եղլադայ, յորժամ մեզ Լակոնացիք Մարանան,,. Եւ պատասխանի. "Ո՛չ. Նա՝ Մարք Լակոնանան,,։ Սակայն և գոռոզութիւն բանին ոչինչ կարձեաց զամօթ գործոյն. այլ զտէրութիւնն կորուսին նոքա յորժամ 'ի Լեւկտրեան մարտին վատթարեցան իրք Լակեդեմոնացւոցդ, և յայնժամ ողջոյն փառք Սպարտիոյ աղարտեցան 'ի դաշանց անտի։

Արդ ցորվայր նախաթոռ կային Սպար-

տացեք, հիւր զԱնտաղկիդաս և բարեկամ իւր կոչէր արքայ. իսկ յետ հարուածոյն Լեւկարեան՝ նկուն եղեալ նոքա և արծաթոյ կարօտեալք, առեալ արձակեցին զԱգեսիղայոս յԵգիպտոս. իսկ Անտաղկիդաս չոքաւ առ Արտաշէս խնդրել 'ի նմանէ թիկունս Լակեդեմոնացւոց. բայց Արտաշէս յայնժամ զանց առնէր զնովաւ, և այնչափ արհամարհանօք մերժեաց զայրն, զի նա 'ի դարձին իւրում տեսեալ զինքն այնպէս այպնակատակ 'ի թշնամեացն, և զանգիտեալ ևս 'ի Պարետաց, այնպէս անսուաղուութեամբ զրաւէր զկեանսն։

Բայց 'ի ժամանակին յայնմիկ չոքան առ արքայ՝ և Իսմենիաս Թեբայեցի և Պելոպիդաս յաղթականն 'ի Լեւկարեան մարտին։ Արդ Պելոպիդաս՝ անփառունակ ինչ յայնժամ անձին գործեաց և ոչինչ, բայց Իսմենիաս՝ իբրև ազգ արարին նմա երկրպագութիւն տալ արքային, առեալ նա զիւր մատանին ձգէր 'ի գետին առ ոտս իւր, ապա խոնարհեալ առնուլ զնա՝ այնպէս իբրև երկրպագու կարծեցոյց զանձն։

Իսկ յետ այնորիկ Տիմագորաս Աթենացի 'ի ձեռն Բելուրիդեայ դպրի արձանագրեալ նամակ գաղտնի առ արքայն, յոյժ ցնծացաւ արքայ և առաքէր նմա 'ի պարգև Դարեհեանս բիւր մի։ Եւ քանզի պէտս առ խօթութեանն ունէր Տիմագորաս կաթին կովու, ետ նմա արքայն ութսուն կով կաթնաբեր, որ զհետ երթային նորա։ Առ այսոքիւք՝ առաքեաց նմա

'ի պարգև և մահիճ և անկողին և անկող-
նարկ որեար, իբրու որ անտեղեակք իցեն
Հելլենացիք անկողնարկս լինել։ Ա՛ռ այս
դարձեալ՝ կարգեաց ևս արս ընդ նմա, զի
բարձեալ տարցեն զնա մինչև 'ի ծով անդր,
զի էր նա հիւանդագին. և ցորքան ժամա-
նակ եկաց նա յարքունիսն՝ յոյժ մեծա-
հաց ընթրեաք հիւրընկալեաց զնա. որպէս
զի և Ոստանէս եղբայր արքայի ասէր էր-
բեմն. "Յո՛ւշ քեզ ո՞վ Տիմագորաս լինիցի
սեղանդ, զի ոչ 'ի գուշնաքեայ ինչ պատ-
ճառաց պատրաստի քեզ այդչափ մեծա-
հաց"։ Զայս ասէր մանաւանդ 'ի կշտամ-
բանս մատնութեան նորա, քան թէ ե-
բախտել ինչ զնա։ Բայց ապա այս Տիմա-
գորաս 'ի մահ դատակնքեցաւ յԱթենա-
ցւոցն, իբրև պարգևընկալ կաշառաբեկ։

Իսկ յետ այսորիկ յոյժ խնդացոյց Ար-
տաշէս զՀելլենացիսն փոխանակ ամենայն
վշտաց նոցա. քանզի առեալ 'ի մահ մատ-
նէր զՏիատիերնէս զոխերիմ թշնամի նո-
ցա և զանհաշտելին. և գործակից ևս էր 'ի
բանին և Պարիւսատէ՝ սաստկացուցեալ
զամբաստանութիւնն ընդդէմ առնն։ Քան-
զի և ոչ շատ ժամանակ եկաց արքայ 'ի
սրտմտութեան իւրում ընդդէմ մօրն,
այլ 'ի հաշտ եկեալ կոչեաց զնա. քանզի
տեսանէր զնա կին հանճարեղ և արի ար-
ժանի գահուն արքունի. և զի և չէր իսկ
նոցա 'ի միջի այնուհետև պատճառք խե-
թից և գրգռութեան 'ի կենակից քաղա-
քավարութեանն։ Ուստի 'և զամենայն

հնարս հնարեալ այնուհետև 'ի հաձել զարքայ, և երբեք չխոժոռեալ ընդ գործ ինչ նորա, մեծապէս ձոխացաւ առ նմա և յաջողէր յամենայնի։

Էր իսկ Պարիւսատէ խեղամուտ լեալ տուփանաց արքային 'ի դուստր մի նորա Աստասա անուն. բայց յանդիման նորա յոյժ թաքուցանէր և սանձէր զկիրսն՝ որպէս կէաք ասեն. թէպէտ և գաղտ մտանէր առ կոյսն։ Արդ Պարիւսատէ իրաղգած եղեալ՝ սէր այնուհետև առաւել քան զառաջինն 'ի դէմս բերէր առ աղջիկն, և գովէր զնորա գեղն և զբոյս բարուցն առաջի Արտաշէսի, իբրու զարքեանի օրիորդի և զդստի։ Եւ այնպէս 'ի վերջէ ամոքեաց զնա ածել 'ի կին զաղջիկն և ամուսին օրինաւոր հրապարակել զնա, ոչինչ միտ եդեալ համբաւոյն Հելլենացւոց և օրինաց. և ասէր ցնա, եթէ՝ Պարսից ինքնին օրէնք աստուածատուր նա է գլխովին, և իրաւացուցիչ ճարի և բարւոյ ինքն է։ Իսկ կէաք պատմեն՝ ընդ որս և Հերակղիդէս Կիւմէացի, ոչ զնա միայն հարանացուցանել Արտաշէսի, այլ և զդուստր իւր զերկրորդ՝ Ամեստրէ անուն, զորմէ վայր մի յետոյ։

Արդ այնպէս իմն սիրեաց Հայրն զԱստասա զլծակից դուստրն, որպէս զի թէպէտ և քոս ճարակեցաւ ողջոյն ընդ մարմին նորա, ոչինչ գարշեցաւ 'ի նմանէ արքայն. և յողոք ևս անկեալ վասն նորա առ Հերա, ձեռնամած ընդ գետին այնպէս երկրպագէր 'ի դիս միայն գլուցուհւոյն այն-

միկ։ Նաև նորա նախարարքն և բարեկամքն 'ի հրամանէն նորա առեալ առաքեցին դիցուհւոյն այնչափ պարգևս ընծայից. զի և ճանապարհն յարքունեաց անտի մինչև 'ի մեհեան անդր ընդ երկայնութիւն վեշտասան ասպարիսաց՝ լի էր առհասարակ միանգամայն ոսկւով և արծաթով և ծիրանեաւ և երիվարօք։

Իսկ յետ ժամանակացս այսոցիկ մարտ ընդդէմ Եգիպտացւոց յարդարէր Արտաշէս, տուեալ զօրավարութիւն 'ի ձեռս Փարնաբազայ և Իփիկրատեայ. այլ յանմիաբանութենէ նոցա վատթարեցան իրք։ Բայց ընդդէմ Կադուսացւոց եւ ինքնին արքայ զօրավար երեսուն բիւրուք հետեւակաց և բիւրուք այրուձիոյ, և միջամուխ լինէր յաշխարհն նոցա։ Եւ է այն աշխարհ դժուարակոխ և մառախլապատ, և յարմտեայ և 'ի պտղոց ամուլ. և տանձիւք վայրենեօք և խնձորովք և որ ինչ այսպիսի հատապտղովք բուծանէ նա զբնակիչս իւր՝ արս քաջամարտիկս և վայրագասունս։ Անդ ապա յանխորհուրդս Արտաշէս անկաւ պաշարեցաւ յանձկութիւնս մեծամեծս և 'ի վտանգս. քանզի և կերակուր չգտանէր, և այլ ուստեք պատրաստել չէր հնար։ Ուստի և զգրասսա բեռնաբարձս 'ի սպանդ վարեալ նոցա յայնժամ՝ պատրաստէին կերակուր. զի և զնալամ մի իշոյ հաղիւ տային վաթսուն դրամակշռոյ։ Յետ այսորիկ և արքայի ինքնին գլխովին պակասեցաւ սեղան, և նուազունք միայն մնա-

ցին յերիվարացն, զի զայլս առհասարակ կերեալ էին։

Յայնժամ Տիրիբազ, այր՝ որ բազում անգամ առ քաջութեանն ամբարձաւ 'ի բարձս առաջինս, և բազում ևս՝ անփառունակ անկաւ առ ծանծաղմտութեանն, և էր նա յայնժամ անաւագ և հիքացեալ, ինքնին սա այր 'ի մէջ եկեալ փրկեաց զարքայ և առհասարակ զզօրն՝ օրինակ զայս։ Քանզի կրկին գոլով Թագաւորացն Կադուսացւոց և ուրոյն բանակ հարեալ երկոցուն նոցա, եկն Տիրիբազ և խօսեցեալ նախ ընդ Արտաշէսի և 'ի վեր հանեալ նմա զխորհուրդ մտացն, չոքաւ ապա անձամբ առ մի 'ի Թագաւորաց անտի, և գաղտ 'ի նմին ժամանակի առեալ և զիւր որդին առաքէր առ միւսն, և յաջողեցաւ նոցա խաբեալ պատրեալ զԹագաւորսն՝ առ որս չոքանն. քանզի միանգամայն և հայրն և որդին գնացեալ զայս ինչ գուշակ լինէին նոցա իւրաքանչիւր, եԹէ միւս այն Թագաւոր դեսպանս աւադիկ արձակէ առ Արտաշէս խօսել հաշտութիւն և նիզակակցութիւն միայն ընդ իւր. ուստի և պատշաւ և արժան է՝ ասէին՝ եԹէ խելս խաւնեսս՝ կանխել քեզ 'ի դեսպանութեանն. զայս ասէին և հաւատարմացուցանէին ևս՝ եԹէ որք եկին գուշակել նոցա զբանէդ, գործակից յամենայնի լինիցին նոցա։

Հաւատս այսոցիկ ընծայեալ բանից երկոցուն Թագաւորացն, և կարծեալ ևս

այնպէս՝ այր յընկերէն անձնապահ լինել նախանձու, մին ընդ Տիրիբազայ առեալ արձակէր դեսպանս, և միւսն ընդ որդւոյն նորա։ Բայց յայնժամ 'ի յերկարաձգել իրացն յուղեցան կասկածք, և դրդեցան զրպարտութիւնք ընդդէմ Տիրիբազայ առ արքային. որպէս զի և արքայ շատ 'ի խոր խոցեալ սրտին այնպէս յանձն ել զի Տիրիբազայ, և ունկն ևս մատուցանէր ամբաստանութեանց յաչալկոտացն։ Իսկ իբրև դարձ Տիրիբազ արար և որդին նորա հանդերձ դեսպանօքն Կադուսացւոց, և ընդ երկուց ևս Թագաւորացն դաշն կռեցաւ խաղաղութեան, այնուհետև փառօք մեծօք ամբառնայր Տիրիբազ առ արքայի։

Զու յայնժամ բանակին տայր հանդերձ Արտաշէսիւ. և արքայ յայնժամ քաջիկ 'ի դէմս եբեր՝ եթէ անարի մեղկութիւն ոչ միշտ գրգանացն պտուղ իցէ և բազմահարուստ գանձուց, (որպէս բազումք կարծեն), քան թէ անազատական և անաւագ բուսոյ բարուցն՝ որ 'ի վատթարութիւն կրթեալ իցէ։ Քանզի ոչ ոսկին և ոչ պատմուճան արքունի և ոչ դարձեալ զարդք ամենայն գեղազարդք շուրջանակի անձին արքայի՝ մեծագնի բիւր մի և երկու հազար տաղանդաց, ոչինչ այս ամենայն խափանեցին յայնժամ զայր Թագաւոր 'ի քրտանց անտի և 'ի վշտմբեր կրիցն իբրու զմի յանաւագ զօրականէն. այլ զանձամբ նա զկապարձն առեալ և զասպարն ինքնին բարձեալ՝ այնպէս ընթանայր գնայր յա-

ռաջոյ զօրականին ընդ Ճանապարհս լեռ-
նուտս և ընդ զառ 'ի վերս՝ զկնի զերիվարն
Թողեալ, Իբրև զայն ժրութիւն զառն Թա-
գաւորի և զարութիւն յակն արկին զօրա-
կանք, Թեթևացեալք մարմնով Թռչէին
սրանային՝ ասպարէզս հատեալ օր ըստ օրէ
երկերիւր և առաւել։

Իսկ Իբրև եկեալ Իջին նոքա 'ի մի յինչ-
վանաց անտի արքունի, և էին անդ պար-
տէզք և դրախտք պանչելիք և հոյակապք
զարդու՝ շուրջանակի 'ի վայր մի գիւր և
ապարակ և անմայրի, Թոյլ տայր արքայ
զօրականին՝ քանզի ՀՄեռն էր՝ պատրաս-
տել կուտել փայտ 'ի վայելուչ անտառէն,
և հատանել կարել յայնժամ ծառա-
տունկ, ոչինչ խնայեալ ամենևին ոչ 'ի
մախրն և ոչ 'ի նոՃին։ Իբրև նոքա վարա-
նեցան ՀՄեռն միսել 'ի ծառատունկսն յայն՝
գեղեցիկ և ամբարձուղէշ, ինքնին արքայ
տապար 'ի ՀՄեռն առեալ ծառ մի հատա-
նէր բարձր առաւել և գեղեցիկ յոյժ. ըստ
նմանէ ապա և զօրականն համարձակ պա-
տրաստէին փայտ, և խարոյկս արկեալ խիտ
առ խիտ՝ այնպէս յանդորրու զգիշերն
անցուցանէին։

Եւ դառնայր գայր Արտաշէս զբաղում
կորուսեալ 'ի քաջ որերոյն, և գոգցեա
առհասարակ զերիվարսն, և կարծեալ
զանՃն այնուհետև անկած և արհամարհ 'ի
Ճախողակ եղից արշաւանին այնորիկ, խի-
Թայր զանգիտեր յաւագանւոյն, և զբա-
զում 'ի նոցանէն 'ի մահ վարեաց 'ի սրտ-

մտութիւն բարկութեան իւրոյ, և բաղում
ևս առ ահի երկիւղին. քանզի և կիրք եր-
կիւղին 'ի բռնաւորութենէն մահառիթ
յոյժ է. իսկ արիութիւն քաջալերութե՛
հեշտ և բաղձալի և անկասկածելի է։ Ոյր
աղագաւ և յաղդդ գազանաց է տեսանել,
որ գժուարահրահանգն լցեն և գժուարին-
տելք՝ են իսկ նոքա վատասիրտք առաւել
և երկչոտք. իսկ որ ազատանձեայք, առա-
ւել վստահք են, և իբրև յանձնապաս-
տանք ոմանք ոչինչ խուսափեն 'ի փայ-
փայանաց մարդկան։

Ապրդ յայնժամ Արտաշէսի յաղթոյթ
ծերութեան յեցեալ, գիտաց զի որդիք
իւր կապ և հակառակութիւն վասն թա-
գին յուղէին ընդ բարեկամս և ընդ աւագ-
որեարն։ Քանզի որք քաջախորհուրդքն
էին 'ի նոսա, զԴարեհ զերեց խնդրէին
պայազատ արքայութեանն՝ ըստ նորայն
օրինակին։ Սակայն և կրսերն որդի Ովքոս
անուն՝ եռանդուն և բուռն, ունէր և նա
յաւադանուոյն կուսակիցս ոչ սակաւ. և
ակն ունէր ևս յինքն զհայրն յանկուցա-
նել յաւէտ հիմն 'ի ձեռն Աստուսայ. ո-
րում և սպաս հարկանէր և յուսացուցա-
նէր ևս յետ մահու հօրն հարանացուցա-
նել զնա և թագ 'ի միասին կապել։ Էր և
համբաւ՝ լինել նմա 'ի ծածուկ ընդ Աստու-
սայ և առ կենդանութեամբ հօրն. բայց
զանխուլ էր բանն յԱրտաշէսէ։

Ապրդ Արտաշէս յայնժամ յուսակտուր
գլխովին արարեալ զՈվքոս, զի մի թերևս

կիրս կրեսցէ նա զԿիւրոսին, և անդրէն միւսանգամ 'ի կռիւս և 'ի մարտ արքայութիւնն պաշարեսցի, առեալ զԴարեհ համբաւէր արքայ՝ ամաց քսան և հնգից, և թոյլ տայր նմա տանել ուղիղ զԼեսոյրն՝ զոր Կիտարի կարդան: Բայց և օրէնք են Պարսից, զի պարգև խնդրէ համբաւեալն արքայ. և զամենայն խնդիր հնարաւոր տայ նմա համբաւիչն նորա: Եւ խնդրէր յայնժամ Դարեհ յԱրտաշիսէ զԱսպասիա, այն՝ զոր մեծապէս սիրէր Կիւրոս, և էր նա յայնժամ հարճ արքային: Էր Ասպասիա ազգաւ Փոկէացի 'ի Յոնիոյ, դուստր ազատ ծնողաց և քաջասուն. և էզև երբեմն գալ ամա ընդ այլ կանանւոյն յընթրիս Կիւրոսի: Անդանօր այլք 'ի կանանց բազմեալ 'ի սեղանի մերձ Կիւրոսի, (որ զուարթաբանէր և հպէր և զրոյցս տայր), ոչինչ անախորժ ընկալան նոքա զգդուանան: Իսկ անդուստ Ասպասիա յոտին կայր լռիկ մինչիկ առ երի մահճին, և ոչ անսայր Կիւրոսի որ կոչէր զնա: Իսկ իբրև սենեկապանքն կամեցան ածել զնա, ասէր Ասպասիա. "Զիրք և ապաշաւ լիցի՝ որ միանգամ 'ի դոցանէ յիս ձեռն մխեսցէ": Ուստի և յանշնորհից ոմանց երևեցաւ նա բազմականին և 'ի տմարդեաց: Բայց Կիւրոսի մեծապէս զուարճացեալ 'ի ծաղր հատաւ, և հայեցեալ ընդ այրն՝ որ ած առ նա զկանայսն, ասէր. "Գիտիցէս արդեօք, զի զդա միայն աւադիկ ածեր դու առիս ազատ և անարատ": Եւ յայնմ

հետէ յանկուցեալ նա յԱսպասիա, խան-
դակաթ սիրեաց զնա առաւել քան զամե-
նեսեան, և խնասանուհի կարգայր զնա։

Ալ ապա իբրև տապաստ 'ի մարտին
անկաւ Կիւրոս, աւար հարեալ բանակին՝
ըմբռնեցաւ և Ասպասիա։ Արդ յայնժամ
'ի խնդրել Դարեհի 'ի հօրէն զԱսպասիա,
խոժոռեցոյց զհայրն։ Քանզի և խանդիւ
նախանձուն բարբարոսքդ յոյժ իսկ վա-
ռեալ էն յանժուժկալութեան 'ի կիրսն.
որպէս զի և պատուհաս ընդունի մահու՝
ոչ միայն որ հարձի թագաւորին մօտ է-
կեալ մերձենայ, այլ և որ ընդ փողոցսն
մօտ քերէ անցանէ առ կառաքն՝ յորս նո-
քա բարձեալ բերիցին։ Եւ թէպէտ և էր
Արտաշիսի ածեալ զԱտոսսա 'ի կին առ 'ի
սիրոյն ընդդէմ օրինացն, և էին ևս առ
նմա սիրասունք երեքհարիւր և վաթսուն
հարճք հրաշագեղք, սակայն և 'ի խնդրել
զԱսպասիա, ասաց՝ ազատ է. ետ հրա-
ման՝ առնուլ եթէ հաճեսցի աղջիկն, ա-
պա թէ ոչ՝ բուռն մի՛ առնել նմա։ Իբրև
առաքեալ կոչեցաւ Ասպասիա, և անդ
արտաքոյ ակնկալութեան արքային հաճե-
ցաւ նա ընդ Դարեհ, ետ նմա արքայն զաղ-
ջիկն՝ բռնագատեալ յօրինացն։ Բայց ա-
պա յետ սակաւու հանեալ զնա 'ի նմա-
նէ, նուիրէր զնա յԵկբատանս քրմանոյշ
Արտեմիսայ, զոր Անահիտն 2 կոչէն. զի
կացցէ նա կոյս զնչխարեալ զաւուրս կե-
նացն։ Կարծեաց այնպէս արքայ՝ եթէ ոչ
ինչ դժնդակս վրէժ զայն խնդրեաց յորդ-

ւոյն, այլ չափով և խառն 'ի խաղոյ։ Այլ ոչ 'ի չափու հանդարտեաց և Դարեհ. քանզի 'ի խանդ սիրոյն ըմբռնեալ էր Ասպասեայ, և զի՝ և թշնամանեալ և այպնակատակ եւ առ 'ի հօրէն համարեցաւ զանձն։

Իրազեկ Տիրիբազ խոժոռութեանն եղեալ Դարեհի, սաստիկ ևս դառնացոյց զնա, 'ի նորայն զիւրն յուշ բերեալ ըզկիրան, որ էր այսպիսի ինչ։ Էին արքայի դատելք բազումք, և խոստացաւ նա զԱսպամէ՝ փարնաբազայ տալ 'ի կին. և զՀոդոգունէ՝ Որիտեայ. և զԱմեստրէ՝ Տիրիբազայ. իբրև առն առն իւրաքանչիւր ետ զնոսա, դրժեաց Տիրիբազայ. և իւր առեալ հարսնացուցանէր զԱմեստրէ, և ընդ նորա խոստանայր Տիրիբազայ զԱտոսսա զկրտսերն։ Իսկ իբրև և 'ի սէրն հարեալ Ատոսսայ՝ հարսնացոյց և զնա արքայն, որպէս պատմեցաքն, այնուհետև ապա յոյժ 'ի խոր խոցեցաւ Տիրիբազ։ Սակայն և չէր ինչ նա 'ի բնէն հաստատուն այր, այլ յեղյեղուկ և խելայեղ. ուստի և 'ի բարձրանալ իւրում ընդ աւագաց, դարձեալ և յանկանել իւրում և յանարգիլ, երբէք 'ի չափու չունէր զանձն 'ի փոփոխութեանն, այլ ամբարձեալ 'ի փառս՝ դժոխըմբերելի էր առ խեռութեանն, իսկ յանարգութեան իւրում՝ ոչինչ խոնարհէր և հանդարտէր, այլ էր նա այնոյ վայրագ և ամբարտաւան։

Ապրդ Տիրիբազ այս ցանգ մերձ կացեալ պատանւոյն, բոց բորբոքէր 'ի հուրն նորա. և ասէր նմա, եթէ Կիտարիդ այդ

ուղղաբերձ 'ի գլխին՝ օգնէ և ոչինչ նոցա, որ ընդ նովաւ ոչինչ փուութան 'ի վեր ուղղէլ զգործս իւրեանց. և զն՝ և յոյժ պարզամիտ ուրեմն է, եթէ յարքայութիւն անդր ապրդեալ եղբօրն միջնորդաւ կանանուոյն, և հօրն այնպէս ապուշ գոլով և յեղյեղուկ, նա յանդորրու կարծեացէ ունել զպայազատութիւն թագին. քանզի այր՝ որ այնպէս 'ի պատճառս կնոջ միոյ Յունի՝ դրժեաց անդրժելի օրինացն Պարսից, արդեօք ոչինչ հաւատարիմ կացցէ դա և 'ի մեծամեծ դաշինսն. և չէ՛ իսկ արդեօք նոյն բան վասն Ովքոսի զբռամբ չարկանել զարքայութիւնն, և վասն Դարեհի՝ վրիպել յայնմանէ։ Քանզի զՈվքոս չարգելուցու և ոչ ոք, երանելի վարել կեանս և 'ի սոսկականութեան իւրում. այլ Դարեհի հարկ է՝ յեա թագաւոր համբաւելոյն՝ թագ կապել կամ մեռանել։

Արդ հասարակ՝ ճշմարիտ իցէ արդեօք ասացեալն Սոփոկղեայ, եթէ "Համոզակերութիւն չարաց արագ արագ ընթանայ"։ Քանզի հարթ և զառ 'ի վայր է ճանապարհն առ բաղձացեալն. և բազումք 'ի մարդկանէ բաղձան չարի, անփորձք գոլով բարւոյն և անտեղեակք։ Առ այս դարձեալ՝ և մեծութիւն արքայութեանն և խէթ կասկածանացն Դարեհի վասն Ովքոսին, մեծապէս զօրավիգն կային Տիրիբազայ. առ այս՝ և Ատոսիկն ոչինչ ամենևին անբաժ էր 'ի բանին, զի Ասպասիա բարձաւ 'ի պատանւոյն։

Ապա Դարեհի անձնատուր ողջոյն 'ի Տիրիբազ եղեալ, և բազմութիւն ևս մեծ յետ այնորիկ միաբանեալ գաւառանացն, յայնժամ մի ոմն 'ի Նեբքինեսացն 'ի վերո հանէր արքային զդաւն և զդաղտնութիւն խորհրդոյն, ձշդրտագոյնս իրազեկ եղեալ՝ զի խորհուրդ հաստատեալ են նոքա միով գիշերի յառագաստ անգր նորա և սպանանել զնա։ Լուեալ Արտաշէսի զդաւն, չար համարեցաւ անհոգանալ 'ի մեծապէս վտանգին և զանց զբանիւք առնել զկարևոր գուշակին. բայց չար ևս համարեցաւ հաւատս ընծայել մինչև հաւաստիս ձշգրիտ 'ի Նեբքս բերեալ. և հնարեցաւ այսպիսի ինչ։ Եւ հրաման Նեբքինեւոյն տքնել հսկել 'ի վերայ արանցն, և ինքն տայր խռռել զորմն առագաստին յետուստ կողմանէ մահճին, և գուռն գործել 'ի նմա, և առագաստել վարագուրաւ։

Արդ իբրև վասն ժամանակեալ աւուրն գուշակ նմա լինէր Նեբքինին, և մերձեցեալ ժամուն, կայր արքայ 'ի մահճին և այնպէս գէտ ակն կալեալ սպասէր. և ապա ոչ յարեաւ մինչև տեսեալ զերեսս արանցն և քաջիկ ևս ծանուցեալ զայր այր, որ գալով գային անկանել 'ի վերայ. իբրև և զայն ինչ յակն արկանէր՝ զի մերկեալ զդաշոյնսն մերձեցան առ նա, նա անդէն շտապ տագնապաւ ձգեալ զվարագոյրն, անկաւ ապաւինեցաւ 'ի Նեբքին սենեակն, փակեաց զդուրսն և աղաղակ բառնայր։ Անդուստ սիկարեանցն տեսեալ զի խայ-

տառակեցան հաղբքն, և ինչ ոչ կարացին գործել, փախեան արտաքս ընդ դրունսն. և Տիրիբազայ ևս ձայնէին 'ի փախուստ խուճապել, զի նշաւակեցաւ բանն։ Իբրև աստ անդ նոքա ցիրուցան առհասարակ փախստեայք զերծան, անդուստ Տիրիբազ 'ի ներքս փակեալ 'ի Թիկնապահաց արքային, զբազումն 'ի նոցանէն դիւաթաւալ կացուցանէր, մինչև հուսկ ապա և ինքն անկանէր տապաստ՝ նեռահար խոցեալ 'ի հեռաստանէ։

Յետ այսորիկ և Դարեհ ձերբակալ եղեալ հանդերձ որդւովքն, զիւր իսկ զդատաւորսն զարքունի 'ի վերայ կարդէր նորա Արտաշէս. ինքնին ոչինչ կամեցաւ առբնթեր կալ, այլ յանձն այլոց արարեալ 'ի ներքս բերել զփուրշիշ զամբաստանութեանն, հրաման տայր պաշտօնէիցն 'ի գիր առնուլ զխորհուրդ զառն առն և մատուցանել նմա։ Իբրև առհասարակ միաբան խորհրդով 'ի մահ դատապարտեցին զԴարեհ, կալեալ զնա պաշտօնէիցն ածէին մերձ 'ի սենեակ մի։ Ապա առաքեցին կոչեցին և գայր անդր դահիճն սուր 'ի ձեռին՝ որով զգլուխն հատանէն զմահապարտաց. իբրև անդ զԴարեհ յակն էարկ, պակուցեալ տեղի տայր վերջոտնէր 'ի դուռն կողմն, իբրու որ ոչ ժամեցաւ սպանանել զարքայ իւրովք ձեռաք։ Բայց անդուստ դատաւորքն որ արտաքոյ՝ սպառնալիս 'ի վերայ կապեալ դահճին՝ հրաման տային 'ի գլուխ զդատակնիքն հանել. նա յայն-

ժամ 'ի գիմի հարեալ Դարեհի, և միով ձեռամբն բուռն զվարսիցն հարեալ զնորա և խոնարհեցուցեալ՝ կորէր սրոնի զպարանոցն։ Իսկ կէսք ասեն՝ արքայի ինքնին առընթեր կալ դատաստանին այնմիկ. և թէ՝ Դարեհ 'ի նշաւակել իւրում՝ գեռնամած յորսայս յողոք անկեալ պաղատէր. իսկ արքայն յոտն կացեալ 'ի սրտմտութիւն սաստիկ բարկութեան և զսուսերն մերկացեալ վերս 'ի վերայ գնէր նորա՝ մինչև գիտապատ տարածէր զնա։ Եւ ապա գնացեալ 'ի դահլիճ անդր՝ երկրպագութիւն մատուցանէր արեգական, և ասէր այսպէս առ որս մերձն կային. "Գնացէք գնացէք արդ ցնծութեամբ ո՛վ Պարսիկք, պատմեցէք մարդկանդ, եթէ ոչք ապիրատս խորամանգեցին և անիրաւս, մեծն Որոմազէս 3 պատուհաս 'ի վերայ կապեաց նոցա"։ Այսպիսի ինչ եկաց վախճան դաւանացն այնոցիկ։

Ապա այնուհետև Ովքոս մեծապէս յուսով քաջալերեցաւ, թիկունս դտեալ յԱտոսայ. բայց զանգիտեալ խիթայր նա յԱրիասպեայ՝ որ մնաց 'ի հարաղատաց անսի. դարձեալ և յԱրշամայ հարձորդւոյ։ Քանզի զԱրիասպէս ցանկային Պարսիկք ունել թագաւոր, ոչ զի երէց էր քան զՈվքոս, այլ զի հեզ էր նա և անկեղծաւոր և մարդասէր։ Իսկ և Արշամ հանձար բաղում 'ի դէմն բերէր, և գիտէր ևս Ովքոս զնա սիրեցեալ յոյժ 'ի հօրէն։ Ուստի և երկոցուն նոցա ընդդէմ դաւ

նիւթեալ, և նենգաւոր կացեալ միանգամայն և արիւնարուշտ, զանազորոյն զկիրս զիւրոց բարուցն վարէր ընդդէմ Արշամայ, իսկ զչարարուեստս նենգն՝ Արիասպեայ։

Առեալ արձակեաց 'ի ծածուկ առ Արիասպէս 'ի Ներքինեաց և 'ի բարեկամաց արքային, ազդ առնել պատմել նմա ցանգ սպառնալիս և զորամուութեան բարբառ զՀօրն Նորա. Իբրու որ 'ի մոի եդեալ ելցէ՝ անողորմ և մահու խայտառակութեան դատել զնա։ Իբրև այսպէս զօրհանապազ կեղծաւորեցան նոքա դալ պատմել նմա յայսպիսեաց ասոյ Իբրու 'ի խորախորհուրդ դաղտնեաց, և ասացին ևս անշուշտ կատարել արքայի զխորհուրդ կամացն, կէս մի զկնի, և կէս մի անդէն արագ արագ, այնպէս ահաբեկ արարին զԱրիասպէս և արտաթափ և յուսակտուր և խորհրդակորոյս, զի դեղ ինքնին խառնեալ մահու և արբեալ՝ այնպէս զրաւէր նա յարևէ կենացն։

Իբրև զօրինակ զայն զմահու զաւակին Լուաւ արքայ, ողբաց զնա, և խիթայր վարանէր վասն պատճառին. բայց 'ի կարի ծերացեալ տիոցն անբաւական ճշգրտագոյնս 'ի քնին առնուլ զբանն և հաւատիս անխաբս 'ի Ներքս մատուցանել, ապա ասատիկ ևս կապեցաւ 'ի սէր Արշամայ. և այնուհետև յայտնի մեծապէս վստահ 'ի նա եղեալ՝ համարձակագոյնս և անպատրուակ խօսէր ընդ նմա։ Ոյր աղագաւ և Ովքոս ոչինչ դանդաղեալ 'ի գործն, հրա-

պուրեալ զԱրպատէս զորդի Տիրիբազայ՝ սպանանէր զնա 'ի ձեռն նորա։

Եւ էր յայնժամ Արտաշէս վատեալ յոյժ 'ի ծերութեան պարարտութեան, զի և դուշնաքեայ ինչ թափ մահաւիթ էր նմա. ուստի և նկուն եղեալ 'ի վշտէն 'ի լուր աղէտիցն Արշամայ, ոչինչ հանգուրժեալ առ ցաւ սրտին և առ թաղծութեանն, պակասէր 'ի կենաց. կեցեալ ամս ինանասուն և չորս, և թագաւորեալ ամս վաթսուն և երկու։ Եւ համարեցաւ նա այր հեզահամբոյր և ժողովրդասէր, առաւել ևս 'ի պատճառս Ովքոսի որդւոյն, այն որ յանագորոյն 'ի կիրս և 'ի մահուանս գերազանցեաց զամենեքումբք։

---

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Այս է՝ Լրտես աղքայի։

2. Պլուտ. զպարսկական անունն յորջորջէ 'ի հայց, հոլոմէն. 'Αγεῖτιν. զոր հայքս կոչեմք, Անահիտ։

3. Պլուտ. Ὠρωμάζης։ Թուի անշուշտ ըստ Պարս. Որմզդ. այն ինքն է՝ ըստ հայ. Արամազդ։

---

# ՊԼՈՒ ՏԱՐՓԵԱՑ

## ԳԱԼԲԱՍ

# ԳԱԼԻԱ

ԻՓԻԿՐԱՏԷՍ Ա՛ԹԷՆացի արժան համարէր՝ վարձկան զօրականին ընչասէր լինել միանգամայն և հեշտասէր. զի այնպէս 'ի խնդիր՝ ասէ՝ ծախուցն ելեալ 'ի լրումն ցանկութեանց, խիզախագոյն ևս նահատակեսցի 'ի մարտին։ Ա՛յլ սակայն՝ և բազմագոյնք պարտ համարին զօրականին լինել իբրու մարմին արձանացեալ՝ անշարժ գլխովին 'ի թափոյ անձինն, և շարժումն միայն առնուլ 'ի միասին ընդ զօրավարին։ Ուստի և ասէն՝ եթէ Պաւղոս Եմիլիոս զանձամբ առեալ զբանակն 'ի Մակեդոնիա, ուր զօրականք շաղակրատք և հետաքրքիրք և յիրս զօրավարին միջամուխք, հրովարտակ 'ի դուրս եբեր. հրաման տայր առն առն 'ի զօրականէն կազմ զձեռան ունել, և սուր՝ զսուսերն, իսկ զայլոց իրաց փոյթ 'ի նա ապաստան առնել։

Նաև Պղատոն ինքնին՝ նահատակութի և ոչ մի տեսանէ զքաջն Իշխանի և զօրավարի յորժամ զօրականն խեռ իցէ և անմիաբան ընդ զօրավարին. և համարի ևս այնպէս, եթէ յառաքինութենէ հնազանդութենն՝ որպէս և թագաւորութենն գլխովին՝ քաջամոյն բարոյից պէտք են և իմաստասիրական կըրթանաց, զի գեղեցիկս բարեխառնեսցեն զեռանդն և զթափ գործոյն հեզաբար և մարդասիրապէս. և ունի նա 'ի վկայս և յօրինակս հաւատարիմս՝ բաց 'ի բազմադէմ աղէտիցն այլոց՝ և զՀռոմայեցւոցն ինքնին զարկածն՝ յետ մահուն Ներոնի։ Որպէս զի և քան զզօրական անհրահանգ արձակերասան և ստամբակ ելիք ինչ առաւել ահագին 'ի տերութեան։ Առ այս՝ և Դեմադէս ինքնին՝ յետ մահուն Աղեքսանդրի զբանակ Մակեդոնացւոցն առեալ նմանեցուցանէր Կիկղոպեայ զաչացուի, իբրև վեր 'ի վայր յուզայր ծփայր այն բանակ 'ի ծուփս ալէտանջս։

Բայց Հռոմայեցւոց տէրութիւն յաղէտս պաշարեցաւ և 'ի յոյզս շփոթից՝ հանգունատիպ որ յաղագս Տիտանեանցն պատմին վէպք, վարատեալ ցրուեալ 'ի կողմանս կողմանս, և ընդդէմ իւր շարժեալ խլրտեալ 'ի կողմանց կողմանց, ոչ այնչափ ինչ յիշխանասիրութենէ անտի ինքնակալացն անուանելոց, քան թէ յընչաքաղց և յապերասան կրից զօրականին՝ որ միոմն 'ի բաց զմիւսն հանէր մերժէր զօրավար, իբրու բևեռաւ ոմամբ զբևեռ։

Եւ արդեօք Դիոնեսիոս ինքնին 'ի խօսելն յաղագս Փերէոսի, այն որ ամիսս տասն տիրացեալ 'ի վերայ Թեսաղացւոց՝ ապա արագ 'ի մահ վարեցաւ, անուն կարգաց նմա՝ Բռնաւոր Ողբերգական. և հեգնէր զնա այնպէս 'ի պատճառս արագահաս փոփոխութեանն։ Սակայն Պալատիոն՝ յարկ բնակութեան Կեսարացն՝ 'ի սուղ ժամանակի ինքնակալս չորս առեալ բնակեցոյց յինքեան. ոմն դայր մոանէր 'ի ներքս, միւսն յարուցեալ ելանէր արտաքս, զոր օրինակ բնաւորեցաւ լինել 'ի Խորանս Թատերաց։ Եւ արդեօք այս վերջատատես և վշտմբեր մարդկան ժամանակին սփոփանս էր միսիթարութեան, զի ոչ ինքնին 'ի վրէժինդրութիւն ինչ զարթուցեալ չարչարողացն իւրեանց, նոքա այր զընկեր տապաստ արկանէին։

Իսկ առաջին՝ որ առաւել քան զամենեսեան իրաւացի ևս եղոյծ զպատուհասն, էր ինքնին այրն՝ որ սադրեաց հրապուրեաց զՀռոմայեցիսն, և յայնչափ յոյս հայեցոյց զնոսա 'ի փոխել զԿեսար, որչափ ինչ նա խոստացաւ նոցա. և այնպէս աղարտեաց զքաջիկ նահատակութիւնն, այն է ապստամբութիւնն 'ի Ներոնէ, որ 'ի պատճառս խոստացելոյ վարձուն դարձաւ փոխեցաւ 'ի մատնութիւն։

Քանզի Նիմփրիդիոս Սաբինոս՝ ըստ որում ասացաքն՝ Եպարքոս 'ի միասին ընդ Տիգելլինոսի կացեալ արքունեաց, յորժամ խսպառ վճարեալ իսկ էր վասն նե-

րոնի՝ որ և փախուստ յԵգիպտոս խրն-
դրէր, ամոքեաց զզօրականն, իբրև ինքն չէ
այնուհետև 'ի միջի և փախուցեալ է, զի
ինքնակալ զԳալբաս կարգասցեն. և առն
առն 'ի զօրացն արքունի և որ 'ի բանա-
կին՝ խոստանայր 'ի պարգև դրամակշիռս
եօթն հազար և հինգհարիւր, և հազար և
երկերիւր և յիսուն միում միում որ ար-
տաքոյ զօրականին: Իսկ զմիթեր զայն ար-
ծաթոյն կուտել ժողովել, և աղէտս ամ-
բաւ բիւրապատիկ ևս քան զներոնին չա-
ծել 'ի վերայ առհասարակ մարդկանն՝ չէր
հնար: Այս ապա արագ արագ 'ի մահ զնե-
րոն վարեաց. իսկ յետ սակաւու՝ և զԳալ-
բաս գլխովին. քանզի զօրականք լքին զնե-
րոն՝ զի առցեն զվարձն. և սպանին զԳալ-
բաս՝ զի չառին զվարձն: Իսկ յետ այնորիկ
'ի խնդիր ելեալ առն, որ զայնչափ զվարձն
տացէ նոցա, յապստամբութիս դրդեալք
և 'ի մատնութիւնս՝ ինքեանք զինքեանս
հարին ծախեցին՝ քան եթէ գամագիտք
ինչ 'ի խնդիրն եղեն:

Արդ ճշգրտիւ մանրամասն արձանագրել
զամենայնն զժամանակին այնորիկ, այս
բազմաքիրտն պատմութեան է: Բայց որ
ինչ յիշատակաց արժանի 'ի գործս անդ
և 'ի կիրս Կեսարացն, այն յինէն պա-
հանջելի է:

Եւ արդ՝ առհասարակ խոստովանեալ
է եթէ Գալբաս Սուլբիկիոս վիճակեցաւ
'ի զարմն Կեսարաց՝ այր գողով սոսկական
և բազմահարուստ առաւել քան զամենե-

սեան։ Եւ Թէպէտ և շուք բաղում էր առն 'ի պայծառութենէ տոհմին, զի էր նա 'ի սերնդոց անտի Սերվիոսեանց, սակայն և առաւել պարծէր նա յազգականութիւն իւր ընդ Կատուղղոսի. այր՝ առաքինութեամբ և համբաւով բարձերէց քան զորս առ իւրովքն էին ժամանակաւք. Թէպէտ և կամակար նա տեղի էտ այլոց յաւագութեան տէրութեանն։ Էր Գալբասայ և ազգականութիւն ընդ Լիվիայ կնոջն Կեսարու. և 'ի ձեռն Լիվիայ հիւպատոսացեալ դայր արտաքս 'ի Պալատիոնէն։ Եւ ասեն՝ եԹէ և 'ի զօրավարութեան 'ի Գերմանիա առաքինացաւ այրն. և փոխանակ հիւպատոսի կացեալ 'ի Լիբիա՝ գովանի հանդիսացաւ՝ որպիսի նուազունք ոմանք։ Եւ քանզի այր սակաւապէտ էր Գալբաս և խնայօղ 'ի ծախս և յաւելորդացն անձնապահ, իբրև ՃղՃիմ բամբասեցաւ յինքնակալութեան իւրում. ուստի և 'ի չափաւորութենէ անտի իւրմէ և 'ի զգաստութենէն փառս միայն ժառանգեաց վեր 'ի վերոյ և դուշնաքեայ։ Բայց և 'ի զօրավար Իբերիոյ առաքեցաւ նա 'ի Ներոնէ, մինչդեռ տակաւին ոչինչ զանգիտեր սա 'ի զօրութենէ անտի մեծէ քաղաքացեացն այնոցիկ։ Եւ քանզի հեզ բնութեամբ երևէր Գալբաս, կարծեցաւ և իբրև այր ըզգուշահայեաց 'ի ծերացեալ հասակէն։

Արդ 'ի կիրս անագորոյն և խժական աղէտից գաւառացն յանօրէն կուսակալացն Ներոնի՝ Թէպէտ և օգնել ինչ ոչ

կարէր նոցա Գալբաս, սակայն և ինքնին յայտնի սխտակից գոլով և զանձն ևս չարչարակից եդեալ ընդ նոսա, այնպէս մխիթարութեան սփոփանս 'ի նեղբս մատուցանէր վշտատես և վաճառակուր մարդկանն։ Իսկ իբրև յայնժամ և շարադրեցաք քերթողականք 'ի դուրս գայլն ընդդէմ Ներոնի, և առհասարակ սփռեալք 'ի նուագ առնուին 'ի տեղիս տեղիս, անդուստ Գալբաս ոչինչ արգելոյր զնոսա և ոչ սրտնէր ինչ իբրու զայլսն 'ի կուսակալաց. որ աղագաւ և առաւել ևս յինքն յանգուցանէր նա զմիտս գաւառականացն, քանզի և ընտրելացեալ իսկ էր նոցա, զի այն ամ ուրթերորդ էր առաջնորդութեանն նորա անդանօր։

Իսկ 'ի նմին ամի և Յունիոս Վէնտիկս զօրավար Գաղատիոյ նշկահեաց զՆերոն։ Եւ պատմեն՝ մինչև 'ի վեր եղեալ ապստամբութեանն գալ հասանել նամակի առ Գալբաս գրեալ 'ի Վէնտիկեայ. իսկ Գալբաս ոչ թղթոցն հաւատաց, և ոչ գուշակ ինչ եղև վասն բանին, իբրու զայլսն 'ի զօրավարաց՝ որք առեալ գրեցին առ Ներոն վասն նորուն իրի, և այնպէս ըստ ձեռնհաս կարին աղարտեցին զգործն։ Բայց ապա և ինքեանք գլխովին բաժանորդք եղեալ գործոյն, խոստովան եղեն զի մատն եղեն միանգամայն և անձանց և Վէնտիկեայ։

Բայց իբրև Վէնտիկս յայտնի պատերազմ յուզեաց, և գրեաց միւսանգամ առ

Գալբաս և յորդորէր յանձն առնուլ զզօրավարութիւնն և Միսբանիլ ընդ ստուար գնդին՝ որ զօրավարի 'ի խնդիր եղեալ է, այն էին Գաղատացիք 'ի զէն 'ի զարդ վառեալք տասն բիւրք զօրականին, և բաւական ևս էին զինուորեալ և այլ ևս բազմութիւն մեծ. յայնժամ ապա Գալբաս 'ի խորհուրդ մտանէր ընդ բարեկամացն։ Անդանօր 'ի խորհրդեանն ոմանք ասէին դանդաղել և դէտակն ունել՝ զինչ թափ և մէտ լցէ Հռովմայ 'ի նորութիւն անդր։ Բայց Տիտոս Յունիոս առաջնորդ գնդի զօրականին ասէր. "Եւ զի՞նդ ո՞վ Գալբաս, խորհուրդ խորհել։ Քանզի և խընդրելդ միայն՝ եթէ կացցո՞ւք մեք հաւատարիմք առ Ներոն, մոլեգնելոց է գլխովին։ Արդ որպէս եթէ թշնամի ինքնին լցէ Ներոն, չէ՞ պարտ 'ի բաց զբարեկամութիւնն մերժել զվէնտիկեայ. կամ թէ պարտ է արագ արագ ամբաստան զվէնտիկեայ կալ և մարտ ընդ նմա մղել. իբրև կամի նա՝ իշխան մանաւանդ ունել զքեզ Հռոմայեցւոց, քան զՆերոն՝ բռնաւոր"։

Իբրև զայս ասաց, յայնժամ Գալբաս գիր մի 'ի դուրս հրատարակեալ իմացուցանէր զօրն՝ յորում յազատութիւն հանցէ նա մի ըստ միոջէ առհասարակ՝ որ միանգամ խնդրեսցեն զայն։ Արդ յառաջ քան զօրն հռչակ հարեալ բանին, յայնժամ բազմութիւն մեծ խմբէր մարդկանն՝ առհասարակ յօժարեալք 'ի գործն։ Իսկ իբրև երևեցաւ նա 'ի բեմին, անդէն

վաղվաղակի միաբան առհասարակ ինքնա-
կալ կարդացին զնա։ Բայց նա յայնժամ
յանձն չառնոյր, այլ ամբաստանութիւնս
'ի ներքս բերեալ ընդդէմ Ներոնի, և ողբս
առեալ 'ի վերայ հոյակապ մարդկանն՝
զոր 'ի մահ մատնեաց Ներոն, վկայութիւն
դնէր՝ փութոյ պնդութեամբ նահատա-
կել 'ի վերայ հայրենի աշխարհին. առ-
նուլ և անուն՝ ոչ Կեսար և ոչ ինքնակալ,
այլ զօրավար Սինկղիտոսին և ժողովը-
դեանն Հռովմայեցւոց։

Բայց թէ Վէնտիկս ուղղապէս արդեօք
և քաջապէս խորհրդով գործեաց 'ի հրա-
ւէրն Գալբասայ 'ի զօրավարութիւն անդր,
վկայեաց այնմ և ինքնին Ներոն։ Քանզի
որ յառաջն ունչս առնէր Ներոն արշաւա-
նին Գաղատացւոց և փոյթ չունէր, իսկ
իբրև լուր էառ զընտրութեանն Գալբա-
սայ 'ի զօրավար, (որ յայնժամ լուացեալ
և բաղմեալ էր 'ի Ճաշ)՝ անդէն տապա-
լեաց կործանեաց զսեղանն։ Սակայն և
այնպէս՝ յորժամ թշնամի զԳալբաս համ-
բաւեաց Սինկղիտոսն, յայնժամ անդ Ներ-
ոն զուարճաբանեալ և յանձնապատան
զինքն երևեցուցեալ առ բարեկամն, ա-
սէր՝ եթէ զի դրամոց պէտք էին նմա՝ գե-
ղեցիկ ուրեմն պատեհ 'ի ներքս ընծայե-
ցաւ խորհրդոյ կուտել ժողովել զայն. և
թէ՝ ինչք Գաղատացւոցդ՝ 'ի նուաճել ըզ-
նոսա՝ առ և ապուր եղեցին նմա և կարի
իսկ քաջ. և զի՝ դրաւեալ ինքն վաճառես-
ցէ ուրեմն զկարասին Գալբասայ, զի թըշ-

նամի համբաւեցաւ. որպէս և Հրաման ևս
ետ նա 'ի վաճառ հանել զգոյն Գալբա-
սայ։ Զայն լուեալ Գալբասայ, 'ի վաճառ
արկանէր և նա զամենայն ինչս Ներոնի՝
որ յԻբերիա, և գնողս ևս բազումս եգիտ
նա կամակարս։

Բայց յայնժամ բաղմաց ևս վտարան-
ջեալ 'ի Ներոնէ, և մտադիւրագոյնս անձ-
նատուր եղեալ առ Գալբաս, միայն Կղո-
գիոս Մաւրոս 'ի Լիբիա, և Վերգինիոս
Հռուփոս զօրավար 'ի Գաղատիա Գերմա-
նեան զօրուն, հերձանէին 'ի միմեանց ան-
միաբան եղեալք։ Քանզի Կղոդիոս՝ որ
յընչաքաղցուութենէն և յանագորոյն կրիցն
'ի յափշտակութիւնս կրթեցաւ և 'ի մա-
հուանս, 'ի յոյզս խորհրդոց ծփայր բազ-
մածուփս և վարանեալ էր. ոչ հրաժարել
գիտէր 'ի զօրավարութենէն, և ոչ 'ի նմին
կալ ճնալ։ Իսկ Վերգինիոս 'ի գլուխ կա-
ցեալ բազմաձեռն գնդաց, որ ստէպ նմա
անուն կարդային ինքնակալի, և բուռն ևս
առնէին յանձն առնուլ, ասէր զայս ինչ։
Ոչ ինքնին առնում յանձն զառաջնորդու-
թիւնն, և ոչ ևս հանդարտեմ՝ թէ այլ ոք
առնու, որ 'ի Սինկղիտոսէն ընտրեալ
ոչ իցէ։

Յայսմանէ ապա զառաջինն ոչ փոքր
ինչ սպառնափ լինէր Գալբաս։ Այլ յոր-
ժամ բանակ զօրացն Վերգինեայ և Վէն-
տիկեայ՝ ուժգին և բռնի ձգեալք զիւ-
րեանց զօրավարսն՝ իբրու զկառավարս ո-
մանս անբաւականս պինդ զերասանակն

ունել, մարտ սաստիկ եղեալ կռուեցան. և յայնժամ Վէնտիկս զիւրովին գնացեալ՝ դիտապատ 'ի դաշտին երկու բիւրք անկան 'ի Գաղատացւոց անտի, և հռչակ ևս հարաւ՝ զի յետ մեծի յաղթութեանն առհասարակ զՎերգինիոս խնդրեն առաջնորդ, և անդրէն միւսանգամ կամին 'ի կողմն անցանել Ներոնի. յայնժամ Գալբաս մեծապէս զահի հարեալ գրէր առ Վերգինիոս՝ յորդորէր գործակից նմա լինել և 'ի միասին պահել Հռոմայեցւոց զտէրութիւնն և զազատութիւն։

Զայս գրեաց Գալբաս և ինքն դարձ արարեալ հանդերձ բարեկամօքն 'ի Կողոնիա քաղաք Իբերիոյ, անդանօր գեղերեալ անցուցանէր զաւուրս 'ի կիրս ապաշաւանաց վասն անցիցն անցելոց, և ցանկայր փափաքէր ընդաբոյս և սննդակից իւր անզբաղ կենացն՝ քան թէ 'ի գործ ինչ միսել կարևոր։ Եւ էր յայնժամ եղանակ ամարայնոյն. և անդ յաւուր միում ընդ երեկս գայր հասանէր շտապաւ 'ի Հռոմայ յաւուր Եօթներորդի Եղիցն 'ի քաղաքէն՝ այր ոմն Սիկիլիացի ազատագրեալն Գալբասայ. և լուեալ եթէ գնաց 'ի ննջել, տագնապաւ չոքաւ 'ի սենեակն, և ընդդէմ դարձեալ սենեկապանացն և ուժգին բացեալ զդուռն և 'ի ներքս մտեալ, պատմէր եթէ և մինչդեռ տակաւին կենդանի էր Ներոն զօղեալ 'ի Թաքստի, ինքնակալ զԳալբաս համբաւեցին նախ զօրականն, ապա և ժողովուրդք, ապա և ծե-

բակոյան ինքնին. և թէ՝ յետ սակաւ միոյ
լուր եհաս եթէ և մեռաւ Ներոն։ Եւ յա-
ւել ասել նոյն այր, եթէ նա ոչ հաւա-
տաց՝ մինչև ինքնին գնացեալ 'ի դիակն՝ ե-
տես դիտապատ զՆերոն, և ապա ուրեմն
յուզի անկաւ բերել զրոյց։

Իբրև զայն լուաւ Գալբաս՝ մեծապէս
խրախուսեաց, և անդէն առ դուրս նորա
խռնեցաւ բազմութիւն մարդկանն՝ ստու-
գել 'ի նմանէ զբանն, թէպէտ և անհաւա-
տալի ևս թուէր այնչափ արագութիւն
բանբերին։ Ապա յետ աւուրց երկուց
գայր հասանէր 'ի բանակէն և Յունիոս
Տիտոս հանդերձ այլովք ոմամբք, և զրոյց
մանրամասն բերէր զվճռոց Սինկղիտոսին։
Ուստի և Յունիոս ամբարձաւ 'ի շուք պատ-
ուոյ. և զաղատագրեալն իշխան առնէր տա-
նել մատանի ոսկի, և անուն առեալ Մար-
կիանոս Վիկեղղոս՝ աւագանայր 'ի մէջ
այլոց ազատագրելոց։

Բայց 'ի Հռովմ Նիմփիդիոս Սաբինոս
յինքն ձգէր յանկուցանէր զամենայն ըզ-
գործսն, ոչ տակաւ, այլ միանգամայն զա-
մենայնն. զմտաւ ածէր եթէ Գալբաս յա-
լևոյթ ծերութեանն հասեալ՝ հազիւ ուրեմն
բաւական իցէ գալ երևել 'ի Հռոմ, զի էր
ամաց եօթանասուն և երից։ Առ այս և
տեսանէր՝ զի և զօրականն Հռովմայ հա-
կամիտեալ առ ինքն 'ի հարուստ ժամա-
նակաց, և յայնժամ ևս գլխովին զնմանէն
միայն կախեալ կայր. համարէր զնա իւ-
րեանց բարերար յաղագս պարգևացն խոս-

տացելոց. իսկ 'ի պարտապանաց կարգի դնէր զԳալբաս։

Արդ Նիմֆիդիոս անդէն 'ի ժամուն հրաման տայր Տիգիլլինոսի իւրում իշխանակցի 'ի բաց զսուսերն դնել։ Ապա կոչունս պատրաստեալ հրաւիրէր զաւագորեարն՝ որ հիւպատոսք կացեալ էին և զօրավարք. հրաւիրեաց զնոսա և յանուն Գալբասայ։ Նաև 'ի բանակի անդ հրապուրեաց զբազումս և դրդեաց ասել, եթէ պարտ և արժան է առաքել խնդրել 'ի Գալբասայ, զի թողցէ միշտ այնպէս զՆիմֆիդիոս 'ի զօրավար առանց իշխանակցի։ Այլ որչափ ինչ միանգամ 'ի պատիւ նորա և յաւագութիւն իշխանութեանն գործեաց Սինկղիտոսն, անուն կարդալով նմա Բարերար, և զօրհանապազ առ դուրս նորա խռնելով, և ամենայն վճռոց զնա առաջնորդ և սահման կարգելով, այս ամենայն յառաւել ևս յանդգնութեան դրդեցին զայրն. որպէս զի և յետ սակաւուց նէ նախանձելի միայն գտաւ նա, այլ և ահագին սպասարկուացն նորա։ Էր յաւուր միում զի հիւպատոսք արձակեալ սուրհանդակս արքունի տանել հրովարտակս առ ինքնակալն, և տուեալ ևս նոցա հրամանագիրս գրոշմեալս (զոր ըստ քաղաքաց քաղաքաց ոստիկանք յակն արկեալ զայնոսիկ, փոյթ տանին 'ի փոխել կառացն ճեպնեթաց գործել զթղթատարան), յայնժամ Նիմֆիդիոս 'ի սրտմտութիւն բարկութեան բրդեալ՝ զի չառին 'ի նմանէ

զկնիքն, և ո՛չ յիւրմէ զօրականէն սրձակե-
ցին անդր, ասեն՝ մոաբերել նմա և 'ի պա-
տուհաս հիւպատոսացն. բայց նոցա 'ի
չքմեղս եղեալ և յողոք ևս անկեալ՝ հան-
դարտեն զայրն։

Բայց Նիմիլիդիոս՝ զի ընդ միտս ժողովը-
դեանն մտանիցէ, ո՛չ արդեաւ զայր կոտամահ
առնել զկուսակիցսն Ներոնի։ Որպէս
զՍպիկղոս զայր մենամարտ առեալ արկա-
նէին 'ի Նեղբոյ անդրեացն Ներոնի՝ քար-
շեալ ձգեալ զայնոսիկ ընդ հրապարակն,
և այնպէս ջարդեալ մաղեցին զայրն։ Իսկ և
զԱպոնիոս զոմն քսու տապալ յերկիր
գառացուցեալ՝ սայլս քարաձիգս գնացու-
ցանէին 'ի վերայ մարմնոյն։ Եւ բազումք
ևս այլ գէշագէշ պատառեցան, և կէսք
ևս՝ անյանցք. որպէս զի և Մաւրիսկոս այր
համբաւեալ լաւ և առաքինի՝ որպէս և էր
իսկ, ասէր 'ի Սինկղիտոսին. կասկածեմ
եթէ արագ արագ նք խնդրեսցեն զներոն։

Զայս օրինակ ապա Նիմիլիդիոս գամ
քան զգամ կրթեալ 'ի լրումն ակնկալու-
թեան իւրոյ, ոչինչ հրաժարէր՝ յորժամ
կարդային զնա որդի Գայիոսի Կեսարու՝
որ թագ կապեաց յետ Տիբերեայ։ Քան-
զի Գայիոս՝ որպէս կարծիւր՝ եղև ընդ մեր
Նորա մինչդեռ տակաւին պատանեակ էր.
և մայրն չէր ինչ անդեղեայ, և էր Կալլիս-
տոսի ազատագրելոյն Կեսարու ծնունդ
կապէնածին 'ի դերձակ կնոջէ։ Այլ թուի
թէ՝ Գայիոս ընդ կնոջն այնմիկ լեալ իցէ
յետոյ ուրեմն քան զծնունդն Նիմիլիդիո-

սի, զոր մանաւանդ կարծեն որդի Մարտիանոսի մենամարտի. որում տուփացեալ իսկ էր Նիմֆիդիա մայր նորա՝ վասն համբաւոյ փառաց առնն. և արդեօք 'ի նմանութենէ կերպարանացն՝ առաւել ինն սորա որդի երևի Նիմֆիդիոս:

Արդ խոստովան եղեալ նա ինքնին իւր մայր զՆիմֆիդիա, և անձին միայն գրաւականեալ զնահատակութիւն քաջութեան կործանմանն Ներոնի, և իբրև մրցանակս ոչ շատ համարէր իւր զպատիւն և զինչս և զկենակցութիւն Սպորոնի Ներոնեան, (զոր անդէն արագ 'ի խարուկէ անտի՝ մինչդեռ տակաւին այրէր գիակն՝ առաքեալ կոչեալ նա և 'ի ըծակցի կարգն հաստատեալ, անուն կարգայր նմա Պոպպէոս). ապա գուն գործէր մտանել սպրդիլ և 'ի ժառանգութիւն տէրութեն. և նմին իրի թեւակոխէր ինքնին 'ի Հռոմ 'ի ձեռն բարեկամացն և կանանց ոմանց, և կիսոց ևս 'ի Սինկղիտոսէն՝ որ գաղտաբար ձեռն տային նմա. և արձակեաց ևս յԻբերիա զԳիլլիանոս 'ի բարեկամաց իւրոց, հետազօտել որ անդանօր զգործն:

Բայց սակայն յետ մահուն Ներոնի ամենայնն զօրավիգ 'ի կողմն էր Գալբասայ, թէպէտ և Վերգինիոս Հռուփոս տակաւին յերկուս հետս կաղացեալ՝ վիշտ հասուցանէր նմա և խէթ, գուցէ (որ զօրավար էր նա ստուար գնդի քաջամարտկաց և փառաւորեալ ևս էր 'ի յաղթութենէն Վենտիկեայ, և ընդ բռամբ կալեալ էր

շատ ինչ 'ի Հռոմայեցւոց տէրութենէն՝ ողջոյն զԳաղատիա՝ որ 'ի ժամանակին իւրքր-տէր յապստամբութիւն), ունկն մատուաց-ցէ այլն իւրոց աղաչաւորացն առնուլ ըզ-տէրութիւնն։ Քանզի և մարդ չէր հռչա-կաւոր առաւել քան զայս Վերգինիոս, և ոչ ոք իբրև զնա փառաւորեալ. քանզի և էր իսկ նա մեծապէս նպաստ եղեալ Հռո-մայեցւոց տէրութեանն, և փրկեալ զնա 'ի խիստ բռնակալութենէն և 'ի մարտից անտի Գաղատացւոցն։

Այլ Վերգինիոս անդրդուելի կացեալ մնացեալ յառաջին խորհուրդսն, ապաս-տան 'ի Սինկղետոն առնէր զընտրութիւն ինքնակալին. Թէպէտ և յետ համբաւոյ մահուն Ներոնի՝ միւսանգամ բաղմութիւն զօրականին խռնեալ զնովաւ, անդուստ և մի ոմն 'ի հազարապետացն 'ի վրանին նո-րա մերկացեալ զսուրն՝ հրաման 'ի վերայ կարգէր նորա առնուլ յանձն զինքնակա-լութիւնն կամ թէ զայն երկաթ առ 'ի կողսն։ Այլ իբրև Փաբիոս Վաղէս զօրա-գլուխ գնդին՝ առաջին կռեաց երդումն առ Գալբաս, և նամականի ևս եկին 'ի Հռովմէ ազգարար վճռոյ ծերակուտին, յայնժամ ապա Վերգինիոս՝ թէպէտ հա-զիւ ուրեմն՝ ածէր հաւանեցուցանէր զզօ-րականն իւր կարդալ ինքնակալ զԳալբաս։ Նաև յարձակել Գալբասայ փոխանակ նորա զՓղակկոս Որդեոնիոս, մնագիւրա-գոյնս ընկալեալ զնա Վերգինիոս և 'ի նա յանձն արարեալ զզօրն, ինքն յարուցեալ

ընդ առաջ ջոքաւ Գալբասայ՝ որ դայր. և դարձ ևս արար հանդերձ նովաւ. ոչ կըշտամբանս ինչ լուաւ, և ոչ պատիւ ինչ ետգիտ. առաջնոյն պատճառք էր ինքնին Գալբաս՝ զի մեծարանս երեսաց նորա առնէր. և երկրորդին՝ բարեկամք նորա, առաւել ևս Յունիոս Տիտոս՝ որ 'ի նախանձուն կրից առ Վերգինիոս՝ և քարընգոտն խնդրէր լինել նմա, և ոչ գիտէր եթէ գործակից գեղեցիկ բաղդին նորա լինի. զի այնպէս 'ի բաց զնա քեցէր 'ի կրից մարտից և յամբաւ աղէտից՝ յոր պաշարեցան այլք 'ի զօրավարաց. և առեալ ածէր զնա յանալէկոծ 'ի կեանս և 'ի ծերութիւն խաղաղաւէտ և անդորրաւէտ:

Արդ յայնժամ Դեսպանք ծերակուտին առ Գալբաս ընդ առաջ եղեալ նմա մօտ 'ի Նարբոնա քաղաք Գաղատիոյ, և ողջոյն տուեալ նմա՝ փութացուցանէին գալ երևել ժողովրդեանն՝ որ ըղձակաթն էն առ նա: Իսկ Գալբաս 'ի հիւրընկալութեան հրեշտակացն այնոցիկ մեծապէս մարդասիրութեամբ քաղաքավարեալ ընդ նոսա, և 'ի կոչունսն սեղանոյ 'ի գործ վարեալ ոչ զկահան արքունի և զսպասն զՆերոնին՝ առաքեալ նմա շատ ինչ 'ի Նիմֆիդիոսէ, այլ զիւրան միայն, քաջ անուն ժառանգեաց՝ այր ցուցեալ մեծանձն և անաւագ կրից՝ վեհագոյն: Բայց անդէն Յունիոս թեքլադիր լինէր նմա՝ եթէ քաղաքավարութիւն այդ ազատանձնեայ և անպաճոյճ և քաղաքական՝ յանկուցիչ

միայն է խուժանին՝ անբաժ 'ի Ճշգրիտ մեծութենէն. ասաց և ամբէաց զնա 'ի գործ առնուլ զՆերոնին և կոչունս մեծահաց պատրաստել արքունիս։

Եւ այնուհետև ապա ծերունին յայտ առնէր տակաւ տակաւ գլխովին անձնատուր առ Յունիոս լինել։ Սա այս Յունիոս էր այր ընչաքաղց առաւել յոյժ, և 'ի մեղս ընդ կանանց անկզիտացեալ։ Քանզի պատանի տակաւին գոլով և զինուորեալ առաջին նուագ առ Կալվիսիոսի Սաբինոսի, առեալ գիշերային մուծանէր 'ի բանակն 'ի հանդերձ զօրականի զկին զօրավարին՝ կին պատշոտ, և պղծէր զնա անդ 'ի բանակին առաջն՝ զօր Փ-Ի-Ն-Լ-Է-Բ-Ի-Ա կոչեն Հռոմայեցիք։ Նմին իրի և 'ի կապանս արկանէր զնա Գայիոս Կեսար. այլ յետ մահուն նորա յաջողութիւն գտեալ՝ արձակեցաւ։ Ապա և 'ի միում նուագի ընթրեալ առ Կղոդիոսի Կեսարու, գողանայր ըմպանակ արծաթի։ Իբրև իրազգած եղև Կեսար, միւսանգամ կոչեաց զնա յընթրիս յաւուրն երկրորդի. իսկ 'ի գալ նորա՝ պատուէր տայր սպասաւորացն մի դնել առաջի նորա անօթ արծաթի, այլ զամենայնն խեցի։ Եւ այնպէս գողութիւն Յունիոսի, քան բարկութեան՝ առաւել ևս ծաղու արժանի երևեցաւ 'ի պատճառս չափաւորութեանն Կեսարու՝ որ 'ի կատակերգակն մանաւանդ կրթեաց զբանն։

Սակայն գործք առնն՝ յետ սիրանալոյն նորա 'ի վերայ Գալբասայ և մեծապէս յո-

բանալոյն նորա յինչս, է զի պատճառք և է զի պատրուակ գոան եղերբերդակ արկածից և մեծաց աղէտից։ Քանզի Նիմֆիդիոս յետ դարձին առ նա Գիլլիանոսի՝ որ առաքեցաւ հետազօտել զնրան Գալբասայ, լուեալ եթէ ոստիկան ընտրեցաւ արքունեաց և տիգաւորաց Կուռնելիոս Լակոնէս, և զի՝ զօրութիւն ամենայն 'ի ձեռս կայ Յունիոսի. իբրև զայն ևս լուաւ՝ եթէ նա ինքնին չէր իշխան և ոչ մերձենալ անգամ առ Գալբաս և խօսել ընդ նմա առանձինն. քանզի ամենեքին խեթիւ հայեցեալ ընդ նա անձնապահ լինէին, յոյժ ապա անկաւ բեկաւ Նիմֆիդիոս։ Եւ 'ի մի զզօրապետսն խմբեալ, ասէր եթէ անշուշտ այր ծերունի է Գալբաս հեզ և համբոյր, սակայն և դուն ուրեք զիւրն վարէ խոհականութիւն, և չարաչար առաջնորդի 'ի Յունիոսէ և 'ի Լակոնէէ, ուստի և մինչչև երկուց այդոցիկ արանցդ եկեալ և տիրացեալ 'ի վերայ իրացն Տիգեղինոսի, զանխուլ 'ի նոցանէ արժան է դեսպանս առ ինքնակալն արձակել 'ի բանակէն՝ ազդ առնել նմա զի եթէ 'ի բարեկամաց անտի իւրոց զերկուս զայնոսիկ միայն 'ի բաց արասցէ, ևս փարելի և սիրելի ամենեցուն եղիցի գալուստն նորա։

Իսկ իբրև 'ի բանից աստի իւրոց ոչինչ հաւանեցուցեալ զնոսա, նա՝ և օտարոտիս և յոյժ գժպատեհ համարեցան պատուէր 'ի նեղքս տալ ծերունւոյ զօրավարի՝ իբրու պատանւոյ առն որ այն ինչ 'ի

փորձ մեսեալ լցէ բարձի զօրավարութեն, եթէ զոյս ոմանս 'ի բարեկամացն վարել արժան լցէ և զոր ոչ, յայնժամ զայլմէ բուռն հարկանէր հնարից։ Առեալ գրէր առ Գալբաս և զարհուրեցուցանէր զնա. է զի՝ եթէ շատ ինչ իրք 'ի քաղաքին խէթ 'ի ներքս բերեն զգաղտնածածուկ դաւանաց, և կան այնպէս անյայտք. է զի՝ եթէ Կղոդիոս Մակրոս արդելեալ պահէ 'ի Լիբիա զնաւս ցորենաբարձս. և է դարձեալ՝ եթէ Գերմանեան գունդք խլրտեալ կան. և զնոյն համբաւեն դարձեալ և յաղագս զօրուն՝ որ 'ի յԱսորիս կան և 'ի Հրէաստան։

Իբրև եառեալ զի երեսս ինչ բանիցն չարար Գալբաս և ոչ հաւատաց, խորհեցաւ աճապարել և յինքն զտէրութիւնն դրաւել. թէպէտ և յայնժամ Կղոդիոս Կեսոս Անտիոքացի՝ այր հանճարեղ և մտերիմ և հաւատարիմ Նիմֆիդիոսի՝ ընդդէմ դարձեալ ասէր, եթէ՝ և ոչ մի ոք արդեօք 'ի գերդաստանից անտի Հռովմայ անուն տացէ Նիմֆիդիոսի՝ զԿեսարու։ Սակայն և բազումք ոմանք խաղ առնէին զԳալբաս, և անդուստ Միհրդատ Պոնտացի հեգնաբանեալ ևս զինտութիւն և զնորշամութիւնն Գալբասայ, ասէր՝ եթէ ինչ մի կարծեն զդա Հռոմայեցիք զարդիս, բայց ապա յանդիման յերևեալ նորա՝ արդեօք նախատինք դոցա կարծեսցին աւուրքն՝ յորս կոչեցաւ դա Կեսար։

Ապա խորհուրդ հաստատեցին ածել

զՆիմփիդիոս զՀասարակ գիշերաւ 'ի բա-
նական և ինքնակալ համբաւել զնա։ Բայց
Անտոնիոս Ոնորատոս առաջինն հազարա-
պետաց ը երեկս խմբեալ զզօրականն իւր,
եպերեր զանձն, եպերէր և զնոսա, զի 'ի
սուղ ժամանակի այնպէս ստէպ ստէպ
յեղյեղուկ գտան նոքա՝ ոչ 'ի քաջիկ խո-
հականութենէն բերեալք և ոչ յընտրու-
թիւն ինչ լաւագունին, այլ յԱյսոյ ի-
մեմնէ ածեալք 'ի մատնութենէ 'ի մատ-
նութիւն։ Եւ յաւել ասել. "Արդեօք որ
յառաջագոյն իրացդ՝ են են պատճառք,
ինապքն ասեմ Ներոնի. իսկ զարդիս որ
պատճառք իցեն թողուլ լքանել զԳալ-
բաս։ Զոր մայրապանութիւն 'ի դէմս
հարցուք գոմա, կամ զամուսնոյն սպանու-
թիւն, կամ թէ վասն որոյ թատերական
խորանին՝ կամ ողբերգակ տեսարանին,
զամենի հարցուք մեք ընդ ինքնակալդ ընդ
այդ։ Ա՛յն զի և ոչ զՆերոնն անգամ հան-
դարտեցաք մեք լքանել վասն այնց գոր-
ծոցն, այլ 'ի նոյն գրդեցաք՝ հաւատս
Նիմփիդիոսի ընծայեալ, եթէ ինքնին Նե-
րոնն առաջին ելիք զմեզ և փախուս-
տեայ յԵգիպտոս եղև։ Եւ զի՞նչ ապա։
ԶԳալբան յազատացուք մեք 'ի վերայ Նե-
րոնի, և ընտրեալ 'ի կայսր զծնունդ զոմն
'ի Նիմփիդեայ, զարևմ հատցուք մեք զառն՝
որ 'ի սերնդոց անտի Լիվիայ, որպէս ապա-
նաք զորդին Ագրիպպինայ։ Կամ թէ պա-
տուհաս 'ի վերայ ածեալ նորա զյանցա-
նացն, երևեսցուք արդեօք մեք պատուհա-

սադիրք արդարք Ներոնի, և քաջ և հաւատարիմ պահապանք Գալբասայ ,, :

Զայս բանս խօսեցեալ հազարապետին, անդ զօրականք նորա առհասարակ միաբանեցան 'ի խորհուրդ նորա, և ելեալ ևս չոքան առ այլս. քաջալերը 'ի նեբքս տային և նոցա՝ անդրդուելի մնալ հաւատարիմք ինքնակալին, և զբաղմաց յոյժ շրջեցին զմիտս: Եւ այնուհետև ապա աղաղակ մեծ բարձեալ միաբանութեամբ, անդուստ Նիմփիդիոս՝ կամ զի կարծեաց այնպէս (որպէս կէսք ասեն) եթէ զօրականք հրաւէր կարդան նմա, կամ զի ճեպեաց կանխել ունել զմիտս աղմկելոյ խուժանին՝ որ դեռ ևս դեգևեալ կայր, էլ էկն արտաքս բազում ջահիւք բորբոքելովք, մատեան մի 'ի ձեռս՝ յորում և ճառ արձանագրեալ 'ի Կինգոնիոսէ Վարրոնէ. զոր և ինքնին սերտեաց Նիմփիդիոս խօսել առ զօրականն: Իբրև էկն և զդուրս բանակացն փակ գտանէր, և զբազումս 'ի նոցանէն 'ի զէն 'ի զարդ վառեալ արձանացեալ առ պատնէշքն, զահի հարաւ և մատուցեալ հարցանէր՝ զինչ իրք իցեն, և ո՞յր հրամանաւ 'ի զէն վառեալ իցեն: Լուեալ զի առհասարակ ձայն բարձեալ պատասխանի զայս առնէին, եթէ իւրեանց ինքնակալ ճանաչեն նոքա զԳալբաս. յայնժամ և ինքնին Նիմփիդիոս յառաջ մատուցեալ՝ միաբանէր ընդ նոսա 'ի ձայն ցնծութեան, և զնոյն դարձեալ հրամայէր իւրում զօրականին. իբրև թոյլ նմա արարին դառնա-

պանքն մնանեալ 'ի նեբքս հանդերձ սակա-
ւուք ոմամբք, յայնժամ տէգ մի արձա-
կեալ 'ի նա, եկն հարաւ ընդ վահանն
Սեպոխմէոսի՝ որ յառաջոյ ընթանայր։
Ապա և սուսերամերկս տեսեալ դիմեալս
'ի վերայ, 'ի փախուստ խուճապեցաւ Նիմ-
փիդիոս, և անդանօր վանեալ հարեալ զնա
խողխողէին 'ի յարկի ուրեք զինուորաց։
Ապա ձգեալ քարշեցին զդիակն 'ի մէջ
բանակին. և վանդակապատ արարեալ զնո-
վաւ՝ այնպէս յառակ նշաւակի թողին զնա
մինչև ցօրն երկրորդ ամենայն տեսանելեաց։

Իբրև զայսօրինակ 'ի մահ վարեցաւ Նիմ-
փիդիոս, և բերին զլոյց Գալբասայ, նա
հրաման տայր 'ի մահ մատնել և առհասա-
րակ զմիաբանեալսն՝ զոր ոչ սպանին նոքա
յետ արկածիցն նորա։ Էր 'ի նոսա և ինք-
նին Կինգոնիոս՝ որ զճառն արձանագրեաց.
գարձեալ և Միհրդատ Պոնտացին։ Վասն
որոյ և մարդիկն համարեցան այնպէս, եթէ
ոչինչ օրինաւորս՝ թէպէտ և արդարապէս,
և ոչ գարձեալ գիմոսաբար ետ Գալբաս
սպանանել արս ոչինչ աննշանս՝ յառաջ
քան զփուրշիշ գատաստանին։ Քանզի և
առհասարակ ակնկալեալք մնային մար-
դիկն այլ իմն տարաղու վարչութեանն. և
խաբեցան՝ որպէս և պատահէ բազում
անգամ՝ 'ի բանից անտի զոր յառաջագոյն
պատմէին։

Իսկ որ ինչ առաւել ևս խոժոռեցոյց
յայնժամ զմարդիկն, քանզի հրաման ետ
Գալբաս Պետրոնիոսի Տերտուղիանոսի 'ի

մահ վարիլ. և էր նա այր հիւպատեան և հաւատարիմ Ներոնի։ Զի եթէ Գալբաս զՄակրոս 'ի Լիբիա 'ի մահ մատնեաց 'ի ձեռն Տրեբոնիանոսի, և 'ի Գերմանիա դարձեալ՝ զՓրոնտէյոս 'ի ձեռն Վաղեսի, էին էին արդեօք պատճառք ահ երկիւղին նորա յարանց անտի՝ որ 'ի զէն վառեալ կային 'ի բանական անդր. բայց աղէտից այս Տերտուղիանոսի մերկ և անզէն ծերունւոյ՝ պատճառք և ոչ մի էր 'ի միջի կարձել 'ի ծերոյն զիշխանութիւն խօսելոյ, եթէ արդեօք զոր խոստանային՝ զնոյն չափաւորութիւն յիշխանութեանն՝ արդեամբք պահել հանդերձեալ էր Գալբաս։ Արդ այս գործք նորա օրինակ զայս բամբասեցան։

Յետ այսորիկ Լբրև յառաջ խաղայր դայր 'ի Հռոմ Գալբաս հեռի 'ի քաղաքէն Լբրև ասպարիսօք քան և հինգ, պատահեցաւ նմա աղմուկ շիտեթիոց Թիտվարացն, որք կանուխ եկին կացին 'ի վերայ ճանապարհին և անգանօր սիռեցան առհասարակ։ Էր ինքնին Ներոնի յառաջն խմբեալ զորեարն զայն 'ի գունդ մի և գերեալ ընդ զօրականն, և յայնժամ սոքա յանդիման եղեալք Գալբասայ՝ Թախանձ արկանէին հաստատել ունել զնոսա 'ի զինուորութեանն, և յայնժամ Թոյլ չտային ընդառաջելոց մարդկանն տեսանել զինքնակալն կամ խօսել ընդ նմա. այնպէս խռով հարեալ 'ի վայրին բարձր աղաղակաւ խնդրէին նշանս իւրեանց գնդին և

տեղի։ Իբրև Գալբաս զանց արար յայն-
ժամ, և հրաման տայր նոցա գալ առ նա
միւսանգամ և խօսել վասն իրացն, նոքա
զյապաղել զայն մերժումն համարեցան,
և սրտմտեալք այնպէս զհետ ընթանային
նորա և անդուլ աղաղակէին. իսկ իբրև և
կէսք 'ի նոցանէն սուր մերկացան, անդէն
հրաման տայր Գալբաս այրուձիոյն անկա-
նել 'ի վերայ։ Ուր և ընդդէմ դարձաւ և
ոչ ոք. կէսք տապալ յերկիր կործանե-
ցան, և կէսք 'ի փախստականն դիտապատ
անկանէին. և այնպէս վատախտար և ձա-
խողակի դէպ տայր Գալբասայ գալ մոտ-
նել 'ի քաղաք անդր մեծապէս կոտորա-
ծիւ և ընդ մէջ բազմակոյտ դիականցն։
Այլ թէ ինչ յառաջ ժամանակաւ ոք
յընչաց քերէր զայրն զայն իբրև վատեալ և
'ի ծերութիւն յեցեալ, յայնժամ ապա
ահաբեկ և սոսկալի երևեցաւ նա առհա-
սարակ մարդկանն։

Իսկ յետ այսորիկ և 'ի կամել Գալբա-
սայ փոփոխութիւն մեծապէս գործել
յանչափութեան և 'ի շռայլութեան պար-
գևաբաշխութեանցն Ներոնի, թուեցաւ
իմն նա խրթնանալ 'ի բարեվայելուչ կար-
գէն։ Քանզի էր երբեմն 'ի ժամու ըն-
թրեացն նորա սրինգ հարկանել Կանոսի
ուրումն (և էր Կանոս գերահռչակ ար-
ժանալուր). իսկ Գալբասայ հաճեալ և
'ի գովութիւն առեալ զսրինգահարն՝ հրա-
ման տայր բերել զքսակն, և հանեալ դա-
հեկանս ոսկիս՝ տայր Կանոսի և ասէր՝ շը-

նորհս նմա զայն առնել յիւրոց անտի դը-
րամոցն և ոչ 'ի հասարակաց։

Իսկ վասն պարգևացընծայիցն՝ զոր պար-
գևեալ իսկ էր Ներոն թատերական մարդ-
կանն և ասպարիսին, հրաման տայր Գալ-
բաս ճշգիւ անդրէն դարձուցանել զկշիռն՝
բայց 'ի տաներորդ մասանէն. և քանզի
արծաթ դուշնաքեայ յոյժ կուտեցաւ
յայնմանէ (քանզի և բազումք 'ի նոցանէն՝
որ զայն պարգևան առեալ էին՝ սպառե-
ցին, մարդիկ գոլով աւուրն պարենի կա-
րօտեալք և ցոփք և անաւադք կենաց), ա-
պա հրաման տայր Գալբաս վերը 'ի վայր
յուզել զարան՝ որ գնոց գնեալ էին ինչ
'ի նոցանէ կամ այլազգ առեալ ինչ, և
պահանջէր 'ի հատուցանել։ Իսկ իբրև
այսպէս անվախճան լինէր բանն և ձգէր
տարածէր խնդիրն 'ի բազումս, վատ ա-
նուն յայնմանէն ժառանգեաց անձին
Գալբաս, իսկ Յունիոս՝ նախանձ և ատե-
լութիւն. իբրու այն որ յագահութիւն և
'ի ժլատութիւն առհասարակ կրթէր զինք-
նակալն. ինքն ոչ 'ի չափու կայր և 'ի
ժուժկալութեան, և առնոյր և վաճառէր
զամենայնն. քանզի և պարտ գոլով ըստ
Հեսիոդեայ բանին «'ի սկսանել տակա-
ռին և 'ի վախճանելն՝ յագեցուցանել ըզ-
ծարաւն». Սակայն և Յունիոս տեսեալ
զԳալբաս վատեալ և 'ի ծերութիւն յե-
ցեալ՝ 'ի նորուն բախտէն ընոյր զանձն ոչ-
ջոյն. իբրու որ միանգամայն 'ի սկսանել
լոյէ և 'ի վախճանել։

Արդ զծերունին զայն անիրաւութիւն ինասէր Յունիոս առաջին՝ զի չարաչար առաջնորդէր նա իրացն. և երկրորդ անգամ՝ զի և զգեղեցիկ խորհուրդս զծերունւոյն յետս տանէր կամ արգելոյր, զոր օրինակ և զպատիժ պատուհասի զնեռոնեանցն: Քանզի մինչդեռ 'ի մահ վարէր զեղեռնաւորսն զայնոսիկ, ըստ որում զԵղէոս և զՊողիւկղետոս և զՊետինոս և զՊատրոբիոս, ծափս հարկանէին ժողովուրդք. և մինչդեռ զնոսա այնպէս ածեալ բերէին ընդ հրապարակն, ձայն բարձեալ գոչէին՝ եթէ է իսկ հանդէսդ գեղեցիկ և դիցն ինքնին փարելի. բայց և զՏիգեղինոս ինքնին գլխովին խնդրեն 'ի մահ՝ միանգամայն և դիք և մարդիկ՝ զվարժապետն զայն և զդասախարակն զբռնակալութեանն:

Այլ սա այս Տիգեղինոս կանուխ իսկ յինքն յանկուցեալ էր զՅունիոս մեծամեծ առհաւատչեիւք: Եւ ուր Տերտուղիանոս ասէլի գոտաւ և յարևէն հատաւ՝ զի ո՛չ ասէաց զանօրէնն զայն ինքնակալ և մատնեաց, և այլ ինչ ինասս մեծ չէր գործեալ նորա: Իսկ յայնժամ Տիգեղինոս՝ արև սեռանէր՝ որ ինքնին արժանապարտ մահու յարդարեաց զներոն, ապա և Եղիք և մատնեաց ևս զնա: Յայսմանէ ապա մեծապէս էին հաւատիք, եթէ յամենայնի ուրեմն կամագիւռք լինէին առ Յունիոսի՝ որ միանգամ ընծայաբերք լինէին նմա: Եւ յորժամ ժողովուրդք Հռոմայե-

ցուց ոչինչ այլ յայնժամ ցանկային տե-
սարանի, քան թէ 'ի խոշտանգանս մահու
տեսանել զՏիգեղինոս, և անդուլ յամե-
նայն 'ի թատերս և 'ի կրկէսս ինդրէին 'ի
մահ զնա, յանդիմանութիւն ևս լուան
յինքնակալէն ազգարար գրուիլ, յորում
և խնացուցանէր եթէ ինքնին Տիգեղինոս
ոչինչ այնուհետև երկայնակեաց իցէ՝ 'ի
մաշարայական ըմբռնեալ ախտէ. և իբն-
դրէր ևս 'ի Ժողովրդոցն մի գրգռել զնա.
և մի թերևս բռնակալ երևեցուցանել ըզ-
տէրութիւն նորա։ Եւ իբրև 'ի սրտմտու-
թիւն բրդէին ժողովուրդք, նոքա զծա-
ղու գային. և ինքնին Տիգեղինոս զոհ կա-
տարէր զփրկութեանն, և կոչուն սա-
տրաստեաց շքեղ և մեծահաց։ Իսկ Յու-
նիոս յետ ընթրեացն ելեալ 'ի սեղանոյ
ինքնակալին ջոքաւ 'ի խրախուն առ Տի-
գեղինոս, ածեալ 'ի միասին և զդուստր
իւր զայրիացեալն։ Անդ Տիգեղինոս ըմբէր
և պարգևէր նմա քսան և հինգ բիւրս ար-
ծաթոյ, և հրաման ևս տայր աւագ հար-
ճին իւրոյ՝ բառնալ զզարդ պարանոցին և
արկանել զդստերքն, և ասէին զարդուն
այնմիկ արժել հնգետասան բիւրուց դրա-
մակշռոց։

Յայսմանէ և գործք դլխովին գեղեցիկ
չափաւորութեան բամբասեցան. ըստ ո-
րում՝ որ ինչ գործեցան յայնժամ 'ի շը-
նորհս Գաղատացւոցն՝ որ յառաջ աղմուկ
յուզեալ էին 'ի միասին ընդ Վէնդիկեայ։
Քանզի կարծեալ այնպէս՝ եթէ ապա-

հարկք գտան նոքա և 'ի քաղաքացիս գրե-
ցան ոչ 'ի մարդասիրութենէ ինչ ինքնա-
կալին, այլ գնոց գնեցին նոքա զայն 'ի
Յունիոսէ։ Ուստի և յայսմանէ գարձեալ
առեցին ժողովուրդք զտէրութիւն նորա։

Բայց և զօրականք յայնժամ թէպէտ
և չառին զպարգևն խոստացեալ, սակայն
և ակն ունէին եթէ և 'ի չտալ նորա ողջոյն
զկշիռն, գէթ տացէ որչափ ինչ ետ նե-
ռոն. այլ Իբրև զքրթմնջիւն նոցա լուեալ
Գալբաս՝ բանս բարբառեցաւ առ նոսա
արժանի արդարև մեծի զօրավարի, եթէ՝
ինքն զօրընակիր այրընակիր բնաւորեցաւ լի-
նել, քան թէ գնոց գնեալ զօրական։ Իբրև
զայն լուան զօրականք, սաստիկ ևս և դառ-
նապէս յատելութիւն գարձան ընդ նմա.
քանզի և համարեցան՝ զի ոչ ինքն միայն
զրկէ զնոսա, այլ և օրէնս ևս սահմանէ
կարգէ և զնոյն ուսուցանէ և որ զկնի նո-
րա ինքնակալացն։

Ապա յայնժամ 'ի Հռոմ քաղաքի 'ի
ծածուկ յուզէր աղմուկ, միանգամայն և
շուք պատկառանաց առ Գալբաս, որ մօտ
կայր և սանձէր կարձէր առ ժամն զաղ-
մուկն. և զի չէր տակաւին 'ի միջի յայտնի
սկիզբն փոփոխութեանն, յայնմանէ ար-
գելեալ խափանէր թշնամութիւն խոժո-
ռեալոցն։ Բայց ոչք յառաջագոյն զինուո-
րեալ իսկ էին առ Վէրգինիոսի և յայն-
ժամ կային առ Փղակկոսի 'ի Գերմանիա,
Իբրև մեծաց փոխարինաց արժանիս համա-
րէին զանձինս վասն մարտին զոր մարտեան

ընդ Վինդիկեայ և ոչ հանդիպեցան, ոչ ինչ այնուհետև հանդարտեցին 'ի բանս զօրագլխացն և գլխովին առ արհամարհս ունէին զՓղակկոս, որ և 'ի հանապազ-օրեայ ոռնացաւէն արգելեալ նստէր. առ այս՝ զի և էր նա անփորձ 'ի գործս։ Եւ էր երբեմն 'ի կատարել հանդիսի տեսարանաց, և ըստ սովորութեանն Հռոմայեցւոց 'ի մաղթել հազարապետացն և գընդապետաց վասն յաջողութեան ինքնակալին Գալբասայ, անդանօր զօրականն զառաջինն խռով հարկանէր, և ապա 'ի հանապազորդել մաղթանացն, պատասխանի տայր զօրականն. "Ձէ արժանի։

Իբրև օրինակ զայս խեռացան բազում անգամ և գունդք որ առ Տիգեղինոսի, յայնժամ նամականի տային վասն այնորիկ առ Գալբաս գործակալք նորա։ Իսկ նա զահի հարեալ, և զմտաւ ևս ածեալ զարհամարհութիւն անձինն ոչ 'ի պատճառս միայն ծերութեանն այլ և անզաւակութեանն, խորհուրդ խորհեցաւ առնուլ իւր յորդեգիրս զմի ոմն 'ի պատանեաց ականաւորաց և պայազատ արքայութեանն համբաւել զնա։

Եւ էր անդ 'ի ժամանակին Մարկոս Ոթոնն պատանի՝ ոչ յաննշան ինչ զարմէ, սակայն և յոյժ վատթարեալ 'ի գրգանաց և 'ի հեշտասիրութեանց անդատին 'ի տղայ տիոցն, որպիսի նուազունք 'ի Հռոմայեցւոց։ Եւ զոր օրինակ ինքնին Հոմերոս կոչէ զԱղեքսանդրոս "Վարսագէղին փեսայ

հեղինեայ ,, , և այնպէս անուն կարդա-
ցեալ նմա ստէպ 'ի կնոջէն՝ 'ի շուք մեծա-
բանաց նորա , անբաժ այրն ինքնին գոլով
'ի փառաց անձինն , սակայն և Ոթոնն ա-
կանաւոր գտաւ 'ի հռոմ յամուսնութենէ
անտի ընդ Պոմպէայ . որոյ էր հոմանի Նե-
ռոն՝ 'ի հարանութեան նորա ընդ Կրիսպի-
նոսի : Եւ քանզի Ներոն յայնժամ տա-
կաւին շուք մեծարանաց դնէր իւրում
կնոջն և զանգիտէր ևս 'ի մօրէն , առեալ
ապա առաքէր զՈթոնն փոխեալ 'ի ծա-
ծուկ զՊոմպէա . 'ի գործ վարեալ զՈ-
թոնն իբրև բարեկամ և կենակից սիրե-
ցեալ 'ի պատճառս անժուժկալութեանն,
որպէս զի և խնդայր ևս նա 'ի լսել 'ի
նմանէ ստէպ հեգնութիւնս յընչաքաղ-
ցութեան նորա և 'ի ժլատութեան : Եւ
պատմեն՝ յաւուր միում օծեալ Ներոնի
յանուշունս օծանելեաց և սրսկեալ ևս
յՈթոնն , իսկ սա յաւուրն երկրորդի 'ի
տուն իւր ժողովեալ զՆերոն , անդուստ
յանկարծ միանգամայն 'ի կողմանց կող-
մանց 'ի դուրս բերէր ոսկի և արծաթի խո-
ղովակս՝ յորոց բղխէին հոսէին օծանելիք
իբրև ջուր :

Ա՛ՐԴ սա այս Ոթոնն հրապուրեալ
զՊոմպէա շնալ նախ ընդ Ներոնի , և սա-
դրեալ ևս զնա 'ի յոյս ակնկալութեան
վասն անձինն , ամոքեաց զնա որոշիլ յառ-
նէն : Ա՛յլ 'ի մտանել Պոմպէայ առ Ո-
թոնն իբրև ամուսին , այնուհետև ոչինչ
հանդարտեր հասարակ ունել զնա , և 'ի

խոր ևս խոցէր բաժանորդ բանին առնել ինքնին զՆերոն։ Իսկ Պոմպէա՝ որպէս ասեն՝ ոչինչ խոժոռէր ընդ կիրս խանդին նոցա. քանզի պատմեն՝ եթէ 'ի սան ոչ գոլով Ոթոնէի, չընկալաւ նա զՆերոն, յորմէ և վայրիկ մի ևս վտանգէր Ոթոնէ 'ի կեանսն։ Եւ արդեօք օտարոտի իրք իցեն՝ զի 'ի մահ վարեաց Ներոն զկինն իւր և զքոյր իւր վասն հարսանեացն Պոմպէեայ, և Ոթոնէի ներու�զնորհեաց։ Այլ այս յաջողեցաւ առնն 'ի բարեկամութենէ անտի Սենեկային, այն՝ որ ամոքեաց զՆերոն և խորհուրդ 'ի ներքս տայր նմա արձակել զՈթոնէ 'ի զօրավար Լիւսիտանացւոց առ ափամբ Ովկիանուն. ուր և քաղաքավարեցաւ նա ոչինչ անհամբոյր և գժոխրմբեր առ հնազանդեալսն. քանզի և գիտէր իսկ քաջ զզօրավարութիւն զայն տուեալ նմա 'ի ձեռս՝ ամոքել և վարագուրել զկիրս զվտարանդութեան իւրոյ։

Բայց ապա 'ի վտարանջել Գալբասայ, սա առաջին 'ի զօրավարս միամտեցաւ ընդ նմա, և ածել առ նա ողջոյն զոսկի և զարծաթ զիւր՝ որ 'ի բաժակս՝ որ 'ի սեղանս, տայր նմա հատանել դրամ, նաև 'ի ծառայից անտի իւրոց առել պարգևեաց նմա 'ի զգաստից 'ի գեղեցիկ սպասարկութիւն առն զօրավարի 'ի պէտս առօրեայս։ Նաև յայլ ինչ իրս էր նա նմա հաւատարիմ, և հաւատի ևս էին նորա ոչինչ խոնարհագոյն լինել. քան զայլս 'ի գիտութենէ իրացն։ Այլ և աւուրս բաղումս ուղեկից եղև նա ընդ

Գալբասայ 'ի նոյն կառան, և այնպէս յուզ-
ւոջ կենակից եղեալ՝ յինքն և զՅունիոս
յանկուցանէր քաջիկ ապատարկութեամբ և
ընծայաբերութեամբ. և զառաջին շուքն
նմա տուեալ՝ 'ի նորա ձեռն անձին գրա-
ւականէր զերկրորդ բարձ աւագութեանն,
սակայն և աւագ ևս երևեցաւ նա քան
զՅունիոս, զի և չէր իսկ ատեցեալ իբրև
զնա. քանզի ձրի ձեռն տայր նա ազաչա-
ւորաց մարդկանն, և համբոյր և մարդա-
սէր առհասարակ զանձն 'ի ներքս ընծայե-
ցուցանէր: Առ այսոքիւք՝ և մեծապէս զո-
բաւիգն կայր նա զինուորութեանն, և ըզ-
բաղումս յառաջ կոչէր 'ի զօրապետու-
թիւն. է զի ինքնին առ ինքնակալն նմին
իրի յողոք մատուցեալ, և է զի միջնորդ և
բարեխօս առ Յունիոս լինէր և առ ազա-
տագրեալսն Սիկեղիոս և Ասիատիկոս.
քանզի սոքա առաւել ևս յօրացեալ էին
յարքունիսն: Առ այս և հանապազ 'ի
հրաւիրել իւրում զԳալբաս, ընծայատար
լինէր թիկնապահացն դնդին. միւսմ միւսմ
'ի զօրականէն բաշխէր դահեկան մի ոսկի,
և այնպէս մեծարեալ յինքն յանկուցա-
նէր զզօրականն:

Ապա 'ի խորհուրդ մտեալ Գալբաս
վասն պայազատի գահին, յայնժամ Յու-
նիոս 'ի ներքս զՈԹոնն ընծայեցուցանէր,
սակայն և ոչ ձրի. այլ կրթեալ էր նա 'ի
հարսանիս գատերն նորա. քանզի և պայ-
ման կայր 'ի միջի, զի թէ ՈԹոնն հա մբա-
ւեսցի որդի Գալբասայ և պայազատ ար-

քայութեանն, հարսնացուսցէ Յունիոսի զդուստրն։ Բայց Գալբաս յայտնի՝ քան զանձինն նախամեծար զհասարակացն առնելով, ինդրէր յորդէգիրս առնուլ ոչ զսիրեցեալն իւր, այլ զայր՝ որ պիտանացու ի՛ցէ Հռոմայեցւոց։ Նա՝ և վասն Ոթոնի թուէր ի՛մն՝ եթէ և ոչ ժառանգ անգամ սեպհական իւր գոյիցն կամէր զնա Գալբաս, քանզի յաղակատանս տեսանէր զնա, և 'ի պարտս ընկղմեալ հինգ հազար բիւրուց։ Ուստի և բանիցն Յունիոսի ունկն միայն մատուցեալ լուիկ և հեղաբար, ժամավաճառ լինէր 'ի գործն։ Եւ ապա կարգեալ զՈթոնն հիւպատոս և իշխանակից զՅունիոս, յայնժամ առհասարակ դէտակն կալեալ մնային՝ եթէ 'ի գլուխս ամին անուանեսցէ զնա և պայազատ իւր. և ինդայր ցնծայր զօրականն ընդ նախապատիւ փառսն Ոթոնի։

Իսկ մինչդեռ տակաւին դեգերեալ 'ի խորհուրդ մտանէր Գալբաս վասն իրացն, անգուստ գուժկան հասանէր նմա՝ բօթ տայր զապստամբութեան Գերմանական զօրուն. քանզի և առհասարակ յատելութիւն բերեալ էին ընդ նմա, զի չէտ նոցա զնոստացեալ պարգևն։ Իսկ որք 'ի Գերմանիա կային, էր նոցա և պառաճառս այլ առանձին 'ի նեղքս բերել. այն՝ զի Վերգինիոս Հռուփոս այնպէս անարգաբար 'ի բաց մերժեցաւ. և զի՝ Գաղատացիք ինքնին որ մարտ մղեցին ընդ նոսա՝ առին նոքա պարգևս. և զի՝ առհասարակ որ

միանգամ չմիաբանեցան ընդ Վինդիկեայ՝ պատուհաս կրեցին. և Վինդիկեայ միայնակ շնորհս կալաւ Գալբաս, շուք փոխարէն և 'ի մահուն անգամ եդեալ նմա աշխարհօրէն յուղարկաւորութեամբ. իբրու որ առ 'ի նմանէն կարգեցաւ ինքնակալ Հռոմայեցւոց։ Իբրև այնպէս յայտնի յայտպիսեաց քրիստոնէական յուզեցան 'ի բանակին, գայր հասանէր ամսամուտ առաջին ամսոյն՝ զոր Կաղանդս կոչեն յունվարի. և յայնժամ Փղակկոս 'ի մի զզօրականն խմբեալ՝ կռեալ ըստ սովորութեանն երդումն առ ինքնակալն, նոքա յառաջ մատուցեալք՝ տապալ յերկիր հարեալ խորտակեցին զպատկերն Գալբասայ, և երդումն կռեալք առ Սինկղիտոսն և առ Ժողովուրդ Հռոմայեցւոց, այնպէս 'ի բաց գնացին։ Ցաղնապէցան զօրագլուխք 'ի խորհուրդս իւրեանց, և զահի հարեալ էին յանիշխանութեանն կրից՝ իբրու յապստամբութենէ խմեմնէ։

Յայնժամ և մի ոմն յարուցեալ ասէր այսպէս. "Եւ զի՞նչ ապա իցէ առնել մեր՝ ո՞վ նիզակակիցք, եթէ այլ ինքնակալ չկարգեմք մեզ, և զոր զարդիս ունիմք՝ չպահեմք. իբրու եթէ ո՛չ 'ի Գալբասայ ուծացեալ իցէ մեր, այլ գլխովին յամենայն իշխանաց և յիշխանութենէ։ Արդ՝ զՓղակկոս Որդեոնիոս՝ որ ստուէր միայն է դա և դրօշեալ Գալբասայ՝ թողուլ լքանել արժան է. և ահա միօրեայ միայն գնացս Ճանապարհի 'ի մէնչ բացա-

կան կայ Վիտեղիոս՝ կուսակալ միւսումն Գերմանիոյ, և է դորա հայր՝ որ համարակալ կացեալ է և հիւպատոս երիցս անգամ, և գոգ իշխանակից ևս Կղոդիոսի կեսարու. և է իսկ ինքնին Վիտեղիոս վերկայեալ 'ի լաւութեան և 'ի մեծանձնութեան՝ յաղքատութեան անդ իւրում, զոր կէսք եպերեալ այպանեն։ Օ՛ն առեալ ընտրեսցուք զդա, և առհասարակ մարդկան 'ի դէմս բերցուք զմեզ իբրև քաջախորհուրդ ևս քան զԻբերացիս և զԼիւսիտանացիս յընտրութիւն ինքնակալի,,։

Իբրև կէսք հաւանեցան, և կէսք անհաւան գտան, յայնժամ 'ի դրօշակակրաց անտի մի ոմն գաղտաբար խոյս տուեալ գիշերագնաց լինէր առ Վիտեղիոս. զոյց տայր նմա զբանին, մինչդեռ նա յընթրիս բազմեալ կայր ընդ բազում կոչնակացս։ Հռչակ հարեալ բանին ընդ բանական, անդուստ փարիսոս Վաղէս զօրագլուխ գնդի՝ առաջին եղեալ ջոքաւ յաւուրն երկրորդի բազմաձեռն այրուձիով առ Վիտեղիոս, և ողջոյն տայր նմա իբրև ինքնակալի։ Սա այս Վիտեղիոս ժամանակաւ հրաժեշտ տայր յանուանէ անտի, զանգիտեալ 'ի մեծութենէ բարձին. բայց յայնժամ՝ ասեն՝ 'ի դինի և 'ի կերակուր յղփացեալ առնն 'ի հասարակ աւուր, եղանէր արտաքս և յանձն առնոյր. և անուն կարդայր անձին Գերմանիկոս, ոչ հաւանեալ ընդ անուն Կայսեր։ Յայնժամ արագ ապրագ և զօրականք որ ընդ Փղակկոսի՝ լքեալ

զգեղեցիկ երդմունսն ռամկապետութենն առ Սինկղիտոսն, երդումն կռէին առ Վիտեղիոս ինքնակալ՝ կատարել զամենայն հրամանս նորա։ Եւ այնպէս ապա Վիտեղիոս համբաւեցաւ ինքնակալ 'ի Գերմանիա։

Լուր առեալ Գալբաս՝ որ անդանօր ըզնորութեանն, ոչ ևս այնուհետև յամեցոյց զորդէգրութիւնն. այլ գիտելով չափ՝ զի 'ի բարեկամաց անտի իւրոց կէսք հակամիտեալ էին զհետ Դոլաբեղեայ, և բազումք զհետ Ոթոնի, նա ոչ հաճեալ և ոչ ընդ մին 'ի նոցանէ, անդէն վաղվաղակի զանխուլ յամենեցուն առաքէր կոչէր զՊիսոնն զորդի Կրասսոսի և զԹոռն Կրիտիոնի (զորս 'ի մահ մատնեաց Նէրոն), այր պատանի՝ որ 'ի բոյս քաջաբոյս առ ամենայն առաքինութիւն բաւական 'ի դէմս բերէր զլաւութիւն բարուցն և զանաչառութիւն։ Եւ ելեալ ինչանէր Գալբաս 'ի բանակն համբաւել զնա կայսր և իւր պայազատ. Թէպէտ և յելանել իւրում 'ի տանէն անդէն նշանք մեծամեծք 'ի դից հետևեցան ընդ նմա։ Իսկ իբրև էառ նա 'ի հրապարակախօսել 'ի բանակին կէս մի 'ի բերան, և կէս մի՝ վերծանութեամբ, այնչափ ինն որոտաց երկին և փայլատակունք հատանէին ահագինք և այնչափ անձրևոյ տեղատարափ և մուրճն առհասարակ պատէր զբանակն և զքաղաքն, որպէս զի և յայտնի ոչինչ հաճել դից ընդ որդէգրութիւնն, և ձախողակի ևս հանդիպել բանին։ Ա՛ռ այս՝ և զօրականք ինքնին 'ի խոր

խոցեցան, և խռով յուզէին, զի և ոչ յայնժամ պարգև տուաւ նոցա։ Բայց որ շուրջն կային՝ հիացեալ էին ընդ Պիսոնէն. զի 'ի ձայնէ բարբառոյ առն և 'ի կերպարանէն խելամուտ եղեն, զի անզարհուրելի յանձն առնոյր նա զմեծապէս պատիւն, սակայն և ոչ յանզգայս։

Իսկ անդուստ 'ի գիտակ երեսացն Ոթոնէի նշանք շատք երևեցան գառնութեան և սրտմտութեան առնն, զի վրէպ գտաւ 'ի յուսոյ անտի որդեգրութեանն. քանզի և առաջին ինքն արժանի համարեալ բարձին այնորիկ և մօտ առ դուրսն հասեալ և 'ի դերևս եղեալ, նշան ատելութեան և խեթին Գալբասայ համարեցաւ այրն ըղբանն։ Ոյր աղագաւ և ոչ աներկեան ինչ վասն հանդերձելոցն, սակայն երկուցեալ 'ի Պիսոնէն և դարձեալ 'ի Գալբասայ և սրտմտեալ ընդ Յունիոս, այնպէս չոքաւ նա 'ի բաց անհնարին ծփեալ 'ի բազմադէմ կրից։ Քանզի և իղձք և քաղդեայք ցանգ շուրջ կացեալք զնովաւ, թոյլ չտային առն խսպառ յուսահատել. մանաւանդ Պաղոմէոս, որ զօրացեալն ևս էր առ նմա 'ի ստէպ գուշակելոյն՝ եթէ ոչ սպանցէ զնա Ներոն, այլ ինքնին Ներոն վաղամեռիկ լիցի. և Ոթոնէ յաւելեալ 'ի կեանս՝ իշխան ապա կայցէ Հռոմայեցւոց։ Իբրև Ճշմարտեցաւ մի մասն գուշակութեանն, կամէր նա զի և ոչ 'ի միւսոյն յուսահատ լիցի։ Զնոյն դարձեալ ասէին և նոքա՝ որ 'ի խոր խոցեալ 'ի ծածուկ յոգւոց հա-

նէին ընդ նմա ընդ անշնորհակալու կիրան։ Եւ բազումք ևս՝ որ յառաջն 'ի պատուի էին առ Տիգելլինոսի և առ Սիմփիդեայ, իսկ յայնժամ անկածք գտան և անաւագք, մասէին խռնէին զնովաւ և հանդերձ նովաւ 'ի սրտմտութիւն բրդէին և գրգռէին ևս զնա։

Իսկ էին 'ի նոսա Խտուրիոս ոմն և Բարբիոս, մին՝ Ոպտիոն, և միւսն՝ Տեստերաբիոս։, քանզի այսպէս կոչէին՝ որ զպաշտօն հարկանէին զպատուիրակաց և զդիտաց. միաբանեցաւ ընդ երկոսեան ընդ սոսա և Ոնոմաստոս ազատագրեալն Ոթովնի. չոքան սոքա՝ զկէսս կաշառաբեկ առնէին, և զկէսս 'ի յոյս ակնկալութեան հրապուրեցին. քանզի և գոին իսկ զմարդիկն խօթս և փուտս, և պարապոյ ժամուն դէտակն կալեալ մնային։ Քանզի եթէ արդարև առողջ հանդիպեալ էր յայնժամ զօրականին, անշուշտ հնար չէր այնպէս յաւուրս չորս յապստամբութիւն դրդեալ զնոսա. քանզի և այնչափ աւուրք անցին ընդ որդեգրութիւնն և ընդ սպանութիւնն, և 'ի մահ վարեցան յաւուրն վեցերորդի. որ օր առ Հռոմայեցիս է յառաջ քան զուրթ և տասներորդն կաղանդացն Փետրուարի։

'Ի նմին աւուր մինչդեռ զոհ զոհէր Գալբաս 'ի Պալատիոնն վաղ քաջ ընդ առաւօտն առաջի բարեկամացն, անդանօր քուրմն Ումբրիկիոս առեալ 'ի ձեռին զընդերան սպանդին, ոչ ասէր առակաւ՝ այլ

յայտնապէս՝ տեսանել 'ի նմա հմայս զմեծաց շփոթիլց և զնենդ դաւանաց. և թէ՝ վասանդ մեծապէս առ դուրս հասեալ կայ ինքնակալին, բայց և միանգամայն 'ի նորա ձեռս գոգցես տայ ասուուած զՈԹՈՒՆ: Քանզի և ՈԹՈՒՆ ինքնին անդ մերձ կայր 'ի զոհին, և 'ի թիկանց կուսէն Գալբասայ յակՃիուս կայր բանիցն և յայտնուԹեանցն Ոմբրիկիոսին: Իբրև այնպէս ՈԹՈՒՆ տագնապեալ խռովեալ կայր, և առ ահի երկիւղին գոյն 'ի գոյն տեսիլ գիմացն հատանէր, առաջի եկն եկաց նորա յայնժամ Ոնոմաստոս ազատագրեալն նորա, և զրոյց բերէր՝ եԹէ եկին աւադիկ Ճարտարապետք տանն և սպասեալ մնան նմա 'ի տան: Եւ էր այս նշան ժամադիր՝ յորում պարտէր ՈԹՈՒՆի գնալ ընդ առաջ զօրականին: Յայնժամ ասէր ՈԹՈՒՆ, եԹէ տուն մի գնոց գնեալ հին և կամի զաւերածս նորա ցուցանել քաղաքացեացն: Ասաց և էլ արտաքս. և ելեալ 'ի վայր ընդ տունն՝ անուանեալ Տիբերեայ, դէմ եդեալ գնայր 'ի հրապարակ անդր յայն կողմն՝ ուր կանգնեալ կայ սիւն ոսկի, յոր եկեալ աւարտին առհասարակ կուռ պողոտայք Իտալիոյ:

Անդանօր ասպա զօրականք առաջինք որ առեալ ժողովեցին զնա և ինքնակալ անուն կարդացին նմա, ասեն եԹէ ոչինչ աւելի էին քան զքսան և երիս: Արդ Թէպէտ և չէր ինչ մեղկ և Թոյլ այրն՝ որպէս և կարծէր՝ 'ի փափկուԹէ մարմնոյն և 'ի գերը-

գուլթենէ անտի ոգւոյն, նա՝ խրախուսէր ևս նա 'ի վտանգս կարևորս և անզարհուրելի էր, բայց 'ի ժամուն զահի հաբաւ և կամէր վերջոանել. այլ արգելաւ 'ի զօրականէն, որ և շուրջ զչալակաւն եկեալ սուսերամերկք՝ այնպէս հրաման տային կրելեացն յառաջ խաղալ. ասէր անդուստ և ինքնին Ոլթոնն մերթ ընդ մերթ իբրու որ վճարեալ ի՝ցէ վասն իւր, և ինքնին ևս ձեպ տայր շալակաբարձիցն: Իսկ յայնժամ կիսոց լուեալ զբանն, քան զարհուրեալք ինչ՝ առաւել ևս հիացեալ էին ընդ սակաւաթիւ մարդիկն՝ որ 'ի նահատակութիւն յայն բազմավտանգ բուռն հարեալ էին:

Իբրև այնպէս առին բերին զնա 'ի մէջ հրապարակին, անդանօր և զօրականք այլ նոյնչափ թուով ընդ առաջ ելին նմա. դարձեալ և այլք գային խռնէին զնովաւ երեք երեք և չորս, ապա և միահամուռ առհասարակ շուրջ ուղի հորդեալք նմա՝ անուն կարգային նմա կայսր, և մերկապատեան սուսերօք կային առաջի նորա: Իսկ յայնժամ Մարտիաղիոս հազարապետ վանական բանակին, ոչինչ գիտելով զիրացն՝ որպէս ասեն՝ յապուշ հարեալ և զարհուրեալ ընդ անկարծ դէպսն, թոյլ տայր նմա մոտանել: Իբրև եմուտ, ընդդէմ դարձաւ նմա և ո՛չ ոք: Քանզի որ միանգամ իրացն անդէտքն էին, խառն այնպէս ըստ պայմանագիր խորհրդոյն ընդ մէջ գիտողացն և սադրողացն, ցիրուցան

սիռեալք մի մի և երկու երկու, զառաջինն առ ահին, ապա և միամտեալք զհետ ջրքան յայնժամ այլոց։

Իսկ անդուստ առ Գալբաս որ կայր տակաւին 'ի Պալատիոնի՝ տագնապաւ գուժկան հասանէր, մինչդեռ և քուրմն ինքնին անդ մերձ կայր՝ կալեալ 'ի ձեռին զսպանդան, որպէս զի և որ երբէք անհաւատացեալք այսպիսեաց բանից ունչս առնէին, յայնժամ արտաթափք յապուշ կրթեցան ընդ աստուածային յայտնութիւնն 2։ Իբրև խուռնընթաց ժողովուրդք ընթացան անդր 'ի հրապարակէն, Յունիոս և Լակոնն և կէսք ևս յաղատագրելոց հովանի կացեալք Գալբասայ՝ կային այնպէս սուսերամերկք։ Իսկ Պիսոնն յառաջ մատուցեալ խօսէր ընդ տիգաւորաց՝ պահապանք արքունեաց. և զՄարիոս Կելսոս զայր քաջ և զլաւ առեալ արձակեցին գնալ յանկուցանել զդունդն Լիւրիկեան՝ որ կայր 'ի վանսն՝ զոր ասեն Բապանիա։ Բայց իբրև խորհուրդ խորհեցաւ Գալբաս ելանել արտաքս, թոյլ ոչ տայր Յունիոս. իսկ Կելսոս և Լակոնն 'ի նոյն դրդեին և դառնապէս կշտամբանս 'ի վերայ Յունիոսին կապէին։ Մինչ այս մինչ այն՝ անդուստ և համբաւ և շուինդն հարաւ սաստիկ, եթէ ինքնին Ոթոնն գիտապատ անկաւ 'ի վանսն։ Եւ յետ սակաւու գայր հասանէր Յուլիոս Ատտիկիոս՝ այր ոչինչ աննշան՝ զինուորեալ ընդ տիգաւորսն. գալով գայր և մատէր սուսերամերկ՝ ձայն

բարձեալ գոչէր՝ 'ի մահ զԹշնամին վա-
րեալ զԿեսարուն, և եկեալ յառաջամուխ
մնեալ 'ի մարդիկն որ ընդ Գալբասայ,
ցուցանէր նմա արիւնաշաղախ զսուսերն։
Անդուստ Գալբաս հայեցեալ 'ի նա. "Եւ
ո՞ասէր՝ հրամայեաց քեզ զայդ"։ Եւ պա-
տասխանի՝ եԹէ հաւատարմութեան էր
գործն և երդմանն կռելոյ առ նա։ Իբրև
ձայն բարձեալ խուժանին ծափս հարկա-
նէին ընդ լաւութիւն գործոյն, ապա և
Գալբաս վերաբազմեալ 'ի տախտին՝ այն-
պէս բարձեալ բերէր արտաքս. կամէր
զոհ կատարել Արամազդայ, և յերկան
գալ քաղաքացեացն։

Իբրև մնեցաւ 'ի հրապարակ անդ, զոր
օրինակ յորժամ փոփոխեսցին հողմունք՝
այնպէս շուինդն այլ 'ի լսելիսն ազդեաց,
եԹէ ինքնին ՈԹոնն տիրացեալ իսկ է առ-
հասարակ 'ի վերայ զօրուն։ Ապա 'ի սաս-
տիկ որեար խուժանին այնորիկ՝ որպէս և
բնաւորեցաւ պատահել՝ կէսք ձայն բար-
ձեալ աղաղակէին դառնալ ընդ կրունկն,
կէսք՝ խաղալ գնալ յառաջադէմ. և այլք
ևս՝ խրախոյս քաջալեր կարդային նմա, և
կէսք ոչինչ վստահացուցանէին զնա։ Մինչ
այնպէս յայսկոյս յայնկոյս շալակն տա-
րուբերեալ ձգէր՝ ծփայր Իբրու 'ի մեծի
մրրկի, և ժամ 'ի ժամ այնպէս դեղևեալ
կայր, անդուստ առաջին 'ի վեր երևեցաւ
այրուձին, ապա և հետևակազօրն. դի-
մեալք գային ընդ արքունիսն Պաւղոսի,
ձայն բարձեալ միաբան՝ եԹէ սոսկականդ

այդ այր տեղի տացէ։ Իսկ յայնժամ խուժանն վազէր ընթանայր ոչ 'ի փախուստ վարատեալ, այլ հասանէր ունէր զսրահս և զբարձրաւանդակսն զհրապարակին՝ իբրու 'ի զնին եղեալք տեսարանի։

Ապա Եսիղլեոս Սերկելլոն տապալ յերկիր արկեալ զպատկերս Գալբասայ, անդուստ զօրականք սկիզբն այնուհետև առնէին գործոյն դառնութեան. առհասարակ շուրջանակի տարափս տեղային նետից 'ի տախտ անդր Գալբասայ. իբրև այն պէս անխոց մնաց առ 'ի նոցանէ, դիմեալք սուսերամերկ յարձակէին 'ի վերայ։ Եւ յայնժամ հովանի ոք ոչ գտաւ Գալբասայ և ոչ այն որ 'ի դիմի հարաւ, բայց այր մի Սեմպրոնիոս Ինդիստրոս հարիւրապետ. զնա միայն անդանօր 'ի բիւրաւորս մարդկան եռեւ արեգակն արժանի այր հռոմայեցւոց տերութեանն։ Սա այս Սեմպրոնիոս երախտիս առանձին առեալ և ոչ մի առ 'ի Գալբասայ, ախոյեան միայն կացեալ առաքինութեան և օրինացն, արձանացաւ առաջի տախտին, և առաջին զոստ գաւազանին 'ի վեր ամբարձեալ որով զյանցաւոր զօրականն պատուհասել գանեն հարիւրապետք, ձայն բարձեալ գոչէր ընդդէմ խուժելոցն, պատուէր 'ի վերայ կապէր՝ ինայել յինքնակալն։ Իբրև մօտ հասին 'ի նա, մերկանայր այրն զվաղակաւորն, և այնպէս հարուստ ժամն 'ի դիմի հարկանէր, մինչև խոցեալ 'ի կարթս ծընդացն՝ անկաւ դիտապատ. անդանօր և

տախտն տապալեալ Գալբասայ մօտ 'ի լեռն անուանեալ Կուրտիոսին, ինքն 'ի միջոյ անտի Թաւալգլոր լինէր. և այնպէս 'ի պատեանս զրահիցն հարուածս առեալ 'ի յարձակելոյ անտի, առեալ զպարանոցն մատուցանէր նոցա. "Փողոտեցէք ասէ՝ եթէ այնպէս լաւ իցէ ժողովրդեան Հռոմայեցւոց"։

Ապա վերս առեալ բազում 'ի սրունսն և 'ի բազուկսն, 'ի վերջէ ուրեմն սուր մխեաց 'ի փողն նորա (որպէս բազմագոյնք ասեն) Կամուրիոս ոմն 'ի հնդեւասաներորդ գնդէն, իսկ կէսք ասեն՝ Տերենտիոս, կէսք՝ եթէ Արկադիոս, և կէսք՝ եթէ Փաբիոս Փաբուլոս. զորմէ և ասեն՝ զգլուխն տանել 'ի ծածուկ պատատեալ 'ի բաճկոնին՝ իբրու որ գժուարունելի էր առ կնտուրեան գլխոյն։ Իբրև ընկերքն թոյլ չետուն այնպէս 'ի ծածուկ ունել և ասէին յայտնել զքաջութիւն նահատակութեանն, նա ապա 'ի նիզակ վարսեալ և ամբարձեալ զգիտակ զծերունւոյ առն և զմարդասէր ինքնակալին և զմեծի քահանայապետին և զհիւպատոսին, ընթանայր վազէր իբրու զմոլեգինս ոմանս, ստէպ դարձեալ յետս՝ ձօձէր շարժէր զնիզակաբունն 'ի կայլակել կայլակաց աբեան։ Եւ պատմեն՝ 'ի բերել գլխոյն առ Ոթոնն, գոչել Ոթոնի. "Ոչ ինչ է բանդ՝ ո՞վ իմ նիզակակիցք՝ ինձ ըզկառափն ցուցէք զՊիսոնին"։ Յետ սակաւու և զայն ևս ածին բերին առ նա։

Քանզի այս պատանի վէրս առեալ և 'ի փախուստ խուճապեալ՝ զհետ նորա ե-մուտ Մարկոս ոմն և խողխողեաց զնա առ մեհենիւն Վեստեայ։ 'Ի մահ վարեցին և զՅունիոս, որ ինքնին վկայեաց զանձնէն՝ գործակից դաւանացն լինել ընդդէմ Գալ-բասայ. քանզի ձայն բարձեալ գոչէր՝ զի 'ի մահ վարի ինքն ընդդէմ կամացն Ոթով-նի. սակայն հատին և զնորա գլուխն, որ-պէս և զԼակոնինն, և ածին առ Ոթոնն և խնդրէին դարձ փոխարինի։

Արդ որպէս Արքիղոքոս ասաց. "Եղ-թանց անկեալ դիականց՝ զորս 'ի վազս ո-ոից ձերբակալ արարայք։ Իսկ հաղարք եմք սպանողքս,,. Սակայն և յայնժամ բազումք սպանուեթեանցն այնոցիկ անհա-ղորդք՝ յարիւն և յապաժոյժ զձեռան շա-ղախեալք և զսուսերան՝ այնպէս ցուցա-նէին Ոթոնի և խնդրէին վարձ, 'ի ներքս բերելով նմա զպիտակս իւրեանց։ Իսկ յետ ժամանակաց 'ի պիտակաց անտի 'ի վեր ելանէր թիւ նոցա հարիւր և քսան. զորս և ինքնին Վիտելիոս հետախուզեալ՝ առհասարակ 'ի մահ մատնէր։

Բայց յայնժամ 'ի վանան զօրականին եկն Եմուտ և Մարիոս Կելսոս. և անդա-նօր բազումք ոմանք յուզեալք սմբաս-տանք ընդդէմ առնն՝ զի դրդեաց զզօրա-կանն ձեռն տալ Գալբասայ, և աղաղակ ևս բարձեալ խուժանին՝ սպանանել զնա, արդեալ Ոթոնն։ Իբրև զանդիտեաց և յայտ-նի ընդդէմ դառնալ, ասէր՝ ոչինչ այն-

պէս արագամահ առնել զայրն, զի և են իսկ բանք ինչ ինչ՝ յառաջագոյն տեղեկանալ 'ի նմանէ. ապա հրաման տայր կապել և պահել զնա, և յանձն առնէր զայրն 'ի ձեռս հաւատարիմ մարդկանն։

Իսկ յետ այնորիկ վաղվաղակի ժողով գումարեալ Սինկղիտոսին, իբրու եթէ յայլ մարդ փոփոխեալք այնուհետև, և այլոց դից պաշտօնատարք այնուհետև, զնոյն զերդումն՝ զոր ինքնին Ոթոնէն կռեաց Գալբասայ և դրժեաց՝ կռեցին Ոթոնէի. և յայնժամ անուն կարդացին նմա կայսր և Սեբաստոս, մինչդեռ տակաւին յաբիւն յապաժոյժ տապաստ անկեալ կային դիակունք 'ի պատմուճանս հիւպատեան և կառափնահատք։ Այլ զկառափնանն՝ որոց և ոչ պէտք ինչ այնուհետև, առեալ զՑունիոսին վաճառեցին դատերն նորա երկու հազար և հինգ հարիւր դրամակշռոց. իսկ զՊիսոնէին էառ կին նորա՝ աղաչեալ զՎերանիոս. իսկ զԳալբասայն՝ շընորհեցին Ծառայեցն Պատրոբիոսին և Վիտելիոսին՝ որք առեալ և զամենայն թշնամանս և նախատինս անցուցեալ ընդ նա, առին ձգեցին ապա 'ի վայր անդր ոպանուիթեան պատժապարտեցն առ 'ի կայսերաց, և անուն կարդան վայրացն՝ Սեատերտիոս։ Բայց զմարմին Գալբասայ բարձեալ Պրիսկոս Հելվիդիոս 'ի շնորհելոյն Ոթոնէի, գիշերի թաղեր զնա Արգիոս աղատագրեալն նորա։

Արդ՝ այսչափ են բանք վասն Գալբա-

սայ, այն՝ որ 'ի քաջութեան զարմին և յընչաւէտութեան ոչինչ խոնարհագոյն եկաց նա քան զբազումս 'ի Հռոմայեցւոց, և որ յերկոսին միանգամայն նախաթոռ բազմեցաւ քան զամենեսեան՝ որ առ իւրովքն ժամանակաւք. և եկեաց պատուով և փառաւք առ տէրութեամբ հնգից ինքնակալաց. զի և 'ի փառաց անտի իւրոց՝ քան եթէ 'ի զօրութենէն յաջողեցաւ նմա հարկանել վանել զՆերոն. և յորժամ զայլս 'ի դաւակցաց անտի՝ արժանիս տէրութեան համարեցաւ և ոչ ոք, իսկ և կէսք՝ անձամբ զանձինս արժանիս համարեցան, անդուստ Գալբաս կոչումն առեալ զինքնակալի և յանձին կալեալ, և զիւրական անունն տուեալ 'ի յանդգնութիւն անդր Վենդիկեայ, զաղմուկ շփոթիցն նորա՝ զոր ապստամբութիւն կարդային՝ դարձոյց շրջեաց 'ի մարտ ընտանի, և 'ի վեր երևեցաւ այր ոք արժանաժառանգ տէրութեանն։ Եւ ապա խորհուրդ խորհեալ՝ ոչ զտէրութիւնն ընդ ձեռամբ ունել, նա՝ զանձն 'ի ձեռս տալ տէրութեանն, ինդրեաց իշխան կալ մարդկանն՝ զոր ածին հաւանեցուցին Տիգեղինոս և Նիմփիդիոս. ըստ օրինակին՝ որպէս Սկիպիոն և Փաբրիկիոս և Կամիլլոս բնաւորեցան իշխել Հռոմայեցւոց 'ի դարս իւրաքանչիւր։ Եւ թէպէտ և 'ի ծերութենէ պարարտութեանն վատեալ, սակայն և 'ի ղէն և 'ի զօր ինքնակալ անշուշտ և իբրև վաղնջուց՝ զանձն 'ի նեղքս ընծայեցոյց։

Բայց քանզի անձնատուր գլխովին առ Յունիոս եղև Գալբաս և առ Լակոնն և առ աղատագրեալսն՝ որ գնոց գնէին զամենայնն, ըստ որում և ինքնին Ներոն անձնատուր առ ընչաքաղց և օգտածարաւ մարդիկն, վասն որոյ և ըղձակալթ յետ իւր թողեալ նա և ոչ զոք իշխանութեանն իւրոյ, սակայն և զբազումս եթող ախտակից 'ի մահուան իւրում:

---

# ՈԹՈՎՆ

1 ԵՎ այսպէս նորոգ ինքնակալն 'ի ծագել աւուրն դէմ եդեալ 'ի Կապեստոլիոն՝ զոհ կատարէր. և հրաման տուեալ ածել առ ինքն զՄարիոս Կելսոս՝ մեծապէս սիրով ժողովեաց զնա և հիւրամեծարութեամբ խօսէր ընդ նմա, ափոփէր քաջալերէր 'ի մոռացօնս մանաւանդ դարձուցանել զՀնսան, քան թէ զարձակուրդ անէին յուշ ածել։ Իսկ և Կելսոս պատասխանի արարեալ պերճ և շնորհակալու, ասէր՝ եթէ և Հնսան նորա ինքնին հաւատոիք են անարատութեան բարոյից նորա (իբրև ամբաստան զնմանէն լինէին վասն հաւատարմութեանն առ Գալբաս, որում շնորհս ինչ նմա ոչ պարտէր)։ Իբրև զբանս երկոցուն նոցա լուան որ շուրջն կային՝ զարմացան, և գովեցին զնոսա զօրականք։

Յետ այնորիկ եկեալ Ոթովնի 'ի Սինկ-
ղիտոսն, կայր և խօսէր ընդ նոսա բանս
բազում մարգասիրութեամբ լի և քաղց-
րութեամբ. և առեալ տայր 'ի ձեռս
Վերգինիոսի Հռուփոսի զմնացուած հիւ-
պատոսութեանն իւրոյ. և հաստատէր
կարգէր 'ի նոյն բարձ՝ որք միանգամ 'ի
Ներոնէ և 'ի Գալբասայ 'ի նոյն ընծայե-
ցան: Ապա և աւագութեամբք քահա-
նայական պատուեաց՝ որք վասն հասակին
կամ 'ի համբաւոյն յառաջադէմք էին, և
առհասարակ աւագաց Սինկղիտոսին՝ զորս
վտարանդեաց Ներոն և դարձոյց Գալբաս՝
առեալ դարձուցանէր առ նոսա զամենայն
զգոյս՝ որչափ ինչ եգիտ անվաճառ: Ոյր
աղագաւ և աւագ և լաւ որեար քաղա-
քին, որ յառաջն զարհուրեալ ի մահ էին և
վարանէին՝ եթէ ոչ մարդ արդարև ի՞ցէ
այրն, քան թէ պատիժ պատուհասի կամ
արիւնախանձ Այս՝ որ այնպէս յանկար-
ծակի սիրացաւ ի՞շխանացաւ, քաջալերե-
ցան յայնժամ 'ի յոյս լաւութեան ա-
ռաջնորդութեան առնն՝ իբրու որ բերկ-
րեցուցիչ երևեցաւ:

Իսկ ո՞չ ինչ յայնժամ առաւել բերկ-
րեցոյց առհասարակ զՀռոմայեցիս և ա-
ռեալ յանկոյց 'ի նա, իբրև զՏիգեղինեայ
դէպն: Քանզի և էր իսկ այս Տիգեղինոս
բազումս պատուհասեալ՝ թէպէտ և ինքն
ոչգայր՝ յահ երկիւղի պատուհասին զոր
'ի նմանէն պահանջէր քաղաքն իբրու
պարտս հասարակաց, առ այս՝ և 'ի կիրան

անբուժելիս՝ զոր կրէր ինքնին 'ի մարմնի իւրում. դարձեալ և 'ի շաղել թաւալել նորա 'ի պղծութիւնս ամբարիշտս և 'ի գժպհիս ընդ պագշոտ կանանուոյն և ընդ բոզից՝ ձգեալ յանժուժկալութենէն՝ յորմէ տիրացեալն իսկ էր, թէպէտ և առ դուրս հասեալ մահու. զոր և 'ի վերջին պատուհասից կարգի և բիւրուց մահուց հաւասար արդեօք համարեսցին զգաստքն 'ի մարդկանէ: Ալ յայսր ամենայնի վերայ խոժոռեալ էր խուժանն, զի արև տակաւին տեսանէր այրն հնացեալ, յորժամ 'ի նորա պատճառս այնչափ և այնպիսի որեար յարևէ հատան: Ապա առեալ արձակէր առ նա Ոթոնն սուրհանդակ յագարական մօտ 'ի Սինոէսսա. քանզի անդ բնականայր նա յայնժամ և կազմ ունէր նաւս՝ գնալ փախստեայ 'ի տար աշխարհ: Անդ Տիգեղինոս գուն գործէր ամոքել ողոքել զսուրհանդակն, ոսկի յոյժ 'ի ներքս մատուցանէր նմա թողուլ զնա: Իբրև զայն ոչ կարաց՝ դարձեալ պարգևս և ձիրս առաջի առնէր և աղաչէր յամել վայր մի՝ մինչև գերծուլ զմօրուսն. և առեալ ածելի ինքնին կտրէր զփողն:

Եւ այսպէս ապա յոյժ իրաւապէս բերկրեցուցեալ Կեսարու զժողովուրդն. բայց յանձին առանձին թշնամութիւնն յիշաչար լինէր և ոչինչ այրն. իսկ 'ի հաճել զխուժանն՝ ոչինչ խորշեցաւ և զառաջինն՝ յորժամ անուն Ներոնի կարդացին նմա 'ի թատերս. դարձեալ և յորժամ

անդանօր ոմանք հրապարակեցին և զպատ-
կերսն Ներոնի, նա ոչինչ արդեալ։ Առ այս՝
և պատմէ ինքնին Կղաւդիոս Հռուփոս,
եթէ յԻբերիա ածան հրովարտակք որովք
արձակեն զդրաբերսն, յորս բաց յանուա-
նէն Ոթոնի արձանագրեալ կայր և գիւ-
ցական անուն Ներոնի։ Բայց ապա խելա-
մուտ Ոթոնի եղեալ՝ զի աւագ և լաւ ո-
րեարն խոժոռեցան ը բանն, յետս եկաց։

Արդ նա օրինակ զայս հաստատեցաւ
'ի տէրութեանն, սակայն և վարձկան զօ-
րականք ամբոխէին զայրն. ազդ նմա առ-
նէին մի՛ ինչ ամենևին վստահ լինել, նա և
անձնապահ ևս լինել և արդելուլ զակա-
նաւոր որեարն։ Կամ՝ զի անշուշտ զանդի-
տէին նոքա վասն նորա՝ 'ի մտերմութենէ
անտի նոցա առ նա. կամ՝ զի նովին հնա-
րիմացք լինէին աղմուկ յուզել և մարտ
գրգռել։

Ապա արձակեալ Ոթոնի զԿրիսպինոս
ածել առ ինքն զեօթն և տասներորդ ըզ-
գունդն, իբրև հանդերձեցաւ կազմեցաւ
նա գիշերախառն կատարել զգործն, և
բարձեալ բերէր ևս զէնս 'ի վերայ սայլից,
յայնժամ առհասարակ որ միանգամ յան-
դրգունք 'ի զօրականին՝ ձայն բարձեալ ա-
զաղակէին եթէ ոչ 'ի լաւութիւն ինչ
կրթին խորհուրդք Կրիսպինոսի, այլ թէ
Սինկղիտոսն ինքնին զհետ կրթի նորու-
թեանց. և թէ բարձեալ բերին զէնք ո՛չ
առ կեսար, այլ ընդդէմ կեսարու։ 'Ի
բանից սատի դրդեցան գրգռեցան բա-

զումք. կէսք յարձակեցան արդէլին ըզ-
սայլսն, և կէսք վանեալ զՀարիւրապետսն՝
որ ընդդէմ դարձան՝ զերկուսն սպանին,
և զԿրիսպինոս ինքնին գլխովին. և ապա
առհասարակ վառեալք 'ի զէնս և ձայն
տուեալ միմեանց ձեռն տալ Կեսարու՝
դիմեալ գային 'ի Հռովմ կոյս։

Անդանօր լուր առեալ եթէ ուԹսուն
Թուով աւադք 'ի Սինկղիտոսէն յընԹրիս
կան առ ՈԹոնին, արագ արագ չոքան
յարքունիս անդր. ասէին՝ ժամ բարեպա-
տեհ առհասարակ միահամուռ 'ի մահ վա-
րել զԹշնամիս ինքնակալին։ Իսկ յայն-
ժամ քաղաքն ողջոյն յանհնարին աղմուկ
յուզեցաւ, իբրու որ մերձ ընդ մերձ յա-
ւար հարկանել. և յարքունիսն յայսկոյս
յայնկոյս վազվազէին, և ՈԹոնին ինքնին 'ի
մեծ վարանս տագնապեցաւ. և յորժամ
ինքնին նա երկուցեալ զանդիտէր վասն
աւագանւոյն, նոքա 'ի նմանէն երկնչէին,
զի և յակն ևս արկանէր զնոսա՝ այնպէս
անքԹիւԹ առ ինքն հայեալ անմռունչք և
զարհուրեալք. մանաւանդ զի և կէսք 'ի
նոցանէն յընԹրիս անդր հասեալ էին
հանդերձ կանամբք իւրեանց։ Յայնժամ
ՈԹոնին արձակէր զօրագլուխս հրաման
տայր խօսել ընդ զօրականին և ամոքել ըզ-
նոսա. և ինքն 'ի նոյն տայր աւագանւոյն
յառնել, և արձակէր զնոսա 'ի բաց ընդ-
այլ դուրսն։ Ա՛յն ինչ նոքա զերծան 'ի
վայրաց անոի, եկին խուժեցան 'ի դահ-
ղնՃ անդր վարձկան զօրականք. խնդրէին

հարցանէին՝ զի՞նչ իրք իցեն վասն թշնամեացն ինքնակալին։ Նա ասպա յարուցեալ 'ի բազմոցէն, շատ ինչ խօսեցաւ, և կայր և ամրքէր զնոսա. և հազիւ ուրեմն յողոք անկեալ նոցա և արտասուեալ ևս, այնպէս 'ի բաց արձակէր։

Իսկ յաւուրն երկրորդի՝ առ մէն մի 'ի զօրականէն պարգևեալ դրամակշիռս հազար երկերիւր և յիսուն, էկն եմուտ 'ի վանս անդր նոցա. և առհասարակ 'ի գովութիւն առնոյր զզօրականն՝ իբրու յառաջամիտս և մտերիմս իւր, և ասէր ևս՝ եթէ իցեն արդեօք նուազունք ոմանք ոչ ինչ 'ի լաւութիւն կրթեալք՝ այնպէս բամբասելով զնորա չափաւորութիւնն և զնոցա զանդրդուելի հաստատութիւնն. և աղաչէր՝ 'ի միասին ընդ նմա սրտնեալ գործակից լինել 'ի պատուհաս այնպիսեացն։ Իբրև առհասարակ հաւանեցան, և փութացուցանէին ևս զպատուհասն նոցա, նա հրաման տայր ձերբակալ զերկուս միայն առնել, յորոց և 'ի պատուհասին խոժոռէր և ոչ ոք, և էլ հրաժարեցաւ 'ի նոցէ։

Ապրդ յայնժամ մտերիմք նորա և վստահացեալքն 'ի նա՝ տեսեալ զայսոսիկ, հիացեալ զարմանային ընդ փոփոխութիւն առնն. իսկ անդանօր և կէսք համարեցան այնպէս՝ եթէ քաղաքականութիւն իցէն այդոքիկ 'ի հարկէ և վասն ժամանակին, այնպէս հնարս հնարել յինքն զժողովուրդն յանկուցանել վասն մարտի պատերազմին։ Քանզի և լուր անչուշտ հա-

սանէր առ նա, եթէ Վիտեղիոս աւագու-
թիւն զինքնակալի և զզօրութիւն զան-
ձամբ առեալ է. և անդուլ առ նա գային
ժամանէին գուժկանք՝ եթէ ժամ 'ի ժա-
մէ գնալով գնայ և յօրանայ այրն։ Բայց
անդուստ և այլք դարձեալ զրոյց տային,
եթէ բանակ զօրուն Պաննոնեան և Դալ-
մատեան և Միւսեան՝ 'ի միասին ընդ զօրա-
վարացն ինքնակալ կարդացին զՈթոնէն։
Եւ անդէն նամականի ևս գայր առ նա
մարդասիրութեամբ լի 'ի Մուկիանոսէ և
'ի Վեսպասիանոսէ. առաջինն՝ բազմա-
ձեռն զօրու տիրացեալ էր յԱսորիս, և
երկրորդն՝ 'ի Հրէաստան։

Յայսմանէ ապա մեծապէս խրախու-
սեալ Ոթոնէի, առեալ գրէր առ Վիտե-
ղիոս, յորդորէր զնա հանդարտել կալ
իբրև այր զօրական, և խոստանայր ևս նմա
'ի պարգև արծաթ բազում և քաղաք մի,
և այնպէս յանդորրու և անզբօս ուրախու-
թեամբ վարել կեանս։ Իսկ անդուստ
Վիտեղիոս պատասխանի առնէր, հեգնէր
զնա մեղմով զառաջինն, այլ ապա զկնի
գրգռեալ երկոքին միանգամայն՝ առեալ
գրէին այր ընկերին բազում հայհոյու-
թիւնս և բանս զազիրս. ո՛չ սուտ ինչ, սա-
կայն և անմիտս և խեղկատակս, միմեանց
յերեսս հարեալ զամօթալի զկիրսն՝ յորոց
և տիրացեալ իսկ էին նոքա։ Քանզի և
գժուարին արդեօք ասել, ո՞ զք 'ի նոցա-
նէն քան զընկերն նուազեալ էր 'ի պագ-
շոտութեան և 'ի գրգանան, դարձեալ և

յանհմտութեան մարտից, և յաղքատութեան՝ յորում կային յառաջ ժամանակաւ, և 'ի ծանրութեան պարտուցն։

Բայց յայնժամ համբաւ հարեալ յաղագս երևութանալոյ բազմաց նշանաց և խօլականաց, երկբանութիւն էր յաղագս այլոցն, և ոչինչ գիտէին զհեղինակ համբաւոյն. բայց յաղագս Յաղթութեան Արձանին՝ որ 'ի վերայ կառաց 'ի Կապիտոլիոնի, այր այր իւրաքանչիւր ասէս՝ զի 'ի բաց զերասանական ելեալ 'ի ձեռացն՝ իբրև անձեռնհաս այնուհետև պինդ ունել զնոսա։ Դարձեալ առ այս՝ և որ 'ի Միլագետ կղզւոջն անդրին Գայիոսի Կեսարու տեսաւ շրջեալ յարևմտից յարևելս, և գետնաշարժ չգոյր և ոչինչ, և ոչ հողմն ինչ. զոր և ասեն պատահեալ 'ի նոյն աւուրսն՝ յորս Վեսպասիանոս յայտնապէս տիրացաւ 'ի վերայ իրացն։ Իսկ և որ ինչ դէպք 'ի Տիբերիս, բազումք առ ձախողակս կալան զայն։ Քանզի Թէպէտ և էր իսկ ժամանակն զայրանալոյ և դիզանալոյ գետոցն, սակայն և երբէք յառաջ ժամանակաւ յայնչափ բարձրութիւն չամբարձաւ Տիբերիս, և երբէք այնչափ աւերած և քանդումն չգործեաց նա, ելեալ զեղեալ զափամէքն և ողողեալ վայր բազում 'ի քաղաքէն, և առաւել 'ի տեղւոջն վաճառուց ցորենոյ, ուստի և աւուրս բազում սովեցաւ քաղաքն։

Իսկ յետ այսորիկ լուր հասեալ՝ եթէ Կեկինաս և Վալէս զօրագլուխք Վիտե-

զիոսի հասեալ կալան զԱլպեանսն, յայն-
ժամ Դոլաբելլաս այր պատրիկ՝ կասկա-
ծելի գոտաւ 'ի Հռոմ առ վարձկանսն,
իբրու որ 'ի նոր ինչ մտաբերեսցէ։ Ուս-
տի և Ոթոնն առ ահին նորա կամ թէ այ-
լոյ ուրուք՝ առեալ արձակէր զնա 'ի քա-
ղաքն Ակիւնիոն, և քաջալերս ևս 'ի ներքս
մատուցանէր նմա։

Եւ յետ այնորիկ ինքնին Ոթոնն ըն-
տրեալ անձին նիզակակիցս յարշաւանին
յաւագաց անտի քաղաքին, կարդէր ընդ
նոսա և զԼեւկիոս զեղբայր Վիտելիոսին.
այլ զպատիւ նորա ո՛չ յաւելոյր և ոչ դար-
ձեալ նուազեցուցանէր։ Մեծապէս խնամ
տարաւ նա և մօրն և կնոջն Վիտելիոսի,
զի անկասկածք լինիցին ամենևին. և կար-
դեաց եդ 'ի պահպանութիւն Հռոմայ զՓլա-
բիոս Սաբինոս զեղբայր Վեսպասիանոսի.
կամ շուք ինչ եղեալ Ներոնի (քանզի և
ինքնին 'ի Ներոնէ յայն աւագութի ամբար-
ձեալ էր Սաբինոս, և ապա Գալբաս 'ի
բաց հանեալ զայն 'ի նմանէ), կամ թէ
ցոյցս 'ի ներքս բերեալ մտերմութեան իւ-
րոյ և հաւատոցն առ Վեսպասիանոս՝ ա-
ւագութեամբն Սաբինոսի։

Ապրդ խաղաց Ոթոնն և զտեղի կալաւ
'ի Բրիքսիղոն քաղաք Իտալիոյ մօտ Յե-
րիդանոն, և առեալ արձակէր զօրագլուխս
'ի բանակ անդր զՄարիոս Կելսոս և զՍվե-
տոնիոս Պաւլինոս և զԳալղոս և զՍպու-
ռինաս՝ զարս երևելիս. սակայն և 'ի գործն
վրիպեալ էին նոքա յառաջնորդութենէն՝

'ի պատճառս անսասանութեան և ստամ-
բակութեան զօրականին. զի յանձն չառ-
նուին հնազանդել այլոց, իբրու որ 'ի նո-
ցա ձեռն իշխանութիւն 'ի վերայ նոցա ա-
ռեալ իցէ ինքնակալն։

Բայց և ոչ թշնամեացն իրք 'ի գեղեցիկ
կարգի կային և հնազանդեալ զօրավա-
րացն. նա՛ և անդանօր 'ի նոյն պատճառաց
էր տեսանել յանդգնութիւն և խեռու-
թիւն։ Սակայն և այնպէս զօրականք Վի-
տելիոսի քաջափորձք 'ի մարտ և սովո-
րեալք 'ի քիրան՝ ոչինչ խուսափեալ տե-
ղի տային։ Իսկ անդուստ Ոթոնին մեղ-
կեալք 'ի պարապորդ և յանդորր կենաց,
իբրու որք շատ ժամանակ 'ի թատերս ան-
ցուցեալ էին և յաշխարհախումբ ուրնս և
'ի խորանս տեսարանաց, և ստահակեալք և
ամբարտաւանեալք խոյս երևէին տալ 'ի
պաշտամանց զինուորութեանն, ո՛չ իբրև
անբաւականք ոմանք՝ քան թէ իբրև վե-
հագոյն քան զաշխատութիւն քրտանցն
այնոցիկ. որպէս զի և 'ի խնդրել ինչ Սպու-
րինեայ բուռն առնել նոցա, վայրիկ մի
ևս անկեալ 'ի վերայ 'ի մահ տարածա-
նէին զայրն։ Ապա թշնամանս և յիշոցս
ձգեալ 'ի նա՝ մասնատու կարգային զնա և
աղաքտիչ խանգարիչ գեղեցիկ բախտին և
իրացն ինքնակալին. անդ և կէսք գինեհա-
բեալք, գնացեալք գիշերի 'ի վրան նորա՝
թոշակ խնդրէին ճանապարհի՝ իբրու 'ի
հարկէ երթալ նոցա առ Ոթոնն և ամբաս-
տան կալ զնմանէ։

Սակայն և նախատինք՝ զոր յայնժամ խեռքդ այդոքիկ առին 'ի Պլակենտիա 'ի Թշնամեաց անտի, շահ օգտի իրացն լինէր և Սպուրինեայ գլխովին։ Քանզի հորդան ընդդէմ պարապացն տուեալ զօրականին Վիտեղեայ, սկսան խաղ առնել զՈԹՈՆԻՆ՝ որ 'ի վերայ պսակացն կային։ Թատերականս ոմանս կարդային զնոսա և Պիւռեան պարանցիկս [2], և 'ի զնին Պիւթեան և Ողիմպիական խաղուցն կիրթս արդարև, սակայն 'ի մարտ և 'ի զինուորութիւն անփորձք ամենևին և անկիրթք, համբուն գոռոզք և փքացեալք՝ զի հատին կորեցին զգլուխս զանզէն ծերունւոյն (և ասէին զԳալբաս)։ և երբէք ինքեանք չէն նահատակեալք 'ի բացարձակ դաշտի 'ի մարտ և 'ի կռիւ ընդ մարդոյ։ Ապա նոքա անդուստ այնչափ ինն զայրացեալք վառեցան 'ի նախատանաց անտի, զի և 'ի գուշս առաջի անկեալք Սպուրինեայ, աղաչէին մաղթէին 'ի գործ նահատակել զնոսա, և հրամանատար 'ի վերայ կալ նոցա։ վկայութիւն դնէին երբէք 'ի վտանգաց թիկունս չդարձուցանել և 'ի վրոաց։

Իբրև հրոսակ սաստիկ պատուարամարտ եռուն թշնամիք և մոտ շարժեցին զբազմութիւն մանգլիոնից, անդուստ յաղթական եղեալ զօրականին Սպուրինեայ, և վանեալ հարեալ տապաստ արկին զբազումս 'ի թշնամեացն և պահեցին ողջ զքաղաքն զայն զփառաւոր և զմարդաշատ՝ ոչ ինչ պակասքան զքաղաքս զայլ Իտալացւոց։

Բայց և զօրավարք Ոթոնեի համբոյրք էին քան զՎիտելիոսին և առաւել մարդասէրք առ քաղաքս և առ այր իւրաքանչիւր։ Քանզի Կեկինաս չէր ինչ բարեհամբոյր ոչ 'ի ձայն բարբառոյն և ոչ 'ի հանդէս կերպարանին. այլ էր նա դժոխրմբեր այր և դժուարընդեալ, յաղթամարմին, հանդերձաւորեալ անդրավարտեօք և թեղանեօք ըստ օրինակի Գալատացւոցն, և այնպէս կայր խօսէր նա ընդ նշանակիրս և ընդ զօրապետս Հռոմայեցւոց, և զկին նորա ձիաւոր շքեղ զարգարեալ՝ ածէին զկնի այրընտիր գունդ հեծելոց։ Այլ և Փաբիոս Վաղէս՝ երկրորդ զօրավար, որչափ և միանգամ աւար կուտէր 'ի Թշնամեացն և որչափ ինչ խորէր գողանայր 'ի նիզակակցացն, և առնոյր ընդունէր պարգևս և հարկս առ 'ի նոցանէ, երբէք չասէր շատ 'ի լրումն ընչաքաղցութեանն։ Եւ թուի թէն՝ վասն այնորիկ յամրաքայլ բերել նմա 'ի չու անդր, և յետամնաց լինել յառաջնու

քաղաք բազմահարուստ և մեծ. և անդ Աննիոս Գաղղոս՝ արձակեալ նախ 'ի Պլակենտիա 'ի Թիկունս Սպուրինեայ, իբրև լուր էառ 'ի Ճանապարհին վասն յաղթութեան Պլակենտացւոց և վասն վտանգին Կրեմոնացւոց, խաղաց յայն կողմն և եկեալ բանակեցաւ մօտ Թշնամեացն. և այնուհետև այր այր ձեռն տայր զօրավարին։ Արդ յայնժամ Կեկինաս 'ի դարանի նստուցեալ 'ի վայրս Թաւս և անտառախիտս զբազմութիւն զինուորացն, և պատուէր տուեալ այրուձիոյն խաղալ յառաջ, իսկ 'ի դիմի հարկանել նոցա Թշնամեացն՝ տակաւ տեղի տալ և վերջոտնել և փախուստ ցուցանել, մինչև ածել բերել զնոսա 'ի դարանն. բայց զայս ամենայն 'ի դասալիք զօրականէ անտի Կեկինեայ եկին զդացուցին Կելսոսի։ Ոյր աղագաւ և նա ինքնին խաղացեալ ընդդէմ այրուձիոյն այնորիկ հանդերձ քաջամարտիկ հեծելովք, և անձնապահ ևս եղեալ 'ի վանել զնոսա, և 'ի ներքս փակեալ զդարանամուտսն և հարեալ վանեալ, ձայն տայր կոչէր զհետևակազօրն 'ի բանակաց անտի. և Թէ արդեօք սոցա անդր 'ի ժամու հասեալ էր, և ո՛չ զմի ոք 'ի Թշնամեացն ապրեցուցեալ՝ առհասարակ տապաստ արկանէին զզօրն Կեկինեայ, զհետոց կալեալք զայրուձիոյն։

Եւ քանզի յայնժամ Պաւղինոս յամրաքայլ դանդաղեցաւ 'ի Թիկունս նոցա, բամբասեցաւ՝ իբրև ոչինչ առաքինացեալ

ըստ համբաւոյ անձինն, և այն՝ 'ի պատ-
ճառս տարապայման զգուշութեանն։ Իսկ
բազումք 'ի զօրականէն՝ իբրև մատնիչ ամ-
բաստանեցին զայրն, և գրգռէին ևս զՈթոն
ընդդէմ առնն. պանծային յանձինս՝ ինք-
նին նոցա տարեալք զյաղթութիւնն, այլ
ոչ ողջիկ՝ 'ի վատութեան պատճառս ի-
րեանց զօրավարացն։ Այլ Ոթոն ոչ այն-
չափ հաւատայր նոցա, որչափ կեղծաւո-
րեցաւ մի երևել անհաւատ։ Եւ ապա ա-
ռեալ արձակէր 'ի բանակ անդր զՏիտիա-
նոս զեղբայրն և զՊրոկղոս զեպարքոս, և
ունէր Պրոկղոս ինքնին ողջոյն զգործ զօ-
րավարութեանն, իսկ Տիտիանոս զշուք
կերպարանին։ Իսկ Կելսոս և Պաւլինոս՝
ունէին պիտակ անուն զնորհրդականաց և
զբարեկամաց, այլ իշխանութիւն և տէրու-
թիւն և ոչինչ 'ի գործս։

Բայց յայնժամ աղմուկք յուզեցան և
առ թշնամին, մանաւանդ առ զօրականն
Վաղեսի, որ և գոյժ զչարուածոյն ա-
ռեալք որ 'ի դարանն, 'ի խոր խոցեցան
զի ոչ ժամանեցին յայնժամ ձեռն տալ
այնչափ քաջ որերոյն՝ որ տապաստ ան-
կան։ Ապա գրգռեալք և 'ի վերայ յար-
ձակեալք Վաղեսի, նա հազիւ ուրեմն ա-
մոք բանիւք և յողոք անկեալ հանդար-
տեր զնոսա, և ժողովեալ զբանակն՝ խա-
ղաց խմբեցաւ ընդ Կեկինեայ։

Իսկ յետ այնորիկ Ոթոն եկեալ յիւր
բանակն 'ի Բեդրիակոն (և է Բեդրիակոն
աւան մօտ 'ի Կրեմոնա), 'ի խորհուրդ մտա-

նէր վասն մարտի պատերազմին։ Յայնժամ Պրոկղոս և Տիտիանոս խորհուրդ տային՝ 'ի յօժարամտութենէ անտի զօրականին և 'ի նորոգ յաղթութենէն՝ մարտ արագ յարդարել և մի զկայ առնուլ դանդաղել և զաշխոյժս զօրականին վատել, և մի կալ մնալ գալատեանն Վիտեղեայ 'ի Գաղատիոյ։ Այլ Պաւղինոս ասէր, եթէ կազմ աւադիկ վառեալ կան թշնամիք յամենայնի 'ի մարտ պատերազմի և ինչ ոչ պակասէ նոցա. իսկ Ոթոնն աւադիկ ակնկալեալ մնայ 'ի Միւսիոյ և 'ի Պաննոնիոյ գալըստեան զօրու՝ ոչինչ պակաս քան զոր 'ի ձեռս կայ. եթէ արդեօք կամք իցեն նմա ուշ ունել դէպ ժամանակին, և մի զիւրն կշռելընդ թշնամեացն. քանզի այդ զօրականք զարդիս խրախուսեալք և արիք՝ թէպէտ և սակաւաթիւք, արդեօք ոչինչ վերջասցին 'ի քաջալերութենէն՝ 'ի ստուարանալ իւրեանց բազմաձեռն գնդաւ, նա և հզօրագոյնս կռուեսցին. առ այս դարձեալ՝ դէգերեն դոքա յանկարօտ լինութեան ամենայն իրացն. իսկ անդուստ կեկինեանք տակաւ տակաւ ստուայտեսցին 'ի կարօտութեան կարևորացն. քանզի և են իսկ նոքա յերկրին թշնամեաց։ Զայս ասաց Պաւղինոս, և անդէն Մարկոս Կելսոս միաձայնեցաւ ընդ նմա։ Իսկ Աննիոս Գաղղոս չէր անդ ընդ նոսա, քանզի անկեալ յերիվարէն՝ դարման դտանէր. ապա գրեալ առ նա Ոթոնն, նա խորհուրդ տայր նմա մի փութալ ձեպել, այլ

ապասել զօրուն 'ի Միւսիոյ՝ որ յուղի անկեալ գայր։

Յայսր ամենայնի վերայ ոչինչ հաւանեալ Ոթովնի, անսաց բանիցն՝ որ զմարտն ճեպէին։ Շատ այլ ևս պատճառս բանին 'ի ներքս բերեն բաղումք, այլ յայտնի՝ զի զօրականքն անուանեալք խումբ տիգաւոր Թիկնապահաց, անդանօր 'ի ժամուն յաւէտ զփորձ առեալք զբուն զինուորութեանն, և սփոփութեանց ըղձակաթք և անդորրական կենաց և տօնախմբութեց իւրեանց 'ի Հռովմ, անսանձելիք էին 'ի ճեպն իւրեանց 'ի մարտ պատերազմին, իբրու որք արագ արագ յառաջին յարձակմանն վանեալ ցիրուցան զԹշնամին կացուցցեն։ Բայց Թուի և ոչ ինքնին Ոթովնի քաջալերել յանձն վասն անյայտութեան իրացն, առ այս և ոչ 'ի պատճառս դրդութեանն և անկրթութեանն՝ բաւական լինել 'ի խորհուրդս կարևորս դժնդակաց ժամուն այնորիկ. այլ նկուն 'ի հոգոցն եղեալ՝ ճեպել հոսել զերան աչօք փակելովք 'ի ձեռս բախտին իբրու 'ի վախից ոմանց գահավէժ առնելով. և պատմէ մեզ զայս Սեկունդոս հռետոր՝ ատենադպիր Ոթովնի։

Իսկ կէսք ասեն՝ եԹէ և բաղում անդամ ըղձացան երկաքանչիւր ևս բանակք միաբանել ընդ միմեանս, և ընտրել ևս միաբան հաւանութեամբ 'ի զօրավարաց անտի զայր լաւ և առաքինի, ապա Թէ ոչ՝ առհասարակ 'ի Սինկղիտոս անդր ապաստան զբանն առնել և ակն ունել առ 'ի

նմանէ ընարութեան ինքնակալի։ Եւ արդեօք չէ՞ ինչ տարադէպ կարծել՝ եթէ 'ի մերժիլ անդ երկոցուն եւ միանգամայն ինքնակալ անուանելոցն, խորհուրդ այս 'ի միտս անկաւ զօրականին՝ որ միանգամ հայրենասէրքն էին և փորձք և մտացիք. իբրու եթէ դժոխըմբերելի կիրք իցեն, եթէ զնոյն աղէտս՝ զոր անդ ուրեմն 'ի պատճառս Մարիոսի և Սիւղղայի, և ապա Կեսարու և Պոմպէի, գրգռեցին քաղաքացիք ընդդէմ միմեանց և զիրջ և ապաշաւ եղեն, զնոյն դարձեալ միւսանգամ կրեսցեն նոքա՝ ինքնակալութիւն 'ի ձեռս տալով կամ Վիտեղեայ՝ 'ի յագուրդ որկորատութեանն և գինեմանութեն. և կամ Ոթոնի՝ 'ի լրումն գրգանացն և անժուժկալութեանն։ Եւ կարծեն՝ եթէ քաջիկ խելամուտ այսոցիկ եղեալ Կելսոս՝ խընդրէր յապաղումն, ակն կալեալ անմարտ և անաշխատ վճարել իրացն։ Բայց և անդուստ Ոթոնն ճեպել զմարտն խնդրէր առ ահի երկիւղին։

Ապա դարձաւ մեկնեցաւ նա միւսանգամ 'ի Բրիքսիղոն, և մեծապէս սխալեցաւ և յայնժամ, ոչ միայն զի 'ի մարտկաց անտի նուազ արար նա զամօթ և զնախանձընդդէմ զկիրս զօրականին յանդիման իւր իսկ աչացն 'ի մերձ կալ նորա, այլ զի և ընդ իւր ածեալ յանձնապահապետս զընտիր ընտիր զայրուձիոյն և զհետեւակաց և զյոյժ յառաջամիտսն առ ինքն, իբրու եթէ զմարմին ինչ եհատ յուժոյն։

Բայց դէպ եղև յաւուրսն յայնոսիկ մարտ մղել և յՆերիգանոն։ Քանզի կեկի-նաս կամուրջ կապեաց անցանել ընդ այն, և զօրականք Ոթոնի ընդդէմ դարձեալ արգելուին։ Իսկ տեսեալ Ոթոնեանց վը-ճարել և ոչինչ, ջահ բորբոքեալ ծծմբա-խառն և ձիւթապատ արկին 'ի գործ անդր նոցա. ապա հողին շնչեալ և անկեալ յա-փանց անտի, արագ արագ վառեաց բոր-բոքեաց ընդդէմ նոցա զպատրաստու-թիւն առաղձիցն։ Եւ յայնժամ զառա-ջինն 'ի ծխոյն խուճապեալք, ապա և 'ի բորբոքեալ բոցոյն, անհնարին տագնապե-ցան և հոսեալք 'ի գետ անդր Թաւալգլոր շրջէին զնաւական, և անձնատուրք եղեալք առ Ոթոնեանսն՝ քրքիջ սաստիկ շարժե-ցին 'ի նոսա։ Բայց ապա Գերմանացիք 'ի վէգ եկեալ ընդ մենամարտիցն Ոթոնի 'ի կղզեակ մի գետոյն այնորիկ և յաղթեալք՝ ոչ սակաւս տապաստ արկին 'ի մենամար-տից անտի։ Յայնմանէ ապա 'ի արտմոու-թիւն վառեալ և զօրականին Ոթոնի որ 'ի Պետրիակոն և գրգռեալք 'ի խազմն, առեալ Պրոկղոս ածէր զնոսա արտաքս 'ի Պետրիակոնէ և բանակ հարկանէր հեռի առապարիսաք յիսուն՝ սակայն և այնչափ անհմուտս վարեցաւ նա և ծիծաղելի, որ-պէս զի՝ Թէպէտ և ժամանակ գարնայնոյն էր և շուրջանակի 'ի դաշտս շատ հոսէին աղբերք և շատ ևս գետք գնային անս-պառք, նա տուայտեալ պապէր յան-ջուր վայրի։

Իսկ յաւուրն երկրորդի պատրաստեալ խաղալ 'ի դիմի հարկանել Թշնամւոյն՝ որ հեռի կայր ոչինչ պակաս քան զհարիւր ասպարիսաց, Թոյլ չետ Պաւղինոս. խորհուրդ տայր ժամ առնուլ և մի պարտասել զանձինս, և մի այնպէս արագ յուղւոյ եկեալ 'ի կռիւ ընդ Թշնամւոյն կաքաւել՝ որ այնպէս հանդուցեալ վառեալ կազմ կայ, իսկ ինքեանք զերկայնութիւն հատանէին Ճանապարհի՝ աղխաղխեալ տարեալ ընդ չուոյն զդրասատն և զալվն։

Մինչդեռ վասն այսորիկ պայքարէին զօրապետք, գայր հասանէր հեծեալ՝ որոց անուն կարդան Նոմադացիք, արձակեալ յՈԹոնէ հանդերձ նամակաւ. հրաման բերէր՝ մի ևս ժամավաճառ կալ մնալ, այլ արագ արագ խաղալ 'ի դիմի հարկանել Թշնամեաց։ Ապա նոքա յարուցեալ վաղվաղակի 'ի չու անկանէին. իսկ անդուստ կէ կինաս լուր առեալ զչուոյն, սրտաբեկեալ 'ի շտապ տագնապի Թողոյր զդրծն և զգետն, և տեղի տայր 'ի բանակն։ Բայց անդանօր բաղումք 'ի զօրականէն յառաջագոյն հասեալք և նշան ևս առեալք 'ի Վաղեսէ, մինչդեռ գնդաց կարգ տային և դասաւորութիւն, արձակեցին յառաջոյ զքաջս այրուձիոյն։

Իսկ 'ի ժամուն 'ի մէջ ՈԹոնեանց որ 'ի Ճակատուն կարգեալ կային՝ ձայն հնչեցաւ 'ի պատճառէ իմեքէ և համբաւ, իբրու եթէ զօրապետաց Վիտիլիոսի անցանել 'ի կողմն նոցա։ Ուստի և իբրև մերձ

եղեն, սիրով ողջոյն ետուն նոցա և նիզա-
կակիցս կարդացին զնոսա. իսկ նոքա ող-
ջունին ոչինչ պատասխանի ետուն սիրով,
քան թէ սրտմտութեամբ բարկութեամբ
և խառնամբոխ աղաղակաւ. ուստի և որք
զայն օրինակ ողջունեցին՝ ինքեանք սը-
տաբեկեալք, իսկ յաչս այլոց իբրև մատ-
նիչք կարծեցան: Եւ ապա այս առաջին
ամբոխեաց խռովեաց զնոսա 'ի կռուին
ընդ Թշնամեաց. իսկ յետ այնորիկ՝ և ոչ
ինչ այլ ամենևին գեղեցիկ կարգաւ կա-
տարեցաւ. քանզի խռով մեծապէս հար-
կանէին մարտկացն գրասդք աղխաբարձք՝
Թափառեալք յայսկոյս յայնկոյս ընդ
մէջ նոցա. առ այս՝ և վասն վայրացն որոշ
շեալք քակէին 'ի միմեանց բազումք. զի
էին 'ի վայրսն բազում յոյժ խրամք և ան-
ձաւք, յորոց զանգիտեալ զօրականին և
շրջանս առեալք, 'ի հարկէ այնուհետև
խառն 'ի խուռն և ցիրուցան մարտ եղեալ
կռուէին ընդ ախոյենից: Անդանօր միայն
Ղէգէոնք երկու (քանզի այսպէս կոչէն
Հռոմայեցիք զդունդսն), մին Վիտեղեայ՝
անուանեալ Յափշտակիչ, միւսն Ոթոնիի՝
անուանեալ Զօրավիգն, ձգեալք Ճապա-
ղեալք 'ի հարթայատակ և յաղատ դիւրի,
և մարտ յօրինեալ կարգաւոր՝ կռուեցան
հարուստ ժամն ըստ օրինի փաղանգացն:

Եւ էին զօրականք Ոթոնիի կորովիք և
հզօրք, այլ այն ինչ առաջին նուագ զփորձ
առեալք զկռուոյ և զպատերազմի: Իսկ
Վիտեղիոսիանն՝ քաջափորձք 'ի բազում

պատերազմունս, սակայն և ծերք և վաստեալք։ Ապա Ոթոնեանք 'ի վերայ խոյացեալք բռնութեամբ Վիսեղեանցն՝ նը-հանջեալ վանէին. և առին բարձին 'ի նոցանէ զարծուին, տապաստ արկեալ առհասարակ զնահատակսն։ Յայնժամ Վիսեղեանք առ ամոթոյն և առ սրտմտութեան բարկութեան 'ի վերայ անկեալ Ոթոնեանց գիտապաստ առնէին զՈրփիդիոս զնուիրակ գնդին, և առին յափշտակեցին դրօշակս բազում։ Իսկ 'ի վերայ մենամարտիցն՝ որ քաջամարտիկք համբաւեալ էին և յոյժ արիականք 'ի գոռին, առեալ խաղացուցանէր Վարոս Ալփինոս զհատաղացիս. և են սոքա այրուձի ընտիր Գերմանիոյ, բնակաւորք կղզւոյն՝ զոր պատէ Հռենոս։ Անդ նուազունք 'ի մենամարտիցն 'ի դիմի հարան նոցա. իսկ շատք 'ի փախուստ խուճապեցան 'ի գետ անդր, և անկան 'ի ձեռս գնդին Թշնամեաց՝ որ մօտ ճակատեալ կային. և տապաստ անկան 'ի նոցանէն առհասարակ՝ Թէպէտ և քաջապէս կռուեալք։

Յայն մարտ պատերազմի մեծապէս հիքացան առաւել քան զամենեսեան Պրետորեան զօրականք, քանզի և ոչինչ զտեղի կալեալք 'ի կռուին՝ անդէն 'ի փախուստ դառնային ընդ մէջ իւրեանց նիզակակցացն՝ որ դեռևս ճակատեալ կային, և այնպէս ահիւ և խռովութեամբ լցին զնոսա։ Սակայն և այնպէս բազումք Ոթոնեանց անտի հարեալք զախոյեանս և

բուռն միջամուխք ձեղքեալ զԹշնամին, անցին անկան 'ի բանակ անդր։ Բայց յայն-ժամ ոչ Պրոկղոս և ոչ Պաւղինոս քա-ջալերեցան ինչ մտանել ընդ նոսա 'ի նեղքս, եղեալ խուսեցին այլուր առ ահին զօրա-կանին, որ զվնասն զզօրավարօքն արկանէին։

Իսկ Անդիոս Գալղոս առեալ ժողովէր 'ի քաղաքի՝ զորս միանգամ անդր խմբե-ցան 'ի մարտէ պատերազմին. կայր և սփո-փէր զնոսա և ասէր՝ եթէ գոհ զուգահա-ւասար հանդիպեցան իրք. և Թշնամիք ևս գլխովին 'ի կողմանս կողմանս 'ի պարտու-Թիւն մատնեցան։ Իսկ Մարիոս Կելսոս 'ի մի խմբեալ զիշխանաւորսն, ազգ առնէր նոցա՝ ուշ ունել հասարակաց փրկուԹե. և ասէր՝ եթէ յետ այնչափ աղէտից և սաստիկ հարուածոյ քաղաքացեացն՝ և ոչ ինքնին ՈԹոնն՝ եԹէ այր լաւ իցէ՝ խընդրեսցէ արդեօք փորձ այլ փորձել զբախ-տին. քանզի և Կատոն ինքնին և Սկիպիոն ոչ կամեցեալք տեղի տալ Կեսարու յաղ-Թականի յետ Փարսաղեան մարտին, բամբասեցան զի 'ի զուր 'ի մահ 'ի Լիբիա մատ-նեցին բազում և քաջ որեար, Թէպէտ և 'ի վերայ ազատուԹե հայրենի աշխարհին մարտ եդեալ կռուէին։ Քանզի և բախտն ինքնին՝ որ հաւասար չափով վարի առ ա-մենեսեան, զմին զայն երբէք ոչ զանայ առաքինի մարդկանն, քաջախորհուրդ լի-նել 'ի ձախողակ կիրսն։

Յայսպիսեաց բանից ամբէր հաւանե-ցուցանէր նա զարան։ Եւ ապա նոքա փորձ

փորձեալ զմտաց խորհրդոյ զօրականին, իբ-
րև 'ի վերայ կացին՝ զի խաղաղութեան 'ի
խնդիր են նոքա, և խորհուրդ ևս տայր
Տիտիանոս առնուլ արձակել դեսպանս
խօսել 'ի հաշտութիւն, հաճոյ թուեցաւ
Կելսոսի և Գալղոսի՝ ինքնին նոցա գնալ
խօսել ընդ Կեկինասայ և ընդ Վաղէսի։
Իբրև յուղի անկան՝ պատահեցան նոքա
հարիւրապետաց, որ ասէին՝ եթէ բանակ
թշնամեացն դէմ եդեալ խաղայ 'ի Բե-
տրիակոն, և զինքեանս առեալ արձակե-
ցին զօրավարքն խօսել 'ի հաշտութիւն։
Լուեալ Կելսոսի և գովեալ զբանն, աղա-
չէր զնոսա գառնալ յետս և 'ի միասին
ընդ նմա ընդառաջել Կեկինեայ։ Իբրև
մօտ եղեն, անդ մեծապէս վտանգեր Կել-
սոս։ Քանզի այրուձին՝ այն որ յառաջա-
գոյն 'ի պարտութիւն մատնեցաւ 'ի գա-
բանսն, յառաջոյ 'ի չու անկեալ էր յայն-
ժամ. անդէն իբրև զԿելսոս յակն արկին,
աղաղակ բարձեալ՝ յարձակեալ գային
ընդդէմ առնն. իսկ հարիւրապետք յան-
գիման արձանացեալք հովանի կային, և
ձայն ևս բարձեալ այլոց գնդապետաց մի
մեղանչել առն, յայնժամ Կեկինաս լու-
եալ զայն և յառաջ անցեալ՝ անդէն հան-
դարտէր զաղմուկ այրուձիոյն. և հիւրասի-
րութեամբ ողջոյն տուեալ Կելսոսի՝ յու-
ղի անկանէր ընդ նմա 'ի Բեատրիակոն։

Բայց յայնժամ Տիտիանոս ստրջացեալ
ընդ արձակել դեսպանացն, ածեալ կար-
գեաց 'ի վերայ պարսպացն զքաջամար-

տիկս զօրականին, և ձայն ևս տայր այլոց
ձեռն տալ օգնականութեան։ Իբրև կե-
կինաս մերձ եղև անդր յերիվար աշտանա-
կեալ, և ձգեալ կարկառեաց առ նոսա
զալջ իւր, յայնժամ ընդդէմ դարձաւ և
ոչ ոք 'ի նոցանէն. կէսք 'ի պարսպաց ան-
տի ողջոյն տային զօրականին, որ գայր, և
կէսք՝ բացեալք զդրունսն և ելեալք ար-
տաքս՝ խառնէին ընդ նոսա։ Եւ այնպէս
անխռով և անվնաս, առհասարակ հիւ-
բամեծարութեամբ և սիրով խնդացեալք
առ միմեանս, ուխտ էդեալ ընդ Վիտե-
լեայ՝ նուաճեցան ընդ ձեռամբ նորա։ Եւ
զայս օրինակ ասպա պատմեն զմարտ պատե-
րազմին այնորիկ բազմագոյնք 'ի մարդկա-
նէն՝ որ անդ մերձ գտան. սակայն և ինք-
նին նոքա խոստովան լինին՝ զի ոչ համօրէն
մանրամասն 'ի վերայ կացին ամենայնին, 'ի
պատճառս ամբոխից շփոթիցն և անհար-
թութեան վայրացն։ Իսկ ես ինքնին յետ
ժամանակաց գնացեալ 'ի նոյն դաշտ, ան-
դանօր Մեսարիոս Փլորոս՝ այր հիւպա-
տեան եցոյց ինձ զայր ծերունի 'ի պատա-
նեաց անտի՝ որ յայնժամ յոչ կամաց և
բռնի ստիպեցան զինուորիլ ընդ Ոթով-
նի 3։ Եւ պատմէր ինձ նոյն այր, եթէ յետ
վճարելոյ մարտին դարձ արարեալ 'ի նոյն
վայր, տեսանէր զչեղջակոյտ դիականցն
այնչափ. զի և վերին երես շեղջակուտին
հաւասարէր հանդիպակաց մարդկան։ Եւ
ասէր՝ եթէ խնդրեալ զպատճառ բանին՝
ոչ ինքնին գտանէր, և ոչ յումեքէ ինչ

լսէր։ Քանզի և 'ի մարտս ընտանեաց 'ի խորտակել թշնամեացն՝ արդեօք բազմակոյտ յոյժ իցէն գիակունք անկելոցն. քանզի 'ի գերութիւն վարեն և ոչ զոք. զի և չէ մարթ 'ի պէտս առնուլ զձերբակալեալսն. իսկ պատճառ այնպէս միահամուռ շեղջակուտին նոցա՝ չէ ինչ արդեօք դիւրիմաց։

Արդ յայնժամ զառաջինն զրոյց անյայտ (որպէս բնաւորեցաւ լինել) հասանէր առ Ոթոն վասն մեծի կոտորածին. բայց ապա ստուգեալ ճշգրտեր և 'ի վերաւորաց անտի՝ որ դարձան եկին 'ի պատերազմէն։ Եւ զարմացի ոք ոչ՝ եթէ 'ի ժամուն ոչինչ թողացուցեալ նմա բարեկամացն յուսակտուր անկանել բեկանել, նա՛ և քաջալերը իրախոյս կարդային նմա։ Բայց որ յայնժամ հանդէս մտերմութեանն զօրականին՝ 'ի վեր է քան զամենայն միտս. քանզի և տեղի ետ վերջոտնեցաւ և ոչ ոք, անցանէր և ոչ ոք 'ի կողմն յաղթակացացն. և զանձին փրկութիւն խնդրեաց և ոչ ոք, իբրև վճարեալ իսկ էր այնուհետև վասն զօրավարին Իւրեանց. այլ անդ միահամուռ նոքա գնացեալք առ դուրս նորա, ինքնակալ կարդային զնա. իսկ ելեալ նորա արտաքս՝ անկանէին առաջի, ունէին զձեռաց նորա ձայն բարձեալ և աղերս արկեալ. յողոք անկեալ, արտասուս իջուցեալ պաղատէին մի լքանել թողուլ զնոսա 'ի ձեռս թշնամեացն, այլ զոգի և զմարմին նոցա առհասարակ 'ի գործ

իւր վարել՝ մինչև շունչն նոցա առ նոսա
ի՛ցէ։ Միաբան ամենեքին զնոյն աղերս ար-
կանէին. իսկ յայնժամ և մի ումն 'ի զօրա-
կանէն յաննշանից անտի՝ սուր ևս 'ի վեր
առեալ, գոչէր այսպէս. "Գիտեա՛ ինքնին
ո՞վ կեսար, զի այսպէս առհասարակ մնա,
գիւրք յառաջամիտք են ամենեքին 'ի վե-
րայ քո"։ Զայս ասաց և անդէն անձին
առնէր։

Սակայն և ո՛չ մի ինչ յայսպիսեաց աս-
տի ոչ ամոքեաց զՈԹՈՆԷ. որ և շուրջանա-
կի զաչսն դարձուցեալ պարզերես և ան-
զարհուրելի, ասէր այսպէս. "Ես ինքնին
ո՞վ նիզակակից իմ, երանելի ևս համա-
րիմ զայս օր՝ քան զօրն յորում ինքնակալ
զիս գուք կարգեցէք. իբրև տեսանեմ ըզ-
ձեզ այսպիսիս ոմանս, և զիս դարձեալ՝
արժանացեալ այդչափ սիրոյդ։ Այլ մի
ինձ զլաջիք գուք զմեծն. գերեցիկս մահ
առնուլ 'ի վերայ այսչափ և այսպիսի քա-
ղաքացեաց։ Եթէ երբէք արժանի գասայ
Հռոմայեցւոց ինքնակալութեանն, ար-
ժան է ինձ գնել զանձն 'ի վերայ հայրե-
նեաց։ Գիտեմ քաջ, զի ո՛չ յաղթութիւն
հաստատուն և ո՛չ հզօր տարան 'ի գլուխս
թշնամիք։ Լուր աւադիկ հասեալ կայ՝ ե-
թէ զօր 'ի Միւսեայ 'ի չու անկեալ՝ չէ՞
ինչ բացական գնացս բազմ՞ աւուրց Ճանա-
պարհաց. 'ի մեր սակս 'ի Հանդրին իջեալ
կան 'ի ծով Ասիա և Ասորիք և Եգիպտոս.
մեր իսկ են զօրականք որ անդ մարտ է-
դեալ կռուին 'ի Հրէաստան. մեր է և

Սինկղիտոսն ինքնին գլխովին, և 'ի մեր ձեռս կան որդիք Թշնամեաց և կանայք։ Այլ մարտ պատերազմին մերոյ՝ ոչ 'ի զօրավիգն է Իտալիոյ ընդդէմ Անիբաղայ կամ ընդդէմ Պիւռռոսի կամ ընդդէմ Կիմբրացւոց, այլ ընդդէմ արձանացեալ կայ Հռոմայեցւոց գլխովին. ուստի և երկոքին միանգամայն և յաղթականք և պարտեալք՝ վնշտս հասուցանեմք հայրենի աշխարհին. քանզի ատտ շահ օգտի յաղթականին, զեան մեծապէս է նմա։ Եւ անշուշտ՝ է՛ ինձ զարդիս փառաւոր ևս մեռանել՝ քան թագաւորել. քանզի և դիտեմ իսկ ոչ՝ օգուտ այնչափ 'ի նեղքս բերել Հռոմայեցւոց յաղթութեամբ, որչափ դնելով զանձն իմ վասն խաղաղութեան նոցա և միաբանութեանն. և զի՝ մի դարձեալ օր այսպիսի տեսցէ երբէք Իտալիա,,։

Յայսպիսեաց ատտի խօսեալ Ոթոնին, և ընդդէմ ևս դարձեալ մարդկանն որ ըզդէմ կալան խորհրդոյն նորա և խրախոյս ևս կարդային նմա, հրաման տայր բարեկամացն և աւագանւոյն որ անդ, մեկնիլ 'ի բաց. և առեալ գրէր առ որս մերձն էին, գրել և նամականի առ քաղաքս քաղաքս՝ զի յուղարկեսցեն զնոսա շքով և յանդորրու։ Ապա կոչեալ առաջի իւր զԿոկկէյոս զքեռորդին՝ տակաւին պատանեակ, յորդորէր քաջալերէր զնա՝ մի ինչ զանգիտել 'ի Վիսեղիոսէ, զորոյ ինքն ամբողջ պահեաց զմայրն և զկին և զզաւակ, հոգ խնամոց տարեալ նոցա՝ իբրու

իւրոց ընտանեաց։ Ուստի և Թէպէտ կամէր՝ չէառ ինքն յորդէգիրս զքեռորդին, այլ յապաղեաց։ Եւ խելամուտ ևս առնէր Ոթովն զպատանեակն՝ զի յորդէգիրս չէառ զնա Կեսար, որպէս զի 'ի յաղթական լինել իւրում՝ իշխան լեցի նա թագկապել ընդ իւր։ Իսկ 'ի պարսիլ իւրում՝ օրհաս մահուն մի կանխեսցէ նորա։ Եւ յաւել ասել. "Իսկ որ վերջին՝ յուշ առնեմ քեզ ով որդեակ իմ, մի դու գլխովին 'ի մոռացօնս դարձուսցես, դարձեալ և մի կարի ինն յիշեսցես, եթէ զԿայսր կալար քեզ քեռի"։

Զայս իբրև ասաց, լսէր ապա յետ սակաւու աղմուկ և աղաղակ առ դուրսն։ Քանզի անդուստ զօրականք 'ի վերայ անկեալ աւագանուոյն՝ որ յուղի անկեալ էին, սպառնալիս 'ի վերայ կապէին սպանանել զնոսա, եթէ 'ի բաց գնացեալ այնպէս լքեալ թողցեն զինքնակալն։ Ապա Ոթովն զանգիտեալ վասն արանցն, անդրէն միւսանգամ 'ի դուրս ելեալ, և զինքն 'ի դէմս բերեալ յայնժամ զօրականին ոչ աղաչաւոր և հեզ և հանդարտ, այլ դաժանացեալ և սրտմտութեամբ լի, և դարձուցեալ զաչսն 'ի խռովայոյզ մարդիկն, այնպէս զնոսա 'ի բաց փարատէր կորակոր և զարհուրեալք առհասարակ։ Իսկ ընդ երեկս աւուրն ծարաւեալ Ոթովն՝ առնոյր սակաւ մի ջուր, և էին առ նմա սուսերք երկու, և այնպէս հարուստ ժամ հայէր զնոսէր զսայր երկաքանչիւր նոցա.

և տուեալ զմին, զմիւսն կալեալ ընդ ան-
թոմն՝ կոչեաց առ ինքն զծառայսն, և
առն առն 'ի նոցանէ առեալ մարգասիրա-
պէս բաշխէր արծաթ, ումեմն առաւել և
ումեմն նուազ՝ ոչինչ վասնեալով իբրու զո-
տարինն, այլ Ճշգրիտ չափով և կշռով ըստ
արժանեաց իւրաքանչիւր:

Ապա 'ի բաց գնոսա արձակեալ, և ինքն
զմնացուածդ գիշերոյն հանգչէր. զի և սե-
նեկապանք ինքնին լսէին խոր 'ի քուն
ննջել նմա: Իսկ ընդ արշալոյսն առաւօ-
տուն կոչեաց առ ինքն զաղատագրեալն,
յորոյ 'ի ձեռն յանդորր եհան զաւագա-
նին, և հրաման տայր նմա բերել զրոյց
վասն նոցա. իբրև լուաւ եթէ այնպէս նո-
քա կազմ յամենայն 'ի պէտս մեկնեցան
'ի բաց, ապա ասէր ցնա. "Արդ աւադիկ
գնա՛ դու և ցո՛յց զքեզ զօրականին, եթէ
չկամիցիս դու չարեաւ մահ առնուլ 'ի
ձեռաց նոցա՝ իբրու որ գործակից լեալ
քեզ 'ի մահուն իմում,,:

Իբրև էլ արտաքս այրն, յայնժամ Ո-
թոնելի եդեալ զսուրն շէշտ ուղիղ 'ի ներ-
քոյ լանջացն երկոքումբք ձեռօքն, այն-
պէս անկանէր 'ի վերայ նորա. և զգաց ցա-
ւոյն այնչափ ինչ, զի յոգւոց միանգամ
եհան, որ և արտաքոյ լսելի եղև: Անդուստ
ապա աշխար մեծապէս ամբարձեալ և գո-
ռիւն ծառայիցն նորա, անդէն և ողջոյն
բանակն և քաղաքն առհասարակ յողբ և
'ի կոծ պաշարեցաւ. անդուստ և զօրա-
կանք ընթացեալ վազէին ձայն բարձեալ

առ դուրս նորա և լային աշխարէին և դա-
տապարտ զանձինս առնէին, յոյժ յոգիս
հարեալք՝ զի ոչ պահ զգուշութեան կար-
գեցին ինքնակալին՝ արգելուլ կարձել ըզ-
մահ անձինն 'ի վերայ նոցա։ Իսկ յայն-
ժամ և ոչ մի ոք ամենևին տեղի տայր
խուսէր անձին հոգացեալ՝ յորժամ և
թշնամիք ինքնին առ դուրս կային. այլ
յարդարեալ կազմեալ զդիակնն, և պատ-
րաստեալ խարոյկ, առեալք այնպէս
յուղարկէին 'ի զէն 'ի զարդ վառեալք. և
խնդացեալք էին՝ որ միանգամ յայնժամ
նահատակեալ մտին ընդ դադաղաւն նորա
և բարձին։

Բայց և կէսք 'ի վերայ անկեալ մեռե-
լոյն՝ համբոյր տային վերին, և կէսք մերձ
եկեալք ունէին զձեռացն, և կէսք ևս 'ի
հեռաստանէ 'ի գուշս անկանէին երկր-
պագութեամբ։ Էին էին և որք յետ ջա-
հիցն արկանելոյ 'ի խարոյկ անդր, անձին
արարին. թէպէտ և յայտնի՝ երախտիս և
ոչ մի առեալ էր նոցա երբէք 'ի մեռե-
լոյն, և ոչ զանգիտէին ևս կրել ապա
դժնդակս ինչ 'ի յաղթականէն, այլ թուի
եթէ երբէք ոչ 'ի բռնաւորաց ոք և ոչ 'ի
թագաւորաց ոք այնչափ բուռն և սատիկ
ցանկացաւ իշխել, որպէս այն զօրականք
մեծապէս տենչացան իշխել յՈթոնէն և
հպատակ կալ նմա. քանզի և ոչ 'ի մա-
հուն նորա՝ 'ի տենչանաց անտի թողան
նոքա. իսկ յատելութեան իւրեանց յա-
ւերժացան նոքա անհաշտք ընդդէմ Վի-

տեղեայ։ Բայց և այլ ինչ իրք պատմեացին յիւրում ժամանակի։

Իսկ յայնժամ Թաղեաւ 'ի հող զնըշխարան Ոթոնին և շիրիմ կագնեաւ, ոչ մեծութիւն ինչ նորա և ոչ հոյակապ ինչ վերտառութիւն նախանձելի գործեաց զգերեզմանն։ Եւ ինքնին՝ յորժամ 'ի Բրիքսիաղոն էր՝ տեսի զնորա շիրիմ անպաճոյճ, և դամբանագիր 'ի վերայ նշանակեաւ միայն զայս ինչ "Մարկոսի Ոթոնի"։ Եւ մեռաւ նա ամաց երեսուն և եօթանց, թագաւորեաւ ամիսս երիս։ Իսկ որք 'ի գովութիւն զմահն առնուն ըզնորա, չեն ինչ խոնարհագոյնք և ոչ նուազունք քան զորս խոտեաւ այսպանեն ըզկեանս նորա։ Քանզի քաղաքավարեաւ 'ի կեանս ոչինչ համեստագոյնս քան զներոն, մեռաւ առաւել ազատօրէն 4։

Այլ յայնժամ զօրականք արտմտեաւ էին ընդ Պողլիոս, որ մի էր յեպարքոսացանտի. քանզի խնդրէր՝ երդումն իսկ և իսկ կռեալ նոցա Վիտելեայ։ Բայց նոցա լուեաւ՝ եթէ են իսկ անդ տակաւին յաւագանուոյ անտի, 'ի բաց զայլսն թողեաւ՝ չոքան զինուք 'ի տուն Վերգինիոսի Հռուփոսի. թախանձ արկեալ ժոէին և հրաւէր կարդային միւսանգամ առնուլ զանձամբ զինքնակալութիւնն, կամ թէ ինքնին դեսպանութեամբ երթալ բարեխօսվան նոցա։ Այլ նա անմտութիւն զբանն համարեաւ, առնուլ զառաջնորդութիւն զարանցն պարտեցելոց, որ յառաջն յան-

ձին չկալաւ զյաղթականացն, դարձեալ և ոչինչ քաջալերեալ գնալ դեսպանութիւն առ Գերմանացիսն՝ որ բազում ինչ իրս ընդդէմ իւրեանց կամացն բռնադատեցան առ 'ի նմանէ, ելեալ գաղտագնաց փախչէր ընդ այլ դրունսն։ Իրազեկ զօրականին եղեալ, կռէին զերդումն. և թողութիւն գտեալք՝ միաբանեցան ընդ կեկինեայ։

---

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

## Ի ԳԱԼԲԱՍ

1. Οπτίων. յն. Դէտ. լրտես. և Tesserarius. լտ. Նշանաւոր զօրականին։

2. Արդեօք և ինքնին դիւթն խաբուսիկ՝ չէր 'ի գիտողաց անտի դաւոյն կամ թէ դաւակից։

## ՅՈԹՈՎՆ

1. Իրաւամբք արդեօք տարակուսին գիտունք ընդ հարազատութեի Ոթոնիի արձանագրութեանն՝ Պլուտարքեայ լինել։ Քանզի և համառօտ ասել՝ չունի ինչ սա զՊլուտարքեայ, և ամենևին իսկ չունի։ Եւ տարակուսեսցի և ո՛չ ոք արդեօք 'ի քննող ընթերցանելեաց։ Ուստի և համարին զսա միոյ ուրուք յորդւոցն Պլուտարքոսին։

2. Այս է՝ Զինու հանդերձ կաքաւիչս. որպէս առաջին կաքաւեաց Պիւռռոս, յորմէ և առ յն. Πυῤῥίχιστής։

3. Եւ այս ևս Յիշատակարան Ծերունւոյ առն՝ 'ի դէպ գայ ժամանակաց որդւոց մեծին Պլուտարքեայ։ Առ այս՝ և 'ի ներքոյ գրեալ անհամութիւն խորհրդա-

ծուլթեանն 'ի վերայ Շէշլաւ-փէն, արդեաք 'ի ճահ չպատահեսցի Պլուտարքեան տառիցն։

4. Վասն նշաւակ և անազատական ազատուլթեան մահու՝ առ 'ի յուսահատ կրիցս ամենի անձնասպանուլթեան, տես բազում ուրեք 'ի վերոյ 'ի ծանօթուլթիւնս մեր ընդդէմ Պլուտարքեայ. և առաւել ևս յանձնասպանուլթիւնն Կատոնի կրսերոյ. 'ի ծան։

# ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՎԱՐՈՒՑՆ

## ՊԼՈՒՏԱՐՔԵԱՅ

---

Ամք
Տի

2437 Զրհեղեղն անուանեալ Դէ-կա-
ղիոնեան, դիպաւ առ Թագաւորու-
թեամբն Դեւկաղիոնի արքային Թես-
սալիոյ, 15 կամ 16 ամաք նախ քան
զելան որդւոցն Իսրայէլի յԵգիպտոսէ:

2547 Մինոս Ա. որդի Արամազդայ և
Եւրոպայ Թագաւորեաց 'ի Կրետէ:
Էր արքայ արդարակորով:

2698 Մինոս Բ. որդի Լիկաստոսի և
Թոռն առաջնոյն, պայազատեաց ըզ-
հայր իւր: Եկաց սա բռնաւոր:

## ԹԷՍԷՈՍ

2720 Աւրշաւանն Արգոնաւորդաց, յո-
րում ժամանակի եկաց Թէսէոս, մի
'ի նիզակակցացն Յասոնի:

2768 Առուծն Տրոյիոյ: Էր յայնժամ
Յեփթայէ դատաւոր Իսրայէլի:

Ամք
Տի

## ԼԻԿՈՒՐԳՈՍ

3045 Եկաց սա առ ժամանակաւք Եղի-
սէի մարգարէին :

## ՀՌՈՄՈՒԼՈՍ

3198 Շինէ զՀռոմ քաղաք :
3201 Յափշտակութիւն դստերացն Սա-
բինացւոց :
3235 Մահ Հռոմուլոսի :

## ՆՈՒՄԱՍ

3236 Ընտրութիւն Նումայի 'ի թա-
գաւոր :
3279 Մահ Նումայի :

## ՍՈՂՈՆ

3350 Զայսու ժամանակաւ ծաղկեցաւ
Սողոն օրէնադիր Աթենացւոց :
3354 Եպիմենիդէս իմաստասէր գայ Ա-
թէնա : Եօթն իմաստունք Յունաս-
տանի : Եսոպոս , և Անաքարսիս
Սկիւթացի :
3356 Սողոն իշխանանայ : Կրիւսոս ար-
քայ Լիւդացւոց :
3370 Պիւթագորաս անցանէ յԻտալիա :
3391 Կիւրոս թագաւորէ Պարսից :

Ամք
Յի

## ՎԱՂԵՐԻՈՍ ՊՈՊՂԻԿՈՂԱՍ

3442 Եկաց հիւպատոս, Պատերազմ Բրուտոսի ընդդէմ Տարկուինեանց։
3448 Մեռանի Պոպղիկողաս։
3459 Զայսու ժամանակաւ եկաց հրաշակաւոր պատերազմն Մարաթոնեան առ Միլտիադէսիւ, յորում գտան և Թէմիստոկղէս և Արիստիդէս։

## ԿՈՐԻՈՂԱՆՈՍ

3460 Արտասահմանի 'ի Հռովմայ, և գնացեալ ապաւինի առ Վոլսկեանս։
3462 Ծնանի Հերոդոտոս պատմագիր։
3463 Կորիողանոս պաշարէ զՀռովմ։ Սպանանի 'ի Վոլսկեանց։

## ԱՐԻՍՏԻԴԷՍ

3467 Արտասահմանի ՅԱԹԵՆայ, և յետ երից ամաց դառնայ անդրէն։

## ԹԵՄԻՍՏՈԿՂԷՍ

3470 Պատերազմ Սաղամինոյ, յորում նահատակեցաւ Թեմիստոկղէս զօրավար Աթենացւոց։
3474 Ծնունդ Թուկիդիդեայ պատմագրի։
3479 Թեմիստոկղէս առնու զխեցեկոյտ վճիռն արտասահմանութեան։

Ամ-
ՅԻ

## ԿԻՄՈՎՆ

3480 Առաքի յԱսիա, ուր և հարկանէ զՊարսիկս ընդ ծով և ընդ ցամաք։

3481 Ծնանի Սոկրատ։ Եկաց ամս եօթանասուն և մի։

3500 Կիմոն մեռանի։ 'Ի նմին ամի ծնանի Աղկիբիադէս։

## ՊԵՐԻԿԼԷՍ

3519 Յարուցանէ զպատերազմ Պեղոպոննիսեան, որ տևեաց ամս քսան և եօթն։ Պերիկլէս եկաց խնամածու Աղկիբիադեայ։

3521 Մեռանի Պերիկլէս։

3522 Ծնանի Պղատոն իմաստասէր։

## ՆԻԿԻԱՍ

3535 Արշաւանն Աթենացւոց 'ի Սիկիլիա, յորում զօրավարէ Նիկիաս։

3537 Նիկիաս պարտի, ըմբռնի, և մեռանի։

## ԱՂԿԻԲԻԱԴԷՍ

3538 Անմիաբանութիւն նորա ընդ Նիկիասայ։ Խոյս տայ 'ի Սպարտա, յորում ժամանակի կռուին Աթենացիք ընդ Սիկիլիացւոց։ Ծանուցեալ

Ամք
Ցի

զի դարանին կենաց նորա, գնացեալ ապաւինի առ Տիտաբերնէս զօրավար Պարսից։

3539 Դիոնեսիոս երէց բռնակալէ 'ի Սիրակուսա։

## ԼԻՍԱՆԴՐՈՍ

3545 Առ սովաւ Պեղոպոննիսեան մարտն առնու վախճան։ Քսենոփոն պատմագիր ծաղկի։

3546 Աղկիբիադէս սպանանի 'ի հրամանէն Փարնաբասեայ։

## ԱՐՏԱՀԻՍ

3549 Անուանեալն Մնեմոն թագ կապէ 'ի վերայ Պարսից, 'ի մեծի պատերազմի յաղթեալ եղբօր իւրում Կիւրոսի։

3550 Սոկրատ իմաստասէր մեռանի։

## ԱԳԵՍԻՂԱՅՈՍ

3553 Թագ կապէ 'ի Սպարտա յետ մահու եղբօր իւրոյ Ագիսայ։

3555 Ագեսիղայոս հարկանէ զայրուձին Պարսից։ Մահ Լիւսանդրեայ։

Ամք
Ծի

## ԿԱՄԻԼԼՈՍ

3562 Խոյս տուեալ մեկնի 'ի քաղաքն Արդէա։

3566 Ծնունդ Արիստոտէլի իմաստասիրի։

3569 Ծնանի Դեմոսթենէս ճարտասան։

3579 Հռչակաւոր պատերազմ Լեւքտրեան, յորում Եպամինոնդաս զօրավար Թեբայեցւոց հարկանէ զԿղէոմբրոտոս արքայ Լակեդեմոնացւոց։

## ՊԵՂՈՊԻԴԷՍ

3580 Զօրավար Թեբայեցւոց Նուիրական գնդին 'ի Լեւքտրեան մարտի։

3582 Դիոնեսիոս երէց բռնաւոր Սիկիլիոյ մեռանի, և պայազատէ զնա Դիոնեսիոս կրսեր՝ որդի նորա։

## ՏԻՄՈՂԵԻՈՆԴ

3585 Սպանանէ զՏիմոփանէս զեղբայր իւր, որ տիրապետել խնդրէր 'ի Կորնթոս։

3586 Պեղոպիդէս հարկանէ մարտիւ զԱղեքսանդր բռնաւոր 'ի Թեսաղիա, և անկանի 'ի պատերազմի։

3587 Մանտինեան հռչակաւոր պատերազմ. և մահ Եպամինոնդեայ։

Ամք
Յի

3588 Մեռանի Կամիլլոս մեծ հռովմայեցի։

3589 Մահ Արտաշէսի, և Ագեսիղայոսի։

## ԴԻՈՎՆ

3593 Հալածէ զԴիոնեսիոս կրսեր բռնաւոր Սիկիլիոյ։

3594 Ծնունդ Աղեքսանդրի մեծի։

3596 Դիոնն դաւաճանի 'ի Կալիպպոսէ։

## ԴԵՄՈՍԹԵՆԷՍ

3598 Սկիզբն ատենաբանութեան նորա ընդդէմ Փիլիպպոսի արքային Մակեդոնիոյ։

3602 Մեռանի Պղատոն իմաստասէր։

3605 Տիմողեոնդ առաքի'ի Սիկիլիա յօգնութիւն Սիրակուսացւոց։

3607 Դիոնեսիոս կրսեր առաքի'ի Կորնթոս։

3609 Ծնունդ Եպիկուրոսի։

3613 Մահ Տիմողեոնդեայ։

## ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԵԾ

3614 Կարգի զօրավար ամենայն Յունաց ընդդէմ Պարսից յետ մահու հօրն իւրոյ Փիլիպպոսի։

3623 Խաղայ 'ի Հնդիկս։

Ամ
ՏԻ

3627 Մահ Աղեքսանդրի մեծի։

## ՓՈԿԻՈՎՆ

3632 Գնայ առ Պողիպերկոնտէս, մատ-
նի 'ի նմանէ 'ի ձեռս Աթենացւոց,
մեռանի 'ի նոցանէ։

## ԵՒՄԵՆԷՍ

3634 Մատնի 'ի ձեռս Անտիգոնոսի.
մեռանի 'ի նմանէ։

## ԴԵՄԵՏՐԻՈՍ

3636 Որդի Անտիգոնոսի։ Զօրավարէ
յԱսորիս։
3643 Ազատէ զԱթէնս։

## ՊԻՒՌՈՍ

3670 Արքայ Եպիրոսի։ Արշաւէ յի-
տալիա։
3685 Առաջին պատերազմ Պունիկեան,
որ տեւեաց ամս քսան և չորս։
3696 Ծնունդ Փիլոպիմենեայ։

Ամք
Յի

## ԱՐԱՏՈՍ

3699 Աշատէ զՀայրենիս իւր 'ի բռնակալութենէն Նիկոկղէայ։

## ԱԳԻՍ ԵՒ ԿՂԷՈՄԵՆԷՍ

3723 Աբքայք Սպարտիոյ ժամանակակիցք Արատոսի։

## ՓԻԼՈՊԻՄԷՆ

3727 Էր ամաց երեսնից, յորժամ Կղէոմենէս կալաւ զքաղաքն Մեգալէպօլիս։

## ԱՆՆԻԲԱՂ, ՄԱՐԿԵՂՂՈՍ, ՓԱԲԻՈՍ ՄԱՔՍԻՄՈՍ, ՍԿԻՊԻՈՆ ԱՓՐԻԿԱՆՈՍ

3721 Սոքա առհասարակ են ժամանակակիցք։ Երկրորդ պատերազմ Պունիկեան, որ տեւեաց ամս ութեւտասան։

3733 Աննիբաղ հարկանէ 'ի մարտի զՓլամինիոս հիւպատոս առ Տրասիմենեան լճիւն։

3738 Մարկեղղոս առնու զՍիրակուսա։

3741 Փաբիոս Մաքսիմոս ունի զՏարանտոն։

3747 Մահ Փաբիոսի Մաքսիմոսի։

3749 Սկիպիոն տիրապետէ յԱփրիկէ։

Ամք
Ցի

## ՏԻՏՈՍ ՓԼԱՄԻՆԻՈՍ

3752 Հիւպատոսանայ չև լեալ ամաց երեսնից։

## ԿԱՏՈՎՆ ՄԵԾ

3752 Էր ժամանակակից Տիտոսի Փլամինիոսի։

3754 Զ Յոյնս ողջոյն յաղաղութիւն փոխէ Տիտոս։

3766 Մահ Սկիպիոնի Աֆրիկանոսի։

3767 Փիլոպիմէն մեռանի։

## ՊԱՒՂՈՍ ԵՄԻԼԻՈՍ

3767 Հիւպատոսութիւն նորա առաջին։

3782 Երկրորդ հիւպատոսութիւն նորա։ Հարկանէ զՊերսէոս արքայ Մակեդոնիոյ, և գերի վարէ զնա։ Յուդայ Մակաբէ եկաց զայսու ժամանակաւ։

3790 Մահ Պաւղոսի Եմիլիոսի։

3794 Մարիոս Հռոմայեցի ծնանի։

5801 Երրորդ պատերազմ Պունիկեան, որ տեւեաց ամս չորս։ Մահ Կատոնի մեծի։

3804 Կրսերն Սկիպիոն որդի Պաւղոսի Եմիլիոսի քանդէ զԿարքեդոն։

Ամք
Յի

## ՏԻԲԵՐԻՈՍ ԵՒ ԳԱՅԻՈՍ

3827 Օրինադրութիւնքն Գայիոսի։

## ՄԱՐԻՈՍ

3843 Արշաւէ 'ի Նումիդիա ընդդէմ Յուգուրթասայ։ Ծնանի Կիկերոն։
3844 Պոմպէոս մեծն ծնանի։
3846 Մարիոս հիւպատոս յերկրորդում նուագին՝ արշաւէ ընդդէմ Կիմբրացւոց։
3850 Յուլիոս մեծ Կեսար ծնանի։

## ՍԻՍՂԱՅ

3855 Առաքի 'ի Կապադովկիա։
3862 Տիրապետէ 'ի վերայ Հռովմայ։
3863 Մարիոս մեռանի։ Եւ Սիսղլաս ունի զԱթէնս։

## ՍԵՐՏՈՎՐԻՈՍ

3867 Առաքի 'ի Սպանիա։

## ԿՐԱՍՍՈՍ

3868 Հարստանայ 'ի վտարանդութեանց անտի Սիսղլայի։

Ամք
Տի

## ՊՈՄՊԷՈՍ

3869 'Ի հասակի քսան և հինգ ամաց առաքի յԱփրիկէ։

## ԿԱՏՈՎՆ ԿՐՍԵՐ

3869 Ժամանակակից Պոմպէի և կրսեր քան զնա։

## ԿԻԿԵՐՈՎՆ

3870 Պաշտպան կայ Ռոսկիոսի ընդդէմ Սիւղղայի։

3871 Սիւղղաս 'ի բաց կայ յիշխանապետութենէն, և մեռանի 'ի յաջորդ ամի։

3874 Պոմպէոս 'ի Սպանիա մարտ յարդարէ ընդդէմ Սերտորիոսի։

## ՂՈՒԿՈՒՂՂՈՍ

3877 Առաքի 'ի մարտ ընդդէմ Միհրդատայ։

3879 Սերտորիոս դաւաճանի 'ի Սպանիա։

3881 Տիգրան պարտի 'ի Լուկուղղեայ։

3887 Մահ Միհրդատայ։ Ծնունդ Կեսարու կրսերոյ։

Ամք
Ցի

## ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ

3891 Ունի զԼիւրիկէ և զԳաղղիա։
3897 Կրասսոս ըմբռնեալ սպանանի 'ի Պարթևաց։
3902 Յուլիս Կեսար յաղթէ Պոմպէի 'ի Փարսաղիա։ Պոմպէոս փախչի յԵգիպտոս, ուր և սպանանի։
3905 Յուլիոս Կեսար 'ի Հինգերորդում նուագի յաղթանակէ։

## ԲՐՈՒՏՈՍ

3906 Յուլիոս Կեսար դաւաճանի 'ի Բրուտոսէ և 'ի Կասսիոսէ։
3907 Բրուտոս անցանէ 'ի Մակեդոնիա։

## ԱՆՏՈՆԻՈՍ

3907 Երապետութիւն Կեսարու կրսերոյ և Լեպիդոսի և Անտոնիոսի։
3908 Մարտ պատերազմին 'ի Փիլիպպէ, յորում Բրուտոս և Կասսիոս պարտեալք 'ի Կեսարէ և յԱնտոնիոսէ, գնան զիւրովի։
3919 Պատերազմ մեծ Ակտեայ, յորում Անտոնիոս պարտեալ 'ի Կեսարէ խոյս տայ յԵգիպտոս հանդերձ Կղէոպատրաւ։
3920 Կեսար ունի զԱղեքսանդրիա։ Անտոնիոս անձին առնէ, զնոյն և Կղէոպատրա։

Ամք
Ցի

## ԳԱԼԲԱՍ

3947 Զայսու Ժամանակաւ Ծնանի Գալբաս։

3981 Ծնունդ Ոթոնի։

4018 Ներոն գնայ զիւրովի։ Գալբաս անուանի կայսր։

## ՈԹՈՆ

4019 Վտարանջէ 'ի Գալբասայ և սպանանէ զնա և պայազատէ։ Յետ երից ամսոց պարտեալ 'ի Վիտելիոսայ՝ գնայ զիւրովի։

---

# ՑԱՆԿ ՄԱՍՆԱՒՈՐ

## ՀՆՈՑ ՀԵՂԻՆԱԿԱՑ

## ԶՈՐՍ ՑԻՇԱՏԱԿԷ ՊԼՈՒՏԱՐՔՈՍ Ի ՎԱՐՍ ԻՒՐ

---

Ագեսիլայոս.
Աթենոդորոս.
Ակեստոդորոս պատմագիր.
Ակիղիոս, Կայոս.
Աղկէոս.
Աղկմէոն քերթող.
Աղեքսանդրոս Մինդիոս պատմագիր.
Աղեքսանդրոս Մագնոս.
Աղեքսանդրիդէս Դեղփացի.
Ամֆիկրատէս քերթող.
Ամֆիկրատէս հռետոր յաղթունեան Ցի-
գրանայ.
Անաքարսիս.
Անակրէոն.
Անաքսագորաս.
Անաքսարկոս.
Անաքսիմենէս հռետոր.
Անդոկիդէս.
Անդրոկլիդէս.

Անդրոնէս Աղիկառնացի.
Անդրոնիկոս Հռոդացի.
Անէքսանդրիդէս Դեղփացի.
Անտիկղիդէս պատմագիր.
Անտիփանէս քերթող.
Անտիփոն իմաստակ.
Անտիգենէս պատմագիր.
Անտիգենիդէս.
Անտիգենիդէս Կարիստիոս պատմագիր.
Անտիգոնոս Թագաւոր.
Անտիղոքոս քերթող.
Անտիմաքոս Թէացի.
Անտիմաքոս Կողոփոնեցի.
Անտիոքոս Ասկաղոնացի.
Անտիստենէս իմաստակ.
Ապողոդորոս.
Ապողոնիդէս.
Ապողոնիոս Մողոն.
Ապողոտեմիս.
Ատանիս պատմագիր.
Արատոս.
Արքեղայոս քերթող.
Արքեատրատոս քերթող.
Արքիղոքոս.
Արքիմիդէս.
Արքիպպոս.
Արիստիպպոս Կիւրենացի.
Արիստոբուղոս պատմագիր.
Արիստոքրատէս.
Արիստոփանէս.
Արիստոն իմաստասէր.
Արիստոն Քիացի.

Արիստոտէլ.
Արիստոքսենոս.
Աւգոստոս Կեսար.
Աւտոկղիդէս.
Բատոս Սինոպեցի պատմագիր.
Բաքիլիդէս.
Բիբղոս.
Բիոն Սողիացի պատմագիր.
Բուտաս.
Բրուտոս:
Գղաւկիպպոս.
Գորգիաս Լէոնտինոս.
Դաիմաքոս Պղատէացի.
Դամաստէս Սիդէացի.
Դամոն Կիւրէնացի.
Դեղնոս պատմագիր.
Դեմադէս Հռէտոր.
Դեմարատոս Կորնթացի.
Դեմետրիոս Փաղերէոս.
Դեմետրիոս Մագնեսացի.
Դեմոկարէս.
Դեմոկարիս.
Դեմոկղիդէս.
Դեմոկրիտոս.
Դեմոնիդէս.
Դեմոսթենէս.
Դիդիմոս Գրամատիկոս.
Դիկիարկոս Մեսսենացի.
Դինիաս.
Դինոն պատմագիր.
Դիոգինէս Սինոպացի.
Դիոդորոս աշխարհագիր.

Դիոկղէս պատմագիր հին յոյժ.
Դիոնեսիոս Աղիկառնացի.
Դիոնիսոդորոս Տրիզենացի.
Դիոսկորիդէս.
Դիփիլոս.
Դուրիս Սամոսացի.
Դրակոն.
Եգեսիաս Մագնեսացի.
Եկատէոս Երեթրացի պատմագիր.
Եղանիկոս.
Եղիկոն Կիզիկէցի.
Եմպեդոկղէս.
Եմպիղոս.
Եպիկարմոս.
Եպիմենիդէս Փեստացի.
Երակղիդէս Պոնտացի.
Երակղիդէս Կումացի.
Երակղիտոս.
Երատոսթենէս.
Երէաս Մեգարացի.
Երմագորաս.
Երմիպպոս.
Երմիպպոս Քերթող.
Եպինէս.
Եսովպոս.
Եւանգեղոս.
Եւաս Սամոսացի.
Եւպողիդէս.
Եւրիպիդէս.
Եւրիզիոն.
Եւտիքիդէս.
Եփորոս Կումացի.

Օ.էնոդորոս Տրիզենացի պատմագիր.
Օ.էնոն.
Թաղէս.
Թանուսիոս Գեմինոս պատմագիր.
Թարրուենսիոս մաթէմաթիկոս.
Թեղեկղիդէս.
Թեմիստոկղէս,
Թէոդէտէս.
Թէոփրաստոս.
Թէոպոմպոս.
Թեսբի.
Թերպանդրոս.
Թուկիդիդէս.
Իբիկոս, քերթող.
Իբրէաս.
Իգոմենեւս.
Իգոմենեւս այլ.
Իպերիդէս.
Իպպիաս.
Իպպոնէս, հռետոր.
Իստրոս, պատմագիր.
Իտանոս, պատմագիր.
Լամակոս.
Լելիոս.
Լինկէոս Սամոսացի.
Լիւկուրգոս.
Կալլիմաքոս.
Կալլիսթենէս.
Կասսիոս.
Կեկիլիոս.
Կեսար.
Կիկերոն.

Կղաւդիոս Ռուփոս.
Կղէաս.
Կղիկեմոս, պատմագիր հին.
Կղիտարքոս.
Կղոդիոս։
Կուռնելիոս Նեպոս.
Կտեսիաս.
Կրատերոս Մակեդոնացի.
Կրատինոս.
Կրատիպպոս իմաստասէր.
Կրիտիաս.
Կրիտողայոս.
Կրոբիւլոս, հռետոր.
Հեսիոդոս.
Հերոդոտոս Պոնտիկոս.
Հերոդոտոս.
Հերոնիմոս Ռոդացի.
Հիպպոկրատէս.
Հոմերոս.
Մամերկոս.
Մարդոնիոս.
Մարսիաս.
Մելանտիոս, քերթող.
Մենալոպոս, հռետոր.
Մենանդրոս.
Մենեկրատէս, պատմագիր.
Մենենիոս.
Մեսսալաս.
Մետրիոս Փլորոս.
Միլտաս, գուշակ.
Միհրդատ Պոնտացի.
Միրտիլոս, պատմագիր.

Մնեսիփիղոս.
Մուսէոս.
Յոբաս, պատմագիր.
Յոնէ, քերթող Քիացի.
Նաւսիկրատէս, հռետոր.
Նէանթէս.
Նիկագորաս.
Նիկերատոս.
Նիկոդեմոս Մեսսենացի.
Նիկողաս Դամասկացի.
Ողիւմպիա.
Ողիւմպոս, բժիշկ.
Ոնեսիկրիտոս.
Ոպպիոս.
Ովրատիոս.
Որփէոս.
Պամմենէս.
Պանետիոս, իմաստասէր.
Պապպոս.
Պասիփոնտէս.
Պատէկոս.
Պատրոկղոս.
Պէնոն Ամատուսնտացի.
Պինդարոս.
Պիսիստրատոս.
Պիսոն Կայոս պատմագիր.
Պիտէաս.
Պիտոն Բիւզանդացի.
Պիւթագորաս.
Պղատոն.
Պղատոն, քերթող.
Պողեմոն, աշխարհագիր.

Պողիէւտիոս.
Պողիկրիտոս պատմագիր.
Պողիւբիոս.
Պողիղէղոս Ռոդացի.
Պողղիոն.
Պոսիդոնիոս.
Պոսիդոնիոս, իմաստասէր.
Պոստումիոս Ալբինոս.
Պոտամոն Լէսբացի.
Պրոմատիոն.
Ռուտիղիոս, պատմագիր.
Սալլուստիոս.
Սափոս.
Սեկունդոս, հռետոր.
Սենարկաս.
Սիմուլոս, քերթող և պատմագիր.
Սիւղղաս.
Սոլոն.
Սոսիբիոս.
Սոտիոն.
Սոփոկղէս:
Սպենդոն, քերթող.
Ստեսիկորոս.
Ստեսիմբրոդոս Թասոսացի.
Ստիլպոն, իմաստասէր.
Ստրաբոն.
Ստրատոկղէս.
Սվետոնիոս.
Վաղերիոս Մաքսիմոս.
Վաղերիոս Անտիատէս.
Վարրոն.
Վոլուսենիոս.

Տիմէոս Սիկիլիացի պատմագիր.
Տիմոկրէոն Հռոդացի քերթող.
Տիմոն մարդատեաց.
Տիմոն Փղիասիոս.
Տիմոնիդէս.
Տիմոթէոս.
Տիրաննիոնէս Գրամատիկոս.
Տիրտէոս, քերթող.
Տիտոս Լիվիոս.
Տուբերոն, իմաստասէր.
Տրասէոս, պատմագիր.
Տրոգոս.
Փարէս Թէանկեղացի.
Փարէս Միտիլենացի.
Փարէս Հռետոր Աթենացի.
Փարոմն Լամպսակեցի.
Փերթողն Թեսեան.
Փսեռոկրատէս.
Փսեռոփոն.
Փրիսիւպպոս,

—

# ՑԱՆԿ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ

### ՆՇԱՆԱՒՈՐ ԻՐԱՑ

### ՈՐ Ի ՊԼՈՒՏԱՐՔԵԱՆ ՎԱՐՍՆ

---

Աբողոս գետ 'ի Սիկիլիա. Բ. 357. Ագեսիլայոսի զարմն. Դ. 155. հեզութիւն նորա. 156. կարգի զօրավար ընդդէմ Պարսից. 163. յաղթէ. 171. գովութիւն նորա. 172. բարք նորա. 177. հնազանդութիւն նորա. 180. շահատակութիւն նորա. 185. օրինապահութիւն նորա. 188. քաղաքականութիւն նորա. 190. վարդապետութիւն նորա վասն արդարութեան. 196. որդեսիրութիւն նորա. 200. բանք նորա յատենի ընդ Եպամինոնդեայ. 203. իմաստութիւն նորա. 208. կառավարութիւն նորա 'ի գժուարինս. 211. 213. նահատակութիւնքն. 216. նաւէ յԵգիպտոս, և անշքութիւն նորա. 220. զօրավարէ Եգիպտացւոց. 222. ուշիմութիւն նորա. 225. մեռանի. 226. մամ հալեալ զդիակամբն՝ աձեն 'ի Լակեդեմոնիա. 227.

Ագիսայ զարմն. Ե. 271. բարք նորա. 273. 299. ինդրէ բարեկարգել զՍպարտիա. 276. 279. գովութիւն նորա. 281. դաւաճանի և սպանանի. 296.

Ագմետոս արքայ Մողոսացւոց. Ա. 469.

Աթենացիք լքանեն ողջոյն զԱթէնս և փոխադրին 'ի ծով. Ա. 443.

Ալքանեան լճին 'ի սահմանս Հռովմայ՝ նորանշան գէպքն. Ա. 493—497.

Ակադեմոս, յորմէ Ակադեմիա. Ա. 52.

Ակրագանտա քաղաք 'ի Սիկիլիա. Բ. 359.

Աղեքսանդր Պարիս. Ա. 55.

Աղեքսանդրի մեծի զարմ. Ե. 8. ծնունդ նորա. 10. դիմագրութիւն և անդրիք նորա. 11. բարքն. 12. 13. 17. գրէ առ Արիստոտէլ. 18. բանասիրութիւն նորա. 19. կարգի զօրավար ընդդէմ Պարսից. 29. առատաձեռնութիւն նորա. 31. նահատակութիւնք նորա. 33. արշաւանն ընդդէմ Դարեհի. 42. ժուժկալութիւն նորա. 46—48. 50. 65. 89. տիրապետութիւն նորա. 52. 54. 56. շինէ զԱղեքսանդրիա. 56. խաղայ դարձեալ ընդդէմ Դարեհի. 66—74. պատէ ինքնին զդիակն նորա. 91. խաղայ 'ի Պարթևս. 92. 'ի Հնդիկս. 113. վտանգի. 126. հարցմունք նորա առ Մերկիմաստակս Հնդկաց. 127. դառնայ 'ի Պարս. 135. խոթանայ. 146. մեռանի. 148.

Աղկէոս քերթող Յոյն. Բ. 640.

Աղկիբիադէսի զարմ. Բ. 153. գեղն նորա և թոթովելն. 154. անհաւասար բարքն. 155. 161. 164. 192. նիզակակից լինի Սո-

կրատայ խմաստասիրի . 163. Ճարտարա-
խօսութիւնն. 167. խարդախութիւն նորա.
173. կարգի զօրավար . 175. կեանք նորա
ըստ . 176. ամբաստանի . 183. ՅԱԹԵՆԱ-
ցւոց իւրոց դատապարտի 'ի մահ. 189. փախ-
չի 'ի Պելոպոննիսոս . 191. Լակոնանայ .
191. փախչի առ Տիսափերնէս սատրապ .
195. բանտարգելլինի և փախչի առ ԱԹԵ-
նացիս . 203. յաղթութիւք նորա. 205—207.
դառնայ ՅԱԹԷՆԱ . 211—213. ամբաստանի
դարձեալ. 218. դատապարտի 'ի մահ 'ի
Սպարտացւոց . 223. փքնահար մեռանի 'ի
Փռիւգիա . 224.

Աղուանք . Դ. 286. 288.

Ամազոնք . Ա. 40—44. Դ. 288. Ե. 93.

Ամբրոնք , ցեղ Տեւտոնեանց քաջամար-
տիկ . Գ. 245—247. Տէս և 'ի Մարիոս :

Ամիսք Հռոմայեցւոց . Ա. 266—269.

Ամիլլա զօրավար Կարթեգոնացւոց . Բ.
344.

Ամմոնէ դիք , ՅԱփրիկէ . Ե. 57. 59.

Անակսարքոս Աբդերացի . Ե. 106. 107.

Անահիտ . դիք . Զ. 485.

Անապոս գետ 'ի Սիկիլիա. Բ. 338.

Անաքսագորաս վարժապետ մեծ Պերիկ-
կլեայ . Բ. 14. 17. 44. 45. կարծիք նորա վասն
երկնային մարմնոց . Գ. 325. 326. առաջին
գրէ վասն խաւարման լուսնի . Դ. 53.

Անաքարսիս իմաստասէր 'ի Սկիւթիոյ
գնայ առ Սողոն. Ա. 302. իմաստնաբանու-
թիւնք նորա . 303.

Անգելաց պատմութիւնն . Գ. 241.

Աննիբաղ մտանէ Յիտալիա. Բ. 89. յաղթէ Հռոմայեցւոց. 92. հնարիմացու-թիւնք նորա մեծ. 97. 99. 100. 101. 104. զուարճախօսութիւն նորա. 117. յաղթէ Հռոմայեցւոց. 118. 119. 129. 131. յետս կոչի 'ի Կարթեդոն. 139. վտարանդի 'ի հայրենեաց անկանի առ Անտիոքոս մեծ. 641. մահ Աննիբաղայ. 663. Աննիբաղ միականի. Գ. 620. Տես և 'ի Փաբիոս Մաքսիմոս:

Անոն զօրավարնաւաց Կարթեդոնացւոց. Բ. 335.

Անտէոս, վաղնջուց դիւցազն 'ի Լիբիա վանականդնեան. Գ. 633.

Անտիգոնոս. Զ. 10. 14. 33—85. 52.

Անտիոքոս մեծ. Բ. 374. պարտի 'ի Հռոմայեցւոց. 379. 642.

Անտիպատրոս. Դ. 424. 425.

Անտոնիոսի զարմ. Զ. 101. բարք նորա. 102—106. 114. 117. 127. 133. 136. 142. 144. 170. քաջութիւնք նորա. 105. 169. դիմադրութիւն նորա. 106. կարգի ժողովրդապետ. 108. Նիզակակից Կեսարու. 112. փառաւորի. 122. Թշուառանայ. 126. ամբառնայ դարձեալ. 128. հրամայէ խողխողել զՍիկերոնն. 130. խաղայ Յելլադա. 133. հանդերձի ընդդէմ Պարթևաց. 137. շաղի 'ի հաղթս Կղեոպատրեայ. 141. ձկնորսութիւն նորա Յեգիպտոս. 145. խաղայ ընդ Հայաստան. 158. Թշուառանայ. 173. 177. փախչի 'ի Պարթևաց. 180. դառնայ ՅԱղեքսանդրիա. 186. պատրաստի ընդդէմ Կեսարու. 192. վատթարանայ. 207. 210.

փախչի 'ի Լիբիա. 211. յուսահատեալ՝ անձին առնէ. 223.

Ապեղէս նկարագործ. Ե. 12. 616. Զ. 41.

Առոգանութիւն զինչ ինչ. Ե. 455.

Ապրուբա զօրավար Կարքեդոնացւոց. Բ. 344.

Ասպասիա. Բ. 54. 55. 56.

Ասպատակաց ծովուն ստորագրութիւն առ Պոմպէիս. Դ. 265. 266.

Ասպարն պղնձի հռչակաւոր անկեալ 'ի ձեռս Նումայի. Ա. 253.

Անտանտեան կղզեացն Երանելեաց ըստորագրութիւն. Գ. 631. տե՛ս և 'ի Պղատոն:

Ատտաղոս արքայ: Բ. 635.

Ատրպատական աշխարհ. Զ. 159.

Արատոսի զարմ. Ե. 599. դաստիարակութիւն և պատկերք նորա. 600. նահատակութիւն նորա. 609. բարք նորա. 611. ազատէ զՀայրենի աշխարհն 615. չափաւորութիւն նորա. 617. կարգի զօրավար Աքայեցւոց. 620. նահատակութիւնք նորա. 629. 643. խորագիտութիւն նորա. 663. խորհրդականութիւն նորա. 675. 678. մահ նորա. 681.

Արբակէս Մեդացի. Զ. 461.

Արիադնէ. Ա. 26. 30. 31.

Արիամենէս ծովապետ Իշխան Քաերքաեայ. Ա. 451.

Արիման դիք Պարսից. Ա. 477.

Արիստոփանէս քերթող Յոյն. Գ. 499. Զ. 25.

Արիսպագին տաճար խորհրդոյ. Ա. 331. 332.

Արիստիդէսի զարմ. Գ. 7. բարք նորա. 10. 11. 13. աւագանայ. 18. Արդար կոչումն նորա. 18. վտարանդի լինի. 21. դարձուցանէն. 22. գործակից Թեմիստոկղէայ. 23. 25. յաղթութիւն նորա. 29. քաղաքականութիւն նորա. 33. 52. 53. 55. նահատակութիւն նորա. 45. աղքատասիրութի նորա. 58. հեզութիւն նորա. 60. մեռանի խաղաղութեամբ. 60. 61. դերեզման նորա. 62.

Արիստոտէլ իմաստասէր. Ա. 531. Բ. 13. 24. 59. 61. 450. 476. Մատեանք նորա. Գ. 62. 309. 422. Վարժապետ Աղեքսանդրի մեծի. Ե. 17.

Արիստրատոսին պատկեր հրաշակերտ. Ե. 616.

Արկադացիք, կաղնակերք. Բ. 230.

Արշակ արքայ Պարթևաց. Գ. 375.

Արպաղոս, բազում գանձուք գայ յԱտիկէ. Դ. 411.

Արտաշատ, արքունիք Տիգրանայ. Գ. 579. մեծ և գեղեցիկ յոյժ, Մայրաքաղաք Հայոց. 580. Աննիբաղ հովանագրէ զձև քաղաքին. 580.

Արտաշէս, երկայնաձեռն. Զ. 441.

Արտաշէս, Մնեմոնէն, որդի Դարեհի. Զ. 441. բարքն նորա. 442. 445. 446. ահագին պատրաստութիւն նորա ընդդէմ Կիւրոսի եղբօր իւրոյ. 450. յաղթութիւն նորա. 455. 460. 471. 479. անձնապուր լինի

հնարիմացութեամբ 'ի դաւանաց. 488. 489. մահն նորա. 492.

Արտաւազդ արքայ Հայոց. Դ. 106. 112. 138. Արտաւազդայ մատենագրութիւնք. 138. Զ. 158. 160. 181. ըմբռնի յԱնտոնիոսէ, տարեալ լինի յԱղեքսանդրիա. 182.

Արտաւան հազարապետ արքային Պարսից. Ա. 474.

Արտեմեայ Եփեսացւոց մեհեանն, այրեալ նորա. Ե. 10.

Արտեմոն մենքենայագործ Ճարտարապետ Պերիկղեայ. Բ. 60.

Արքիղոքոս քերթող. Ա. 8. Զ. 64. 541.

Արքիմիդէս, երկրաչափ մեծ և մենքենագործ անուանեալ, մենքենայիւք կռուի ընդ Հռոմայեցւոց. Բ. 534—542. Սպանանի 'ի զօրականէն. 546.

Աքիլլէս. Ա. 55. Բ. 583. 597. Գ. 133. 156. Արձան նորա. Ե. 32.

Բաբանն ահագին Հռոմայեցւոց. Բ. 534. 538.

Բաբելոնի դաւառն, հրատապ. Ե. 77.

Բեղդացիք. Ե. 185.

Բոսպորոն. Դ. 287. 292.

Բրեննոս արքայ Գաղատացւոց. Ա. 518. Մտանէ 'ի Հռովմ. 530. դաշն նորա ընդ Հռոմայեցւոց. 544. մեկնի 'ի Հռովմայ. 446.

Բրետանացիք. Ե. 190.

Բրուտոս Լուկիոս հալածիչ Տարկուինոսի. Ա. 364. 'ի մահ մատնէ զորդիսն. 373. անկանի 'ի մարտի. 379.

Բրուտոսի Երկրորդի՝ զարմ և բարքն. Զ. 341. 349. 385. ուսուցնասիրութիւն նորա. 343. 344. 346. 396. գովութիւն նորա. 349. Դրդի 'ի բառնալ զԿեսար. 353. 366—368. Ելանէ 'ի Հռովմայ. 373. Թուղթք նորա. 375. գնայ յԱթէնս. 377. ըմբռնի 'ի շնքաղց. 379. անցանէ յԱսիա. 383. 391. 401. պատրաստի 'ի մարտ ընդդէմ Կեսարու և Անտոնիոսի. 403. յաղթէ. 407. նահատակութիւն նորա. 419. խուճապի. 423. յուսահատ անձին առնէ. 425.

Գալբաս, զարմն նորա. Զ. 500. բարքն նր. 501. 502. լինի զօրավար. 504. համբաւի ինքնակալ. 506. 512. 518. խաղայ 'ի Հռոմ. 519. քաղաքականութիւն նորա. 521. 524. մահ նորա. 540.

Գաղատացիք, 'ի Կեղտաց. պատմութիւն նոցա և արշաւանն յԻտալիա. Ա. 515—519. դիմեն 'ի Հռովմ. 520. 521. կռուին ընդ Հռոմայեցւոց և յաղթեն. 523. վատթարին առ Կապետոլինիւ. 542. 543. Բ. 514. Գ. 190.

Գայիոսի Գրակքեան զարմ. Ե. 365. բարք նորա. 367. 368. 401. 403. կարգի տրիբուն. 406. օրէնք նորա. 408. 410. հորդէ զՃանապարհս. 411. նաւէ 'ի Լիբիա. 415. շէն գործեալ զԿարքեդոն՝ դառնայ 'ի Հռովմ. 417. փախուստ նորա և մահն. 427.

Գայլ գետ. Զ. 87.

Գանգէս, գետ մեծ 'ի Հնդիկս. Ե. 123.

Գենթիոս արքայ Լիւրիկեցւոց. Բ. 383.

Գեսկոն զօրավար Կարքեդոնացւոց. Բ. 353. 357.

Գետնաշարժ ահագին 'ի Սպարտիա. Գ. 397.

Գերմանացիք. Ե. 182—184.

Գիւլիպպոս Սպարտացի՝ զօրավար 'ի Սիկկիլիա. Գ. 343. Դ. 41. 43. 44.

Դամատէս Պրոկրուստէս մարդախոշոշ՝ սպանեալ 'ի Թէսէոսէ. Ա. 16.

Դամիւր գետ 'ի Սիկկիլիա. Բ. 355.

Դամոն վարժապետ Պերիկլէայ յերաժշտութեան. Բ. 13.

Դարեհ արքայ Պարսից. Ե. 32. 39. 42. 63. 65. 73. 'ի վերջինս տագնապի յերեսաց Աղեքսանդրի, և մեռանի. 90.

Դեդաղոս. Ա. 28.

Դեմագէս մեծ Ճարտասան Յոյն. Ե. 457. 459.

Դեմարատոս Սպարտացի, հրեշտակ 'ի Պարսս. Ա. 479.

Դեմետրիոսի զարմ և դիմագրութիւն. Զ. 10. բարքն. 11. 13. 35. 37. 43. 77. յաղթութիւն նորա. 31. 33. Համբաւի զօրավար Եղլադայ. 46. թշուառանայ. 55. ամբառնայ դարձեալ. 62. 67. պատրաստութիւն նորա մեծ. 79. արշաւան նորա մեծ յԱսիա. 80. թշուառանայ դարձեալ. 83. ամբառնայ դարձեալ. 85. թշուառանայ և պաշարի. 89. խօթանայ սաստիկ. 90. անձնատուր լինի Սելեւկոսի. 92. մեռանի. 96. յուղարկաւորութիւն նորա. 97.

Դեմոկղէայ ժուժկալ պատանեկին

դէպք. Զ. 44.

Դեմոսթենեայ զարմ. Ե. 449. Ճարտարախօսութիւն նորա. 451. 453. 457. կրթարան նր՝ ատորերկրեայ. 455. 460. ախոյեան ընդդէմ Փիլիպպոսի Մակեդոնացւոյ. 463. քաղաքականութիւն նորա. 468. մրցանք նորա. 472. խոյս տայ յԱթենայ. 485. դառնայ. 488. ապաւինի 'ի մեհեան. 490. մահ նորա. 491. գովութիւն նորա 'ի Կիկերոնէ. 537.

Դերակատուն. Ճառ Յուլիոսի Կեսարու ընդդէմ Կատոնի. Ե. 236.

Դիոգինէս. Բ. 107. Ե. 29.

Դիոնեսիոս բռնաւոր Սիկիլիոյ, առաքի 'ի Կորնթոս. Բ. 326. 327. առածք նորա. 328. 329.

Դիոսկուրեանք. Ա. 53. 54. Բ. 231.

Դիոնի զարմ և բարք նորա. Զ. 257. 263. խորհրդականութիւն նորա. 261. կրթէ զԴիոնեսիոս կրտեր. 267. վարի 'ի Սիկիլիոյ. 272. մեծութիւնք նորա. 273. բնակէ յԱթէնս. 275. խաղայ 'ի Սիկիլիա. 289. մտանէ 'ի Սիրակուսա. 294. քաջութիւն նորա. 297. ատենաբանութիւն նորա. 315. նահատակութիւն նորա. 320. իմաստասիրութիւնն. 322. աղաւէ զՍիրակուսացիս. 327. գովութիւն նորա. 329. դաւաճանի և մեռանի. 337.

Դպիրք արագագիրք մանրագիրք յատեանս Հռոմայեցւոց՝ մուծեալք 'ի Կիկերոնէ. Դ. 476.

Եալիւսոս, նկար հրաշալի. Զ. 41.

Եգէոս հայր Թէսէոսի. Ա. 6. 7. գահաւէժ մեռանի. 32.

Եգիպտացւոց քուրմք իմաստունք վաղընջուց. Ա. 345.

Եղպինիկէ քոյր Կիմոնի. Բ. 26. 27. 62.

Եկբատանք Մարաց. Ե. 75. 140.

Եմբեդոկղէս իմաստասէր. Զ. 14.

Եմիլիոսի Պաւղոսի զարմ. Բ. 371. գովութիւն նորա. 372. կարգի հիւպատոս. 377. դաստիարակութիւն նորա մեծ առ մանկունսն. 378. զօրավար մեծ ընդդէմ Պերսէոսի. 384. կառավարութիւնն. 390. խորտակէ զՊերսէոս. 405. 411. ժողովէ զՊերսէոս 415. իմաստնաբանութիւն նորա. 415. առաքինութիւն նորա. 418. յաղթանակէ 'ի Հռոմ. 424—428. կարգի համարակալ. 433. մեռանի, և գիահանք նորա մեծ. 435.

Ենէաս 'ի Տրոյիոյ ածէ յԻտալիա զՊալլասայ դրօշեալն. Ա. 528. 529.

Եպամինոնդաս զօրավար մեծ. Բ. 232. գովութիւն նորա. 450. 452. Նիզակակից Պելոպիդէայ. 453. զօրավարութիւն և յաղթութիւն նորա մեծ. 483—485. հեղութիւն նորա. 486. փրկէ զՊելոպիդէս. 497. 203. վարք նորա գրեալ 'ի Պլուտարքոսէ և կորուսեալ. 204. մահ նորա. 218. Տէս և 'ի Պելոպիդէս:

Եպիկուրոս իմաստասէր. Զ. 62. 397.

Եպիկուրեանց վարդապետութի վասն տեսլեանց. Զ. 398.

Եսովպոս առակախօս առ Սողոնիս. Ա.

350. Բ. 507.

Եպիւղէս քերթող Յոյն. Ա. 47. Գ. 13.

Երասխ գետ. Դ. 286. Զ. 180.

Երդման օրինակ առ Հռոմայեցիս. Գ. 389.

Եւմենէս արքայ. Գ. 80.

Եւմենեայ զօրավարի զարմ, և քաջութիւն նորա 'ի մանկութեան. Գ. 669. Իշխանանայ առ Աղեքսանդրի մեծի. 670. դժոխ ընդ Եփեստիոնի. 671. տիրէ Կապադովկիոյ և այլ սահմանաց. 673. արձակի խաղաղել զՀայոց աշխարհն 675. զօրավար ինքնակալ բանակին որ յաշխարհին Հայոց. 676. մենամարտութիւն նորա և յաղթութիւնն. 682. պաշարի. 690. հնարիմացութիւն նորա 'ի կրթել զերիվարս յանձուկ վայրի. 691. խորագիտութիւն նորա 'ի պաշտպանութիւն անձին. 695. գովութիւն նորա. 697. 698. հնարիմացութիւն նորա. 700. դաւաճանի. 703. ատենաբանութիւն նորա առ դաւաճանն. 704. սպանանի. 707.

Եւրիբիադէս Սպարտացի զօրավար մեծի մարտին ընդդէմ Քսերքսեայ. Ա. 444.

Եւրիպիդէս քերթող. Ա. 47. Բ. 167. 450. քերթուածք նորա. 496. Գ. 159. 373. Դ. 65.

Եւքիդաս Պղատացի, սուրհանդակ արագավազ անհնարին. Գ. 49.

Եփորոս, այն է՝ Պարէտ Սպարտացւոց. Ե. 312. 313.

Զենոն Եղէացի վարժապետ Պերիկ-

ղեայ յիմաստասիրութեան. Բ. 13.

Թաղէս իմաստասէր. Ա. 298. փառք նորա. 300. հնարիմացութիւնն առ Սողոն. 304. 305.

Թասոս կղզի. Զ. 399.

Թափիոքք Հռոմայեցւոց. Ա. 257.

Թեբի այրասիրա կին Աղեքսանդրի ուրումն բռնաւորի, դաւէ զայր իւր 'ի գիշերի. Բ. 509. 510.

Թեմիստոկղեայ զարմն. Ա. 423. ուսումնասիրութիւն նորա. 424. նախանձաւորութիւնն ընդ Միլտիադէս 429. քաջանայ 'ի հանդարտել զԵլլադա. 434. իշխանանայ տալ պատերազմ ընդ Քսերքսեայ. 434. հնարիմացութիւն նորա. 441. հեզութիւն նորա. 445. հնարիմացութիւն նորա առ Քսերքսէս. 454. յաղթանակ նորա. 456. առածք նորա. 457—459. նորոգէ զԱթէնս. 459. ընդհարկանի 'ի Ժողովուրդն և արձան նորա. 466. վտարանդի լինի խեցեկոյտ վՃռով. 466. անկանի ողբաւոր առ Ադմետոս. 469. անցանէ յԱսիա. 471. առաքի առ Թագաւորն Պարսից. 473. բանք նորա ընդ Արտաւանայ հազարապետի. 474. մուծանի առ Թագաւորն և ծանօթս տայ զանձնէն. 476. Ճարտարաբանէ առաջի արքային և գտանէ շնորհս. 475. 479. 480. յանձն շառնու կռուել ընդդէմ Յունաց. ցլու արիւն առնու և մեռանի. 484. գերեզման նորա. 486.

Թեսպիս ողբերգակ յԱթէնս. Ա. 354.

Թէոդոտոս Քիացի. Զ. 392. 393.

Թէոփրաստոս խմաստասէր Յոյն. Գ. 422. 423.

Թէսէոսի զարմն. Ա. 5. դնայ 'ի Դելփիս. 8. նախանձաւոր Հերակլէայ. 11. քաւութիւն առնու 'ի Կեփիսոս. 17. Հասանէ ՅԱԹԷՆՍ. 17. ծանօթս տայ հօրն. 18. նաւէ 'ի Կրետէ. 26. Հասանէ 'ի Դելոս. 31. կառավարութիւն Թէսէոսի ՅԱԹԷՆՍ. 36. հրաժեշտ նորա 'ի թագաւորութենէն և քաղաքականութիւն նորա. 37—39. նաւարկէ 'ի Պոնտոս ընդ Հերակլէայ. 40. մեկնի դարձեալ ՅԱԹԷՆայ. 56. մեռանի 'ի Սկիւրոս. 57. ոսկերք Թէսէոսի փոխադրին ՅԱԹԷՆՍ. 59.

Թուկիդիդէս պատմագիր Յոյն. Բ. 23. 41. 89. 167. 170. Գ. 69.

Լակոնաբանութիւնք. Ա. 190—193.

Լակոնացւոց սովորութիւք. Ա. 183—189. 135. 200. 201. բանաստեղծութիւն նոցա. 193—196.

Լամբիւրինթոս Կրետեայ. Ա. 21.

Լամիա. Զ. 36. 49. 50.

Լատինք. Ա. 129. պարտութիւն նոցա 'ի Հռոմայեցւոց. 558.

Լէոնիդաս. Ե. 292. 299.

Լիճ Նաւթի ՅԵկբատանս՝ Հրաշալի. Ե. 75. 77.

Լիվիոս պատմագիր Լատին. Բ. 557.

Լիւկիացւոց սոսկալի դէպքն. Զ. 389.

Լիւկուրգոսի զարմն. Ա. 149. թագկապէ. 150. մեկնի 'ի Կրետէ. 153. անցանէ ՅԱսիա. 154. գտանէ զքերթուածսն

Հոմերոսի և առաջին 'ի լոյս ընծայէ. 155. դառնայ 'ի Հայրենիսն. 156. կարդաւորէ զքաղաքն. 156—158. Օրէնք Լիւկուրգոսի. 163—168. 174—183. 199. 203—209. գնայ 'ի Դեղփիս. 211. մեռանի անուաղուքեամբ. 212. Լիւկուրգոսի մարմինն այրեալ և մոխիրն ցանեալ 'ի ծով. 218.

Լիւսանդրոսի անդրին. Գ. 307. զարմն նորա. 308. աղքատութիւն նորա. 309. կարգի զօրավար. 310. 317. յաղթէ Աթենացւոց. 324. քաղաքականութիւն նորա. 328. 'ի նեղ արկանէ զԱթէնս. 330. առնու և փոխէ զկարգն. 333. Լիւսանդրեայ պատկերն պղնձի և փառքն նորա. 337. 338. յետս կոչի 'ի Լակեդեմոնիա. 341. առածք նորա. 345. Լիւսանդրոս զօրավիգն Ագեսիղայոսի. 346. 348. գանգատք նորա առ Ագեսիղայոս. 350. հնարիմացութիւն նորա. 352. 354. զօրավարէ ընդդէմ Թեբայեցւոց. 357. անկանի դիտապատ առ քաղաքաւն Թեբայեցւոց. 359. Ձառն յաղագս Քաղաքականութեան գտեալ առ Լիւսանդրոսի յետ մահուն. 363.

Լիւսիմաքոս. Զ. 33.

Լուկիլլեոսի բարեկամին Բրուտոսի պանչելի դէպքն. Զ. 421.

Լուկուղղոսի զարմ. Գ. 509. ուսումնասիրութիւն նորա. 510. քաջութիւն նորա. 511. Նաւէ յԵգիպտոս. 513. կարգի հիւպատոս. 519. անցանէ յԱսիա. 523. Միհրդատ ամբառնայ ընդդէմ Հռոմայեցւոց. 524. Լուկուղղոս ընդդէմ Մի-

հրդատայ. 527. կռուի ընդ նմա. 532. փախչի Միհրդատ յերեսաց Լուկուղղոսի. 533. զհետ պնդի Լուկուղղոս. 536. Միհրդատ վտանգի 'ի ծովու. 536. Լուկուղղեայ գովութիւնն վասն Տիգրանայ՝ զոր կոչէ Արքայից Արքայ. 539. Լուկուղղեայ հրաշալի փրկութիւնն 'ի մահուանէ, 544. տագնապէ զՄիհրդատ. 545. 546. ձերբակալ առնէ զքոյր նորա. 547. Միհրդատ յուսահատեալ տայ սպանանել զազգականս. 547. 548. անկանի առ Տիգրան. 549. Լուկուղղոս գրաւէ զփոքր Հայս. 549. խնդրէ 'ի Տիգրանայ զՄիհրդատ. 549. 555. խաղայ ընդդէմ Տիգրանայ և Միհրդատայ. 560. 563. 565. Տիգրան խաղայ ընդդէմ Լուկուղղեայ. 567. պարտի. 572. 573. քաջալերի 'ի Միհրդատայ. 575. Լուկուղղոս խնդրէ խաղալ ընդդէմ Պարթևաց. 578. խաղայ դարձեալ ընդդէմ Տիգրանայ և Միհրդատայ, և պարտէ. 581. խնդրէ դարձեալ խաղալ, և թշուառանայ. 588. 589. 591. դառնայ 'ի Հռոմ և յաղթանակէ. 593. 594. մեծութիւնք Լուկուղղեայ. 597—601. մատենադարան նորա. 601. մենանայ և ծիւրեալ մեռանի. 604.

Լուսիտանիա: Տե՛ս 'ի Սերտորիոս:

Խեցեկոյտ վՃիռն Յունաց, զինչ ինչ. Գ. 20. 21.

Կալանոս, մեծ մերկիմաստակ Հնդիկ. Ե. 129. 130. 135.

Կալլիսթենէս իմաստասէր. Ե. 106. 107. 109—112.

Կաղնուոյ պսակն զինչ իցէ առ Նախ-
նիս. Բ. 230.

Կամիլլոսի զարմն. Ա. 491. չափաւորու-
թիւն և խոհեմութիւն նորա. 490. իշխա-
նապետ կարգի. 497. առնու զմայրաքա-
ղաքն Վէյացւոց. 500. յաղթանակէ բարձ-
բայօնս. 502. արդարութիւն նորա. 509.
ինքնին տարագիր մեկնի 'ի Հռովմայ. 512.
հրոսակ տայ 'ի վերայ Կեղտաց. 535. Հռո-
մայեցիք անձկան Կամիլլեայ. 536. միւսան-
գամ կարգի իշխանապետ. 539. յաղթու-
թիւն նորա 'ի վերայ Կեղտաց. 547. պար-
տէ զԼատինս. 557. յաղթանակ նորա. 560.
իշխանապետ հնգիցս անգամ, 'ի մարտ
ընդդէմ Կեղտաց. 571. յաղթութիւն նո-
րա. 573. մեռանի խաղաղութեամբ. 577.

Կապանք մեծամեծք լերանց, ծակեալ 'ի
Լուկուղղոսէ. Գ. 597.

Կապետոլիոն 'ի Հռովմ. Ա. 533. 537.
538. զԿապետոլիոն ապրեցուցանեն Սագք.
541.

Կասպից ծով. Դ. 286. Ե. 241. Տէս և
Վրկանայ ծով.

Կասսանդրոս. Զ. 33. 42.

Կասսիոս. Զ. 350—354. 365. 384. 385.
387. մահ նորա. 410.

Կատիլինաս. Ե. 514. . . . Տէս և 'ի Կի-
կերոնէ:

Կատոնէ մեծ. զարմն նորա. Գ. 65. բոյս
մարմնոյն և Ճարտարաբանութիւն նորա.
66. 87. կորովութիւնն և սովորութիւնք
նորա. 67. 68. պարապել նորա 'ի գպրու-

թիւնս Հելլենացւոց. 69. կոչի Դեմոսթենէս Հռոմայեցի. 72. բարք նորա. 73. 76. 77. առաձք նորա. 78—83. կարգի հիւպատոս. 83. նուաճէ Ժողովուրդս բաղումս յայնկոյս Սպանիոյ. 83. 84. յաղթանակէ. 85. մրցանքն Կատոնի. 90. ամբաստան կայ զարանց չարաց. 92. կարգի համարակալ. 96. արիութիւն նորա. 100. անդրի կանգնեն նմա. 101. քաղաքավարութիւն կենացն. 102—106. հետամուտ լինի 'ի շահրստացութիւն. 106. կարծիք նորա ընդդէմ բժշկաց և բժշկաբանութիւն նորա. 110. 111. մատենագրութիւն նորա. 114. խորհուրդ տայ քանդել զԿարթեդոն. 116. մեռանի. 117.

Կատոնն կրսեր. զարմն նորա. Դ. 441. բարք նորա և դիմագրութիւն. 442—444. 448. 416. վարժի 'ի Ճարտարախօսութեան. 447. սովորութիւնք նորա. 450. 455. 456. շրջի յԱսիա 'ի զննել զսովորոյթս. 457. անշքութիւն նորա. 458. ակնածելի 'ի Պոմպէէ. 460. 461. ընչատեցութիւն նորա. 461. գանձաւորութիւն նորա 'ի Հռոմ. 463. արդարութիւն նորա. 466. Ճարտարաբանութիւն նորա մեծ. 470. խորագիտութիւն նորա. 471. 486. կարգի Ժողովրդապետ. 473. ատենաբանութիւն նորա հրաշալի. 476. քաջասրտութիւն նորա աննման. 479—482. 489. 491. 510. գնացք նորա զարմանալի ընդ Պտղոմեայ արքային Եգիպտացւոց. 495. դարձ նորա մեծափառ 'ի Հռոմ. 501. նախատեսութիւն նորա. 507.

ատենաբանութիւնն. 522. փախչի ընդ Պոմ-
պէի. 524. Ճարտարաբանութիւնն. 528.
գնայ 'ի Լիբիա. 532. 'ի նեղ անկեալ՝ յու-
սահատ անձին առնէ. 554.

Կարմիր ծով. Զ. 105.

Կարնէադէս ակադեմեան Աթենացի ի-
մաստասէր. Գ. 107.

Կարքեդոն: Տես 'ի Կատոնէ. և 'ի Մա-
րիոս.

Կաւկաս. Դ. 288. Ե. 241. Զ. 17. 154.

Կեղտք: Տես և Գաղատացիք, և 'ի Կա-
միլլոս: Հորդան տան միւսանգամ յԱ-
դրիական ծովէն 'ի վերայ Հռովմայ. Ա.
570. զէնք նոցա. 571.

Կեսար փոքր: Տես յԱնտոնիոս: Զ. 400.

Կեսար, պատմագիր Հռոմայեցի. Բ. 569.

Կերկիւոն գօտէկռիւ, սպանեալ 'ի Թէ-
սէոսէ. Ա. 16.

Կերպերոս, շուն. Ա. 50.

Կիլանողական հայելւոյ ստորագրու-
թիւն. Ա. 245.

Կիլիկիա. Դ. 285. Զ. 187.

Կիկերոնի զարմն. Ե. 497. ուսումնա-
սիրութիւն նորա. 499. խառնուած նորա.
501. 502. զուարթաբանութիւն նորա. 505.
508. կարգի զօրավար. 510. հիւպատոսու-
թիւն նորա. 512. տապալէ զԿատիլինաս.
522—533. զօրութիւն Կիկերոնի. 536. մե-
ծապէս գովէ զԱրիստոտէլ և զՊղատոն.
537. առածք նորա. 339—544. վտանգի.
549—552. դառնայ 'ի Հայրենիս. 555. եղա-
նակ ատենաբանութեան նորա. 557. կու-

սակալէ Կիլիկիոյ. 558. Կիկերոնէն յԱթէնս. 560. ատենաբանութիւն Նորա. 565. զօրացեալ հալածէ զԱնտոնիոս. 575. Թըշուառանայ. 178. խողխողի. 581.

Կիմբրացիք. Գ. 228. 229. ահագին քաջութիւն նոցա. 252. զէնք և կազմած նոցա. 257—259. կանայք նոցա. 260. 261: Տե՛ս և 'ի Մարիոս:

Կիմոնէի զարմն. Գ. 471. բարքն Նորա. 473. դիմադրութիւն Նորա. 464. զօրավար կարգի ծովապետ. 475. յաղթութիւն Նորա. 478. գտանէ զգերեզման Թէսէոսի. 481. հնարիմացութիւն Նորա. 482. առատաձեռնութիւնն. 485. սանձէ զհպարտութիւն արքային Պարսից. 488. 491. հիւանդացեալ մեռանի յարշաւանին. 506.

Կինէաս Թեսաղացի Ճարտասան մեծ՝ աշակերտ Դեմոսթենեայ, բնակակից և իմաստուն խորհրդական Պիւռռոսի. Գ. 159. Կինէաս 'ի Հռոմ. 173.

Կիննաս. Գ. 288. 289. 294.

Կիւրոս մեծ. Ե. 66. Գերեզման Նորա և դամբանագիր. 135. Զ. 443.

Կիւրոս, որդի Դարեհի եղբայր Արտաշէսի. Զ. 441. բարքն Նորա. 442. 443. 444. 447. մահ Նորա 'ի պատերազմի. 455—457.

Կիւքրէաս Սաղամինացի ատտուածօրէն պատուեալ առ Աթէնացիս. Ա. 15.

Կղաւդիոս Ապպիոս հոյակապ այր. Գ. 171.

Կղէտուր. դաւառ. Զ. 156. 187.

Կղէոմբրոդոս. Ե. 290. 292.

Կղէոմենէս. բարք Նորա. Ե. 300. 301. խորհի կարգաւորել զԱպարտիա. 307. դաւաճանէ զպարէտան. 810. կարգաւորութիւն Նորա. 317. հորդան տայ յԱքայիա. 325. նաւէ յԱղէքսանդրիա. 349. 'ի դիպաՀոջ արգելանի. 354. մահ Նորա. 358.

Կղէոպատրէ. Զ. 137—141. բազմալեզու. 141. 145. 156. 187. 195. 206. 216. դամբարանք Նորա մեծագործք. 219. ձերբակալ լինի. 228. խօթանայ. 231. մահ Նորա. 235.

Կղիտոս. ահագին դէպք Նորա առ Աղէքսանդրիս. Ե. 102.

Կողքիս. Դ. 287.

Կոննիդաս. դաստիարակ Թէսէոսի. Ա. 7.

Կորիողանոսի զարմ. Բ. 127. նահատակութիւնք Նորա. 230. մայրասիրութիւն Նորա. 232. ահագին նահատակութիւն Նորա առ Կորիողանոսն քաղաքաւ. 236. 237. 240. մրցանակ Նորա. 241. հիւպատեան բարձին հետամուտ լինի. 247. մերժի. 249. ծանրացասուցն ընդդէմ դառնայ ժողովրդապետութեան. 251. դատապարտի. 256. վտարանդի անդարձ. 260. անզարհուրելի կիրքն. 261. կարգի 'ի Վրսկէանց զօրավար ընդդէմ Հռոմայեցւոց. 270. խաղայ 'ի Հռոմ. 274. զինչանի 'ի պաղատանս մորն և չու առնէ 'ի Հռոմայ. 283. խողխողի 'ի Վալսկէանց. 291.

Կորդիք, գաւառ 'ի Հայս. Դ. 289.

Կորնթացիք. Բ. 63. 64. գովութիւն

մեծ՝ քաղաքին Նոցա. 341.

Կուիրինոս, կոչումն. Ա. 128.

Կուռնելիա մայր Գրակքեանց. Ե. 430.

Կուռնելիոս Նեպոս պատմագիր Լատին. Բ. 569.

Կուր գետ. Դ. 286.

Կտակ առնելոյ սովորութիւն Հռոմայեցւոց 'ի սկզբան պատերազմի. Բ. 238.

Կտեսիաս պատմագիր Յոյն. Զ. 460. 468.

Կրասսոսի զարմն. Դ. 69. ընչասիրութիւն նորա. 70. առատաձեռնութիւնն. 73. փաստաբանութիւն նորա. 73. խմաստասիրութիւնն. 74. Յիբերիա բնակութիւն նորա 'ի քարանձաւի. 75—77. անցանէ 'ի Լիբիա. 77. բարք նորա. 81. 82. մեծագործութիւնն. 88. հիւպատոսանայ. 93. տեղիչ Կրասսոսի վասն պարթևական մարտին. 100. չու առնէ, կապէ կամուրջ 'ի վերայ Եւփրատայ. 102. մեծաբանս պատասխանէ դեսպանացն Արշակայ. 104. ստորագրութիւն զօրուն Պարթևաց. 105. դաւեալ խպղայ ընդ անկոխին. 111. հորդան տայ ընդդէմ Պարթևաց. 115. կռուի և վատթարի. 117—123. գիշեր ցաւագին Հռոմայեցւոց. 124—126. գիշերագնաց փախուստն. 128. Կրասսոս սպանանի 'ի Պարթևաց. 135.

Կրեմոնա քաղաք Իտալիոյ. Զ. 556.

Կրիւսոս արքայ Լիւդացւոց, և անցք նորա. Ա. 351. . . .

Կրոմիւնեան կինձ սոսկալի՝ տապաստ արկեալ 'ի Թէսէոսէ. Ա. 14.

Համարակալքն Հռոմայեցւոց զինչ ի-
ցեն. Բ. 434. Գ. 94.
Հայոց աշխարհ. Դ. 284. 286. Զ. 154.
156. 159. գովութիւն աշխարհին Հայոց՝
զոր Երջանիկ աշխարհ կոչէ Պլուտարքոս.
180. 182. 187. 189. 190. 198. Հայոց ար-
քային հանդերձաւորութիւնն արքունի.
Զ. 188. Հայոց զօրուն գովութիւն. Զ. 181.
Հայք, նիզակակիցք Սիւղղասայ. Գ. 374.
Հեկաղեայ առասպելաբանութիւնն.
Ա. 20.
Հեկտոր. Ա. 55.
Հերակլէս հալածիչ աւազակաց. Ա. 10.
Հերակլեայ վարք գրեալ 'ի Պլուտարքո-
ս է և կորուսեալ. 47. Հերակլէս հալածիչ
բռնաւորաց. 213. Գ. 309.
Հերակլեան արձանք. Ե. 133. Զ. 199.
Հերոդոտոս պատմագիր Յոյն. Գ. 47.
Հերովդէս Հրէայ. Զ. 198. 215.
Հերոնն արքայ Սիրակուսացւոց. Բ. 536.
Հեփեստիոնն բարեկամ մեծ՝ Աղեք-
սանդրի. Ե. 96. 111. 140.
Հիպպոկրատէս բժշկապետ Յոյն. Գ.
110.
Հոմերոս. Ա. 154. 155. Բ. 162. քեր-
թուածք նորա. 279. գովութիւն նորա.
360. 447. 476. 512. 583. 588. 597. Գ. 182.
Ե. 19. 55. 56. Տե՛ս և 'ի Լիւկուրգոս։
Հռեմոսի ծնունդն. Ա. 68. մահ նորա. 82.
Հռոմայեցւոց հնոց ճշդութիւնն 'ի դե-
նին. Բ. 516—518. ծերակուտին նոցա գո-
վութիւն մեծ. Գ. 173. ազգարարութիւն

նոցա հրաշալի առ Պիւռռոս. 176.

Հռոմուլոսի ծնունդն. Ա. 68. Հռոմուլոս շինէ զՀռոմ. 83—85. կառավարութիւն նորա. 87. 88. յաղթանակն նորա. 95. 96. կռուի ընդ Սաբինացիս. 102. միաբանի ընդ նոսա. 105. 106. օրէնք նորա. 112. տիրապետէ. 120. Հռոմուլոս անհետանայ 'ի միջոյ. 122.

Հռովմայ անուանակոչութիւնն. Ա. 63. 64. առաջին բնակիչք նորա. 239. խաղաղութիւն նորա յաւուրս Նումայի. 270. քանդումն նորա 'ի Կելտաց. 532. 533. նորոգումն. 552. ահաբեկութիւն Հռոմայեցւոց առ 'ի Կելտաց. 574.

Ղասիթեայք. Ա. 46.

Ղեւոնդ զօրավար Կորնթացի 'ի Սիկիլիա. Բ. 334.

Ղիւտիոն, հռչակաւոր ցուպ հաւահըմայ Հռոմուլոսին. Ա. 553.

Ճեմականք. Գ. 423.

Ճեմելիքն Արիստոտէլի. Ե. 18.

Մադոն զօրավար Կարթեդոնացւոց. Բ. 333. 336. 337.

Մատենադարանն Տէյոսի յԱթէնս. Գ. 422.

Մարաթոնեան ցուլ սպանեալ 'ի Թէսէոսէ. Ա. 20.

Մարդոնիոս զօրավար մեծ Պարսից. Գ. 26. 28. 34. 36. 41.

Մարիոսի Գայիոսի գիտակ երեսաց և բարքն. Գ. 214. զարմն նորա. 215. քաջութիւն նորա. 216. կարգի ժողովրդապետ և զօրավար. 217. 218. քաջասրտութիւն

նորա. 221. կարդի հիւպատոս 224. անցանէ 'ի Լիբիա. 229. դառնայ 'ի Հռոմ և խաղայ ընդդէմ Տեւտոնաց. 237. յաղթէ Ամբրոնաց և Տեւտոնաց. 247. 249. հնգիցս հիւպատոսանայ. 251. խաղայ ընդդէմ Կիմբրացւոց. 256. տարփայ և վեցերորդի հիւպատոսութեան. 262. գնայ առ Միհրդատ. 269. կարդեալ 'ի զօրավար՝ փախչի յերեսաց Սիւղլասայ. 276. աշխարհելի կիրք Մարիոսի. 277—282. ձերբակալ լինի. 282. արձակի. 285. թափառի մինչև 'ի Կարքեդոն. 287. անկանի առ Կիննաս. 289. 290. մտանէ ընդ Կիննասայ 'ի Հռոմ. 293. առնէ կոտորած. 294. հիւպատոսանայ եօթնիցս. 297. 'ի մեծ տագնապ անկանի. 298. վատթարեալ խելացնորի և մեռանի. 299. 300.

Մարկեղղոսի զարմ, գովութիւն նորա. Բ. 511. 512. հիւպատոսանայ. 518. ահագին նահատակութիւն նորա ընդդէմ արքային Գաղատացւոց. 521. առնու զՄեդիոլան մայրաքաղաք Կելտաց. 522. մեծ յաղթանակ նորա. 523. Մարկեղղոս կոչի սուսեր. 526. յաղթէ Աննիբաղայ. 529. նաւէ 'ի Սիկիլիա. 532. խաղայ 'ի Սիրակուսա. 435. առնու զնա. 544. դառնայ 'ի Հռոմ, և խաղայ ընդդէմ Աննիբաղայ. 556. յաղթէ. 561. 'ի դարանամտաց սպանանի. 567. անդրի նորա փառաւոր. 599.

Մարք, դիպաղեղունք 'ի բանակին Տիգրանայ. Գ. 58. Ջ. 463. 188. 198.

Մեգարացւոց թաղումն մեռելոց. Ա. 313.
Մեգիոլան մայրաքաղաք Կելտաց. Բ. 222.
Մեդիա. Ա. 18.
Մենքենայք և մանգղիոնք Դեմետրիոսի. Զ. 38. 39.
Մեռելոց սուգ առ Հռոմայեցիս. Ա. 250.
Մետեղլոս Կեկիլիոս հիւպատոս Հռոմայեցւոց, զօրավար ընդդէմ Յուգուրթասայ. Գ. 221. ինքնին տեղի տայ 'ի Հռոմայ. 267. Մետեղլեայ վարք գրեալ 'ի Պլուտարքոսէ և կորուսեալ. 267. դարձուցանեն զՄետեղլոս 'ի Հռոմ. 269.
Մերկիմաստակքն Հնդկաց. Ե. 127. սովորութիւն նոցա 'ի մահուն. 235. 136.
Միաբանութեան տաճար 'ի Հռոմ ուխտեալ 'ի Կամիլլեայ և կանգնեալ 'ի Հռոմայեցւոց. Ա. 576.
Միլտիադէս զօրավար մեծ Յունաց. Ա. 429. Գ. 16.
Միհր, դիք Պարսից. Ե. 65.
Միհրդատ արքայ Պոնտոսի. Գաղտնի արձանագրութիւնք նորա. Դ. 291. 292. Մահ միհրդատայ. 297. 298. Տե՛ս և 'ի Սիւղլաս, և 'ի Լուկուղլոս, և 'ի Պոմպէոս, և 'ի Սերտորիոս:
Մինաս, հէն. Զ. 150.
Մինովս արքայ Կրետայ. Ա. 21.
Մինոտաւրոս, գազան. Ա. 21.
Մծբին, քաղաք ընդարձակատարը և

բազմաժողով, յամենաբեր գաւառի, ընդ տէրութեամբ Տիգրանայ. Գ. 583.

Մուտիոս Աշէվոլա. Ա. 396. 397.

Յաննոս Թագաւոր յոյժ վաղնջուց. Ա. 269. մեհեան նորա 'ի Հռոմ, և երկիլմի դրոշեալն. 269.

Յասոնն Արգոնաւուն իշխան. Ա. 27.

Յոբ Թագաւոր, քաջ պատմաբան. Գ. 633.

Յուգուրթաս ազգայ 'ի Լիբիա. Գ. 221. 224. 226. 227. 232.

Յուլիոսի Կեսարու զարմ. Ե. 153. ծովագնացեալ անկանի 'ի ձեռս ասպատակաց. 154. Ճարտարաբանութիւն նորա. 157. կուսակալութիւն նորա Լիբերիա. 169. հիւպատոսութիւն նորա. 175. սովորութիւնք նորա. 180. յաղթութիւնք նորա. 181. 194. խորհուրդ Կեսարու տասպալէլ զՊոմպէոս. 197. հետամուտ լինի Պոմպէի. 209. իշխանապետ կարգի. 211. հասանէ 'ի Փարսաղիա. 219. յաղթէ Պոմպէի. 225. նաւէ յԱղեքսանդրիա. 226. յաղթութիւն նորա. 231. դառնայ յԻտալիա. 231. կարգի ջորրորդ անգամ հիւպատոս. 237. յաղթանակէ. 238. փառաւորի յոյժ. 239. 244. ազգ նմա լինի վասն գաւոլացն իւրոց. 253. գաւաճանի և մեռանի. 255. 256.

Յուշկապարկաց հարսանիք. Ա. 48.

Նասիկաս Սկիպիոն. Բ. 393. յաղթութիւն նորա 'ի վերայ Պերսէոսի. 395. Գ. 117.

Նաւն Թէսէոսի երեանաթի հռչակաւոր. Ա. 34.

Նեստորն Հոմերեան. Զ. 394.

Ներոն կայսր յաղատութիւն կարգէ զՀելլենացիս. Բ. 649. Զ. 238. 500. 526. պատկերք նորա. 548.

Նիկարքոս նախահաւն Պլուտարքոսի. Զ. 211.

Նիկիասայ զարմն. Դ. 5. հանդէս նորա. 8. երկիւղածութիւն նորա. 10. վատասիրտութիւն նորա 'ի զբպարտութիւնս. 11. կարգի իշխանապետ. 12. կարգի զօրավար. 14. միջնորդ լինի խաղաղութեան. 22. գընայ 'ի Սպարտիա. 25. բարք նորա. 26. ընդդէմ դառնայ արշաւանին Աթենացւոց 'ի Սիկիլիա. 28. ընտրի զօրավար 'ի Սիկիլիա. 30. ակամայութիւն նորա 'ի նոյն. 33. տէրութիւն նորա. 35. պատէ զՍիրակուսա. 39. ախտակրութիւն նորա. 39. յաղթէ. 40. պարտի. 46. զահի հարկանի 'ի խաւարմանէ լուսնի. 53. հարուածս մեծ առնու. 57. աշխարհելի կիրք Նիկիասայ. 59. 61. 62. ձերբակալ լինի. 63. ողբալի մահ նորա. 69.

Նիմֆիդիոս Հռոմայեցի. Զ. 509. 510. 516. 518.

Նուիրական գունդն երեքհարիւրոց Թեբայեցւոց հռչակաւոր. Բ. 475—478.

Նումաս երկրորդ Թագաւոր Հռոմայէր 'ի Սաբինացւոց. Ա. 222. զարմ և ծնունդ նորա և վարք նորա. 227—229. ընտրի 'ի Թագաւոր. 232. հրաժարի 'ի Թա-

դէն. 232. յանձն առնու. 236. օրինադրու-
թիւն նորա. 238. քաղաքականութիւն նո-
րա. 240. վարդապետութիւն նորա զԱ-
ստուծոյ. 241. հաստատէ զՎեստեան կու-
սանան. 246. 528. քաղաքավարութիւն նո-
րա. 256. 262. օրէնք նորա. 258. 263—265.
մեռանի 'ի ծերութենէն. 274. յուղար-
կաւորութիւն նորա. 275. մատեանք Նու-
մայի. 275. 276.

Ընքաղց ախտին ստորագրութիւն. Զ.
379.

Շուշա մայրաքաղաք. Ե. 78. 79. 137.

Ոթոնն. Զ. 525. 526. 528. հիւպատոսա-
նայ. 529. 533. 535. ինքնակալ անուանի.
535. 540. 542. քաղաքականութիւն նորա.
546. 550. խաղայ 'ի մարտ. 553. 559. ատե-
նաբանութիւն նորա. 570. անձնասպա-
նութիւն նորա. 673.

Ոլիմպիա մայր Աղեքսանդրի մեծի. Ե.
8. 9. 83. 134.

Ողիմպեայ լերին բարձրութիւն. Բ.
394.

Ոսիոլիոս Տուղղոս երրորդ թագաւոր
Հռովմայ. Ա. 277.

Որմիզդ, դէք Պարսից. Ե. 64. Զ. 490.

Պալլասեանք. Ա. 18.

Պանսաւքոս զօրավար Դեմետրի հուժ-
կու անհնարին. Գ. 144.

Պատրոկղոս. Ա. 55.

Պարթևք, սովորութիւն նոցա 'ի մար-
տի. Դ. 116. Ե. 241. Զ. 160. 161. 162. 164.
166. 167. Տե՛ս և 'ի Կրասսոս և 'ի Պոմպէոս:

Պարիւսատեայ Թագուհւոյն Պարսից՝ գործքն. Զ. 443. 466. 469. 477.

Պարմենիոնն. Ե. 33. . . .

Պարսից, Նորոյ Թագաւորի արարողութիւնք. Զ. 443.

Պաւղոս Եմիլիոս առաջին. Բ. 115. 116. անկանի 'ի մարտին Աննիբաղայ. 117. 119. 120.

Պաւսանիաս. Ա. 467. 468. Գ. 29. 34. 38. 40. 42. 43.

Պեղոպիդէս, զարմն Նորա. Բ. 449. Նախանձաւոր Եպամինոնդեայ. 450. 452. Նիզակակից Նորա. 452. դատապարտի յաքսորս 'ի բռնաւորաց. 454. խորհի ազատել զՀայրենիս. 455. ծպտեալ մտանէ 'ի քաղաքն. 459. Նահատակեալ գիտապատառանէ զԼէոնտիդէս բռնաւոր 'ի դիշերի 'ի տան Նորա. 465. ազատութիւն տայ Հայրենեաց. 465—467. կարգի Բիովտարքոս. 468. յաղթութիւն Նորա մեծ. 474. զօրավար Նուիրական գնդին. 478. 479. քաջութիւն Նորա մեծ. 483. 484. խաղայ զօրու 'ի Թեսսաղիա. 489. ձերբակալ լինի 'ի Թշնամեաց. 492. փրկի 'ի ձեռն Եպամինոնդեայ. 497. գովութիւն Նորա առ Արտաշէսի 'ի Պարս. 498. միջամուխ Նահատակեալ 'ի մարտին անկանի. 504. գիահանք Նորա մեծ. 505.

Պեղոպս Թագաւոր 'ի Պեղոպոննիսոս. Ա. 5.

Պերիգունէ դուստր Սիննասայ. Ա. 13.

Պերիկղէս. զարմն Նորա. Բ. 11. պատ-

կերքն. 11. մեծ համբերութիւն նորա. 15. ձիրք նորա և միտել նորա 'ի ժողովուրդն. 18. հզօր ճարտարախօսութիւնն. 21. առաձք նորա. 22. նկուն առնէ զԱրիսպագն. 24. քաջամարտիկ հանգէս նորա. 26. քաղաքականութիւն նորա. 30. շինութիւնք նորա հոյակապք. 30—39. յինքն գրաւէ առհասարակ զտէրութիւն Ա թենայ. 39. տնտեսութիւն նորա. 43. զգուշաւորութիւնն 'ի մարտի. 47. դիմէ 'ի Պեղոպոնիսոս. 49. նաւագնաց լինի 'ի Պոնտոս. 49. խաղայ յԱտտիկէ. 52. արշաւէ 'ի Սամոս. 57. 58. մեծանձնութիւնն 78. հարկանի 'ի սրածութենէ. 80. մեռանի. 81.

Պերիփիդէս, Լախտաւոր. Ա. 13.

Պերսեփոնէ. Ա. 50.

Պերսէոս արքայ Մակեդոնիոյ. Բ. 379. ոգորի ընդ Հռովմայ. 379. 382. ընչաքաղցութիւն նորա. 386—389. պարտութիւն նորա. 395. բանակին նորա ստորագրութիւն. 399. խորտակումն նորա. 405. Պերսէոս փախստեայ. 409. 413. անձնատուր առ Հռոմայեցիս. 414. նորանշան մահ նորա. 432.

Պինդարոս քերթող Յոյն. Բ. 550. Դ. 4.

Պիսիդրատոս Ա թենացի. Ա. 352. 355. 358.

Պիտթէոս հաւն Թէսէոսի. Ա. 5. 6.

Պիրիթոս. Ա. 47. 48.

Պիւթագորաս իմաստասէր. Ա. 240. 241. 242.

Պիւթագորեանց կարծիք վասն հոգա-

դընտոյս. Ա. 249.

Պիւռռոսի զարմն. Գ. 134. դիմագրութիւն նորա. 137. տակաւին պատանեակ՝ քաջանայ. 138. արձակի յԵպիռոս արքայանալ. 139. նահատակութիւն նորա. 145. գովութիւն նորա. 146. բարք նորա. 147. համբաւի արքայ Մակեդոնիոյ. 153. յԻտալիա հրաւիրի 'ի զօրավար. 158. նաև յԻտալիա. 162. նահատակութիւն նորա ընդդէմ Հռոմայեցւոց. 166—170. պարտէ զՀռոմայեցիս և պարտի. 178. հրաւիրի 'ի Սիկիլիա. 180. ահագին նախճիրք նորա. 185. պարտի 'ի Հռոմայեցւոց. 188. դառնայ յԵպիռոս. 189. նախճիրք նորա 'ի Լակեդեմոնիա. 198. հրաւիրի յԱրգոս. 199. դարձեալ ահագին նախճիրք նորա. 201. խուճապի. 207. հարկանի կղմնտրաւ 'ի կնոջէ, և ապա գլխատի. 208. 209.

Պիւռռոսեան կաքաւ. Ա. 256.

Պլուտարքոս խոստանայ ճշմարտավէպ լինել. Ա. 3. 4. վարդապետութիւն նորա վասն հոգւոյ. 127. խմաստասիրութիւն նորա վասն ամուսնութեան. 305. 306. վարդապետութիւն նորա վասն դրօշելոց. 501. 502. վասն ձախողակ աւուրց. 524—527. վասն առաքինութեան. Բ. 10. վարդապետութիւն նորա վասն աստուածային աղդեցութեանցն՝ հանդերձ պահելով զանձնիշխանութիւն մարդոյ. 280. վասն հրաշից. 288. 289. վասն ընդերկրեայ ջրոց. 391. վասն խաւարման լուսնի. 398. վասն

աստուածութեան. Գ. 18. 19. Պլուտարքոս նաև 'ի Յիշատակարանաց և 'ի վաղընջուց Հրովարտակաց ժողովէ զպատմութիւն իւր. Դ. 5. վարդապետութիւն նորա վասն արդարութեան. 511. 512. գովէ զՀռոմէական լեզուն. Ե. 447. խորհրդածութիւն նորա վասն տիեզերակալացն. Զ. 110. և վասն քաղաքին Աթենայ. 337.

Պղատոնի կարծիք վասն հոգագնտոյս. Ա. 250. վարդապետութիւն նորա յաղագս քաղաքականութեան. 272. Պղատոնի ձեռնարկեալ 'ի Ճառ Ալանտեան կղզւոյն, մեռանի. 359. Բ. 21. 159. 477. 606. Գ. 69. 300. 309. 338. Գ. 54. Զ. 156. 258. 268. 270.

Պողիւբիոս պատմագիր Ցոյն. Բ. 611. 612. Գ. 83.

Պոմպէի զարմն. Դ. 229. բարք նորա և դիմագրութիւնն. 230. 318. սակաւապիտութիւն նորա. 232. փաստաբանութիւն նորա. 234. զօրավարէ. 237. նահատակութիւն նորա. 238. նաւէ 'ի Լիբիա. 244. Մէծ կոչիլն նորա. 248. յաղթանակէ պատանի գոլով. 250. չու առնէ յԻբերիա. 255. դառնայ յԻտալիա. 260. հիւպատոսանայ. 261. իշխանանայ առհասարակ. 268. մաքրէ զծովն յասպատակաց. 271. քաղաքականութիւն նորա. 274. զօրավար ընտրի ընդդէմ Տիգրանայ և Միհրդատայ. 276. 281. մտանէ յաշխարհն Հայոց. 284. դաշն կռէ ընդ Տիգրանայ. 285. ինչանէ յԱսորիս. 293. առնու զՀրէաստան. 293. մեծութիւն նորա. 294. յաղթանակ նորա

մեծ 'ի Հռոմ. 302. ընտրի միայնակ Հիւ-
պատոս. 322. ամբարտաւանի. 327. 328.
լքանէ զՀռոմ. 334. փարատղեան մարան
նորա ընդ Կեսարու. 345—354. պարտի. 359.
փախչի յԵգիպտոս. 361. սպանանի. 365.

Պոնտիոս Կուինիոս, դժուարին հրեշ-
տակութիւն նորա 'ի Կապեատոլիոն. Ա.
537—540.

Պոպղիկոլաս, կոչէր յառաջն Պոպղիոս
Վաղերիոս. Ա. 363—366. յաղթանակէ
փառաք. 380. կարգաւորութիւնք նորա, և
օրէնք. 384—387. յաղթութիւն նորա 'ի
վերայ Տիւրրենացւոց. 396. ընտրի չորրորդ
անգամ Հիւպատոս. 402. յաղթութիւն
նորա 'ի վերայ Սաբինացւոց. 406. յաղթա-
նակէ և մեռանի խաղաղութեամբ. 408.

Պովրաս արքայ Հնդկաց, հսկայ. Ե. 119.
120. 121.

Պորկիա կին Բրուտոսի. Զ. 359. 360.
363. 376.

Պորսենաս Կղարաս, հզօր թագաւոր
Յիտալիա. Ա. 393. 398. 401. մարտ նորա
ընդդէմ Հռոմայեցւոց. 394.

Պտղոմէոս. Զ. 29. 30. 33. 34.

Պտղոմեայ Փիլոպատորի, նաև ահա-
գին յոյժ. Զ. 80.

Սաբինացւոց կանանցն յափշտակու-
թիւն. Ա. 89.

Սալլուստիոս պատմագիր Լատին. Գ.
533. 584.

Սաղամինացւոց թաղումն մեռելոց. Ա.
313.

Սաղէան քուրմք առ Հռոմայեցիս. Ա. 251. 253. 254. կաքաւ Սաղէան քրմացն. 255.
Սամոսատ քաղաք. Զ. 152.
Սամոսացիք. Բ. 59. 61.
Սատիւրոս, Պայ. խառնակերպարան դազան, Գ. 424. Ե. 52.
Սելեւկոս. Զ. 17. 33. 54. 59. 92.
Սեմպրոնիոս Հռոմայեցի, նահատակ քաջ. Զ. 539.
Սենեկայ իմաստասէր. Զ. 427.
Սերտովրիոսի զարմն, և մայրաքաղաքութիւն նորա յոյժ, և փաստաբանութիւնն. Գ. 621. կորովութիւն նորա. 622. հնարիմացութիւն նորա. 623. կարգի զօրավար. 624. նաւէ յԻբերիա. 630. ցանկայ երթալ յԱղանանեան կղզիս. 632. նաւէ 'ի Լիբիա. 632. տայ փորել 'ի Լիբիա զգերեզման հսկային Անտէյոսի. 633. հրաւիրի 'ի Լուսիտանիա 'ի զօրավար միահեծան. 635. Եղէն նորա պատմութիւնն, և հնարիմացութիւնն. 635—637, 653. կռուի ընդդէմ Հռոմայեցւոց. 637—641. դասաւորակութիւն տայ մանկանց Լուսիտանացւոց. 641. իմաստութիւն նորա. 645. հնարիմացութիւն նորա. 646—648. յաղթէ Հռոմայեցւոց. 650—655. բարք նորա. 656. 657. բանագնացութիւնք նորա ընդ Միհրդատայ. 658—661. դաւաճանի Սերտովրիոս. 663. վէրս առնու յընթրիս և մեռանի. 664.
Սիննիս, հուժկու աւազակ. Ա. 13.
Սիպարացիք, գրդացեալք. Բ. 446.
Սիւղլասայ զարմ. Գ. 367. գիմագրու-

թիւն նորա. 368. բոյս բարուց նորա. 364. 379. նաւէ 'ի Լիբիա. 370. առաքի ընդդէմ Միհրդատայ. 374. յիշատակագիրք նորա. 377. 378. կարգի հիւպատոս. 380. խաղայ ընդդէմ Հռովմայ. 385. խաղայ ընդդէմ Միհրդատայ. 389. ձեռն արկանէ 'ի նուիրական դանձս Եղեսդայ. 392. առնու զԱթէնս. 397. յաղթութիւն նորա ընդդէմ բարբարոսաց. 411. դաշն նորա ընդ Միհրդատայ. 418. խօսակցութիւն նորա ընդ նմա. 420. նահատակութիւն նորա. 432. տիրէ Հռովմայ. 435. ածէ կոտորած. 436. իշխանապետ զանձն անուանէ. 439. 'ի խօթութիւն որդանց անկանի. 445. ժայթքէ արիւն և մեռանի. 447.

Սկիպիոն Կուռնելիոս, դառնայ յԻբերիոյ, խորհուրդ տայ արշաւել 'ի Կարքեդոն. Բ. 136. խաղայ 'ի Լիբիա. 138. խորտակէ զԱննիբաղ. 140.

Սկիրոն, աւազակ սպանեալ 'ի Թէսէոսէ. Ա. 15.

Սկիւթացւոց սովորութիւն 'ի գինեբբուս. Զ. 36.

Սկիւտաղան Լակեդեմոնացւոց, զինչ իցէ. Գ. 340. 341.

Սոկրատայ իմաստասիրի, մտերմութիւն և վարժքն առ Աղկիբիադէս. Բ. 153. 157—159. 161. 162. Նիզակակից ընդ Աղկիբիադեայ. 163. Գ. 62. 309.

Սողոնի զարմն. Ա. 295. լինի Երբեմն վաճառական. 297. 298. առած նորա վասն ընչաւէտութեան. 297. 299. քէրթողու-

թիւն նորա. նոյն: Գնայ առ Թաղէս. 303. հնարիմացութեամբ տիրէ Սաղամինոյ. 309. ընտրի իշխանապետ յԱթէնս. 320. Օրինադրութիւն նորա. 323. 327—343. գնայ յԵգիպտոս կենակցի ընդ քրմացն. 345. գնայ 'ի Կիպրոս. 345. գնայ 'ի Սարդի առ Կրիւսոս արքայ և խնամանաբանութիւնք նորա. 346—350. դառնայ յԱթէնս. 353. ձեռնարկել նորա 'ի ճառ Աղլանտեան կղզւոյն և ձեռնթափ լինել. 359. մեռանի. 360.

Սոնքէս Սայիտացի, հին քուրմ Եգիպտացւոց առ Սողոնիւ, լիահանճար և քաջահմուտ. Ա. 345.

Սուրէն զօրավար մեծ Պարթևաց ընդդէմ Կրասսոսի. Դ. 110. 111. 115. 116. 129. 132. 134. 135: Տե՛ս և 'ի Կրասսոս.

Սպարտակոս Թրակացի՝ անուանի զօրավար մենամարտկաց. Դ. 83. 86. 88. 90. 91.

Սպարտացիք: Տե՛ս 'ի Լիւկուրգոս:

Ստատիրա Թագուհի Պարսից. Զ. 447. 469.

Սրածութիւն մեծ յԻտալիա, յաւուրս Հռոմուլոսի. Ա. 115. յաւուրս Նումայի. 253. Սրածութիւն 'ի Հռոմ յաւուրս Կամիլլոսի. 576. Սրածութիւն յԱթէնս յաւուրս Պերիկղէայ. Բ. 74.

Վաղերիոս Մաքսիմոս, պատմագիր Լատին. Բ. 569.

Վաղերիոս Փղակկոս, աւագ այր Հռոմայեցի. Գ. 69. 70.

Վեսպասիանոս. Զ. 551. 552. 553.

Վեստեայ մեհեան, 'ի Նումայէ. Ա. 249.
Վեստեան կուսանքն. Ա. 112. պահապանք անշէջ հրոյն. 245. սովորութիւնք Վեստեանց. 246—249. 527. 529. 550.
Վերգինիոս Հռուփոս. Զ. 510. 511.
Վէմ ահագին անկեալ յերկնից. Գ. 325.
Վէյացւոց մայրաքաղաքին Տիւրրենիոյ նկարագիր. Ա. 492.
Վիտելիոս. Զ. 551. 513—556.
Վիրք, քաջամարտիկք 'ի բանակին Տիգրանայ. Գ. 581. Դ. 286. 291.
Վոլումնիա, մայր Կորիողանոսի. Բ. 232. գնայ 'ի բանակ Վոլսկեանց՝ ողբաւոր առ որդին վասն Հռովմայ 283. 284. 286.
Վոլսկեանք. Ա. 553. 558. 564.
Վրկան. Դ. 287. Ե. 241.
Վրկանայ ծով, որ և Կասպից. Գ. 592. Դ. 288. Ե. 91: Տե՛ս և Կասպից ծով:
Տանջանք սոսկալիք 'ի Պարսս, անուանեալ՝ Կուրից. Զ. 465.
Տարկուինիոս Սուպերբոս, արքայ Հռովմայեցւոց. Ա. 364.
Տարկուինեանց պատերազմ. Ա. 379.
Տարսոն. Զ. 88.
Տաւրոս. Զ. 88. 89.
Տաքսիղէս, արքայ Հնդկաց. Ե. 117.
Տերմերոս, որ գլխոնէն ոգորեալ սպանանէր. Ա. 17.
Տեւտոնք. Գ. 228. 229. 237—239. 242: Տե՛ս և 'ի Մարիոս:
Տիբերիոսի Գրակքեանց, զարմ. Ե. 365.

բարք նորա. 367. 368. քաջութիւն նորա. 370. կարգի ժողովրդապետ. 376. օրէնս տայ. 377. 384. ատենաբանութիւն նորա. 389. մահ նորա. 397,

Տիգրան Բ. արքայ Հայոց. Գ. 539. 554—556. ժողովէ զՄիհրդատ փախստական. 557. 558. 575: Տես և 'ի Լուկուլլոս, և 'ի Պոմպէոս:

Տիգրանակերտ քաղաք մեծ. Գ. 565. Գովութիւն և ստորագրութիւն նորա. 566. 568. 575.

Տիմագորաս, դեսպան Աթենացի 'ի Պարսս. Բ. 499. Զ. 476. 477.

Տիմոկլէայ, ականաւոր կնոջն դէպք. Ե. 27.

Տիմոկրատեայ, նամակաւոր պատգամաւորին օտարոտի դէպքն. Զ. 291.

Տիմոլեոնդ Կորնթացի. զարմն նորա. Բ. 308. բռնաւորատեաց գոլով ոչ խնայէ և յեղբայրն իւր բռնացեալ. 311. անվախութար թախծութիւն նորա. 312. ընտրի 'ի զօրավար ընդդէմ Սիկիլիոյ. հասանէ յիտալիա. 317. յաղթութիւն նորա. 324. 338. հրաշալի փրկութիւն նորա 'ի մահուանէ 331. բնակեցուցանէ զՍիրակուսա. 340. բառնայ զբռնաւորս 'ի Սիկիլիոյ. 343. նահատակութիւն նորա մեծ ընդդէմ Կարքեդոնացւոց. 348. արմատաքի իսկ զբռնաւորութիւնն 'ի Սիկիլիոյ. 358. մերցանակք նորա. 361. գովութիւն նորա. 362. 364. վախճանի խաղաղութեամբ և փառօք. 365.

Տիմոն մարդատեաց. Զ. 213.
Տիտանեանք. Զ. 498.
Տիտոս Փլամինիոս. պատկեր նորա պղնձի և բոյս բարուցն. Բ. 625. հիւպատոսանայ. 627. խաղայ ընդդէմ Մակեդոնիոյ. 628. անձնատուր նմա լինին Հելլենացիք. 633. 636. յաղթէ Մակեդոնացւոց. 638. 639. ազատութիւն քարոզէ Հելլենաց. 643. գովութիւն նորա 645. 646. դառնայ 'ի Հռոմ, յաղթանակէ. 651. կարգի համարակալ. 657. պարսաւի և գովի 'ի պատճառս մահուն Աննիբաղայ. 663. 664. մեռանի. 664.
Տիրիբազ նախարար Արտաշէսի. Զ. 446. հնարիմացութիւն նորա. 480. 486.
Տիւղղոս, Թագաւոր Վոլսկեանց. Բ. 262. անկանի 'ի մարտի. 292.
Տիւփոնեայ սղոխք յԵգիպտոս. Զ. 105.
Տիտոպոն Հռոմայեցւոց, զինչ ի՞նչ. Բ. 558.
Տուսկուղեանք. Ա. 566.
Տրիբունք Հռոմայ, այն են՝ ժողովրդապետք, առաջին կարգեալք. Բ. 235.
Ցլագլուխ երիվարն Աղեքսանդրի մեծի. Ե. 15. 92. 122.
Փաբիոս Մաքսիմոս. զարմն նորա. Բ. 87. հեզութիւն նորա. 88. իմաստնաբան Հարտարասանութիւնն. 89. հնգիցս կարգի հիւպատոս. 89. կարգի իշխանապետ ընդդէմ Աննիբաղայ. 93. խաղայ ընդդէմ. 96. իմաստութիւն նորա. 98. հասանէ յօգն Մինուկիոսի. 111. յաղթէ Աննիբաղայ.

112. Փաբիոսի գովութիւնն. 122. 123. միւսանգամ խաղայ 'ի վերայ Աննիբաղայ. 124. առնու զՏարանտացւոց քաղաքն 129. յաղթանակէ. 133. կոչի Վահան. 526. Փաբիոս խոչընդոտն լինի Սկիպիոնի 'ի բանարշաւանին 'ի Կարքեդոն. 136—138. մեռանի խաղաղութեամբ. 140.

Փաբրիկիոս, յոյժ աւագ այր Հռոմայեցի. Գ. 174—177.

Փաղանգին Մակեդոնացւոց ստորադրութիւն. Բ. 638.

Փաղերէոս. Զ. 19. 20.

Փաղերիա, քաղաք քաջամուր յիսուալիա. Ա. 507. մատնի 'ի ձեռս Կամիլլոսի 'ի վարժապետէ մանկանց Փաղերացւոց. 508.

Փաուլիոս Մարկոս. Զ. 394. 395.

Փասիս, գետ. Դ. 287.

Փեկեղեան քուրմք առ Հռոմայեցիս. Ա. 251.

Փէա, կին աւաղակ. Ա. 15.

Փիդիաս, Ճարտարագործ մեծ. Բ. 35. 37. դրոշեալն Աթենասայ. 66. 68. բանտարկեալ մեռանի. 68.

Փիլիպպիդէս, քերթող կատակերգակ. Զ. 26. 48.

Փիլոպիմէն, զարմն Նորա՝. Բ. 583. պատկեր Նորա 'ի Դեղփիս. 584. բարք Նորա. 586. 587. Թարթափիել Նորա 'ի Հռոմ և 'ի պատմութիւն Աղեքսանդրի. 388. ահագին քաջութիւն Նորա. 591. 594. Իշխանանայ, փոխէ զղէնս Աքայեցւոց. 595. յաղթէ

Լակեդեմոնացւոց. 599. Հանդէս փաղանգին Փիլոպիմենեայ. 600. կռուի 'ի Կրետէ. 605. պարտի 'ի Նաւամարտի. 606. դիմէ 'ի Սպարտիա, և ընչատեցութիւն նորա. 609. տիրանայ 'ի վերայ Սպարտացւոց. 612. անկանի յերիվարէն և ձերբակալ լինի. 617. դեղակուր մեռանի 'ի բանտի. 620.

Փիլ ահագին, Նիկոն անուն, հրաշալի դէպք նորա. Գ. 206.

Փոկիոնի զարմ. Դ. 386. աշակերտի Պղատոնի. 387. բարք նորա, և դիմագրութիւն. 387. կորովաբանութիւն նորա. 388. քաղաքականութիւն նորա. 391. առածք նորա. 392—396. 399. առաջնորդէ Աթենայ. 404. սիրելի Աղեքսանդրի մեծի և խորհրդական նորա. 406. ընչատեցութիւն նորա. 407. 408. 412. դաստիարակութիւն նորա. 410. իմաստնաբանութիւնք նորա. 414—417. 425. ամբաստանի. 430. դատապարտի 'ի մահ. 432. անցաւութիւն և մեծանձնութիւն նորա. 435. անյիշաչարութիւն նորա. 436. մոլեխինդ տուեալ և ապանանեն. 436.

Փսենուփէս Արեգքաղաքացի, վաղնջուց քուրմ Եգիպտացւոց առ Սողոնիս, քաջահմուտ. Ա. 345.

Փրիւնիքոս կատակերգակ. Բ. 186.

Քարոնն Թեբայեցի, ականաւոր հայրենասէր. Բ. 456. 460—462.

Քուրմք վաղնջուց՝ Եգիպտացւոց. Տես Եգիպտացիք:

Քսենոփոն պատմագիր Յոյն. Բ. 212.

550. Նիզակակից Ագեսիղայոսի. Դ. 181.
Քսերքսէս արշաւէ Յելլադա. Ա. 433. 439. Հանդէս նաւաց նորա. 450. խորտակի և չուէ Յելլադայ. 461. անդրի նորա մեծ. Ե. 79. Տէս և 'ի Թեմիստոկղէս:
Օրաբանին, կամ Օրացուցին Հռոմայեցւոց ուղղագրութիւն 'ի Յուլիոսէ Կեսարէ. Ե. 242. 243.

---

# ՑՈՒՑԱԿ

## ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐՈՑ

---


ՈՒՂԵՐՁ . . . . . 7
Վարդ Պլուտարքէայ . . . . . 11
Յառաջաբան . . . . . 43


---


ԹԷՍԷՈՍ . . . . . 3
ՀՌՈՄՈՒԼՈՍ . . . . . 63
Զուգակշռութիւն . . . . . 133
ԼԻԿՈՒՐԳՈՍ . . . . . 147
ՆՈՒՄԱ . . . . . 221
Զուգակշռութիւն . . . . . 279
ՍՈՂՈՆ . . . . . 295
ՊՈՊՂԻԿՈՂԱ . . . . . 363
Զուգակշռութիւն . . . . . 410
ԹԷՄԻՍՏՈԿՂԷՍ . . . . . 423
ԿԱՄԻԼԼՈՍ . . . . . 489


## ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐՈՑ


ՊԵՐԻԿՂԷՍ . . . . . 7
ՓԱԲԻՈՍ ՄԱՔՍԻՄՈՍ . . . . 87

Զ-գալլոուրիան. . . . . 143

ԱՂԿԻԲԻԱԴԷՍ . . . . . 153

ԿՈՐԻՈՂԱՆՈՍ. . . . . 227
Զ-գալլոուրիան. . . . . 293

ՏԻՄՈՂԵԻՈՆԴ . . . . . 305

ԵՄԻԼԻՈՍ ՊԱՒՂՈՍ. . . . . 369
Զ-գալլոուրիան. . . . . 437

ՊԵՂՈՊԻԴԷՍ. . . . . 445

ՄԱՐԿԵՂՂՈՍ. . . . . 511
Զ-գալլոուրիան. . . . . 571

ՓԻԼՈՊԻՄԷՆ . . . . . 583

ՏԻՏՈՍ ՓԼԱՄԻՆԻՈՍ . . . . . 625
Զ-գալլոուրիան. . . . . 667

## ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐՈՑ

ԱՐԻՍՏԻԴԷՍ . . . . . 7

ՄԱՐԿՈՍ ԿԱՏՈՎՆ . . . . . 65
Զ-գալլոուրիան. . . . . 119

ՊԻԻՌՈՍ . . . . . 133

ԳԱՅԻՈՍ ՄԱՐԻՈՍ . . . . . 213
. . . . . .

ԼԻՍԱՆԴՐՈՍ . . . . . 307

ՍԻՂՂԱՍ. . . . . 367
Զ-գալլոուրիան. . . . . 451

ԿԻՄՈՎՆ . . . . . 465
ԼՈՒԿՈՒԼԼՈՍ . . . . . 509
Զ-գալ-ոլ-ոլ-ի-ն. . . . . 607
ՍԵՐՏՈՎՐԻՈՍ. . . . . 619
ԵՒՄԵՆԷՍ. . . . . 669
Զ-գալ-ոլ-ոլ-ի-ն. . . . . 709

## ՉՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՐՈՑ

ՆԻԿԻԱՍ. . . . . 3
ՄԱՐԿՈՍ ԿՐԱՍՍՈՍ. . . . . 69
Զ-գալ-ոլ-ոլ-ի-ն. . . . . 141
ԱԳԵՍԻԼԱՅՈՍ . . . . . 155
ՊՈՄՊԷՈՍ . . . . . 229
Զ-գալ-ոլ-ոլ-ի-ն. . . . . 369
ՓՈԿԻՈՎՆ . . . . . 381
ԿԱՏՈՎՆ ԿՐՍԵՐ. . . . . 441

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՈՐՈՑ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ. . . . . 7
ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ . . . . . 153
. . . . . .
ԱԳԻՍ ԵՒ ԳԱԼԱՏԵՆԷՍ . . . 267
ՏԻՐԵՐԻՈՍ ԵՒ ԳԱՅՈՍ . . . 365
Զ-գալ-ոլ-ոլ-ի-ն. . . . . 433

ԴԵՄՈՍԹԵՆԷՍ . . . . . 445

ԿԻԿԵՐՈՎՆ . . . . . 497
Զ-գալլոռիան . . . . . 585

ԱՐԱՏՈՍ . . . . . 597

## ՎԵՑԵՐՈՐԴ ԵՒ ՎԵՐՋԻՆ

### ՀԱՏՈՐՈՑՍ

ԴԵՄԵՏՐԻՈՍ . . . . . 7

ԱՆՏՈՆԻՈՍ . . . . . 101
Զ-գալլոռիան . . . . . 241

ԴԻՈՎՆ . . . . . 253

ԲՐՈՒՏՈՍ . . . . . 341
Զ-գալլոռիան . . . . . 429

ԱՐՏԱՇԷՍ . . . . . 441

ԳԱԼԲԱՍ . . . . . 497

ՈԹՈՎՆ . . . . . 545

---

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՎԱՌՈՒՑՆ . . . . . 579

ՑԱՆԿ ՄԱՆԱՒՈՐ, ՀԵՂԻՆԱԿԱՑ . . . . . 593

ՑԱՆԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ, ԻՐԱՑ . . 602